

Ուղերձների երկրորդ շրջան
(օգոստոս, 2005 թ. – հունվար, 2006 թ.)

Սանատ Կումարա
5 օգոստոսի, 2005 թ.

**Ինչպիսի մեթոդիկաներ և ինչպիսի գործառնություններ են
հանձնարարված, և որոնք են, որ պետք է
իրագործվեն ներկա ժամանակում**

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:

Քո այն հարցը, թե ինչպիսի՞ մեթոդիկաներ և գործառնություններ են հանձնարարված, և թե դրանցից որո՞նք պետք է իրագործվեն ներկա ժամանակում, կարող եմ պարզաբանել հետևյալով:

Հենց որ մարդկությունը հասնում է իր զարգացման որոշակի մակարդակի, վերանում է խստորեն հանձնարարվող գործառնությունների միջոցով ծառայություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Ամեն մի անհատ ունակ է դառնում ինքն իր համար որոշելու, թե որ մեթոդիկան է իր համար ընդունելի, և թե ինչպիսի գործառնության հետևի:

Որոշակի մեթոդիկաներ տալը քո խնդիրը չէ:

Կհայտնվեն մարդիկ, և արդեն հայտնվում են, որոնք կկարողանան իրենց հետևից տանել ուրիշներին՝ օգտվելով այն մեթոդիկաներից, որոնք նրանք ուղղակիորեն կստանան իրենց Բարձրագույն Ես-ից:

Գլխավոր պայմանն է՝ Հիերարխիայի հետ պահպանել համալարվածությունը և աշխարհների միջև կապը պահպանել այն հաղորդիչների միջոցով, որոնց մենք ընտրել ենք մեր նպատակների իրագործման համար: Եվ դու հանդիսանում ես այդ հաղորդիչներից մեկը:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր մարդ, ով ընդունում է քեզ՝ որպես մեր դեսպանորդի՝ որպես մեր ներկայացուցչի ֆիզիկական ոլորտում, միաժամանակ կանգնում է Հիերարխիայի աստիճանի վրա և օգտվում է քո նվաճումների ամբողջ պաշարից ու մեր օժանդակությունից, որն անմիջականորեն նրան կմատուցվի իր Բարձրագույն Ես-ի միջոցով:

Այն բանին զուգընթաց, որ մենք կհետևենք իրադրության զարգացմանը և կվերլուծենք այն, կկարողանանք տալ նաև անհրաժեշտ խորհուրդներ ու հանձնարարականներ:

Առայժմ անհրաժեշտ է օգտագործել այն հմտությունները, որոնց տիրապետում են մարդիկ, և կիրառել դրանք:

Եվ հատուկ ուշադրություն եմ հրավիրում այն բանի վրա, որ ֆիզիկական ոլորտում գլխավոր ծառայությունը գործնական քայլերն են:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

Սանատ Կումարա
7 հոկտեմբերի, 2005 թ.

**Եկել է մոլորակի բոլոր Լուսավոր Ուժերի
համախմբման ժամանակը**

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ԵՍ ԵՄ եկել, որպեսզի ոչ մեծ մի հանձնարարական տամ Սանկտ-Պետերբուրգ քաղաք մեր Դեսպանորդի սպասվող այցի մասին:

Թվում է, թե Տատյանայի միջոցով այս տարի տրված թելադրությունների ժամանակահատվածի ավարտից հետո ձեզ շրջապատող իրականության մեջ շատ քիչ բան է փոխվել:

Սակայն թո՛ւյլ տվեք ձեզ հետ չհամաձայնել: Գիտակցության այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան մեր թելադրություններն ընթերցել ցանկացող մարդկանց մոտ, գերազանցեցին մեր բոլոր սպասելիքները: Եվ մեզ մնում է միայն ափսոսալ, որ մեր ուղերձները չհասան ֆիզիկական աշխարհում տարածվելու այն աստիճանին, որը մենք ակնկալում էինք:

Այսպիսով, մի կողմից մենք տեսնում ենք գիտակցության զարգացման հսկայական թռիչք նրանց համար, ովքեր կարդացին թելադրությունները և դրանք ընդունեցին ամբողջ հոգով ու սրտով: Մյուս կողմից՝ մենք տեսնում ենք այն լուսակիրների կատարյալ թշվառ վիճակը, որոնք հնար չունեցան հասնելու այդ ուղերձներին, հետևաբար չկարողացան ժամանակին ըմպել մեր կենարար էներգիան, որն ուղղակի անհրաժեշտություն է այս բարդ ժամանակներում:

Ըստ այդմ՝ իմ խնդրանքը մնում է նույնը. խնդրում եմ, կիրառե՛ք բոլոր անհրաժեշտ ջանքերը, որ այդ ուղերձները հասնեն յուրաքանչյուր լուսակրի ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում:

Պետերբուրգի բնակիչները, այդ քաղաքին բնորոշ և 1917 թվականի դեպքերի հետ կապված կարմայական պատճառներից ելնելով, միանգամայն օրինաչափորեն պետք է, որքան կարող են, ներդնեն իրենց բոլոր ջանքերը տվյալ ուղերձների տարածման համար: Այդ պատճառով, մարդկանց առջև դեսպանորդի առաջին հրապարակային ելույթը կկայանա Մանկտ-Պետերբուրգ քաղաքում: Բոլոր նախորդ ելույթները, ինչպես դուք գիտեք, անց են կացվել փոքր խմբերում և բնության գրկում:

Դա լրացուցիչ պատասխանատվություն է դնում այդ քաղաքի բնակիչների վրա, որի հետ դեսպանորդը կապված է նաև կարմայով՝ որպես ռուսաստանյան իր նախորդ մարմնավորումների հետևանք:

Թող ձեզ չվրդովի ուղերձների թրթռանքի թվացյալ անհամապատասխանությունն այն թրթռանքների հետ, որոնց դուք սովոր եք, և որոնք բնորոշ էին այլ մարդկանց համար: Ամեն անգամ, երբ մենք գալիս ենք, ստիպված ենք լինում օգտվել այն հնարավորություններից և ունակություններից, որն ունի մեր Խոսքի տվյալ կոնկրետ հաղորդիչը:

Ես ուրախ եմ, որ այն ազդակն ու այն էներգիան, որոնք մենք ներդրել էինք մեր ուղերձների հաղորդման մեջ, չի կորսվել, այլ պահպանվել է ռուսաստանյան լուսակիրների միջոցով: Խնդրում եմ, գիտակցեք, որ այն հրաշալի փոփոխությունները, որոնք նուրբ ոլորտում նախապատրաստված են Ռուսաստանի համար, առանց ձեր անմիջական օգնության և օժանդակության հնարավոր չի լինի մեր կողմից ավարտին հասցնել: Համաձայնեք, որ կա աշխատանքի մեր բաժինը, և կա աշխատանքի ձեր բաժինը, որը դուք եք կոչված իրագործելու: Միայն Համբարձված Դասերի և չհամբարձված մարդկության համախմբման մեջ է մեր հզորության և հաջողության գրավականը: Ես կուզենայի նաև ձեր ուշադրությունը հրավիրել ֆիզիկական ոլորտում ձեր միասնության վրա:

Եկել է մոլորակի բոլոր Լուսավոր Ուժերի համախմբման ժամանակը:

Եկեք սկսենք այդ գործընթացը՝ անկախ կրոնական և խմբային պատկանելությունից: Կա ավելի նշանակալից բան, քան այն, ինչ ձեզ բաժանում է: Եվ դա ձեր Սպասավորությունն է Կյանքին, Աստծուն, բոլոր կենդանի էակներին: Համախմբվե՛ք Սիրո, համագործակցության և ֆիզիկական աշխարհում ձեր կոնկրետ գործերի հիման վրա, որոնք դուք կարող եք իրագործել հենց հիմա:

Ուշադրություն մի՛ դարձրեք այն ամենին, ինչը ձեզ բաժանում է՝ լինեն դրանք Ուսմունքի որոշակի դրույթներ, թե աղոթքի խոսքեր:

Կենտրոնացեք այն ընդհանուրի վրա, որը ձեզ կհամախմբի: Եվ այդ ընդհանուրը Սպասավորությունն է Կյանքին, Երկրի Եվոյուցիային: Եվ նվաճումների ձեր չափանիշը միշտ եղել է և կլինի այն գոհողությունը, որը դուք կկարողանաք ի սպաս դնել հանուն մարդկության Բարօրության, հանուն Երկիր մոլորակի Եվոյուցիայի:

Եկեք ևս մեկ անգամ կենտրոնանանք սրտերում: Թափանցե՛ք ձեր սրտի խորքը և զգացե՛ք ձեր Միասնությունը: Ձեր միակ ցանկությունը Ճառայելը պետք է լինի: Ձեզ բաժանող ոչինչ չի եղել ու չկա: Ապագան ծնվում է ձեր գիտակցության մեջ: Այս պահին ահա ես ամրացնում եմ Միասնության Կիզակետը ձեր սրտերում, յուրաքանչյուրի սրտում, ով լսում կամ կարդում է այս տողերը: Այն կօգնի ձեզ, որ միայն Լույսը տեսնեք բոլոր այն մարդկանց աչքերում, որոնց հետ գործ կունենաք ֆիզիկական ոլորտում: Այն, ինչի վրա դուք կենտրոնացնում եք ձեր ուշադրությունը, ստանում է Աստծո էներգիա, որը ձեր միջով հասնում է ֆիզիկական ոլորտ: Այսուհետև դուք ձեր եղբայրների ու քույրերի մեջ միայն լավը կտեսնեք ձեր Ճանապարհին: Միշտ հիշեք, որ ձեր աշխարհը մի հայելի է, որի մեջ անդրադառնում է ձեր գիտակցությունը, և ձեզ շրջապատող մարդիկ կշրջվեն դեպի ձեզ այն կողմով, որը դուք նրանց մեջ կնկատեք: Այդպիսով դուք կմեծացնեք ձեր նվաճումների պաշարը և կբազմապատկեք դեպի Ընդհանուր Բարօրությունն ու Բարին ուղղված ձեր էներգիաները:

Ապրեք Բերկրանքով ու Սիրով և դե՛ն նետեք այն ամենը, ինչ խանգարում է ձեզ լինելու Աստծո հետ:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան, ձեզ հետ եղա այսօր

Տեր Շիվա
27 նոյեմբերի, 2005 թ.

Ձեր ամեն մի ջանքն աննախադեպ ձևով կբազմապատկվի, քանի որ այդպիսին է ժամանակի պահանջը և այդպիսին է այժմ իրադրությունը Երկրի վրա

ԵՍ ԵՄ Շիվան: ԵՍ ԵՄ եկողը, որպեսզի խրատներ տամ տարբեր հոգևոր խմբերի և ուղղությունների փոխազդեցության վերաբերյալ, որոնք առկա են պատմական այս պահին:

Մենք հստակ պատկերացնում ենք մարդկային գիտակցության ամբողջ սահմանափակությունն ու Աստծո ճշմարտությանը հայացք նետելու չկամությունը, որ այն ընդունվի Երկիր մոլորակն այսօր բնակեցնող մարդկանց մեծամասնության կողմից:

Մակայն այն մղումները, որոնք դուք ունեք, իրոք անգնահատելի են: Քանզի յուրաքանչյուր ոք, ով արթնության է հասել, և ամեն ոք, ով ունակ է դարձել ընկալելու Աստծո ճշմարտությունը, թեկուզ և ոչ ամբողջությամբ, բայց դրան հասնելու ձգտումն ունի, մեզ համար դառնում է անգին հաղորդիչ՝ բյուրեղ-սաղմ, որի միջոցով մենք կարող ենք Երկիր ներմուծել նոր գիտակցության և նոր փոխհարաբերությունների տարրերը:

Ուստի թող ընդունեն իմ շնորհակալությունները բոլոր նրանք, ովքեր լի են նկրտումներով և ներդնում են իրենց թեկուզ չնչին ծառայությունը Երկիր մոլորակի փրկության ընդհանուր գործում:

Դուք կարող եք սրտում պահել ձեր նկրտումը և առօրյա կյանքում գործել դրան համապատասխան. կարող եք կատարել այն գործերը, որոնց պատրաստ է ձեր գիտակցությունը. կարող եք ձեր նյութական կամ հոգևոր ամեն մի նվերը դնել Աստծո ճշմարտությանը ծառայելու գոհասեղանին: Ձեր բոլոր նվերները մեր կողմից կընդունվեն երախտագիտությամբ և կբազմապատկվեն ձեր սրտերում:

Եկել է ժամանակը, երբ ձեր յուրաքանչյուր թեկուզ և չնչին գործողությունը, որն ուղղված է ձեր ֆիզիկական օկտավայում աստվածային թրթռանքին օժանդակելուն, կհասնի մեզ, կպահպանվի և կբազմապատկվի մեր կողմից:

Օրհնյա՛լ են ձեր ջանքերը և օրհնյա՛լ են ձեր մղումները, ո՛ր բնագավառում էլ որ դրանք իրագործեք:

Դուք չեք կարող չգործել՝ գտնվելով ֆիզիկական ոլորտում. դուք չեք կարող չգործել, քանի որ այդպիսին է ժամանակի պահանջը, և այդպիսին է այժմ Աստծո կամքը:

Պահպանեք և բազմապատկե՛ք ձեր Աստվածայնությունը՝ ձեր հոգևոր սկիզբը: Եվ ձեր կյանքի ուղեկիցը դարձրեք Աստծո, այս տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքի նկատմամբ պաշտամունքը:

Ձեր ամեն մի ջանքն աննախադեպ ձևով կբազմապատկվի, քանի որ այդպիսին է ժամանակի պահանջը և այդպիսին է այժմ իրադրությունը Երկրի վրա:

Բայց նրանց համար, ովքեր ինչ-որ պատճառով չեն կամենում ենթարկվել ժամանակի պահանջին և Բարձրագույն Օրենքին, բարդ ժամանակաշրջան է սկսվում: Որովհետև ձեր ցուցաբերած յուրաքանչյուր հակազդեցություն շուտ կգա ձեր դեմ: Եվ ձեր գործողություններն ակնթաթոթրեն կբերեն համապատասխան հետևանքներ, որոնք նույնպես կբազմապատկվեն: Եվ դուք չեք կարողանա զգալ հին գիտակցությունից, հին վարվելակերպից և նախկին մտածելակերպից ու գործելակերպից կառչելու ձեր փորձերի ապարդյունությունը:

Ձեր շուրջն ամեն ինչ ենթակա է փոփոխության և արդեն իսկ փոխվում է: Եվ միայն խուլն ու կույրը կարող են շարունակել ձևացնել, թե ոչինչ չի փոխվում, և ամեն ինչ մնում է նախկինի պես:

Ո՛չ, հավատացնում եմ ձեզ, երբեք Երկիր մոլորակի փոփոխություններն այնքան արագ տեմպերով չեն ընթացել, որքան ձեր ժամանակներում: Եվ այդ փոփոխություններին հարմարվել հնարավոր է միայն սեփական մտածելակերպի ու վարվելակերպի կարծրատիպերը փոխելով:

Իսկ այժմ կուզենայի ևս մեկ ողջերթի խոսք և խրատ կարդալ: Ընդունեք այն որպես հանձնարարական ձեր ամենօրյա հոգևոր աշխատանքում:

Ամեն օր՝ այսօրվանից սկսած մինչև նոր տարի, խնդրում եմ օրական թեկուզ մի քանի րոպե հատկացրեք մեղիտացիայի՝ ներխոյման, և ձեր երկրի ու մոլորակի ապագայի տեսականն ընդունելուն:

Դուք կարող եք ձեր գիտակցության մեջ նկարել ամենահամարձակ պատկերներ ու պլաններ՝ օգտագործելով ձեր ամբողջ երևակայությունը: Միակ պայմանը ձեր շարժառիթների, ձեր հղացումների և մղումների մաքրությունն է: Եվ ես ձեզ խոստանում եմ, որ ինչքան էլ համարձակ ակնկալիքներով, պատկերներով ու պլաններով բեռնավորեք ձեր գիտակցությունը մոտակա ապագայի վերաբերյալ, հաջորդ տարվա և մոտակա մի քանի տարիների ընթացքում կցուցաբերեմ անձամբ իմ օժանդակությունը, որպեսզի դրանք բազմապատկվեն և վերադարձվեն ձեր աշխարհ

աստվածային հնարավորության, աստվածային ողորմածության և աստվածային դրսևորման տեսքով:

Արդ, խիզախե՛ք, կազմե՛ք ամենահամարձակ պլանները՝ դրանք համապատասխանեցնելով այն աստվածային ուղղությանը, որը բնորոշ է ներկայումս Երկիր մոլորակում ընթացող բարեփոխումներին: Այդ ամենն օժանդակություն կստանա և կդրսևորվի ձեր ֆիզիկական աշխարհում:

Քիչ ժամանակ է մնացել ձեր ներխուժումների համար: Միայն մինչև այս տարվա վերջը:

Մի՛ մոռացե՛ք ձեր ամեն մի ներխուժումից առաջ կանչել ինձ՝ Տեր Շիվային, որպեսզի ավերեմ այն ամբողջ հինն ու իր դարն ապրածը, որն ընկած է ձեր պլանների իրականացման ճանապարհին, աստվածային հնարավորություն ապահովեմ և պարուրեմ ձեզ իմ Միրով, Հույսով ու Հավատով:

Բազմապատկե՛ք ձեր նկրտումները: Խիզախե՛ք: Միշտ հիշե՛ք, որ միտքը մատերիական է և միշտ ունակ է արարելու: Եվ ձեր մտքի այդ արարչագործական ունակությունը, որը մշտապես բնորոշ է եղել ձեզ, պարզապես մինչև տարվա վերջ բազմակիորեն կուժեղացվի:

Բաց մի՛ թողե՛ք ձեզ ընձեռված հնարավորությունը և մի՛ մոռացե՛ք գրել առանձին թղթի վրա ձեր բոլոր մտքերը, պլաններն ու ցանկությունները: Յուրաքանչյուր ներխուժման ընթացքում մտասևեռվե՛ք և մանրամասն տեսք տվե՛ք ձեր ամեն մի մտահղացմանը: Եվ նոր տարվա, ինչպես նաև մոտակա մի քանի տարիների ընթացքում հետևե՛ք, թե ինչ տեղի կունենա ձեր կյանքում և շրջակա իրականության մեջ: Ձեզնից ամեն ոք կգիտակցի իր մտքի ուժը, երբ այն համահունչ կլինի Աստծո՝ այս պատմական պահի համար նախատեսված նպատակներին ու խնդիրներին:

Իսկ այժմ ես ձեզ մաղթում եմ արգասաբեր աշխատանք և ձեզ մենակ եմ թողում ձեր մտքերի ու մտահղացումների հետ:

Ես ԵՄ Շիվան, ձեզ հետ եղա այսօր

Սանատ Կումարա
28 նոյեմբերի, 2005 թ.

Վարդարանների ընթերցման հանձնարարականներ

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: Եկել եմ տալու հանձնարարականներ, որոնք վերաբերում են իմ տված Վարդարանների ընթերցանությանը:

Չկան ինչ-որ առանձնահատուկ հանձնարարականներ, և չկան ինչ-որ հատուկ պահանջներ՝ կապված այդ Վարդարանների ընթերցանության հետ: Դուք դրանք կարող եք կարդալ բոլորն իրար հետ (*խառը հաջորդականությամբ* – թ.) կամ հաջորդաբար: Կարող եք առաջին շաբաթում կարդալ առաջին Վարդարանը, երկրորդում՝ երկրորդը և երրորդում՝ երրորդը: Որից հետո կարող եք բոլորապատույտով կրկնել դրանց ընթերցումը:

Ի վերջո, դուք կարող եք ինքնուրույն որոշում կայացնել հետևելու այն հանձնարարականներին, որոնք կստանաք ձեր Բարձրագույն Ես-ից:

Միաժամանակ կա շատ կարևոր մի բան, որը պետք է ձեզ հիշեցնեմ և հանձնարարեմ, որ երբեք չմոռանաք այդ մասին: Դա այն է, որ դուք մշտապես գիտակցության ակնածալից վիճակ պետք է պահպանեք Վարդարանների ընթերցման, ինչպես նաև ձեր ցանկացած այլ հոգևոր աշխատանքի ընթացքում: Միշտ աշխատե՛ք ձեր մտքերը կենտրոնացած պահել Բարձրագույն Իրականության վրա: Երբեք մի՛ մոռացե՛ք, որ Վարդարանների ընթերցման պահին դուք հաղորդակցվում եք Աստծո հետ: Հետևաբար մշտապես պետք է ակնածալից սարսուռ ապրեք ու սանձեք ձեր բոլոր մարմնավոր մտքերն ու զգացմունքները: Եթե տհաճ խոսակցությունից կամ վեճից հետո գրգռված վիճակում եք, ապա հետաձգե՛ք Վարդարանի ընթերցումը: Սկզբում ներդաշնակվե՛ք՝ բնության գրկում գրոսնելով, ունկնդրե՛ք հանդարտ երաժշտություն կամ էլ մտասևեռվե՛ք լուծության մեջ: Բայց երբեք գրգռված կամ որևէ այլ անհավասարակշիռ վիճակում ձեռնամուխ մի՛ եղե՛ք հոգևոր աշխատանքի:

Միշտ հիշե՛ք այն մասին, որ ձեր գործողությունները դուք զարդարում եք ձեր իսկ ներքին վիճակով: Եվ երբ, անհավասարակշիռ վիճակում լինելով, սկսում եք ընթերցել Վարդարանները, ապա, փոխանակ էներգիա առաքելու դեպի Բարձրագույն ոլորտներ, Աստծո էներգիան վատնում եք ձեր ֆիզիկական աշխարհում նպաստելով պատրանքների բազմապատկմանը:

Ըստ այդմ՝ Վարդարանները սկսե՛ք կարդալ միայն գիտակցության ներդաշնակ վիճակում, և որքան անշահախնդիր լինի ձեր այդ ծառայությունը, այնքան ավելի մեծ հոգևոր աշխատանք կկարողանաք իրականացնել:

Այն ամենը, ինչ առաքում էր աշխարհին, վերադառնում է ձեզ: Ուստի տվեք առատորեն՝ չխնայելով ո՛չ ձեզ, ո՛չ էլ Վարդարաններ կարդալու ձեր ժամանակը: Ամբողջ այն էներգիան, որն անշահախնդրորեն տալիս էր Աստծուն, կվերադառնա ձեզ:

Եվ ամեն ինչ լավ կլինի:

Աստված սիրում է ձեզ և միշտ ձեզ հնարավորություն է տալիս կյանքում ընթանալու լավագույն Ուղով:

Ահա և տվեցի ձեզ այն հանձնարարականները, որոնք այսօր հարկ էի համարում տալ: Իսկ ավելի մանրամասն ցուցումներ դուք միշտ կարող եք ստանալ ձեր Բարձրագույն Ես-ից: Բավական է միայն ուզենաք, ձգտում ցուցաբերեք և ունկնդրեք սեփական սրտին:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ ձեր նկատմամբ Միտմունքով լեցուն

Սանատ Կումարա

12 դեկտեմբերի, 2005 թ.

Մենք կուզենայինք ձեզ տրամադրել նոր խնդիրների իրագործման

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ԵՍ ԵՄ եկողը, որպեսզի բացեմ թելադրությունների նոր շրջան, որոնք մենք ցանկանում ենք տալ այս դեսպանորդի միջոցով:

Ինչպես գիտեք, մեր դեսպանորդի միջոցով այս տարվա մեջ արդեն տվել ենք թելադրություններ: Եվ դրա համար կարևոր պայման էր այն, որ դրանք բավականաչափ լայնորեն տարածվեին Ռուսաստանի բնակիչների շրջանում և ամբողջ աշխարհում:

Մենք ուրախ ենք, որ մեր պայմանը բավարարվել է: Հազարավոր մարդիկ ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամբողջ աշխարհում, կարողացան ծանոթանալ մեր թելադրություններին և Համբարձյալ Դասերից ստանալ տեղեկատվություն, որն էփոյուցիոն զարգացման տվյալ փուլում այնքան անհրաժեշտ է շատերի համար:

Մենք գոհունակությամբ ուզում ենք նշել, որ մեր ջանքերն ու մեր էներգիան չեն ծախսվել իզուր: Դուք աշխատանքի ձեր բաժինը կատարել եք, և մենք կարող ենք շարունակել մտադրվածը և ևս մի փոքր տեղեկատվություն տալ այս տարվա ու հաջորդ տարվա իրադարձությունների և այն մասին, թե դուք ինչին պետք է պատրաստ լինեք, ինչի մասին անհանգստանաք և ինչ միջոցներ ձեռնարկեք:

Այդ պատճառով ես նորից եկել եմ և ուզում եմ հայտարարել, որ, ինչքան էլ դժվար լինի, մենք կկատարենք Երկրի մարդկության առջև մեր վերցրած պարտավորությունները և ըստ կարելիության կցուցաբերենք նրան այն ամբողջ անհրաժեշտ օգնությունը, որի կարիքը նա ունի իր էփոյուցիոն զարգացման այս փուլում:

Ամեն անգամ, երբ մենք կտանք մեր խրատները, Աստծո էներգիայի մի մասնիկ կդնենք մեր ուղերձներում: Եվ դուք նորից երանություն կզգաք՝ Աստծո էներգիայի նեկտարն ըմպելով: Անցած անգամվա պես մենք կխնդրենք մեր դեսպանորդին, որ ապահովի թելադրության հրապարակումն իր կայքում հենց այն օրը, երբ այն ընդունվել է: Դա փաստորեն ձեզ հնարավորություն կտա ներկա գտվելու թելադրության ընդունմանը՝ անկախ այն բանից, թե երկրագնդի որ մասում եք գտնվում: Բավական է միայն նստեք համակարգչի առաջ և միանաք համացանցին:

Այն մարդկանց, ովքեր չեն կարող օգտվել համակարգչից, մենք քիչ ավելի ուշ հնարավորություն կտանք ծանոթանալու այս թելադրություններին՝ դրանց տպագիր հրատարակման միջոցով:

Իսկ այժմ ես կուզենայի անցնել գլխավորին, հանուն որի մենք կրկին այցելում ենք ձեզ: Այն վերաբերում է տարվա վերջնագծին և նոր տարեշրջանի սկզբին: Մենք կուզենայինք ձեզ տրամադրել նոր խնդիրների և նոր նպատակների իրագործման, որոնք պետք է ձեր առջև դնեք և կատարեք հաջորդ տարվա ընթացքում: Ուստի հարկ է, որ լրջորեն վերաբերվեք այն տեղեկատվությանը, որը ձեզ կտրվի այս և հաջորդ թելադրությունների միջոցով:

Եվ այսպես, ամենից առաջ ամփոփենք անցնող 2005 թվականի արդյունքը: Մենք դա հաճույքով ենք անում, քանի որ, անկախ այդ տարվա բոլոր անակնկալներից ու աղետներից, այնուամենայնիվ մենք կարողացանք հասնել գլխավորին՝ մեծ քանակի մարդկանց գիտակցության անցմանը նոր, ավելի բարձր մակարդակին: Եվ դա տեղի ունեցավ, դա իրականացվեց: Որեմն՝ անցնող տարվա արդյունքները տպավորիչ են, և այդ արդյունքները չեն հապաղի իրենց ազդեցությունը թողնել ձեզ շրջապատող ֆիզիկական պատրանքի վրա: Դուք կկարողանաք զգալ այն բարեշնորհ փոփոխությունները, որոնք նվաճեցիք ձեր ծանր աշխատանքով, ձեր աղոթքային արթնությամբ և ձեր այն գործերով, որ իրականացնում եք ֆիզիկական ոլորտում:

Ես պետք է նորից ասեմ, որ դուք հայտնվել եք ձեր աշխարհում, որպեսզի գործեք, որպեսզի ֆիզիկական ոլորտում առաջին հերթին իրականացնեք կոնկրետ գործողություններ: Հետևաբար առաջին հերթին պետք է հոգ տանեք և անհանգստանաք ձեր շրջապատի համար: Թողե՛ք այն ամենը, ինչ կատարվում է ձեր մոլորակի սահմաններից դուրս՝ այլ աշխարհներում ու տարածություններում: Հավատացե՛ք ինձ, տիեզերքում բավարար քանակի Լուսի Էակներ կան, որոնք հավուր պատշաճի կատարում են իրենց գործը: Ես առաջարկում եմ կենտրոնանալ ձեր իսկ մոլորակի կարիքների վրա: Իսկ ավելի կոնկրետ՝ այն մարդկանց կարիքների վրա, որոնք ձեր կողքին են: Վերահսկողության տակ առեք այն ամենը, ինչն ի վիճակի եք վերահսկել: Ձգտեք հասնել այն բանին, որ աստվածային վարքի նմուշներ դրսևորվեն այն ամենի մեջ, ինչը ձեզ շրջապատում է: Եվ դա չի վերաբերում միայն ձեր բնակավայրի ու աշխատավայրի մաքրությանը: Դա վերաբերում է նաև ձեր մտքերի մաքրությանը և ձեր ամբողջ վարվելակերպին: Դուք այն մարդիկ եք, որոնք ազդեցություն են թողնում ամբողջ աշխարհի վրա: Հենց ձեր օգնությամբ է, որ մենք կկարողանանք փոխել աշխարհը: Երկրի վրա բնակվող մարդկանց ընդհանուր քանակի համեմատ շատ քիչ մարդիկ են կարդում այս թելադրությունները: Կարող եք ինձ չհավատալ, բայց բավական է յուրաքանչյուր ազգությունից մի քանի հազար մարդ կարողանան առնչվել այս թելադրություններին և դրանց միջոցով փոխել իրենց գիտակցությունը, որպեսզի փոխվի իրադրությունն իրենց երկրներում և մոլորակի մնացած բոլոր ծագերում: Քանզի կարևորը Լուսի կետ՝ հենարան ունենալն է, որի միջոցով մենք կկարողանանք իրականացնել մեր գործողությունները: Եվ ես պետք է ձեզ ասեմ, որ անցնող տարում մենք ստացանք նման հենարաններ:

Բարեբախտաբար, դա վերաբերում է ոչ միայն Ռուսաստանին, այլ նաև աշխարհի շատ երկրների, հատկապես՝ Բուլղարիային, Ուկրաինային և մի քանի այլ երկրների, որտեղ կարդում և հասկանում են ռուսերեն: Ուստի այս փուլի առաջնահերթ խնդիրը մեր ուղերձներն աշխարհի այլ լեզուներով թարգմանելն է և, առաջին հերթին՝ անգլերեն: Քանզի այն փոթորիկներն ու տարերային աղետները, որոնք Ամերիկայով անցան այս տարվա ընթացքում, ուղղակիորեն այն բանի հետևանքն էին, որ Ամերիկան չկարողացավ պահել Լուսի կիզակետը, և մենք ստիպված եղանք այն տեղափոխել Ռուսաստան: Ըստ այդմ, կախված այն բանից, թե որքանով Ամերիկան կկարողանա ընկալել այն տեղեկատվությունը, որը մենք տալիս ենք ռուս դեսպանորդի միջոցով, մոտակա ժամանակներում այդ երկիրը կա՛մ կկարողանա պահպանել քաղաքակիրթ և բարձր զարգացած երկրի իր կարգավիճակը, կա՛մ ոչ:

Այդ պատճառով ես դիմում եմ յուրաքանչյուրին, ով կարդում է այս թելադրությունները և հնարավորություն ունի դրանք թարգմանելու անգլերեն. եկել է աշխարհին ծառայելու ձեր հերթը: Ձեր ձեռքին է միլիոնավոր մարդկանց ճակատագիրն ու կյանքը, որոնք չեն կարողանում ստանալ մեր էներգիան ու մեր տեղեկատվությունը, և այդ պատճառով նրանց երկրները ենթարկվում են ու դեռ կենթարկվեն այնպիսի տարերային աղետների, որոնց մասին նրանք իրենց գիտակցությամբ նույնիսկ չեն էլ կարող պատկերացնել: Նաև դիմում եմ Ամերիկայի այն բնակիչներին, որոնք ունակ են, իրենց կանխակալ կարծիքը հաղթահարելով, ընդունելու այն տեղեկատվությունը, որը մենք տալիս ենք ռուս դեսպանորդի միջոցով. դե՛ն նետեք ձեր գիտակցության բոլոր նախապաշարմունքներն ու դոգմաները. վստահե՛ք ձեր սրտերին. ըստ կարելիության ամեն ինչ արեք, որպեսզի մեր տված տեղեկատվությունը տարածում գտնի անգլիախոս երկրներում:

Եկել է ֆիզիկական ոլորտում գործնական քայլեր կատարելու ձեր հերթը, և դուք պետք է գիտակցեք, որ այն ամենը, ինչը մոտակա ժամանակներում կանեք, պետք է առնչվի ֆիզիկական ոլորտի համար մեր պլանների իրականացմանը: Մի՛ փնտրեք որևէ մեկին, որը գտնվում է աշխարհի ծայրում և ձեզ կղեկավարի: Ամբողջ առաջնորդությունը, ամբողջ օժանդակությունն ու ամբողջ էներգիան դուք կգտնեք ձեր իսկ ներսում: Հենց դրա համար՝ ենք մենք ձեզ տալիս Ներքին Ուղու մասին գիտելիքը: Ուղի, որով ընթացել են բոլոր ժամանակների բոլոր ձեռնադրյալները: Ուղի, որով պարտավոր եք ընթանալ և դուք, քանի որ այլևս ժամանակ չկա սպասելու և հետաձգելու. Երկիր մոլորակի համար նախատեսված մեր պլանների իրականացումը: Սկսե՛ք անել որևէ կոնկրետ բան հենց այնտեղ, որտեղ գտնվում եք: Թող դա լինի փոքր բան, թող լինի տարածումն այն գիտելիքի, որն առկա է այս թելադրություններում, և որը դուք կարող եք փոխանցել ընդամենը մի քանի մարդկանց, որոնք բնակվում են ձեզ հետ նույն բնակավայրում. թող դա լինի դասախոսություն, որը կկարդաք դպրոցում կամ ձեր աշխատավայրում: Օգտագործե՛ք ամեն մի հնարավորություն, որպեսզի ձեր աշխարհում տարածեք մեր տեղեկատվությունը, մեր էներգիան և մեր թրթռանքը:

Դա՛ է այն, ինչը դուք պետք է անեք հենց հիմա, և դա՛ է այն, որը կլինի ձեր գլխավոր ծառայությունը հաջորդ տարվա ընթացքում:

Արդ, իզուր ժամանակ մի՛ վատնեք մոտեցող ծննդյան տոների և նոր տարվա տոնակատարության ճոխ նախապատրաստության վրա: Լավագույն ծառայությունը, որը կարող եք ցուցաբերել մեզ, կարտահայտվի ձեր այն գործերով, որոնք մեր ղեկավարությամբ կիրականացնեք ձեր իսկ ներսի թելադրանքով:

Սովորե՛ք լսել այն լռության ձայնը, որը լսելի է ձեր ներսում և ձեզ հնարավորություն է տալիս նորից վերապրելու Երկնքից անխոնջ կերպով ձեր աշխարհին ներարկվող՝ Երկնային Հոր Սիրո երանությունը:

ԵՍ ԵՄ Սանատ Կոմարան՝ ձեր նկատմամբ անսահման Սիրով լի

Տեր Սուրիա
13 դեկտեմբերի, 2005 թ.

Ասածո նոր Ողորմածություն

ԵՍ ԵՄ Սուրիան՝ մեր դեսպանորդի միջոցով նորից եկածը:

ԵՍ ԵՄ եկողը, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ տրամադրեմ այն տեղեկատվության ընկալմանը, որը կտրվի ձեզ այսօր և հաջորդ օրերին: Արդեն գիտեք, որ Երկիր մոլորակի իրադրությունն ամեն տարեվերջի շիկանում է: Դա կապված է մոլորակի տարեկան շրջանի հետ: Ամեն տարվա վերջին օրերը լարված են լինում փոխակերպության չենթարկված այն էներգիաներով, որոնք ելք են փնտրում ֆիզիկական ոլորտում դրսևորվելու համար:

Բացասական էներգիաների այդ արտահոսքը կարող է վերածվել կամ էլ չվերածվել հերթական համադետի՝ կախված այն բանից, թե մտքերի և զգացմունքների ոլորտում ինչ չափով տեղի կունենա բացասական էներգիաների գերակշիռ մասի փոխակերպությունը:

Դրա համար է այդպես կարևոր տարվա վերջին ներքին ներդաշնակությունն ու Արարչի հանդեպ երկյուղալից ակնածանքը պահպանելը:

Արդյոք Երկիր մոլորակի շա՛տ մարդիկ են ունակ դրան:

Եվ ինչպե՞ս անել, որ հնարավորինս շատ մարդիկ մտորեն Երկիր մոլորակի ամբողջ կյանքի հանդեպ իրենց պատասխանատվության մասին: Դրա համար մենք գալիս ենք նորից ու նորից, որպեսզի հիշեցնենք ձեր պատասխանատվության մասին՝ հուսալով, որ դուք կկարողանաք մեր տեղեկատվությունը հասցնել հնարավորինս շատ մարդկանց:

Հիշու՛մ եք այն համադետը, որը տեղի ունեցավ անցյալ տարվա դեկտեմբերին և իր հետ տարավ հարյուր հազարավոր մարդկանց կյանքեր:

Հնարավոր համարու՛մ եք նման համադետի կրկնությունը:

Որքանո՞վ է հնարավոր կանխել նման համադետները:

Ես եկել եմ, որպեսզի ձեզ ասեմ այն հնարավորության մասին, որ դեկտեմբերյան այս օրով Երկինքը շնորհում է ձեզ: Այսօր՝ դեռևս մինչև Կարմայական Վարչության նիստի սկսվելը, մեր կողմից որոշում է ընդունվել Երկիր մոլորակի կարմայի վերադարձը մեղմելու մասին, եթե ամբողջ աշխարհում ընդամենը մի քանի հարյուր մարդ մինչև տարեվերջ հանձն առնեն իրենց վրա կրել Երկիր մոլորակի կարմայական բեռը:

Ի՞նչ է պահանջվում ձեզնից, սիրելիներ՛ս. այս բարդ ժամանակներում ո՞վ հանձն կառնի իր ուսերին կրել համաշխարհային կարմայի բեռը...

Ձեզ կարող է հեշտ թվալ այդ խնդրի իրագործումը: Սակայն մի՛ գայթակղվեք առաջադրված խնդրի արտաքին պարզությամբ: Քանի որ ձեր կողմից նախաձեռնված նույնիսկ ամենահասարակ գործողությունները մեզ հակադիր ուժերի կողմից այնպիսի ուժեղ դիմադրության կհանդիպեն, որ յուրաքանչյուր գործ ձեզ կհաջողվի անել միայն մեծագույն ջանքերի գնով: Այնուամենայնիվ մենք ձեզ խնդրում ենք մինչև տարեվերջ ամեն օր մեկ ժամ հատկացնել աղոթքային գործառության՝ համաձայն մի ուղեցույցի, որն այժմ ես ձեզ կտամ:

Եվ այսպես, ձեր ամբողջ խնդիրն այն կլինի, որ հասնեք ձեր գիտակցության առավելագույն ներդաշնակ վիճակին:

Մենք հաշվի ենք առել նաև, որ ձեր հոգևոր գործառություններն իրարից տարբերվում են, քանի որ պատկանում եք տարբեր կրոնական խմբերի ու հոսանքների:

Ուստի ամեն օր մեկ ժամ պետք է հատկացնեք հենց այն աղոթքային գործառությանը, որին սովոր եք: Դա կարող է լինել աղոթքների, Վարդարանների, պատգամների ընթերցում կամ ուղղակի ներխոսկում (մեղիտացիա):

Հիմնական արդյունքը, որին պետք է հասնեք ձեր աղոթքային գործառնության ընթացքում, ձեր ներքին վիճակի ներդաշնակեցումն է: Դուք պետք է հայտնվեք Աստծո հետ լիակատար ներդաշնակ վիճակում:

Իսկ ձեր հոգևոր գործառնության վերջում ձեզ խնդրվում է անել հետևյալը: Պատկերացրեք, որ ձեր աուրան ընդարձակվում է՝ հասնելով տան չափերին, որից հետո, շարունակելով ընդարձակվել, իր մեջ է ներառում ձեր քաղաքը, ձեր երկիրը, և ապա՝ ողջ երկրագունդը: Եվ ամեն մի կենդանի էակ, որը հայտնվում է ձեր աուրայի ազդեցության դաշտում, իր վրա կրում է ձեր ազդեցությունը:

Պատկերացրեք, որ բոլոր կենդանի էակներին համակում է այն ներդաշնակությունն ու խաղաղվածությունը, որին դուք հասնում եք ձեր հոգևոր գործառնության ընթացքում:

Բավական է, որ ընդամենը մի քանի հարյուր մարդ պարտավորվեն այսօրվանից մինչև տարեվերջ ի կատար ածել մեր այս խնդրանքը, և ես երաշխիք կտամ ձեզ, որ Երկիրը խույս կտա այնպիսի ահավոր համադետից, ինչպիսին տեղի ունեցավ անցյալ տարվա վերջին:

Համախմբել այդ ուղղությամբ մեր ջանքերը՝ անկախ նրանից, թե ինչպիսի կրոնական խմբի կամ դավանանքի եք դուք պատկանում:

Թող այս հասարակ քայլը հանդիսանա երկրային ոլորտում համախմբվելու ձեր առաջին քայլը:

Ես ուրախ եղա, որ այսօր ացելեցի ձեզ և տեղեկացրի նոր հնարավորության՝ նոր շնորհի մասին, որը կգործի տարվա այս խավար ժամանակի ընթացքում:

Ես վստահ եմ, որ մենք միասին հեշտությամբ կհաղթահարենք մոլորակի բոլոր աններդաշնակ դրսևորումները, որոնք սովորաբար հանգեցնում են տարբեր տեսակի համադետների ու տարերային աղետների:

Իմ կողմից առաջադրված այս առաջին քայլը սպասում է ձեր համատեղ ջանքերի գործադրմանը:

Իսկ այժմ ես կուզենայի տալ կարևոր տեղեկատվություն, որը նույնպես պահանջում է ձեր ջանքերի անհապաղ գործադրում:

Տարվա վերջին՝ դեկտեմբերի 23-ից սկսած, տեղի է ունենալու Կարմայական Վարչության նիստը: Արդ, Կարմայական Վարչությանն ուղղված ձեր ամենամյա նամակների հետ մեկտեղ մի՛ մոռացեք շարադրել ձեր մտքերի այն օգտակար արգասիքները, որոնց մասին խոսեց Տեր Ծիվան՝ իր 2005 թ.-ի նոյեմբերի 27-ի թելադրության մեջ:

Որքան շատ կարևոր նախագծեր դուք կարողանաք տեղավորել մինչև տարվա վերջ մնացած ժամանակի մեջ, այնքան մեծ կլինի հավանականությունն այն բանի, որ Կարմայական Վարչությունն իր նիստում հաշվի կառնի ձեր ցանկությունները և համապատասխան ջանքեր կգործադրի, որպեսզի վերացնի այն կարմայական խոչընդոտները, որոնք կարող են հայտնվել ձեր նախագծերի իրականացման ճանապարհին:

Տեսնում եք, սիրելիներ՝ս, թե ինչպես է Երկինքը հոգում ձեր մասին: Կարո՞ղ ենք արդյոք հուսալ, որ դուք էլ ձեր հերթին կգործադրեք այն ջանքերը, որոնց մասին մենք խնդրում ենք:

Ես մեծ հույսեր եմ կապում դրա հետ:

Մենք ձեզնից քիչ բան ենք խնդրում, և այն ժամանակը, որ մենք խնդրում ենք հատկացնել հանուն Երկիր մոլորակի մարդկության, բոլորովին համեմատելի չէ այն ժամանակի հետ, որը դուք ամեն օր վատնում եք հեռուստահաղորդումներ դիտելով կամ իրար հետ դատարկ զրույցներ վարելով:

Կշեռքի մի նժարին, ինչպես միշտ, Համընդհանուր Բարիքն է ու մոլորակի բարօրությունը, իսկ մյուս նժարին՝ ձեր էգոյի քմահաճությների բավարարումը:

Մտորե՛ք այդ երկրնտրանքի մասին և վճռական ընտրություն կատարեք Աստծո անանց Իրականության օգտին՝ հրաժարվելով ձեր ներսում եղած կամայական պատրանքային այլընտրանքներից:

Ես ուրախ եղա ձեզ հետ նոր հանդիպման և Աստծո նոր Ողորմածության մասին ձեզ տեղեկացնելուս առիթներով:

ԵՄ ԵՄ Սուրիան, ձեզ հետ եղա այսօր

Պաշտելի Ալֆա
14 դեկտեմբերի, 2005 թ.

**Ես եկել եմ, որպեսզի ձեզնից խնդրեմ այն օգնությունը,
որի կարիքն ունի ձեր հիվանդ մոլորակը**

ԵՍ ԵՄ Ալֆան: Ես ձեզ այցի եմ եկել այս օրով, որպեսզի ոչ մեծ Ուսմունք տամ այն մասին, թե ինչպես պետք է գործեք մոտակա ժամանակում, և ինչպես տրամադրվեք հետագայի համար:

Ամեն անգամ՝ մարմնավորման մեջ գտնվող մարդկանց հետ հաղորդակցվելիս, ես ոչնչի հետ չհամեմատվող երանություն եմ ապրում: Ես զգում եմ ձեր կարիքներն ու պահանջները և ընդունում ձեզ այնքան մեղմ ու քնքուշ, որքան ձեր աշխարհի ոչ մի հայր չի ընդունում իր զավակներին:

Քանզի ԵՍ ԵՄ ձեր իսկական Հայրը և հոգում եմ ձեր մասին՝ օգտագործելով ամեն մի հնարավորություն, որպեսզի գամ, խրատ ու ուսում տամ և գուրգուրեմ ձեզ:

Ահա այսօր էլ եկել եմ, որ կատարեմ իմ հայրական պարտքը Երկրի մարդկության հանդեպ:

Ձեր հարազատ մոլորակը ձեր հոգածության ու խնամքի կարիքն ունի: Պատկերացրեք, որ Երկիրը ձեր Մայրն է: Ձեր Մայրը հիվանդացել է և ձեր օգնության կարիքն ունի:

Եթե դուք սիրող զավակներ եք, ապա պետք է արձագանքեք ձեր Մոր կանչին, որքան էլ կլանված լինեք ձեր կյանքի խնդիրներով, և որքան էլ ծանր լինի ձեզ համար: Չէ՞ որ ձեր Մայր հիվանդ է և զգում է ձեր օգնության կարիքը:

Ուստի ահա եկել եմ այս օրով, որ ձեզ կանչեմ ձեր Մոր մոտ և ասեմ, որ Նա զգում է և՛ ձեր օգնության, և՛ ձեր հոգածության, և՛ ձեր խնամքի կարիքը: Հենց հիմա: Այնպես, ինչպես երբեք:

Դուք հասել եք այն տարիքին, երբ կարող եք պատասխանատվություն կրել ձեր Մոր համար, որն այժմ ձեր օգնության կարիքն ունի: Կար ժամանակ, երբ դուք էիք օգնություն ստանում ձեր Մոր կողմից: Նրանից ստանում էիք այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ էր՝ սնունդ, ջերմություն, խնամք:

Եվ ահա եկել է ժամանակը, երբ պետք է վերադարձնեք ձեր պարտքերը, ձեր երախտագիտությունը հայտնեք ձեր Մորը՝ հարազատ մոլորակին, այն ամենի համար, ինչ Նա ձեզ համար արել է:

Ձեր Մայրը շատ զավակներ ունի: Ավադ, ոչ բոլոր զավակներն են ունակ արձագանքելու Նրա կանչին: Քանզի ոմանք կորցրել են իրենց կապը ծնողական տան հետ՝ ընտրելով մի ուղի, որը ոչ մի տեղ չի տանում:

Իսկ դուք, որ լսում եք ինձ և ունակ եք ընկալելու իմ թրթռումները, ձեր Մորը չպետք է թողնեք դժբախտության մեջ:

Ես կարող եմ ձեզ հետ հույսեր կապել, այնպես չէ՞: Հենց այդ հույսով եմ եկել և ձեզնից խնդրում եմ այն օգնությունը, որի կարիքն ունի ձեր հիվանդ մոլորակը: Հենց հիմա, ինչպես երբեք:

Արդեն գիտեք, որ ձեր մոլորակի հիվանդ վիճակն արդյունք է այն մտքերի, զգացմունքների ու արարքների, որոնք թույլ են տալիս իր զավակները: Նաև իմացեք, որ ձեր Մայր Երկիրը շատ է ցավում իր անգիտակից զավակների համար: Հենց այդ ցավով է Նա տառապում: Ուստի ցուցաբերե՛ք ձեր Մայր Երկրին այն օգնությունը, որի կարիքը Նա ունի: Իսկ Նա ձեր Միտք՝ կարիքն ունի: Ձեր Մոր համար չկա ավելի արժեքավոր դեղ, քան ձեր սրտերի Մերն է:

Խնդրում եմ, այսօրվանից սկսած ձեզ համար կանոն դարձրեք օրական մի քանի բոլոր հատկացնել այն բանին, որ Մեր առաքելք ձեր հարազատ մոլորակին: Խնդրում եմ, հիշե՛ք այն լավագույն բոլորները, որոնք անց եք կացրել բնության գրկում՝ լեռներում, գետափին, անտառում: Հիշե՛ք բերկրանքի այն պահերը, որոնք ապրել եք բնության գրկում:

Հիշե՛ք ամառային խաղող օրերն ու երեկոները: Հիշե՛ք արևածագերն ու արևամուտները:

Հիշե՛ք ամառային կիզիչ, պայծառ ցերեկն ու գովաշունչ երեկոն: Հիշե՛ք այն ամենը, ինչ ձեր ներսում լավագույն հիշողություններ է արթնացնում:

Ձեր երախտագիտությունը հայտնեք Մայր Երկրին այն ամենի համար, ինչ Նա տվել է ձեզ անցյալում: Եվ եթե հիմա կարողանաք Մեր առաքել ձեր Մորը, ապա Նա էլ կկարողանա վերականգնել իր առողջությունն ու իր կենսական ուժերը և դեռևս շատ մարդկային սերունդների համար ծառայել որպես օթևան ու ապաստան:

Ձեր մոլորակը մի՛ համարեք անփոփոխ ինչ-որ բան, որը տրված է ձեզ մեկընդմիջ: Ձեր մոլորակի ներկայիս վիճակը սոսկ ձեր մտքերի, զգացմունքների և ձեր գիտակցության ներկա մակարդակի արտացոլանքն է:

Ուստի հենց ձեզնից և ոչ ուրիշներից է կախված ձեր մոլորակի ապագան, կյանքն և այն ամենը, ինչով շրջապատված է ձեր հարազատ մոլորակը՝ ձեր Մայրը:

Ես եկա, որ ձեզ մատուցեմ այն պարզ բանի ըմբռնումը, որ Երկիրը ձեր օգնության կարիքն ունի: Նաև հուշեցի, թե ինչպես ցուցաբերեք այդ օգնությունը:

Ես եկա հիշեցնելու ձեր պարտքի մասին և ասելու, որ ձեր պարտքը կատարելու ժամանակն է արդեն: Դրա տիեզերական հնարավորությունը դեռ չի սպառվել: Բայց դուք մշտապես պետք է պատասխանատվություն զգաք այն ամենի հանդեպ, ինչը ձեզ շրջապատում է:

Քանզի ձեզ շրջապատող ամեն ինչը ստեղծված է ձեր գիտակցությամբ: Եվ ձեր գիտակցության մակարդակի բարձրանալուն գուցեթաց կփոխվի նաև ձեզ շրջապատող պատրանքային իրականությունը: Այն կդառնա ավելի աստվածային, ավելի մոտ Աստծո Իրականությանը:

Ահա Ես եկա, և Ես ասացի...

ԵՍ ԵՄ Ալֆան, ձեր Երկնային Հայրը: ՕՄ

Տեր Շիվա

15 դեկտեմբերի, 2005 թ.

Ուսմունք Աստծո Էներգիայի նկատմամբ պատասխանատվության մասին

ԵՍ ԵՄ Շիվան... ԵՍ ԵՄ այս դեսպանորդի միջոցով այս օրով ձեզ այցի եկողը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ այն թողության շնորհի մասին, որը ձեզ տվեցի այս տարվա նոյեմբերի 27-ին:

Դուք պետք է մեկ անգամ ևս կշռադատեք և գործնականում կիրառեք այն հնարավորությունը, որը ձեզ տրվում է Երկնքից: Մի՛ կարծեք, թե նման հնարավորությունները ձեր գիտնական կթափվեն Երկնային մանանայի պես: Մենք շնորհում ենք հնարավորություն, որից հետո ուշադրությամբ հետևում ենք, թե ինչպես եք դուք այն օգտագործում: Եվ եթե այնքան եք խրված ձեր պատրանքի մեջ, որ չեք կարող ըստ արաժանվույն գնահատել մեր շնորհը, ապա իմաստ չունի շարունակել ձեզ նոր հնարավորություններ, գիտելիքներ և տեղեկատվություն տալը:

Հասկացե՛ք. այն, որ Երկնքում հերթական անգամ որոշում է կայացվել այս դեսպանորդի միջոցով դիմել Երկրի մարդկությանը, սովորական իրադարձություն չէ՝ նման այն դեպքերին, որ շատ մարդիկ դիմում են Աստծուն և ստանում հանձնարարականներ ու խրատներ: Սույն դեպքում մենք մտադիր ենք աշխատել ողջ աշխարհի մասշտաբով: Եվ հերթական անգամ մեր գիտելիքներն ու տեղեկատվությունը մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով:

Ես ուզում եմ, որ դուք ըմբռնեք տարբերությունը այն բաների միջև, որ որոշ մարդիկ հնարավորություն ունեն որոշակի տիպի տեղեկատվություն ստանալ՝ այն ձեռք բերելով նուրբ ոլորտի որոշակի մակարդակներից, և որ մենք տեղեկատվություն ենք տալիս մեր դեսպանորդի միջոցով:

Տարբերությունը շատ մեծ է: Ամենից առաջ այդ տարբերությունը կապված է մատուցվող տեղեկատվության հավաստիության մեծ աստիճանի հետ, քանի որ տեղեկատվության հաղորդումն իրականացվում է ոչ թե դեպքից դեպք՝ ինքնաբերաբար կերպով, այլ լիովին նպատակամղված: Տեղեկատվության հաղորդման համար ծախսվում է Աստծո շատ մեծ քանակի Էներգիա: Ըստ այդմ՝ գնահատե՛ք տրվածը և մի՛ մոռացեք այն պատասխանատվության մասին, որն անմիջապես ընկնում է ձեր ուսերին, երբ ստանում եք տրված տեղեկատվությունը:

Եթե դուք ձեր կյանքերում չեք կիրառում ձեր ստացածը, չեք առաջնորդվում այն խորհուրդներով ու հանձնարարականներով, որոնք կան այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրություններում, ապա ինքնաբերաբար կարմա եք ստեղծում, քանի որ ըստ նշանակության չեք օգտագործում Աստծո այն Էներգիան, որը պարունակվում է սույն թելադրություններում:

Իսկ նպատակը, որի համար ձեզ է հղվում այդ Էներգիան, միանշանակ է: Մենք ցանկանում ենք բարձրացնել մարդկության գիտակցությունը և այն նախապատրաստել այնպիսի նոր մակարդակի անցնելուն, որը կհամապատասխանի տիեզերական Էվոլյուցիայի նոր փուլին:

Ըստ այդմ՝ և՛ս մեկ անգամ մտորեք: Հնարավոր է՝ հարկ չկա, որ կարդաք այս թելադրությունները, և գուցե դա ձեզ համար ավելի լավ որոշում կլինի, քան եթե ընդունեք այս թելադրությունների Էներգիան և չկիրառեք ձեզ տրված հանձնարարականներից և ոչ մեկը: Այդ դեպքում դուք կստեղծեք անգործության կարմա, որի մասին իր թելադրության մեջ արդեն մանրամասն խոսել է Վեհապետ Կույթումին:

Դուք չեք կարող Էներգիան վերցնել, բայց չօգտագործել այն նպատակով, որի համար այն տրված է: Իսկ նպատակը մարդկության գիտակցության բարձրացումն է և, դրանով հանդերձ, այն համադետների ու տարերային արհավիրքների կանխումը, որոնք կապված են մարդկային անկատար գիտակցության հետ:

Բայց պետք է ձեզ ասեմ, որ եթե այս թելադրությունները ձեզ մատչելի են դարձել, և դուք էլ կարդացել եք դրանք, ապա դա նշանակում է, որ եկել է Երկրի մարդկությանը ծառայելու ձեր հերթը: Եվ եթե այժմ դուք հրաժարվեք այս թելադրությունները կարդալուց այն հույսով, որ կխուսափեք անգործության կարմայից, ապա դրանով իսկ դուք կկատարեք մի ընտրություն, որը ձեզ դուրս կհանի Ուղուց: Եվ դեռ հայտնի չէ, թե կարմայի ո՞ր տեսակը ձեզ համար ավելի ծանր կլինի:

Իմացեք, որ Տիեզերքում չկա ոչինչ, որ չենթարկվի համայն աշխարհում գործող Օրենքին: Եվ հատվել է այն սահմանը, երբ մարդկությունը կարող էր չափազանց կամայականորեն օգտագործել Աստծո էներգիան: Մենք արդեն ձեզ ասել ենք, որ մարդկությանը շնորհված ազատ կամքն ունի իր ժամանակային շրջանակները: Եվ եթե մարդկությունը, հասնելով այն սահմանագծին, մինչև ուր նրան թույլատրված էր ազատ կամքով փորձարարություններ անել, ինքնուրույնաբար չվերադառնա համայն տիեզերքի համար նախատեսված Օրենքով առաջնորդվելուն, ապա նա կոպտորեն հետ կշրջվի ու կխրատվի, նույնիսկ եթե դրա համար հարկ լինի տակնուվրա անել ամբողջ Երկիրը:

Ուստի խելամի՛տ եղեք: Եվ կանգնե՛ք, վերջապես, տիեզերական Հիերարխիայի այն աստիճանի վրա, որն էվոյուցիոն զարգացման ներկա փուլում համապատասխանում է ձեզ:

Որքան շատ դուք տատանվեք և վերադառնաք այն վարքին, որը կապված է ազատ կամքի չարաշահման հետ, այնքան ավելի կոշտ կերպով կկանգնեցվեք այն ուղու վրա, որը նախատեսված է ձեզ համար և համապատասխանում է տիեզերական էվոյուցիայի առաջիկա փուլին:

Ձեզ կարող է թվալ, թե ես չափազանց դաժան եմ և ահաբեկում եմ ձեզ:

Այո՛, ես շատ վճռական ու անհաշտ Տիրակալ եմ: Ես կատակել չեմ սիրում. նաև չեմ սիրում, երբ ինձ չեն ենթարկվում:

Եվ ես անում եմ այն, ինչ իմ պարտքն է, քանի որ Տիեզերական Հիերարխիայի իմ կարգավիճակն ինձ թույլ է տալիս ձեզ հետ շատ կոշտ խոսել: Ավարտվել է այն ժամանակաշրջանը, երբ մեզ կարող էինք թույլ տալ համոզել և հաճոյախոսել ձեզ: Այժմ մենք կխոսենք ավելի կոշտ, և այդ կոշտությունն ու անսասանությունն արդարացված են տիեզերական ժամկետների մոտեցմամբ: Եվ ձեզ համար ավելի լավ կլինի, եթե հիմա ձեզ կշտամբեմ ամենակոշտ ձևով, քան թե ամենաանհարմար ժամի ձեր գլխին համադետ կոտրվի:

Եվ եթե չլինեք այդ ահավոր այլընտրանքի հավանականությունը, որը մեծանում է ամեն րոպե, ապա ես կարող էի և շարունակել ձեզ հաճոյախոսել և արժանացնել ձեզ մեր ուշադրության պարգևին ու մեր ուշադրության նշաններին:

Այժմ ես ձեզ առաջարկում եմ ամենայն լրջությամբ վերաբերվել այն հնարավորություններին, որոնք ձեզ տրվել են Տեր Սուրիայի և Պաշտելի Ալֆայի նախորդ թելադրություններով:

Ձեզ կարող է թվալ, թե այն, ինչ առաջարկվում է, բավարար չէ մոլորակի հավասարակշռությունը պահպանելու և համադետը կանխելու համար: Բայց եթե ընդամենը մի քանի հարյուր կամ հազար մարդ լիովին անկեղծ արձագանքեն մեր կոչին, ապա ես երաշխավորում եմ, որ արդյունքը շատ շուտ կդրսևորվի և թույլ կտա վերացնել մոլորակի անհավասարակշիռ վիճակը, որը դեռևս շարունակում է շիկանալ:

Եվ հատկապես կարևոր է դա անել հիմա՝ մինչև տարեվերջ:

Մենք սկսել ենք թելադրությունների նոր շրջան: Եվ դուք տեսնում եք, որ յուրաքանչյուր թելադրության մեջ մենք նախագրուշացնում ենք սպառնացող վտանգի մասին: Արդյոք դա ձեզ տարօրինակ չի՞ թվում: Եվ արդյոք դա չի՞ վկայում այն մասին, որ ժամանակն է վերջապես պոկվելու ձեր պատրանքից և զբաղվելու իրական գործով: Ընտրություն՝ կատարեք. կա՛մ պատրաստվել տոներին, կա՛մ էլ ողջ հաստատակամությամբ ու վճռականությամբ իրագործել այն, ինչ ձեզնից խնդրում են Վեհապետները: Բավարար է և այն մյուս մարդկանց քանակը, որոնք այս տոնական օրերի ընթացքում կճոճեն նավակը: Ինչ-որ մեկն էլ վերջո պետք է պահպանի հավասարակշռությունը: Եվ հենց դո՛ւք եք, որ դա պետք է անեք: Զանգի ոչինչ այս աշխարհում պատահական չի լինում: Եվ այն, որ հիմա դուք կարդում եք այս թելադրությունները, խոսում է այն մասին, որ հատկապես դու՛ք եք այն մարդիկ, ում հետ Երկնությունները հույսեր են կապում այս պատասխանատու ժամանակաշրջանում:

*ԵՄ ԵՄ Շիվան... Կարծում եմ, որ որևէ ուրիշ Տիրակալ
ձեր հանապազօրյա խնդիրների մասին ձեզ չէր ասի
առավել միանշանակ և առավել կոշտ, քան դա արեցի ես*

Զրույց Ձեռնադրումների Ուղու մասին

ԵՍ ԵՄ Մայտրեյան, եկել եմ, որ կարևոր ուղերձ հղեմ Երկրի մարդկությանը: ԵՍ ԵՄ այսօր եկել որոշակի նպատակով, ինչը պետք է ի կատար ածվի հենց այն ժամանակ, երբ տեղի է ունենում տարեկան շրջանի հերթագայություն: Արդեն գիտեք, որ երբ անցած անգամ ես եկա, դուք հնարավորություն ունեցաք պատկերացում ստանալու Ձեռնադրումների Ուղու և իմ Դպրոցի մասին, ուր ես հրավիրում եմ բոլոր ցանկացողներին. սակայն բոլորը չէ, որ կարող են սովորել այդ դպրոցում և առավել ևս՝ ավարտել այն:

Գաղտնիքը շատ պարզ է: Մարդիկ ձգտում են ձեռնադրումների՝ որպես ինչ-որ խորհրդավոր, անմատչելի բանի: Նրանց համար Ձեռնադրումների Դպրոցում սովորելն ինչ-որ բանով նմանվում է համբավավոր ուսումնական հաստատության մեջ գտնվելուն՝ Երկրի վրա հայտնի համալսարաններից կամ ուսումնական կենտրոններից որևէ մեկում, որտեղ ուսում ստանալն ուղի է հարթում կարիերայի համար:

Ձեռնադրումների Դպրոցն արմատապես տարբերվում է Երկրի համբավավոր ուսումնական հաստատություններից: Եվ այդ տարբերությունը կապված է հատկապես այն բանի հետ, որ դուք գրկվում եք երկրային համընդհանուր նշանակությամբ ընդունված կարիերայից: Դրա հետ մեկտեղ դուք գրկվում եք նաև այն ամենից, ինչը թանկ է ձեզ համար, և ինչի հետ դուք դեռևս պահպանում եք զուտ մարդկային կապվածություն:

Այդ պատճառով Ձեռնադրումների Ուղու հենց առաջին փուլերում արդեն շատ քիչ են լինում ուսումը շարունակել ցանկացողները, ինչքան էլ որ Գաղտնածեսների իմ Դպրոցում ուսանելը համբավաբեր թվա էգոթերիկական գիտելիքների բնագավառից անտեղյակների ու անգետների աչքում:

Համաձայն վաղեմի և լայն լսարանի համար անհայտ օրենքի՝ ձեռնադրումները դրանց համար նախատեսված դպրոցներում անց են կացվել փակ դռների հետևում, և Ձեռնադրումների Դպրոց մուտք գործելը խստորեն հսկվել է: Եվ նույնիսկ մեր այն աշակերտներն, ովքեր արդեն կանգնել են Ուղու վրա և ստացել առաջին ձեռնադրումները, մոտ չեն թողնվել ամենամիլիարդական գաղտնիքներին ու խորհուրդներին: Ինչու? Որովհետև աշակերտների մեծամասնության գիտակցության մակարդակին հասանելի չեն լինում շատ բաներ, որոնք տեղի են ունենում փակ դռների հետևում և մատչելի են միայն շատ քիչ թվով մարդկանց:

Եթե դուք ձեր անպատրաստ գիտակցությամբ պատահաբար հայտնվեիք այն սենյակում, որտեղ բարձրագույն մակարդակի ձեռնադրումներ են արվում, ապա դուք, ամենայն հավանականությամբ, նույն պահին կլքեիք Ձեռնադրումների Դպրոցը և այլևս երբեք հայացք չեիք նետի նրա շեմից ներս: Դեռ ավելին, դուք ամենուր և ամենքին կասեիք, որ տվյալ Դպրոցը պարզապես դժոխքի ծնունդ է, և ոչ-ոքի մտքով նույնիսկ չպետք է անցնի թափանցել նրա շեմից ներս:

Դե ինչ, մեզ ձեռնադրում է, որ մեր չհաջողված աշակերտները մեր մասին այդպիսի տգետ լուրեր տարածեն: Քանզի իրոք, երբ մարդն ազատվում է իր իսկ անիրական մասից, այդ գործընթացն այնքան ցավոտ է լինում և երբեմն այնպիսի դրամատիկ ընթացք է ունենում, որ այնպիսի զգացողություն կարող եք ունենալ, թե գտնվում եք կտտանքների խցիկում:

Եվ հիրավի, երբ դուք ակնառու կերպով դեմ առ դեմ հանդիպում եք ձեր իսկ անիրական մասին, ստանում եք այնպիսի զգացողություն, որ հանդիպել եք հենց սատանայի հետ: Միայն թե այդ սատանան, ի տարբերություն համընդհանուր համոզմունքի, գտնվում է ոչ թե ինչ-որ տեղ անդրաշխարհում, այլ հենց ձեր ներսում:

Այո՛, պաշտելիներ՝ իս, և՛ Աստված, և՛ սատանան գտնվում են ձեր ներսում: Եվ հենց դա է այն նվիրական գաղտնիքը, որը փորձառություններ անցնելու ընթացքում բացվում էր ձեռնադրյալների առջև: Իրենց ուսումնառության ընթացքում նրանք հնարավորություն էին ստանում և՛ բախվելու իրենց անիրական, մարմնավոր մասի հետ, որի ժամանակ լիարժեք զգացողություն էին ունենում, թե բախվել են սատանայի հետ, և՛ հանդիպելու իրենց իսկ աստվածային մասին և զգալու իրենց աստվածային, անանց էությունը:

Եվ այն բանից հետո, երբ նրանք ճանաչում էին իրենց երկակի բնույթը, պետք է կատարեին իրենց վերջնական ընտրությունը և լրիվ ենթարկվեին իրենց աստվածային մասին՝ Աստծուն, որը ներկա է ինչպես իրենց, այնպես էլ իրենց Ուսուցչի ներսում:

Եվ դա դժվարին ընտրություն է, քանզի հենց այն հիմնական ընտրությունն է, որը պետք է կատարի մարմնավորման մեջ գտնվող յուրաքանչյուր մարդ: Եվ ձեզնից յուրաքանչյուրը ներըմբռնողաբար ենթադրում է, որ իր լուծելիք ամենակարևոր հարցը հենց այդ ընտրությունը

կատարելու հարցն է Աստծո և սատանայի միջև՝ ձեր իսկ իրական և անիրական մասերի միջև: Դուք գիտեք այդ երկրնորանքի մասին և այդ պատճառով վախենում եք սխալվելուց: Քանզի շատ են այնպիսիները, որոնք օգտվում են ծառայելու ձեր ցանկությունից և Ձեռնադրումների Ուղով ընթանալու ձեր ձգտումից: Նրանց ազդեցության տակ ընկնելը շատ հեշտ է, իսկ նրանցից պոկվելը՝ անհամեմատ ավելի դժվար: Եվ այդ ամենն իրոք նման է Ձեռնադրումների Դպրոցում սովորելուն, միայն թե դրսում ձեր կատարած ընտրությունը ստիպում է ձեզ ծառայել ոչ թե ձեր ներսի Աստծուն, այլ ձեր էգոյին:

Ուստի մի՛ շտապեք ենթարկվել պատահական մարդու ազդեցությանը, որքան էլ նա ձեզ թվա լուսավոր ու շնորհաշատ:

Մեր խնդիրն է ձեզ ցույց տալ զանազանման նրբագույն եզրերը: Այն բանին զուգընթաց, որ դուք ավելի ու ավելի եք առաջանում ձեր Ուղով, ձեզ վիճակվում է զանազանումներ կատարել ավելի ու ավելի նուրբ մակարդակով: Եվ եթե Ուղու սկզբում ձեզ համար ամեն ինչ պարզ էր. պետք էր միայն պահպանել այն տասը պատվիրանները, որոնք տրվել էին դեռևս Մովսեսի ժամանակներում, և ձեր փրկությունը թվում էր երաշխավորված, ապա Ուղով ընթանալուն զուգընթաց հենց պատվիրանների պահպանումն իսկ ձեզ համար արդեն փորձաքննություն է:

Եվ եթե ես հիմա պատմեմ այն նրբագույն եզրերի և նրբերանգների մասին, որոնցում դուք կարող եք մոլորվել՝ նույնիսկ հետևելով աստվածաշնչյան տասը պատվիրաններին, ապա հազիվ թե կարողանաք հասկանալ ինձ:

Ուրեմն Աստծո գիտությունը շատ բարդ է: Եվ այդ գիտության ուսանումը պետք է տեղի ունենա փորձառու դաստիարակի առաջնորդությամբ:

Եվ ձեր կատարած առաջին ընտրությունը հենց այն դաստիարակի՝ այն հեղինակության, ընտրությունը պետք է լինի, ով կարող ձեզ առաջնորդել:

Ձեզնից շատերը գիտակցության ու իրականության ընկալման այնքան ցածր մակարդակի վրա են, որ այն ամենը, ինչ այսօր ես փորձում եմ ձեզ ասել, ուղղակի կանցնի ձեր գիտակցության կողքով և նրա մեջ մի չնչին հետք անգամ չի թողնի: Սակայն կան մարդիկ, որոնք իմ ասածները կրնակալեն որպես շատ կարևոր տեղեկատվություն, առանց որի իրենց հետագա Ուղին պազապես աներևակայելի է: Ես խոսում եմ այդ քչերի համար: Իսկ դուք, որ չհասկացաք, թե ինչի մասին եմ խոսում, կհիշեք իմ խոսքերը, երբ կգա ձեր ժամանակը, և կբախվեք ձեր ներսի ու դրսի այնպիսի հանգամանքների, որոնցից զուրխ չեք հանի: Եվ, հիշելով այն հուշումները, որոնք ձեզ տվեցի այսօրվա գրույցի ընթացքում, դուք կվերադառնաք դրանց և նորից կկարդաք: Այնժամ կհասկանաք, որ ոչինչ իզուր չի ասվել: Այն ամենը, ինչ այստեղ ասվեց, շատ կարևոր տեղեկատվություն է նրանց համար, ովքեր ունակ են այն ընկալելու:

Ես իմ այս խրատով եկել եմ տարեկան շրջանի հերթագայության սահմանգծում: Որովհետև հենց հիմա է սկսվում այն ժամանակը, երբ դուք կարող եք առանց շտապելու գնահատել տարվա արդյունքները և հասկանալ, թե դեպի ուր է ձեզ հարկավոր մղվել հաջորդ տարվա ընթացքում: Տարվա փոխվելու ժամանակահատվածը շատ կարևոր փուլ է, և այն ընդունված կարծրատիպը, որով մարդկության մեծամասնությունը նշում է տարեմուտը, հենց այն գլխավոր կարծրատիպերից մեկն է, որը դուք պետք է հաղթահարեք ձեր գիտակցության մեջ:

Քանզի տարեմուտի այդ շրջանում աղմկող ու անթափ մարդկանց շրջապատում գտնվելու փոխարեն ձեզնից դրա ուղիղ հակառակ գործողությունն է պահանջվում:

Դուք ձեր հոգու զարգացման համար շատ ավելին կստանաք, եթե այս ամանորը դիմավորեք միայնակ կամ ձեր ընտանիքի հետ և, փոխանակ երաժշտությամբ ու ակոհողով ինքներդ ձեզ խլացնելու, փորձեք հանգիստ ամփոփել անցնող տարին և պլաններ կազմել ապագայի համար:

Բոլոր մեծագույն սխրանքները սկսվել են լռության մեջ, ընտանեկան օջախի հանդարտ, խաղաղ գրույցի ընթացքում:

Ոչ մի առողջ միտք երբեք չի ծնվել ամբոխի աղմկոտ տոնախմբության ժամանակ:

Ես այսօր ձեզ հետ խոսեցի այն անափ սիրո դիրքից, որը տաժում եմ ձեզնից նրանց նկատմամբ, ովքեր դարձել են իմ աշակերտները, ովքեր Գաղտնի Ծեսերի Դպրոց ընդունվելու իմ հրավերից հետո որոշում են կայացրել և առ այսօր չեն մոռացել ինձ ու իմ ղեկավարությամբ ուսանելու իրենց մտադրության մասին:

Ես ուշադրությամբ հետևում էի, թե որքանով է հաստատ ձեր նկրտումը:

Ձեզնից ոմանք հենց հաջորդ օրը մոռացան, որ ինձ խնդրել էին իրենց ընդունել իմ Դպրոցը: Բայց և եղան այնպիսիները, որոնք մինչև հիմա հիշում են իրենց մտադրության մասին: Եվ ես նրանց հետ կշարունակեմ իմ աշխատանքը:

Կես տարին բավարար ժամկետ է, որ դուք կարողանայիք գնահատել ձեր մտադրության լրջությունը: Եվ այժմ մենք միասին առաջ կգնանք: Իսկ նրանք, ովքեր հապաղեցին, կարող են

նորից ավելի լրջորեն վերլուծել իրենց մոռացած մտադրությունը և կրկին դիմել իմ Դպրոցն ընդունվելու համար:

ԵՍ ԵՄ Մայրություն՝ ձեր նկատմամբ Միտով լի

Վեհապետ Լանելյո
17 դեկտեմբերի, 2005 թ.

**Քրիստոսի գիտակցության մակարդակը
դուք պարտավոր եք հաստատել ամեն օր**

ԵՍ ԵՄ Լանելյոն՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկողը, որ նորից հիշեցնեմ ձեզ այն պատասխանատվության մասին, որն ստացվող էներգիաների և ստացվող տեղեկատվության հետ միաժամանակ ընկնում է ձեզ վրա: Դուք կարող էիք նկատել, որ թելադրությունների այս շրջանը տարբերվում է նախորդ շրջանից:

Իրոք, մենք իրավասու էինք ձեզնից ակնկալելու ավելին այն ամբողջ էներգիայից ու տեղեկատվությունից հետո, որոնք դուք ստացաք թելադրությունների նախորդ՝ զարնանային-ամառային շրջանի ընթացքում:

Ինչ-որ բան հաջողվեց փոխել մարդկանց գիտակցության մեջ, բայց այդ փոփոխությունները չափազանց քիչ էին՝ համեմատած այն փոփոխությունների հետ, որոնք մենք կարող էինք ակնկալել:

Այո՛, մարմնավորման մեջ գտնվող բավականին շատ մարդիկ ձեռք բերեցին Քրիստոսի գիտակցության մակարդակ, և մենք իրավասու էինք նրանցից ակնկալել ավելի ակտիվ գործողություններ ֆիզիկական ոլորտում:

Սակայն մատերիայի իներտությունն ու խտությունը չհապաղեցին ազդեցություն գործել նրանց գիտակցության վրա անմիջապես այն բանից հետո, երբ մենք ավարտեցինք թելադրությունների շրջանը: Չրկվելով այն մշտական սնուցումից, որը նրանց էր հասնում թելադրությունների էներգիայի հետ մեկտեղ, շատ մարդիկ, ովքեր արդեն հասել էին Քրիստոսի գիտակցությանը, նորից թույլ տվեցին իրենց գիտակցության մակարդակի անկում: Ես ձեզ կարող եմ ասել, պաշտելիներս, թե ինչով է տարբերվում Քրիստոսի գիտակցությանը հասած և այն պահպանող մարդը բոլոր այն մյուս մարդկանցից, ովքեր դեռ չեն հասել այդ մակարդակին: Գլխավոր և հիմնական տարբերությունն այն է, որ այդ մարդն այլևս չի կարող ապրել նախկինի պես. նա չի կարող չգործել և իր ողջ կյանքն ու դրա հետ կապված հանգամանքները ենթարկեցնում է ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործողությունների դրսևորմանը՝ հանուն մեր պլանների իրականացման:

Դուք չեք կարող հասնել Քրիստոսի գիտակցությանը և դափնիների վրա հանգչել մինչև ձեր մարմնավորման ավարտը: Ո՛չ, Քրիստոսի գիտակցության մակարդակը դուք պարտավոր եք հաստատել ամեն օր: Դա ամենօրյա և հազեցած աշխատանք է:

Որքան էլ ցավալի է մեզ համար, մենք տեսանք, որ հենց որ մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների շրջանն ավարտվեց, նրանցից շատերը, որոնց հետ մենք հույսեր էինք կապում և շատ բան ակնկալում, աստիճանաբար իրենց գիտակցությամբ իջան նախկին մակարդակին:

Շատ ցավալի փաստ է սա:

Հոգևոր բնագավառի այն նվաճումները, որոնց դուք հասնում եք՝ լինելով մարմնավորման մեջ, չեն կարող պահպանվել նույնիսկ մի քանի ամիս, եթե ամենօրյա ջանքերով չպահպանեք ձեր գիտակցության մակարդակը:

Ֆիզիկական օկտավայում չի կարող լինել ոչ մի հանգիստ: Միայն ամենօրյա աշխատանք և ամենօրյա լարվածություն:

Ես կրեթեմ աշխարհի չեմպիոնի կոչում վաստակած մարզիկի օրինակը: Եթե նա ամեն օր մարզվելու փոխարեն հանգչի դափնիների վրա, ապա շատ շուտով այլևս չի կարողանա պահպանել իր մարզավիճակը: Կհայտնվեն ուրիշ մարզիկներ, որոնք կգերազանցեն նրա համաշխարհային ռեկորդը:

Եթե ձեզ բավարարում է չեմպիոնի կոչումը, որը ձեռք եք բերել, իսկ այժմ ուզում եք հանգչել դափնիների վրա, ապա մենք՝ Համբարձյալ Դասերս, այլևս չենք ուզում ձեզ հետ որևէ ընդհանուր բան ունենալ, իսկ դուք էլ կարող եք այլևս հույս չկապել մեր օժանդակության հետ:

Իմացեք, որ ձեզնից պահանջվում են ամենօրյա ջանքեր:

Մարմնավորման մեջ գտնվող շատ լուսակիրներ կան, բայց որքան դժվար է գտնել նրանց, ում վրա կարելի կլինի հենվել լրիվ չափով:

Մենք վկա եղանք, թե ինչպես բոցավառվեցին շատերի սրտերը, երբ նրանք ընթերցեցին նախորդ շրջանի այն թելադրությունները, որոնք մենք տվեցինք մեր դեսպանորդի միջոցով: Որքան ցավալի էր տեսնել, թե ինչպես է նրանց սրտերում բռնկված բոցը սկսում թուլանալ, ծխարձակել, մարմնել և ապա ամբողջապես հանգչել:

Դուք չեք կարող պատկերացնել, թե որքան դառն է մեզ համար ձեր տխրահոչակ «նվաճումներին» նայելը: Դա նման է այն բանին, երբ մարդկանցով տառացիորեն գերբեռնված ձեր քաղաքների փողոցներում զբոսնելու եք դուրս գալիս և ձեզ լրիվ միայնակ եք զգում, քանի որ, եթե նույնիսկ այդ մարդիկ ձեզ հետ խոսում են նույն լեզվով, ապա, միևնույնն է, դուք իրար չեք հասկանում: Իսկ դա տեղի է ունենում հենց այն պատճառով, որ ձեր գիտակցությունների մակարդակներն իրարից խիստ տարբեր են լինում:

Եվ երբ դուք հանդուրժում եք ձեր գիտակցության անկումը, ապա այն տեղեկատվությունը, որը նախկինում ձեզ բերկրանք էր պատճառել ու ոգևորել, այժմ ձեզ թվում է անհետաքրքիր և ձեր ուշադրությանը ոչ արժանի մի բան:

Դուք ձեռնամուխ եք լինում նոր տեղեկատվության ու նոր աղբյուրների փնտրտուքին՝ մոռանալով ձեր սրտերի այն մեղմ բերկրանքի ու հանգստության մասին, որով ըմպում էիք մեր թելադրություններում պարունակվող Աստծո էներգիայի ամոքիչ նեկտարը:

Եվ քանի որ ձեր գիտակցության մակարդակն անկում է ապրել, ապա դուք այլևս չեք կարող զանազանել ճշմարիտ թրթռանքներն ու ստիպված եք օգտագործել այն փոխնակները, որոնցով լեփ-լեցուն են ձեր խանութների դարակները:

Այժմ դուք արդեն լավ կհասկանաք մեր տխրության պատճառը և այն, թե ինչու է փոխվել մեր թելադրությունների տոնը:

Մենք ավելին էինք ակնկալում: Եվ հիմա ստիպված ենք հենվել միայն նրանց վրա, ովքեր իրենց ներսում չեն կորցրել Աստծո կայծը, ովքեր ունակ եղան վառ պահելու այն բոցը, որը մեր թելադրություններից հետո բռնկվել էր իրենց սրտերում:

Դե ինչ, յուրաքանչյուրդ իրավասու եք անելու ձեր ընտրությունը: Մենք կարող ենք միայն ափսոսալ ձեր կատարած ընտրության համար, բայց ոչնչով օգնել չենք կարող:

Ձեր գիտակցության վիճակը պատշաճ մակարդակի վրա կարող է պահպանվել միայն ամենօրյա ջանքերի շնորհիվ: Դուք ամեն օր առանց հոգնելու պետք է ստիպեք բանել ոչ միայն ձեր մարմնական, այլ նաև հոգևոր մկաններին: Այլապես նրանք պարզապես հետան կապրեն:

Եվ եթե մի օր երանությանը չեք հիացել բնության պատկերներով, մանկան ժպիտով, եթե այդ օրն անց եք կացրել առանց սիրո, ապա այն ապրել եք լիովին ապարդյուն:

Երկրային կյանքի ամեն մի բույսին դուք պետք է հիշեք ձեր իսկական Տան մասին, որտեղից ձեր հոգիները մարմնավորվել ու հեռացել են, և ամենօրյա ձեր ընտրությունների ընթացքում մշտապես պետք է առաջնորդվեք ձեր իսկ Բարձրագույն մասի խորհուրդներով:

Ինչի՞ց կարող եք որոշել՝ Աստծո հե՛տ եք, թե՞ ոչ:

Դա շատ հեշտ է, պաշտելիներս: Պարզապես գննեք ձեր ներքին վիճակը. եթե ենթարկվել եք որևէ բացասական հույզի ազդեցությանը, լինի դա մեղադրանք, անհանգստություն, ընկճվածություն թե գրգռվածություն, ապա արդեն չեք գտնվում աստվածային գիտակցության վիճակում:

Միայն այնժամ եք Աստծո հետ՝ աստվածային գիտակցության վիճակում, երբ զգում եք ոչնչի հետ չհամեմատվող մեղմ բերկրանք ու խաղաղվածություն:

Հետևաբար սովորե՛ք գննել ինքներդ ձեզ: Սովորեք զանազանել ձեր ներքին վիճակները:

Քանզի ձեր գիտակցության վիճակն իր կնիքն է դնում այն ամենի վրա, ինչ անում եք: Եվ եթե դուք գրգռված եք, ապա տառացիորեն հանդես եք գալիս որպես գրգռվածության գեներատոր: Դուք վարակիչ եք, և ձեր շրջապատի ամեն ինչը վարակում եք ձեր գրգռվածությամբ, նույնիսկ եթե այդ ընթացքում ձեզ համար տանը նստած եք: Ձեր մտքերի ու զգացմունքների տարածմանը սահմանափակում չկա: Եվ ձեր յուրաքանչյուր բացասական միտքն ու հույզն ակնթարթորեն տարածում եք ողջ երկրագնդով մեկ:

Այնուհետև պահանջվում են մեր մի բուռ նվիրյալ ծառայողների հերոսության հրաշքների դրսևորումները, որպեսզի չեզոքացվեն ու վնասագերծվեն ձեր մտքերի ու հույզերի հետևանքները:

Ձեզ անհրաժեշտ է միայն հետևել ձեր ներքին վիճակին և ներքուստ մշտապես պահպանել ներդաշնակ ու խաղաղ վիճակ:

Ձեզնից յուրաքանչյուրի համար կա դեղատոմս, թե ինչպես պահպանել ձեր ներդաշնակ վիճակը: Չկա և չի կարող լինել ընդհանուր դեղատոմս բոլորի համար: Եվ մենք չենք կարող

բոլորիդ ստիպել աղոթել կամ ներխուկում անել: Բայց որոշ միջոցներ, որոնք կարող են նպաստել ձեր ներդաշնակ վիճակին, դուք կարող եք օգտագործել:

Օրինակ՝ մարդկանց մեծամասնության համար բավականաչափ հեշտ է միայնակ մնալ բնության մեջ և ձեռք բերել ներքին ներդաշնակություն ու անդորրություն: Բայց մի ուրիշը կարիք ունի շփվելու երեխաների կամ կենդանիների հետ կամ զբաղվելու իր համար սիրելի ինչ-որ գործով:

Սովորեք մշտապես վերահսկել ձեր ներքին վիճակն ու միջոցներ ձեռնարկել, որպեսզի ձեր իսկ ներսում մարեք ցանկացած անկատար դրսևորում:

Դուք ունեք նաև Համբարձյալ Դասերից օգնություն խնդրելու հնարավորություն, բայց երբեմն նույնիսկ այդ հասարակ գործողությունից եք խապառ մոռանում օգտվել:

Ես պատրաստ եմ յուրաքանչյուրին, ով տարվա այս խավար ժամանակներում կդիմի ինձ, ցուցաբերել իմ անձնական օգնությունն ու օժանդակությունը: Ահա իմ ձեռքը: Բռնեք այն և բաց մի՛ թողեք ցանկացած ծանր իրավիճակում, որը կյանքում ձեզ կհանդիպի:

Մեզ անհրաժեշտ է, որ մարմնավորման մեջ գտնվող հնարավորինս շատ մարդիկ կարողանան հենց այս օրերին պահպանել մոլորակի հավասարակշռությունը: Եվ եթե ի վիճակի չեք պահպանելու մոլորակի հավասարակշռությունը, ապա գոնե այն պահպանեք ձեր իսկ ներսում: Եվ դրանով իսկ արդեն անգնահատելի օգնություն ցուցաբերած կլինեք Համբարձյալ Դասերին:

ԵՄ ԵՄ Լանդլոն, եկա, որ մեկ անգամ ևս ձեզ օգնության ձեռք մեկնեմ

Մահա Չոհան

18 դեկտեմբերի, 2005 թ.

Վերջ տվեք ձեր տոնական հոգսերին: Զբաղվեք մոլորակի հավասարակշռման իրական գործով

ԵՄ ԵՄ Մահա Չոհանը, մեր դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ, որին ճանաչում եք որպես Տիրակալի, ով աշխատանք է տարել շատ դեսպանորդների հետ:

Ահա այս դեսպանորդի միջոցով նորից եկել եմ, որպեսզի աշխատանքի իմ բաժինն իրագործելով՝ ձեզ տամ այն ուղերձը, որն այսօր պարտավոր եմ տալ:

Նախքան գալս փորձում էի հասկանալ, թե ինչից պետք է սկսեմ: Նախ և առաջ հարկ է, որ ողջունեմ Երկրի մարդկության այն ներկայացուցիչներին, ովքեր մեր ուղերձները կարդում են ոչ միայն հետաքրքրությունից դրդված, այլև դրանք ընկալում են որպես անհետաձգելի գործունեության ուղեցույց: Որովհետև մեր ուղերձները մարդկային հետաքրքրությունից դրդված կարդալն ու նրանցում պարունակված պահանջներն ու խնդրանքները չկատարելը վերին աստիճանի անխոհեմության դրսևորում կլինի մարդկանց կողմից:

Որքա՛ն տարօրինակ է երևում մեզ, երբ տեսնում ենք, թե ինչպես են մարդիկ Վեհապետների խոսքերն ընկալում նույն կերպ, ինչպես տեղեկատվություն են քաղում գուտ մարդկային աղբյուրներից: Նրանց համար կարծես ոչ մի տարբերություն չկա՝ իրենց հետ սովորական մարդի՞կ են խոսում, թե՛ նրանք, ովքեր այս բարդ ժամանակներում իրենց վրա են վերցրել մոլորակի դեկը պահելը:

Մեր ուղերձների նկատմամբ ցուցաբերվող այդ անխոհեմ վերաբերմունքը բնորոշ է չգարգացած մարդկային գիտակցությանը: Մանկապարտեզում գտնվող երեխան նույնպես չի կարողանում զանազանել տարբեր աղբյուրներից իրեն հասնող տեղեկատվությունը: Եվ նա ինչպես հեքիաթը, այնպես էլ իր շուրջը տեսած ամեն ինչն ընկալում է որպես նույն կարգի իրադարձություններ: Նույն վիճակում եք և դուք: Միայն թե ձեզ շրջապատող կյանքի իրադարձությունները դուք ընկալում եք որպես իրական, իսկ այն, ինչ մենք ենք ասում՝ որպես հեքիաթ:

Դուք հասուն կհամարվեք, երբ ձեր գիտակցության մեջ կկարողանաք տարբերել Աստծո Իրականությունը ձեր կյանքի հեքիաթային պատրանքից: Հիրավի, ձեր աշխարհը սարսափազդու հեքիաթի է նման:

Ես ներկայացա տարեկան շրջանի փոխման նախօրյակին, ինչը տարվա այս ժամանակ տոնվում է աշխարհի երկրներից շատերում: Եկա, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ այն պատասխանատվության մասին, որը ձեզ վրա է ընկնում այս բարդագույն ժամանակաշրջանում:

Չեմ թաքցնի, որ մոլորակի իրադարձություններն ընթանում են ոչ ամենալավ ձևով: Եվ, եթե դուք մոռացել եք այն ահավոր արհավիրքը, որն անցյալ տարի տեղի ունեցավ Հարավային

Ասիայում՝ բարեբախտաբար վնաս չպատճառելով աշխարհի մյուս երկրներին, ապա ես եկել եմ ձեզ հիշեցնելու ճիշտ նույնպիսի արհավիրքի վտանգի մասին:

Ես չեմ ուզում ձեզ վախեցնել, բայց քանի որ սովոր եք սարսափելի հեքիաթներ լսել, ապա լսեք ևս մեկը:

Հերթական արհավիրքի լինել-չլինելը միայն Երկնոլորտներով չի որոշվում: Երկնոլորտները կարող են կանխել ցանկացած արհավիրք: Սակայն այն էներգիան, որը ծախսվում է արհավիրքի կանխարգելման համար, պետք է արդարացված ու վերականգնելի լինի:

Ըստ այդմ՝ մենք գալիս ու ձեզ ենք դիմում նորից ու նորից՝ հիշեցնելով ձեր պատասխանատվության մասին և ձեր այն պարտավորությունների մասին, որոնք դուք պետք է կատարեք՝ պահպանելով ձեր ներքին հավասարակշռությունը և դրանով հանդերձ պահպանելով ամբողջ Երկիր մոլորակի հավասարակշռությունը:

Դեռևս որոշում չի կայացված՝ թույլ տալ, թե թույլ չտալ հերթական արհավիրքը: Մենք սպասում ենք մեր նախագգուշացմանը տրվող ձեր արձագանքին և այն ջանքերին, որոնք դուք պատրաստ եք գործադրել արհավիրքի կանխարգելման նպատակով:

Գիտակցեք, որ դուք չեք կարող անպատասխանատու դիրք բռնել: Դուք այլևս չեք կարող ձևացնել, թե մոլորակի վրա ոչինչ տեղի չի ունենում, և եթե տեղի է ունենում, ապա դա ձեզ բոլորովին չի վերաբերում: Քանզի վաղ թե ուշ պետք է դուրս գաք մանուկ հասակից և ամբողջությամբ ձեզ վրա վերցնեք հարազատ մոլորակի համար ամբողջ պատասխանատվությունը:

Ես ձեզ մոտ եմ եկել ոչ թե խնդրանքով, այլ պահանջով: Վե՛րջ տվեք ձեր տոնական հոգսերին: Զբաղվե՛ք մոլորակի հավասարակշռման իրական գործով:

Եթե ես ձեզ հետ լինեի մարմնավորման մեջ, ապա մինչև տարեվերջ մնացած ամբողջ ժամանակի ընթացքում կներդնեի իմ բոլոր ուժերը, որպեսզի աղոթեի մոլորակի հավասարակշռության և այն բանի համար, որ խելքի գան այն բոլոր անփույթ զավակները, որոնք ոչ մի կերպ չեն ուզում դուրս գալ անպատասխանատվության ու անխոհեմության վիճակից:

Մենք իրավասու ենք հուսալու, որ հաջորդ երկրային ռասաների գալստյան նախաշեմին Երկրի մարդիկ վերջապես պետք է հասունանան և վերջ տան իրենց էգոյի դրսևորումներին, որոնք այլևս անվտանգ չեն Երկրի ողջ կյանքի հետագա գոյության համար:

Դուք գիտեք, որ անցյալում շատ են եղել այնպիսի ժամանակահատվածներ, երբ մոլորակի իրադրությունը կրիտիկական էր դառնում, և ամեն անգամ մոլորակին օգնության էին հասնում Տիեզերական էակները կամ Տիրակալները, ովքեր մոլորակի փրկության համար գոհաբերում էին իրենց կառույցի մարմինները:

Այժմ իրադրությունը փոխվել է, և մոլորակի փրկությունը պետք է ի կատար ածվի միայն ձեր ջանքերով:

Եկել է այն հոգիների՝ հասունության քննություն տալու ժամանակը, ովքեր այժմ մարմնավորված են մոլորակի վրա:

Ըստ այդմ՝ ես գալիս եմ և դիմում եմ ձեզ ոչ թե խնդրանքով, այլ պահանջով:

Դուք կարող եք չհետևել իմ հանձնարարականներին ու խորհուրդներին: Բայց այնուամենայնիվ ես հուսով եմ, որ Երկիր մոլորակի վրա կգտնվեն բավարար քանակի մարմնավորված հոգիներ, ովքեր կգիտակցեն իրենց պատասխանատվությունը և կկատարեն իրենց պարտքը:

Ինչ հոգևոր գործարությամբ էլ որ դուք զբաղվիս լինեք, ինչպիսի կրոնի էլ որ պատկանեք, ես խնդրում եմ ձեզ մինչև տարեվերջ մնացած ժամանակահատվածում հատկացնել այնքան ժամանակ, որքան կարող եք, որպեսզի իրականացնեք ձեր աղոթքային գործառնությունները: Կարդացե՛ք պատգամներ, աղոթքներ, Վարդարաններ:

Արե՛ք դա այնքան, որքան ծանրացուցիչ չի լինի ձեր տնեցիների, ինչպես նաև աշխատանքի վայրին ու տանը վերաբերող ձեր ընթացիկ պարտականությունների կատարման համար: Մենք չենք կարող ձեզ ստիպել աղոթել, բայց մենք չենք կարող դադարեցնել ամեն մի պատեհ հնարավորության դեպքում ձեզ խնդրելն ու աղաչելը, որ ձեռնամուխ լինեք այդ գործին:

Եկել է գործելու ձեր հերթը:

Ձեր հոգսը համարեք այն անհանգստության մասին պատմելը, որը մենք փոխանցում ենք ձեզ: Պատմե՛ք բոլոր այն մարդկանց, ովքեր պատրաստ են ընկալելու սույն տեղեկատվությունը, և ովքեր պատրաստ են ծախսելու իրենց անձնական ժամանակը Երկրի հավասարակշռությունը պահպանելու նպատակով:

Զգտեք անել ձեզնից կախված ամեն ինչ, և ես հուսով եմ, որ մենք կկարողանանք ձեզ հետ հանդիպել նոր տարվա սկզբում և ամփոփել ձեր գործադրած ջանքերի արդյունքները:

Վեհապետ Կուրծիումի
19 դեկտեմբերի, 2005 թ.

Ուսմունք տարեվերջին իջանող կարմայի մասին

ԵՄ ԵՄ Կուրծիումին՝ մեր դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել, որպեսզի ձեզ Ուսմունք տամ այն մասին, թե ինչպես վերաբերվեք այն կարմային, որը ձեզ է վերադառնում տարեվերջին. ի՞նչ կարմա է դա, և ինչպե՞ս վերաբերվել դրա էջքին:

Արդեն գիտեք, որ ձեր չորս ստորին մարմիններում էներգետիկական գրառումներ կան ձեր այն ոչ ճիշտ, անվայել, անաստվածահաճո արարքների մասին, որոնք կատարել եք ընթացիկ կամ անցյալ կյանքերի ընթացքում: Դրանք կարող են լինել այն կայուն բացասական վիճակների գրառումները, որոնք ուղեկցել են ձեզ անցյալում, և որոնցից դուք դեռևս չեք կարողացել ձերբազատվել ներկա կյանքում:

Արդեն գիտեք նաև ձեզ վերադարձող կարմայի, այն կարմայի մասին, որը, տիեզերական բոլորաշրջանների Օրենքին համապատասխան, ակտիվանում է ձեր աուրայում և հայտնվում ձեր առջև որևէ իրադրության, հույզի, գիտակցության ցածրակարգ վիճակի տեսքով: Կարմայի այդ վերադարձը տարվա ընթացքում տեղի է ունենում մշտապես և աստիճանաբար: Երբ տարվա շրջանն ավարտվում է, դուք բախվում եք մի փոքր այլ իրադրության: Կարող է այնպես լինել, որ այն կարման, որը տարվա ընթացքում, Տիեզերական Օրենքի համաձայն, վերադարձել է ձեզ, ձեր կողմից չի բեռնաթափվել այնքան, որքան պահանջում է Օրենքը: Միանգամայն հնարավոր է, որ մյուս մարդիկ նույնպես անցնող տարվա ընթացքում ճիշտ ընտրությունների, աղոթքների կամ բարի արարքների միջոցով հարկ եղած չափով բեռնաթափած չլինեն իրենց կարմաները:

Նման դեպքում տարեվերջին տեղի է ունենում կարմայի մնացուկների կուտակում, որը կախվում է մարդկության գլխին և կարող է դրսևորվել մարդկությանը բնորոշ տարբեր վիճակների՝ հիվանդությունների, սովի, համատարած ընկճվածության կամ տարբեր տեսակի տարերային աղետների ու բնական համաղետների տեսքով: Ամեն դեպքում, տարեվերջին ձեր ներքին զգացողությամբ դուք նույնիսկ կարող եք զգալ ինչ-որ ավելորդ ծանրաբեռնվածություն: Դա հենց այն մնացորդային կարմայական բեռն է, որը փոխակերպության չենթարկված բացասական էներգիայի տեսքով իջանում է մարդկության գլխին:

Ուստի շատ կարևոր է տարեվերջին ձեր գիտակցությունը խիստ կարգապահ վիճակում պահելը: Այդ առումով շատ օգտակար են գիտակցաբար ձեզ վրա վերցրած սահմանափակումները՝ պաս պահելը, լուռ մնալը, աղոթքային արթնությունը և նմանատիպ այլ գոհողություններ, որոնք դուք կարող եք ի սպաս դնել ձեր ծառայության գոհաստեղանին և օգնել կարիքավորներին ու ընչազուրկներին:

Այդ դեպքում դուք ստեղծում եք լրացուցիչ բարի կարմա, որը ծայրահեղ դեպքում կարող է օգտագործվել ամբողջ մոլորակի վիճակը հավասարակշիռ դարձնելու նպատակով:

Ահա թե ինչն է ենք մենք թելադրությունների այս շրջանի ընթացքում նորից ու նորից ձեզ հիշեցնում արհավիրքի ու տարերային աղետների հնարավորության մասին: Մի՞թե նրա համար, որ ձեզ ահաբեկենք ու ստիպենք աղոթել: Ո՛չ, մենք գալիս ենք, որպեսզի ձեզ բացատրենք, թե ինչ ծանր վիճակ է ստեղծվել Երկրում և ձեզնից նրանց, ովքեր պատրաստ են, առաջարկենք հանդես գալ Աստծո և տիեզերքում գործող Լույսի Հիերարխիայի հետ համատեղ արարչությամբ:

Եթե ձեր գիտակցությունը նման սպասավորությանը պատրաստ չէ, ապա, ամենայն հավանականությամբ, դուք մեր խնդրանքը կընկալեք որպես ոչնչով չհիմնավորված ահաբեկում:

Սակայն եկեք միասին դատենք: Ի՞նչ այլընտրանք կա: Այլ կերպ ինչպե՞ս չեզոքացնել մոլորակի վրա չափազանց շատ կուտակված բացասական էներգիան: Դուք կարծում եք, թե հրաշք տեղի կունենա, և ձեր այն էներգիան, որը չեք կարողացել անցնող տարվա ընթացքում բեռնաթափել, հրաշքով կգոյորշիանա՞...

Բոլոր նմանատիպ հրաշքները, եթե անգամ նախկինում տեղի են ունեցել, միշտ էլ պահանջել են մեծ քանակությամբ լրացուցիչ էներգիա: Եվ այդ էներգիան ձեր մոլորակին տրվել է կամ տիեզերական պահուստից, կամ էլ Համբարձյալ Վեհապետների կառույցով մարմիններից:

Այժմ պատկերացրեք մի ձեռնարկություն, որի արտադրանքը տարեցտարի ավելի վնասաբեր է լինում: Եվ ամեն տարեվերջի ձեռնարկության տերը, իր մյուս շահութաբեր ձեռնարկություններից միջոցներ վերցնելով, փակում է այդ վնասը: Այդպես կարող է շարունակվել մի որոշ ժամանակ: Բայց ահա գալիս է պահը, երբ տերը հասկանում է, որ այդ վնասը պատահական բնույթ չի կրում, և

այդ տարեկան վնասը կապված է տվյալ ձեռնարկության աշխատակիցների ապաշնորհության հետ:

Նման դեպքում լավ ձեռնարկատերը կա՛մ կստիպի իր ենթականերին ավելի լավ աշխատել, կա՛մ էլ կփակի վնասաբեր ձեռնարկությունը:

Ուստի այն միջոցները, որոնք ձեռնարկում են Համբարձյալ Դասերը, ուղղված են այն բանին, որ խթանեն մարդկության լավագույն ներկայացուցիչների ավելի լավ աշխատանքը: Չէ՞ որ, ինչպես վերը բերված օրինակում, դուք չեք ուզենա գրկվել ձեր աշխատավայրից՝ ձեր մոլորակից:

Արդ, եկեք ճիշտ մոտենանք այն երկրներին, որի առջև այժմ կանգնած է մոլորակը: Կա՛մ դուք ունակ կդառնաք ձեզ վրա վերցնելու մոլորակի վիճակի համար պատասխանատվությունը, կա՛մ էլ կգրկվեք տվյալ մոլորակում ձեր էվոյուցիան շարունակելու հնարավորությունից, քանի որ այն կմանաչվի որպես փակուղային:

Իհարկե, այդ բոլորը տեղի չի ունենա միանգամից: Ձեզ հնարավորություն կտրվի աստիճանաբար գիտակցելու ձեր պատասխանատվությունը: Բայց, որպեսզի մեր հորդորներն ավելի համոզիչ լինեն, դուք նախապես զգուշացվեցիք*, որ այլևս մենք չենք զսպի այն կարման, որն ստեղծվում է որոշակի վայրում ապրող մարդկանց կողմից: Այդ կարման տառացիորեն անմիջապես կիջանի այս կամ այն տեխնածին կամ բնական աղետի տեսքով:

Նմանատիպ աղետների հավանականությունը տարեվերջին աճում է: Այդ պատճառով ձեզ անդադար հանձնարարում ենք, որ հատկապես տարեվերջին ավելի գիտակից ձևով վերաբերվեք ձեր հոգևոր գործառություններին՝ աղոթքներին ու ներխուժումներին:

Մարդիկ կան, որոնց գիտակցությունն այնքան ցածր մակարդակի վրա է, որ անօգուտ է նման բաների շուրջ նրանց հետ խոսելը: Բարեբախտաբար նրանց կարմայական պատասխանատվությունն ավելի փոքր է՝ համեմատած այն անձանց հետ, ովքեր գիտակցում են իրադրության ամբողջ բարդությունը, բայց իրենց բնորոշ թերությունների՝ ծուլության, անհեռատեսության պատճառով չեն ձեռնարկում պահանջվող գործողությունները, որոնց մասին մենք խնդրում ենք:

Մարդկանց գիտակցության մակարդակից կախված՝ Կարմայի Օրենքի ազդեցությունը տարբեր է լինում: Եվ այն, ինչ ներվում է ոմանց, մյուսների համար աններելի է: Մի՛ տրտնջացեք, թե ահա այս մեկը հարկ եղած ձևով չի վարվում, բայց նրա վրա կարմա չի իջանում, որ նա խրատվի:

Գուցե այդ մեկն իր էվոյուցիայի համար ժամանակի կամ էլ բարի կարմայի բավականաչափ պահո՞ւստ ունի: Մի՛ անհանգստացեք, Կարմայի Օրենքն անբասիր է գործում: Եվ յուրաքանչյուր ոք հնարավորություն կստանա հանդիպելու այն կարմային, որն ինքը ստեղծել է անցյալում:

Մի՛ մտածեք ուրիշների մասին, մտածեք ձե՛ր մասին և այն մասին, թե անձամբ դուք ինչպես մեղմեք ձեր ու ձեր ընտանիքի կարման, հետո նաև ձեր երկրի ու ամբողջ մոլորակի կարման:

Դուք կարող եք և ամենայն մանրամասնությամբ չհասկանալ, թե ինչպես է գործում այդ համապիտանի Օրենքը, բայց այդ Օրենքի մասին ընդհանուր պատկերացումներ պետք է ունենաք և պատմեք բոլոր նրանց, ովքեր դեռևս լսած չկան Կարմայի Օրենքի մասին: Քանզի որքան շատ մարդիկ տեղյակ լինեն այդ համապիտանի Օրենքին, այնքան մեծ կլինի հավանականությունը, որ նրանք իրենց կյանքում կխուսափեն անաստվածահաճո արարքներ թույլ տալուց:

Երբ կարման իջանում է, հաճախ դուք չեք կարողանում իրար հետ համադրել այն պատճառահետևանքային կապերը, որոնք գոյություն ունեն ձեր կատարած արարքների ու դրանց այն հետևանքների միջև, որոնք ձեզ բաժին են հասնում տարբեր դժբախտությունների ու հիվանդությունների տեսքով: Դուք բացականչում եք. «Ինչի՞ համար, Տե՛ր Աստված»՝ փոխանակ հնազանդությամբ ընդունելու այն ամենը, ինչ Աստված առաքում է ձեզ:

Հավատացե՛ք, Աստված շատ ողորմած է: Եվ այն կարման, որն իջանում է ձեզ վրա՝ լինում է հնարավոր ամենաթեթև տարբերակով:

Եվ եթե դուք կարողանայիք հասկանալ, թե հատկապես ո՞ր արարքի դիմաց եք դուք կրում այս կամ այն կարմայական բեռը, ապա ձեր երախտագիտությունը կհայտնեիք Աստծուն, որ Նա այդքան ողորմաճաբար թույլ է տալիս ձեզ բեռնաթափելու ձեր իսկ ստեղծածը:

Կարմայի բեռնաթափման մի քանի եղանակներ կան:

Առաջին եղանակը ընդհանրապես կարմա չստեղծելն է:

Երկրորդ եղանակը կարմայի բեռնաթափումն է ճիշտ ընտրություններ կատարելու միջոցով:

Երրորդ եղանակը այն իրավիճակի հետ հաշտվելն է, որի մեջ դուք հայտնվել եք:

Եվ, վերջապես, դուք կարող եք ձեր կարմայական բեռը թեթևացնել աղոթքներով ու ապաշավանքով:

Ահա հենց այդ վերջինն էլ մենք ձեզ առաջարկում ենք եռանդագին անել մինչև տարեվերջ:

Դուք այժմ հնարավորություն ունեք գիտակցելու, որ այն ամենը, ինչ ձեզնից խնդրում են Վեհապետները, արդարացված է ու նպատակահարմար:

Ոչ որ չի պատրաստվում ձեզ ահաբեկել կամ ստիպել, որ ինչ-որ բաներ անեք:

Մենք ձեզ հետ խոսում ենք՝ ձեզ ընդունելով որպես բանական էակներ, որոնք սոսկ մեզնից մի քիչ ավելի ցածր էվոլյուցիոն աստիճանի վրա են կանգնած:

ԵՄ ԵՄ Կոյթումին, երջանիկ եմ, որ ձեզ հետ կիսեցի իմ գիտելիքներից մի նշույլ

*«Բոլոր կենդանի էակներին ծառայելու ձեր ամեն մի գործողությունը փոքրացնում է ահագնացող հերթական արհավիրքի հավանականությունը» - Հաութամա Բուդդա, 2 մայիսի, 2005 թ.

Տեր Հիսուս

20 դեկտեմբերի, 2005 թ.

**Արարեք անշահախնդրորեն, առանց ետ նայելու մղվեք դեպի
Աստծո աշխարհը, և դուք կստանաք այն, ինչին արժանի եք**

ԵՄ ԵՄ Հիսուս՝ մեր դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը: ԵՄ ԵՄ նորից եկել, և ինչպես կես տարի առաջ, այնպես էլ այժմ մտադիր եմ տալ հավերժական Ուսմունք հավերժական Կյանքի մասին: Իմ գալուստը համընկել է Ծննդյան տոնի հետ, ինչը քրիստոնեական աշխարհում նշվում է որպես հիշատակ այն օրվա, երբ մոտ 2000 տարի առաջ ես եկա աշխարհ: Եվ ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ ես գգում եմ ձեր աշխարհի անհարմարավետությունն ու խավարը:

Օ՛, եթե դուք թեկուզ աչքի պոչով կարողանայիք նայել շղարշից այն կողմ և զգայիք Երկնային աշխարհի երանությունը, ապա կարծում եմ, որ ձեր արտաքին գիտակցության մեջ ընդմիջտ կպահպանեիք այն պատկերը, որին հարկ է, որ դուք ձգտեք, և որը պարտավոր եք կյանքի կոչել ձեր շրջապատում:

Ձեր գիտակցության ամբողջ խնդիրը նրա անկայունության և նպատակամղվածության անբավարարության հետ է կապված: Երկնային կերպերը դուք չեք կարող Երկրի վրա կյանքի կոչել, քանի դեռ ձեռք չեք բերել նկրտումների և բարձրագույն հավատի այն վիճակը, որի առկայության դեպքում դուք կկարողանաք ձեր ողջ երկրային կյանքը ենթարկեցնել Աստծո պլանները ֆիզիկական օկտավա հասցնելու խնդրին: Միայն այդպես՝ դուք կկարողանաք դառնալ Աստծո հետ համատեղ արարող և դրսևորել Նրա Կամքը ձեր օկտավայում:

Ձեր աշխարհը լրիվ չափով չի բավարարում այն պահանջներին, որոնց պետք է բավարարի էվոլյուցիոն զարգացման այս փուլում: Այդ պատճառով է Համբարձյալ Դասերի անհանգստությունն այդքան մեծ, և այդ պատճառով է մեր թելադրությունների բնույթը դարձել այսպես խիստ ու անզիջում:

Հավատացե՛ք, մեր սերը ոչ մի տեղ չի կորսվել. մենք ինչպես սիրում էինք, այնպես էլ շարունակում ենք ձեզ սիրել: Բայց մեր սերն առաջին հերթին արտահայտվում է ձեր հոգիների նկատմամբ հոգածությամբ, որպեսզի նրանք զարգանան, և ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ այդ զարգացումը հնարավոր լինի իրականացնել նաև հետագայում:

Ճիշտ այնպես, ինչպես սիրող ծնողներն իրենց երեխաներին առավոտից իրիկուն չեն ստիպում քաղցրավենիք ուտել, այլ բազմազան են դարձնում նրանց սնունդը, այնպես էլ մենք ենք ձգտում ձեզ համար ապահովել լավագույն հոգևոր սնունդ: Եվ ներկայումս մենք ձեզ տալիս ենք հենց այն հոգևոր սնունդը, որը ձեզ անհրաժեշտ է: Իսկ եթե ձեզ թվում է, թե այն կոշտ է և ոչ քաղցր, ապա դրանից չի հետևում, որ այն ձեզ համար օգտակար չէ:

Մենք մեր ուսուցողական գործառնությունում մշտապես դիմում ենք մտրակի ու քաղցրարվիթի հերթագայման մեթոդին: Երբ դուք չափից դուրս շատ եք վարժվում մեր քնքշանքին ու խնամքին, ապա մենք երբեմն հարկ ենք համարում ձեզ ցուցադրել, որ չափազանց շատ հոգածությունը միշտ չէ, որ օգտակար է: Եվ գալիս է մի շրջան, երբ դուք ինքներդ պետք է սկսեք գործել՝ չսպասելով, որ ամբողջ Տիեզերքը շարունակի ձեզ գդալով կերակրել ու սրբել ձեր վրա նստած փոշեհատիկը:

Եթե ձեր կյանքում դուք երբևիցե չանեք ձեր առաջին քայլը, ապա երբեք քայլել չեք սովորի:

Ահա հենց այդպիսի առաջին քայլ է ձեր պատասխանատվության գիտակցումը ոչ միայն ձեր ու ձեր մերձավորների, այլ նաև ձեր ամբողջ ձեր մոլորակի կյանքի համար:

Եվ դա ձեր գիտակցության զարգացման հաջորդ փուլն է: Ձեր կողմից անխռիմ կլինեք շարունակել հույս կապել դայակների ու ծնողների հետ, երբ արդեն հասել եք այն տարիքին, որ կարող եք ինքներդ հոգալ ձեր մասին: Դեռ ավելին, դուք ձեզ վրա պետք է պատասխանատվություն վերցնեք այն կենսահոսքերի ճակատագրի համար, որոնք հետ են մնացել

իրենց զարգացման մեջ և առանց ձեր օգնության ունակ չեն հետագա զարգացման: Եվ ճիշտ այնպես, ինչպես մենք ենք ձեզ համար խաղում հոգատար դայակների և ուսուցիչների դեր, նույնպիսի դեր էլ դու'ք պետք է ստանձնեք մարդկության այն ներկայացուցիչների նկատմամբ, որոնք չափազանց շատ են տարված մանկական խաղերով և չեն ցանկանում հասունանալ:

Այդ անխոհեմ սաներին կրթելն ու դաստիարակելն այսօրվանից դրված է ձեզ վրա՝ որպես ձեր պարտքն ու կարմայական պատասխանատվությունը: Եթե դուք չհոգաք անող սերնդի մասին և չխրատեք խնամքի կարիքն ունեցող հասուն անհատներին, ապա շատ մեծ հավանականություն կա, որ Երկիր մոլորակի չափազանց շատ կենսահոսքեր այդպես էլ չեն կարողանա այս կյանքի ընթացքում շփվել Աստծո ճշմարտության հետ և չեն կարողանա մոտենալ հավերժական Կյանքի գիտակցմանը:

Ես հույս եմ կապում ձեր հոգածության հետ: Երբ դուք որոշում եք կայացնում օգնել մյուս կենդանի էակներին, ապա ստանում եք Երկնքի օգնությունը, ինչպես նաև ստանում եք ձեզ անհրաժեշտ գիտելիքներն ու Աստծո էներգիան: Եթե դուք ոչինչ չանեք, ապա ինքներդ ևս չեք կարողանա իրականացնել ձեր աստվածային պլանն ու ձեր աստվածային առաքելությունը, ինչպես նաև չեք կարողանա օգնել ուրիշներին:

Դա շատ հին և իմաստուն օրենք է և գործում է անբասիր:

Երբեք մի՛ մտածեք որևէ պարզևի մասին, որը հույս եք կապում ստանալ ձեր բարի գործերի ու ձեր օգնության դիմաց: Թույլ տվեք, որ Աստված որոշի ձեր վաստակի չափը: Որքան անշահախնդիր լինի ձեր ծառայությունը, այնքան շատ կլինեն ձեր գանձերը, որոնք պահ եք տալիս Երկնքին:

Եվ հենց դա է այն միակ ընտրությունը, որը դուք կատարում եք ձեր ողջ կյանքի ընթացքում: Կա՛մ դուք փորձում եք ձեզ համար որևէ շոշափելի բան ստանալ ձեզ շրջապատող պատրանքից, կա՛մ էլ մտածում եք հավերժական կյանքի մասին: Ինչին ուղղված է ձեր ուշադրության կիզակետը, այն էլ վերջին հաշվով դուք ստանում եք: Եվ եթե կյանքից կյանք շարունակում եք վազել ձեր աշխարհի իրեղենի հետևից, ապա ստիպված եք լինում նորից ու նորից գալ աշխարհ, որպեսզի ձերբազատվեք ձեր կապվածություններից:

Արդ, արարեք անշահախնդրորեն, առանց ետ նայելու մղվեք դեպի Աստծո աշխարհը, և դուք կստանաք այն, ինչին արժանի եք:

Ես ուրախ եղա այսօրվա հանդիպման առիթով, նաև ուրախ եմ, որ ծննդյան տոներին ձեզ նվեր տվեցի այս ոչ մեծ Ուսմունքը:

Ես հուսով եմ, որ ծննդյան տոների ընթացքում դուք ինձ սիրով կհիշեք և կնվիրեք ինձ ձեր սրտերի սերը:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ Միտր բոցում գտնվողը

Վեհապետ Էլ Մորիա
21 դեկտեմբերի, 2005 թ.

Հավատն այն դեղն է, որը ձեզ անհրաժեշտ է

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Բհանը՝ իմ դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկողը, որ ձեր ուշադրությանը ներկայացնեմ կարևոր առաջարկություն, որը ես իրավասու եմ անել այս օրով:

Ինչպես թելադրությունների նախորդ շրջանի ընթացքում, այնպես էլ այժմ ես վճռականորեն եմ տրամադրված: Իսկ եթե որևէ մեկը կասկածում է իմ վճռականությանը և իմ մտադրությունների լրջությանը, ապա ավելի լավ է՝ չկարդա մեր ուղերձները: Նման դեպքում դուք ձեր գիտակցության մեջ անհաղթահարելի պատնեշ եք ստեղծում և արգելափակում ոչ միայն Աստծո ճշմարտության, այլ նաև Աստծո էներգիայի հոսքը:

Ձեր գիտակցությունը պատկանում է ձեր երկակի աշխարհին, այդ պատճառով ձեր աշխարհում տեղի է ունենում ճիշտ այն, ինչը թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ: Ըստ այդմ՝ որքան էլ բարդ լինի իրադրությունը մոլորակի վրա, մենք երբեք ձեզ մինչև վերջ չենք ասի, թե ինչ կարգի համադետի հավանականության առջև եք դուք կանգնած: Քանզի հենց որ ձեր գիտակցության մեջ ծագի վերահաս համադետի մասին միտքը, այն կբազմապատկվի և,

փոխանակ ծագած հրդեհը մարելու, դուք կսկսեք փառելափայտի նորանոր բաժիններ ավելացնել դրա մեջ:

Ուստի մենք երբեք ձեզ չենք հաղորդի այն ամբողջ տեղեկատվությունը, որին ինքնես տիրապետում ենք: Բայց մենք երբեք չենք հոգնի ձեզ նախագգուշացնելուց և խնդրելուց, որ դուք ձեզնից կախված ամեն ինչ անեք մոլորակի իրավիճակը ներդաշնակեցնելու համար:

Դուք երևի նկատել եք, որ, մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների նոր շրջանի սկզբից սկսած, չի եղել դեռ մի որևէ ուղերձ, որը կրեր ուրախ և լավատեսական բնույթ: Եվ պատճառն այն չէ, որ մեր դեսպանորդի հետ ինչ-որ փոփոխություններ են տեղի ունեցել, և նա ահաբեկված է սպառնացող արհավիրքներով: Մեր դեսպանորդի հետ ամեն ինչ կարգին է: Ես կարող եմ վստահեցնել ձեզ, որ մեր ուղերձները փոխանցվում են բավականաչափ բարձր հավաստիության աստիճանով: Ո՛չ, ամբողջ բանն այն է, որ իրադրությունն իսկապես լարված է: Եվ, որքան էլ ջանում ենք, մեզ առայժմ չի հաջողվում ձեզ ոգևորել այնքան, որ ձեզ վրա վերցնեք մեր խնդրած պարտավորությունները: Ազատ կամքի օրենքը, որը գործում է ձեր ֆիզիկական օկտավայում, մեզ թույլ չի տալիս միջամտել և հարկադրել ձեզ: Ուստի մենք կարող ենք միայն խնդրել և, ծայրահեղ դեպքում, պահանջել. իսկ հարկադրել ձեզ գործել՝ երևի կկարողանա միայն այն սպառնալից իրադրությունը, որի մասին մենք ասում ենք:

Ի՞նչ արած, երևում է՝ դուք գերադասում եք գործել ռուսական ասացվածքին համապատասխան. «Մինչև ամպը չորոտա, գեղջուկը չի խաչակնքի»:

Որքա՛ն քիչ են այն մարդիկ, ովքեր լրջորեն են ընկալում մեր տեղեկատվությունը և պատրաստ են շատ բան գոհելու, որպեսզի ի կատար ածեն մեր խնդրանքները:

Կոնկրետ գործողությունների ունակ մարդկանց շրջանակն ընդլայնել դեռևս չի հաջողվում: Այնուամենայնիվ մտորե՛ք այն հանգամանքի մասին, որ որքան էլ լայնորեն ու ժամանակին տանք մեր նախագգուշացումները, դուք ընդունակ չեք լինում արձագանքել:

Եվ գործը նույնիսկ ձեր ծուլության ու անփութության մեջ չէ: Ամբողջ բանն այն է, որ դուք այնքան եք խճճված պատրանքի ցանցերում, որ չեք կարող ջոկել ո՛չ այն, թե աղբյուրներից որն է ճշմարտություն պարունակում, ո՛չ էլ այն թրթռանքները, որոնք բնորոշ են ճշմարիտ աղբյուրին:

Ըստ այդմ, ձեր բոլոր գործառնություններն ու գործողությունները պետք է ուղղված լինեն այն բանին, որ սովորեք զանազանել: Ըստ էության, պատրանքի մեջ ձեր գտնվելն իր ավարտը կունենա միայն այնժամ, երբ կսովորեք տարբերակում մտցնել պատրանքի ոլորտին պատկանող իրադարձությունների և այն իրադարձությունների միջև, որոնք պատկանում են Աստծո աշխարհին: Եվ ձեր խնդիրն է ձեռք բերել պայծառ հայացք և սովորել գնահատական տալ ամեն մի իրողության ու փաստի, որի հետ կյանքում բախվում եք:

Ձեզ թվում է, թե ձեր կյանքը սահուն առաջ է գնում, և երբեմն դուք նույնիսկ չեք կարող գլխի ընկնել, որ այդ հանդարտ ու սահուն հոսանքի հատակում թաքնված խուրթեր կան, որոնք կարող են մի ակնթարթում շուռ տալ ձեր կյանքի խաղաղ ընթացքը: Ուստի մի՛ ենթարկվեք քնաբեր հանգստությանը: Դուք մշտապես դասեր եք առնում: Եվ երբեմն երկաթգծի վրա դրված մի փոքրիկ քարի կտորը բավական է լինում, որ ձեր կյանքի հսկա գնացքն ահռելի արագությամբ գծերից դուրս գա ու շրջվի: Այնուհանդերձ ամենօրյա այլընտրանքներով դուք ինքներդ եք կանխորոշում ձեր ապագան:

Երբ ձեր սխալ ընտրությունների կրիտիկական զանգվածը գերազանցում է թույլատրելի կարմայական սահմանը, դուք բախվում եք ձեր կյանքի այն հանգամանքներին, որոնք տառաջիորեն փլուզում են այն ամենը, ինչին վարժվել եք, և հետո դուք զարմանքով բացականչում եք. «Տե՛ր Աստված, ես ի՞նչ վատ բան եմ արել: Ինչի՞ համար այս ամենն իմ գլխին թափվեց»:

Ծանոթ պատկեր է, այնպես չէ՞: Եվ մարդկանց 90 տոկոսի հաջորդ քայլը լինում է այն, որ անիծում են Աստծուն ու Վեհապետներին այն բանի համար, ինչ տեղի է ունեցել իրենց կյանքում: Նրանք մեղադրում են բոլոր իրենց շրջապատողներին ու ամբողջ աշխարհը, փոխանակ հնազանդորեն տեղի ունեցածն ընկալեն որպես պատիժ կամ կարմայական հատուցում, որը, լրացնելով թույլատրելի սահմանը, դուրս է հորդել ահավոր պատժի տեսքով:

Այսպիսով, մի կողմից՝ մարդկությունն իր գոյության ողջ պատմության ընթացքում խրատվել ու նախագգուշացվել է, մյուս կողմից՝ միայն այն դեպքում, երբ իրենց հետ տեղի է ունեցել ինչ-որ մի ահավոր բան, մարդիկ նոր միայն, թեկուզ շատ կարճ ժամանակով, ունակ են դարձնել մտորելու այն մասին, թե ինչու է դա իրենց գլխին թափվել:

Եվ որքան էլ մենք խոսում ու տալիս ենք ամենանպատակահարմար խորհուրդները, որպեսզի խուսափեք վերահաս վտանգից, դուք ունակ չեք լինում հավատալու, որ այն, ինչ ձեզ ասվում է, ճշմարտություն է: Իսկ ձեր չլսելու և անհեռատեսության պատճառը ձեր ճշմարիտ Հավատի անբավարարությունն է:

Ուստի ես՝ Աստծո Կամքի ասպեկտը ներկայացնող Վեհապետս, այս օրով ահա եկել և դիմում եմ ձեզ: Եվ ես կարող եմ օգնել ձեզնից յուրաքանչյուրին, ով իր Հավատն ամրացնելու խնդրանքով կդիմի ինձ:

Հավատն է այն դեղը, որն անհրաժեշտ է ձեզ: Եվ այժմ իմ խոսքը վերաբերում է ոչ այն կույր հավատին, որը հենվում է տգիտության ու երկյուղի վրա: Ես խոսում եմ այն հավատի մասին, որը հիմնված է այս տիեզերքում գործող Օրենքի իմացության վրա:

Իսկ դա պատճառահետևանքային կապի Օրենքն է, կարմայի կամ հատուցման Օրենքը: Եվ այդ Օրենքը գործում է՝ անկախ ձեր կամքից ու ձեր ցանկությունից: Դա է այն, ինչ իրական է: Եվ դա այն է, ինչի վրա սայթաքում է ազատ կամքի իրավունքը պնդելու, որևէ հանգամանք հաշվի չառնելու ձեր ձգտումը: Եվ եթե ազատ կամքի չարաշահման ձեր ճամփին դրված չլինեք Արարչի կողմից բնականորեն նախատեսված այդ խոչընդոտը, ապա կասկածի տակ դրված կլինեք ոչ միայն ձեր մոլորակի, այլ նաև համայն տիեզերքի գոյության հարցը:

Արդ, առաջին բանը, որ դուք ձեր ներսում պետք է ընդունեք, այն Օրենքի գերակայությունն է, որը գործում է համայն տիեզերքում ու ձեր կյանքերում:

Ձեր Հավատն ամրապնդելու խնդրանքով Կարող եք դիմել ինձ: Եվ դա հենց այն է, ինչը ես ուրախությամբ կմատուցեմ ձեզ՝ որպես այն ամենակարևոր ու անհետաձգելի դեղը, որի կարիքը դուք ունեք:

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը՝ ձեր հաղթանակի հախատով լի...

Հաութամա Բուդդա
22 դեկտեմբերի, 2005 թ.

Կարմայական Վարչությանը հղվող նամակների մասին

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան՝ մեր դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել տարվա այս խավար ժամանակահատվածում, երբ ամբողջ հյուսիսային կիսագունդը, որտեղ կենտրոնացված է Երկրի բնակչության հիմնական զանգվածը, շատ քիչ արևային էներգիա է ստանում: Դա իրապես տարվա խավար ժամանակն է: Եվ ինքներդ էլ կարող եք զգալ, որ նույնիսկ մոտալուտ տոները չեն նպաստում ձեր լավ վիճակի պահպանմանը:

Ես գալիս եմ, որպեսզի տամ ձեզ ևս մեկ ուղերձ, որի հիմքում ընկած է այն անհանգստությունը, որը մենք տածում ենք մոլորակի և մոլորակային կյանքի բուն գոյության նկատմամբ:

Որքան էլ ջանացին Համբարձյալ Դասերն անցնող տարվա ընթացքում, այդպես էլ մեզ չհաջողվեց հասնել մոլորակի այն հավասարակշռությանը, որն անհրաժեշտ է նրա կայուն զարգացման համար: Այժմ մենք ամենայն ուշադրությամբ ու տագնապով սպասում ենք այն որոշմանը, որը կհրապարակվի Կարմայական Վարչության շուտով սկսվող նիստից հետո: Դուք գիտեք, որ ամեն տարվա այս խավար ժամանակում սկսվում է Կարմայական Վարչության նիստը: Եվ այդ նիստի ընթացքում ընդունվում են կարևոր որոշումներ, որոնց համապատասխան հետագա վեց ամիսների ընթացքում ապրում է մոլորակը մինչև Կարմայական Վարչության հաջորդ նիստը, որը տեղի է ունենում ամառային արևադարձի ժամանակ:

Դուք նույնպես կարող եք մասնակցություն ունենալ այս Կարմայական Վարչության նիստին՝ դրանով իսկ ազդելով հետագա կես տարվա մոլորակի զարգացման ընթացքի վրա: Իհարկե, ձեզ ոչ ոք ներս չի թողնի այն դահլիճը, որտեղ ընթանում է Կարմայական Վարչության նիստը: Չեք կարող այնտեղ ներկա գտնվել ո՛չ ֆիզիկական, ո՛չ էլ ավելի նուրբ մարմիններով: Բայց դուք կարող եք նամակներ հղել Կարմայական Վարչությանը, և ես երաշխավորում եմ, որ ձեր բոլոր նամակները մանրամասնորեն կքննարկվեն:

Լինում է այնպես, որ խանդավառ հոգով գրված մի նամակը բավարար է լինում, որպեսզի Կարմայական Վարչության որոշումը փոփոխության ենթարկվի: Ուստի ես թախանձագին առաջարկում եմ ձեզ՝ օգտվել ընձեռված հնարավորությունից և նամակ հղել Կարմայական Վարչությանը:

Եվ ես նույնիսկ կարող եմ ձեզ ասել, թե կոնկրետ որը կլինի ձեր օգնությունը ձեր օգնությունը:

Եթե բավարար քանակի հոգիներ, հանուն ԵՍ ԵՄ-ի, պարտավորություններ վերցնեն հետագա վեց ամիսների ընթացքում կարդալու որոշակի ժամանակ տևող աղոթքներ, պատգամներ կամ Վարդարաններ և իրենց աղոթքային արթնության էներգիան հատկացնեն Երկրի իրադրության կայունացման գործին, ապա դա կարող է հիմք ծառայել Կարմայական Վարչության համար, որ

ընդունվի այնպիսի որոշում, որը հնարավորություն կընձեռի Երկրի իրադրության կայունացման համար օգտվելու տիեզերական պահուստներից:

Մենք պետք է վստահ լինենք, որ էներգետիկական ծախսերը կփոխհատուցվեն ձեր աղոթքային ջանքերով: Ուստի, խնդրում եմ, մեկ անգամ ևս ամեն ինչ կշռադատեք և գնահատեք ձեր հնարավորությունները:

Ես խնդրում եմ, որ օգտագործեք այս հերթական հնարավորությունը, որը շնորհվում է ձեզ Երկնքից:

Փոխարենը դուք կարող եք թողություն խնդրել ձեր և ձեր հարազատների համար, որը ձեզ կտրվի այնքանով, որքանով թույլ կտա Կարմայի Օրենքը: Օրինակ՝ դուք կարող եք օգտվել ընձեռված հնարավորությունից, որպեսզի կարմայական պատճառներից ազատեք ձեր այն հարազատներին, ովքեր տառապում են խրոնիկական հիվանդություններով կամ վնասակար սովորություններով:

Սակայն մի՛ մոռացեք, որ առաջին հերթին էներգիան կուղղվի տիեզերական պահուստի ծախսված էներգիայի վերականգնմանն ու Երկրի իրադրության կայունացմանը, որից հետո մնացած էներգիան կհատկացվի ձեր խնդրանքի բավարարմանը:

Մի՛ վերցրեք ձեզ վրա այնպիսի պարտավորություններ, որոնք չեք կարողանա իրագործել: Թող որ ձեր պարտավորությունն իրենից ներկայացնի ընդամենը 15 րոպե տևող աղոթքի ընթերցում, որը, սակայն, կպարտավորվեք կատարել ամեն օր: Եվ դա անհամեմատ ավելի լավ տարբերակ է, քան եթե պարտավորվեք մեկ-երկու ժամ տևող աղոթք կամ Վարդարան ընթերցել, բայց չկարողանաք գոնե մեկ շաբաթ իրագործել ձեր այդ պարտավորությունը:

Աշխատեք ճիշտ գնահատել և հաշվարկել ձեր ուժերը:

Կարմայական Վարչության նիստը մի երկու րոպեից կսկսվի: Սակայն դուք առաջիկա ամբողջ երկու շաբաթվա ընթացքում դեռևս կարող եք ձեր նամակներն առաքել Կարմայական Վարչությանը:

Ես երջանիկ եմ, որ ինձ այսպիսի ուրախալի պարտականություն է վիճակվել ձեզ հիշեցնելու մի հնարավորության մասին, որը շնորհվել է ձեզ հենց այն օրերի համար, երբ Երկիր մոլորակի վրա նիստ է գումարում Կարմայական Վարչությունը:

Ձեր առջև հաջորդ տիեզերական շրջանն է, որը կտևի մինչև հաջորդ Կարմայական Վարչության նիստը: Եվ ես հուսով եմ, որ ընդհանուր ջանքերով մենք կկարողանանք պահպանել մոլորակի հավասարակշիռ վիճակը:

Համենայն դեպս, Համբարձյալ Դասերը վճռական են տրամադրված և անպայման կգործադրեն իրենց բոլոր ջանքերը: Եվ եթե այդ վճռականության թեկուզ հազարերորդական մասն ունենար Երկրի մարդկության ներկայացուցիչներից գոնե մի քանի հազար հոգի, ապա ես լրիվ հանգիստ կլինեի մոտակա մի քանի ամիսների ընթացքում Երկրի գործերի վիճակի համար:

Երևի արդեն այնպիսի տպավորություն ունեք, որ շատ հարյուրամյակների ընթացքում ամեն անգամ ձեզ վախեցնում են աշխարհի վերջով, իսկ աշխարհի վերջը չկա ու չկա: Արդյունքում հայտնվել եք մեր նախագգուշացումներն անտեսելու վիճակի մեջ: Այնինչ իրականում Երկիր մոլորակի հավասարակշռության պահպանումը չափազանց մեծ ջանքեր է պահանջում: Եվ արդեն շատ հարյուրամյակների, նույնիսկ հազարամյակների ընթացքում պահպանվում է մոլորակի կործանման սահմանագծի վրա գտնվելու վիճակը:

Դուք գիտեք, որ Երկիր մոլորակը գտնվում է իր մատերիականության ամենացածր կետում: Այդ պատճառով հոգևոր աշխարհի ազդեցությունը մոլորակի վրա այդ ամենացածր կետում շատ սահմանափակ է: Եվ, քանի որ այդ ամենացածր կետում գտնվելը տևում է շատ հազարամյակներ, ապա անորոշության վիճակն էլ է այդպես երկար տևում: Սակայն դուք, որ Երկիր մոլորակի վրա մարմնավորման մեջ եք, կարող եք անհամեմատ մեծ ազդեցություն թողնել այդ ամենացածր կետում գտնվող մոլորակի ֆիզիկական վիճակի վրա:

Ահա հենց այդ պատճառով էլ մենք չենք հոգնում ձեզ դիմելուց:

Կրկին հիշեցնեմ, որ ձեզնից այնքան էլ շատ ջանքեր չեն պահանջվում, որպեսզի փոխվի Երկրի իրադրությունը, քանի որ ձեր կողմից գործադրված ջանքերը հազարապատիկ անգամ ավելի ուժեղ են ազդում Երկրի իրադրության վրա, քան Համբարձյալ Դասերի ջանքերը:

Ուստի մտորե՛ք ասածիս մասին, մեկ անգամ ևս ամեն ինչ կշռադատեք և Կարմայական Վարչությանը հղեք ձեր նամակ-պարտավորությունները:

Խնդիրը, որ մենք դնում ենք ձեր առջև, գուցե ձեզ հոգնեցուցիչ է թվում: Սակայն հաշվի առեք, որ կշեռքի մի նժարին դրված է ողջ մոլորակի փրկության գործը, իսկ մյուս նժարին՝ ձեր վաղանցիկ եսասիրական հետաքրքրությունները:

Ձեր ընտրությունը կատարելու այս իրավիճակն արդյոք ձեզ չի՞ հիշեցնում այն մարդու վիճակը, որը շարունակում է հեռուստացույց դիտել, երբ իր տանն արդեն մոլեգնել է հրդեհը:

Մենք հուսով ենք, որ ձեր ուղեղներում աստվածային խելամտությունը կգերակշռի ձեր գուտ մարդկային կապվածությունների ու սովորությունների նկատմամբ:

ԵՄ ԵՄ Հայրթաման, ձեզ հետ եղա այսօր

Վեհապետ Սերապիս Բեյ
23 դեկտեմբերի, 2005 թ.

**Ես եկել եմ ձեզ նախագգուշացնելու,
որ այս թելադրությունը կարող է վերջինը լինել**

ԵՄ ԵՄ Սերապիս Բեյը՝ մեր դեսպանորդի միջոցով այս օրով նորից ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել, որպեսզի ձեր ընկալմանը ներկայացնեմ որոշակի տեղեկատվություն, որն օգտակար է ձեզ համար: Ինչպես կարող եք նկատել, մեր բոլոր թելադրությունները լի են ձեր նկատմամբ հոգածությամբ: Մենք ձգտում ենք մատչելի դառնալ ձեր սրտերին ու բանականությանը: Եվ, որքան էլ ցավալի է, դեռևս չենք կարողանում: Մեր ուղերձներն ավելի շատ մենախոսություն են հիշեցնում, քան երկխոսություն: Մենք փորձում ենք ձեզ խորամուխ դարձնել մեր հոգսերի ու խնդիրների մեջ, սակայն դուք չեք կարողանում կամ էլ չեք ուզում հասկանալ:

Փաղտնիքի կարգով ասեմ ձեզ, որ Կարմայական Վարչության ներկայիս նիստում այլ հարցերի շարքում վճռվում է նաև այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների շարունակման կամ դադարեցման հարցը: Մենք շատ էներգիա ենք ծախսում մեր ուղերձները տալու համար և առայժմ չենք զգում, որ մեր էներգետիկական ներդրումներն ունեն որևէ դրական արդյունք: Այլ կերպ ասած՝ մենք կատարել ենք որոշակի միջոցների ներդրում և կուզենայինք ստանալ այդ էներգիայի քիչ թե՛ շատ զգալի աճ: Համաձայնեք, որ խելացի բան չէ ծախսել ջանքեր ու միջոցներ ներդնել և չստանալ ոչ մի դրական արդյունք:

Այս պահին ձեր բոլոր այն ջանքերը, որոնք գործադրում եք՝ փորձելով իրագործել մեր խնդրանքները, չեն փոխհատուցում մեր էներգետիկական ծախսերը: Եվ այսօր մենք այս թելադրությունը տալիս ենք ավելի ցածր էներգետիկական մակարդակից, քանի որ մենք արդեն գերազանցել ենք այն էներգետիկական սահմանը, որը թույլատրված էր թելադրությունների այս շրջանի համար:

Ըստ այդմ՝ ես եկել եմ ձեզ զգուշացնելու, որ այս թելադրությունը կարող է վերջինը լինել: Եվ մենք չկարողացանք տալ այս շրջանի համար նախատեսված թելադրությունների նույնիսկ մեկ հինգերորդ մասը: Այդ պատճառով, որքան էլ ցավալի է, ես տալիս եմ այս տեղեկատվությունն ու ափսոսանքով իրազեկում եմ ձեզ, որ, հնարավոր է, այսօր կամ վաղը սույն թողության շնորհիվ դադարեցնելու որոշում կընդունվի: Մենք չենք կարող անխելամիտ ձևով ծախսել Աստծո թանկարժեք էներգիան:

Խորհե՛ք այս մասին: Ամեն ինչ մեկ անգամ և՛ս կշռադատեք:

Չի կարելի անվերջ օգտվել Երկնքի ողորմածությունից:

Միակ բանը, որի շնորհիվ կարող է շարունակվել այս թողության շնորհը, Կարմայական Վարչությանն ուղղված ձեր նամակ-խնդրանքներն են և այն պարտավորությունները, որոնք կարող եք հանձն առնել:

Իմացեք, որ այս աշխարհում ամեն ինչ պետք է հավասարակշռված լինի: Եվ մենք նույնպես կարմա ենք ստեղծում, երբ մեր էներգիան լցնում ենք ծակ խուրջիների մեջ:

Պետք է նաև նշեմ, որ մենք որևէ պահանջ չունենք Տաղյանայի նկատմամբ՝ որպես մեր դեսպանորդի: Նա կատարել է և շարունակում է անթերի կերպով կատարել աշխատանքի իր բաժինը: Սակայն այն արդյունքը, որը մենք ակնկալում էինք թելադրությունների այս նոր շրջանն սկսելուց, մենք չենք ստացել:

Չափազանց քիչ թվով մարդիկ են հետևում մեր հանձնարարականներին՝ պատրաստ լինելով մեր կողմից տրվող աստվածային հնարավորությունների կենսագործմանը:

Ես չեմ կարող ճշգրիտ ասել, թե ինչպիսին կլինի Կարմայական Վարչության այսօրվա որոշումը, բայց լիովին հնարավոր է, որ վաղվանից սկսած մենք ստիպված լինենք դադարեցնել այս դեսպանորդի միջոցով տրվող մեր թելադրությունները:

Եվ այսօրվա իմ գալստյան նպատակը նման հնարավորության մասին ձեզ տեղակ պահելն էր, որպեսզի ձեզ համար անսպասելի չլինի մեր ուղերձների վաղաժամ ընդհատումը:

ԵՄ ԵՄ Սերապիս Բեյը, այսքանով հրաժեշտ եմ տալիս ձեզ

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
30 դեկտեմբերի, 2005 թ.

Մենք ուրախ ենք, որ մեր կոչերն արձագանք գտան ձեր սրտերում

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ մեր դեսպանորդի միջոցով այս օրով ձեզ այցի եկածը:
ԵՍ ԵՄ եկողը: Դուք ինձ գիտեք որպես Կարմայական Վարչության անդամներից մեկը: Եվ ես շտապում եմ ձեզ տեղեկություն հաղորդել մեր նիստից, որը գործնականում ավարտվել է:

Ձեզ հայտնի է, որ մեր նիստը սկսվել էր դեկտեմբերի 22-ին և շարունակվել մինչև հիմա:

Նիստը կշարունակվի ևս մի որոշ ժամանակ, որպեսզի քննարկվեն ձեր այն նամակները, որոնք դուք հղել եք և շարունակում եք հղել Կարմայական Վարչությանը: Բայց նիստի գլխավոր մասը, որի համար մենք հավաքվել էինք, արդեն ավարտված է:

Մենք քննարկեցինք առաջիկա կիսամյակում մոլորակի հավասարակշիռ գոյության ապահովման հնարավորության հարցը:

Պետք է ձեզ ասեմ, որ մեր նիստը շատ լարված էր, և դուք՝ առավել զգայուն անհատներդ, պետք է որ զգայիք այն լարվածությունը, որն ընդամենը մի քանի օր առաջ տիրում էր մոլորակի վրա:

Մենք սպասում էինք մեր դեսպանորդի միջոցով ձեզ ուղղված մեր դիմումների արձագանքին: Մենք սպասում էինք, թե ինչպիսին կլինի ձեր արձագանքը: Քանզի մեր խնդրանքների նկատմամբ ձեր վերաբերմունքն ու մեր առաջարկներին ձեր արձագանքելը մեզ շատ բան են ասում: Մասնավորապես՝ թե որքանով եք դուք պատրաստ համագործակցության, և թե որքանով մենք կարող ենք հույս կապել ձեր օգնության հետ:

Եվ, ի մեծագույն ուրախություն մեզ, գտնվեցին Երկրի վրա այդքան լուսավոր հոգիներ, որոնք, լիովին գիտակցելով մեր անհանգստությունն ու մեր խնդրանքների կենսական կարևորությունը, չխնայեցին իրենց անձնական ջանքերից ոչ մեկը և ներդրեցին իրենց ողջ ազատ ժամանակն ու կարողությունները, որպեսզի ծառայեն Երկիր մոլորակին ու մոլորակային բուն կյանքի գոյությանը:

Մենք շնորհակալություն ենք հայտնում ցուցաբերած օգնության համար: Հավատացե՛ք, մենք ուրախ ենք ոչ այնքան Երկրի իրադրության կայունացման գործընթացում արված ձեր ներդրման համար, որքան այն վճռականության, անշահախնդրության ու նվիրվածության համար, որոնցով դուք արձագանքեցիք մեր խնդրանքներին:

Եվ մենք էլ մեր հերթին չէինք կարող չարձագանքել ձեր հոգիների այդ պոռթկումին: Մենք արեցինք հնարավոր ամեն ինչ, ձեռնարկեցինք բոլոր միջոցները, որոնք թույլ տվեցին մոլորակը գերծ պահել հերթական կործանարար ու ավերիչ արհավիրքից, որի վտանգը, թվում էր, անխուսափելիորեն կախված է մոլորակի վրա: Մեզ հաջողվեց անցավ կերպով լուծել բացասական էներգիայի այն կուտակները, որոնք այնպես թանձր էին պրկվել Երկրի շուրջ, որ արգելակում էին մեր ճառագայթների ու մեր թրթիռներին ներթափանցումը: Իսկ դրանք այն միակ միջոցներն էին, որոնք կարող էին բարերար ազդեցություն գործել մոլորակի և այն անհատների վրա, ովքեր գտնվում էին կրիտիկական վիճակում և սպասում էին մեր օգնությանը:

Ուստի մենք ուրախ ենք, որ մեր կանչերն արձագանք գտան ձեր սրտերում: Իհարկե, նրանք, ովքեր արձագանքեցին մեր կանչերին, շատ սակավաթիվ էին՝ համեմատած մոլորակի վրա բնակվող մարդկանց քանակի հետ: Սակայն այն բանից, թե ինչպիսի ազդեցություն ունեցան քերի ջանքերը, դուք կարող եք եզրակացնել, թե որքան արագ կարող էր փոխվել մոլորակի իրադրությունը, եթե մեր ցուցումներին հետևեին միլիոնները:

Ես չեմ կարող ձեզ ասել, թե տարբեր արհավիրքների ու տարերային աղետների վտանգն ամբողջությամբ վերացված է, և որ մոտակա ապագայում մոլորակին ոչինչ չի սպառնա: Բայց ես կարող եմ ձեզ ասել, որ այն արհավիրքի վտանգը, որի մասին մենք ձեզ նախագուշացնում էինք, արդեն անցած է:

Մեզ հաջողվեց նուրբ ոլորտում ի չիք դարձնել այդ արհավիրքի պատճառը, և դրա շնորհիվ ֆիզիկական ոլորտում այն տեղի կունենա անհամեմատ ավելի փոքր ու տեղայնացված մասշտաբներով:

Ես կարծում եմ, որ համագործակցությունը մեր միջև՝ ձեր, որ մարմնավորման մեջ գտնվող մեր աշխատակիցներն եք և մեր, որ Համբարձյալ Դասերն ենք, այսպես հաջող սկսվելով տարվա վերջում, իր շարունակությունը կգտնի նաև եկող տարվա ընթացքում: Չեմ թաքցնի, որ Կարմայական Վարչության անդամներից շատերը համոզված չէին, որ մեզ կհաջողվի գտնել բավարար քանակությամբ մարմնավորման մեջ գտնվող լուսակիրների, որոնք, արձագանքելով մեր կոչին, անցնող տարվա այս վերջին օրերն անցկացնեին ականաձայից աղոթքով ու խոնարհությամբ:

Մենք սպասում ու պատրաստվում էինք շատ ավելի վատին, և այն հանգամանքը, որ դուք կարողացաք ի մի բերել ձեր բոլոր ուժերն ու ձեզ վրա վերցնել ձեր պարտավորությունները, մեզ հնարավորություն տվեց գործի գցել այն պահուստները, որոնք մենք կարողացել էինք ներգրավել Երկիր մոլորակին օգնելու համար:

Դուք գիտեք, որ Տիեզերքում կան բավարար քանակի Լույսի Էակներ, որոնք պատրաստ են զոհաբերելու իրենց նվաճումների ողջ պաշարը, որպեսզի օգնություն ցուցաբերեն Երկրի մարդկությանը: Սակայն Տիեզերական Օրենքը թույլ չի տալիս ցուցաբերել այդ օգնությունը, քանի դեռ չեն գտնվել բավարար թվով մարմնավորված անհատներ, որոնք հայտնում են Համաբարձյալ Դասերի հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և իրենց վրա են վերցնում որոշակի պարտավորություններ: Դա նման է այն բանին, երբ դուք բանկից վարկ վերցնելուց առաջ որոշակի գրավ եք թողնում: Եվ միայն դրանից հետո կարող եք հույս ունենալ, որ բանկը ձեր տնօրինմանը կհանձնի որոշակի ֆինանսական միջոցներ:

Ուստի հիմա կարող եմ ձեզ ասել, որ ձեր պարտավորություններն ու ձեր անշահախնդիր ծառայությունը թույլ տվեցին մեզ տնօրինելու ձեր այն էներգիաները, որոնք ստացել էինք ձեր այն աղոթքներից ու աղոթքային գործառնություններից, որոնք դուք նպատակաուղղել էիք հաջորդ կիսամյակին տիեզերական պահուստից հատկացվող էներգիայի տեսքով անհրաժեշտ օգնություն ստանալուն:

Արդ, Կարմայական Վարչության անունից ես իրավասու եմ ձեզ հայտնելու, որ մենք ուրախ ենք ձեզնից նրա՛նց նվաճումներով, ովքեր պարտավորություն ստանձնեցին՝ հենվելով իրենց սրտից բխող անկեղծ ոգևորության վրա:

Ես գլուխ եմ խոնարհում ձեր առջև: Թույլ տվեք սեղմել ձեր ձեռքը: Իրապես, այն պահերին, երբ զգում ես քո միասնությունն այն նվիրյալ աշխատակիցների հետ, որոնք այժմ գտնվում են մարմնավորման մեջ, ուրախությունից աչքերդ արցունքով են լցվում: Եվ դա թույլ է տալիս մեզ հուսալ, որ մոլորակի իրադրությունը կփոխվի, և մեր պլանները կիրականան...

Շնորհակալություն ձեզ... Թույլ տվեք շնորհավորել այն նոր բնագծի բացման առիթով, որը, հուսով եմ, նոր հնարավորություններ կբացի հետագա առավել արդյունավետ համագործության համար...

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը

Մեքսիկեյեկ
31 դեկտեմբերի, 2005 թ.

Թող ձեր տոնը հիշեցնի այցելություն դեպի բարձրագույն, եթերային օկտավաներ

ԵՄ ԵՄ Մեքսիկեյեկը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Հուսամ, որ այս օրը ձեզ համար տխրալի չի լինի և դուրս չի գա ընդհանուր տոնական մթնոլորտից:

Դուք սովոր եք նշել ձեր երկրային տոները: Իսկ այս տոնը ձեր ամենասիրելիներից մեկն է: Որպես կանոն, նույնիսկ այն մարդիկ, ովքեր առանձնապես չեն հավատում Աստծուն և Բարձրագույն Ուժերին, այդ օրը զգում են ինչ-որ խորհրդավորություն:

Երևի գիտեք, որ Համբարձյալ Վեհապետները երկրային տոները չեն նշում, սակայն երբեմն ձեզ հետ ենք լինում ձեր տոնի ընթացքում: Ամեն անգամ, երբ տեսնում ենք, որ մարդիկ տարեմուտը նշում են մեր հանձնարարականներին համապատասխան, հնարավորություն ենք ստանում միանալու նրանց տոնին:

Արդեն գիտեք, որ ձեր երկրային տոնին ներկայացվող մեր պահանջները տարբերվում են ձեր այն պատկերացումներից, որոնք մարդկության մեծամասնությունը դնում է տոնի հասկացության մեջ:

Եվ ամենահիմնական ու կարևոր պահանջը, որը մենք կուզենայինք, որ դուք հաշվի առնեք ձեր տոների ընթացքում, այն է, որ դուք ձեր տոնը պարուրեք աստվածային, միստիկական իմաստով: Մեր տեսակետից լավ է այն ամենը, ինչն օգնում է ձեզ բարձրացնելու ձեր գիտակցությունը և թեկուզ աչքի պոչով կամ ձեր վառ երևակայությամբ նայելու վարագույրից այս կողմ:

Ըստ այդմ՝ ձեր տոնի ողջ տոնական ունայնությունը, որին դուք սովոր եք, մենք չենք ողջունում: Լավ կլիներ, եթե ձեր տոնի ընթացքում հիշեիք ձեր Աստվածային նշանակությունը՝ այն, թե ինչի համար եք մարմնավորվել: Ձեզ հայտնի է, որ ձեր Բարձրագույն Ես-ը միշտ գիտի, թե որտեղից եք եկել և ուր եք գնում: Եվ այն ուժերը, որոնք փորձում են ձեզ պահել պատրանքի մեջ, ձգտում են ձեզ ներշնչել տոնի այնպիսի ձևաչափեր, որոնք ոչ մի կերպ չեն համապատասխանում այն աստվածային կերպերին, որոնք խրախուսվում են մեր կողմից: Եվ միակ բանը, ինչին դուք հասնում եք, երբ սովորականի պես ու կուրորեն հետևում եք տոնի զանգվածային կաղապարին, այն է, որ ամրապնդում եք ձեր շուրջը թագավորող պատրանքը, փոխանակ ջանքեր գործադրել դրանից դուրս պրծնելու համար:

Ես ձեզ հետ խոսում եմ շատ հասկանալի լեզվով, բայց հազիվ թե ձեզնից շատերը հասկանան, թե դեպի որ կողմն են թեքում:

Իսկ ես այնուամենայնիվ հույս ունեմ, որ այս թելադրությունները կարդացող մարդկանց մեջ կգտնվեն ոչ քիչ անհատներ, ովքեր պատրաստ կլինեն կապերը խզելու զանգվածային գիտակցության մեջ հաստատված տոնի սովորական ձևաչափից և հետևելու այն խորհուրդներին, որոնք մենք ենք տալիս:

Թող ձեր տոնը հիշեցնի այցելություն դեպի բարձրագույն, եթերային օկտավաներ, որոնց մեջ երբեմն ձեզ հաջողվում է թափանցել ձեր գիշերային քնի ընթացքում: Փորձեք հիշել այն տպավորություններն ու զգացողությունները, որոնք դուք ունենում եք Լույսի մեր օկտավաներում գտնվելու ընթացքում: Այդ օկտավաներում դուք որևէ տեղ տեսնո՞ւ եք հարբած մարդկանց հավաքույթներ կամ աններդաշնակ տրամադրված մարդկանց որևէ խումբ:

Ո՛չ, մեր աշխարհում ոչ մի նմանատիպ դրսևորում տեղ չունի: Փորձեք վերհիշել մեր օկտավաներում թագավորող մեղմ մթնոլորտը. մեղմ, չգրգռող, բայց միևնույն ժամանակ պայծառ լուսավորությունը, որի մեջ տեսանելի են բոլոր իրերը: Վերհիշեք եթերային օկտավաների հնչյունները. զանգակների շատ մեղմ դողանքները, մանտրաների հանդարտ ռիթմն ու երգչախմբային երգեցողությունը:

Վերհիշեք այն սերն ու ներդաշնակությունը, որոնք թագավորում են մեր օկտավաներում: Նույնիսկ այն դեպքում, երբ դուք հանդիպում եք Բարձրագույն Աշխարհների լուսկյաց էակների, որոնք չեն խոսում ձեզ հետ, միևնույնն է, ձեզ համար հաճելի է լինում նրանց ներկայությունը, որովհետև դուք նրանցից անսահման սիրո հոսք եք զգում: Դուք տառացիորեն սուզվում եք այդ սիրո մեջ, անիմանալի սիրո ուժի մեջ, որը պարուրում է ձեզ խնկաբույրի պես:

Այստեղ ձեզ գրգռող ոչինչ չկա: Ամեն ինչ շատ ներդաշնակ է: Ուստի դուք չեք ուզում լքել մեր օկտավաները: Եվ այն գիշերներից հետո, երբ բախտի բերմամբ հայտնված եք լինում մեր եթերային տաճարներում ու պալատներում, դուք առանձնապես չեք ուզում առավոտյան կողմ գարթնել և վերադառնալ ձեր աշխարհը:

Ուստի ձեր խնդիրն է առավելագույն չափով, որքանով թույլ են տալիս արտաքին հանգամանքները, այն վայրի մթնոլորտը, որտեղ նշում եք ձեր տոնը, մոտեցնել եթերային օկտավաների մթնոլորտին:

Օ՛, ես շատ լավ եմ հասկանում, որ ձեզ համար շատ դժվար կլինի հաղթահարել ձեր հարազատների և ծանոթների դիմադրությունը, եթե փորձեք ձեր աշխարհի ներմուծել մեր ձևաչափերը:

Ձեզնից ոչ բոլորին դա կհաջողվի:

Ըստ այդմ՝ ես ուզում եմ ձեզ գերծ պահել ավելորդ ու անտեղի ուժ ու էներգիա ծախսելուց: Դուք գիտեք, որ ձեր աշխարհում ամեն ինչ իրար է ձգում՝ ըստ թրթռանքի: Եվ եթե ձեր գիտակցությամբ արդեն հասել եք որոշակի, բավականաչափ բարձր սահմանագծի, ապա տոնի ընթացքում ինքնաբերաբար կհայտնվեք այնպիսի հավաքույթում, որը թույլ կտա իրագործել ձեր մղումը, որ ֆիզիկական աշխարհում դրսևորեք բարձրագույն օկտավաների ձևաչափեր: Վատագույն դեպքում դուք հնարավորություն կստանաք միայնակ մնալ և երկրային տոնի ընթացքում ինքներդ ձեզ պարուրել եթերային օկտավաների հեքիաթով:

Մարդկային գիտակցության էվոլյուցիան շատ աստիճանական է: Եվ եթե դուք այսօր որոշեք, որ ձեր տոնը պետք է այնպիսին լինի, ինչպիսին ես նկարագրեցի, ապա դա չի նշանակում, որ հենց այդպես էլ կլինի: Որովհետև ձեր գիտակցության կարծրատիպերը շատ ուժեղ են: Բայց այժմ ձեր գիտակցության մեջ ունեք մտապատկեր, դեպի ուր պետք է մղվեք: Չե՞ որ գիտեք, որ եթե սերմն ընկնում է պարարտ հողի մեջ, և այդ հողը մեր օգնությամբ պարբերաբար ոռոգվում է Աստծո էներգիայով, ապա անպայման կերևան ծիլերը:

Մենք շատ համբերատար ենք: Եվ պատրաստ ենք ձեր շատ երկրային կյանքերի ընթացքում դիտել, թե ինչպես են մեր ցանած սերմերն աստիճանաբար ճեղքում հողը և մղվում դեպի աստվածային գիտակցության Արևը:

Եթե ձեր մղումն ուժեղ է և ձեր հավատն ամուր, ապա այն ձևաչափերն ու պատկերները, որոնք այս թելադրությունների ընթացքում մենք տեղադրում ենք ձեր գիտակցության մեջ, անպայման աճ կտան ձեր աշխարհում: Ընդ որում, որքան մեծ են ձեր հավատն ու մղումը, ձեր նվիրվածությունն ու սերը, այնքան ավելի արագ ձեր շուրջը տեղի կունենան այն փոփոխությունները, որոնք մենք ակնկալում ենք:

Կուտակված տեղեկատվությունն ու էներգիան չեն ուշանա դրսևորվել ձեր կյանքերում: Եվ նույնիսկ այն ներքին դիմադրությունը, որն այս թելադրությունները կարդալիս զգում են ձեզնից շատերը, ամեն դեպքում այն առաջին քայլն են, որը դուք կատարում եք ճիշտ ուղղությամբ: Որովհետև ձեր դիմադրությունն ստիպում է ձեզ մտածել, վերլուծել: Ամենաընդունակ աշակերտներն ի հայտ են գալիս հատկապես այն մարդկանց միջից, ովքեր մեր բոլոր ասածները ոչ թե հալած յուրի տեղ են ընդունում, այլ փորձում են իրենց գիտակցությամբ, իրենց կենսափորձով ստուգել դրանց հավաստիությունը:

Արդ, վերցրե՛ք մեր տեղեկատվությունը, մեր էներգիան: Ամեն ինչ ստուգեցե՛ք ձեր գիտակցությամբ:

Եվ ես համոզված եմ, որ դուք կկարողանաք մեր տված ամբողջ նյութից ձեզ համար քաղել ճշմարտության այն ոսկե հատիկները, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր կյանքի հատկապես այս փուլում:

ԵՄ ԵՄ Մեղքիսեղեկը

Տեր Շիվա

1 հունվարի, 2006 թ.

Դուք եկել եք այս աշխարհը, որպեսզի զանազանելու դաս առնեք

ԵՄ ԵՄ Շիվան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Որպես մեր այսօրվա գրույցի թեմա ես կուզենայի օգտագործել ձեզ ոչ անհայտ ձիու առակը. *«Կարող ես ձիուն բերել ջրտուրի, բայց խմել նրան չես ստիպի»:*

Երբեմն մեր գրույցներն այդ առակն են հիշեցնում: Մենք ձեզ մոտեցնում ենք Աստծո էներգիայի գետին և հնարավորություն ենք տալիս ձեզ խմելու անզին գիտելիքներ՝ դարերի իմաստությունը, որը պարունակվում է մեր ուղերձներում: Սակայն, դուք ինքներդ և միայն ինքներդ կարող եք որոշում ընդունել և սկսել ըմպելու գործը: Ձեր փոխարեն ոչ ոք դա չի կարող անել: Եվ նմանապես մեր դեսպանորդը ոչ ոքի չի կարող ուժով ստիպել ընդունելու մեր ուղերձներում պարունակվող՝ Աստծո էներգիայի նեկտարը:

Իմաստուն մարդիկ չեն շտապում առնչվել մի տեղեկատվության հետ, որը գալիս է անծանոթ աղբյուրից: Եվ դա ճիշտ վարքագիծ է: Եթե դուք անխտիր ամեն ինչ կյանք, ապա ձեր ուղեղն այլևս չի կարող մարսել: Հարկ է, որ դուք ձեր շրջապատող իրականությունից շատ որակյալ ձևով ընտրեք այն տեղեկատվությունը, որն արժանի է ձեր ուշադրությանը և տարբերվում է այն ամբողջ աղբից, որն առատորեն տեղ է գտել ձեր գրախանութների դարակներում և համացանցում:

Դեռևս ոչ շատ վաղ անցյալում յուրաքանչյուր գիրք, որ մենք տալիս էինք մեր դեսպանորդի միջոցով, ներկայանում էր որպես վայրի մի բան և ընկալվում էր որպես անհասկանալի ու վիատեցուցիչ: Բայց այժմ ժամանակը փոխվել է, և այդպիսի թևաթափ անող տեղեկատվությունն ու գրականությունը շատ տարածված են դարձել:

Եվ արդեն խնդիրը դարձել է ոչ թե այն, թե ինչպես նոր տեղեկատվություն գտնել, այլ այն, թե ինչպես պաշտպանվել այն տեղեկատվության հոսքից, որն, իր թվացյալ նորությամբ հանդերձ, իրենից ներկայացնում է լավ փաթեթավորված թույն:

Սակայն, ի տարբերություն այն թույնի, որը դուք գնում եք վնասատուների դեմ պայքարի համար, և որի վրա պարզ գրված է, թե դա ինչ թույն է, ձեր գրքերի շապիկների վրա գրված չէ, թե դրանք ինչ վտանգ են ներկայացնում ձեր գիտակցության համար:

Ուստի և մենք փոխում ենք մեր գործելակերպը: Եվ այս պահից սկսած՝ մեր խնդիրն է դառնում ոչ միայն տեղեկատվություն տալը, այլ նաև գիտելիք տալն այն մասին, թե ինչպես ձեզ շրջապատող տեղեկատվության ծովում ճշմարիտ տեղեկատվությունը զանազանեք կեղծից:

Դուք գիտեք, որ խիստ որոշակի չափանիշներ չկան: Եվ մշտապես, երբ խոսքը հասնում է զանազանմանը, մենք ձեզ առաջարկում ենք մուտք գործել ձեր սիրտը և ընտրելն ու գնահատելը վստահել ձեր իսկ Բարձրագույն մասին: Քանզի ձեր Բարձրագույն մասը միշտ գիտի ճշմարտությունը: Սակայն միշտ չէ, որ ձեր Բարձրագույն մասին դիմելու միտքը ծագում է ձեր գլխում: Ես էլ չեմ ասում այն մասին, որ ձեր ստորին մարմինների մաքրությունը կարող է բավարար

չլինել, որպեսզի զգաք ու տարբերեք Բարձրագույն Ես-ի ձայնը: Ուստի տեղին կլինի բերել արտաքին չափանիշներ, որոնց հիման վրա դուք կկարողանաք տարբերակում մտցնել ձեր շրջապատի տեղեկատվության հոսքում:

Նախ և առաջ ուշադրություն դարձրեք ոչ թե գրքի կազմի ու նրա արտաքին տեսքի, այլ տեղեկատվության մատուցման որակի վրա: Եվ եթե տեղեկատվությունը տրված չէ ձեզ համար հասկանալի մակարդակով, ապա դադարեցրեք կարդալը:

Բանն այն է, որ գոյություն ունեն տեղեկատվության մատուցման շատ տարբեր մակարդակներ: Եվ այն, ինչ մատչելի է մեկի գիտակցության համար, կարող է մատչելի չլինել մի ուրիշի գիտակցության համար:

Ոչ միշտ է, որ բարդ տեքստի հետևում ճշմարտություն է:

Սակայն եթե դուք հասել եք ձեռնադրումների բարձր աստիճանի, ապա գրախանութների դարակներում միշտ կգտնեք այն բանալիները, որոնք թույլ կտան ձեզ ամենախրթին տեղերում ճանաչել ճշմարտությունը:

Նախկինում մենք միջոցներ էինք ձեռնարկում, որպեսզի դիտավորյալ կերպով խճողենք մեր ուղերձները: Նման դեպքում մենք ձգտում էինք խրտնեցնել նրանց, ովքեր սովորաբար ձգտում են մեր տեղեկատվությունն օգտագործել շահադիտական նպատակներով: Այժմ մենք հակված չենք բարդացնելու: Քանզի միշտ էլ կարելի է բարդացնել տրվող տեղեկատվությունը, բայց նրա էությունը, որպես կանոն, շատ պարզ է և մատչելի նույնիսկ երեխայի համար: Ըստ այդմ, որքան էլ ուզենաք ու թափառեք, այսպես կոչված, էգոթերիկական գրականության թավուտներում, մենք խորհուրդ ենք տալիս վեր հանել հայացքը մատուցվողի էությունից և պատասխանել մի պարզ հարցի՝ որքանով է ձեր կարդացածը ձեզ օգնում ձեր իրական կյանքում:

Օգնու՞մ է արդյոք ձեր կարդացած տեղեկատվությունը, որ ազատվեք ձեր անիրական մասից և մղվեք դեպի հավերժական, անանց իրականությունը: Ի՞նչ է տալիս ընթերցվող տեղեկատվությունը ձեր հոգու զարգացման համար: Ինչպե՞ս է այդ տեղեկատվությունը ձեզ օգնում ձեր կյանքում:

Դուք կարող եք խորհուրդներ ստանալ շատ ճարտար գործառությունների շուրջ, բայց այդ գործառությունները կա՛մ կտանեն դեպի ձեզ շրջապատող պատրանքի բազմապատկումը, կա՛մ էլ ձեզ կհեռացնեն ձեր առաքելությունից և պատրանք կստեղծեն, թե դուք տիեզերական մասշտաբով շատ նշանակալից էակ եք:

Ե՛վ մեկ, և՛ մյուս դեպքում դուք կկորցնեք հենակետը ձեր գիտակցության մեջ: Կա՛մ կխորասուզվեք մատերիայի մեջ, կա՛մ էլ կճախրեք ամպերից վեր: Բայց ընդհանուրն այն է, որ արդյունքում դուք միայն պատրանք եք ծնում և արարում այդ պատրանքը կա՛մ ֆիզիկական ոլորտում, կա՛մ աստեղային ոլորտում:

Ձեր խնդիրն է մշտապես իրատեսական հայացք պահպանել աշխարհում ձեր ունեցած դիրքի վերաբերյալ: Իսկ ձեր իրական դիրքն է ոտքերով ամուր կանգնել Երկրին և միաժամանակ հիշել ձեր տիեզերական ծագման մասին ու մղվել դեպի Աստված:

Մղումը դեպի Աստված չպետք է շփոթել տիեզերական հիերարխիայում բարձր դիրք գրավելու ձգտման հետ:

Այո՛, չի բացառվում, որ ձեզնից շատերի ներսում առկա են Բարձրագույն Տիեզերական Էակներ, ովքեր իջել են Երկիր և օգտվում են յուրաքանչյուր հնարավորությունից, որպեսզի օգնեն Երկրի քաղաքակրթությանը: Սակայն երբեք մի՛ մոռացեք, որ ձեր հոգին երկրային էվոյուցիա է անցնում: Իսկ այդ էվոյուցիան աստիճանական բնույթ ունի: Ուստի դուք չեք կարող ընդամենը մի կյանքի ընթացքում միանգամից դառնալ Մեծ Տիեզերական Էակ: Դուք կարող եք թույլ տալ Բարձրագույն Տիեզերական Էակին գործել ձեր միջոցով, բայց հաճախ դրա փոխարեն աստեղային ոլորտի էակներին եք թույլ տալիս, որ դա անեն:

Ո՞րն է չափանիշը: Ինչպե՞ս հասկանալ ու զանազանել:

Դուք գիտեք, որ որպեսզի Բարձրագույն Տիեզերական Էակները կարողանան գործել ձեր միջոցով, դուք պետք է հրաժեշտ տաք ձեր էգոյի մեծագույն մասին և ձեռնամուխ լինեք Տիեզերական Հիերարխիային ծառայելուն:

Իսկ որպեսզի ձեզ ստրկության մատնեք աստեղային ոլորտի որևէ էակի, ձեզնից բոլորովին չի պահանջվում ոչ մի նվաճում, բացի ձեր էգոյի ինքնամեծարման ցանկությունից:

Շատ մարդիկ, տարբեր տեսակի մակերեսային գրականություն ընթերցելով, իրենց դնում են տիեզերական հիերարխիայում բարձր դիրք զբաղեցնող շատ մեծ էակների տեղ:

Եվ այդ մարդիկ իրենք այնքան են տարվում իրենց խաղով, որ կորցնում են զանազանելու կարողությունը: Դեռ ավելին, նրանք չեն էլ մտախոգվում այն մասին, որ ինչ-որ բան զանազանեն, որովհետև համոզված են իրենց բացառիկության ու մեծության մեջ:

Սակայն մի քանի բույսերի գրույցից շրջապատի մարդկանց համար արդեն պարզ է դառնում, թե ում հետ գործ ունեն։ Ըստ այդմ՝ մենք ձեզ խնդրում ենք զարգացնել զանազանման շնորհը ձեր ներսում. մենք ձեզ ասում ենք, որ նախ և առաջ՝ առաջին հերթին, պետք է ազատվել սեփական էգոյից։ Քանզի ձեր էգոն խանգարում է ձեր զանազանելուն, ձեր դիտողունակությանն ու ձեր ծառայելուն։

Ծա՛տ ափսոս այն անհատներին, ովքեր գնացել են ինքնամեծարման ուղով։ Սակայն դա նրանց ընտրությունն է եղել։ Եվ նրանք կատարել են հենց այն ընտրությունը, որը կամեցել են կատարել։

Ձեր պատրանքային աշխարհն աչքի է ընկնում նրանով, որ յուրաքանչյուրը ստանում է այն, ինչին ձգտում է։ Եվ եթե դուք ուզում եք դառնալ Բարձր Տիեզերական Էակ, ապա անպայման կդառնաք։ Եվ նուրբ ոլորտից դուք կստանաք բոլոր այն նշանները, որ դուք Բարձր Տիեզերական Էակ եք։ Բանն այն է, որ ձեր շարժառիթը հենց սկզբից ճիշտ չի լինում։ Դուք ցանկանում եք դառնալ հզոր Էակ։

Ըստ այդմ՝ ձեզ համար նույնիսկ անհրաժեշտ չէ, որ դուք մյուս մարդկանցից հաստատում ստանաք ձեր, ինչպես դուք եք կարծում, տիեզերական նվաճումների մասին։ Պարզապես պետք է պատասխանեք այն հարցին, թե ինչպիսի՞ն է եղել ձեր շարժառիթը, երբ դուք ձեռնամուխ եք եղել էգոթերիկական գրականության ուսումնասիրմանը։ Ցանկացել եք ձե՞զ համար ինչ-որ բան ստանալ, թե՞ ցանկացել եք ամեն ինչ ներդնել համայն կյանքին ծառայելու համար։

Առաջին հայացքից աստվածային գիտությունը շատ պարզ է թվում, սակայն շատ-շատերն այնքան են հեռու գնում կեղծ հասկացությունների ու գիտելիքների բավիղներում, որ մեր օգնությունն ստանալն իսկ նրանց համար դառնում է խնդրահարույց հարց։

Ուստի իմ խորհուրդը հետևյալն է. մշտապես, նախքան որևէ ուսմունքի մեջ խորանալը, որևէ գործառնության կամ ուսուցչի հետևելը, ուշադիր վերլուծության ենթարկեք այն շարժառիթը, որով առաջնորդվում եք։ Որովհետև դուք ձեր թրթռումներով ու ձեզ շարժման մեջ դնող ներքին ցանկություններով ձգվում եք դեպի այն մարդկանց խմբի կամ ուսուցիչների կողմը, որոնք ձեզ կմատուցեն հենց այն, ինչը ձեզ անհրաժեշտ է ձեր նպատակներին հասնելու համար։

Եվ ձեզնից դուրս գտնվող ոչ մեկին այդ դեպքում մի՛ մեղադրեք, որ դուք ուռկանն եք ընկել, կամ ընկել եք ինչ-որ մեկի ազդեցության տակ։ Քանզի դու՛ք և միայն դու՛ք եք պատասխանատու այն ամենի համար, ինչը ձեզ հետ տեղի է ունենում։

Դուք եկել եք աշխարհ, որպեսզի զանազանելու դաս ստանաք, Բարին չարից զանգանելու, պատրանքը իրականությունից զանգանելու դաս։

Ինքնե՛րդ ձեր դասերը քաղեք։ Եվ հիշեք, որ մենք կարող ենք ձեզ օգնել միայն այնժամ, երբ դուք օգնություն եք խնդրում։

ԵՄ ԵՄ Շիվան, եկա շատ կարևոր խրատներ տալու նպատակով

Սպիտամա Զրադաշտ
2 հունվարի, 2006 թ.

**Ինքներդ պետք է սովորեք գնահատել ձեր արարքները,
ձեր մտքերը և ձերբազատվեք ողջ այն ունայնից ու մարդկայինից,
ինչը խանգարում է Ուղով ձեր առաջընթացին**

ԵՄ ԵՄ Զրադաշտը՝ այս դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը։

Ժամանակի այն հատվածը, որն ընկած է մեր նախորդ հանդիպման* ու ներկա պահի միջև, այնքան էլ նշանակալի չէ, սակայն այն տարածությունը, որը դուք հաղթահարել եք ձեր գիտակցության մեջ (հատկապես նրանք, ովքեր կանոնավորապես կարդում են մեր կողմից այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունները), այնքան նշանակալի է, որ այն կարելի է համեմատել գերնոր աստղի բռնկման հետ, բանականության աստղի և աստվածային գիտակցության բռնկման հետ, որը մեր հանդիպումից հետո ընկած ժամանակահատվածում պայծառացրել է ձեր մտքերն ու սրտերը։

Ես հետևում եմ ձեր գիտակցության աճին։ Ունեմ այդ հնարավորությունը։ Եվ նրանք, ովքեր, այս թելադրությունները կարդալով, բարձրացել են գիտակցության նոր մակարդակի վրա, ինձ երևում են որպես բռնկված գերնոր աստղ այն խավարում, որը դեռևս շարունակում է պատել Երկիրը։

Ձեզնից յուրաքանչյուրն ընդամենը փոքրիկ մի տարածք է լուսավորում իր շուրջը՝ լույս տալով այն մարդկանց, որոնց հետ հանդիպում է առօրյա կյանքում։ Այնուհանդերձ, որքան ավելի մեծ թվով աստղեր ու աստղիկներ բռնկվեն Երկիր մոլորակի վրա, այնքան ավելի լուսավոր ու բերկրալից կլինի մոլորակի վրա իշխող ընդհանուր մթնոլորտը։

Դուք առօրեական ունայնության մեջ չեք նկատում այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ձեր գիտակցության մեջ: Ուստի պարզապես հավատացե՛ք ինձ: Եվ եթե մոտակա ժամանակներում մեզ հաջողվի պահպանել ձեր գիտակցության աճի այդ տեմպը, ապա ներկայումս ապրող սերնդի կյանքի ընթացքում դուք արդեն բարենպաստ տեղաշարժեր կնկատեք մոլորակի վրա: Տեղաշարժեր՝ ոչ թե ուղղված դեպի տեխնիկական առաջընթացը, որով այս ողջ ժամանակի ընթացքում շարժվել է ձեր մոլորակը, այլ ուղղված դեպի հոգևոր առաջընթացը, դեպի հոգու զարգացումը: Եվ, այն բանին զուգընթաց, որ դուք ավելի ու ավելի մեծ համահնչունություն ձեռք կբերեք Բարձրագույն Աշխարհների հետ, այդ Աշխարհների ներթափանցումը ձեր աշխարհի մեջ ավելի ու ավելի զգալի կդառնա: Եվ դա այն է, ինչին մենք ձգտում ենք, այն է, դեպի ուր կանչում ենք ձեզ:

Երբ մշտապես սուզված եք անհավատության մթնոլորտում, որում թագավորում են բացասական էներգիաներն ու հատկանիշները, ձեզ համար դժվար է լինում զգալ մեր թրթռումները, դժվար է լինում զգալ Աստծո Աշխարհի հետ կապը: Սակայն ավելի ու ավելի է շատանում նրանց թիվը, ովքեր, նույնիսկ գտնվելով խոշոր քաղաքներում, ունակ են դառնում թեկուզ կարճատև ժամանակով բարձրացնելու իրենց գիտակցությունը, որպեսզի հնարավորություն ունենան շփվելու նույր աշխարհի հետ: Եվ որքան մեծ լինի ձեզնից նրանց թիվը, որոնք ունակ են բարձրացնելու իրենց գիտակցությունն ու ճամփորդելու նույր աշխարհներում, այնքան ավելի արագ տեմպերով կընթանան աստվածային Ուղով զարգանալու միտվածությամբ մոլորակի վրա տեղի ունեցող փոփոխությունները: Այժմ դուք գտնվում եք նյութականության ամենացածր կետում: Այդ պատճառով մութ էներգիաների ազդեցությունը ձեզ վրա այնքան մեծ է, որ դուք տառացիորեն պարուրված եք այդ էներգիաներով: Դրանք կարծես բարուրել են ձեզ և զրկել տարածության ու ժամանակի մեջ տեղաշարժվելու բավարար ազատությունից: Եվ ձեր մարդկային գիտակցությամբ ձեզ համար դժվար է պատկերացնել այն հնարավորություններն ու հորիզոնները, որոնք ցանկացած պահի կարող են ձեր առջև բացվել, հենց որ դրսևորեք մղման ու հավատի որակներ:

Ըստ այդմ, ինչպիսի վիճակում էլ գտնվեն ձեր հոգիները, որքան էլ ծանրաբեռնված լինեք ընթացիկ գործերով ու զուտ մարդկային խնդիրներով, միշտ հիշեք, որ այդ ամենը ժամանակավոր է: Եվ հենց որ ձեզ հաջողվի անել առաջին, դեռևս ոչ վստահ քայլն Աստծո Իրականության ճանաչման ուղղությամբ և օգնության կանչ հղել, բոլոր Համբարձյալ Դասերն ու հրեշտակները փութաջանորեն կշտապեն ձեզ օգնության հասնելու: Թող ձեզ չվրդովի այն, որ օգնությունը կցուցաբերվի ո՛չ ակնթարթորեն: Մեզ ժամանակ է պետք, որպեսզի դասավորենք արտաքին հանգամանքներն ու քերենք կարմայական նստվածքները: Բայց, որպես կանոն, այն ամենը, ինչ դուք կխնդրեք ձեր աղոթքներում ու նամակներում, այս կամ այն աստիճանով ի վերջո կիրականցվի: Բավական է միայն, որ ամենօրյա ոչ մեծ ջանքեր գործադրեք: Երբեմն ձեր աղոթքներն ինքնին այնքան էլ կարևոր չեն, քանի որ դուք դեռևս չեք տիրապետում աղոթքների ընթերցման այն գործյանը, որն անհրաժեշտ է նրանց իրական ազդեցության դրսևորման համար: Բայց ձեր ամենօրյա ջանքերն անպայմանորեն կարժանանան իրենց պարգևին: Քանզի մենք հասկանում ու գնահատում ենք, թե երբեմն ձեզ համար որքան դժվար է լինում թեկուզ մի քանի րոպե աղոթքին հատկացնելը: Որովհետև կարծես ձեր շրջապատի ամեն ինչն ընդդիմանում է ձեզ, երբ դուք լրջորեն սկսում եք զբաղվել ձեր այն պարտականությունների կատարմամբ, որոնք ձեզ վրա եք վերցրել Կարմայական Վարչությանն ուղղված ձեր նամակներում կամ պարզապես սրտի մղում եք դրսևորել և որոշել անշահախնդիր կերպով որոշակի ժամանակ տրամադրել սրբազան աշխատանքի կատարմանը:

Մի՛ վախեցեք բոլոր այն խոչընդոտներից, որոնք ձեր աշխարհում ծառանում են ձեր առջև: Քանզի խոչընդոտները միայն հուշում են, որ պետք է հաղթահարվեն ձեր կողմից: Եթե դուք ամեն օր խոչընդոտներ հաղթահարեք և ամեն օր կատարեք ձեր վերցրած պարտավորությունները, ապա մղման այն գործությունը, որն այդ ընթացքում դուք ձեռք կբերեք, ժամանակի ընթացքում ձեր աղոթքներում օգտակար կլինի ձեզ, և ձեր աղոթքները կօժտվեն ավելի ու ավելի մեծ ուժով:

Դուք նույնիսկ խոսքերով չէ, որ աղոթում եք, այլ աղոթում եք ձեր սրտերով՝ ձեր սրտերի պոռթկումով: Եվ մեզ համար տեսանելի եք դառնում, երբ անկեղծորեն եք աղոթում: Այդ պահերին դուք նմանվում եք լույսի վիթխարի բռնկման, ինչը մեզ ու հրեշտակների համար որպես ազդանշան է ծառայում, որպեսզի շտապենք ձեզ օգնության:

Ձեզ հայտնի է, որ ամենալավ ազդեցություն են գործում այն աղոթքները, որոնք ձեր սրտում կարդում եք անկեղծորեն ու անշահախնդրորեն:

Ուստի՝ Հիսուսի այն խոսքը*, որ պետք է մեկուսանաք և փակեք այն սենյակի դուռը, որտեղ աղոթում եք, լիովին ճշմարիտ է: Քանզի ամեն մի հրապարակային աղոթք իր վրա երկերեսանիության կնիք է կրում:

Եվ նրանցից շատերը, որոնք հաճախում են եկեղեցիներն ու աղոթատները, դա անում են ոչ թե ճշմարիտ հավատից ու նվիրվածությունից ելնելով, այլ կեղծ բարեպաշտությունից ու երկերեսանիությունից դրդված:

Կարողացե՛ք տարբերել ձեր ներսում այդ վիճակները: Մի՛ ձևացե՛ք ու մի՛ խաբե՛ք ինքներդ ձեզ: Ձեր աշխարհում ձեզնից բացի ուրիշ դատավոր չկա: Եվ ինքնե՛րդ պետք է սովորե՛ք գնահատել ձեր արարքները, ձեր մտքերը և ձերբազատվե՛ք այն ունայնից ու զուտ մարդկայինից, ինչը խանգարում է Ուղով ձեր առաջընթացին:

Եվ, ընդհանուր առմամբ, ձեզ ոչ մի դրսի դեկավար էլ պետք չէ, որովհետև ձեր գլխավոր դատավորը մշտապես ձեր ներսում է գտնվում: Դա ձեր Բարձրագույն Ես-ն է՝ ձեր խիղճը, ձեր Ես-Քրիստոսը:

Ուստի ձեզ համար օգտակար կլինի, եթե վերլուծե՛ք օրվա ընթացքում գործած ձեր բոլոր արարքները: Շատ խիստ մի՛ դատե՛ք ձեզ այն սխալների համար, որոնք թույլ եք տվել: Եվ թույլ մի՛ տվե՛ք, որ ձեր մարմնական խելքը ձեզ նորից ու նորից ներքաշի այն տհաճ իրադրությունների մեջ, որոնցում օրվա մեջ արդեն հայտնվել եք: Պարզապես տվե՛ք ծագած իրադրության ձեր գնահատականը և ձեր սրտում հաստատապես որոշեցե՛ք այլևս երբեք չհայտնվել նման տհաճ իրադրության մեջ կամ թույլ տալ նման անվայել արարքներ: Օգնությո՛ւն խնդրե՛ք ձեր Բարձրագույն Ես-ից, որպեսզի ձեզ նախազգուշացնի, երբ հաջորդ անգամ կանգնած կլինե՛ք նմանատիպ իրադրության շեմին, և օգնի ձեզ, որ ճիշտ ընտրություն կատարե՛ք:

Երբեք թույլ մի՛ տվե՛ք ձեզ մեկ լուրջ ավելի կենտրոնացած մնալ օրվա ընթացքում տեղի ունեցած որևէ բացասական դեպքի վրա: Քանզի երբ դուք սկսում եք խորհել ու չափազանց երկար վերլուծել բացասական իրադրությունը, ապա այն սնուցում եք ձեր էներգիայով: Եվ արդյունքում ստեղծում եք բացասական էներգիայի մի ամպակույտ, որը, թափառելով տարածության մեջ, ձգվում է դեպի այն մարդկանց կողմը, որոնց թրթիռները համընկնում են այդ բացասական էներգակուտակի թրթիռներին: Դրանով դուք տառաջիորեն կերտում եք ձեր ապագա խնդիրների ու նման իրադրությունների դրդապատճառները:

Ձեր գիտակցությունը մշտապես պետք է օժտված լինի այն մաքրությամբ, որը հատուկ է փոքրիկ երեխաներին: Հատե՛ք ու դե՛ն նետե՛ք ձեզնից բոլոր ցածրորակ բացասական վիճակները:

Պատկերացրե՛ք, որ վերցնում եք դանակն ու ձեզնից կտրում եք այն մտքերն ու կաշուն վիճակները, որոնցից չեք կարողանում ձերբազատվել: Փորձե՛ք այդ բացասական վիճակները փոխարինել դրական պատկերներով ու զգացմունքներով: Ներքին հայացքով մտասևեռվե՛ք գեղեցիկ գույների, բնության պատկերների վրա, ունկնդրե՛ք հանդարտ, մեղմ երաժշտություն: Քնից առաջ շատ օգտակար կլինի աստղերի ու գալակտիկաների պատկերների վրա մտասևեռվելը: Ունկնդրե՛ք և փորձե՛ք լսել անդորրության այն ձայնը, որը ձեզ է հասնում տիեզերքի ու տարածության խորքերից:

Ես ձեզ մտորումների նյութ տվեցի: Եվ ձեզ լքում եմ այն հույսով, որ կօգտվե՛ք իմ խորհուրդներից ու կհիշե՛ք դրանց մասին, երբ դրանք ձեզ անհրաժեշտ կլինեն:

ԵՍ ԵՄ Չբաղաշտը՝ կանգնած աստվածային ներդաշնակության բոցում

*Չբաղաշտն իր նախորդ թելադրությունը տվել է 2005 թ.-ի մարտի 30-ին – «Մարմնական խելքը պետք է իր տեղը գիշի Աստծո Բանականությանը»

** (հատված Նոր կտակարանից՝ Մտթ. 6:5-8)

Տեր Սուրիա

3 հունվարի, 2006 թ.

Ուսմունք խոնարհության մասին

ԵՍ ԵՄ Սուրիան՝ նորից ձեզ այցի եկածը...

Գործերի վիճակը Երկրի վրա նորմալացել է, և ես պատրաստ եմ վերադառնալու գիտելիքներ և տեղեկատվություն տալու համակշռված ընթացքին, որի կարիքը դուք ունեք: Այն բանին զուգընթաց, որ մենք գալիս ենք ձեզ հետ զրուցելու, դուք հնարավորություն եք ստանում ընդլայնելու ձեր գիտակցությունն ու աշխարհընկալումը: Եվ նույնիսկ եթե երբեմն թվում է, թե դուք որևէ թելադրությունից ոչ մի նոր բան չստացաք, ապա մի՛ խաբվե՛ք դրանով: Ձեզ բնորոշ է գերազնահատել ձեր այն նվաճումները, որոնց տիրապետում եք ներկա պահին: Ուստի մեր կողմից ձեզ ներկայացվող հիմնական պահանջներից մեկը ձեր խոնարհության զգացումն է: Դա չի

նշանակում, որ ձեզ կոչ ենք անում խեղճանալ ու ստրկամիտ դառնալ: Ո՛չ, դա կլիներ սխալ հասկացված խոնարհություն և սխալ հասկացված սպասավորություն:

Չի խոնարհության զգացումը նախ և առաջ ենթադրում է այնպիսի վիճակ, երբ դուք զգում եք Արարչի հետ ձեր միասնականությունը: Դուք այնքան պարզորոշ, այնքան զմայլված եք սկսում ընկալել Արարչությունն ու ձեզ շրջապատող աշխարհը, այնպիսի ակնածալից սարսուռ ու ձեզ ամբողջովին պարուրող սեր եք զգում, որ պատրաստ եք լինում ամեն ինչի, միայն թե հնարավորինս երկար մնաք ձեր գիտակցության այդ վիճակում:

Դուք պատրաստ եք լինում զոհաբերելու ձեր ունեցած ամեն ինչը, նույնիսկ ձեր ֆիզիկական մարմինը, հոգին, ձեր ողջ էությունը: Որովհետև հասկանում եք, որ վերջին հաշվով ձեր կողմից ոչ մի զոհաբերություն էլ չի կատարվում: Դուք այնքան խորն եք զգում շրջապատի կյանքի հետ ձեր միասնությունը և այնքան խորն եք սուզվում Արարչի հետ ձեր միասնության մեջ, որ ձեզ համար դադարում է գոյություն ունենալ ձեր էգոյի այն արգելապատնեշը, որը բաժանում է ձեզ ինձնից, Աստծուց ու կյանքի յուրաքանչյուր մասնիկից: Եվ այդ վիճակում դուք անսահման երախտագիտություն եք զգում Արարչի ողորմածության հանդեպ: Ձեր երկրային աշխարհում չկա ոչինչ, որը կարելի լիներ համեմատել այն մեղմ բերկրանքի ու անառիթ երջանկության զգացումի հետ, որը պարուրում է ձեզ: Եվ այդ վիճակում վերջապես ունակ եք լինում զգալու այն ակնածալից սարսուռը, որով հանձն եք առնուն ցանկացած պատասխանատվություն ու փորձություն, եթե դրա համար առկա է Աստծո Սրբազան Կամքը:

Ո՛չ, այդ զգացումը բոլորովին նման չէ ստրկամտության: Ամեն մի ստրուկ իր հոգու խորքում ատում է իր ստրկական վիճակն ու իր տիրոջը: Եվ երբեք չի կորցնում ազատության հույսը: Իսկ ձեր խոնարհության զգացումը սկիզբ է առնում լիակատար, անսահման ազատությունից: Դուք զգում եք, որ ձեր՝ որպես անհատականության, ազատությունը սկսվում է միայն այնժամ, երբ դուք մտնում եք համայն աշխարհում գործող Աստծո Օրենքին ամբողջովին ենթարկվելու հարաբերության մեջ: Դուք ենթարկվում եք Բարձրագույն Օրենքին և միաժամանակ ձեռք եք բերում այդ Օրենքի շրջանակներում գործելու անսահմանափակ ազատություն:

Ձեզ կարող է թվալ, թե իմ խոսքերը ներքին հակասություն են պարունակում: Ես ձեզ չեմ շտապեցնում ու չեմ ստիպում, որ իմ խոսքերն ընդունեք որպես բացարձակ ճշմարտություն: Պարզապես մտորե՛ք դրանց շուրջ: Վերլուծե՛ք, թե ինչ ունեք ձեզ շրջապատող աշխարհում. ձեր կապվածությունները, որոնք զգում եք ձեր աշխարհի իրեղենի նկատմամբ: Եվ փորձեք հասկանալ, որ իրականում ստրկական կախվածության մեջ եք գտնվում ձեր աշխարհի իրեղենից: Դուք այնպիսի կախվածության մեջ եք, որ, ըստ էության, ձեր իրերի ստրուկներն եք և, որպես դրա հետևանք, նաև ձեր աշխարհի հանգամանքների ստրուկներն եք: Եվ ձեր առջև վաղ թե ուշ կծագի այն հարցը, թե ինչ ազատություն ընտրեք: Իրական, Աստվածայի՞ն ազատությունը, որը ձեզ ազատում է ձեր աշխարհի ստրկական կախվածությունից, թե՞ կգերադասեք առաջվա պես գտնվել պատրանքային ազատության մեջ, որը միայն մեկ բնորոշ առանձնահատկություն ունի՝ չենթարկվել այն Օրենքին, որը գործում է համայն աշխարհում:

Մտածե՛ք ու կշռադատե՛ք: Ի՞նչ ունեք այժմ և ի՞նչ կարող եք ունենալ, եթե միայն ցանկություն ունենաք ձերբազատվելու ձեր էգոյից, կանգնեք ձեռնադրումների Ուղու վրա, որը ձեզ համար կանխորոշել են բոլոր մարգարեները և Երկրի վրա երբևէ գոյություն ունեցած բոլոր կրոնների հիմնադիրները:

Որքան էլ այդ կրոններն հետագայում աղավաղվել են ջանադիր հետևորդների կողմից, այնուամենայնիվ աստվածային խոնարհության հատկանիշը չէր կարող դուրս մղվել ու հեռացվել սուրբ գրքերից: Միակ բանը, որ կարող էր տեղի ունենալ ու տեղի է ունեցել, դա այն է, որ այն մարդիկ, ովքեր իրենց իրավունք են վերապահել խոսելու Աստծո անունից, աստվածային խոնարհության ու Աստծո Կամքին հնազանդ լինելու փոխարեն սկսել են պահանջել, որ մարդիկ ենթարկվեն այն օրենքներին, որոնք առկա են մարդկային կրոններում ու եկեղեցիներում:

Եթե հիշում եք, մենք ձեզ արդեն ասել ենք, որ ձեր աշխարհում գոյություն ունեցող ցանկացած հատկանիշ ու հանգամանք կարող է աղավաղվել և կրել երկակի բնույթ: Այսօր մենք ձեզ հետ քննարկեցինք Խոնարհության հատկանիշն իր ճշմարիտ նշանակության մեջ և դրա աղավաղումը երկրային առաջնորդների կողմից:

Արդ, ամեն անգամ, երբ կխորհրդածեք որևէ հատկանիշի մասին, փորձեք վերլուծել, թե որքանով է ձեր աշխարհում գոյություն ունեցող այդ հատկանիշը համապատասխանում իր աստվածային բնույթին: Եվ եթե դիտարկեք ու վերլուծեք ամեն մի հատկանիշը, որի հետ բախվում եք ձեր կյանքում, ապա աստվածային կերպին համապատասխանելու տեսակետից կտրեք ու հեռացնեք այն ամենը, ինչ Աստծուց չէ, ինչն արհեստականորեն է կազմված աստվածային հատկանիշին ու աղավաղում է այն, այդպիսով դուք կկարողանաք հասնել կատարելության՝ դեն նետելով ավելորդ ամեն ինչ և թողնելով ձեր շրջապատում միայն այն, ինչ Աստծուց է տրված:

Այդ գործընթացն ընդամենը մի կամ մի քանի կյանք չի տևի: Քանզի Երկիր մոլորակի վրա ունեցած ձեր ողջ գոյության՝ հազարավոր և միլիոնավոր ձեր մարմնավորումների նպատակն այն է, որ բաժանեք ու տարանջատեք ձեր իսկ ներսում այն, ինչն Աստծուց է, այն ամենից, ինչը ստեղծված է ձեր մարդկային գիտակցությամբ: Դուք նման էք Աստվածների, և ինչպես Աստված է ստեղծել համայն տիեզերքը, դուք էլ ստեղծել եք ձեր աշխարհի պատրանքը՝ օգտվելով ձեր ազատ կամքից ու ձեր գիտակցությունից: Բայց այնուհետև գալիս է մի պահ՝ մի կետ, որից հետո պատրանքը պետք է հետ հավաքվի: Դուք ձեր գիտակցությամբ բարձրանում եք ձեր աստվածային առաքելությունն ըմբռնելու մակարդակի վրա և այդ գիտակցությամբ սկսում եք իրականն անիրականից, աստվածայինը պատրանքայինից բաժանելու գործընթացը:

Ես դա ձեզ ցուցադրեցի աստվածային խոնարհության հատկանիշի և նրա մարդկային նմանակի օրինակի վրա: Եվ նույն կերպ դուք կարող եք վերցնել ու վերլուծել ուրիշ մարդկային հատկանիշներ՝ սերը, նվիրվածությունը, կատարելությունը, հավատը: Ամեն մի հատկանիշի մեջ, ինչպես հասկանում եք, առկա է աստվածային սկզբի և պատրանքայինի խառնուրդ:

Ձեր գիտակցության միջոցով դուք ունակ եք սկսելու զանազանման այդ գործընթացն ու բաժանելու աստվածայինը պատրանքայինից:

Հենց այդ ճանապարհով դուք կդառնաք Աստծո հետ համատեղ արարող: Եվ հենց այդ ճանապարհով դուք ունակ կդառնաք ձեր շուրջն արարելու աստվածային իրականություն:

Ուստի մի՛ հետաձգեք գործը, այլ ձեռնամուխ եղեք ձեր հիմնական կոչմանն ու ձեր ուղեղներում ու սրտերում բաժանե՛ք իրականն անիրականից:

Եվ կարող եմ ձեզ վստահեցնել, որ դա անհամեմատ ավելի հրապուրիչ գործ է, քան ձեր զուտ մարդկային ցանկացած գործը: Իսկ ամենակարևորն այն է, որ ձեր յուրաքանչյուր զուտ մարդկային գործ կարելի է դիտարկել աստվածայինի ու մարդկայինի համակցության տեսանկյունից: Եվ որքան ավելի բարձր գիտակցության է հասնում մարդ, այնքան ավելի նուրբ եզրաշերտեր է նկատում իր գործունեության մեջ, որոնք բաժանում են իրականը պատրանքից:

Դուք տառացիորեն մեկը մյուսի հետևից բացում եք պատրանքի ծածկույթները և դեպի իրականությունն ուղղված ձեր ամեն մի քայլի հետ այդ ծածկույթները դառնում են ավելի ու ավելի բարակ:

Մենք այսօր խոսեցինք խոնարհության մասին, խոսեցինք ազատության մասին և այն մասին, որ ձեր աշխարհի յուրաքանչյուր հատկանիշի մեջ դուք պետք է գտնեք աստվածային նշանակություն:

Եվ դա Աստծո այն հրաշագործությունն ու այն կոչումն է, որին դուք պետք է հետևեք:

Ես լքում եմ ձեզ՝ ձեր մտքերի հետ ձեզ մենակ թողնելով:

ԵՍ ԵՄ Սուրիան, եկա ձեզ ուսուցանելու Հավերժական Օրենքը

Վայրոչանա Բուդդա
4 հունվարի, 2006 թ.

Մենք սպառում ենք, թե դուք երբ կհասունանաք

ԵՍ ԵՄ Վայրոչանան՝ նորից ձեզ այցի եկածը:

Նախ ես կուզենայի ողջունել ձեզնից նրանց, որոնց ջանքերի շնորհիվ դուք հնարավորություն ունեք նորից ստանալու այս ուղերձները: Դուք գիտեք, որ ուղերձների հաղորդման համար շատ մեծ քանակությամբ էներգիա է ծախսվում: Եվ եթե դուք ձեր ջանքերով հնարավոր չդարձնեիք թելադրությունների ընդունման շարունակումը, մենք ստիպված կլինեինք այդ գործը դադարացնել: Տիեզերքում ամեն ինչ խարսխված է ողջախոհության ու նպատակահարմարության վրա: Եվ եթե մենք չտեսնենք, որ մեր կողմից տրվող Ուսմունքն ընկալվում է ձեր կողմից, և դուք պատրաստ եք ֆիզիկական ոլորտում ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի մեր Ուսմունքներն ավելի լայն տարածում գտնեն, և չտեսնենք, որ պատրաստ եք ձեր աղոթքային արթնությամբ համագործակցելու մեզ հետ, ապա մենք կփակենք հնարավորության պատուհանը, մինչև որ զան ավելի լավ ժամանակներ:

Քանզի այն, որ դուք հնարավորություն ունեք ստանալու այս Ուսմունքը, արդեն վկայում է այն մասին, որ դուք ջանքեր եք գործադրել, և դրանք բավարար են համարվել, որպեսզի այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունները շարունակություն ունենան:

Միշտ, երբ դրված է լինում հերթական Ուսմունքը տալ-չտալու հարցը, մենք մանրագնին կերպով կշռադատում ենք բոլոր «թեր» և «դեմ» կողմերը: Հիսուս ուսուցանել է, որ չի կարելի նոր գինին հին տիկերի մեջ լցնել*: Ուստի նախքան մեր գիտելիքն ու էներգիան տալը նախապես մենք

գնահատում ենք անոթի որակը: Եվ դա ոչ միայն դեսպանորդին է վերաբերում, այլև ձեզնից յուրաքանչյուրին, ով շփվում է այս Ուսմունքի հետ: Դուք կարող եք չնչին օժանդակություն ցուցաբերել՝ պարզապես տրվող Ուսմունքի մասին խոսելով ծանոթների ու մերձավորների հետ: Կարող եք ձեր աղոթքի էներգիան հղել ի նպաստ տվյալ թելադրությունների շրջանի շարունակմանը, կարող եք մասնակցություն ունենալ գրքերի հրատարակման, այլ լեզուներով թարգմանելու և տարածելու գործերում: Ձեր բոլոր այդ ջանքերը գումարվում են և վերլուծության համար մուտքագրվում են մեր երկնային համակարգիչների մեջ: Եվ մենք Ուսմունք տալու համար ծախսած մեր էներգիան համեմատում ենք այն էներգիայի հետ, որը դուք ծախսում եք, որպեսզի յուրացնեք այդ Ուսմունքը և այն տարածեք ձեր օկտավայում:

Եվ հիմա պարզվեց, որ կշեռքի նժարը փոքր-ինչ ձեր կողմն է թեքված: Ուստի այժմ մենք ձգտում ենք հավասարակշռել կշեռքի նժարը և տալ ձեզ Աստծո այնքան էներգիա ու գիտելիքներ, որքան անհրաժեշտ է, որպեսզի էներգիաների հավասարակշռությունը պահպանվի:

Բացեմ ձեզ մի գաղտնիք: Դեռևս ոչ վաղուց, երբ Կարմայական Վարչությունը, որի անդամներից մեկն էլ ես եմ, պատրաստվում էր սկսել իր նիստը, կշեռքի ծանր նժարը մեր տված էներգիաներն էին: Այդ պատճառով Վեհապետ Սերապիս Բեյը ստիպված եղավ զգուշացնել, որ իր թելադրությունը կարող է վերջինը լինել**:

Եվ ահա այսօր ես երջանիկ եմ, որ կարող եմ նորից գրուցել ձեզ հետ, տալ ձեզ իմ Ուսմունքը և նվիրել ձեզ իմ էներգիան:

ԵՄ ԵՄ Վայրոչանան՝ Բուդդա Վայրոչանան: Եվ, որպես Բուդդա՝ ես պարտավոր եմ տալ իմ գիտելիքներն ու իմ էներգիան: Արդեն գիտեք, որ մոլորակի հավասարակշռությունը պահպանվում է այն մարդկանց շնորհիվ, ովքեր հասել են Բուդդայի պայծառացման աստիճանին: Դա չի նշանակում, որ այդ մարդիկ ֆիզիկապես ու խելքով չափազանց շատ են տարբերվում մեծամասնությունից: Գիտակցության ընդլայնվածության աստիճանն ու Բուդդայի գիտակցության մակարդակը կապված են ոչ այնքան արտաքին դրսևորումների, որքան ներքին վիճակի հետ: Բայց հատկապես այդ մարդիկ են, որ, շնորհիվ իրենց նվաճումների աստիճանի, կարող են պահպանել Երկիր մոլորակի հավասարակշռությունը:

Բուդդայի գիտակցության մակարդակը ձեր այն նպատակակետն է, որին պետք է հասնեք: Դուք բոլորդ Բուդդաներ կդառնաք: Իհարկե, ոչ բոլորը Բուդդա կդառնան հենց այս մարմնավորման ընթացքում: Բայց Բուդդայի գիտակցության մակարդակին հասնելը ձեզ համար նույնքան անխուսափելի է, որքան տիեզերքի ընդհանուր զարգացումը:

Ձեզ մատչելի կդառնան այնպիսի գիտելիքներ, որոնք չեն պարունակվում ձեր խանութների ու գրադարանների դարակներին դրված գրքերում: Ձեզ մատչելի կդառնան այն գիտելիքները, որոնք գտնվում են գիտելիքների տիեզերական զանձարանում: Սակայն, որպեսզի այդ գիտելիքները ձեզ մատչելի դառնան, դուք պետք է նախ ձեռք բերեք Բուդդայի գիտակցության մակարդակ:

Ուստի մենք չենք հոգնում ձեզ համար կրկնելուց, որ պետք է հրաժեշտ տաք ձեր իսկ այն մասին, որը ձեր անիրական մասն է և խանգարում է, որ ձեզ համար մատչելի դառնան տիեզերական զանձարանի գիտելիքներն ու էներգիաները:

Դուք դեռևս կարող եք շարունակել ձեր երկրային խաղերը, բայց և պետք է աստիճանաբար ձերբազատվեք դրանցից: Ճիշտ այն երեխաների նման, որոնք մինչև որոշակի տարիք խաղում են իրենց խաղալիքներով, բայց հետո՝ ընդամենը մի քանի տարի անց, նախկին խաղերն այլևս նրանց չեն հետաքրքրում: Ինչու՞: Որովհետև փոխված է լինում նրանց գիտակցության մակարդակը: Նրանք հասունացած են լինում: Նմանապես մենք սպասում ենք, որ դուք հասունանաք ու դադարեք խաղալ այն խաղերը, որոնք բնորոշ են իր մանկահասակ տարիքում գտնվող մարդկությանը:

Եթե ես գայի մանկապարտեզ ու երեխաներին սկսեի պատմել տիեզերքի ու բարդ տեղեկատվական համակարգերի կառուցվածքի մասին, ապա նրանք ինձ չէին հասկանա: Սակայն բոլոր լավ դաստիարակների ու ուսուցիչների պարտականությունը հենց այն է, որ երեխաներին իրենց զարգացման մակարդակով պատկերացում տան այն մասին, որ իրենց խաղերի աշխարհից անդին գոյություն ունի մի այլ աշխարհ: Նմանապես ես չեմ կարող ձեզ տալ տիեզերական գիտելիք և համայն տիեզերքի կառուցվածքին վերաբերող գիտելիքներ, բայց կարող եմ ձեզ ասել, որ կա մի այլ աշխարհ, որը լեցուն է գիտակցության զարգացման ուրիշ աստիճանի հասած էակներով: Եվ որ այլ կարգի փոխհարաբերություններ են գործում կյանքի տարբեր ձևերի միջև:

Միանգամայն հնարավոր է, որ, իմանալով այդ ամենը, դուք մղման ազդակ կստանաք, որը ձեր մեջ ձգտում կառաջացնի հասնելու հեռավոր աշխարհներ և ձեռք բերելու գիտակցության ավելի բարձրաթիվներ վիճակ:

Երբ դեռ փոքր էիք, ձեզնից շատերն ուզում էին շուտ մեծանալ, որ իրենց մատչելի դառնա այն աշխարհը, որտեղ ապրում ու գործում են հասուն մարդիկ: Ինչու՞ եք հիմա ուզում փակված մնալ

ձեր աշխարհում և կորցնել ձեր մղումը դեպի հեռավոր աշխարհներ, որոնք համապատասխանում են գիտակցության մի այլ մակարդակի՝ Բուդդայի գիտակցության մակարդակին:

Ճիշտ այնպես, ինչպես չէիք կարող մուտք գործել մեծերի աշխարհը, քանի դեռ որոշակի կրթություն ու դաստիարակություն չէիք ստացել, որոնք ձեզ թույլ կտային գործելու մեծերի աշխարհում, այնպես էլ դուք հիմա չեք կարող մտնել մեր աշխարհն ու այնտեղ գործել, քանի դեռ համապատասխան ուսում չեք ստացել, և ձեր գիտակցությունը չի հասել իր հաջորդ մակարդակին:

Եվ հարկ եղած ուղղությամբ ձեր առաջին քայլը կլինի այն, որ ցանկություն ու մղում դրսևորեք հետևելու մեր խրատներին ու խորհուրդներին:

Ես այսօր ձեզ պատկերացում տվեցի ու նկարագրեցի մեր այն մոտեցումները, որոնցով մենք առաջնորդվում ենք, երբ գործ ենք ունենում Երկրի մարդկության հետ:

Հնարավոր է, ձեզնից շատերին վիրավորական թվաց, որ մենք ձեզ երեխաներ ենք համարում:

Բայց դուք հենց երեխաներ էլ կմնաք, քանի դեռ ձեր ներսում չեք կարողանա հաղթահարել ձեր երեխայական ցանկություններն ու մղումները:

Արդ, ես ձեզ շուտափույթ հասունացում եմ մաղթում, որ վերջապես ձեզ պատասխանատու զգաք ձեր մոլորակի և նրա վրա եղած ողջ կյանքի հանդեպ:

ԵՄ ԵՄ Վայրոշանան, ձեզ հետ եղա այսօր

*Հատված Նոր կտակարանից – Մտթ. 9:17

** «Ես եկել եմ ձեզ զգուշացնելու, որ այս թելադրությունը կարող է վերջինը լինել» - Սերապիս Բեյ, 23 դեկտեմբերի, 2005 թ.

Տեր Շիվա

5 հունվարի, 2006 թ.

**Մենք փնտրում ենք նրանց, ովքեր
իրենց գիտակցությամբ ունակ են դուրս գալու
շրջակա պատրանքի շրջանակներից**

ԵՄ ԵՄ Շիվան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Մշտապես հոգ տարեք ձեր սրտերի խաղաղությունը պահպանելու համար: Մտորե՛ք այս արտահայտության իմաստի մասին: Այն խոսում է ձեր սրտի ներսում խաղաղություն ու հանգստություն պահպանելու անհրաժեշտության և այն մասին, որ պետք է հոգալ նաև շրջակա ամեն ինչի մասին: Եվ իրոք, շրջակա ամեն ինչը կախված է այն բանից, թե ինչ է կատարվում ձեր ներսում: Դուք բացարձակ կախվածության մեջ եք ձեր ներքին վիճակից: Եվ ձեզնից դուրս չի կարող լինել ոչինչ, որ հետք թողնի ձեր ներքին վիճակի վրա, եթե ձեր մտքերն ու հույզերը կառավարելու գործում կատարելության եք հասել:

Գիտակցության մակարդակների ինչպիսի՜ մեծ տարբերություն գոյություն ունի Երկրի վրա: Շատ լավ գիտեք, որ Երկրի վրա ապրող շատ մարդկանց համար վերևում ասվածը զուրկ կթվա որևէ իմաստից: Եվ այն խոր իմաստը, որը պարունակվում է այդ պարբերությունում, կանցնի նրանց գիտակցության կողքով՝ որևէ հետք չթողնելով:

Ինչու՞ է դա այդպես: Որովհետև նրանց գիտակցության մակարդակն ու թրթիռների մակարդակը թույլ չեն տալիս, որ նրանք որսան այդ խոսքերի իմաստը: Միայն այն մարդիկ են ընդունակ արձագանքելու այդ խոսքերին ու խորանալու դրանց իմաստի մեջ, ում թրթիռները գտնվում են ձեր օկտավայի համար հնարավոր ամենաբարձր տիրույթում:

Իրականում այն ամենը, ինչ շրջապատում է ձեզ, իրենից ներկայացնում է վիթխարի պատրանք, որը գոյատևում ու պահպանվում է միայն ձեր գիտակցության շնորհիվ, այն բանի շնորհիվ, որ, գտնվելով ձեր աշխարհում, հետաքրքրություն եք ցուցաբերում շրջակա ամեն ինչի նկատմամբ: Ուր կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Ձեր էներգիան հոսում է դեպի այն, ինչի մասին մտածում եք, ինչի նկատմամբ հետաքրքրություն եք ցուցաբերում:

Մի պահ պատկերացրեք, որ բոլոր մարդիկ միաժամանակ կորցրել են հետաքրքրությունը շրջապատող իրականության նկատմամբ: Դուք բոլորդ միաժամանակ կկորցնեիք ձեր աշխարհի իրեղենին տիրանալու ցանկությունը, դրանք ձերը դարձնելու ցանկությունը: Ձեր աշխարհի

վայելքներն այլևս ձեզ չէին հետաքրքրի: Դա չի նշանակում, որ կկորչեր ձեր գոյության իմաստը: Ուղղակի այն կտեղափոխվեր այլ՝ ավելի նուրբ ու վայելչագեղ օկտավաներ: Պատրանքի աշխարհն այլևս կդադարեր գոյություն ունենալուց և աստիճանաբար կցնդեր միրաժի պես:

ԵՍ ԵՄ Շիվան: Եվ ես այցի եմ գալիս ձեզ, որովհետև իմ գործառնությունից մեկը, որն իրականացնում եմ այս տիեզերքում, աշխարհների հետհավաքումն է: Ես պատրանքներ խորտակող եմ: Եվ ես կառավարում եմ պատրանքի հետհավաքման գործընթացը:

Եկել է այն պահը, երբ ձեր գիտակցությունը պետք է դեմքով շուռ գա դեպի իրականությունը, որպեսզի պատրանքը դադարի գոյություն ունենալուց:

Կարծում եք պատահականա՞ն են իմ այցելությունն ու իմ դեսպանորդի միջոցով ձեզ հետ իմ գրուցելը: Ո՛չ, պարզապես եկել է պահը, երբ սկզբում ոչ մեծ քանակությամբ մարմնավորված անհատներ, հետո ավելի մեծ քանակությամբ անհատներ ունակ կդառնան ընկալելու մեր կողմից տրվող այս նոր տեղեկատվությունը:

Ձեր աշխարհը նման է փայտերի դեզի: Բավական է լուցկի դեմ տալ և վառել մի քանի չոր փայտ, և ամբողջ կուտակը կբռնկվի: Այժմ մենք որոնում ենք նրանց, ովքեր ունակ են վառվելու: Քանզի բոլոր փայտերը չէ, որ պատրաստ են: Շատերը դեռ «թաց» են: Բայց երբ ավելի ու ավելի շատ մարդիկ ունակ դառնան յուրացնելու մեր թրթիռներն ու մեր տված նոր տեղեկատվությունը, ձեր ամբողջ աշխարհը հրի կմատնվի, և ձեր պատրանքային աշխարհից ոչ մի հետք չի մնա: Տիեզերական չափանիշներով՝ այդ գործընթացի համար շատ քիչ ժամանակ կպահանջվի:

Ըստ այդմ, մենք ձեր մեջ փնտրում ենք նրանց, ովքեր ունակ են կրելու հուր, Լույս, Էներգիա, մեր թրթիռները:

Նաև ասում ենք, որ նրանք, ովքեր իրենց գիտակցությամբ շարունակում են կառչել ձեզ շրջապատող աշխարհին, արդեն անցյալին են պատկանում:

Միշտ էլ լինում են մարդիկ, ովքեր կառչում են հինի իրենց պահպանողական մտածողության և գիտակցության հետամնացության պատճառով: Եվ միշտ էլ լինում են մարդիկ, ովքեր ձգտում են դեպի նորը: Մենք փնտրում ենք հենց այդպիսիներին: Մենք փնտրում ենք ձեզնից նրանց, ովքեր ընկալունակ են նոր մտածողության ու նոր գիտակցության նկատմամբ: Մենք փնտրում ենք նրանց, ովքեր ունակ են իրենց գիտակցությամբ դուրս գալու շրջակա պատրանքի շրջանակներից:

Ելնել դեպի վեր՝ դեպի նուրբ աշխարհները, դեպի աստղային աշխարհները:

Լքել հարազատ մոլորակի սահմանափակ աշխարհը և դուրս թռչել բնից դեպի տիեզերական հեռաստանները:

Մենք փնտրում ենք խիզախներին ու նկրտում ունեցողներին՝ նրանց, ովքեր չեն վախենում նորից ու անհայտից:

Ձեզնից ո՞վ կարող է քայլ անել դեպի անհայտություն: Գիտեք, որ միայն այն մարդիկ, ովքեր իրենց գիտակցության մեջ կարող են հաղթահարել շրջակա եռաչափ աշխարհի սահմանափակությունը և խոյանալ դեպի Բարձրագույն Աշխարհների իմացությունը:

Կյանքը չի ընդհատվում: Կյանքն անվերջ է: Պարզապես նոր ձևերի մեջ է անցում:

Եվ այդ գործընթացը նման է հավերժական շարժման, հավերժական պտույտի: Երբեք չդադարող և երբեք կանգ չառնող:

Միայն նա, ով ընդամենը մի ձմեռ է տեսել, չի կարող հավատալ, որ ձմեռվանից հետո գարուն է գալիս, իսկ հետո՝ ամառ:

Այժմ Երկիր մոլորակի վրա ձեր ապրելը խիստ ձմեռ է հիշեցնում, ինչը հենց ձեր գիտակցության արգասիքն է:

Պետք է հասկանաք, որ ձեր այդ վիճակն անցողիկ է: Այն փոփոխություն կկրի: Ուստի և մենք ձեզ կոչ ենք անում, որ սկսեք փոխել ձեր գիտակցությունը: Որ պատրաստ լինեք փոփոխությունների: Պատրաստ լինեք մղվելու դեպի ավելի վսեմ վիճակներ:

Դա չի նշանակում, որ դուք կգրկվեք այն բոլոր ուրախություններից, որոնք ստանում էիք ձեզ շրջապատող կյանքից: Պարզապես ձեր ընկալումն ավելի նուրբ կդառնա: Իսկ այն վայելքները, որոնք դուք ունակ կդառնաք զգալու, կգերազանցեն ձեր բոլոր սպասելիքները: Քանզի ոչ մի երկրային վայելք չի կարող համեմատվել այն վայելքների հետ, որոնք դուք ունակ կլինեք զգալու նուրբ աշխարհներում:

Ձեր գիտակցության փոփոխության աստիճանական ընթացքն այն բանի երաշխիքն է, որ այն բարդ փուլը, որի առջև այժմ կանգնած է ձեր քաղաքակրթությունը, կհաղթահարվի հնարավորինս հանդարտորեն:

Բայց ձեզ հայտնի է, որ եթե ճուտիկը չի շտապում հրաժեշտ տալու հարազատ բնին, ապա հոգատար մայրը նրան հրում է դեպի նոր կյանք: Դեպի թռիչքի ազատություն: Իսկ դրա համար անհրաժեշտ է անել առաջին քայլը, դուրս գալ ձեր զուտ մարդկային գիտակցության սահմաններից

և մտածել այնպիսի չափանիշներով, որոնք կապված չեն ձեր աշխարհի ու նրա սահմանափակության հետ:

*ԵՍ ԵՄ Շիվան, եկա, որ ուսուցանեմ ձեզ,
թե ինչպես ձեր գիտակցության մեջ խորտակեք պատրանքը*

Պաշտելի Ալֆա
6 հունվարի, 2006 թ.

Ես հնարավորություն եմ ընձեռում և հեռանկար եմ բացում

ԵՍ ԵՄ Ալֆան:

Այս օրով նորից ձեզ այցի եմ եկել մի գրույց կամ խոսակցություն վարելու նպատակով, որն ուղղություն կտա ձեր մտքերին և մտադրություն կծնի, որ խորհրդածեք ու որոշում կայացնեք ձեր սրտերում: Իրականում ձեր մտադրվածությունը շատ կարևոր է: Կախված այն բանից, թե ինչպիսի մղում ունեք, ինչ սրտով եք որևէ բան անում, որքան եք անկեղծ և որքան անշահախնդիր՝ դուք տարածությունից դեպի ձեզ եք քաշում այս կամ այն հնարավորությունը, այս կամ այն հեռանկարը: Իսկ եթե շարունակեք ապրել այնպես, կարծես ոչինչ տեղի չի ունեցել հին տարվա ավարտի ու նորի սկզբի այս օրերին, կարծես չեն եղել այս թելադրություններն ու Վեհապետների հետ ձեր հանդիպումները, դրանով իսկ ինքներդ ձեզ կդատատապարտեք նրան, որ ձեր զարգացումը դանդաղի: Եվ հակառակը, եթե ամբողջ հոգով ու սրտով ընդունել եք մեր դեսպանորդի միջոցով Վեհապետների կողմից տրվող թելադրություններում պարունակվող տեղեկատվությունը, ապա դրանով դուք ձեզ համար հնարավորության պատուհան եք բացել. ձեզ համար հնարավորություն եք ստեղծել գործելու ժամանակային ու էներգետիկական այն միջանցքի շրջանակներում, որն այժմ մենք ձեզ համար բացել ենք:

Ես հնարավորություն եմ ընձեռում և հեռանկար եմ բացում: Եվ ինչպես միշտ, քանի դեռ դուք գտնվում եք մատերիայի մեջ և ենթարկվում եք ժամանակային ու տարածական բոլորաշրջանների ազդեցությանը, ձեր առջև մշտապես այլընտրանք կանգնած կլինի՝ օգտվել՝ ընձեռված հնարավորությունից, թե՛ շարունակել անբովանդակ կյանքը:

Ձեր մղումները կյգվեն էներգիայով, և ձեր գործերն անհրաժեշտ օժանդակություն կստանան, եթե ձեր ընտրությունը կանգ առնի ընձեռված տիեզերական հնարավորությանը համապատասխան գործելու վրա: Այդ հնարավորությունը ձեզ կտա արագացված զարգացում, ձեր Ուղու վրայի բոլոր խոչընդոտների հաղթահարում:

Կարևոր է, որ կարողանաք ձեր գիտակցությամբ համալարվել այդ հնարավորության հետ, մեր թրթռումների հետ: Մեր թրթռումները լսելի չեն ձեր ֆիզիկական լսողության համար, և դրանք հնարավոր չէ զգալ ֆիզիկական զգայարաններով: Դա կանչ է, որը հնչում է ձեր սրտի խորքում. դա կարոտն է Հայրական Տան, որից հեռացել եք. դա ձեր Տուն վերադառնալու փափագն է:

Ականջալուր եղեք ձեր սրտի կանչին:

Մեկուսացեք և անդորրության մեջ լսեք ձեր սրտի շշուճը:

Հնարավոր չէ, որ չլսեք: Պարզապես ձեր կյանքից հեռացրեք բոլոր այն անպետք բաները, որոնք թույլ չեն տալիս ձեզ առանձնանալ և լսել ձեր սրտի այդ մեղմ շշուճը, զգալ նրա Մերը:

Դուք Սիրող էակ եք: Որքան էլ թաքցնեք ձեր Մերն ու այնպիսի տեսք ընդունեք, թե չեք հիշում ձեր Մերը, այնուամենայնիվ այն ձեր ներսում է: Մերը ձեր հիմնական հատկանիշն է: Ուստի ձեր կյանքից հեռացրեք բոլոր այն անպետք բաները, որոնք ձեզ խանգարում են ձեր սրտում զգալու Աստծո Մերը:

Ինքներդ եք ընտրություն կատարում և ինքներդ եք դասավորում ձեր կյանքի բոլոր հանգամանքները:

Չհոգնեցի՞ք արդյոք ձեզ պարուրած կարծրատիպերին ու սովորություններին գերի լինելուց: Ժամը չէ՞ արդյոք հրաժարվելու ձեզ պարուրած ունայնությունից և վերջապես ողջ էությամբ շրջվելու դեպի հավերժականն ու անանջը:

Ես եկել եմ, որ մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ այն վայրի մասին, որտեղից ձեր հոգիները եկել են ձեր աշխարհ: Եկել եմ, որ մեկ անգամ ևս հիշեցնեմ ձեր Հայրական Տան մասին և կանչեմ ձեզ Տուն:

Դուք լսո՞ւ եք ինձ, օ՛, իմ զավակներ:

Ես պատրաստ եմ ձեզ ցուցաբերելու Հայրական սրտիս ողջ հոգածությունը: Պատրաստ եմ անվերջ նվիրել ձեզ իմ սրտի Մերը: Ինձ միայն ձեր որոշումն է պետք, ձեր այն հաստատ որոշումը, որը կընդունեք ձեր սրտում և այլևս չեք հեռանա այդ որոշումից: Որոշում, որ վերադառնաք Տուն,

կատարեք այն ամենը, ինչ անհրաժեշտ է Հայրական Տուն վերադառնալու համար՝ այնտեղ, որտեղից դուրս եք եկել և ուր պարտավոր եք վերադառնալ:

Դուք բոլորդ Միասնականի մասնիկներն եք: Եվ ահա գալիս է ձեր տարանջատվածության, ցուրտ ու անհարմարավետ աշխարհում ձեր թափառումների վերջը: Դուք բոլորդ պետք է Տուն վերադառնաք: Ես սպասում եմ ձեզ: Անհամբերությամբ սպասում եմ յուրաքանչյուրիդ, ո՛վ, իմ սիրելի և ոչ միշտ հնազանդ զավակներ:

Ընդունե՛ք իմ Հայրական Մերը:

Ես իմ Միտ շնորհն առաքում եմ ձեզնից յուրաքանչյուրին: Իմ սրտից՝ ուղիղ ձեր սրտերի մեջ:

Մեկնե՛ք ինձ ձեր սրտի թասը, և Ես այն պոնկեպոունկ կլցնեմ իմ Միտով:

Եվ այնժամ, երբ ձեր կյանքում կհանդիպեք դժվարությունների, դուք կհիշեք իմ Միտ մասին: Կկարողանաք կանչ հղել, և Ես կգամ, որ կրկին պարուրեմ ձեզ իմ Միտով, օգնեմ, որ հաղթահարեք ձեր բոլոր ձախողություններն ու դժբախտությունները և անցնեք ձեր Ուղու դժվարագույն հատվածները:

Մնում է, որ ձեր սրտում պարգապես ասեք. «Հայր, ես Քոնն եմ: Արի և օգնի՛ր ինձ»:

Եվ Ես կգամ: Կգամ ձեր փորձության ամենադժվարին պահին:

Ես չեմ կարող ձեզ թողնել փորձանքի մեջ: Չեմ կարող ձեր նկատմամբ Մեր չտաձել: Մեր՝ յուրաքանչյուրիդ նկատմամբ: Մեր, որի դիմաց ոչինչ չեմ պահանջում:

ԵՍ ԵՄ Այֆան՝ ձեր Երկնավոր Հայրը

Վեհապետ Էլ Մորիա

7 հունվարի, 2006 թ.

Ես ձեզ երկու լուր եմ բերել. մեկը տխուր է, իսկ մյուսը՝ ուրախ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

Ինչպես և անցած անգամ, երբ այս դեսպանորդի միջոցով մենք տվեցինք նախորդ շրջանի թելադրությունները*, ես եկել եմ, որ ազդարարեմ թելադրությունների այս շրջանի ավարտը:

Դա չի նշանակում, որ մենք դադարեցնում ենք մեր աշխատանքն այս դեսպանորդի կամ ցանկացած ուրիշի հետ, ով կնախապատրաստի իր տաճարը, կվերածվի մաքուր անոթի, որպեսզի մենք կարողանանք իր միջոցով աշխատել:

Պարգապես ավարտվեց որոշակի փուլ, ավարտվեց շրջանը, իսկ առջևում նոր շրջաններ են:

Ես հուսով եմ, որ այս անգամվա ձեր ստացած թելադրություններն օգտակար կլինեն ձեր զարգացման և Ուղով ձեր առաջընթացի համար:

Անկատար ու անավարտ է մնացել մի բան, որի մասին ես պետք է այժմ ձեզ հայտնեմ:

Դա վերաբերում է ամսի 23-ի թողության շնորհի մասին նոր տեղեկատվությանը:

Եթե հիշում եք, 2005 թ-ի հունիսի 27-ին տված իմ թելադրության մեջ ես ձեզ թողության շնորհ եմ տվել, որը վերաբերում էր ամեն ամսվա 23-ին և պետք է գործեր մինչև անցյալ տարվա վերջը:

Հիմա այդ տարին ավարտվել է, բայց ես պետք է ձեզ հայտնեմ, որ թողության շնորհը կշարունակի գործել ևս մեկ տարի: Ինձ հաջողվեց համոզել Կարմայական Վարչությանն ու այդ թողության շնորհի ժամկետը երկարաձգելու աջակցություն ստանալ: Քանզի այն էներգիան, որն անցյալ տարվա ընթացքում դուք ստացաք այդ թողության շնորհի գործելու շնորհիվ, բավարար է համարվել:

Մենք ուրախ ենք, որ դուք օգտվեցիք ընձեռված հնարավորությունից: Եվ ես հույս ունեմ, որ այս տարվա ընթացքում այդ թողության շնորհին կմիանան նոր լուսակիրներ:

Մի՛ մոռացեք, որ մինչև այս տարվա վերջ ամեն ամսվա 23-ին դուք հնարավորություն ունեք փոխակերպության ենթարկելու հաջորդ ամսվա կարման: Եվ ձեր ջանքերը կբազմապատկվեն այնքան անգամ, որքան թվով մասնակիցներ այդ օրը կմիանան այդ գործընթացին: Սա Երկնքի շնորհն է ձեզ:

Ես այժմ չեմ կրկնի այդ թողության շնորհի բոլոր պայմանները: Միայն ասեմ, որ այդ թողության շնորհին վերաբերող բոլոր այն պայմանները, որոնք ես շարադրել էի իմ նախորդ ուղերձում, կրկին մնում են ուժի մեջ:

Երկնքի կողմից դա մեծ ողորմածություն է ձեր նկատմամբ: Եվ ես հուսով եմ, որ ընթացիկ տարին հոգևոր ոլորտի մեծագործությունների տարի կլինի Երկիր մոլորակի համար:

Մենք բոլորս հույս ենք կապում դրա հետ:

Անկեղծ ասած, թելադրությունների այս շրջանը մենք չեինք ուզում ավարտել:

Սակայն Օրենքը մեզ թույլ չի տալիս ծախսել ավելի շատ էներգիա, քան նախատեսված է:

Ուստի մենք հույս ունենք, որ հաջորդ հնարավորությունը սարերի հետևում չէ, և այն իր սկիզբը կունենա այս տարվա ընթացքում:

Այսօր այսքանը: Ես երկու լուր բերեցի. մեկը՝ տխուր, իսկ մյուսը՝ ուրախ: Տխուր լուրը կապված էր թելադրությունների շրջանի ավարտի հետ, իսկ ուրախ լուրը վերաբերում էր ամսի 23-ի թողության շնորհի գործողության ժամկետի երկարաձգմանը:

Ամեն ինչ պետք է հավասարակշռված ու համաչափ լինի:

Ես ձեզ հրաժեշտ եմ տալիս՝ նոր հանդիպումների հույսով:

ԵՍ ԵՄ Է՛լ Մորիան

*Խոսքը վերաբերում է 2005 թ-ի մարտի 4-ից մինչև հունիսի 30-ը տևած թելադրությունների շրջանին: Այն ժամանակ, շրջանի վերջում, իր հունիսի 30-ի թելադրության մեջ Վեհապետ Էլ Մորիան ազդարարեց թելադրությունների այդ շրջանի ավարտը:

Տեր Շիվա

23 հունվարի, 2006 թ.

**Երբ ֆիզիկական աշխարհում ի հայտ է գալիս թաս, որը մենք
կարող ենք լցնել Լույսով, ապա մենք դա անում ենք միշտ**

ԵՍ ԵՄ Շիվան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից եկածը:

Շիվան ԵՍ ԵՄ... Ես եկա: Իսկ դա նշանակում է, որ ես ցանկանում եմ ձեզ Բան ասել և հասցնել ձեզ գիտելիք ու տեղեկատվություն, որի կարիքն ունեք:

Դա նշանակում է, որ մենք շարունակում ենք աշխատել մեր դեսպանորդի միջոցով, և որ նա ներկա փուլում բավարարում է մեր կողմից իրեն ներկայացվող պահանջները:

Այժմ՝ իմ ներկայանալուց և ոչ մեծ ելույթից հետո, կուզենայի անցնել իմ այսօրվա այցի բուն նպատակին:

Իսկ իմ նպատակը կապված է կայանալիք այն իրադարձության հետ, որի մասին հայտարարվել է ֆիզիկական աշխարհում, բայց դեռևս մեր կողմից թելադրության միջոցով չի հայտարարվել:

Ես խոսում եմ սեմինարի մասին, որն ընթացիկ տարվա մարտ ամսին տեղի կունենա Մոսկվայում:

Դուք գիտեք, որ այդ սեմինարն անցկացվում է մի խումբ մարդկանց նախաձեռնությամբ, ովքեր ցանկություն են արտահայտել ֆիզիկական ոլորտում ծառայելու որպես թասեր, ուր մենք՝ Տիրակալներս, կարող ենք լցնել մեր Լույսն ու էներգիան:

Դուք գիտեք, որ երբ ֆիզիկական աշխարհում ի հայտ է գալիս թաս, որը մենք կարող ենք լցնել Մեր Լույսով, ապա մենք դա անում ենք միշտ:

Սակայն ձեր ֆիզիկական աշխարհին բնորոշ է անկանխատեսելիություն ու երկակիություն: Այդ պատճառով մեզ համար շատ դժվար է կանխատեսումներ անել նույնիսկ մի քանի օրվա համար: Բայց և այնպես ես եկել եմ և իրավասու եմ հայտարարելու, որ այդ սեմինարը կանցնի իմ անձնական ղեկավարությամբ և իմ անձնական խնամակալությամբ, որն արդեն իսկ ցուցաբերում եմ: Դուք կարող եք զարմանալ, որ Շիվան՝ մի աստվածություն, որը պաշտվում է Հնդկաստանում, հովանավորում է մի սեմինար, որը տեղի է ունենալու Ռուսաստանում՝ մի երկրում, որտեղ հինդուիզմը չէ այն կրոնը, որն օրինականացված է:

Սակայն ես պետք է ձեզ ասեմ, որ մենք չենք կարող մեր գործերը հարմարեցնել այն կրոնական կոնկրետ իրադրության հետ, որը գոյություն ունի այս կամ այն երկրում: Մեր բոլոր միջոցառումների անցկացման ժամանակ մենք նախ և առաջ առաջնորդվում ենք Երկնքի պահանջներով: Եվ տվյալ դեպքում ես Ռուսաստան կգամ իմ դեսպանորդ Տատյանայի միջոցով: Կգամ որոշակի նպատակով, որի մասին հիմա կխոսեմ:

Ես մտադիր եմ տալ իմ օրհնանքը սեմինարի բոլոր այն մասնակիցների երրորդ աչքի չակրաներին, ովքեր իրենց համար այդ օրհնանքն անհրաժեշտ կհամարեն: Ի՞նչ օրհնանքի մասին է խոսքս, և ի՞նչու եմ մտադրվել այդ օրհնանքը տալ Ռուսաստանում՝ ռուս դեսպանորդի միջոցով:

Բանն այն է, որ իրավիճակն է այպես թելադրում: Դուք գիտեք, որ մենք գործում ենք այն անձի միջոցով, ով պատրաստ է մեզ ընդունելու: Եվ քանի որ Ռուսաստանն է այն երկիրը, որն օթևան է տվել մեր դեսպանորդին, ապա մենք հենց Ռուսաստանում կտանք սույն օրհնանքը, որը

հնարավորություն է տալիս արագացնել զանազանման շնորհի՝ աստվածային տեսունակության շնորհի, դրսևորումը:

Հենց որ ձեր նվաճումներին համապատասխան դուք ձեռք կրերեք այդ շնորհը, այլևս կույր կատվաձագերի պես դեսուդեն չեք ընկնի, չեք վազի մի քարոզչից դեպի մյուսը, մի եկեղեցուց դեպի մյուսը: Դուք ձեռք կրերեք զանազանելու կարողություն և կկարողանաք յուրաքանչյուր եկեղեցում, յուրաքանչյուր կրոնական կազմակերպությունում տեսնել ու տարբերել ճիշտը կեղծից:

Քանզի այդպիսի՝ն է ժամանակի պահանջը: Մենք կգործենք յուրաքանչյուրի միջոցով, ով պատրաստ է դրան, ով ունակ է իր գիտակցությամբ բարձրանալու նոր մակարդակի վրա: Կգործենք նրանց միջոցով, ովքեր ունակ են դեն նետելու հին կրոններին բնորոշ անպետք ու իրենց դարն ապրած դոգմաները և ճանաչելու գառան մորթով գայլերին այն բազմաթիվ նոր քարոզիչների շարքերում, որոնք բազմացել են, ինչպես սնկերն անձրևից հետո:

Միակ ճանապարհը, որը մենք ընտրել ենք, և որը միակ հնարավորն է ներկա փուլում, դա անմիջական կապի հաստատումն է բոլոր նրանց հետ, ովքեր պատրաստ են դրան:

Իմացեք, որ դուք մուտք եք գործում զարգացման նոր մակարդակ: Իսկ այդ մակարդակի վրա նուրբ աշխարհի հետ հաղորդակցությունը դառնում է բնական և ավելի ու ավելի հեշտ հասանելի: Որևէ բարդ բան չկա նուրբ աշխարհի հետ կապ ստեղծելու մեջ: Բայց բարդությունն, ինչպես միշտ, ձեր գիտակցության մեջ է: Եվ եթե ձեր գիտակցության մեջ դուք ճիշտ չեք ընկալում ձեզ տրված կապը, ձեր գիտակցության մեջ ոչ ճիշտ գնահատական եք տալիս այդ կապին, ապա փոխանակ աստվածային նվաճման հասնելու՝ դուք ձեզ հոշոտման եք հանձնում այն ուժերին, որոնք բնակվում են նուրբ աշխարհում և նախընտրել են չենթարկվել այս տիեզերքի Աստծո Օրենքին:

Ուստի և զանազանման շնորհը ձեզ անհրաժեշտ է, ինչպես երբեք: Եվ այդ շնորհի հետ մեկտեղ դուք պետք է գիտեիք ստանաք այն մասին, թե ինչպես պետք է ձեզ պահեք Էվոյուցիոն զարգացման այս փուլում, ինչին պետք է ձգտեք և ինչպիսի սկզբունքներով առաջնորդվեք:

Մենք կարող ենք բավական երկար թվարկել այս կամ այն կրոնական ուսուցչի կամ կրոնական ուղղությունների թերությունները: Բայց դրանով մենք միայն կուսումնասիրենք, թե ինչպես չպետք է վարվել և ինչպես չպետք է պահել իրեն: Մենք ընտրել ենք այլ ճանապարհ: Մենք տալիս ենք ճշմարիտ կերպեր և տալիս ենք ճշմարիտ ուղղություն: Եվ, ինչպես միշտ, ձեր ազատ կամքով ինքներդ պետք է ընտրեք, թե ո՞ր ուղով ընթանաք:

Դու՛ք եք ընտրություն կատարողն ու որոշում կայացնողը:

Մեր գործն է՝ առաջարկել ճշմարիտ օրինակ և ցույց տալ ճշմարիտ ուղղություն:

Ըստ այդմ, ես սպասում եմ նրանց, ովքեր որոշել են իմ ղեկավարությամբ ձեռնադրում անցնել: Եվ ես սպասում եմ բոլոր նրանց, ովքեր ցանկանում են հանդիպել ինձ հետ սեմինարի ընթացքում, որին ես ցուցաբերում եմ իմ խնամակալությունը:

Ես ձեզնից օգնություն եմ հայցում: Այն դեպքում, եթե ինչ-ինչ կարմայական հանգամանքների պատճառով դուք հնարավորություն չունեք մասնակցելու Վեհապետների այս միջոցառմանը, բայց ամբողջ հոգով ու սրտով ցանկանում եք օժանդակել մեր պլանների իրականացմանը, ապա այսպիսի կոչ հղեք. «Շիվա՛, արի և ավերի՛ր ողջ ընդդիմությունն ու վերացրու՛ բոլոր խոչընդոտները, որոնք առկա են 2006 թվականի մարտի 24-ից 26-ը Մոսկվայում կայանալիք սեմինարի ճանապարհին»:

Ամեն օր երեք անգամ կրկնեք այդ կոչը մինչև սեմինարի ավարտը:

Ես կլսեմ ձեր կոչերը և կճանաչեմ այն նվիրյալ սրտերին, որոնք իրենց գիտակցությամբ հասել են նոր մակարդակի, բայց կարմայական պատճառներով չեն կարողանում պոկվել իրենց կաշկանդող արտաքին հանգամանքներից: Իսկ երբ ճանաչեմ ձեզ, այնժամ կկարողանամ օգնել, որ ազատվեք ձեր կարմայական բեռի գոնե մի մասից:

*ԵՄ ԵՄ Շիվան... Ձեզ հետ եղա այսօր:
Մինչ հանդիպում՝ սեմինարի ընթացքում...*

Ուղերձների երրորդ շրջան (մարտ – ապրիլ, 2006 թ.)

Տեր Ծիվա
13 մարտի, 2006 թ.

Օգտվեք Երկնքի օգնությունից և մի անտեսեք այն

ԵՍ ԵՄ Ծիվան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից եկածը:

Իրավիճակն այնպիսին է, որ ես եկա հերթական ուղերձը տալու, որը հնարավորություն կտա ձեզ պարզաբանել իրավիճակը և ինքներդ ձեզ համար պարզել այն կողմնորոշիչները, որոնք պետք է ընտրեք՝ կյանքում դրանցով առաջնորդվելու համար:

Հենց որ ավարտվեց թելադրությունների նախորդ շրջանը, մենք թեթևացած շունչ քաշեցինք, որ մեզ հաջողվեց իրականացնել մեր մտահղացումը՝ մարմնավորման մեջ գտնվող հաղորդչի միջոցով այնպիսի տեղեկատվություն փոխանցել մարդկությանը, որի կարիքը նա ունի:

Սակայն հետո մենք բախվեցինք մեր գործողությունների նկատմամբ ցուցաբերվող բոլորովին անկանխատեսելի դիմադրության: Եվ այդ դիմադրությունն անցնում էր մարմնավորման մեջ գտնվող շատ մարդկանց մտքերով, մինչդեռ նրանցից շատերն իրենց համարում էին մեր լուսակիրները: Այդ պատճառով ես եկա ձեզ կրկին հավաստիացնելու, որ մենք կշարունակենք տալ մեր ուղերձները, ինչպիսի ջանքեր էլ որ դա խլի մեզնից: Եվ դա մենք կանենք մեր այն պլաններին ու մեր ժամկետներին համապատասխան, որոնք մոտենում են՝ ըստ տիեզերական հնարավորության ու անհրաժեշտության:

Ուստի այսօր եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ բացատրեմ, որ ինչպես է Երկիր մոլորակի վրա իրավիճակը դասավորվի, մենք՝ Համբարձյալ Դասերս, աշխատանք կտանենք Երկրի մարդկության հետ և կշարունակենք ձեռնարկել մեր փորձերը երկրացիների գիտակցությունը փոխելու ուղղությամբ:

Թվում է, թե մեր ուղերձներում շատ քիչ տեղեկատվություն է պարունակվում, սակայն ամեն անգամ մենք չենք դադարում զարմանալ, թե ինչպես են գտնվում մարդիկ, ովքեր պատրաստ են մեր առաջին իսկ կանչով արձագանքել մեր բոլոր առաջարկություններին ու դիտողություններին և անել այն գործերը, որոնք այժմ անհրաժեշտ են:

Դուք գիտեք, որ ամենաառաջին գործերից մեկը, որ կանգնած է մարդկության առջև, դա գիտակցության փոփոխությունն է: Եվ ըստ այդմ՝ լավ է այն ամենը, ինչը նպաստում է երկրացիների գիտակցության փոփոխությանը: Իհարկե, մենք նկատի ունենք գիտակցության այն փոփոխությունը, որը մենք ցանկանում ենք դրսևորված տեսնել ձեր օկտավայում, ոչ թե գիտակցության այն փոփոխությունը, որը դուք կարծում եք, թե պետք է տեղի ունենա: Ըստ այդմ՝ գովելի են տրված թելադրություններում պարունակվող գիտելիքների տարածման բոլոր եղանակները, ինչպես և գովելի են տեղեկատվությունը մարդկանց հասցնելու տարբեր եղանակները՝ ներառյալ մասնավոր հանդիպումները, ուսուցողական դասընթացները, սեմինարները, այնպիսի դպրոցների ստեղծումը, որտեղ ծնողներին ու երեխաներին կուսուցանվեն կարմայի օրենքի հիմունքները և Աստծո Օրենքի վրա հիմնված վարվելակերպի հիմունքները:

Ամբողջ այն ճշմարիտը, որն Աստծուց է, ձեր օժանդակության կարիքն ունի, որպեսզի անի ու ընդարձակվի:

Ըստ այդմ՝ այն դեպքում, երբ դուք զարմանում եք, որ ձեր շուրջն ամեն ինչ այնպես չի երևում, իչպես կուզենայիք, մենք ասում ենք. «Ավելի՛ լավ: Դուք ունեք այն, ինչի վրա գործադրեք ձեր ջանքերը, ձեր ունակություններն ու տաղանդը»:

Հայացք նետեք ձեր շուրջը և ուշադիր վերլուծեք, թե ձեր կարծիքով փոփոխության ենթակա բաների մեջ ի՞նչն է, որ դուք ինքներդ կարող եք փոխել՝ հիմնվելով ձեր հնարավորությունների և ունակությունների վրա:

Ես կուզենայի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնել այն թելադրությունը, որը տվել եմ անցյալ տարվա նոյեմբերի 27-ին: Հենց որ ձեր մտքերն ուղորդեք պետք եղած ուղղությամբ և ձեր գլխում ձևավորված մտապատկերները լցնեք Աստծո էներգիայով, ես հնարավորություն կստանամ օգնելու ձեզ և լրացնելու ձեր մտապատկերներն իմ էներգիայով:

Գոյություն ունի աստվածային հնարավորություն, որը տրվում է մոլորակին նրա համար որոշակի պահի: Եվ այդ հնարավորությունն այժմ տրվում է մեր դեսպանորդի միջոցով: Երբեմն ձեզնից ոչինչ չի պահանջվում, բացի նրանից, որ ճանաչեք մեր դեսպանորդին: Եվ, հենց որ դուք նրան ընդունում եք որպես Հիերարխիայի դեսպանորդի, ինքնաբերաբար կանգնում եք Հիերարխիայի աստիճանի վրա: Եվ ամբողջ Հիերարխիան հնարավորություն է ստանում ձեզ օգնելու ձեր գործերում ու ձեր պլանների իրագործման հարցերում:

Ես կուզենայի կանգ առնել ևս մի կարևոր պահի վրա: Մեր դեսպանորդը մեկն է, որը պահպանում է մեր թրթռումները՝ կյանքի բոլոր իրավիճակներում պահպանելով Հիերարխիային իր նվիրվածությունը և Երկրի վրա կյանքի կոչելով Հիերարխիայի պլանները: Իսկ մարմնավորման մեջ գտնվողներին համար մեր դեսպանորդը հանդիսանում է ուսուցիչ՝ Գուրու: Դա նշանակում է, որ դուք պարտավոր եք հետևել այն ցուցումներին, որոնք ստանում եք Գուրուից՝ համարելով, որ այդ ցուցումները տալիս եմ անձամբ ես:

Ընդ որում, ձեզնից պահանջվում է գործի դնել կողմնորոշվելու ձեր ամբողջ ունակությունը, որպեսզի հասկանաք, թե որքանով պետք է վստահեք արտաքին Գուրուին և որքանով առաջնորդվեք այն ցուցումներով, որոնք ստանում եք ձեր սրտից՝ ձեր իսկ բարձրագույն մասից:

Գուրուի մասին ուսմունքը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի: Եվ ես կարծում եմ, որ մենք կկարողանանք այդ ուսմունքն այս կամ այն չափով մատուցել ձեզ: Քանզի շատ են այնպիսիները, որոնք իրենց գուրու են համարում կամ ներկայանում են որպես գուրու, բայց բոլոր նրանք, կամ համարյա բոլորը, չունեն ճշմարիտ Գուրուի գլխավոր հայտանիշը՝ ինքնագոհողության և ինքն իրեն ամբողջությամբ սպասավորության գոհասեղանին դնելու կարողությունը:

Ըստ այդմ՝ որքան էլ ձեր մարդկային գիտակցությունը խոչընդոտի հասկանալ Գուրուի պատմունճանի և Գուրու-սան հարաբերության իրական նշանակությունը, այնուամենայնիվ յուրաքանչյուր խոչընդոտ, որ ձեր մեջ կա, կարող է և պետք է ի չիք դարձվի ձեր անկեղծ մղման և Հիերարխիային ձեր նվիրվածության միջոցով:

Ամեն անգամ, երբ ձեզ անհրաժեշտ է կողմնորոշվել՝ ճշմարիտ է, թե՛ կեղծ այս կամ այն մարդը, ով ներկայանում է որպես Գուրու կամ մեր դեսպանորդը, խնդրում եմ դիմել ինձ, որ ձեզ օգնեմ:

Պարզապես ձեր ձեռքը վերցրեք իմ պատկերը կամ մոտեցեք արձանիկին և անկեղծորեն ինձնից օգնություն խնդրեք:

Հենց որ տեսնեմ ձեր անկեղծությունն ու նկրտումը, անպայման կօգնեմ ձեզ: Եվ դուք կստանաք զանազանելու այն ունակությունը, որի կարիքը դուք ունեք ձեր զարգացման այս փուլում:

Ըստ այդմ՝ օգտվե՛ք Երկնքի օգնությունից և մի՛ անտեսեք այն:

*ԵՍ ԵՄ Շիվան,
այսօր ձեզ հրաժեշտ եմ տալիս նոր հաղիպումների հույսով...*

Տեր Շիվա
15 մարտի, 2006 թ.

Մենք ձեզ կանչում ենք Գուրու-սան նոր տիպի հարաբերություններ հաստատելու

ԵՍ ԵՄ Շիվան, որ նորից ձեզ այցի եմ եկել, որպեսզի խոսեմ այն Ուղու մասին, որով ձեզ վիճակված է ընթանալ, եթե ընտրեք մեր դեսպանորդի միջոցով ուսուցանվող Ուղին:

Շատ ուղիներ ու ճանապարհներ կան ձեր մատերիական աշխարհում, և այդ ուղիների ու ճանապարհների մեծ մասը, ցավոք, ոչ մի տեղ չի տանում: Մարմնավորումից մարմնավորում դուք թափառում եք պատրանքի մեջ և չեք կարողանում գտնել ճշմարիտ Ուղին:

Եվ նույնիսկ այնժամ, երբ վերջապես ձեր Ուղու վրա հայտնաբերում եք Ճշմարտությունը, դուք սկսում եք կասկածել՝ Աստծու՞ց է արդյոք այն, ինչի հետ բախվել եք:

Եվ հաճախ լինում է այնպես, որ դուք ընտրում եք ճիշտ Ուղին ու արդեն ընթանում դրանով, բայց հոգևոր թուլության ինչ-որ պահի ենթարկվում եք մարմնական խելքի ազդեցությանը և սկսում կասկածել: Ձեր կասկածները ձեր անկատարության արդյունքն են: Այդ պատճառով, երբ ընտրում եք Ուղին, որով պետք է ընթանաք, կամ երբ սկսում եք կասկածել այն Ուղու վրա, որով ընթանում եք, դուք միշտ պետք է մտորեք այն մասին, թե որտեղից են ծագում ձեր կասկածները:

Հիմնավոր՝ են արդյոք ձեր կասկածները, թե՛ ուղղակի ձեր վախի ու անվստահության արդյունքն են:

Ձեզ անհրաժեշտ է մշտապես զանազանել ձեր ներքին հոգեվիճակները: Արդյոք գտնվում եք անիրական ուժերի ազդեցության տա՛կ, թե՛ խելամիտ վերլուծության եք ենթարկում այն Ուղին, որով ընթանում եք:

Եվ ամեն անգամ ձեր այդ ներքին աշխատանքում դուք ստիպված եք լինում առաջնորդվել ձեր ներհայեցողությամբ և սրտի ձայնով:

Ըստ այդմ, մենք չենք հոգնում ձեզ համար կրկնել. «Չարգացրե՛ք ձեր ներհայեցողությունը (ինտուիցիան – թ.), ձեր զանազանման կարողությունն ու ձեր կապն Աստծո իրական աշխարհի հետ»:

Ձեզ համար դժվար է դա անելը, որովհետև ամբողջովին խորասուզված եք պատրանքի մեջ: Այդ պատճառով մենք ուղարկում ենք մեր պատգամաբերներին, մեր սպասավորներին, որոնք ձեզ ցույց են տալիս Ուղին և օգնում կողմնորոշվելու կյանքի ծովում:

Սակայն դուք և միայն դու՛ք կարող եք ընտրել, թե ում հետևեք և ում հանձնարարականներով առաջնորդվեք:

Իրավիճակը բարդացնում է այն, որ որքան էլ նվիրված ու անկեղծ լինի մեր դեսպանորդը, նա մարդկային մարմնավորման մեջ է հայտնվել և, դրա հետ կապված, ստիպված է եղել իր վրա վերցնել համաշխարհային կարմայի մի մասը՝ վերցնել բեռնվածություն, որը նրան թույլ է տալիս մնալու մարմնավորման մեջ:

Տեսնելով մեր դեսպանորդների ոչ կատարյալ լինելը՝ դուք կարող եք տարակուսել, և ձեզ կպարուրեն լրացուցիչ կասկածանքներ:

Ուստի մենք ասում ենք, որ դուք չպետք է կուրորեն վստահեք այն մարդկանց, որոնք իրենք իրենց հռչակում են մեսիաններ, դեսպանորդներ, ուսուցիչներ: Ցանկացած իրադրության մեջ կա անկանխատեսելիության տարր, և նա, ով դեռ որոշ ժամանակ առաջ լրիվ իրավունքով մեր ներկայացուցիչն էր և կրում էր մեր պատմունքները, կարող է հանկարծ սխալվել և նույնիսկ դուրս ելնել Ուղուց: Այդ պատճառով հարկավոր է, որ դուք մանրագին դիտարկեք և վերլուծեք մեր դեսպանորդների ու պատգամաբերների բոլոր գործողությունները: Եվ նրանց արարքներում կարողանաք զանազանել ժամանակավոր վրիպումները, որոնք անխուսափելի են ձեր աշխարհում, այն ավելի լուրջ մեղքից, որը կապված է դավաճանության և Եղբայրության սկզբունքներից նահանջելու հետ:

Այս Ուսմունքը նոր է, և մենք այն համարձակվել ենք այժմ տալ մեր դեսպանորդի միջոցով այն հույսով, որ ձեզնից շատերը հասել են զարգացման այն մակարդակին, որը թույլ է տալիս ձեզ կատեգորիկ հետևությունների չդիմել՝ դրանց հիման վրա ընդհանրապես հրաժարվելով մեր դեսպանորդներին հետևելու ուղով ընթանալուց:

Ո՛չ, հիմա այն ժամանակը չէ, որ դուք կարողանաք ինքնուրույնաբար Ուղով ընթանալ և ինքներդ ընտրել Ուղին: Դուք չեք կարող յուր գնալ առանց մեր ներկայացուցիչների ու դեսպանորդների: Բայց դուք պետք է գիտակից ձևով վերաբերվեք ձեր ներքին համահնչունության ու տարբերակման չափանիշներին այն մարդկանց ընտրելիս, որոնց խորհուրդներին պատրաստվում եք հետևել կամ նրանց հանձնարարականներով առաջնորդվել:

Եվ եթե առաջ՝ նախկին ժամանակներում, ձեզնից պահանջվում էր անառարկելի հնազանդություն և Գուրուի ցուցումների խստագույն հետևում, ապա այժմ մենք ձեզ ասում ենք, որ նախ և առաջ դուք պետք է ականջալուր լինեք ձեր ներքին ձայնին ու ներհայեցողությանը, որից հետո նոր հետևեք ցանկացած արտաքին գուրուի ցուցումներին:

Այն մարդիկ, ովքեր պատրաստ չեն Գուրու-աշակերտ այսպիսի նոր հարաբերությանը, չեն կարողանա հետևել այս դեսպանորդի միջոցով տրվող մեր Ուսմունքին: Նրանք կարիք ունեն այլ՝ ավելի կոշտ, ցուցումների և պետք է հետևեն արտաքին դոգմաների ու կանոնների: Ըստ այդմ՝ մենք Ուսմունքը տալիս ենք, բայց և լիովին գիտակցում ենք, որ տարբեր մարդկային անհատներ

գտնվում են իրենց զարգացման տարբեր մակարդակների վրա, և, ինչ լավ է մեկի համար, մյուսի համար կարող է լինել անցանկալի ու ժամանակավրեպ:

Հանրահայտ է, որ եթե մարդը երկար ժամանակով մնացել է գետնախորշում և ցերեկվա լույսի երես չի տեսել, ապա ակնթարթորեն արևի լույսի դեմ դուրս գալուց նա կարող է լրիվ կուրանալ և անդառնալի վնաս հասցնել իր առողջությանը:

Երկիր մոլորակի վրա մարմնավորված մարդիկ ունեն տարբեր գիտակցության մակարդակներ, և այժմ մենք Ուսմունք ենք տալիս նրանց համար, ովքեր կարող են ընթանալ որպես առաջապահներ, նրանց համար, ովքեր առաջ են անցել իրենց եղբայրակիցներից և պատրաստ են Համբարձյալ Դասերի հետ անմիջական հարաբերություններ ունենալու՝ հիմնված համագործակցության ու փոխադարձ հարգանքի վրա: Սակայն, քանի դեռ դուք գտնվում եք մարմնավորման մեջ, ձեզ համար գլխավոր սկզբունք է հանդիսանում Համբարձյալ Դասերին ու մեր ներկայացուցիչներին անվերապահ ենթարկվելը:

Բայց նմանատիպ ենթարկման որոշում դուք ինքներդ եք կայացնում ձեր սրտում, և միշտ պատրաստ պետք է լինեք փոխելու ձեր որոշումը, եթե զգաք, որ հանգամանքները փոխվել են:

Ըստ այդմ՝ նոր ժամանակներին հատուկ Գուրու-սան հարաբերություններն ունեն այն տարբերությունը, որ դուք ավելի շուտ կունենաք ձեր Գուրուի հետ ստեղծագործական, փոխհարստացնող հարաբերություններ, քան այնպիսի հարաբերություններ, որոնք հիմնված են հարկադրանքի ու թելադրանքի վրա, ինչպես ընդունված էր մեր նախկին շատ կազմակերպություններում:

Այս հարաբերություններն ավելի համահունչ են ժամանակի ոգուն ու այն ընդհանուր դեմոկրատական ձևափոխություններին, որոնք աշխարհում տեղի են ունենում:

Նորից եմ կրկնում, որ ոչ բոլորն ունակ կլինեն ընդունելու և հաստատելու այս նոր հարաբերությունները, որովհետև ամեն մի թեթև ակնարկն իսկ, որ ուսուցիչը կարող է սխալվել, շատերի համար դառնում է ազդանշան, որ նրանք ընդհանրապես ականջ չդնեն իրենց Գուրուի կարծիքին:

Մենք ձեզ կանչում ենք Գուրու-սան նոր տիպի հարաբերություններ հաստատելու, որոնք հիմնված են անվերապահ սիրո, ճշմարիտ եղբայրության և համագործակցության վրա:

Եվ մենք հույս ունենք, որ կգտնվեն բավարար քանակությամբ անհատներ, որոնք պատրաստ կլինեն նման հարաբերություններին կամ արդեն իսկ հետևում են դրանց:

Ես ուրախ եղա այսօր ձեզ տալ այս կարևոր Ուսմունքը, որի կարիքն, անշուշտ, դուք ունեք:

ԵՍ ԵՄ Շիվան, ձեզ հետ եղա այսօր...

Տեր Մայտրեյա
10 ապրիլի, 2006 թ.

Ուսմունք աստվածային Երախտագիտության մասին

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկել՝ աստվածային գիտելիքների ոլորտից ձեզ խրատներ տալու համար:

Քաղցր են մեր հաղորդակցության թույլենքը, և շատ հազվադեպ կարելի է գտնել մեր պահանջներին համապատասխանող հաղորդիչ: Ուստի այն ամենը, ինչ ասվում է և դեռ պիտի ասվի, անանց ու անվերապահ գանձ է ձեզ համար՝ նման թանկարժեք մարգարիտի:

Մենք գալիս և մեկը մյուսի հետևից իմաստության մարգարիտներ ենք նվիրում ձեզ: Իսկ ինքներդ այդ մարգարիտները շարում եք մի հուլունքի վրա, որը հավաքում եք ձեր ողջ կյանքի ընթացքում:

Դա հիբրավի Գիտելիքի անգին հուլունք է, և դուք պետք է խնամքով վերաբերվեք դրան:

Իմ այս երկար նախաբանն այն բանի համար է, որ դուք մեկ անգամ ևս ստուգեք ձեր շարժառիթները և կարողանաք համալարվել աստվածային տոնայնության հետ: Մենք նկատում ենք, որ մեր սաներից շատերը, որոնք արդեն առույգորեն ընթանում էին Ձեռնադրումների Ուղով, ինչ-որ մի փուլում սկսում են կասկածներ ունենալ, և գայթակղությունները նրանց հանում են Ուղուց, այն ճշմարիտ Ուղուց, որը նրանք փնտրել են բազմաթիվ մարմնավորումների ընթացքում և վերջապես գտել:

Ո՞րն է նման իրավիճակի պատճառը. ինչու՞ է այդպես ստացվում...

Ես ձեզ կասեմ պատճառը: Դուք մշտապես Աստծո Սիրո և Էներգիայի քաղց ու կարիք եք զգում: Բայց հենց որ մեզնից Սիրո և Էներգիայի թեկուզ մի փոքրիկ չափաբաժին եք ստանում,

անմիջապես մոռանում եք ձեր այն անելանի ու անհույս վիճակների մասին, որոնցում գտնվում էիք նախքան մեր Ուսմունքը գտնելը:

Մարդկային գիտակցությունը շատ շարժուն է ու անկայուն: Եվ հատկանիշը, որը ձեր ներսում պետք է զարգացնեք առաջին հերթին՝ տրված Ուսմունքի համար Երախտագիտության զգացումն է: Պետք է Երախտագիտություն հայտնեք Երկնքին, Արարչին, Համբարձյալ Դասերին ու մեր դեսպանորդին:

Հատկապես Երախտագիտության զգացում պետք է ունենաք, քանի որ հենց այդ զգացումն է, որ ամենամաքուրն ու անխաթարն է մնացել ձեր ֆիզիկական օկտավայում:

Ամենաբարձր Սիրո զգացումն է, սակայն ձեր օկտավայում շատ դժվար է այդ զգացման մաքրությանը հասնելը: Քանզի ոչ մի զգացում այնքան աղավաղումների չի ենթարկվել, որքան Սիրո զգացումը:

Ուստի ես ձեզ խորհուրդ եմ տալիս, որ ձեր ներսում աճեցնեք Ուսմունք և Գիտելիքներ ստանալու դիմաց Երախտագետ լինելու զգացումը:

Առանց Երախտագիտության զգացում ունենալու դուք չեք կարող առաջ ընթանալ մեր Ուղով: Թող ձեզ չվրդովի այն, որ ձեզ հարկ կլինի հրապարակայնորեն հայտնելու ձեր երախտապարտությունն ու երախտագիտությունը: Շատ ու շատ եվրոպացիներ չունեն Աստծուն, Վեհապետներին, Բարձրագույնին ծառայելու մասին այնպիսի հստակ պատկերացումներ, ինչպիսիք ի ծնե հատուկ են Հնդկաստանի ու Տիբեթի ժողովուրդներին: Ուստի դուք պետք է ձեր ներսում վերականգնեք Աստծուն երկրպագելու ավանդույթները:

Դուք պետք է վերստին սովորեք Աստծուն երկրպագել ձեր ներսում և ձեզնից դուրս:

Աստծո հետ ձեր փոխհարաբերություններում դուք պետք է գտնեք համակշռություն ու հավասարակշռություն: Եթե դուք ընդունեք ձեզ տրվող ամեն ինչը, բայց Երախտագիտության զգացում չունենաք ու չարտահայտեք այն, ապա կամավոր կերպով ձեզ կգրկեք հետագա առաջխաղացումից: Երկինքը ձեզ այլևս ոչինչ չի կարողանա տալ, եթե ձեր ստացած էներգիան չհավասարակշռեք ձեր այն էներգիայի հետ, որն առաքում եք դեպի մեր օկտավաները: Մեր օկտավաներում դրամը չի գործում, բայց կա դրա համարժեքը՝ Աստծո էներգիան: Ուստի այնժամ, երբ մեզնից գիտելիք եք ստանում, պետք է մեզ առաքեք դրան համարժեք Աստծո էներգիա, որը կարող է թափանցել մեր օկտավաները: Ձեզ հայտնի է, որ ոչ մի անկատար էներգիա չի կարող մուտք գործել Լույսի օկտավաները: Ուստի և ես ձեզ հանձնարարում եմ, որ սկսեք ձեր ներսում աճեցնել Երախտագիտության զգացումը:

Դուք կարող եք Մեր զգալ և առաքել մեզ ձեր Մերը: Բայց, ցավոք, մարդկանցից շատերին իրենց սրտերի սիրո այնպիսի ցածր չափորոշիչներ են բնորոշ, որ այդպիսի Մերը չի կարող թափանցել մեր օկտավաները:

Սակայն մշտապես դուք պետք է հետևեք, որ ձեր Երախտագիտությունն ու երկրպագումը չվերածվեն մյուս ծայրահեղությանը, երբ դուք արտաքնապես երկրպագում եք, բայց ձեր սրտերում չեք ունենում ճշմարիտ Երախտագիտության զգացում: Ցանկացած արտաքին երկրպագություն պետք է սոսկ լրացնի ձեր ներքին զգացումների դրսևորումը: Բայց շատ մարդիկ, ընդհակառակը, համարում են, թե բավական է միայն, որ իրենց սրտում Երախտագիտության զգացում ունենան՝ առանց արտաքնապես այն արտահայտելու: Ուշադիր վերլուծե՛ք նման դեպքում ձեր վիճակն ու ձեր շարժառիթները, քանի որ այդպիսի դեպքերում դուք պարզապես առաջնորդվում եք ձեր գոռոզությամբ:

Դուք ֆիզիկական աշխարհում եք ապրում, ուստի և պարտավոր եք ձեր Երախտագիտությունն արտահայտել ֆիզիկական մակարդակով:

Մի՛ մոռացեք, որ ձեզ վրա մեր դեսպանորդի մասին հոգալու պատասխանատվություն է դրված:

Այդ հինավուրց ճշմարտությունն իսպառ ջնջված է ներկայիս սերնդի հիշողությունից: Բոլոր այն ժամանակներում, երբ մարկանց մտքերում գերակշռել է Աստվածայնությունը, բարգավաճել են այն մարդիկ, որոնք իրենց սրտերում լսել են Աստծո ձայնը և կարողացել Բանն Աստծո հասցնել մարդկանց:

Մեր ավետաբերների, մարգարեների ու դեսպանորդների նկատմամբ մարդկանց վերաբերմունքից կարելի է դատել, թե որքան են անկում ապրել հանրության բարքերը, և թե որքան է տվյալ հանրությունը հեռու գտնվում աստվածային իդեալից:

Արդ, մի՛ երկնչեք հովանավորչություն և հոգաժություն ցուցաբերել մեր դեսպանորդի նկատմամբ: Միշտ հիշեք, որ մեր դեսպանորդը Լույսի Հիերարխիայի ներկայացուցիչն է Երկրում, և ձեր պարտականությունների մեջ է մտնում, որ պատիվներ տաք ու հոգաք մեր ընտրյալի համար:

Երբ առանց մտավոր վերապահումների ու խոտորումների ձեր գիտակցությամբ կարողանաք ընկալել այս հասարակ ճշմարտությունը, այնժամ մենք կկարողանանք ձեզ հետ այլ կերպ խոսել և ձեզ հաղորդել ավելի խոր գիտելիքներ և ուսմունքներ:

Իսկ հիմա, որքան էլ մենք ջանանք, դուք չեք կարող յուրացնել մեր էներգիաները: Դուք նախ պետք է վերականգնեք Աստծո էներգիայի հակադարձ հոսքը, որը հասնում է մեր օկտավային: Այդ դեպքում մենք կկարողանանք ավելին տալ:

Այս Օրենքը վիճարկման ենթակա չէ, և այն պետք է ի կատար ածվի:

Միայն հենց ինքներդ եք արգելափակում Աստծո էներգիայի հոսքը: Իսկ այդ հոսքն արգելափակողը ձեր սնապարծությունն է, տրվածի համար փոխհատուցելու ձեր չկամությունը՝ անկախ այն բանից, թե ձեր Երախտագիտությունը նյութակա՞ն ձևով է արտահայտվում, թե՞ ձեր զգացմունքներով:

Ձեր ժամանակների համար իդեալական կլինի ներքին և արտաքին Երախտագիտության համակցումը: Եվ միայն ինքներդ պետք է հետևեք ու կարգավորեք դրանց հարաբերակցությունը:

Ես ձեզ այսօր կարևոր Ուսմունք տվեցի: Այդ Ուսմունքը շատ հայտնի ու տարածված է Արևելքում: Բայց դրա հետ Արևմուտքի մարդիկ գործնականում ծանոթ չեն: Սակայն առանց այդ Ուսմունքը կյանքի կոչելու՝ Արևմուտքը չի կարող լիարժեքորեն հասու դառնալ Արևելքի իմաստությանը:

ԵՄ ԵՄ Մայտրեյան, այսօր եղա ձեզ հետ

Տեր Մայտրեյա

11 ապրիլի, 2006 թ.

Դուք ձեր գիտակցության մեջ պետք է պատրաստ լինեք մշտական փոփոխությունների

ԵՄ ԵՄ Մայտրեյան՝ նորից ձեզ այցի եկածը:

Այսօրվանից սկսած և մոտակա ժամանակում ձեր կյանքերում ինչ-որ զարմանալի բաներ կկատարվեն: Դուք այլևս չեք կարողանա ապրել այն օրենքներին ու կարծրատիպերին համապատասխան, որոնք նախկինում բնորոշ էին ձեզ: Ֆիզիկական աշխարհի օրենքները փոխվում են և արդեն իսկ փոխվել են: Այդ պատճառով ձեզնից նրանց, ովքեր կարծում են, թե մոլորակի վրա ոչինչ չի փոխվում և ոչինչ տեղի չի ունենում, կվիճակվի ամենամոտակա ժամանակներում համոզվել հակառակի մեջ: Մոլորակն ընթանում է դեպի փոփոխություններ, և մոլորակը փոխվում է Աստծո պլաններին համապատասխան:

Եվ որքան շատ ձեզնից որոշները կառչեն հինից ու իր դարն ապրածից, այնքան նրանց համար ցավագին կլինեն բարեփոխումների գործընթացները:

Դուք ձեր գիտակցությամբ պետք է պատրաստ լինեք մշտական փոփոխությունների և մշտական բարեփոխումների: Չկա ոչինչ, որ մոտակա ժամանակներում փոփոխության չենթարկվի: Եվ ամենից առաջ վիթխարի փոփոխություն կկրի ձեր գիտակցությունը: Եվ եթե դուք անկողմնակալ կերպով նայեք ձեր կյանքին, ապա զարմանքով կնկատեք, որ արդեն շատ բան է նրանում փոխվել, և այդ փոփոխությունը շարունակվում է:

Աշխարհում տեղի ունեցող փոփոխություններն այնքան նշանակալից են, որ եթե նախկինում դրանց համար կապահանջվեին հարյուրավոր և նույնիսկ հազարավոր տարիներ, ապա այժմ այդ փոփոխությունների գործընթացն ընդգրկում է մի քանի տարի: Եվ այդ գործընթացն ընթանում է անկախ այն մարդկանց կամքից, ովքեր ուզում են շարունակել իրենց գոյությունը հին շրջանակների մեջ, լինեն դրանք կրոնական շրջանակներ, հասարակության բարոյական նորմեր, թե մարդկային գործունեության այլ ոլորտներ:

Ուստի մենք գալիս ենք, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ տեղեկացնենք այն բարեփոխումների մասին, որոնք տեղի են ունենում, և որոնք արդեն տեղի են ունեցել:

Այս դեսպանորդի միջոցով մեր թելադրությունները մենք սկսել ենք տալ ընդամենը մեկ տարուց մի փոքր ավելի առաջ: Եվ եթե ձեզնից նրանք, ովքեր ուշադրությամբ ընթերցել ու վերընթերցել են այդ թելադրությունները, նայեն իրենց ու իրենց շրջապատի կյանքին, ապա բարեփոխումները կնկատեն: Դեռ ավելին, կնկատեն, որ մեր թելադրությունների շատ դրույթներ, որոնք ընդամենը մեկ տարի առաջ համարվում էին կարևոր և ճիշտ ժամանակին տրված, այժմ արդեն հնացել են:

Երկիր մոլորակի մարդկության զարգացման ամբողջ պատմության ընթացքում դեռևս երբեք մարդկանց գիտակցությունը նման տեմպերով չէր փոխվել:

Հասկանալի է նաև այն ուժերի դիմադրությունը, որոնք պաշտպանում են պատրանքը: Նրանք գործում են յուրաքանչյուրի միջոցով, ով անկատարություններ ունի և իր ներսում ընտրություն է կատարել ընկնելու այդ ուժերի ազդեցության տակ: Այդ պատճառով մենք կոչ ենք անում մեկ անգամ ևս ուշադրությամբ վերլուծել ձեր գործողություններն ու մղումները, ինչպես նաև ուրիշ մարդկանց գործողությունների նկատմամբ ձեր արձագանքը:

Բանն այն է, որ նույն ձևով արագացել է նաև կարմայի վերադարձը: Եթե նախկինում դուք կարող էիք բախվել ձեր ոչ ճիշտ գործողությունների հետևանքների հետ միայն հաջորդ մարմնավորման ընթացքում և տրտնջալ, թե ինչու եք ծնվել այդքան անարդար պայմաններում, ապա այժմ դուք հնարավորություն եք ստացել բախվելու ձեր ոչ ճիշտ ընտրության հետևանքի հետ մի տարվա ընթացքում, որոշ դեպքերում էլ՝ տառացիորեն հաջորդ օրը:

Հետևաբար, դուք կարող եք հետևել, թե ինչպես է ազդում պատճառահետևանքային կապի օրենքը ձեր և ձեր հարազատների վրա, ինչպես նաև այն մարդկանց վրա, որոնք ապրում են ձեր շրջապատում: Միայն թե պետք է ձեզ հետ տեղի ունեցածը դիտեք ճիշտ տեսանկյունով և անկողմնակալ:

Յուրաքանչյուրն այժմ հնարավորություն ունի գործնականորեն ծանոթանալու Կարմայի Օրենքին: Եվ այլևս հնարավոր չէ Աստծուն մեղադրել այն բանում, որ որոշ անհատներ իրենց չեն պահում այնպես, ինչպես հարկն է, բայց նրանց «ոչինչ չի պատահում»: Ուշադիր դիտե՛ք, թե ինչ է կատարվում նրանց հետ, ովքեր անտեսում են Աստծո Օրենքը և իրենք իրենց երևակայում ողջ տիեզերքի տերը:

Տիեզերքում գործում է Օրենք, և տիեզերքում կա որոշակի կարգ ու կանոն: Եվ ես ուրախ եմ ձեզ հայտնել, որ, ըստ տիեզերական ժամկետների, մոտակա ժամանակներում Երկիր մոլորակի վրա կարգ ու կանոն կհաստատվի: Աստծո Օրենքը մարդկանց կյանքում ավելի ու ավելի շատ կդրսևորվի: Եվ այդ Օրենքին չհետևելը կդառնա ավելի ու ավելի դժվար:

Դա նման կլինի այն բանին, որ դուք ձգտեք լողալ հորդահոս լեռնային գետի հոսանքին հակառակ: Որքան էլ ջանաք, միևնույնն է, հոսանքը ձեզ իր հետ կտանի: Անօգուտ է Աստծո դեմ պայքարելը: Դուք պարտավոր եք ենթարկվել համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքին:

Մենք ուշադիր հսկում ենք, որ մոլորակի թրթռանքի բարձրացումը չուղեկցվի չափազանց մեծ համադետներով: Եվ դա առայժմ մեզ հաջողվում է: Բայց բարեփոխումների գործընթացն ավելի հաջող կընթանա, եթե ձեր գիտակցության մեջ դուք հեռացնեիք այն բոլոր խոչընդոտները, որոնք խանգարում են ձեր փոխվելուն և բարեփոխումների ուղով ձեր առաջընթացին:

Ամեն անգամ, երբ մենք գալիս ու հիշեցնում ենք ձեզ այն փոփոխությունների ու բարեփոխումների մասին, որոնց ենթարկվում է մոլորակը, միշտ ի հայտ են գալիս որոշակի թվով հոռետեսներ, որոնք պնդում են, թե իրենց կյանքում ոչինչ չի փոխվում, և իրենք ոչինչ չեն նկատում: Դե ինչ, մենք միայն ուրախ ենք, որ բարեփոխումներն ընթանում են այնքան սահուն ու մեղմ, որ ձեզնից շատերը դրանք չեն էլ նկատում կամ ձևացնում են, թե չեն նկատում:

Իսկ այժմ ես կուզենայի ձեզ ասել ևս մի կարևոր բանի մասին, որը վերաբերում է Ձեռնադրումների Ուղով ձեր ընթանալուն: Ուզեք թե չուզեք՝ ձեր անձնական առաջընթացը հնարավոր է միայն այն դեպքում, եթե Համբարձյալ Դասերի առջև ձեզ վրա որոշակի պարտավորություններ վերցնեք և ընդունեք այն Օրենքները, որոնք գործում են Տիեզերքում:

Կա մի Օրենք, որն այնքան էլ հայտնի չէ մոլորակում, բայց այդ Օրենքը գործում է նույնքան անխափան, որքան Կարմայի Օրենքը: Ըստ այդ Օրենքի՝ Ուղու որոշակի հատված անցնելուց հետո Հոգևոր Ուղով ձեր հետագա առաջխաղացումը հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ դուք, կամավոր կերպով ենթարկվելով այս տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքին, կանգնում եք Հիերարխիայի աստիճանի վրա:

Հենց որ դուք կանգնում եք Հիերարխիայի աստիճանի վրա, բոլոր Համբարձյալ Դասերը ձեզ ցուցաբերում են առանձնահատուկ հովանավորչություն և օգնություն: Ընդ որում, ձեզնից միայն մի բան է պահանջվում՝ լինել Օրենքին ենթարկվող, հնազանդ, լսող և կարգապահ աշակերտ:

Համաձայնե՛ք, որ երբ դուք ընդունվում եք որևէ ուսումնական հաստատություն, ստիպված եք լինում ենթարկվել այն կանոններին, որոնք ընդունված են այդ հաստատությունում: Ուստի հարկ չկա կարծել, թե հնարավոր է տիրապետել Աստծո գիտությանը՝ չենթարկվելով որոշակի կանոնների և չհետևելով Օրենքին:

Ես այսօր լքում եմ ձեզ և կրկին ժամանակ եմ տալիս մտորելու, թե որքանով է հաստատ աշակերտելու Ուղին ընտրելու ձեր նկրտումը:

Մտորեք նաև այն մասին, թե որքան շատ բան ի վիճակի կլինեք գոհաբերելու ձեր կյանքում, որպեսզի ձեզ մատչելի դառնա Աստծո Իմաստությունը:

ԵՄ ԵՄ Մայրերյան, մինչ հանդիպում՝ Ձեռնադրումների Ուղու վրա

Սանատ Կումարա
15 ապրիլի, 2006 թ.

Տվեք ձեր շրջապատի մարդկանց ձեր Լույսը, ձեր Մերը, ձեր օժանդակությունը

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ նորից ձեզ այցի եկածը: Երբ ավելի քան մեկ տարի առաջ մենք եկանք, որպեսզի թելադրություններ տանք մեր դեսպանորդի միջոցով, այդ իրադարձությունն աննկատ մնաց մարդկության մեծամասնության համար: Մենք էլ առանձնապես չէինք ձգտում ուշադրություն գրավել այդ իրադարձության վրա: Գլխավոր և առավել կարևոր իրադարձությունները միշտ էլ տեղի են ունենում խաղաղ ու աննկատ:

Մենք գալիս ենք, որպեսզի խոսենք Երկրի մարդկության հետ, և ամեն անգամվա հետ մեր գալուստը ձեր գիտակցության համար դառնում է ավելի ու ավելի բնական, ինչպես արևածագն ու մայրամուտը:

Մենք գալիս ենք, և մեր գալուստը փոխվում է իրադրությունը Երկիր մոլորակի վրա: Որովհետև ամեն անգամվա հետ ավելի ու ավելի մեծ քանակի անհատներ են կարողանում առնչվել այս թելադրություններին և երանություն ստանալ նրանցում պարունակվող Աստծո էներգիայի նեկտարից:

Այժմ ես եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ այն բարեփոխումների մասին, որոնք պետք է տեղի ունենան ավելի ու ավելի վճռականությամբ, այն բարեփոխումների ու փոփոխությունների մասին, որոնց մասին արդեն հիշատակել է Տեր Մայտրեյան՝ իր 2006 թ.-ի ապրիլի 11-ի թելադրության մեջ:

Եվ ինչպես նա, այնպես էլ ես չեմ թաքցնի, որ այս թելադրություններն ընթերցող ձեզնից յուրաքանչյուրից է կախված, թե ինչպիսի տեմպերով կընթանան այդ բարեփոխումները: Որովհետև ձեր ֆիզիկական աշխարհի հետ կապված ամեն ինչ՝ այդ աշխարհի ցանկացած փոփոխություն, տեղի է ունենում միայն ձեր գիտակցության փոփոխության շնորհիվ:

Եվ, ինչպես միշտ, ես կտամ որոշ խրատներ և ոչ մեծ Ուսմունք, որոնք կնպաստեն ձեր գիտակցության փոփոխությանը:

Ես ամեն անգամ գալիս եմ մեծ հուզմունքով և սարսուռ եմ զգում իմ սրտում, երբ հնարավորություն եմ ունենում խոսելու ձեզ հետ, որ այժմ գտնվում եք մարմնավորման մեջ:

Չավակնե՛րս, դուք չեք գիտակցում և չեք էլ կարող ամբողջությամբ գիտակցել այն ամբողջ պատասխանատվությունը, որ դրված է ձեր ուսերին:

Բոլորովին վերջերս՝ նախքան մարմնավորվելը, ձեզնից շատերը մեծ պատրաստություն են անցել և ուսանել եթերային մենաստաններում: Այս բարդ ժամանակներում մարմնավորվելու համար ընտրվել են լավագույն հոգիները:

Ուստի ցավալի է դիտել, թե ինչպես այդ հոգիները մարմնավորվելով թույլ են տվել պատրանքին այնքան տիրել իրենց գիտակցությանը, որ մոռացել են ոչ միայն այն, թե ինչի համար են մարմնավորվել, այլև ընդհանրապես մոռացել են Աստծո մասին և կորցրել են իրենց սրտերում ոչ միայն աստվածային հատկանիշները, այլ նաև բարոյական կողմնորոշիչները:

Ցավալի է դա տեսնելը, բայց առավել ցավալի է դիտել, թե ինչպես են այդ հոգիներն անցում կատարում և հայտնվում նուրբ ոլորտում: Սրտիցդ արյուն է կաթում, երբ տեսնում ես այդ հոգիների տառապանքները: Երբ քողն ընկնում է նրանց աչքերից, և նրանց առջև բացվում է այն պլանը, որի համար նրանք մարմնավորվել էին և չեն իրականացրել, ապա այդպիսի հոգիների ստացած ցնցումը համեմատելի է այն ամենաահավոր ցնցման հետ, որը կարող է ապրել հոգին՝ լինելով մարմնավորման մեջ: Եվ այդ ցնցումը՝ որպես ծանր բեռ, նստում է հոգու վրա: Պահանջվում են մեծ քանակի հրեշտակների ջանքերը, որոնք կոչված են ապաքինելու հոգիները մարմնավորումների միջև եղած հատվածում, որպեսզի վերականգնեն այդպիսի հոգուն և նրան ունակ դարձնեն նորից Երկրի վրա մարմնավորվելու:

Եթե դուք վերաբերվեիք իրար այն սիրո և հոգածության թեկուզ մեկ հազարերորդական մասով, որը Լույսի եթերային օկտավաներում ձեր հոգին ստանում է մարմնավորումների միջև ընկած հատվածում, ապա աշխարհը շատ կարճ ժամանակահատվածում անճանաչելիորեն կփոխվեր:

Այն, ինչ ձեզնից պահանջվում է, ձեր վերաբերմունքը փոխելն է շրջապատի մարդկանց նկատմամբ:

Եթե դուք հին հոգի եք, որ մարմնավորվել եք ձեզնից ավելի քիչ զարգացած եղբայրներին ու քույրերին լուսավորելու նպատակով, ապա հիշեցե՛ք ձեր պարտքի և մարմնավորումից առաջ

վերցրած ձեր պատրավորությունների մասին: Անձամբ ձեզ համար որքան էլ որ դժվար լինի, մի' մտածեք ձեր մասին, այլ հոգացեք նրանց մասին, ովքեր ձեր կողքին են և ձեր խնամքի կարիքն ունեն:

Երբեմն մի քնքուշ հայացքը կամ բարությամբ ասված մի խոսքը բավարար է լինում, որ հոգին վաղվա օրվա նկատմամբ հույս ու վստահություն ձեռք բերի և կյանքի իմաստ:

Հոգացե՛ք այն միլիոնավոր հոգիների մասին, որոնք ձեր օգնության կարիքն ունեն: Ոչ բոլոր հոգիներն են ունակ հասկանալու այն Ուսմունքը, որը մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով: Եվ ոչ բոլոր մարդիկ են ունակ վերցնելու գիրքը և կարդալու: Բայց դուք կարող եք օգնել և օժանդակել մարդկանց ոչ այն դեպքում, երբ սկսեք գոռով ստիպել նրանց կարդալու մեր Ուսմունքը: Դուք կարող եք օգնել մարդկանց՝ պարզապես նրանց կողքին գտնվելով, օժանդակելով նրանց խոսքով, գործով, պարզապես հայացքով:

Թող ձեզ չվրդովի այն, որ մարդիկ չեն գնահատում ձեր ջանքերը:

Պարզապես տվե՛ք շրջապատի մարդկանց ձեր Լույսը, ձեր Սերը, ձեր օժանդակությունը: Եվ ձեր արտաքին գիտակցությանը թույլ մի' տվեք որևէ մեկին գնահատական տալու. «Ահա այս մարդու վրա Աստված արդեն խաչ է քաշել, իսկ ահա այս մեկն իրենից ներկայացնում է անգիտության ու անկատարության գագաթ»:

Մենք շատ անգամ ենք տվել այս Ուսմունքը, և ահա ես այն նորից եմ կրկնում: Շատ ու շատ լուսավոր հոգիներ նախքան մարմնավորվելը ծանրաբեռնում են իրենց այնքան մեծ կարմայական պարտավորություններով և իրենց վրա են վերցնում այնքան մեծ անկատարություններ, որ Երկրի վրա եղած ներկայիս պայմաններում արդեն ունակ չեն հաղթահարելու այդ անկատարություններն ու վերամշակելու իրենց վրա վերցրած կարման:

Ըստ այդմ՝ երբեք ձեզ թույլ մի' տվեք դատապարտել: Հիշեք, որ մեղադրելով դուք իջեցնում եք ձեր թրթիռները և անընդունակ եք դառնում ճիշտ ընտրություն անելու և ճիշտ գնահատական տալու:

Բարձր եղեք շաղակրատանքից, բամբասանքից. թույլ մի' տվեք, որ բացասական էներգիաները տիրեն ձեզ:

Ներեցե՛ք բոլորին, որքան էլ անարդարացի թվա այն ամենը, ինչ մարդիկ անում են ձեր նկատմամբ: Սահման չունի ներումը, սահման չունեն հնազանդությունն ու կարեկցանքը:

Աստվածային որակներից ոչ մեկը չի կարող սահմանափակ լինել:

Ձեր աշխարհն այնքան շատ կարիք ունի աստվածային թրթռանքի և աստվածային որակների, որ կարող եք ամբողջ օրն առաքել ձեր Կատարելությունը, Բարին, Սերը, և աշխարհը դրա համար երախտապարտ կլինի ձեզ:

Բայց այդ երախտագիտությունն անպայման չէ, որ արտահայտվի ֆիզիկական ոլորտում: Ընդհակառակը, դուք կարող եք դեմ առնել լրիվ անըմբռնողության և նույնիսկ թշնամանքի: Որովհետև աստվածային թրթռանքի և աստվածային որակների ցանկացած դրսևորում անմիջապես բախվում է հակառակ որակի դրսևորումների հետ, որոնք ձգտում են խլացնել բարձր թրթռումները և հետաձգել այն պահը, երբ Երկրի վրա այլևս չեն լինի անկատարություններ:

Ձեզնից պահանջվում է աստվածային որակներ դրսևորել՝ անկախ ընդդիմադիր կողմից եկող ցանկացած արձագանքից: Ոչ մի դեպքում մի' ենթարկվեք այդ ուժերի սադրանքներին: Դուք շատ բանի կարող եք հասնել, բայց պետք է լինեք դիմացկուն ու անվեհեր:

Հենց դրանով է կայանում այս պահի բարդությունը, և դա՛ է հենց այն օգնությունը, որը մենք ակնկալում ենք ստանալ ձեզնից:

Ընթացիկ պահի համար բնորոշ է այն, որ յուրաքանչյուր մարդու կյանքում կլինեն պահեր, երբ նա հստակ կտեսնի, թե ինչ ուժեր են գործում իր միջոցով և իր շուրջ: Եվ դուք ձեր ներսում գիտակցված ձևով ընտրություն կկատարեք, թե ո՛ր ուժերի օգտին հանդես գաք և ու՛ր ուղորդեք ձեր էներգիան:

Թող ձեզ չվրդովեն ժամանակավոր սխալները: Մի' տանջեք ձեզ դրանց համար: Արեցի՛ք սխալը, գիտակցեցի՛ք այն, որոշեցեք այլևս չկրկնել այն և շարունակեք առաջ գնալ:

Թույլ մի' տվեք ձեր գիտակցությանը չափազանց երկար կանգ առնել սխալների վրա: Մի' մոռացեք, որ ուր կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան:

Ամենաճիշտը կլինի, որ ապրեք միայն այն պահով, որում այժմ գտնվում եք: Անցյալն ու ապագան չափազանց շատ տեղ չպետք է զբաղեցնեն ձեր գիտակցության մեջ:

Դուք ապրում եք ներկա պահով և այդ պահին մշտապես կենսախնդրեն ընդունում եք կյանքի բոլոր դժվարություններն ու անհաջողությունները, մշտապես պահպանում եք ձեր ուժերի նկատմամբ վստահություն, որ դուք կարող եք ամեն ինչ հաղթահարել և հաղթող դուրս գալ ցանկացած իրադրությունից:

Հիշեք, որ ամենամեծ հաղթանակն այն է, որը դուք տոնում եք ձեր իսկ անիրական մասի նկատմամբ, իսկ մնացածը միայն պատրանք է, որն արժանի չէ ձեր ուշադրությանը:

Երբ դուք դադարում եք ձեր ուշադրությամբ սնել պատրանքը, այն դադարում է գոյություն ունենալուց:

Ես ձեզ կարևոր Ուսմունք տվեցի: Եվ կարծում եմ, որ դուք մոտակա ժամանակում կօգտվեք այդ Ուսմունքից և կգնահատեք նրա ներքին գործողությունը:

ԵՄ ԵՄ Սանատ Կունարան՝ միշտ ձեզ հետ

Պաշտելի Ալֆա
16 ապրիլի, 2006 թ.

Իրականությանը վերադառնալու գործընթացը, պատրանքի հետ հավաքման գործընթացը կարագացվի առավելագույն չափով

ԵՄ ԵՄ Ալֆան՝ նորից ձեզ այցի եկածը: Մեր վերջին հանդիպումից հետո երկրային չափանիշներով բավականին երկար ժամանակ է անցել: Սակայն ինձ համար, եթե նայելու լինենք Իմ Իրականության դիրքերից, անցել են հաշված ժամեր: Կարծես այն երեկ եղած լիներ:

Այսպիսով, ես նորից եկել եմ ձեզ մոտ, Երկիր մոլորակի մարդիկ: Եվ ես պետք է ձեզ ասեմ այն փոփոխությունների մասին, որոնք մեր հանդիպումից հետո անցած ժամանակի ընթացքում տեղի են ունեցել մոլորակի վրա: Ձեզ թվում է, թե ոչինչ չի փոխվել: Սակայն ես համոզված եմ, որ կան մարդիկ, ովքեր զգում են Երկրում տեղի ունեցող փոփոխությունները: Դրանք քիչ են, բայց կան: Եվ դա ուրախալի է: Դրանք մեզ ուրախացնում և վստահություն են ներշնչում: Քանզի եթե մենք հնարավորություն ունենք խոսելու մեկի միջոցով, ապա նշանակում է, որ վաղը հնարավորություն կունենանք խոսելու շատերի միջոցով: Իսկ եթե մի քանի մարդիկ տեսնում են բարեփոխումները և զգում իրենց արտաքին գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ապա դա միայն խոսում է այն մասին, որ վաղը շատերը կկարողանան զգալ բարեփոխումները:

Սկզբում մենք հասկանալի ու մատչելի ենք լինում շատ քիչ թվով մարդկանց: Մենք տալիս ենք մեր գիտելիքներն ու մեր տեղեկատվությունը: Դա նմանվում է հեղեղի, որը սկզբում իրենից ներկայացնում է դեպի ներքև գլորվող մի քար: Աստիճանաբար այդ շարժման մեջ են ներգրավվում ավելի ու ավելի մեծ քանակությամբ քարեր: Եվ գալիս է պահը, երբ հեղեղն այնքան հուժկու է դառնում, որ կարող է իր ճանապարհին սրբել ամեն ինչ: Այժմ դուք գտնվում եք այդ հեղեղի շարժման ամենասկզբում:

Կանցնի ևս որոշ ժամանակ, և այդ հեղեղն ուժ կհավաքի այնքան, որ ունակ կդառնա իր ճանապարհից սրբելու այն ամբողջ հիմք, որը դիմադրություն է ցույց տալիս բարեփոխումներին:

Նոր փոփոխություններն արդեն մտել են մարդկանց գիտակցության մեջ: Եվ անխուսափելիորեն տարածվում են Երկիր մոլորակի վրա:

Այժմ ես եկել եմ, որ ձեզ հաղորդակից դարձնեմ այն գաղտնիքին, որը ձեզ համար նախկինում մատչելի չէր, բայց հիմա մատչելի է դառնում՝ գիտակցության նոր մակարդակի վրա ձեր անցնելուն զուգընթաց:

Ես ձեզ իրագրել կդարձնեմ այն բանին, որը թաքցված էր, բայց այժմ դառնում է բացահայտ: Եվ այսպես, որոշ ժամանակ առաջ մենք մեր թելադրություններով հայտնել էինք, որ Երկիր մոլորակի համար վրա է հասնում Էվոլյուցիոն զարգացման նոր փուլ: Նախորդ ուղերձներից դուք նաև գիտեք, որ երկրային չափանիշներով այդ փուլը պետք է ընդգրկեր շատ տարիներ՝ միլիոնավոր տարիներ: Եվ ահա ես եկել եմ, որպեսզի ձեզ ուրախացնեմ: Որոշում է ընդունվել, որ անցումային շրջանը տևի շատ ավելի քիչ ժամանակ, քան նախապես պլանավորված էր: Եվ այդ անցումային փուլը կդրսևորվի այնպիսի մեծ տեմպերով, որ ներկայումս Երկրի վրա ապրող յուրաքանչյուր մարդ կկարողանա դիտել այդ փոփոխություններն ու զարմանալ դրանցով:

Որոշում է ընդունվել, որ Իրականությանը վերադառնալու գործընթացը, պատրանքի հետ հավաքման գործընթացը, կարագացվի առավելագույն չափով: Տիեզերքի ամենաբարձրագույն ու զարգացած քաղաքակրթությունները մասնակցում են ֆիզիկական ոլորտի թրթռանքի

մակարդակի բարձրացման գործընթացին, և դրա մեջ ներառված է նաև Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտը: Ձեզ համար այս տեղեկատվությունը, երևի, թվում է ոչ մի նշանակություն և գործնական կիրառություն չունեցող մի բան:

Սակայն այս տեղեկատվությունը ձեզ անհրաժեշտ է, և այն տրվում է:

Դուք հասունանում եք և ունակ եք դառնում ընկալելու բարձր օկտավաներին պատկանող ավելի նուրբ թրթիռներ: Ահա ձեր այդ հասունացման ժամկետը կարճացվել է: Դուք կկարողանաք հասկանալ ավելի շատ բան և կկարողանաք տեսնել ավելի շատ բան:

Արդ, մի՛ սահմանափակեք ձեր գիտակցությունը, թույլ տվեք ձեզ ամենաբարձր ֆանտազիաներ, և դրանք անպայման իրականություն կդառնան: Մնացեք մանուկների նման, երագեք ու երևակայեք, բայց թույլ մի՛ տվեք ձեզ, որ նմանվեք այն տարեցներին, որոնք այժմ ապրում են Երկիր մոլորակի վրա:

Դուք հասունանում եք ներքուստ, և ձեր գիտակցությունը բաց է մնում Բարձրագույն Իրականության ընկալման համար: Եվ միայն այնժամ, երբ կդառնաք մանուկների պես, հասուն կլինեք նոր Իրականության համար:

Ցավոք, այն, ինչ դուք անվանում եք հասունանալ, նույնը չէ, ինչ որ Աստծո Իրականության մեջ հասուն դառնալն է: Բայց դուք ձեզ հասուն եք համարում այն ժամանակ, երբ ձեզ վրա եք վերցնում ֆիզիկական աշխարհի սահմանափակումները, որոնք էլ սկսում են կառավարել ձեզ:

Իսկ երբ հասունանում եք Բարձրագույն Իրականության մեջ, ապա, ընդհակառակը, դուք ձերբագաղտվում եք ձեր թանձր աշխարհի սահմանափակումներից: Իսկ ձեր թանձր աշխարհում ձեր գիտակցության մեջ շարունակում եք մնալ մանուկների նման:

Ուստի մաղթում եմ, որ դուք մանուկներ մնաք ձեր աշխարհում և Աստծո Աշխարհում հնարավորինս արագ հասնեք ձեր հասունության այն վիճակին, որը թույլ կտա ձեզ դառնալ մեր համագործակիցները, մեր ընկերները, մեր եղբայրներն ու քույրերը:

Թույլ տվեք մեկ անգամ ևս արտահայտել իմ Մերը ձեր նկատմամբ: Ես մեծ հույսեր ունեմ, որ այս դժվարին ժամանակներում իմ Մերը կօգնի ձեզ և ձեր մոլորակին:

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր նկատմամբ Միշուլ

Տեր Սուրիա
17 ապրիլի, 2006 թ.

Ուսմունք Աստծո հրաշքների մասին

ԵՍ ԵՄ Սուրիան՝ այս օրով Մեծ Կենտրոնական Արևից ձեզ այցի եկածը:

Ես երջանիկ եմ ողջունելու ձեզ, Երկրի զավակներ, և ուրախ եմ ձեզ հետ կրկին հանդիպելուս առիթով:

Այժմ մենք մի փոքր կկտրվենք երկրային խնդիրներից և տարածությամբ ու ժամանակով կտեղափոխվենք ինձ մոտ՝ տիեզերքի այն վայրը, որտեղ ես սիրում եմ բնակվել:

Հազի՛վ թե կարողանաք պատկերացնել այն երանությունն ու անդորրը, որ բնորոշ է այդ վայրին: Ձեզ երբեմն պարուրում է թախիծը, վիատությունը, կծկվում է ձեր սիրտը, և դուք չեք կարողանում բացատրել ձեր այդ վիճակի դրդապատճառը: Որովհետև այն փնտրում եք ձեզնից դուրս: Այնինչ այդ պատճառը հենց ձեր ներսում է գտնվում: Քանզի այդ պահին ձեր հոգին թախծում է այն աշխարհի համար, որն ինքը լքել է միլիոնավոր տարիներ առաջ, իսկ այդ աշխարհի մասին հիշողությունները պահպանված են ձեր սրտերում:

Երանության գագաթ, անսահման հանգիստ և համապարփակ երջանկություն. ահա այն վիճակը, որի մեջ ես գտնվում եմ, և որում գտնվում էիք դուք՝ նախքան թանձր աշխարհի մեջ իջնելը: Եվ եթե դուք թեկուզ մի քանի թուրքով կարողանայիք կտրվել ձեզ շրջապատող առօրեական ունայնությունից և խորասուզվեիք այդ երանության մեջ, ապա, հայտնի չէ՝ կկարողանայի՞ք արդյոք ձեր մեջ ուժ գտնել նորից ձեր աշխարհ վերադառնալու համար: Ուստի նմանատիպ վիճակները ձեզ մատչելի են դառնում ձեր հոգևոր զարգացման միայն որոշակի փուլում: Եվ բոլորդ ունե՛ք այդ վիճակին հասնելու հնարավորություն: Եթե ոչ այս կյանքում, ապա հաջորդում, բայց ձեզնից յուրաքանչյուրն անպայման կապրի այդ երանությունն ու ոչնչի հետ չհամեմատվող անդորրը: Կարծես վերադարձել եք հայրական տուն և այլևս ոչ մի տեղ չունեք գնալու:

Այժմ եկել է ժամանակը, երբ դուք պետք է հիշեք այն վայրը, որտեղից դուրս են եկել ձեր հոգիները: Դա ձեզ անհրաժեշտ է, որպեսզի բռնեք Տունդարձի Ուղին՝ դեպի նախասկզբնական անդորրն ու երանությունը:

Ես եկել եմ, որպեսզի ևս մեկ անգամ ձեզ հիշեցնեմ այն վայրի մասին, որտեղից դուք եք եկել և ուր պետք է վերադառնաք: Ձեզ համար դժվար է ինձ ունկնդրել այն ունայնության մեջ, որում այժմ գտնվում եք, ամենօրյա ունայնության ու հոգսերի մեջ:

Բայց ես գալիս ու կտրում եմ ձեզ ձեր ունայնությունից ու ձեր հոգսերից: Իսկ դուք կարող եք քշել ինձ, ինչպես ձանձրացնող ճանճի: Դուք, իհարկե, կարող եք դա անել. դա ձեր իրավունքն է: Սակայն ես համոզված եմ, որ ձեզնից շատերը հնարավորություն կգտնեն ականջալուր լինելու իմ խոսքերին և այն ամենին, ինչ կա այդ խոսքերի հետևում:

Ես եկել եմ՝ հաղթահարելով հսկայական հեռավորություն: Իսկ այդ հեռավորությունը մատերիական տիեզերքին չէ, որ պատկանում է: Դա այն ուղին է, որ գտնվում է ձեր ներսում և բաժանում է ձեզ Բարձրագույն Իրականությունից: Եվ ճիշտ այնպես, ինչպես ձեզ համար դժվար է մարմնավորված վիճակում հասկանալ, թե ինչ Իրականության մասին եմ ես խոսում, ինձ համար էլ դժվար է իջնել մինչև այն մակարդակը, որում դուք կարող եք ինձ լսել, թեկուզ և հատուկ պատրաստված դեսպանորդի միջոցով, ով մարմնավորված է ձեր շարքերում:

Մենք մուտք ենք գործում նրա տաճարը և հնարավորություն ենք ձեռք բերում տալու մեր ուղերձները: Եվ սա մի հրաշք է, որը տառացիորեն ձեր աչքի առաջ է տեղի ունենում, քանի որ դուք հնարավորություն եք ունենում ծանոթանալու մեր ուղերձներին հենց այն նույն օրվա ընթացքում, որում մենք դրանք տալիս ենք: Աստծո ամեն մի հրաշք տեղի է ունենում այնքան բնականորեն, որ դուք նույնիսկ չեք գիտակցում, որ դա հրաշք է: Եվ հենց դա է այն հրաշքների տարբերիչ առանձնահատկությունը, որոնք Աստծուց են: Ցանկացած հրաշք, որը ծնվել է մարդկային գիտակցությամբ, չի կարող տեղի ունենալ այդքան բնական և նշանակալից ջանքեր է պահանջում իր նախապատրաստման համար: Ձեզ հայտնի են շատ ուսմունքներ, որոնք ուսուցանում են, թե ինչպես հրաշքներ գործել: Եվ ձեզնից շատերը ձգտում են գործել այդ հրաշքները, կոչվի դա ձեր լեզվով մոգություն, թե էլի ուրիշ ինչ-որ բան: Բայց, եթե դուք հանդիպում եք Աստծո հրաշքի, ապա առաջին բանը, որ աչքի է զարնում, այն է, որ այդ հրաշքը տեղի է ունենում այնքան բնականորեն, որ միայն որոշ ժամանակ անցնելուց հետո եք դուք սկսում գիտակցել, որ բախվել էիք ինչ-որ արտասովոր բանի, որի վրա արժեր, որ բևեռեիք ձեր ուշադրությանը: Մինչդեռ հրաշքն արդեն տեղի է ունեցել: Եվ Աստծո այդ հրաշքը տեղի է ունեցել առանց ձեր գիտակցության մասնակցության:

Արդ, եթե դուք ցանկություն եք ունենում ձեր կյանքում հանդիպելու հրաշքի, ապա ձեր այդ ցանկության մեջ ոչ մի դատապարտելի բան չկա: Եվ եթե դուք ձեր շուրջը հրաշքներ եք փնտրում, ապա գտնում եք դրանք: Սակայն հրաշքները, ինչպես և ձեր աշխարհում ձեզ շրջապատող ամեն ինչը, ունեն երկակի բնույթ: Կան Սուրբ Հոգու կողմից դրսևորված հրաշքներ, և դրանք իսկապես Տիրոջ հրաշքներն են: Բայց կան և մարդկային գիտակցության մեջ ու դրա օգնությամբ դրսևորված հրաշքներ: Դրանք մարդու գործունեության արգասիք են, այլ ոչ թե Աստծո: Ըստ այդմ, սովորեք զանազանել և տարբերակում մտցնել: Ձեր հրաշքների ձգտելու մեջ ոչ մի վատ բան չկա: Բայց եթե ձեր այդ ձգտմանը չափազանց շատ եք ժամանակ հատկացնում, ապա ձեզ շրջապատող պատրանքից ստանում եք հրաշքների նմանակումներ, որոնց հետ Աստված և աստվածային ուժերը ոչ մի ընդհանուր բան չունեն: Այդ պատճառով պետք է ձգտեք դեպի Աստված՝ դեպի Աստծո ճշմարտությունը, այլ ոչ թե պարզապես մտածեք հրաշքների մասին: Քանզի միայն այն ժամանակ եք ձեր կյանքում դուք սկսում բախվել հրաշքների, երբ ձեր գիտակցությամբ մոտենում եք Աստծո ճշմարտությանը:

Հավատացե՛ք ինձ, Աստված առանց ձեր խնդրանքի հարկ եղած ժամանակ ցույց կտա իր հրաշքները: Քանզի դեպի Աստծո ճշմարտություն ձեր ընթացքն անխուսափելիորեն կհանգեցնի նրան, որ դուք կստանա՛ք հրաշքներ. բավական է միայն, որ ուշադիր նայեք ձեր շուրջը:

Հրաշքների տեսքով դրսևորված Աստծո ճշմարտության նշաններն անխուսափելի են նրանց ճանապարհին, ովքեր անկեղծորեն ձգտում են դեպի Աստված, այլ ոչ թե փնտրում են էժանագին հրաշքներ, որոնք մարդկանց արածն են:

Այժմ ես ձեզ մենակ կթողնեմ հրաշքների և Աստծո Աշխարհի մասին ձեր մտորումներում: Աստծո հրաշքը միշտ պատրաստ է ի հայտ գալու, բայց միայն մանկան պես մարդու՝ աչքերը կարող են տեսնել այդ հրաշքը: Թողե՛ք ձեր հասուն տարիքի խաղերն ու հոգսերը: Ինքներդ ձեզ թույլ տվեք օրվա մեջ գոնե մի քանի րոպե վերադառնալ ձեր մանկությանը, երբ դուք սպասում էիք հրաշքի, և Աստված ձեզ ցույց էր տալիս այդ հրաշքը՝ արևածագի ու մայրամուտի, ձյան, անձրևի, ծիածանի տեսքով:

Բոլոր այդ հրաշքները դուք տեսնում էիք ձեր մանկական գիտակցությամբ և ընդունում էիք որպես Աստծո հրաշքներ: Ինչու՞ այժմ չեք տեսնում այդ հրաշքները: Ի՞նչն է խանգարում, որ ձեր շուրջը տեսնեք այդ հրաշքները:

Ընդունում եմ, որ դուք շատ հոգսեր ունեք, և ձեր կյանքում շատ պարտականություններ են դրված ձեր ուսերին: Սակայն եթե դուք անկողմնակալ ձևով նայեք ձեր կյանքին, ապա կհասկանաք, որ ձեզ համար չկա ավելի կարևոր բան, քան ձեր կյանքում Աստծո հրաշքներ տեսնելը: Եվ եթե ձեզ շրջապատող կյանքում դուք մշտապես տեսնեք Աստծո հրաշքներ, ապա ձեր կյանքն էական փոփոխությունների կկրի: Եվ ինքներդ կգարմանաք, թե որքան շատ ժամանակ ձեռք բերեցիք, որպեսզի դիտեք Աստծո հրաշքները:

Ես հաղթահարեցի հսկայական տարածություն, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ դուք պետք է սպասեք հրաշքների. և այնժամ հրաշքներն ի հայտ կգան ձեր շուրջը:

Արժե՛ր անշուտ, որ հաղթահարեի դեպի ձեր սրտերը բերող Ուղին, որպեսզի ձեզ հիշեցնեմ այս մասին...

ԵՍ ԵՄ Սուրիան՝ ներկա ձեր սրտերի մեջ

Հառաժանա Բուդդա
18 ապրիլի, 2006 թ.

Ձեր ապագայի և ամբողջ մոլորակի ապագայի բանալին ձեր գիտակցությունն է

ԵՍ ԵՄ Հառաժանա Բուդդան՝ այս օրով ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկել, որպեսզի որոշակի գիտելիքներ և ուսուցում տամ: Ինչպես միշտ, ես օգտվում եմ այս անոթից և մեր դեսպանորդ Տատյանայի կողմից մեզ ընձեռնած հնարավորությունից:

Դեռևս որոշ ժամանակ առաջ մենք հնարավորություն չունեինք այսպես ազատ ողջ աշխարհին տալու մեր Ուսմունքը: Նաև ընդամենը երկու-երեք տարի առաջ ոչ ոք չէր էլ ենթադրում, որ Ուսմունքը հնարավոր կլինի տալ Ռուսաստանի տարածքում: Տեսեք, թե ինչպես ամեն ինչ փոխվեց:

Մենք տալիս ենք մեր Ուսմունքը, և դրա հետ միաժամանակ փոխվում է իրադրությունը Ռուսաստանում և ամբողջ Երկիր մոլորակում:

Դուք տեսնում եք, նաև հնարավորություն ունեք հետևելու, թե ինչպես աննշան թվացող իրադարձությունը կարող է ազդել ամբողջ մոլորակի վրա: Հնարավոր է, որ գլխի չեք ընկնում համեմատություններ կատարել ձեր կյանքում, և նրանում կատարվող փոփոխությունները չեք կապում հենց այն իրողության հետ, որ մենք հնարավորություն ենք ստացել տալու մեր թելադրությունները: Դե ինչ, մենք չենք պահանջում, որ դուք ընդհանրապես ինչ-որ համեմատություններ անեք: Պարզապես հետևեք այն փոփոխություններին, որոնք տեղի են ունենում ձեր և ձեզ շրջապատող մարդկանց կյանքում:

Կանցնի որոշ ժամանակ, և դուք կսովորեք այդ փոփոխությունների հետևում նշմարել Համբարձյալ Դասերի ազդեցությունը: Մենք գործում ենք բացահայտ, և մեր գործողություններում չկա որևէ բան, որ պարզաբանած չլինեք մեր թելադրություններով: Ամբողջ մեխանիզմը, որի միջոցով մենք ազդեցություն ենք գործում Երկիր մոլորակի և նրանում տեղի ունեցող փոփոխությունների վրա, բացահայտ կերպով պարզաբանվում են մեր կողմից տրվող թելադրություններում և Ուսմունքում:

Ամեն ինչ տեղի է ունենում շատ պարզ ձևով: Դուք կարդում եք թելադրությունները, հաճախում եք այն սեմինարներին, որոնք կազմակերպվում են մեր դեսպանորդի և այն մարդկանց օգնությամբ, ովքեր ցանկանում են ծառայել մեզ: Դուք ստանում եք էներգիա, գիտելիքներ և փոխում եք ձեր գիտակցությունը, ձեր մտածողությունը, ձեր թրթիռները:

Դուք ազդեցություն եք գործում յուրաքանչյուր մարդու վրա, ում հետ հանդիպում եք փողոցում, աշխատանքի վայրում: Այդ եղանակով, սույն տարվա ընթացքում մենք կարողացանք մեր ազդեցության գոտում ընդգրկել միլիոնավոր մարդկանց: Քանի որ արդեն մենք կարող ենք վստահաբար ասել, որ գիտակցության փոփոխման գործընթացը բավականաչափ հաջող է ընթանում, ապա որոշում է ընդունվել, որ Երկիր մոլորակի փոփոխությունների գործընթացն առավելագույնս արագացվի: Բհարկե, դրանից չի հետևում, որ մոտակա ժամանակներում ձեզ սպառնում են մեծաքանակ արհավիրքներ ու տարերային աղետներ: Ընդհակառակը, եթե գիտակցության փոփոխման գործընթացն այսուհետ ևս ընթանա նույնքան հաջող ու նույնպիսի վճռական տեմպերով, ապա դուք կխուսափեք բավականին թվով արհավիրքներից ու աղետներից:

Սակայն մենք չենք կարող երաշխավորել, որ արհավիրքներ ու աղետներ չեն լինի, քանի որ մեզ հակադիր ուժերը, որոնք պատրաստ են ցանկացած քայլի, որպեսզի արգելակեն բարեփոխումների

գործընթացը, կարող են ակտիվ գործողություններ ձեռնարկել՝ դրանց մեջ ներգրավելով բազմաթիվ մարդկանց:

Ըստ այդմ՝ նախքան ձեր աշխարհում ինչ-որ գործունեություն ծավալելը, մանրագնին կերպով կշռադատեք ձեր իսկ շարժառիթները, նաև փորձեք հասկանալ, թե ինչ շարժառիթներով են առաջնորդվում այն մարդիկ, ովքեր ձեզ առաջարկում են մասնակցել այս կամ այն միջոցառմանը՝ ներառյալ աղոթքային գործառնություններին: Աղոթքի էներգիան ևս հնարավոր է հմտորեն օգտագործել աստվածային նպատակներին տրամագծորեն հակառակ նպատակներով:

Ներկա պահին ձեր գիտակցության մակարդակը թույլ է տալիս, որ ձեզ Ուսմունք տանք աղոթքի էներգիայի աղավաղման վերաբերյալ: Բոլոր ժամանակներում եղել են մարդիկ, ովքեր աղոթքի էներգիան առաքել են դեպի Լույսի Բարձրագույն օկտավաները, բայց և եղել են այնպիսիները, որոնք աղոթքի էներգիան օգտագործել են իրենց շահադիտական նպատակներով: Այդ դեպքում նրանք Աստծո Կամքին համապատասխան չեն գործել: Դեռ ավելին, այն մարդիկ, որոնց նրանք ընդգրկել են իրենց գործունեության մեջ, նույնպես կարմա են ստեղծել:

Ձեր աշխարհում բոլոր գործողությունները, բոլոր մտքերն ու զգացմունքները կարմա են ստեղծում: Դուք չեք կարող չգործել, և հետևաբար չեք կարող կարմա չստեղծել: Սակայն կարման լինում է և՛ բացասական, և՛ դրական: Բացասական կարման երկարաձգում է Երկրի վրա լինելու ձեր բոլորաշրջանը, և դուք ստիպված եք լինում կրկին ու կրկին վերամարմնավորվել:

Դրական կամ բարի կարման, ընդհակառակը, հանգեցնում է Երկիր մոլորակի վրա լինելու ձեր բոլորաշրջանի կրճատմանը:

Յուրաքանչյուր մարդու ճակատագրի և Երկիր մոլորակի գործերի վիճակի վրա ազդեցություն է գործում դրական և բացասական կարմաների հարաբերակցությունը, որը մարդկության կողմից ձեռք է բերվել անցյալում և ձեռք է բերվում այժմ՝ ներկայի յուրաքանչյուր պահին:

Ահա թե ինչու մենք չենք հոգնում կրկնելուց, որ ձեզնից յուրաքանչյուրից են կախված Երկիր մոլորակի ապագան և այն բարեփոխումների գործընթացը, որոնք տեղի են ունենում մոլորակի վրա:

Որքան էլ ձեզ համար դժվար լինի, դուք մշտապես պետք է հիշեք այն մասին, որ ձեր գոյությունը չի ավարտվում ձեր ֆիզիկական մարմնի մահով: Օ՛, դուք անհամեմատ ավելի մեծ եք, քան ձեր ֆիզիկական մարմինները: Ձեզնից յուրաքանչյուրն Աստված դառնալու կարողություն ունի: Եվ ժամանակի ընթացքում դուք բոլորդ Աստվածներ կդառնաք. բացի նրանցից, ովքեր կամովին կիրաժարվեն դրանից և կցանկանան իրենք իրենց նույնացնել ֆիզիկական մարմնի հետ: Արդեն գիտեք, որ այն, ինչ ձեզ շրջապատում է, ոչ այլ ինչ է, եթե ոչ վիթխարի պատրանք: Եվ վերջին հաշվով ձեր խնդիրն այն է, որ ձեր գիտակցությամբ վեր լինեք այդ պատրանքից: Երբ դուք վեր եք կանգնում պատրանքից և հրաժարվում ֆիզիկական աշխարհի կապվածություններից, ձեր զարգացումը շարունակում եք Բարձրագույն աշխարհներում: Իսկ երբ ձեզ նույնացնում եք ֆիզիկական աշխարհի հետ, ապա ինքներդ ձեզ կամավոր կերպով դատապարտում եք մահվան, քանի որ ֆիզիկական աշխարհը ժամանակի ընթացքում կդադարի գոյություն ունենալուց, իսկ Բարձրագույն աշխարհներ դուք չեք կարողանա անցնել, որովհետև ձեր գիտակցության մեջ չեք ընդունում այդ Բարձրագույն աշխարհները:

Ըստ այդմ՝ ձեր ապագայի և ամբողջ մոլորակի ապագայի բանալին հենց ձեր գիտակցությունն է և պատրաստակամության այն աստիճանը, որով պատրաստ եք փոխել ձեր գիտակցությունը:

Մոլորակին տրվող բարենպաստ հնարավորությունը պետք է ընդունվի ձեր գիտակցությամբ: Պետք է գիտակցեք, որ առկա է աստվածային հնարավորություն, և ձեր կյանքերում պետք է ձգտեք ընդունել ու կենսագործել այդ հնարավորությունը: Այնժամ աստվածային հնարավորությունը կյանքի կկոչվի ձեր ֆիզիկական աշխարհում:

Ես ձեզ համար նկարագրեցի այն մեխանիզմը, որով մենք ազդում ենք ֆիզիկական աշխարհի վրա և այն ենթարկում փոփոխության: Դա փոփոխությունների ամենաբնական եղանակն է, որը պետք է կիրառվի առաջին հերթին: Բոլոր արհավիրքներն առաջանում են այն բանի հետևանքով, որ մարդկության գիտակցությունը չի համապատասխանում այն մակարդակին, որը տվյալ պահին Երկնոլորտներն ակնկալում են տեսնել Երկրի մարդկանց մոտ: Այդ պատճառով մենք միշտ ձեզ նախազգուշացնում ենք, երբ ձեզնից ուժեղացված աշխատանք է պահանջվում ձեր գիտակցությունը փոխելու ուղղությամբ:

Այս պահին ես կարող եմ արձանագրել, որ այն տեմպերը, որոնցով փոխվում է մարդկության գիտակցությունը, բավարարում են մեր նեկայացրած պահանջներին:

Այդպես էլ շարունակե՛ք: Երկինքը երախտապա՛րտ է ձեզ: Եվ դուք իրավասու եք Երկնքից նոր ողորմածություններ ակնկալելու:

Ես ուրախ եղա այսօրվա մեր հանդիպման առիթով:

Տեր Մայտրեյա
19 ապրիլի, 2006 թ.

Չրույց Ձեռնադրումների Ուղու մասին

ԵՄ ԵՄ Մայտրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը: ԵՄ ԵՄ եկել նոր խրատներ տալու նպատակով, որոնք կուզենայի տալ հենց այսօր:

Ինչպես միշտ, ես շատ ուրախ եմ մեր հանդիպման համար: Եվ որքան էլ մեզ համար դժվար լինի, որքան էլ շատ ջանքեր ծախսվեն մեր կապի ստեղծման համար, այդ ջանքերն արդարացվում են ձեր գիտակցության այն փոփոխություններով, որոնք մենք ձեզնից ակնկալում ենք, և որոնք արդեն սկսել են երևալ:

Ուստի այսօր էլ, ինչպես նախկինում, ես եկել եմ, որպեսզի որոշակի գիտելիքներ և որոշակի տեղեկատվություն փոխանցեմ, որոնք վերաբերում են Ձեռնադրումների Ուղուն: Այդ Ուղին, որով ես ձեզ կոչ եմ անում ընթանալ, տարբերվում է շատ բաներից, որոնց դուք բախվում եք ձեր առօրյա կյանքում: Եվ Ուղու Ուսմունքն էլ տարբերվում է այն ուսմունքներից, որոնց ձեր կյանքում դուք առնչվում եք:

Նախ և առաջ ես ձեզ պետք է ասեմ, որ Ձեռնադրումները, որոնք դուք անցնում եք ձեր կյանքի ընթացքում, ձեր գիտակցությանն են հասնում միայն այն բանից հետո, երբ դուք ձեռք եք բերում գիտակցության որոշակի մակարդակ: Մինչ այդ նմանվում եք կյանքի ջրերում թաքտացող ու ջուր ճողփացնող դեռահասների, որոնք չեն գիտակցում հասուն կյանքի և առաջիկա կենսական ուղու ողջ բարդությունը:

Ամեն մի էակի կյանքում գալիս է մի պահ, երբ նա գիտակցում է Բարձրագույնի հետ իր կապը և այն, որ ինքը պետք է սկսի գիտակցորեն ընթանալ Ձեռնադրումների Ուղով: Վերջին հարյուրամյակների ընթացքում հասարակության վիճակը, հատկապես արևմուտքում, անհնարին է դարձրել գիտակցորեն Ձեռնադրումներով անցնելը: Մարդիկ մոռացել են Գաղտնի Ծեսերի Դպրոցի և այն գիտելիքների մասին, որոնք տրվում են այդ Դպրոցում:

Ուստի ինչպես մեր, այնպես էլ մեր դեսպանորդի խնդիրն է հիշեցնել ձեզ Ձեռնադրումների Ուղու մասին և վերականգնել Ձեռնադրումների Ուղու հինավուրց ավանդույթները: Մեր նոր գործողությունների տարբերակիչ առանձնահատկությունը կլինի այն, որ մենք կձգտենք տալ Ձեռնադրումների Ուղուն վերաբերող անհրաժեշտ գիտելիքները, բայց ձեզնից յուրաքանչյուրն անհատապես կանցնի իր ձեռնադրումները՝ չկտրվելով սովորական կյանքից:

Մենք հուսով ենք, որ ներկա ժամանակներում այս նոր հնարավորությունը կկարողանա տեղ գտնել արևմուտքում: Եվ ձեզ հարկ չի լինի փնտրել անդրծովյան ուսուցիչներ և գնալ նրանց մոտ՝ մինչև աշխարհի ծայրը:

Նորից եմ կրկնում, որ ձեզ հետ տեղի է ունենում ճիշտ այն, ինչը թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ: Եվ քանի որ եկել են նոր ժամանակներ, և առկա են նոր հնարավորություններ, ապա իմ Գաղտնի Ծեսերի Դպրոցն ընդունվելու համար բոլորովին կարիք չկա հասնելու մինչև աշխարհի ծայրը: Տեղի է ունենում ճիշտ այն, ինչը թույլ եք տալիս ձեր գիտակցության մեջ: Եվ եթե դուք ձեր գիտակցության մեջ հնարավոր եք համարում, որ կարող եք հաղորդակցվել ինձ և Իմաստության մյուս Տիրակալների հետ, ապա վաղ թե ուշ դա տեղի կունենա ձեր կյանքում: Ես անձամբ կայցելեմ ձեզ կամ կգամ ձեր թշնամիների, ձեր ընկերների ու ձեր մերձավորների միջոցով, որպեսզի տամ այն դասերը, որոնց կարիքն ունեք: Ամեն ինչ հեշտացել է: Մարդկության լավագույն ներկայացուցիչների նվաճած գիտակցության մակարդակը թույլ է տալիս, որ դուք հաղորդակցվեք մեզ հետ՝ նույնիսկ գտնվելով խոշոր քաղաքների պայմաններում: Այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է, առավելագույնս մեկուսանալն է արտաքին աղմուկներից ու արտաքին գրգռիչներից: Դուք պետք է սովորեք ականջ դնել ձեր զգացողություններին: Պետք է ճանաչեք թրթիռները: Պետք է հետևեք ձեր գլխում հայտնված մտքերին, որ կարողանաք զանազանել իմ առաքած մտքերն այն մտքերից, որոնք ձեր ուղեղում հայտնվում են մենտալային ոլորտից:

Իմ պարապմունքներին հաճախելը ձեր ներսում տեղի է ունենում այն ժամանակ, երբ դուք գտնվում եք խաղաղ, մեկուսի վայրում, և ձեզ ոչ ոք չի խանգարում: Մեր հաղորդակցությանը խանգարում է միայն ձեր թրթիռների ոչ բարձր մակարդակը: Ուստի միայն այնժամ, երբ դուք աղոթքների կամ մեղիտացիայի օգնությամբ կկարողանաք բարձրացնել ձեր թրթիռներն այնպիսի մակարդակի վրա, որի դեպքում մարդկային ոչ մի հույզ ու միտք այլևս ձեզ չի անհանգստացնի, ես կկարողանամ գալ և անմիջականորեն հաղորդակցվել ձեզ հետ:

Դուք ստանում եք այն, ինչին ձգտում եք: Մի՛ անհանգստացեք, եթե ձեզ ոչինչ չհաջողվի ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ անգամ:

Ձեր նպատակամղվածությունը չպետք է լքի ձեզ: Երբեմն մեր ներքին կապի հաստատումը կարող է պահանջել նշանակալի ժամանակ: Բայց հենց որ դուք ստանաք ինձ հետ անմիջական հաղորդակցության հնարավորություն, այն ձեզ համար ազդանշան կլինի, որ դուք ընդունվել եք իմ Դպրոցը՝ հանձնելով բոլոր անհրաժեշտ ընդունելության քննությունները: Բայց հենց ընդունվել իմ Դպրոցը, սովորական մարդկային տրամաբանության տեսակետից ձեր կյանքը կսկսի փուլ գալ: Քանզի ձեռնադրյալ և սովորական մարդկանց միջև եղած միակ տարբերությունը նրանց գիտակցության մակարդակների մեջ է: Եվ որքան խորն եք դուք գիտակցում, որ ձեզ շրջապատող ամեն ինչը պատրանք է, այնքան ավելի բարձր աստիճանի ձեռնադրումների եք հասնում:

Ձեր գիտակցության մակարդակը՝ ահա թե ինչն է ինձ հետաքրքրում: Եվ, որպեսզի դուք հասնեք նոր գիտակցության մակարդակի, ես պատրաստ եմ ձեզ տալու ամենադժվարին թեստերը: Բոլոր թեստերն ուղղված են այն բանին, որ ձեզ գրկեն շրջապատի մատերիական աշխարհի հետ ունեցած ամեն մի կապվածությունից: Եթե կամավոր կերպով և իմ օգնությամբ զրկվում եք մատերիական աշխարհի հետ ունեցած ձեր կապվածություններից, ապա դառնում եք ձեռնադրյալներ, որոնց համար ես կարող եմ բացել տիեզերքի կառուցվածքին վերաբերող հինավուրց գիտելիքները:

Իսկ եթե չունեք ձեռնադրումների հարկ եղած աստիճանը, ապա, որքան էլ ջանաք, չեք կարողանա ընկալել նույնիսկ ամենահասարակ գիտելիքները: Դուք կլսեք խոսքեր, բայց դրանք չեն հասնի ձեր գիտակցությանը: Շատ գիտելիքներ ու տեղեկություններ կան ձեր աշխարհում: Բայց այդ ամենից կարող են օգտվել միայն նրանք, ովքեր ունեն ընդլայնված գիտակցություն: Եթե կապիկին համակարգիչ տան, ապա նրա գիտակցության մակարդակը թույլ չի տա, որ նա այդ իրն օգտագործի ըստ նշանակության: Ցավոք, երբ մենք տեղեկատվություն ենք փոխանցում և հետո դիտում, թե դուք ինչպես եք այն օգտագործում, ձեզնից շատերը նմանվում են նշածս կապիկին:

Ամբողջ աշխարհը տառացիորեն փքված է տեղեկատվությամբ ու գիտելիքներով: Բայց միայն եզակիները կարող են օգտվել այդ գիտելիքներից: Քանզի միայն այդ եզակիներն են, որ իրենց ընթացիկ կամ անցած մարմնավորումների ընթացքում անցել են անհրաժեշտ ձեռնադրումները և հասել գիտակցության զարգացման որոշակի մակարդակի: Իսկ ձեր ձեռնադրումների աստիճանը որոշվում է միայն ձեր անձնական նվաճումներով: Ձեռնադրումը գնել հնարավոր չէ: Եվ հնարավոր չէ, որ ինչ-որ ուրիշ մեկը ձեզ համար կամ ձեր փոխարեն ձեռնադրում անցնի:

Այնուամենայնիվ կան մարդիկ, ովքեր անցել են իրենց ձեռնադրումները և կարող են ձեզ համար լինել գուրուներ, մարդիկ, ովքեր կարող են ձեր նկրտումների վեկտորն ուղղել ճիշտ ուղղությամբ:

Երբ աշակերտը պատրաստ է, ապա հայտնվում է և ուսուցիչը: Ուստի ձեզնից միայն նրանք, ովքեր ներքուստ պատրաստված են, կկարողանան ստանալ անհրաժեշտ գիտելիքներ, գտնել ու ճանաչել Ձեռնադրումների Ուղու այն նշաձողերը, որոնք կբերեն ձեզ ճիշտ Ուղու վրա:

Արդ, ինչպես միշտ, ես ձեզ կոչ եմ անում գնալ դեպի ձեր ներսը և գնել ինքներդ ձեզ: Քանզի միայն ձեր անկատարություններն ու ձեր կապվածություններն են ձեզ հեռացնում գիտելիքներից և խանգարում, որ դառնաք իմ աշակերտները:

Ես ուրախ եղա այսօրվա մեր հանդիպման առիթով: Եվ ես նկարագրեցի ձեզ համար այն նոր հնարավորությունը, որը կտրվի ձեզնից նրանց, ովքեր պատրաստ են և լի նկրտումներով:

ԵՍ ԵՄ Մայրերյան

Վեհապետ Էլ Մորիա
20 ապրիլի, 2006 թ.

**Խրատներ այն մասին, թե ինչպես պետք է
վերաբերվեք այն ամենին, ինչը ձեզ շրջապատում է
թանձր և ավելի նուրբ աշխարհներում**

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

Եվ ինչպես նախկինում, ես եկել եմ, որպեսզի խոսեմ ձեզ հետ և խրատներ տամ ձեր կյանքի, այնպես էլ աշխարհակառույցում ձեր գրաված տեղի վերաբերյալ:

Նման այն երեխաներին, ովքեր աշխարհ են գալիս այն ճանաչելու համար, դուք նույնպես սկսում եք աշխարհաճանաչման գործընթացը, միայն թե այն աշխարհի, որը դեռևս գտնվում է ձեր ֆիզիկական զգայարանների ընկալունակության սահմաններից դուրս:

Բայց այդ աշխարհը գոյություն ունի և իրենից ներկայացնում է այն Բարձրագույն Իրականությունը, որում ժամանակի ընթացքում դուք պետք է ծնվեք և հարատևեք:

Մարմնավորվելուց առաջ, երբ ձեր հոգին գտնվում էր նուրբ աշխարհում, դուք ուսանել և խրատներ եք ստացել այն մասին, թե ինչ է ձեզ սպասվում, երբ անցում կատարեք թանձր, ֆիզիկական աշխարհ: Այժմ ես եկել եմ, որպեսզի խրատներ տամ այն մասին, թե ինչ է ձեզ սպասվում, երբ անցում կատարեք նուրբ աշխարհ:

Քանզի որքան մեծ է ձեր պատրաստվածությունը նուրբ աշխարհ անցնելիս, այնքան ձեր հոգու համար ավելի քիչ ջանքեր են պահանջվում, որպեսզի հարմարվի մեր աշխարհին: Մենք խոսում ենք բոլորի համար, սակայն ընկալել այն տեղեկատվությունը, որը պարունակվում է թելադրություններում, և հատկապես կարդալ այն տեղեկատվությունը, որը գտնվում է տողատակերում, ոչ բոլորն են ունակ: Դրանում է կայանում Բարձրագույն օկտավաներից եկած թելադրությունների տարբերությունն այն ուղերձներից, որոնք դուք ստանում եք ոչ շատ բարձր աստեղային ու մենտալային ոլորտներից: Դա ուղերձների բազմաշերտությունն ու բազմապլանությունն է: Տեղեկատվությունը հաշվարկվում է այնպես, որ այն հասկանալի լինի յուրաքանչյուրին՝ անկախ գիտակցության մակարդակից: Սակայն կան բաներ, որոնք թաքցված են ընդհանուր արտահայտությունների տակ և հասկանալի են դառնում միայն նրան, ով կարող է տեսնել տողատակերը և ձայն լսել լիակատար լռության մեջ:

Ամեն մեկի համար կա՝ տեղեկատվություն, սակայն ոչ բոլորն են ունակ ընկալելու ամբողջը:

Թող ձեզ չանհանգստացնի այն, որ շատ բաներ դուրս են մնում ձեր արտաքին գիտակցությունից: Կգա ձեր Ուղու այն փուլը, երբ հանկարծ կսկսեք գիտակցել այն, ինչը նախկինում չէիք կարողացել գիտակցել: Ձեր գլխում կսկսեն հայտնվել գիտելիքներ, և դուք չեք հասկանա, թե որտեղից դրանք հանկարծ ծագեցին: Դուք ճիգ կթափեք, որպեսզի հիշեք տեղեկատվության աղբյուրը, բայց այդպես էլ չեք գտնի: Սակայն երբևէ դուք կհիշեք, որ կարդացել եք Համբարձյալ Վեհապետների այս թելադրությունները և անգիտակցաբար ստացել տեղեկատվություն, որը պարփակված է եղել տողատակերում:

Այս թելադրությունները կարդալու միջոցով դուք միանում եք որոշակի տեղեկատվական ու էներգետիկական էգրեգորի հետ և ունակ եք դառնում ինքնակամ կերպով մուտք գործելու նուրբ աշխարհի տարբեր շերտերը և ուղղակիորեն տեղեկատվություն ստանալու Բարձրագույն օկտավաներից: Դուք ուսուցում եք ստանում քնի ժամանակ, նաև ուսուցում եք ստանում պայծառացումների ու ըմբռնման տեսքով՝ ինքնակամ կերպով դուրս գալով բարձր եթերային մակարդակի վրա:

Արդ, ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից...

Բայց ես պետք է փարատեմ ձեր անհանգստությունը: Առանց ձեր համաձայնության չի լինի ոչ մի տեղեկատվություն և չեք միանա ոչ մի տեղեկատվական աղբյուրի: Եթե այս ուղերձները կարդաք՝ աղբյուրի նկատմամբ անվստահություն զգալով ու կասկածելով, դրանով իսկ անանցանելի էներգետիկական պատնեշ կստեղծեք մեր և ձեր միջև:

Եվ միայն այն դեպքում, երբ ձեր հոգին ուրախություն և հրճվանք է ապրում մեր ուղերձներն ընթերցելիս, իսկ դուք ձեր ողջ էությանմբ պատրաստակամություն կարտահայտեք հետագա ուսուցման, հետագա տեղեկատվության, գիտելիքների ու էներգիայի ընկալման համար, Երկինքը կբացի ձեր առջև առկա հնարավորությունները, և ձեզ համար մատչելի կդառնան մեր գրադարանները, դասերն ու տվյալների բազաները:

Դա նման է այն բանին, երբ դուք մատչելիության գաղտնաբառ եք ստանում որոշակի տեղեկատվության համար: Եվ այդ գաղտնաբառը ձեզ կտրվի միայն այն դեպքում, երբ դուք կհայտնեք ձեր պատրաստակամությունը, որ համագործակցեք մեզ հետ և ստանաք մեր տեղեկատվությունը: Մենք էլ մեր հերթին գնահատում ենք ձեր գիտակցության մակարդակը և ձեզ համար մատչելի ենք դարձնում այն էներգիաներն ու տեղեկատվությունները, որոնք դուք կարող եք յուրացնել: Մենք խնամքով հետևում ենք, որ ձեր կողմից ստացված էներգիայի չափաբաժինը չգերազանցի այն շեմը, որի դեպքում կարող է որևէ վնաս հասցվել ձեր առողջությանը կամ ձեր նուրբ մարմիններին:

Այդպիսով, աշխարհների ներթափանցման գործընթացն ու աշխարհների համագործակցության գործընթացը մանրագնին հսկողության տակ են: Շահադիտական շարժառիթներ ունեցող մարդուն մատչելի չի կարող դառնալ այն տեղեկատվությունը, որով նա կարող է վնաս պատճառել որևէ մեկին: Իսկ որպես չափանիշ ձեր թրթռումներն են: Դուք՝ ձեզնից յուրաքանչյուրն, ունի իր առանձնահատուկ թրթռումների սպեկտրը: Դուք Աստծո Բոցի առանձնահատուկ դրսևորումներ եք: Եվ ձեր նվաճումների աստիճանն անջնջելի հետք է թողնում ձեր Բոցի, ձեր թրթռումների վրա: Ըստ այդմ՝ մենք միշտ կարող ենք ձեզ տարբերել ձեր բոցով, ձեր թրթռումներով և, հետևաբար, ձեր գիտակցության մակարդակով:

Ձեզ անհանգստություն չպետք է պատճառի այն, որ ինքներդ ուղղակիորեն մեզնից տեղեկատվություն չեք ստանում: Նուրբ ոլորտի հետ տեղեկատվության առաքման և ընդունման գործընթացը մշակվել է դարերով: Դուք ստանում եք ուղիղ այնքան, որքան անհրաժեշտ է, և միայն այնժամ, երբ գալիս է դրա հարմար պահը:

Սակայն դուք մշտապես պետք է գտնվեք սպասողական վիճակում: Եթե ձգտում չցուցաբերեք և չարտահայտեք ձեր պատրաստակամությունը, ապա էներգիան չի կարողանա թափանցել ձեր աուրայի մեջ, և ինքներդ ձեզ կմեկուսացնեք այն տեղեկատվությունից, որը գալիս է նուրբ ոլորտից:

Մի կողմից՝ դուք չպետք է անհանգստանաք, որ տեղեկատվություն չեք ստանում, և մյուս կողմից՝ դուք մշտապես պետք է պատրաստ լինեք, որպեսզի տեղեկատվությունն ընդունեք հենց այն պահին, երբ այն պետք է հասնի ձեզ:

Այդ երկու կարծես թե հակասական որակների համակցումը դառնում է կենսական անհրաժեշտություն:

Դուք տեղեկատվություն եք ստանում այնժամ, երբ ձերբազատվում եք ինչ-որ բան ձեռք բերելու եսասիրական ցանկությունից: Տեղեկատվությունը ձեզ է հասնում այնքանով, որքանով դուք ունակ եք ազատվելու ձեր անհրաժեշտ մասից և, դրանով հանդերձ՝ ձեր թրթիռները բարձրացնելու այնպիսի մակարդակի վրա, որ ունակ դառնաք հասնելու այն օկտավաներին, որոնցում այդ տեղեկատվությունը ձեզ համար մատչելի է դառնում:

Բոլորի համար միատեսակ մոտեցում չի կարող լինել: Ֆիզիկական աշխարհում ամեն ոք ունի աստվածայնության առանձնահատուկ դրսևորում: Եվ ամենակարևոր հատկանիշը Արարչի մտահղացման նկատմամբ Սիրով լցվելու ձեր ունակությունն է, նաև այն, որ չդադարեք զարմանալ աստվածայնության դրսևորման այն ամբողջ բազմազանությամբ, որը գոյություն ունի ձեր շրջապատում. չամփոփվեք ինքներդ ձեր մեջ և ձեր խնդիրներում, այլ դիտեք Աստծո դրսևորումների բազմազանությունն ու զանազանակերպությունը. Աստծո հրաշքները տեսնելու կարողություն ունենաք և դրանցով հիանաք: Ահա թե ինչու է ասվել՝ *մինչև մանուկների նման չլինեք, Երկնային Արքայություն չեք մտնի:*

Ես այսօր ձեզ պատկերացում տվեցի, թե ինչպես դուք պետք է ընկալեք մեր և Աստծո Իրականության հետ ձեր կապերը, և թե ինչպես վերաբերվեք այն ամենին, ինչը ձեզ շրջապատում է թանձր և ավելի նուրբ աշխարհներում:

Ես հուսով եմ, որ այս խրատները կնպաստեն ձեր զարգացմանը և կհարստացնեն ձեզ:

Իսկ այժմ եկել է յուրաքանչյուր ամսվա 23-ի թողության շնորհի մասին ձեզ հիշեցնելու պահը, որի մասին ձեզ ասվել է նախորդ թելադրություններում: Այժմ ես պետք է հայտնեմ, որ այդ թողության շնորհը մատչելի է դարձել և կիրառվում է շատ խմբերի ու առանձին անհատների կողմից: Ուստի նոր որոշում է ընդունվել, որ տվյալ թողության շնորհի ազդեցության արդյունավետությունը մեկ կարգով ավելացվի յուրաքանչյուրի համար, ով այս տարվա ապրիլի 23-ից հետո ոչ մի ամսի 23 բաց չի թողնի:

Ես շնորհավորում եմ ձեզ, քանզի Աստծո այս նոր ողորմածությունը մատչելի դարձավ Ուղու վրա ձեր ունեցած նվաճումների շնորհիվ:

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը, խոնարհվում եմ ձեր մեջ առկա Աստծո Լույսի առջև

Սպիտամա Չրադաշտ

21 ապրիլի, 2006 թ.

Ուսմունք արտաերկրային քաղաքակրթությունների մասին

ԵՍ ԵՄ Չրադաշտը՝ մեր դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի տամ ևս մեկ ոչ մեծ Ուսմունք, որը, հուսով եմ, ձեզ համար հույժ օգտակար կլինի ձեր Էվոյուցիոն զարգացման ներկա փուլում:

Քանի որ ձեր քաղաքակրթությունն այժմ սկսել է վերընթաց շրջան. կանգնել է վերընթաց պարույրի վրա, ապա յուրաքանչյուր ուսմունք, որն արդեն հայտնի է եղել նախկին ժամանակներում, ձեր կողմից պետք է ընկալվի նորովի: Եվ ինչպիսի նոր ուսմունքներ էլ որ դուք ստանաք այլ աղբյուրներից ու կապուղիներից, ես պետք է տամ ոչ մեծ մի պարզաբանում՝ կապված այն բանի հետ, որ տիեզերքում գոյություն ունեն բազմաթիվ տարբեր հիերարխիաներ, որոնք ընթանում են յուրաքանչյուրն իր ուղով: Եվ այդ հիերարխիաներից շատերն ազգակից են այն հիերարխիային, որին պատկանում եմ ես, և որը Երկրի վրա ներկայացնում է մեր դեսպանորդը:

Մյուս հիերարխիաները գտնվում են զարգացման մի փոքր այլ մակարդակների վրա, ունեն այլ կառուցվածքներ և լուծում են այլ խնդիրներ:

Այդ հիերարխիաների մեջ կան այնպիսիները, որոնց հետ մենք համագործակցում ենք, բայց կան նաև այնպիսիները, որոնց հետ մենք ոչ մի համաձայնություն չենք գալիս: Նրանք գործում են իրենց օրենքներով: Այժմ ձեզ համար դժվար է ընկալել այս իրադրությունը, քանի որ այն ամենը, ինչ մենք մինչև այս պահին ասում էինք, վերաբերում էր այս տիեզերքում գործող միասնական Օրենքին և այն մասին էր, որ ներքնիկը պետք է ենթարկվի վերնիին: Այժմ դուք ստանում եք այս տեղեկատվությունը, որը մի փոքր տարբերվում է նախկինում ձեր ստացածից: Այնուամենայնիվ ես պետք է նշեմ, որ իրոք ամեն ինչ այս տիեզերքում ենթակա է Մեծ Օրենքին, որը գործում է համայն տիեզերքում: Սակայն ինքը Օրենքը գործում է ընտրողաբար և տարբեր կերպ է բեկվում տիեզերքի տարբեր կետերում: Դա նման է այն բանին, որ Երկրի վրա գոյություն ունեն տարբեր երկրներ, և, չնայած յուրաքանչյուր երկրում գործում են ֆիզիկայի ու մաթեմատիկայի նույն օրենքները, միաժամանակ ամեն երկիր ունի իր օրենքը, որով կառուցել է իր պետությունը և առաջնորդվում է դրանով: Եվ ճիշտ այնպես, ինչպես շատ պետություններ կարող են գոյատևել՝ իրար նկատմամբ թշնամանք տածելով, այնպես էլ կան ուրիշ պետություններ, որոնք բարեկամաբար են տրամադրված իրար նկատմամբ, և որոնց զարգացումը երկար դարերի ընթացքում խառնված է եղել բարեկամության ու համագործակցության վրա: Եթե վերադառնանք մեր տիեզերքին, ապա պետք է գիտակցեք, որ այն ամենը, ինչ գոյություն ունի այս տիեզերքում, անհամեմատ ավելի բազմաբնույթ է, քան այն ամենը, ինչ գոյություն ունի Երկիր մոլորակի վրա: Եվ երբ ձեր գիտակցության մեջ դուք դուրս եք գալիս առանձին մոլորակի շրջանակներից, ապա հասկանում եք, որ տիեզերքում գոյություն ունեն այլ քաղաքակրթություններ, որոնք կարող են կառուցված լինել սկզբունքորեն այլ հիմքի վրա: Չնայած այն բանին, որ այդ քաղաքակրթություններում գործում է համայն տիեզերքում գործող ընդհանուր Օրենքը, այնուամենայնիվ նրանց հատուկ են զարգացման այլ սկզբունքներ, և նույնիսկ այլ աշխարհներ բնակեցնող էակների բնույթը կարող է նշանակալիորեն տարբերվել ձերինից:

Ցանկացած քաղաքակրթության զարգացման ընթացքում գալիս է այն պահը, երբ այն փոխազդեցության մեջ է մտնում տիեզերքում գոյություն ունեցող այլ քաղաքակրթությունների հետ: Այդ գործընթացն ունի այն փուլի համամասնությունը, երբ մի որևէ ցեղ իր համար խաղաղ ապրում էր և իր զարգացման որոշակի փուլում հանկարծ բացահայտում էր, որ իրենից ոչ հեռու գոյություն ունի մի ուրիշ ցեղ՝ իրեն հատուկ սովորություններով ու օրենքներով:

Երբ դուք հայտնվում եք մի ուրիշ երկրում, ձեզ համար ամեն ինչ հետաքրքիր է լինում՝ այդ երկրի օրենքներն ու սովորությունները, մարդկանց վարվելակերպը, շրջապատող իրականության նկատմամբ նրանց պատկերացումները: Երբ հանդիպում եք այլ աշխարհների համակարգի պատկանող քաղաքակրթության, ճիշտ նույն ձևով փոխադարձ հետաքրքրություն է ծագում: Այդ ամենը տեղի է ունենում ցանկացած քաղաքակրթության զարգացման որոշակի փուլում:

Այսօրվա իմ խրատի նպատակն է տալ ձեզ այն բանի ըմբռնումը, որ մշտապես Երկիր մոլորակի զարգացման պատմության ընթացքում Երկրի վրա գոյություն ունեցող քաղաքակրթությունները բխվել են ավելի զարգացած քաղաքակրթությունների հետ: Եվ չնայած այն բանին, որ տիեզերքում գոյություն ունի և գործում է օրենք այն մասին, որ ոչ մի քաղաքակրթություն չի կարող վնաս պատճառել մի ուրիշ քաղաքակրթության, այնուամենայնիվ եղել են պահեր, երբ այդ օրենքը խախտվել է: Սակայն կան ավելի բարձր էակներ, որոնք հնարավորություն ունեն միջամտելու և կարգավորելու առաջացող վիճելի հարցերը: Այժմ, երբ մարդկությունն իր ամբողջությամբ դուրս է գալիս զարգացման նոր մակարդակի վրա, շատ քաղաքակրթություններ, որոնք պատկանում են աշխարհների այն համակարգերին, որոնք բավականին առաջ են անցել Երկիր մոլորակի քաղաքակրթության համեմատ, բայց ունեն երկրայինից տարբերվող զարգացման ուղղություն, կձգտեն փոխազդեցության մեջ մտնել Երկրի բնակիչների հետ: Ուստի պետք է պատրաստ լինեք ցանկացած անակնկալի, որը կարող է տեղի ունենալ ձեր կյանքերում: Սակայն այս իրադրության մեջ էլ, ինչպես ցանկացած ուրիշում, գործում է թրթռանքներին համապատասխանող ձգողականության օրենքը: Եթե արտաերկրային քաղաքակրթությունները ձեզ անհանգստացնում են և չափազանց շատ տեղ են զբաղեցնում ձեր գիտակցության մեջ, ապա մեծ է հավանականությունը, որ կհանդիպեք այլ քաղաքակրթությունների ներկայացուցիչների հետ: Իսկ եթե արտաերկրային քաղաքակրթությունների հետ կապված հարցերը ձեզ չեն հետաքրքրում, ապա կանցնեք ցանկացած արտաերկրային օբյեկտի մոտով և նույնիսկ չեք նկատի այն:

Չարժե վախենալ որևէ բանից: Սակայն պետք է միշտ հիշել, որ ոչ բոլոր արտաերկրային քաղաքակրթություններն են բարեկամական զգացմունքներ տածում Երկրի բնակիչների նկատմամբ: Եվ եթե ձեզ վստահ չեք զգում որևէ իրադրությունում և չգիտեք, թե ինչպես

արձագանքեք դրան, ապա մի՛ մոռացեք, որ գոյություն ունեն Բարձրագույն Ուժեր, որոնք կոչված են ձեզ օգնություն ցուցաբերելու և ձեզ պաշտպանելու նմանատիպ իրադրությունների դեպքում: Տիեզերքում գոյություն ունեցող ամեն ինչը չէ, որ հասկանալի ու մատչելի կարող է լինել ձեր արտաքին գիտակցության համար: Սակայն լավ կլինի, եթե դուք պատրաստ լինեք ցանկացած անկանխատեսելի իրադրությանն ու հանդիպմանը: Ուստի ես այսօր իմ պարտքը համարեցի, որ ձեզ ոչ մեծ մի Ուսմունք տամ արտաերկրային քաղաքակրթությունների մասին:

Որպես կանոն՝ անցյալի բոլոր կրոնական համակարգերը թշնամաբար են տրամադրված եղել արտաերկրային քաղաքակրթությունների ամեն մի նման ներխուժման նկատմամբ և եկվորներին հայտարարել են դևեր ու սատանաներ: Գոյություն ունեցող կրոնական շրջանակների ու սահմանափակումների պայմաններում ուրիշ կերպ հնարավոր էլ չէր լինի վերաբերվել այդ ոչ միշտ հասկանալի երևույթներին: Եվ այժմ էլ շատ կրոնական համակարգեր ուսուցանում են, որ այլմոլորակային ներխուժումները սատանայի ու նրա կամակատարների գործն են:

Նորից եմ կրկնում, որ մարդկության զարգացման որոշակի փուլում նմանատիպ շփումները դառնում են անխուսափելի: Եվ քանի որ շատ արտաերկրային քաղաքակրթություններ չափազանց շատ են տարբերվում Երկրի քաղաքակրթությունից, ապա դրանք ձեր գիտակցության մեջ կարող են ընկալվել որպես թշնամական:

Դուք ձեր գիտակցության մեջ դուրս եք գալիս ձեր զարգացման նոր մակարդակի վրա, և այդ պատճառով արտաերկրային քաղաքակրթությունների հետ ծագող հարաբերությունների հարցը մեր խրատներում չի կարող շրջանցվել: Դուք մշտապես պետք է հիշեք, որ Համբարձյալ Վեհապետները ձեզ ամենամոտ կանգնած էակներն են այս տիեզերքում՝ ըստ իրենց զարգացման մակարդակի և թրթռանքների: Դեռ ավելին, Համբարձյալ Վեհապետների շատ մասնիկներ գտնվում են մարմնավորման մեջ և, հետևաբար, շատ Համբարձյալ Վեհապետներ ներկա են ձեր ներսում: Դուք ձեր Բարձրագույն Ես-ի կազմում ունեք Համբարձյալ Վեհապետի մասնիկ: Ուստի խորհուրդ եմ տալիս. քանի դեռ ձեր գիտակցությունը բավարար չափով չի նախապատրաստված, չափազանց շատ ուշադրություն մի՛ հատկացրեք արտաերկրային քաղաքակրթություններին և նրանց հետ կապերին: Երբ ձեր գիտակցությունն ավելի շատ հագեցած կլինի այլ քաղաքակրթություններին վերաբերող տեղեկատվությամբ, այնժամ ինքներդ էլ կկարողանաք ճիշտ գնահատել ծագած իրադրություններն ու ճիշտ որոշում կայացնել բարդ իրադրություններում: Իսկ հիմա՝ ևս մեկ խորհուրդ. հենց որ բախվում եք որևէ իրադրության, որը ձեզ վրդովում է, կանչ հղեք այն Համբարձյալ Վեհապետներին, որոնց մասին գիտեք՝ Հիսուսին, Մուհամեդ մարգարեին, Միքայել Հրեշտակապետին, Ազատության Աստվածուհուն, Սանատ Կոմարային, ինձ կամ մյուս Վեհապետներին, և խնդրեք նրանց օգնությունն ու օժանդակությունը ծագած իրադրությունից դուրս գալու համար:

Կարող եք ձեր կանչն արտահայտել բարձրաձայն կամ մտքի մեջ, կարող եք նաև ձեր անհանգստության բուն էությունը շարադրել գրավոր ձևով և այրել ձեր խնդրանքը պարունակող այդ նամակը: Միշտ վստահ եղեք, որ ձեր յուրաքանչյուր կանչի առիթով ձեռք կառնվեն անհրաժեշտ միջոցներ: Եվ ոչ մի դեպքում մի՛ երկյուղեք, ինչպիսի իրադրության մեջ էլ որ հայտնվեք: Մարսափի թրթռանքները կաթվածահար են անում ձեր կամքը և ձեր իսկ Բարձրագույն մասի հետ ունեցած ձեր կապը:

Ես այսօր տվեցի արտաերկրային քաղաքակրթությունների հետ հարաբերվելու Ուսմունքի ուրվագծերը և ես հուսով եմ, որ սույն փուլում այս խրատները ձեր կյանքում օգտակար կլինեն:

ԵՄ ԵՄ Չրադաշտը՝ ձեր նկատմամբ Միտով

Տեր Ծիվա
22 ապրիլի, 2006 թ.

Ուսմունք աշակերտելու Ուղու մասին

ԵՄ ԵՄ Ծիվան՝ նորից ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել, և ինչպես միշտ, եկել եմ, որպեսզի ձեզ համար անհրաժեշտ տեղեկատվություն փոխանցեմ, որի կարիքն ունի ձեր արտաքին գիտակցությունը, և որի կարիքն ունեն ձեր նուրբ մարմինները:

Մեր նախորդ հանդիպումից հետո տեղի են ունեցել մի շարք կարևոր իրադարձություններ: Եվ սեղմ ձևով այդ իրադարձությունների արդյունքը կարելի է արտահայտել այսպես, որ Երկրի վրայի գործերի վիճակը Երկինքն արժանացրել է հավանության: Եվ, եթե նախկինում՝ ձմեռային արևադարձի օրերին, երբ մենք տալիս էինք նախորդ շրջանի թելադրությունները, մենք մեր

դժգոհությունն էինք արտահայտում Երկրի գործերի վիճակի վերաբերյալ, ապա այժմ Երկինքը գոհունակություն և ուրախություն է արտահայտում այն փոփոխությունների առթիվ, որոնք տեղի են ունենում Երկրի վրա:

Իրադրությունը փոխվում է և, եթե նույնիսկ դա առայժմ այք չի զարնում ու մարդկության մեծամասնության կողմից չի նկատվում, այնուամենայնիվ նա, ով ունակ է զգալու նուրբ էներգիաները, նկատում է այդ փոփոխությունները և իր գիտակցության մեջ հետևում այդ փոփոխություններին:

Ինչպես և անցած անգամ, ես եկել եմ, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք փոխանցեմ՝ կապված աշակերտելու Ուղու հետ: Այդ Ուսմունքի կենսական անհրաժեշտությունը գնալով ավելի ակնհայտ է դառնում: Քանզի հենց որ մարդկությունը չափազանց շատ է կլանվում պատրանքով, կորչում է կապը Հիերարխիայի և մեր Ուսմունքի հետ, որը մենք շատ դարերի ընթացքում տալիս ենք մարմնավորված Ուսուցիչների և դեսպանորդների միջոցով:

Ուստի ամեն անգամ մենք պետք է նորից ու նորից վերականգնենք մեր կապերն այն հաղորդչի միջոցով, որը մենք ստանում ենք թանձր աշխարհում: Այս պահին խոսքը վերաբերում է մեր դեսպանորդ Տառյանային: Դուք տեսնում եք, որ մենք շարունակում ենք օգտվել այս հաղորդչից: Եվ մեր աշխատանքի շարունակվելը պայմանավորված է այն բանով, որ ամեն մի արժանի հաղորդիչ ձեռք բերելով՝ մենք աշխատում ենք այն օգտագործել ողջ հզորությամբ: Հաշվի չի առնվում ո՛չ ֆիզիկական մարմնի վիճակը, ո՛չ էլ նույնիսկ նրա ներքին վիճակը: Երբ խոսք է գնում տեղեկատվության և Օրենքի հաղորդման մասին, որը պետք է կենսագործվի ֆիզիկական աշխարհում, ապա մեզ ոչինչ չի կարող կանգնեցնել:

Եվ, ստանալով այս հաղորդիչը, մենք կձգտենք օգտվել նրանից ոչ միայն մեր ուղերձների հաղորդման համար, այլ նաև այն բանի համար, որ ֆիզիկական ոլորտում ստեղծենք առաջնակետ, բազա, հիմք, Լույսի կիզակետ:

Եթե մենք ֆիզիկական ոլորտում ստանանք ինչ-որ բան, որով կարողանանք ամրագրել մեր Լույսի կիզակետը, ապա դա թույլ կտա մեզ, որ, օգտվելով դեսպանորդի մարմիններից հաղորդենք մեր տեղեկատվությունը և ազդենք շատերի թրթռումների բարձրացման վրա:

Դա նման է այն երևույթին, որը տեղի է ունենում, երբ քար եք նետում լճակի հանդարտ մակերևույթին: Նետված քարից ալիքները տարածվում են լճակով մեկ: Եվ յուրաքանչյուր իր, որը հայտնվում է ալիքի տարածման ոլորտում, տատանումներ է կրում:

Արդ, գիտելիքի փոխանցման գործընթացը պատրադիր չէ, որ կապված լինի Խոսքի միջոցով տեղեկատվության հաղորդման հետ: Կա որոշակի օրենք, որը թույլ է տալիս տեղեկատվությունը փոխանցել Ուսուցչի աուրայից աշակերտի աուրային: Դրա համար անհրաժեշտ է հաստատել Գուրու-սան հարաբերություններ՝ հիմնված լիարժեք անվերապահ Սիրո և համագործակցության վրա: Երբ Ուսուցչի և աշակերտի աուրաներն իրար են հպվում, այդ պահին լիարժեք ու անվերապահ Սիրո զգացման միջոցով տեղի է ունենում Ուսուցչի նվաճումների մոմենտումի փոխանցումն իր աշակերտներին:

Մենք ձգտում ենք, որպեսզի ստեղծենք այնպիսի պայմաններ, երբ կկարողանանք մեր դեսպանորդի պոտենցիալն օգտագործել ամբողջ հզորությամբ՝ նրա միջոցով փոխանցելով տեղեկատվությունը ոչ միայն Խոսքի տեսքով, այլ նաև նրա կապուղիների միջոցով տեղեկատվությունը հաղորդելով մեր մյուս սաներին՝ դրանով հանդերձ արագացնելով վերջիններիս զարգացումը:

Այն ամենը, ինչ մեզ անհրաժեշտ է, հարմարավետ պայմանների ստեղծումն է Երկիր մոլորակի կամայական անկյունում, ուր կարող են ժամանել մարդիկ և որոշ ժամանակով այնտեղ ապրել: Դուք դա կարող եք անվանել աշրամ, համայնք կամ ուսումնական կենտրոն: Սակայն այդ վայրի էությունը ֆիզիկական ոլորտում որպես կիզակետ ծառայելն է, որով մենք կկարողանանք ամրագրել մեր էներգիաներն ու հաղորդել մեր թրթռանքները: Այդ վայրի նկատմամբ մեր միակ պահանջն այն է, որ այն առավելագույնս հեռու գտնվի ցանկացած բնակավայրից և մոտակայքում բացակայեն այնպիսի տեղերը, որտեղ ներկա են լինում մարդիկ, որոնց թրթռումները բավարար մակարդակի վրա չեն. քանզի հարկ չկա, որ նրանց մեջ ժամանակից շուտ առաջ բերվի թեստային վիճակ: Յուրաքանչյուր ոք, ով հայտնվում է մեր Լույսի կիզակետի ազդեցության ոլորտում, իր վրա կրում է թրթռանքի մակարդակի բարձրացում: Իսկ ձեզ հայտնի է, որ հենց որ դուք Լույսի լրացուցիչ չափաբաժին եք ստանում, ապա այդ Լույսն սկսում է սաստկորեն ձեր աուրայից դուրս մղել անկատարության ամեն մի դրսևորում: Ուստի պատրաստություն չանցած անհատը, որը Գուրու-սան հարաբերության մեջ չի մտել մեր դեսպանորդի հետ, տիպիկ ինքնազգացողություն կունենա՝ առաջացնելով լարվածության լրացուցիչ ան:

Ուստի որքան ավելի մեկուսացված, խաղաղ ու հարմարավետ լինի մեր ապագա կիզակետի վայրը, այնքան ավելի լավ արդյունքների մենք կկարողանանք հասնել: Ես դիմում եմ նրանց, ովքեր

գիտեն նմանատիպ վայրեր, որտեղ կարելի է կազմավորել մեր աշրամը: Թող ձեզ համար ներդրություն չլինի հայտնել այդ մասին մեր դեսպանորդին, կամ անմիջականորեն դիմել ինձ նամակ-դիմումի միջոցով:

Դա շատ կարևոր քայլ է: Եվ որպեսզի մեր վայրն ինչ-որ չափով վնասագերծվի բացասական ազդեցություններից և սեփականատիրական վեճերից, ես մեր դեսպանորդին արդեն հայտնել եմ այն պայմանները, որոնցում պետք է գտնվի աշրամը:

Նորից եմ կրկնում, որ կա որոշակի Օրենք, որին համապատասխան՝ ֆիզիկական ոլորտում մենք կատարում ենք մեր աշխատանքը: Եվ այդ Օրենքը ենթադրում է Ուսուցչի աուրայում աշակերտների ներկայություն, որպեսզի արագացվի Ուղով ընթանալու գործընթացը:

Ձեզնից նրանք, ովքեր ներկա են գտնվել մեր այն միջոցառումներին, որոնք մենք անց ենք կացրել մեր դեսպանորդի հետ միասին, կարող էին զգալ, թե որքան է արագանում գիտակցության փոփոխության գործընթացն այդ միջոցառումներից հետո:

Մենք կշարունակենք մեր միջոցառումները: Եվ ես կարծում եմ, որ բոլոր ցանկացողները ժամանակի ընթացքում կկարողանան հաճախել դրանց:

Մոտակա ժամանակում Տատյանայի վրա լրացուցիչ պատասխանատվություն կդրվի մեր Լույսի կիզակետի ստեղծման ու ամրացման հարցով: Ուստի ես խնդրում եմ ցուցաբերել նրան այն ամբողջ անհրաժեշտ օգնությունն ու օժանդակությունը, որի կարիքը նա կունենա: Երբեմն բավարար է միայն մտովի արտահայտել ձեր օժանդակությունը, առաքել ձեր Մերը և երախտագիտությունը նրա ծառայության համար: Եվ ձեր սրտի պոռթկումն ունակ է լինում չեզոքացնելու հսկայական քանակի բացասական էներգիայի ազդեցությունը, որն ինքնաբերաբար ձգվում է դեպի մեր դեսպանորդը. քանզի նա կանգնած է լեռան գագաթին, և բոլոր քամիներն ու մրրիկներն առաջին հերթին խփում են նրան:

Ես ասացի այն ամենը, ինչ մտադիր էի լուսաբանել այսօրվա գրույցի ընթացքում: Եվ հուսով եմ, որ կարող եմ հույս կապել ձեզ հետ և ակնկալել մեր գործին ցուցաբերվող ձեր օգնությունը:

ԵՄ ԵՄ Շիվան

Տեր Մայրեյա
23 ապրիլի, 2006 թ.

Ես ձեզ տալիս եմ երաշխավորված Տունդարձի ճանապարհ

ԵՄ ԵՄ Մայրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել... Եվ, ինչպես միշտ, մտադիր եմ տալ Ուսմունք և խրատներ, որոնք անհրաժեշտ են Ուղով ձեր առաջընթացի համար: Ձեր Ուղին Ձեռնադրումների Ուղին է: Ձեզնից շատե՞րն են արդյոք կյանքում խորհում Ձեռնադրումների Ուղու մասին: Շատե՞րն արդյոք թեկուզ հեռավոր պատկերացումներ ունեն այդ Ուղու վերաբերյալ:

Դուք լսել ու կարդացել եք տարբեր աղբյուրներում, թե ինչ է Ձեռնադրումների Ուղին: Եվ այսօր ես եկել եմ ձեզ ասելու, որ իրականում Ձեռնադրումների Ուղին ամենաարագ, ամենակարճ ճանապարհն է, որը ձեզ տանում է Աստծո մոտ: Դա Էգոյից հրաժարվելու Ուղին է: Դա այն Ուղին է, որի վրա դուք կամավոր կերպով համաձայնում եք որոշակի, թեկուզ և շատ ծանր, փորձություններ անցնել, որպեսզի կրճատեք Տունդարձի ձեր ուղին:

Դա Ուղի է, որը դուք ընտրում եք կամավորապես: Դա է այն ամենակարճ ճանապարհը, որը ձեզ Տուն կբերի: Իհարկե, կարող եք և ընտրել ուրիշ ուղի: Այդ ուղին գուցե լինի ավելի հաճելի, բայց այն անհամեմատ ավելի շատ ժամանակ կպահանջի ձեզնից: Դեռ ավելին, ընթանալով շատ դուրեկան ուղով, որը ձեզնից ոչ մի լարում չի պահանջում, դուք ոչ միայն կարող եք մոլորվել և այլևս Տունդարձի ճամփան չգտնել, այլ նաև չեք կարողանա վերադառնալ այն սկզբնական կետը, որից սկսել եք ձեր Ուղին:

Ուստի ես եկել և ասում եմ, որ ձեզ տալիս եմ երաշխավորված Տունդարձի ճանապարհ: Սակայն այդ ճանապարհին համապատասխանող Ուղին ձեզնից կպահանջի ձեր բոլոր ուժերի լարումը: Ձեզ կվիճակվի ձեր ունեցածից շատ բան զոհաբերել: Բայց ձեզ համար ամենացանկալի զոհաբերությունը կլինի ձեր Էգոն, որից անխուսափելիորեն պետք է բաժանվեք, եթե ընթանաք Ձեռնադրումների Ուղով: Ձեր Ուղու վրայի բոլոր թեստերն ու փորձություններն ուղղված են միայն մի բանի. դուք պետք է բաժանվեք ձեր անիրական մասից և ամուր կապ հաստատեք ձեր իսկ իրական մասի հետ: Ուստի ես նորից ու նորից գալիս եմ, որպեսզի ձեզ լրջության կոչեմ և զգուշացնեմ, որ այն Ուղին, որը ես ուսուցանում եմ իմ դեսպանորդի միջոցով, թեև շատ խստաշունչ է, բայց երաշխավորում է ձեր Տունդարձը՝ պայմանով, որ դուք կդիմանաք այդ Ուղու բոլոր փորձություններին: Դուք ինքներդ կարող եք ընտրել՝ ընթանա՞լ այդ Ուղով, թե՞ ոչ: Ոչ ոք չի

կարող ձեզ պարտադրել: Ես պարզապես տեղեկատվություն եմ տալիս, իսկ դուք ընտրություն եք կատարում:

Շատ բազմազան ուսմունքներ կան ձեր աշխարհում: Դրանց մեջ կան ճշմարիտները, կան և այնպիսիները, որոնք բացարձակապես սխալ են, շեղում են ձեզ Ուղուց և նպաստում ձեր մոլորվելուն:

Ուստի ամեն անգամ ֆիզիկական աշխարհում հաղորդիչ ձեռք բերելուց հետո մենք տեղեկացնում ենք մեր Ձեռնադրումների Ուղու մասին: Դա այն Ձեռնադրումների Ուղին է, որն ուսուցանել են Տեր Հիսուսն ու Հառիժամա Բուդդան: Այն Ձեռնադրումների Ուղին է, որով ընթացել են բոլոր ժամանակների ձեռնադրյալները: Եվ այժմ մենք ձեզ առաջարկում ենք, որ ներկա փուլում վերականգնեք հինավուրց ավանդույթներն ու դրանք ներարկեք ձեր հասարակությանը:

Նախ և առաջ դուք պետք է իմանաք, որ գոյություն ունի ԵՍ ԵՄ Ուղին: Այն ձեզ համար բացվում է նրանց օգնությամբ, ովքեր արդեն անհրաժեշտ ձեռնադրումներ են անցել և տրամադրել իրենց տաճարները Սպասավորության գործին: Այդ մարդկանց միջոցով (որոնց թվում նաև մեր դեսպանորդն է, որի միջոցով մենք տալիս ենք մեր ուղեղները), Ուղով ձեր Տունդարձը կարող է իրականություն դառնալ: Դուք ուղեկցորդ եք ձեռք բերում ֆիզիկական ոլորտում: Հենց որ մեր դեսպանորդին ընտրում եք ձեզ Գուրու, դրանով իսկ կանգնում եք Հիերարխիայի աստիճանի վրա, և ամբողջ Հիերարխիան ձեր Ուղու ընթացքում սկսում է ծառայել և օգնել ձեզ: Շատ պարզ Ուղի է: Սակայն ձեզնից շատերի համար այդ կարծես հասարակ քայլը, վերածվում է անհաղթահարելի արգելքի: Հանձին մեր դեսպանորդի՝ տեսնում եք հասարակ մեկին, որը գուրկ չէ մարդկային թերություններից, և չեք կարողանում այդ մարդկային դրսևորումների հետևում նշմարել դեսպանորդի իսկական էությունը, որի շնորհիվ մեր ընտրությունը կանգ է առել հենց նրա վրա: Երբ ֆիզիկական ոլորտում առնչվում եք մեր Հիերարխիայի ճշմարիտ ներկայացուցչի հետ՝ լիարժեք ու անվերապահ ձևով մեր դեսպանորդին ընդունելով որպես ձեր Գուրուն, ապա ձեզ համար բացվում է այն հնարավորությունը, որն այս պատմական պահին Երկինքը մատուցում է Երկրին: Իհարկե, դուք և միայն դուք եք որոշողը՝ օգտվել՝ այդ հնարավորությունից, թե՞ ոչ: Բայց ես ասում եմ ձեզ, որ չկա արևմուտքում ապրող և արևմտյան ավանդույթներով դաստիարակված ուրիշ մի դեսպանորդ, որը ներկայացնեք մեր շահերը: Ուստի ես թախանձագին խնդրում եմ ձեզնից նրանց, ովքեր դեռ որոշում չեն կայացրել օգտվելու ընձեռված հնարավորությունից, որ մանրագին կերպով կշռադատեն ամբողջ տեղեկատվությունն ու կայացնեն իրենց որոշումը: Հնարավորության պատուհանն այժմ բաց է շատ կենսահոսքերի համար: Եվ եթե դուք օգտվեք այս հնարավորությունից, ապա բավականին կկրճատեք ձեր Ուղին: Դուք ընտրած կլինեք այն ամենակարճ ճանապարհը, որը ձեզ հետ է բերում Տուն:

Սակայն եթե դուք պատրաստ չեք այդ արմատական քայլին, ապա այդ հանգամանքը թող ձեզ չանհանգստացնի: Պարզապես բոլորդ գտնվում եք Ուղով առաջընթացի տարբեր փուլերում:

Այս հնարավորությունը նման է մեր կողմից ձեզ համար ցած իջեցրած ճոպանի: Եվ եթե դուք ձեր մեջ ուժ չեք գտնում, որ կառչեք այդ ճոպանից և մագլցեք ուղղաձիգ ժայռերով, ապա, ինչ արած, սպասեք այլ հնարավորության: Բայց ես չեմ կարծում, թե այս կյանքի ընթացքում ձեզ համար այլ հնարավորություն կբացվի:

Կարողացեք սիրել թեստերի ու փորձությունների խստագույն պայմանները: Պետք է հավատալ ամբողջ էությամբ ու վերջապես կանգնել այն Հիերարխիայի աստիճանի վրա, որն առաջնորդում է ձեզ և միլիոնավոր տարիների ընթացքում հոգում ձեր մասին: Եվ ամեն անգամ հնարավորության պատուհանը՝ նմանվում է այն բանին, որ մենք ուռկան ենք նետում, որսում որոշակի թվով հոգիների և դուրս քաշում նրանց պատրանքի միջից:

Իսկ մյուսները գերադասում են մնալ պատրանքի մեջ, և դա նրանց ընտրությունն է լինում:

Այժմ, երբ մեր գրույցն այսպես բացորոշ է դարձել, ես ձեզ ուզում եմ ասել ևս մի բանի մասին, որից հետո ինքնե՛րդ որոշեք, թե որքանով է դա անհրաժեշտ ձեր գիտակցության համար: Մենք որոշել ենք ձեզ տալ ևս մեկ Երկնային շնորհ: Եվ այդ շնորհն այնքան թանկ ու օգտավետ է ձեր հոգիների համար, որ միայն այն անհատները չեն գնահատի դա, ովքեր չափազանց շատ են խրված պատրանքի մեջ: Իսկ շնորհը հետևյալն է: Այսօր մենք հայտարարում ենք ևս մեկ աստվածային թողության շնորհի՝ նոր աստվածային հնարավորության, գործողության սկզբի մասին: Ձեզնից յուրաքանչյուր ոք, ով այսօր կամ մոտակա ամսվա ընթացքում նամակով կդիմի ինձ և կցանկանա կանգնել Ձեռնադրումների Ուղու վրա, ես նրան կընդունեմ իմ Դպրոցը: Բայց մի պայմանով, որ մեր դեսպանորդին դուք ընդունեք որպես ձեր Գուրուն: Առանց այդ պայմանի՝ ո՛չ ես, ո՛չ Հիերարխիայի ներկայացուցիչներից որևէ մեկը չենք կարողանա ցուցաբերել ձեզ այն ամբողջ օգնությունը, որի կարիքը դուք ունեք:

Դուք ընդունում եք մեր խաղի կանոնները, և միայն դրանից հետո՝ մենք ցուցաբերում ենք ձեզ անհրաժեշտ ողջ օգնությունն ու օժանդակությունը:

Ես հասկանում եմ, որ ձեզնից շատերի համար այսքան վճռական հայտարարությունը կասկածների ու անհանգստության աղբյուր կծառայի: Սակայն հենց դրա համար էլ գոյություն ունեն մեր դպրոցները, որպեսզի դուք մշտապես գտնվեք ձեր իսկ անհրաժեշտ մասի հաղթահարման վիճակում: Մեկի համար որոշում կայացնելը կլինի շատ հեշտ և իր ներսում ամենափոքր լարվածություն իսկ չի առաջացնի: Որոշների համար էլ նշված պայմանն Ուղու վրա կվերածվի անհաղթահարելի պատնեշի:

Եվ եթե ձեր ներսում չափազանց ուժեղ դիմադրություն ու տարակուսանք զգաք, ապա ես խորհուրդ կտամ ձեզ, որ խորանաք ձեր ներսը և փորձեք պարզել ձեր այդ վիճակի պատճառները: Ինչո՞վ է այն պայմանավորված: Թող դա ձեզ համար ազդանշան լինի, որ ձեր ներսում ինչ-որ բան գտնվում է անբարեհույս վիճակում:

Եվ նկատի ունեցեք, որ ձեր այդ անբարեհույս վիճակի իրական պատճառն այն է, որ ձեր էզոն չափազանց ուժեղ է և չի ուզում կորցնել ձեզ վրա ունեցած իր իշխանությունը: Հենց դրա համար էլ այդ քայլն անհրաժեշտ: Առանց այդ քայլի՝ ամենաքիչը մինչև ձեր ընթացիկ մարմանավորման ավարտը դուք կկորցնեք ձեր առաջխաղացման հնարավորություն:

Դեռ երբեք մենք չէինք խոսել այսքան պարզորոշ և այսքան կոնկրետ:

Մենք հուսով ենք, որ ձեր գիտակցությունը պատրաստ է այսպիսի լուրջ գրույցի համար:

Իսկ այժմ թույլ տվեք հրաժեշտ տալ ձեզ. մինչև հաջորդ հանդիպում:

Հուսով եմ, որ իմաստուն որոշում կկայացնեք ձեր սրտում:

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ ձեր նկատմամբ հույսով լի

Տեր Սուրիա
24 ապրիլի, 2006 թ.

Ձեր հոգիների զարգացման բնական Ուղին հենց այն է, որը մենք հիմա ուսուցանում ենք Երկրի մարդկությանը

ԵՍ ԵՄ Սուրիան՝ մեր դեսպանորդի միջոցով նորից ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել Մեծ Կենտրոնական Արևից, որպեսզի խրատներ տամ Երկիր մոլորակի մարդկանց:

Մենք ձեր դիտարկմանն ենք ներկայացնում ձեզ համար անհրաժեշտ գիտելիքներ ու տեղեկատվություն: Մենք ձեզ տեղեկատվություն ենք հասցնում, և ամեն անգամ ձեզ հնարավորություն է ընձեռվում ստանալու մի նոր մարգարիտ: Կանցնի որոշ ժամանակ, և դուք զարմանքով կնկատեք, որ այն մարգարիտները, որոնք մենք տվել ենք, լիովին բավարար են ուլունք շարելու համար: Եվ այդ ուլունքը դուք կկրեք մինչև ձեր մարմնավորման վերջը: Այն ձեզ կջերմացնի և ուժ կտա այն թուլեցումներին, երբ ընտրած Ուղու վրա ձեզ կտիրի կասկածը, երբ կյանքի տհաճությունները վերադարձած կարմայի թանձր օղակով կպարուրեն ձեզ:

Մի՛ վախեցեք ձեր կյանքում հանդիպած որևէ դժվարությունից: Տհաճություններից ու անկանխատեսելի իրավիճակներից յուրաքանչյուրը ձեր հոգու զարգացման համար պետք է ու անհրաժեշտ: Դուք չեք կարող զարգանալ, եթե ամեն օր չբախվեք անկանխատեսելի իրադրությունների հետ և չհաղթահարեք կենսական դժվարությունները: Միայն մեռյալն է, որ ունակ չէ հաճույքներ ստանալու կյանքից և տառապելու կյանքի առանձին դրսևորումներից: Արդ, ուրախ եղեք այն ամենի համար, ինչին բախվում եք ձեր կյանքում և մի՛ վախեցեք փոփոխություններից:

Որքան ձեր գիտակցությունը լավ նախապատրաստված լինի փոփոխություններին, այնքան դրանք ավելի անցավ ու արագ կանցնեն: Բոլոր ձեր խառնաշփոթությունների ու փորձանքների պատճառը անցյալում թույլ տված ձեր սխալներն են: Ուստի ամեն մի բարդ իրադրություն, որին կյանքում դուք բախվում եք, պետք է ուրախացնի ձեզ, որովհետև այն ձեզ համար հարմար առիթ է ուղղելու անցյալի սխալները և այլևս երբեք դրանց չվերադառնալու: Կարմայի Օրենքի իմացությունը թույլ կտա ձեզ այլ կերպ վերաբերվելու բոլոր տհաճություններին: Եվ որքան ավելի վաղ հասկանում ձեզ մատչելի դառնա Կարմայի Օրենքի իմացությունը, այնքան ավելի հեշտորեն կկարողանաք ընդունել նույնիսկ շատ բարդ իրադրությունները և պատվով դուրս գալ դրանցից: Եթե ձեր կյանքում չեք հանդիպում դժվարությունների, եթե ձեր կյանքը շատ հարթ է ընթանում, ապա ես ձեր փոխարեն կմտախոզվեի այդ հանգամանքով: Մարդկանցից շատ-շատերը ձգտում են հասնել հանգստության և բարեկեցության արտաքին դրսևորումների: Սակայն հենց որ ընկնում եք կյանքի այնպիսի պայմանների մեջ, երբ ձեր կյանքում ամեն ինչ չափից դուրս հաջող է

ընթանում, ապա ձեր հոգու համար դա նման է ամենահավոր փորձության: Քանզի դուք չեք կարող զարգանալ արտաքին պայմանների հաշվին և ստիպված եք դիմել ձեր ներսին:

Շատ քիչ թվով մարդիկ են ունակ այն բանին, որ լինեն ինքնաբավ և մտահայե՛ն միայն իրենց ներքին տարածությունը: Մարդկանցից շատերը, երբ գրկվում են դժվարությունների ու խոչընդոտների սովորական դրվածքից, պազապես ընկճախտի մեջ են ընկնում: Իսկ դա նշան է, որ ձեզ համար սկսվել է ամենածանր կարմայի հաղթահարման շրջանը, այն կարմայի, որն ընկած է ձեր և Աստծո միջև:

Մարդկանցից շատերն իրենց անձնապատանության պոռթկման պահին մարտակոչ են հղել Աստծուն, իրենց խոսքում թույլ են տվել արտահայտություններ, որոնք ուղղված են համայն տիեզերքի Օրենքի դեմ: Այն պահին, երբ նրանք այդպիսի վարմունք են թույլ տվել, ոչինչ տեղի չի ունեցել: Նրանք առաջվա պես շարունակել են ապրել, և նրանց կյանքում ոչինչ չի փոխվել: Քանզի, որպեսզի կարման վերադառնա, պետք է անցնի որոշակի ժամանակ, որոշակի ժամկետ: Իսկ այդ ժամկետի առկայությունը պայմանավորված է շատ պատճառներով: Երբ դուք կանգնում եք Ձեռնադրումների Ուղու վրա, ժամանակը ձեզ համար սկսում է այլ կերպ հոսել, և կարմայի վերադարձի գործընթացն արագանում է: Սովորական մարդկանց համար տվյալ մարմնավորման կարման կարող է վերադառնալ միայն հաջորդ մարմնավորման ընթացքում կամ նույնիսկ մի քանի մարմնավորումներից հետո: Ուստի շատ դժվար է հետևել, թե ինչպես է գործում Կարմայի Օրենքը: Իսկ այն դեպքում, երբ դուք գիտակցաբար կանգնում եք Ձեռնադրումների Ուղու վրա, ապա ձեր կյանքի ընթացքում դասեր եք ստանում, որոնք թույլ են տալիս հետևել Կարմայի Օրենքի գործողությանը տառացիորեն մեկ տարվա ընթացքում: Հատուկ դեպքերում կարման կարող է էլ ավելի արագանալ, և այդ կարմայի արդյունքը կարող է տեսանելի լինել մի քանի շաբաթ կամ օրեր հետո:

Ամեն դեպքում դուք հնարավորություն եք ստանում սովորելու ձեր սխալների վրա և հետևելու Կարմայի Օրենքի գործողությանը: Ամեն ինչից գատ, անգիտակցորեն ուսանում եք նաև օրվա կամ քնի ընթացքում: Դուք տեղեկատվություն եք ստանում Վեհապետներից կամ ձեր Բարձրագույն Ես-ից, և այդ տեղեկատվությունը ձեզ թույլ է տալիս համադրել անցյալի ձեր սխալները դրանց պտուղների ու արդյունքների հետ, որոնք ձեզ են վերադառնում կարմայի կամ էներգիայի տեսքով:

Եվ նույնիսկ եթե դուք չեք կարող հավաստիության բավարար աստիճանով հետևել անցյալում ձեր գործած արարքների և ներկայում վերադարձող կարմայի տեսքով այդ արարքների հետևանքների միջև եղած կապին, ապա կարևոր կլինի ոչ թե այդ կապին հետևելը, այլ այն բանի գիտակցումը, որ ինչ էլ որ ձեզ հետ տեղի է ունենում, Աստծո Կամքով է: Եվ Աստծո Օրենքի ու Աստծո Կամքի նկատմամբ ձեր հնազանդության աստիճանն ի ցույց կհանի դեպի Աստված տանող Ուղու վրա ձեռք բերած ձեր նվաճումների աստիճանը:

Ձեր Ուղու վրա շատ են այն նրբություններն ու իրավիճակները, որոնց ձեր արտաքին գիտակցությամբ դժվար է միանշանակ գնահատական տալ: Նմանատիպ իրավիճակները երբեմն հակադրվում են ձեր հասարակության մեջ գոյություն ունեցող վարվելակերպի նորմերին և բարոյական օրենքներին: Այսպես օրինակ՝ սպանության կամ ցանկացած այլ բռնության կարման, որը թույլ եք տվել անցյալում, պետք է վերադառնա ձեզ: Իսկ այդ նպատակի համար Աստված կարող է օգտագործել ցանկացած մարդու, որի հետ հանդիպում եք ձեր Ուղու վրա: Ձեր հասարակության մեջ գործող օրենքի տեսակետից այդ մարդը հանցագործ է և ենթակա է պատժի: Իսկ Աստծո Օրենքի տեսակետից նա պարզապես կարող է լինել Կարմայի Օրենքի իրագործողը: Ըստ այդմ, երբեք մի՛ դատեք նույնիսկ հանցագործներին, երբեք ձեզ թույլ մի՛ տվեք որևէ մեկին դատել:

Այն ժամանակներում, երբ մեծ կապ գոյություն ունեւ ձեր աշխարհի և Բարձրագույն օկտավաների միջև, կային մարդիկ, որոնք իրենց էությամբ Աստծո մարմնավորումներ էին և կարողանում էին կապ գտնել մարդկանց անցյալի ու ներկայի արարքների միջև: Նման մարդիկ հանդես էին գալիս Աստծո դատավորների դերում, և պատժելու կամ ներելու մասին նրանց ընդունած որոշումը որևէ քննարկման ենթակա չէր:

Այժմ Երկրի վրա չկան մարդիկ, որոնք Աստծո լիարժեք մարմնավորում են ներկայացնում: Քանզի Աստծո որևէ լիարժեք մարմնավորում Երկրի ներկայիս պայմաններում անհնարին է դարձել: Ուստի և հնարավոր չի լինում հավաստիորեն հետևել անցյալի ձեր արարքների և այն խնդիրների միջև եղած կապին, որոնք ծառանում են ձեր առջև որպես ձեր անցյալի գործողությունների հետևանք:

Եվ միայն այն դեպքում, երբ կանգնում եք Ձեռնադրումների Ուղու վրա, դուք Բարձրագույն Աշխարհին թույլ եք տալիս իր դրսևորումը գտնել ձեր կյանքում: Դուք գիտելիք եք ստանում Կարմայի Օրենքի և ձեր կյանքում նրա ունեցած դրսևորումների մասին՝ Վեհապետների և ձեր իսկ Բարձրագույն մասի հետ հաստատվող ձեր անձնական միատիկական կապի օգնությամբ:

Ուստի ես եկա այսօր, որպեսզի ևս մեկ անգամ ձեր արտաքին գիտակցության առջև դնեմ Ձեռնադրումների Ուղով ընթանալու անհրաժեշտության հարցը: Ես եկա Մեծ Կենտրոնական Արևից և ձեզ համար բերեցի այս ուղերձը, որպեսզի ձեզ օգնեմ հասկանալ, որ ձեր հոգու զարգացման բնական Ուղին հենց այն է, որը մենք հիմա ուսուցանում ենք Երկրի մարդկությանը: Սակայն մենք չենք կարող որևէ մեկին ստիպել, որ ընթանա այդ փորձված ճանապարհով:

Մենք կարող ենք միայն տալ մեր գիտելիքներն ու մեր ըմբռնումը, մեր տեղեկատվությունն ու մեր էներգիան:

Սակայն ես վստահ եմ, որ կգա պահը, երբ առողջ իմաստն ու աստվածային էությունը հաղթանակ կտոնեն ձեր կյանքում, իսկ դրան մեկը մյուսի հետևից կհետևեն ձեր իսկ անիրական մասի նկատմամբ տարած ձեր հաղթանակները:

ԵՄ ԵՄ Սուրիան, ձեզ հաշտություններ եմ մաղթում ձեր Ուղու վրա

Սանատ Կումարա
25 ապրիլի, 2006 թ.

Մենք ոչ որի չենք կարող ստիպել ընթանալ, բայց մենք կանչում ենք ձեզ դեպի Ուղին

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ նորից ձեզ այցի եկածը:

Ես այս օրով եկել եմ, որպեսզի հիշեցնեմ ձեր այն պարտավորությունների մասին, որոնք ձեր հոգիներն իրենց վրա են վերցրել մարմնավորումից առաջ: Հնարավոր է, որ դուք չհիշեք այդ պարտավորությունների մասին, քանի որ վարագույրը դեռևս շատ թանձր է, և ձեր արտաքին գիտակցությունը մոռանում է այն ամենը, ինչը լսել եք և ինչ ուսանել եք մարմնավորումների միջակայքում: Սակայն ձեր մեջ կա ինչ-որ ավելի մեծ բան, և այդ մեծ բանը ձե՛ր իսկ Բարձրագույն մասն է: Ձեր այդ մասը միշտ հիշել է և շարունակում է հիշել ձեր դերի և ձեր աստվածային պլանի մասին:

Այս թելադրությունների նպատակներից մեկը ձեր հոգու հիշողության արթնացումն է: Դուք սկսում եք հիշել ձեր դերի մասին այն ժամանակ, երբ որևէ շարժառիթ չունեցող կարոտի և հուսաբեկության թուղենք եք ապրում: Թվում է՝ ամեն ինչով ձեր կյանքն ընթանում է առանց տեսանելի տհաճությունների, սակայն ձեր հոգիները տագնապում են, որ ժամանակն անցնում է, և իրենք չեն կարողանա ի կատար ածել վերցրած պարտավորությունները: Ըստ այդմ, ձեր գլխավոր խնդիրն է կապ հաստատել ձեր իսկ Բարձրագույն մասի հետ և վերհիշել ձեր դերը: Այն պահերին, երբ կյանքում հանդիպում եք ինչ-որ բանի, որը ձեզ հիշեցնում է ձեր վերցրած պարտավորությունների և դերի մասին, դուք սարսուռ եք զգում, և այդ զգացողությունը հարազատ է առաջին սիրո նուրբ զգացմունքին: Դա շատ քնքուշ, հմայիչ զգացմունք է: Դուք չեք կարող չնշմարել ձեր այդ վիճակը: Ձեր այդ զգացմունքը դուք կարող եք զուգակցել ու կապել այն մարդու հետ, ով տվել է ձեր հոգուն այդ բերկրալի լուրը, որը հիշեցնում է եթերային օկտավաներում ձեր լինելու մասին: Եվ այն բանից հետո, երբ ապրեք այդ նուրբ զգացմունքը, դուք կձգտեք նորից ու նորից ստանալ ճանաչման այդ փորձը: Եվ քանի որ ձեր այդ զգացմունքը չի վերաբերում ձեր ֆիզիկական աշխարհին, ապա ձեր այդ վիճակը կարող է ձեզ մոլորեցնել: Օ՛, այո, դա կարելի է համեմատել առաջին սիրո հետ: Եվ դա, իրոք, ձեր առաջին սերն է, որը ձեզ հետ էր դեռևս մինչև ձեր ծնվելը: Կանգնեն բավականին տարիներ, և դուք կհասկանաք, որ այդ զգացմունքը կապված չէ մարմնավորման մեջ գտնվող որոշակի մարդու հետ: Դա ավելի վսեմ զգացմունք է: Դա Սիրո զգացմունք է՝ ուղղված համայն Արարչությանը, ամբողջ Կյանքին:

Ձեզնից նրանք, ովքեր հասկանում են, թե ինչի մասին եմ խոսում, գտնվում են նոր կյանքի շեմին: Ֆիզիկական կյանքը շարունակում է գոյատևել ձեր շուրջը, և միևնույն ժամանակ դուք կարծես տեղափոխվում եք մի ուրիշ աշխարհ, որը միաժամանակ գոյություն ունի ձեր աշխարհի հետ, բայց նաև ձեզ շրջապատող ամեն ինչից տարբերվում է: Դուք ձեր գիտակցության մեջ պետք է ձեր այդ վիճակի տարբերակում իրականացնեք: Գտնվելով ծանոթ մարդկանց և հանգամանքների միջավայրում՝ միաժամանակ հասկանում եք, որ կապված չեք այդ մարդկանց և հանգամանքների հետ: Դուք շարունակում եք գոյատևել ձեր աշխարհում, բայց և հասկանում եք, որ դուք այդ աշխարհից չեք: Քանզի ձեր գիտակցության մեջ դուք անցել եք ուրիշ, Բարձրագույն աշխարհ: Դուք սկսում եք գիտակցել, որ ձեր ներսում միավորվում են աշխարհները: Եվ ձեր շնորհիվ Բարձրագույն աշխարհն իջնում է ձեր ֆիզիկական ոլորտի մեջ:

Սկզբում այդ զգացողություններն այնքան անսովոր են լինում, որ գրավում են ձեր ամբողջ էությունը: Դուք բավականություն եք ստանում և միաժամանակ զարմանում եք ձեր այդ վիճակով:

Սակայն քանի որ դուք շարունակում եք գոյատևել ձեր ֆիզիկական աշխարհում և առաջվա պես ֆիզիկական մարմին ունեք, ապա ձեր աշխարհի հանգամանքները շարունակում են ձեզ վրա ազդեցություն գործել: Իսկ քանի որ ձեր թրթիռները բարձրացել են, և ձեր զգայարաններն ունակ են դարձել ընկալելու Բարձրագույն աշխարհների թրթիռները, ապա սովորական աշխարհի որոշ դրսևորումներ ու այդ աշխարհի հանգամանքները չափազանց ցավազին են բախվում ձեր զգայուն էությանը:

Դուք տարբերություն եք զգում ձեր և ձեզ շրջապատող մարդկանց միջև: Եվ ձեզ մեծ ցավ է պատճառում այն, որ ձեր ամենամերձավորները ձեզ չեն հասկանում: Նրանք լսում են ձեր խոսքերը, տեսնում են ձեզ հետ կատարված փոփոխությունները, բայց նրանց գիտակցության մակարդակը թույլ չի տալիս, որ հասկանան ու հետևեն ձեզ:

Դա շատ դժվարին փորձությունն է: Դուք կորցնում եք ձեր կապն ամենամտերիմ մարդկանց հետ և ստիպված եք լինում ընտրություն կատարել. կա՛մ մնում եք նախկին իրավիճակում և զոհում եք ձեր հոգևոր առաջընթացը, կա՛մ էլ շարունակում եք հետևել Ուղուն և զոհում եք ձեր կապը մերձավոր ու հարազատ մարդկանց հետ:

Հավատացե՛ք ինձ, որ թե՛ մեկը, և թե՛ մյուսն անելը շատ բարդ է: Եվ յուրաքանչյուր կոնկրետ իրադրությունում ընտրությունը տարբեր կլինի: Միայն դուք ինքներդ և ձեր հոգին գիտեք, թե որը պետք է ընտրեք:

Եվ եթե ձեր մարմնավորման նպատակը հենց այն է, որ զոհեք ինքներդ ձեզ և ձեր նվաճումները հանուն այն մարդկանց բարօրության, որոնց սիրում եք և որոնց հետ կապված եք կարմայով, ապա ձեր ընտրությունը կանգ կառնի մերձավոր մարդկանց հետ մնալու վրա: Իսկ եթե ձեր մարմնավորման նպատակը շատերին օգնելն է, իսկ շրջապատի հետ ունեցած ձեր կապերը խանգարում են ձեզ, ապա դուք կիզեք բոլոր այդ կապերը և վանդակից դուրս պրծած թռչնի նման կթռնա՞նք դեպի վեր, դեպի ամպերը, դեպի լեռնագագաթները:

Սակայն ես պետք է ձեզ նախազգուշացնեմ, որ եթե դուք չկատարեք ձեր կարմայական պարտավորությունները և չվճարեք ձեր բոլոր պարտքերը, ապա շատ հնարավոր է, որ մեծ կարմա ստեղծեք, չնայած ընտրում եք լուսավոր ու բարձր ուղի: Դուք չեք կարող դուրս գալ հեռավոր ճամփորդության՝ չհոգալով այն մարդկանց մասին, որոնց հետ կապված եք կարմայով: Եվ ոչ մի բարձրագույն նպատակ չի կարող արդարացում լինել, եթե լքեք նրանց, ովքեր շրջապատում են ձեզ և ձեր օգնության կարիքն ունեն:

Ուստի մենք ձգտում ենք չտալ կոնկրետ հանձնարարականներ: Որովհետև հնարավոր չէ տալ սպառնիչ ու համապիտանի հանձնարարականներ կյանքի բոլոր դեպքերի համար: Կյանքը չափազանց խայտաբղետ է, իսկ կարման՝ բավականին խճճված:

Երբեմն մարդկային տեսակետից բոլորի կողմից դատապարտելի որոշումը Աստծո Օրենքի տեսակետից հանդիսանում է միակ ճիշտը: Եվ երբեմն էլ մարդկային տեսակետից միակ ճիշտը հանդիսացող որոշումը հակասում է Աստծո Օրենքին: Աստվածային գիտությունը ամենաբարդն է բոլոր գիտություններից, որոնց դուք բախվում եք կյանքում: Եվ եթե մյուս գիտությունները դուք կարող եք չուսումնասիրել և հանգիստ անցնել այդ գիտություններին նվիրված գրքերով ծանրաբեռնված դարակների կողքով, ապա աստվածային գիտությունը պետք է յուրացնեք բոլորդ: Տարբերությունը միայն ժամկետների մեջ է, թե ով երբ կյուրացնի այդ գիտությունը:

Ձեզնից շատերի համար աստվածային գիտության յուրացման ժամկետը հասել է: Եվ դուք չեք կարող չկանգնել Ձեռնադրման Ուղու վրա, քանի որ դա ձեր մարմնավորումից առաջ պլանավորված է ձեր կողմից: Մյուսները կարող են հանգիստ գտնվել կյանքի խորխորատներում և դեռևս շատ մարմնավորումների ընթացքում շարունակել խաղալ իրենց խաղալիքներով: Նրանց գիտակցությունը պատրաստ չէ, որ հրաժեշտ տան ֆիզիկական աշխարհին և բարձրանան դեպի Աստծո Ճշմարտության ճանաչման լեռնագագաթները: Միայն մի բան կարող եմ ձեզ ասել՝ ձեզնից նրանք, ովքեր ամբողջ սրտով ընդունեցին այս թելադրությունները, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով, ամենայն հավանականությամբ պատրաստ են, որ դուրս գան Ուղի և ընթանան նրանով:

Ըստ այդմ՝ սրտերն'վ ստուգեցեք ձեր զգացողություններն իմ այս թելադրության նկատմամբ: Մենք ոչ ոքի չենք կարող ստիպել ընթանալ, բայց մենք կանչում ենք ձեզ դեպի Ուղին:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ մշտապես ձեզ հետ

Հանձնվեք բարեփոխումների քամուն և մի՛ վախեցեք մրսելուց ու հիվանդանալուց

ԵՄ ԵՄ Հառութամա Բուդդան՝ այս օրով ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել, և ինչպես միշտ, մտադիր եմ ձեզ մի ոչ մեծ Ուսմունք տալ, որը, հույս ունեմ, ձեզ համար օգտակար կլինի: Այսօր ես մտադիր եմ ձեզ ուսուցանել, թե ինչպիսին պետք է լինեն ձեր փոխհարաբերությունները բնության և մարդկային հասարակության հետ:

Դուք յուրահաստուկ եք և՛ ձեր էությանը, և՛ ձեր բնույթով: Եվ իրար հետ ու շրջապատի հետ ունեցած ձեր փոխհարաբերությունները շատ կարևոր նշանակություն ունեն: Երբեմն դուք ձեզ նեղություն չեք տալիս խորհելու այն մասին, թե ինչ ազդեցություն եք գործում շրջակա ամեն ինչի վրա: Ձեզ թվում է, թե շրջակա ամեն ինչը գոյություն ունի ձեզնից ու ձեր գիտակցությունից անկախ: Սակայն այն կապը, որը գոյություն ունի ֆիզիկական ոլորտում դրսևորված ամեն ինչի միջև, շատ ուժեղ է: Այնքան ուժեղ է, որ ձեր շրջապատի հետ ունեցած ձեր փոխազդեցության ամեն մի տարրը, եթե այն չի համապատասխանում Աստծո Մտահղացմանը, կարող է ունենալ կործանարար բացասական ազդեցություն:

Մենք գործադրում ենք մեր ջանքերը, որպեսզի հավասարակշռենք մոլորակի իրավիճակը: Սակայն ինքներդ էլ այդ նույն բանը կարող եք անել: Ձեզ ընդամենը պետք է, որ սիրով լցվեք ամբողջ կյանքի, կյանքի յուրաքանչյուր դրսևորման նկատմամբ և զգաք կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ ձեր միասնությունը:

Ձեր Միասնությունն ինչ-որ մի արտաքին բան չէ, որը դուք պետք է ձեռք բերեք: Ձեր Միասնությունը ձեր ներքին վիճակն է: Այն ձեր ներսից է բխում: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ձեր գիտակցության մեջ թույլ տաք Միասնության մասին միտքը: Մի՛ ձգտեք որևէ մեկին քննադատել: Ձգտեցեք ձեր շրջապատի ամեն ինչում տեսնել դրական կողմեր և դրանց վրա կենտրոնացրեք ձեր ուշադրությունը:

Դուք ազդեցություն եք գործում այն ամենի վրա, ինչը ձեզ շրջապատում է: Եվ քանի որ դուք պոտենցիալ Աստվածներ եք, ապա երբեմն ձեր ազդեցությունն այնքան զգալի է լինում, որ հաշված ակնթարթների ընթացքում կարող եք փոխել ամբողջ մոլորակի ապագան: Ուստի շատ կարևոր է, որ դուք միշտ կենտրոնացված լինեք դրական բաների վրա, ունենաք դրական զգացողություններ, ուրախ տրամադրություն: Բոլոր տհաճությունները դուք պետք է դիմավորեք գիտակցորեն: Քանզի որքան շատ դժվարությունների ու խնդիրների հետ բախվեք ձեր կյանքում և պատվով դուրս գաք դրանցից, այնքան ավելի մեծ չափով կբեռնաթափեք ձեր կարման և կուղղեք այն սխալները, որոնք թույլ եք տվել անցյալում: Ազատագրվելով կարմայից՝ դուք ձեռք եք բերում աշխարհի վրա ազդելու հնարավորություն, քանի որ Աստծո Լույսը՝ Աստծո Էներգիան, ձեր չակրաների միջոցով կարող եք ներմղել ձեր աշխարհ:

Հնարավոր չէ գուտ մարդկային սարքավորումներով չափել Աստծո Էներգիայի այն քանակությունը, որն աշխարհին է տալիս այս կամ այն մարդը, բայց ձեր բարձրագույն զգայարանների միջոցով միշտ կարող եք իմանալ, թե ում միջոցով է Լույսը գալիս, և շատերը ներքին մղումով ձգտում են հաղորդակցվել այդպիսի մարդկանց հետ:

Կան նաև մարդկային գիտակցության այլ նմուշօրինակներ: Օրինակ՝ շատերի գիտակցությունը կենտրոնացած է իրենց իսկ վրա, և նրանք մտածում են միայն իրենց ու իրենց ստանալիք հաճույքների մասին: Նման մարդիկ տարածության սև խոռոչներն են: Նրանք Էներգիա են կլանում՝ փոխարենը ոչինչ չտալով: Այդ մարդկանց շուրջ ամեն ինչ մեռած է, և իրենք էլ կենդանի մեռյալներ են:

Մարդկային գիտակցության այդ երկու ծայրագույն վիճակների միջև կան նաև տարբեր անցումային վիճակներ:

Եվ, ըստ էության, դուք ինքներդ եք միշտ որոշում, թե որ ուղղությամբ շարժվեք: Դուք կա՛մ միայն դեպի Լույսն եք շարժվում, կա՛մ էլ լրիվ հակառակ ուղղությամբ: Կա՛մ ողողում եք ձեզ ու ձեր շրջապատի մարդկանց Աստծո Էներգիայով՝ Լույսով, կա՛մ սոսկ Աստծո Էներգիայի սպառողներ եք:

Երբ Լույս կրող երկու անհատներ հանդիպում են միմյանց, ապա նրանք Աստծո Էներգիա են փոխանակում և մեկմեկու հարստացնում: Աստծո Բոցի ամեն մի դրսևորումն առանձնահատուկ է: Եվ մարմնավորման մեջ գտնվող աստվածային բոցերի փոխազդեցությունը հանգեցնում է փոխադարձ հարստացման:

Ըստ այդմ՝ ինչպես ամեն մի անհատի, այնպես էլ ամբողջ մոլորակի համար լավ կլինեք, եթե մոլորակի վրա հայտնվեին կղզյակներ, որոնցում իրար գտնեին ու հաղորդակցվեին այն մարդիկ, ովքեր հոգաձու սրտեր ունեն, հոգ են տանում ոչ միայն իրենց ու իրենց մերձավորների մասին, այլ

նաև Երկրի վրա բնակվող բոլոր կենդանի էակների մասին: Նրանց հաղորդակցությունը կհանգեցնե՞ր Աստծո էներգիայի ներհոսքի ուժեղացմանը դեպի ֆիզիկական աշխարհ:

Իսկ այն վայրերը, որտեղ կգերակշռե՞ր բացասական էներգիան, որը տարածվում է այն մարդկանց կողմից, ովքեր կենտրոնացած են միայն իրենց վրա, ժամանակի ընթացքում կվերածվե՞ին այնպիսի մարդկանց բորոտանոցի, ովքեր տառապում են գիտակցության անաստվածությամբ:

Մոտակա ժամանակներում տեղի կունենա Երկրի բնակչության գտում: Մարդիկ, որոնց սրտերում ներկա է Աստված, կձգտեն միավորվել իրենց նմանների հետ: Նոր բնակավայրեր կհիմնվեն, որտեղ կապրեն այդպիսի մարդիկ: Եվ քանի որ ամեն մարդ ազդում է իր շրջապատի ամեն ինչի վրա, ապա նման բնակավայրերի լուսաբացը կհիշեցնի Ոսկեդարը: Դա կլինի Ոսկեդարի տեղայնացումը: Եվ այն բանից կախված, թե որքան հաջող կընթանա այդ շինարարությունը, կորոշվի այն, թե ինչ արագությամբ կընթանան Երկրի վրայի փոփոխությունները:

Փոքր տարիքում հայտնվելով բարենպաստ միջավայրում՝ մարդը կկարողանա ընկալել այն վարվելակերպերն ու բարոյական նորմերը, որոնք բնորոշ կլինեն նման բնակավայրերին:

Ապագայի այդ քաղաքները պետք է սկսեն ի հայտ գալ մոլորակի վրա: Ձեզնից յուրաքանչյուրը կարող է նախաձեռնություն հանդես բերել և ստեղծել այդպիսի բնակավայր: Դուք գիտեք, որ աղոթքի ամենալավ ձևը գործեր կատարելն է: Ուստի եթե ձեր մեջ ուժ ու ցանկություն եք գտնում, ապա դրսից որևէ հրամանի մի՛ սպասեք: Գործի անցեք ու կառուցե՛ք:

Օգտագործե՛ք մոլորակին ընձեռված հնարավորությունը:

Ես ուրախ կլինեմ, եթե մեր առաջարկներն արձագանք գտնեն ձեր սրտերում:

Այն ամենը, ինչ Աստուծոց է, այն ամենը, ինչ մարդկանց մղում է դեպի Աստված, կօժանդակվեն ու կդրսևորվեն ձեր աշխարհում: Իսկ այն, ինչն իր իսկ ընտրությամբ հեռանում է Աստծուց, կարժանանա իր սխալ ընտրության պտուղներին: Այնուհանդերձ յուրաքանչյուր մարդ և յուրաքանչյուր կենդանի արարած միշտ հնարավորություն ունի վերադառնալու աստվածային Ուղու վրա:

Պարզապես որոշ մարդկային անհատների դեռևս անհրաժեշտ է դասեր քաղել: Երկիր մոլորակի Բարեշնորհանքը յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ստանալու իր դասերը և յուրաքանչյուրի առջև բացում է աստվածային զարգացման հեռանկարներ:

Այժմ ես ձեզ խնդրում եմ խորանալ ձեր սրտերի մեջ ու խորհրդածել: Ինչո՞վ եք կապված ձեր սովորական միջավայրին: Ի՞նչն է ձեզ ստիպում տարիներով կառչած մնալ վարվելակերպի այն կարծրատիպերին, որոնք ինքնե՛րդ եք ձեզ պարտադրել: Ի՞նչն է, որ սահմանափակում է ձեր ազատությունն ու Աստվածայինի դրսևորումը:

Արդյոք այդքան կարևո՞ր է այն ամենը, ինչ խանգարում է ձեր զարգացմանը, և ժամանակը չե՞ արդյոք դեռ նետելու ձեր բոլոր մանր-մունր եսասիրական կապվածություններն ու նվիրաբերելու համայն գոյին՝ փոխարենը ստանալով անսահման խաղաղվածություն և սպասավորության անսահման բերկրանք:

Ձգտեցեք ձեր գիտակցության մեջ վերլուծել այն ամենը, ինչ խանգարում է ձեր ներքին ազատության ձեռքբերմանն ու դեպի բարձունքները, դեպի աստվածային լեռնագագաթները ձեր մղվելուն:

Միայն ինքնե՛րդ եք սահմանափակում ձեզ և միայն ինքնե՛րդ եք խանգարում ձեր աստվածային որակների դրսևորմանն ու ձեր աստվածային առաքելությունն ի կատար ածելուն:

Թույլ տվեք, որ Աստծո էներգիան դուրս ժայթքի ձեր էության միջից, և այն իր ճանապարհին կքշի-կտանի բոլոր այն մանր ու մեծ խոչընդոտները, որոնք հանդես են գալիս ձեր էգոյի, ձեր վախերի, սահմանափակումների ու դոգմաների տեսքով:

Հանձնվեք բարեփոխումների քամուն և մի՛ վախեցեք մրսելուց ու հիվանդանալուց:

ԵՄ ԵՄ Հատթանա Բուդդան՝ ձեր նկատմամբ հավատով լի...

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
27 ապրիլի, 2006 թ.

Մենք խնդրում ենք ձեզ, որ ձեր կյանքերում գործեք ձեր ստացած գիտելիքներին և ուսմունքներին համապատասխան

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել, որպեսզի խրատներ տամ ձեզ և լուրեր հաղորդեմ եթերային օկտավաներից: Իսկ այդ լուրերն անհամեմատ ավելի ուրախալի են, քան այն տեղեկությունները, որոնք մենք հաղորդում էինք մեր թեղադրությունների ձմեռային շրջանում: Որորվհետև հենց ինքը՝ երկրի

վրայի իրադրությունն է փոխվում դեպի լավը, և այդ փոփոխությունները մեզ ուրախացնում և հուսադրում են:

Ընդամենը մի քանի ամիս առաջ Երկրի գործերի վիճակի համար մեր անհանգստությունն այնքան նշանակալից էր, որ մենք չէինք կարող բաց թողնել ոչ մի հնարավորություն, որ մեր դեսպանորդի միջոցով ձեզ նախագգուշացնենք բարդ իրադրության մասին: Իսկ այժմ ես եկել եմ, որպեսզի, հնարավորությունից օգտվելով, հայտնեմ ձեզ այն մասին, որ Երկրի իրավիճակը բավականաչափ լավացել է, և այն փոփոխությունները, որոնք ընդամենը մի քանի մարդկանց գիտակցության մեջ են տեղի ունեցել, տարածվելով հիրավի տիեզերական արագությամբ, հասնում են շատ մարդկանց, ովքեր գտնվում են երկրագնդի տարբեր վայրերում: Մենք անչափ ուրախ ենք, որ մեզ հաջողվեց մեր դեսպանորդի միջոցով այդպես արագորեն տարածել մեր տեղեկատվությունը՝ օգտվելով համացանցից և այն նվիրյալ ու անշահախնդիր սրտերից, ովքեր շատ բան գոհաբերեցին, որպեսզի հնարավորին չափ շատ մարդկանց համար հնարավորություն ստեղծեն ծանոթանալու այս թելադրություններին: Մենք նաև շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր թարգմանեցին մեր ուղերձներն աշխարհի այլ լեզուներով: Հիրավի, Երկնոլորտները երջանիկ են գործերի այսպիսի վիճակով:

Նորագույն պատմության ընթացքում դեռևս երբեք ֆիզիկական աշխարհի հաղորդվող մեր տեղեկատվությունն այսպիսի մեծ արագությամբ չէր տարածվել:

Իսկ դա մեզ համար նոր հնարավորություն է բացում և ձեզ թույլ է տալիս թարմ տեղեկատվություն ստանալ մեր աշխարհից: Հիրավի, Աստծո ողորմածությունը սահման չունի: Եվ երբ Երկնքի հետ համագործակցության մեջ են մտնում մարմնավորման մեջ գտնվող նվիրյալ աշխատակիցներ, ապա մենք այսպիսի կարճ ժամանակահատվածում այնպիսի նշանակալի փոփոխությունների ենք հասնում: Հիրավի, ձեռք բերված նվաճումները համեմատելի են դառնում գիտակցության խոյանքի և օկտավաների միջև էներգետիկական ժայթքման հետ:

Ուստի ես այսօր եկել եմ, որպեսզի շնորհակալություն հայտնեմ ձեզնից յուրաքանչյուրին, ով արձագանքեց մեր կոչին և ոչ միայն իր գիտակցությունը փոխեց, այլ նաև նպաստեց, որ մեր տեղեկատվությունը հնարավորին չափ մեծ տարածում ստանա ֆիզիկական օկտավայում:

Իսկ այժմ ես կուզենայի ձեզ մի ոչ մեծ խրատ տալ, որն առնչվում է Երկիր մոլորակի ընթացիկ իրավիճակին:

Նախկին թելադրություններից ձեզ հայտնի է, թե որքան ծանր էր էներգետիկական իրավիճակն անցած տարվա վերջին: Հիրավի, հսկայական ջանքեր պահանջվեցին, որպեսզի պահպանվի հավասարակշռությունը և թույլ չտրվի հերթական ավերիչ արհավիրքը: Այժմ մենք կայուն կերպով պահպանում ենք մոլորակի համակշռությունը: Սակայն թուլանալու և հաղթանակ տոնելու հնարավորություն դեռևս չկա: Քանզի որքան մեր հաջողություններն ու նվաճումները նշանակալից են լինում ու ընթանում արագ տեմպերով, այնքան ավելի մեծանում է այն ուժերի ընդդիմությունը, որոնք դեմ են փոփոխություններին և չեն ողջունում բարեփոխումները:

Ըստ այդմ՝ թուլանալու առիթ չկա: Եվ առաջվա պես պահանջվում են ձեր բոլոր ջանքերն ու ունակությունները, որպեսզի չփոքրանա մեր ուղերձների, մեր տեղեկատվության ու մեր էներգիայի տարածման արագությունը: Պատկերացրեք ձնահյուսք, որն անընդհատ մեծացնում է իր զանգվածը՝ ավելի ու ավելի մեծ ծավալ գրավելով: Բայց, որպեսզի դա տեղի ունենա, անհրաժեշտ է կայուն ջանքերով հրել ու պտույտ հաղորդել այդ ձնահյուսքին:

Ուստի ես խնդրում եմ ձեզ կանգ չառնել և գործել ձեր սրտերի խոյանքի թելադրանքով: Մի՛ թողեք, որ բռնկված կայծերը մարեն: Մշտապես վերընթերցե՛ք մեր թելադրությունները, հատկապես դրանցից նրանք, որոնք ֆիզիկական ոլորտում ձեր գործունեության ընթացքում ձեզ ուժ ու եռանդ են տալիս:

Մենք նույնիսկ չենք խնդրում, որ աղոթքներ կարդաք, այլ խնդրում ենք, որ ձեր կյանքերում գործեք մեզնից ստացած գիտելիքներին ու ուսմունքներին համապատասխան: Այժմ առաջին պլանում է կոնկրետ գործողությունների անհրաժեշտությունը: Դուք կարող եք զգալ, թե ինչպես է մեր ուղերձներում պարունակվող էներգիան տառացիորեն ձեզ կոնկրետ գործողությունների մղում ֆիզիկական ոլորտում: Ծատ կարևոր է ձեր ջանքերի ճիշտ գործադրումը: Թույլ մի՛ տվեք, որ մեզ հակադիր ուժերը ձեզ ներքաշեն անպտուղ քննարկումների ու բանավեճերի մեջ: Դատարկ խոսակցությունների ու վիճաբանությունների ժամանակ այլևս չկա: Դուք պետք է ֆիզիկական ոլորտի ձեր կոնկրետ գործողություններով Երկնքին ցույց տաք, թե որքանով եք յուրացրել այն դասերը, որոնք մեր դեսպանորդի միջոցով ձեզ տվել ենք վերջին տարվա ընթացքում: Մենք գոհ ենք մեր Ուսմունքի տարածման տեմպերից, բայց գոհ չենք նրանից, որ առաջվա պես շատ քիչ կոնկրետ գործողություններ եք ձեռնարկում ֆիզիկական ոլորտում: Մենք սպասում ենք ֆիզիկական ոլորտը կերպավորելուն միտված ձեր գործողություններին: Անաստված ամեն ինչը

պետք է ընդմիշտ հրաժեշտ տա ձեր հեռուստաէկրաններին, չքվի ձեր խանութների դարակներից, ռադիոներից, համացանցից:

Դուք չեք կարող պայքարել անաստված դրսևորումների դեմ, բայց կարող եք այդ անաստված դրսևորումները փոխարինել աստվածային կերպերով: Դուք գործում եք նույնիսկ այն դեպքում, երբ հրաժարվում եք դիտել անաստված հաղորդումները, ֆիլմերը, չեք մասնակցում այն բացասական դրսևորումներին, որոնք դեռևս հատուկ են ձեր աշխարհին: Դրանով հանդերձ՝ դուք այլևս կարմա չեք ստեղծում և ձեր ճիշտ ընտրությամբ բեռնաթափում եք անցյալի կարման, ինչպես նաև ձեր ճիշտ գործողություններով օրինակ եք ծառայում շրջապատի մարդկանց, հասկապես երիտասարդությանը:

Թող ձեզ չմտահոգի այն, որ ինչ-որ մեկն ինչ-որ բան այնպես չի անում ինչպես պետք է: Ինքնե՛րդ ցույց տվեք, թե որն է ճիշտը: Մեղադրելը միշտ էլ հեշտ է: Բայց երբ մեղադրում եք, կարմա եք ստեղծում և բազմապատկում պատրանքը: Իսկ այն դեպքում, երբ ձեր էներգիան ուղղորդում եք համաձայն Աստվածառաջնորդության սկզբունքների, ապա բարի կարմա եք ստեղծում և հետ հավաքում պատրանքը:

Ուստի ես այսօր եկել եմ ձեզ հիշեցնելու, որ ձեզնից յուրաքանչյուրը մարմնավորումից առաջ իր վրա որոշակի պարտավորություններ է վերցրել: Այժմ բարենպաստ հնարավորություն է ստեղծված, որ կյանքի կոչեք ձեր առաքելությունը: Դիմե՛ք ինքներդ ձեզ, սուզվե՛ք ձեր սրտի խորքը և փորձեք հասկանալ, թե ձեր հոգին ինչ պարտավորություններ է վերցրել մարմնավորումից առաջ:

Պետք է կարողանաք հիշել ձեր պարտավորությունները:

Եթե դուք աշխատում եք երեխաներին ու երիտասարդությանը կրթելու ասպարեզում, ապա ամենայն հավանականությամբ ձեր պարտավորություններից է այն, որ մատչելի մակարդակով աճող սերնդին գիտելիք տաք համայն տիեզերքում գործող Օրենքի և Աստծո բարոյական Օրենքի վերաբերյալ:

Եթե դուք հաջողակ գործարար եք, ապա հնարավոր է, որ եկել է ժամանակը, որ ճիշտ տնօրինեք ձեր վաստակած փողերը և, փոխանակ ընկնելու անպետք իրեղենի ու հանույքների հետևից, ձեր դրամը ներդնեք երեխաների, երիտասարդության ու նրանց ծնողների համար ուսումնական կենտրոն հիմնելու գործում կամ կառուցեք բնակավայր, որը հիմնված լինի նոր սկզբունքների վրա և գերծ լինի ձեր հասարակությանը բնորոշ բացասական թրթիռներից ու գործոններից:

Այսպիսով, միայն ձեզնից է կախված կառուցողական աստվածային գործունեություն սկսելը: Ոչ ոք ձեր փոխարեն չի իրականացնի ձեր վերցրած պարտավորությունները: Բայց մենք խոստանում ենք ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը: Միայն թե խնդրե՛ք այդ օգնությունը և մի՛ երկնեք մեզ դիմել ձեր աղոթքներով ու նամակներով:

Երկնքի ու ֆիզիկական ոլորտի համագործակցությունը դեռ նոր է սկսվում, և շատ շուտով դուք կհամոզվեք, թե որքան արդյունավետ կարող է լինել մեր այդ համագործակցությունը:

Վերջում ես կուզենայի ձեզ փոխանցել իմ Հավատի ազդակն ու իմ վստահությունը ձեր նկատմամբ, որ դուք ձեր պարտավորությունները կկատարեք առավելագույն արդյունավետությամբ:

*ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝
ձեր նկատմամբ Միբով ու ձեր հաջողության Հավատով լի...*

Վեհապետ Կուրծիումի
28 ապրիլի, 2006 թ.

Միայն այն դեպքում եք դուք գործում Օրենքով, երբ այն գտնում եք ձեր սրտի խորքում

ԵՄ ԵՄ Կուրծիումին՝ կրկին ձեզ այցի եկածը:

Մեր նախորդ հանդիպումից հետո անցել է մի քանի ամիս, և այսօր ես անասելի ուրախ եմ մեր նոր հանդիպման առիթով, քանի որ այն տեղի է ունենում ավելի բարենպաստ պայմաններում, ուստի և կարող եմ ձեզ փոխանցել մի Ուսմունք, որը հնարավոր չէր տալ նախկինում: Ուսմունքն այն մասին է, թե ինչպե՛ս պետք է ընկալեք կյանքը և այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ձեր կյանքում: Ավելի վաղ այս Ուսմունքը ձեզ համար ժամանակավրեպ կլիներ: Բայց հիմա ավելի ու ավելի շատ մարդիկ են մտորում իրենց շրջապատող կյանքի և այն մասին, թե ինչպես վերաբերվել դրան: Ծրջակա կյանքի ու դրա հանգամանքների նկատմամբ այդ նոր հայացքը հնարավոր դարձավ պատրանքի հետհավաքման Ուսմունքը ստանալուց հետո, որը տրվեց մեր դեսպանորդի միջոցով: Դրա շնորհիվ ենթագիտակցաբար դուք սկսեցիք այլ կերպ

վերաբերվել շրջակա ամեն ինչին և մտորել այն մասին, թե ինչպես եք ձևավորում ձեր կյանքի հանգամանքները և ինչ ազդեցություն եք գործում այն ամենի վրա, ինչը շրջապատում է ձեզ ֆիզիկական աշխարհում:

Դա նոր աշխահայացք է, և այն բանին զուգընթաց, որ է՛լ ավելի շատ մարդիկ կգիտակցեն, որ շրջակա աշխարհն իրենից ներկայացնում է հսկայական պատրանք, և որ այդ պատրանքի դրսևորումը լրիվ ու ամբողջապես պայմանավորված է մարդկության հավաքական գիտակցությամբ, դուք ավելի գիտակից ձևով կվերաբերվեք ձեր մտքերին, զգացմունքներին ու արարքներին: Քանզի հենց դուք եք արարում այն ամենը, ինչ ձեզ շրջապատում է, ինչպես նաև ձեր կյանքի բոլոր հանգամանքները: Եվ այն, որ ձեր գիտակցության մեջ տեղի ունեցած փոփոխությունները չեն շտապում իրենց դրսևորումը գտնել ֆիզիկական աշխարհում, պարզապես պայմանավորված է մատերիայի իներտությամբ՝ այն բանի անհնարինությամբ, որ դրանք ակնթարթորեն իրենց նոր տեսքով կանգնեն ձեր առաջ: Արգելակող գործոն է նաև այն, որ մարդկանց մեծ մասի գիտակցությունը դեռևս չի արթնացել և չի կարող այնպիսի վճռորոշ դեր խաղալ, ինչպես նրանցը, որոնք արդեն սկսել են գիտակցել Աստծո Օրենքների առկայությունը և փորձում են իրենց կյանքերում առաջնորդվել դրանցով:

Ուստի ձեր և համայն մարդկության շահերից է բխում Ուսմունքի և այն Գիտելիքների ավելի լայն տարածումը, որոնք ստանում եք մեր ուղերձներից: Արդեն նկատած կլինեք, որ մատուցվող տեղեկատվությունն այնքան էլ շատ չի տարբերվում այն հիմնադրույթներից, որոնք ընկած են համաշխարհային կրոններից շատերի հիմքում: Այնուամենայնիվ մի փոքր տարբերություն կա՝ կապված այն բանի հետ, որ մենք ձեզ ուղղորդում ենք դեպի անհատական ներքին Ուղին, ձեր սրտի միջոցով աշխարհը ճանաչելու Ուղին: Քանզի սովորաբար դուք հակված եք լինում չվստահելու դրսից ձեզ հասած ցանկացած գիտելիքի: Իսկ երբ դուք ունակ եք դառնում տեղեկատվություն ստանալու հենց ձեր ներսից, միանգամայն այլ կերպ եք ընկալում այն: Եվ նույնիսկ եթե ներսից ստացած գիտելիքները կարծես ձեզ համար ոչ մի նոր բան չեն պարունակում, միևնույն է, դրանք այլ կերպ են բեկվում և այլ կերպ են արձագանք գտնում ձեր գիտակցության մեջ: Տեղեկատվության ընկալման տարբեր աստիճաններ կան: Երբ արտաքին գիտակցությամբ դուք կարծիք եք կազմում, որ այսինչ բանն արդեն գիտեք և այդ մասին նախկինում լսել էիք, ապա դա դեռևս չի նշանակում, որ դուք ձեր սրտով զգացել եք այդ տեղեկատվությունը կամ այդ Ուսմունքը և ճանաչել եք այնպես, ինչպես երբ միասնական եք դառնում այս Գիտելիքի և Ուսմունքի հետ: Քանզի միայն այն դեպքում եք դուք դառնում որևէ Ուսմունքի կրող, երբ միասնական եք դառնում այդ Ուսմունքի հետ: Եվ ձեր կյանքն անխզելիորեն կապում ու ենթարկում եք այն Օրենքին, որն ընդունում եք ձեր ամբողջ էությանմբ:

Աստծո Օրենքի ճանաչման տարբեր աստիճաններ կան, և միայն այն դեպքում եք դուք գործում Օրենքով, երբ այն ստանում եք ձեր սրտի խորքից և ունակ եք դառնում առանց խոսքերի ու առանց գործողության ազդել շրջակա կյանքի վրա: Հենց միայն ձեր ներկայությունն ազդեցություն է գործում շրջապատի իրավիճակի վրա: Դուք պարզապես երանության ու խաղաղվածության վիճակում ներխուժում եք, և ձեր շուրջը կյանքը փոխվում է, ինչպես կախարդանքով:

Դա նվաճումների շատ բարձր մակարդակ է, որին բոլորդ պետք է ձգտեք հասնել: Սակայն, որպեսզի ձեր աշխարհում դուք կարողանաք հայտնվել նման խոր ներխուժման վիճակում, պետք է հոգաք դրա համար համապատասխան պայմաններ ստեղծելու մասին: Ձեր քաղաքներն ու նույնիսկ ավելի քիչ բնակեցված բնակավայրերն այնքան մեծ քանակությամբ բացասական էներգիա են պարունակում, որ և՛ ձեզ համար է դժվար լինում կապվել ձեր իսկ Բարձրագույն մասի հետ, և՛ մեզ համար է դժվար լինում մոտենալ ձեր գիտակցությանը, որը մշտապես ծածկված է լինում բացասական էներգիաների գրահով: Ուստի մենք կրկին ու կրկին ձեր ուշադրությունը հրավիրում ենք այն պայմանների վրա, որոնցում ապրում եք: Դուք պետք է փորձեք մեկուսանալ, ջանքեր գործադրել, որպեսզի որոշ ժամանակով գտնվեք այնպիսի վայրերում, որտեղ կկարողանաք վերականգնել ձեր էներգիան: Այն դեպքում, երբ ձեր ներսում ձեռք կրերեք աստվածային վիճակի նմուշօրինակ, ապա կիմանաք, թե ինչին ձգտեք, և ինքներդ արդեն կսահմանափակեք այն բացասական էներգիաների ազդեցությունը, որոնք այդքան առատորեն սփռված են ձեր աշխարհում: Որպեսզի Ուղուց չշեղվեք, մենք ձեզ հնարավորություն ենք տալիս ձեր թրթիռները համեմատելու Երկրի վրա մարմնավորման մեջ գտնվող մեր ներկայացուցչի թրթիռների հետ: Մենք ձեզ համար փրկարար ճոպան ենք նետում, և միայն ձեզնից է կախված՝ կօգտվե՞ք արդյոք մեր օգնությունից, թե՞ ոչ:

Բոլոր ժամանակներում եղել են մարմնավորվածներ, որոնց թրթիռներն իրենց մաքրությամբ մոտ են եղել աստվածայինին: Ձեր մեջ ևս կան այդպիսի մարդիկ: Եվ, եթե ձեր աչքերը բաց լինեին, և ականջներն էլ լսեին, ապա ամեն օր ձեր երախտագիտությունը կհայտնեիք Աստծուն, որ Նա ձեզ

մոտ է առաքում իր մարմնավորված սուրիանդակներին: Սակայն դուք նրանց կողքով անցնում և նույնիսկ ուշադրություն չեք դարձնում:

Ուստի ձեր առաջին պարտքը պետք է լինի այն, որ ձեր շրջապատի մարդկանց մեջ նկատեք Աստծո դրսևորումը և օգնեք նման մարդկանց, քանի որ նրանք կամավորապես իրենց վրա են վերցրել ձեր կարմայի բեռի զգալի մասը:

Արևելքում շատ տարածված է ակնածանքը սրբերի, յոգերի նկատմամբ, որոնք հատուկ մարմնավորվել են, որպեսզի իրենց վրա վերցնեն մարդկանց կարման և այն բեռնաթափեն: Արևմուտքում ևս կան մարմանավորվածներ, որոնք ձեր աշխարհից չեն և իրենց վրա կրում են ձեր կարմայի բեռը: Սովորեք երախտապարտ լինել այդպիսի մարդկանց: Միշտ չէ, որ նրանք կարողանում են հարմարվել ձեր հասարակության պայմաններին, քանի որ նրանց տեսակետից ձեր հասարակությունը նման է գժանոցի: Սակայն ինքներդ եք շտապում սրբերին գժի տեղ դնել: Շուռ եկած է ձեր աշխարհը. անարժաններն ամեն ինչ ունեն, իսկ նրանք, ովքեր շալակել են մարդկության բեռը, մի կերպ քարշ են տալիս իրենց գոյությունը: Ի դեպ, նորագույն պատմության ողջ ընթացքում միշտ էլ այդպես է եղել:

Ձեր աշխարհը, այո՝ շուռ տված աշխարհ է: Եվ այնժամ, երբ դուք կսովորեք ձեր աշխարհում ճանաչել Աստծո դրսևորումը և ձեր գիտակցությունից կտարանջատեք ամեն մի անաստված դրսևորում, իրապես կկարողանաք ազդել ձեզ շրջապատող աշխարհի վրա և այն ենթարկել ձևափոխության:

Բայց նախ անհրաժեշտ է, որ ձեր իսկ ներսում սովորեք ճանաչել Աստծո դրսևորումը: Այնուհետև դուք կկարողանաք, ըստ թրթռանքի, տարածությունից դեպի ձեզ քաշել Աստծո նմանատիպ դրսևորումներ: Եվ աստվածային կոզյակները կընդլայնվեն ու կբազմանան ձեր աշխարհում: Իսկ մենք կկարողանանք ձեզ այցելել սկզբում թանձր մարմիններով, այնուհետև՝ ավելի քիչ թանձրությամբ մարմիններով: Եվ կիրականանա այն մարգարեությունը, թե Համբարձյալ Վեհապետները կշրջեն ձեր մեջ, և դուք կհաղորդակցվեք նրանց հետ:

Միայն և միայն ձեզնից է կախված, որ այդ մարգարեությունն իրականություն դառնա հենց ձեր ժամանակներում:

Ստեղծել՝ք աստվածային կոզյակներ և գոնե որոշ ժամանակով տեղափոխվեք այնտեղ:

ԵՄ ԵՄ Կոյթոնումին

Տեր Մայտրեյա
29 ապրիլի, 2006 թ.

Պարզաբանումներ աշակերտելու Ուղու վերաբերյալ

ԵՄ ԵՄ Մայտրեյան՝ կրկին ձեզ այցի եկածը: Եվ, ինչպես միշտ, ես եկել եմ, որպեսզի ձեզ խրատեմ ձեր Ուղու վրա: Իսկ ձեր Ուղին, ինչպես դուք արդեն հասկացել եք իմ նախորդ թելադրություններից, սերտորեն կապված է Ձեռնադրումների Ուղու հետ: Այդ Ուղին ձեր Տունդարձի՝ Աստծո մոտ տանող, ամենակարճ ճանապարհն է: Եվ եթե դուք դեռևս կասկածում եք դրան և հոռետեսորեն եք ընկալում այս շրջանի թելադրություններով ձեզ տրվող խրատները, ապա, ինչ արած, դա ձեր ընտրությունն է, և ձեր ժամը դեռ չի հասել: Դուք իրավունք ունեք էլի՝ թրև գալու ձեր պատրանքի մեջ և փորձելու ձեր ֆիզիկական աշխարհից էլի՝ հաճույքներ ստանալ: Սակայն ամեն մի նոր մարմնավորման հետ դուք ավելի ու ավելի քիչ հաճույքներ կգաք, քանի որ ձեր հոգիները գալիս են այդ աշխարհ, որպեսզի գտնեն Ուղին, այնինչ դուք դեռևս շարունակում եք ձեր գոյության իմաստը փնտրել ձեր սահմանափակ աշխարհի ներսում՝ չկամենալով բարձրացնել ձեր գիտակցությունն ու վեր նայել, դիմել Աստծուն և տեսնել ձեր աշխարհի սահմանափակությունը: Դուք գտնվում եք ձեր գիտակցության սահմանափակումներով ստեղծված բանտում: Եվ ձեր զննանի պատերը միայն ինքնե՛րդ կարող եք խորտակել: Ես այդ գործում կարող եմ ձեզ օգնել, եթե ինքներդ օգնության խնդրանքով դիմեք ինձ: Ես օգնում եմ միայն նրանց, ովքեր դիմում են ինձ: Եվ իմ օգնությունը կլինի այն, որ ավերեմ ձեր էգոյի և ֆիզիկական աշխարհի հետ ունեցած ձեր կապվածությունները: Ձեզնից շատերն այն իրավիճակը, որում հայտնվում են՝ սկսելով Ուղով իրենց առաջընթացը, ընկալում են որպես ամեն ինչի փլուզում: Դուք տեսնում եք, թե ինչպես են մեկը մյուսի հետևից փլվում ձեր կարծրատիպերն ու կապվածությունները, իսկ ձեր էգոն երերում է այդ փորձություններից և փորձում ներշնչել ձեզ, որ ընթանում եք սխալ ճանապարհով, որ դեպի Աստված տանող Ուղին միայն երանություն ու հանգստություն պետք է պարունակի: Այո՛, դուք իրոք գնում եք դեպի երանություն ու հանգստություն, սակայն որպեսզի հասնեք խաղաղվածության վիճակի, դուք պետք է հրաժարվեք

այն ամենից, ինչը խոչընդոտում է ձեր առաջընթացը և ձեզ ստիպում նորից ու նորից գալ այդ աշխարհն ու տառապանքներ կրել:

Ձեր աշխարհում տառապանքներն ու գիտակցության վերամբարձ վիճակն այնպես են միահյուսված ու խառնված իրար, որ երբեմն դուք ձեր կյանքում ոչինչ ի վիճակի չեք լինում հասկանալու: Եվ ես ձգտում եմ, որ պոկեմ ձեզ սովորական կյանքից և ստիպեմ, որ կյանքին նայեք այլ տեսանկյունից:

Այդ Ուղին անխզելիորեն կապված է էգոյի հանձնման հետ, և միաժամանակ դուք պետք է հասնեք ձեզ շրջապատող ամեն ինչի հետ Միասնության վիճակին, Աստծուն, համայն տիեզերքում գոյություն ունեցող Բարձրագույն Օրենքին հնազանդվելու վիճակին: Ձեզնից շատերի համար ամեն մի փոփոխություն, առավել ևս իմ սարսափազդու խոսքերից հետո, խոչընդոտ է դառնում, դուք վախ եք գգում և չեք ուզում ընդունել այն պայմանները, որոնք մենք առաջարկում ենք: Դե ինչ, քանի որ դուք վախ եք գգում, ապա առաջին բանը, որ պետք է անեք, այդ վախից ձերբազատվելն է: Դա նման է այն վախին, որը դուք գգում եք, երբ անցնում եք այլ աշխարհ: Դա այն է, ինչին ձեր լեզվով մահ եք անվանում: Իսկ ես ձեզ ասում եմ, որ իրական մահը ձեզ համար ձեր աշխարհում անմիտ գոյության վիճակն է և ձեր աշխարհի հետ ունեցած կապվածություններին կառչած մնալը: Քանզի այդ դեպքում է միայն, որ դուք իրապես մեռնելու վտանգի եք ենթարկում ձեզ: Սարսափելի չէ, երբ դուք փոխում եք ձեր մարմինը, առավել ցավալի է այն, որ կորցնում եք ձեր հոգին:

Եվ դուք դա նույնիսկ չեք էլ գիտակցում, քանի որ ձեր գիտակցությունը կապված է ձեր ֆիզիկական մարմնի և այն ամենի հետ, ինչը շրջապատում է ձեզ ֆիզիկական աշխարհում: Իսկ, քանի որ այդ աշխարհը մոտ ժամանակներում կղադարի գոյություն ունենալուց, ապա, եթե ձեր գիտակցությունը չտեղափոխեք Բարձրագույն աշխարհներ, իրապես դուք նույնպես կղադարեք գոյություն ունենալուց: Դուք ընտրություն եք կատարում անցողիկի ու անանցի, ֆիզիկական աշխարհի ու իրական Աստծո աշխարհի միջև: Ամբողջապես հենց դա՝ է Ձեռնադրումների Ուղին: Եվ երբ դուք գրանցվում եք իմ Դպրոցում և սկսում եք ընթանալ Ձեռնադրումների Ուղով, պարզապես սկսում եք տեսնել ու գիտակցել, որ օր օրի ստիպված եք լինում ընտրություն կատարելու անցողիկի ու անանցի միջև: Եվ այն դեպքում, երբ կատարում եք ճիշտ ընտրություններ և ձերբազատվում հերթական կապվածությունից, դուք բերկրանք եք ապրում, անառիթ բերկրանք, որը պարուրում է ձեր ողջ էությունը: Իսկ այն դեպքում, երբ չեք կարողանում ազատվել որևէ սովորությունից կամ կապվածությունից, որին հրաժեշտ տալու ժամանակն արդեն հասել է, ապա դուք ճնշվածություն եք գգում և ձեր գոյության իմաստի բացակայություն:

Ես փոխում եմ ձեր վիճակները, և դուք անցնում եք ձեր թեստերը: Դա շատ նման է ձեր՝ կենդանիներ վարժեցնելու գործին: Ցավոք երբեմն հնարավոր չի լինում ուղղակիորեն ազդել ձեր գիտակցության վրա, և մենք ստիպված ենք լինում ազդել ձեր վիճակների միջոցով: Այդպիսով դուք հնարավորություն եք ստանում Ուղով առաջ գնալու և հասկանալու, թե ո՞ր ուղղությամբ եք շարժվում:

Ձեզնից շատերը սպասում են, որ անձամբ ես կամ իմ դեսպանորդը զանք և հատուկ հայտներն իրենց, որ ընդունվել են իմ Դպրոցը, և իրենց սպասվում է հերթական քննությունը կամ թեստը: Հավատացե՛ք ինձ, դուք բոլորդ վաղուց արդեն գտնվում եք իմ քննախույզ հայացքի տակ և անցնում եք ձեր դասերը՝ գտնվելով սովորական կյանքի պայմաններում: Ձեր արտաքին հանգամանքներն ու այն մարդիկ, որոնց հետ հանդիպում եք, ձեզ համար հենց ամենալավ թեստերն ու ամենալավ քննություններն են:

Ուստի մի՛ մտահոգվեք, թե ձեզ տեղյակ չեն պահել առ այն, որ դուք ընդունվել եք իմ Դպրոցը: Այդ մասին կիմանաք, երբ դրա կարիքը կլինի: Սակայն ձեր կյանքի բոլոր կորուստներն ու տհաճությունները դուք պետք է ընկալեք որպես իմ կողմից տրված թեստ: Դուք ձեռնադրումներ եք անցնում և փոխադրվում դասարանից դասարան այն դեպքում, երբ ճիշտ ընտրություններ եք կատարում և ճիշտ եզրահանգումներ անում թեստերի արդյունքում:

Ըստ այդմ, մի՛ ձգտեք վկա դառնալ ինչ-որ գերբնական փորձի: Ձեր կյանքում դուք հանդիպում են հատկապես այնպիսի իրադրությունների, որոնց կարիքը կա, որպեսզի ձերբազատվեք ձեր որևէ կապվածությունից կամ անկատարությունից: Իսկ քանի որ ձեր բոլոր կապվածություններն առնչվում են առօրեական բաների հետ, ապա էլ որտե՞ղ, եթե ոչ սովորական կյանքում, դուք պետք է սկսեք ձերբազատվել ձեր կապվածություններից:

Շատ հեշտ է ազատվել ձեր վնասակար սովորություններից, եթե գտնվում եք դրան նպաստող միջավայրում: Իսկ դրանցից ազատվել, երբ շատ են գայթակղությունները. ահա դա է ամենադժվարին ձեռնադրումը, և անցյալի ոչ մի Գաղտնի Ծեսերի Դպրոց չէր կարող ձեզ առաջարկել նման դժվարին թեստ:

Ուստի զննե՛ք ինքներդ ձեզ ու ձեր արձագանքները ձեր կենսական իրադրությունների ընթացքում, որոնցում ամեն օր հայտնվում եք: Եվ երբ կանգնեք բոլոր անհրաժեշտ քննությունները, դուք այնքան մաքրված կլինեք ձեր կապվածություններից, որ կկարողանաք տեսնել ինձ ու հանդիպել ինձ հետ: Ահա հենց այդ ժամանակ էլ դուք առաջին անգամ կիմանաք, որ սովորել եք իմ Դպրոցում և հաջողությամբ ավարտել այն:

Դա նման է այն բանին, երբ դուք հեռակա ուսուցում եք անցնում՝ ապրելով ձեր բնակավայրում, իսկ երբ հասնում է ժամը, գնում և ստանում եք ձեր դիպլոմը:

Արդ, ձեզնից նրանք, ովքեր նամակ են գրել և հրեշտակների միջոցով ուղարկել ինձ, արդեն իսկ համարվում են իմ Դպրոցի սան: Բայց եթե դուք առաջվա պես անգիտակից ձևով վերաբերվեք այն իրադրություններին, որոնք ձեր կյանքում ձեզ հանդիպում են, և դրանցից չանեք համապատասխան եզրակացություններ, ապա ես այլևս չեմ կարողանա ձեզ ուշադրություն հատկացնել: Այսպիսով ու ծույլ աշակերտներն իմ Դպրոցում տեղ չունեն: Եվ ուրեմն ձեր ուսումնառության ժամանակը դեռ չի եկել:

Ես ասացի այն ամենը, ինչ հիմա ձեզ անհրաժեշտ էր լսել: Սակայն դա չի նշանակում, որ ես ձեզ լքում եմ, չեմ հետևի ձեզ ու չեմ խնամի մոտակա ժամանակներում: Ձգտեցեք ձեր գիտակցությունը մշտապես համալարված պահել Հիերարխիայի Ճառագայթի հետ: Քանզի այդ դեպքում մեզ համար ավելի հեշտ է լինում ձեզ հետ աշխատելն ու ձեզ առաջնորդելը: Հատկապես այն բանի համար, որպեսզի կարողանաք պահպանել ձեր կողմնորոշիչները, մենք ձեզ մոտ ենք ուղարկում մեր դեսպանորդներին: Ուստի օգտվե՛ք ողջ այն օգնությունից, որը մենք ցուցաբերում ենք:

Իսկ այժմ ես հրաժեշտ եմ տալիս ձեզ, և մինչ նոր հանդիպումներ:

ԵՍ ԵՄ Մայրություն

Վեհապետ Էլ Մորիա
30 ապրիլի, 2006 թ.

Մենք ձեզ կանչում ենք մեր Ուղով ընթանալու

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ ձեզ այցի եկածը...

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի ձեզ տեղեկացնեմ, որ մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների գարնանային շրջանը մոտեցավ իր ավարտին:

Մենք ուրախ եղանք ընձեռված հնարավորությամբ և բավարարվեցինք նրանով, որ կարողացանք տալ ձեզ այն ամենը, ինչ պլանավորված էր տալ թելադրությունների այս շրջանում: Ի տարբերություն թելադրությունների նախորդ շրջանի, որոնք մենք ձմռանը տվեցինք Այթայում, այս շրջանի թելադրություններում մենք ավելի շատ ուշադրություն հատկացրինք ձեր Ուղուն: Քանզի եկել է ձեզ ձեզ համար պլանավորված Ուղուն ձեզ հաղորդակից դարձնելու ժամանակը: Այդ Ուղին միշտ գոյություն է ունեցել, և միշտ Երկրի այս կամ այն անկյունում գոյություն են ունեցել Դպրոցներ ու Աշրամներ, որոնցում Լուսի Հիերարխիան Ուսմունք է տվել իր աշակերտներին: Հասել է այն ժամանակը, երբ մենք չհամբարձված մարդկության հետ մեր արտաքին Դպրոցների միջոցով մեր գործնական աշխատանքը վերականգնելու հնարավորություն ենք տեսնում:

Ուստի մենք ձգտում ենք տալ Ձեռնադրումների Ուղուն վերաբերող բոլոր անհրաժեշտ գիտելիքները, որպեսզի դուք կարողանաք գիտակից ընտրություն կատարել ու կանգնել Ուղու վրա:

Մյուս բազմաթիվ ուսմունքներից մեր Ուղու տարբերությունն այն է, որ մենք ձեզ առաջնորդում ենք ձեր սրտերի միջով և ձեզ հնարավորություն ենք տալիս միասնական փորձերի ու պայծառացման միջոցով հաղորդակցվելու իսկական, Իրական աշխարհին: Հնարավորություն ստանալով ձեր արտաքին գիտակցության միջոցով գիտակցելու Աստծո աշխարհի գոյությունը՝ դուք գիտակցորեն ձգտում եք ձերբազատվել այն ամենից, ինչը ձեզ խանգարում է մոտք գործելու այդ աշխարհ: Իսկ խանգարողը ձեր էգոն է և ֆիզիկական աշխարհի, այդ աշխարհի իրեղենի ու մարդկանց հետ ունեցած ձեր կապվածությունները, ինչպես նաև ձեր սովորություններն ու թերությունները: Ուստի, գիտակցորեն կանգնելով Ուղու վրա, դուք պատրաստ եք լինում շատ բան զոհաբերել, որ ստանաք ճշմարիտ գիտելիքներ: Շատ կան ուրիշ ուսմունքներ, որոնք օգտագործում են նմանատիպ գործառնություններ: Բայց առկա են և տարբերություններ: Եվ ձեր առաջնահերթ խնդիրն է գտնել այդ տարբերությունները՝ հիմնվելով ամենահուսալի կողմնորոշիչի՝ ձեր սրտի վրա:

Մենք մեր Ուսմունքը տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով: Եվ ձեզնից ամեն ոք, ով կարդում է մեր ուղերձները, արդեն հայտնվում է մեր աշակերտների արտաքին շրջանում և գուրու-սան հարաբերությունների մեջ է մտնում մեր դեսպանորդի հետ, որը մեր Հիերարխիայի ներկայացուցիչն է ֆիզիկական ոլորտում:

Ըստ այդմ, հենց որ դուք որոշում եք կարդալ մեր ուղերձները, արդեն դառնում եք մեր աշակերտները: Սակայն գուրու-սան հարաբերությունների շատ աստիճաններ կան: Եվ հաջորդ աստիճանի վրա դուք բարձրանում եք այն դեպքում, երբ գիտակից ձևով ձեր ընտրությունը կանգ է առնում մեր Ուսմունքի վրա: Ձեր գիտակցությամբ դուք ձգտում եք հասկանալ ուրիշ ուսմունքներից եղած տարբերությունը և նախապատվությունը տալիս եք մեր դեսպանորդի միջոցով տրվող Ուսմունքին: Տվյալ դեպքում դուք սահմանափակում եք ձեր ազատությունը, բայց փոխարենը ձեռք եք բերում ավելի մեծ պատկերացումներ և գիտելիքների ավելի լայն ընկալում, որը ձեզ է հասնում մեր դեսպանորդի միջոցով:

Հաջորդ աստիճանն այն է, երբ գիտակից ձևով մեր դեսպանորդին ընդունում եք որպես ձեր Գուրուի: Եվ թելադրությունների այս շրջանի ընթացքում մենք շտապեցնում էինք ձեզնից նրանց, ովքեր այդ գիտակից ընտրությունը կատարելուն և աշակերտության նոր աստիճանի վրա բարձրանալուն պատրաստ են:

Հաջորդ աստիճանն սկսվում է այն պահին, երբ դեսպանորդը ձեզ աշակերտի թեկնածու է ընտրում: Այդ աստիճանի տարբերությունը մյուսներից այն է, որ դեսպանորդը մասնակիորեն իր վրա կարմայական պատասխանատվություն է վերցնում իր աշակերտների համար: Ձեզ վիճակվող հետագա հարաբերություններն արդեն ամբողջությամբ ընկնում են դեսպանորդի տնօրինության տակ: Եվ ինքն է որոշում, թե ինչպես զարգանան այդ հարաբերությունները:

Ուստի արդեն իսկ մենք ձգտում ենք վերականգնել այնպիսի գուրու-սան հարաբերություններ, որոնք համապատասխանում են Համբարձյալ Վեհապետներին աշակերտելու հաջորդականության շղթային: Սակայն ամեն անգամ այդ հարաբերությունները կառուցվում են նոր մակարդակի վրա և որոշվում են Երկրի վրա ձևավորված պայմաններով: Մեզ պետք չեն միլիոնավոր այնպիսի հետևորդներ, որոնք միայն արտաքինապես են պարտավորություն վերցնում, բայց Ուսմունքը չեն անցկացնում իրենց սրտերով: Մենք ձգտում ենք, որ մեր աշակերտների հետ հասնենք լրիվ փոխըմբռնման ու համագործության: Իսկ մեր դեսպանորդը ձեզ համար միայն հենակի դեր է կատարում, քանի դեռ դուք չեք կարողանում ինքնուրույն շարժվել մեզ հետ ուղիղ կապի մեջ մտնելու առումով: Բայց դրանից հետո ևս մեր դեսպանորդը ձեզ անհրաժեշտ է, որ փարոս լինի ձեզ համար և ձեր կյանքի փոթորիկների ու մրրիկների ընթացքում ձեզ ցույց տա Ուղին:

Ուստի և մենք կշարունակենք խրատներ տալ թելադրությունների հաջորդ շրջանների միջոցով: Եվ խնդրում ենք ձեզ, որ իզուր ժամանակ չվատնեք և մեր թելադրություններում պարունակվող ցուցումներն ընկալեք ոչ թե որպես վերացական բաներ, այլ որպես առաջատար սկզբունքներ, որոնցով պետք է առաջնորդվեք ձեր կյանքերում:

Ես խիստ գործնական Վեհապետ եմ և չեմ սիրում ավելորդ դես ու դեն ընկնել: Ուստի ձեզ կոչ եմ անում չսպասել, որ ինչ-որ մեկը մանրակրկիտ ցուցումներ տա ձեզ, որպեսզի սկսեք գործել: Մենք տալիս ենք ընդհանուր ուղղությունը: Իսկ մանրամասները դուք պետք է անմիջականորեն ստանաք ձեր սրտից:

Եթե վերընթերցեք այն թելադրությունները, որոնք վերջին տարվա ընթացքում մենք տվել ենք մեր դեսպանորդի միջոցով, ապա կհասկանաք, որ այդ թելադրություններում պարունակվող տեղեկատվությունը միանգամայն բավարար է, որպեսզի կոնկրետ գործունեություն ծավալեք: Քանզի դուք կարող եք սկսել հենց այն իրադրությունից, որը ձեզ շրջապատում է, և այն սովորություններից, որոնք ունեք: Փորձեք սկսել ոչ թե վաղը, այլ հենց հիմա. սկզբում ձերբազատվեք ձեր այն ամենամեծ կապվածությունից, որը ձեր կյանքում ձեզ ամենաշատն է խանգարում: Դա կարող է լինել վախը, մեղադրելու ու քննադատելու ձգտումը, ծխելը կամ որևէ այլ կապվածություն կամ թերություն:

Այնուհետև կարող եք անցնել հաջորդ թերությանը, հետո՝ դրա հաջորդին: Եվ միշտ ձեր առջև ունեցեք լուծման ենթակա առաջնահերթ խնդիր: Այն լուծելուց հետո կարող եք անցնել հաջորդ խնդրի լուծմանը:

Մի՛ ձգտեք միանգամից գործունեության մեծ ծավալ ընդգրկել: Վերցրեք այնպիսի խնդիրներ, որոնք ձեր ուժերից վեր չեն:

Երբեմն շատերի համար ծխելուց հրաժարվելն ավելի դժվար է լինում, քան նույնիսկ աշրամ կառուցելը:

Մենք ձեզ կանչում ենք մեր Ուղով ընթանալու: Եվ ձեզ ասում ենք, որ ճանապարհը բաց է: Բայց ձեր ընտրությունն ինքնե՛րդ պետք է անեք. ոչ ոք ուժով չի կարող ձեզ ստիպել, որ անեք ձեր ընտրությունը:

Դուք հասուն անհատներ եք, և մեր գրույցը մենք ձեզ հետ վարում ենք ինչպես հավասար էականների հետ, ովքեր ընդամենը մի փոքր մեզնից հետ են մնացել Ուղով իրենց առաջընթացում:

Այսքանը: Ես ձեզ հրաժեշտ եմ տալիս՝ Ուղու վրա ձեզ հաջողություններ մաղթելով:

ԵՍ ԵՄ ԷՂ Մորիսան

Ուղերձների չորրորդ շրջան (հունիս – հուլիս, 2006 թ.)

Տեր Մայտրեյա
5 հունիսի, 2006 թ.

Ինքնե՛րդ ձեզ թույլ տվեք ձեր գիտակցությամբ դուրս գալ ձեր ընտանիքի, ձեր քաղաքի, ձեր երկրի շրջանակներից և ընդունել ամբողջ Երկիրը որպես ձեր հարազատ տունը

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ նորից ձեզ այցի եկածը: Այսօր ես եկել եմ Կարմայական Վարչության հանձնարարությամբ, որպեսզի ուրախալի լուր հաղորդեմ՝ կապված այն փոփոխությունների հետ, որոնք այս օրերին տեղի ունեցան Երկրում: Ձեզնից շատերի ջանքերը, որ կարողում եք մեր ուղերձները և նվիրվածությամբ ծառայում մեզ՝ ձգտելով, որքան հնարավոր է, լայնորեն տարածել մեր ուղերձներն ամբողջ աշխարհում, իզուր չանցան: Եվ Կարմայական Վարչությունը նկատի առավ ձեր այդ ջանքերը: Ձեզ հայտնի է, որ Կարմայական Վարչության նիստերը տեղի են ունենում տարին երկու անգամ՝ ամառային և ձմեռային արևադարձերի շրջանում: Սակայն հարկ է ձեզ տեղյակ պահել նաև այն մասին, որ մշտապես Կարմայական Վարչության առանձին նիստեր են տեղի ունենում նաև այդ երկու գլխավոր նիստերի միջև ընկած ժամանակահատվածներում:

Ահա ես պետք է ձեզ ասեմ, որ այսօր գիշերը տեղի է ունեցել նիստ, որին ներկա էր մեր դեսպանորդը: Եվ այդ նիստի ընթացքում մարդկության պատմության մեջ առաջին անգամ հարց բարձրացվեց մի հնարավորության մասին, որ ձեզնից նրանց, ովքեր անմիջական ու կենդանի մասնակցություն են ցուցաբերել մեր գործունեության ընթացքում՝ կապված մեր ուղերձների տարածման և դրանց թարգմանության հետ, վստահվի մասնակցության իրավունք՝ նուրբ մարմիններով ներկա գտնվելու Կարմայական Վարչության հերթական նիստին: Ձեզ հնարավորություն կտրվի, որ ինքնե՛րդ մասնակցեք ձեր անձնական կարմայի բեռնաթափման պլանավորման գործին: Կարմայական հնարավորությունների սահմաններում դուք կկարողանաք ձեր ցանկությամբ կարգավորել կարմայի բեռնաթափումը, դանդաղեցնել կամ արագացնել այդ բեռնաթափման ընթացքը ձեր կենսահոսքերի համար:

Դա օգտակար կլինի ձեր հետագա կյանքերի համար, քանզի Կարմայի Օրենքն անանձնական Օրենք է, և կարմայի բեռնաթափումը ձեր ուզենալուց կամ չուզենալուց կախված չէ: Սակայն այն բարի կարման կամ էներգիան, որը դուք ձեռք եք բերում՝ մեր ուղերձները տարածելով, կարող է օգտագործվել կարմայի բեռնաթափման գործընթացի կարգավորման և նույնիսկ կարմայական բեռի թեթևացման նպատակով:

Եվ դա մի հնարավորություն է, որը չպետք է անտեսել, քանի որ այն չհամարձված մարդկության որոշ անհատականությունների թույլ է տալիս համագործակցել Կարմայական Վարչության հետ:

Այդպիսի հնարավորություն ընձեռվում է առաջին անգամ, իսկ դա լոկ խոսում է այն մասին, որ մենք ձգտում ենք հնարավորինս լայնորեն տարածել այս Ուսմունքները և նույնիսկ գնում ենք զիջումների ու հեշտացումների, որպեսզի այս գործընթացն անցնի հնարավորին չափ բարեհաջող ու արագ:

Ձեր արտաքին գիտակցության մեջ դուք կարող եք և չիղել այն իրադարձությունների մասին, որոնք տեղի կունենան Կարմայական Վարչության նիստին ձեր գիշերային մասնակցության ընթացքում: Սակայն ձեզնից շատերն իրենց արտաքին, արթմնի գիտակցության մեջ կորսան գիշերային իրադարձությունների արձագանքները և լրիվ ճշգրիտ պատկերացում կկազմեն այն մասին, թե մոտակա ժամանակներում ինչպիսի փոփոխություններ տեղի կունենան իրենց կյանքում:

Ես ուրախ եմ, որ արտապլանային կարգով ձեզ փոխանցեցի այս կարևոր տեղեկությունը:

Եվ առավել ուրախ եմ, որ մեր դեսպանորդի՝ Նովոսիբիրսկ քաղաքում գտնվելու ընթացքում եմ տալիս այս թելադրությունը: Որոշ մարդիկ այդ քաղաքը Սիբիրի մայրաքաղաքն են համարում:

Հնարավոր է, որ հենց այդպես էլ կա:

Սակայն կարևորն այն է, որ թելադրություն տալով Նովոսիբիրսկում՝ մենք դրանով իսկ հնարավորություն ենք ստանում ամրացնելու և զորացնելու մեր ներկայությունն այդ քաղաքում:

Իրականում մեր ուղերձների յուրաքանչյուր փոխանցում ուղեկցվում է հսկայական քանակությամբ Լույսի առաքմամբ դեպի ֆիզիկական և այն նուրբ ոլորտները, որոնք իրենց թրթռանքով մոտ են ֆիզիկական ոլորտին: Դրա հետևանքով ամեն մի նոր վայրում թելադրություն ընդունելն իր օրհնությունն է բերում այն երկրին կամ այն քաղաքին, որտեղ այդ թելադրությունն ընդունվում է:

Ուստի ես ձեզ անկեղծորեն շնորհավորում եմ այդ առիթով և հուսով եմ, որ ձեր ստացած ամբողջ Լույսն ու էներգիան կօգտագործեք միայն աստվածային նպատակներով:

Այժմ ես կուզենայի հաղորդել ևս մեկ ուրախալի լուր առ այն, որ այս պահին աշխարհը պատրաստ է, որ փոփոխությունները տեղի ունենան ավելի արագ տեմպերով: Եվ այդ փոփոխությունները, որոնք արաջին հերթին վերաբերում են ձեր գիտակցության փոփոխությանը, տեղի են ունենում այնքան արագ, որքան երբևէ տեղի չեն ունեցել: Սակայն գոյություն ունի էներգիաների որոշակի անհավասարակշռություն. այն տարածաշրջանները, որտեղ կարդում են մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունները, չափազանց շատ Լույս են ստանում, և մարդկանց գիտակցությունը փոխվում է շատ մեծ տեմպերով, բայց միաժամանակ Երկրում կան ուրիշ շատ տարածաշրջաններ, որտեղ մեր ուղերձները ստանալու և կարդալու հնարավորություն չկա: Այդ տարածաշրջաններում էներգիայի անհավասարակշիռ վիճակը հանգեցնում է տարբեր տարերային աղետների և արհավիրքների դրսևորման:

Շատ ցավալի է, բայց այդպիսի տարածաշրջան է հանդիսանում նաև Ամերիկան:

Այդ երկիրը, որի հետ Վեհապետները մեծ հույսեր էին կապում, զրկվել է Լույսի մեր կիզակետից: Եվ այժմ ստիպված է Լույս ընդունել այլ երկրից: Ես հստակ հասկանում եմ, որ հպարտ ամերիկացիների համար դժվարին քայլ կլինի Ռուսաստանից բխող Ուսմունք ընդունելը: Սակայն, եթե կարողանան վարվել հենց այդպես՝ ընդունել Ռուսաստանից բխած Ուսմունքը, ապա Ամերիկան կխուսափի ոչ միայն բնական աղետներից, այլ նաև տնտեսական ճախողումներից:

Ուստի խնդրում եմ ձեզ, որ օժանդակեք ինչպես այս ուղերձի, այնպես էլ մեր դեսպանորդի միջոցով տրվող մյուս ուղերձների տարածմանը Ամերիկայի հողում:

Այդ երկու երկրների՝ Ամերիկայի և Ռուսաստանի, աշխարհագրական դիրքի հանգամանքը, որ նրանք տեղաբաշխված են երկրագնդի հակադիր կողմերում՝ դրանցում ապրող ժողովուրդների գիտակցության հավասարաչափ փոփոխության հնարավորության ապահովման դեպքում կնպաստի մոլորակի իրադրության հավասարակշռմանը:

Ես ռուս դեսպանորդի միջոցով դիմում եմ Ամերիկայի ուստրերին ու դուստրերին. ես խնդրում եմ ձեզ, հաղթահարե՛ք ձեր այդ հատկանիշը, որը խանգարում է ձեզ ընդունելու որևէ օտար երկրից դուրս եկած տեղեկատվությունը:

Ես անկեղծորեն հույս եմ տածում, որ ամերիկացիների մեջ կգտնվեն մարդիկ, որոնք կարձագանքեն իմ կոչին և կհաղթահարեն բնավորության այն բացասական գծերը, որոնք ամերիկացիներին ստիպում են իրենց զգալու հենց այն մարդկանց դեմ, որոնցից կախված է Երկրի ապագան:

Ըստ էության՝ այդպես էլ կա: Դո՛ւք եք հենց այն մարդիկ, որոնցից կախված է Երկիր մոլորակի ապագան: Եվ, որպեսզի այդ ապագան դասավորվի ամենաբարենպաստ ձևով, հարկ չկա, որ հատուկ ընդգծեք ձեր հավակնությունները, ձեր ազգի և ձեր երկրի առաջնայնությունը: Ընդհակառակը, ձեզ անհրաժեշտ է, որ հնազանդություն դաստիարակեք ձեր մեջ և Երկիրը բնակեցնող մյուս ազգերի հետ կանգնեք միևնույն մակարդակի վրա:

Մոլորակի վրա ամենակարևոր երկիր գոյություն չունի: Բայց կան մարդիկ, որոնք կարողանում են հաղթահարել սեփական սահմանափակությունը և իրենց գիտակցությունը բարձրացնել արժանավայել մակարդակի, աստվածամարդու մակարդակի վրա, որն անխուսափելիորեն ձեր հանգրվանը պետք է դառնա:

Ուստի այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է, դա մյուս ժողովուրդներին Էվոյուցիայի աստիճանների վրա ձեզնից ավելի ցածր կանգնած չհամարելն է: Ո՛չ, Աստծո ժողովուրդների ընտանիքում բոլոր ժողովուրդների զավակները Երկրում ապրող եղբայրներ ու քույրեր են: Եվ որքան շուտ գիտակցեք ձեր միասնությունը՝ անկախ ձեր ներքին աշխարհների և արտաքին տեսքերի տարբերություններից, այնքան Երկրում ավելի արագ տեղի կունենան ցանկալի փոփոխությունները:

Ես խնդրում եմ, որ ուշադիր մտորեք իմ խոսքերի շուրջ և վերջապես թույլ տաք ինքներդ ձեզ՝
ձեր գիտակցությամբ դուրս գալ ձեր ընտանիքի, ձեր քաղաքի և ձեր երկրի շրջանակներից և
ընդունել ամբողջ Երկիրը որպես ձեր բոլորի հարազատ տունը:

ԵՄ ԵՄ Մայտրեյան, ձեզ եմ առաքում իմ Սերը

Տեր Մայտրեյա
15 հունիսի, 2006 թ.

Առաջիկա ամառային արևադարձի օրվա և այդ օրվա հետ կապված աստվածային ողորմածությունների մասին

ԵՄ ԵՄ Մայտրեյան՝ նորից եկածը... ԵՄ ԵՄ եկել, որպեսզի նորից ձեզ հիշեցնեմ ձեր
հնարավորությունների և ամառային արևադարձի հետ կապված թողության շնորհի մասին:
Ինչպես միշտ, այդ օրն սկսվելու է Կարմայական Վարչության նիստը, և դուք, օգտվելով ձեզ
տրված ամենամյա հնարավորությունից, կարող եք նամակներ հղել Կարմայական Վարչությանը:
Այդ նամակների բովանդակությունը կարող եք ինքնուրույն կազմել: Սակայն ես ձեզ կհիշեցնեմ
գոյություն ունեցող ընդհանուր կանոնները: Նախ և առաջ ձեր երախտագիտությունը պետք է
հայտնեք Կարմայական Վարչությանը՝ նախկինում ձեզ ցուցաբերած ողորմածությունների
համար: Այնուհետև կարող եք ձեռնամուխ լինել ձեր խնդրանքի շարադրմանը: Եթե այդ
խնդրանքը վերաբերում է ողորմածությունների, որոնք դուք ակնկալում եք ստանալ անձամբ ձեր
կամ ձեր մերձավորների համար, ապա անպայման ձեր խնդրանքների թվարկումից հետո դուք
պետք է նշեք այն պարտավորությունները, որոնք կամավոր կերպով հանձն եք առնում
իրականացնել հաջորդ կիսամյակի ընթացքում՝ մինչև ձմեռային արևադարձի և դրա հետ կապված
Կարմայական Վարչության նոր նիստի օրը:

Ձեր խնդրանքներն ու ցանկությունները պետք է շարադրեք շատ պարզ՝ նշելով այն մարդկանց
անուն-ազգանունները, որոնց համար ինչ-որ բան եք խնդրում:

Իսկ եթե ձեր ցանկություններն առնչվում են Երկիր մոլորակի իրադրության հետ կամ
պարունակում են խնդրանքներ, որոնք վերաբերում են մոլորակի վրա գիտակցության
զարգացման հեռանկարներին, ապա պետք է անպայման այնպիսի պարտավորություններ
վերցնեք, որոնք կապված են պատվիրանների, աղոթքների ընթերցման կամ նմանատիպ այլ
գործողությունների կատարման հետ: Այդ դեպքում ձեր խնդրանքը կկատարվի՝ ելնելով բարի
կարմայի արդեն կուտակված ձեր պաշարից:

Նախքան ձեր նամակները կազմելը, մանրամասն կշռադատե՛ք ձեր խնդրանքներն ու
շարժառիթները:

Կարիք չկա, որ ինքներդ ձեզ ծանրաբեռնեք ավելորդ պարտավորություններով: Վերցրեք
միայն այն պարտավորությունները, որոնք կկարողանաք իրականացնել առանց ավելորդ
լարվածության: Շատ մարդիկ իրենց նամակներում այնպիսի մեծ պարտավորություններ են
ստանձնում, որ իրենց կյանքի ճանապարհին հանդիպած հենց առաջին խնդրահարույց հարցը
ստիպում է նրանց ամբողջովին մոռանալ իրենց վրա վերցրած պարտավորությունները և
հրաժարվել դրանց կատարումից: Թո՛ղ որ փոքր լինի ձեր վերցրած պարտավորությունը, բայց այն
ձեր կողմից ամեն օր կատարվի ուրախությամբ ու սիրով: Մի՛ ձգտեք ձեր գլխին թափել չափազանց
շատ բան: Երբեմն օրվա մեջ կարդացած մեկ աղոթքը բավական է, որ օգնությունը ցուցաբերվի:
Որքան ավելի մաքուր էներգիա ներդնեք աղոթքի ընթերցման մեջ, այնքան ավելի մեծ արդյունքի
կհասնեք: Եվ նույնիսկ ընդամենը մեկ այսպիսի արտահայտությունը՝ *թող լավ լինի աշխարհի
համար*, որը ձեր կողմից արտաբերվում է անկեղծորեն, բավարար է, որ թեթևացվի շատերի
ճակատագիրը:

Ես եկել եմ, որպեսզի կրկին հիշեցնեմ այն հնարավորության մասին, որը ձեզ ընձեռված է, և
որն օգնում է ձեզնից նրանց, ովքեր ամեն տարի օգտվում են այդ հնարավորությունից:

Իսկ այժմ կուզենայի հիշեցնել ևս մեկ թողության շնորհի կամ աստվածային ողորմածության
մասին, որը վերաբերում է ամեն ամսվա 23-ին: Երկնքի ողորմածության շնորհիվ՝ այդ օրը դուք
կարող եք թեթևացնել ձեր և ձեր մերձավորների հաջորդ ամսվա կարման: Բավական է միայն, որ
այդ օրն այն ամենը, ինչ անում եք, նվիրաբերեք հաջորդ ամսվա կարմայի փոխակերպությանը:

Կարող եք հղել այսպիսի կոչ՝ *իմ բոլոր բարի գործողությունները ես նվիրաբերում եմ հաջորդ
ամսվա կարմայի փոխակերպության գործին:*

Կարող եք նաև թվարկել, թե կոնկրետ ո՞ր կարման եք մտադիր չեզոքացնել: Օրինակ՝ այն կարման, որն ընկած է ձեր և ձեր երեխաների, ամուսնու (կնոջ), աշխատանքային ընկերների միջև: Այնուհետև, երբ կարդում եք ձեր աղոթքները, Վարդարանները կամ որևէ մեկին ցուցաբերում եք բարեգործական օգնություն, մշտապես հիշե՛ք այն մասին, որ ձեր բոլոր գործերի էներգիան ուղղվում է կարմայի փոխակերպությանը: Նաև մի՛ մոռացեք, որ ձեր այդ օրն առաքած էներգիայի մի մասը Համբարձյալ Դասերի կողմից կուղղվի համաշխարհային կարմայի և, մասնավորապես, նրա այն մասի փոխակերպության գործին, որը վերաբերում է խոշոր համադետների և տարերայի աղետների կանխարգելմանը:

Իսկ այժմ ես լքում եմ ձեզ: Ուրախ եմ, որ իմ խորհուրդներն ու հանձնարարականներն օկտակար կլինեն ձեզ համար և հուսով եմ, որ դուք դրանք կկիրառեք ձեր կյանքում:

ԵՍ ԵՄ Մայրերյան

Տեր Մայրերյա
18 հունիսի, 2006 թ.

**Հատկապես դուք, աստվածային կերպերին համապատասխան,
պետք է իրականացնեք Երկրի բարեփոխությունները**

ԵՍ ԵՄ Մայրերյան՝ այս օրով նորից ձեզ այցի եկածը...

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ, որ այժմ դուք հնարավորություն ունեք ավելի գիտակից ձևով մասնակցելու մեզ՝ Համբարձյալ Դասերիս հետ ձեր փոխազդեցության գործընթացին:

Մենք հնարավորություն ունենք մեր դեսպանորդի միջոցով, որը ձեր Գուրուն է, ձեզ հետ հաստատելու ավելի սերտ հարաբերություններ՝ օգտագործելով մեր թելադրությունները, որոնք մենք ձգտում ենք տալ կանոնավոր կերպով: Եվ դուք հնարավորություն եք ստացել գիտակցորեն հաղորդակցվելու մեզ հետ: Ձեզ թվում է, թե ձեր արտաքին գիտակցությունը չի մասնակցում հաղորդակցության գործընթացին: Սակայն դուք արդեն հաղորդակցվում եք մեզ հետ, քանի որ, մեր ուղերձների միջոցով մեզ հետ կապի մեջ մտնելով, դուք բարձրացնում եք ձեր թրթռումների մակարդակը: Եվ երբ ձեր թրթռումները հասնում են որոշակի մակարդակի, մենք հնարավորություն ենք ունենում ներկա գտնվելու ձեր մեջ, ձեզնից նրանց մեջ, ովքեր հարկ են համարում իրենց տաճար հրավիրել ինձ կամ մյուս Համբարձյալ Վեհապետներին: Մենք չենք կարող դա անել, քանի դեռ դուք այդ մասին մեզ չեք խնդրել: Բայց երբ կանչն արտահայտված է, մենք պարտավոր ենք արձագանքել: Այդպիսին է Տիեզերական Օրենքը: Մենք չենք կարող օգտվել ձեր հրավերից և մուտք գործել ձեր տաճարը միայն այն դեպքում, եթե ձեր թրթռումների մակարդակը մեզ թույլ չի տալիս դա անել: Ուստի դուք մշտապես պատրաստ պետք է լինեք մեզ հետ հաղորդակցվելուն: Մատերիայի հատկություններն այնպիսին են, որ այն հնազանդորեն հետևում է ձեր գիտակցությանը: Եվ եթե դուք ձեր առջև մեզ հետ կապ հաստատելու նպատակ եք դնում, ապա վաղ թե ուշ դուք Համբարձյալ Դասերի հետ գիտակցական հաղորդակցության հնարավորություն կստանաք: Ամբողջ հարցը ձեր գիտակցության մեջ է՝ որքանո՞վ եք ձեր գիտակցությամբ ընդունում այդպիսի հաղորդակցության հնարավորությունը:

Մենք չենք կարող ձեզ օգնել, քանի դեռ դուք մեզնից օգնություն չեք խնդրում. բայց երբ մենք ինքներս ենք ձեզ օգնություն առաջարկում, դուք պարտավոր եք օգտվել դրանից, քանի որ յուրաքանչյուր տիեզերական հնարավորություն ունի իր ժամկետները: Եվ այժմ, երբ ժամանակն արագացել է, և տարածությունն էլ պատրաստ է, ձեր ցանկություններն ու ձեր մտքերը շատ արագ են արտացոլվում հնազանդ մատերիայի մեջ: Միշտ հիշե՛ք այդ մասին, երբ գտնվում եք կյանքի ունայնության, մարդկանց հոծ բազմության մեջ:

Այժմ ես եկել եմ, որպեսզի ձեզ հետ խոսեմ ևս մեկ հնարավորության մասին, որը մոտեցել է և այժմ բացվում է ձեր առջև: Ես կուզենայի ձեր ուշադրությունը հրավիրել Երկրում ձեր շուրջը գոյություն ունեցող պայմանների վրա: Դուք կարող եք շրջակա ամեն ինչը տեղով կատարելություն համարել, բայց, հավատացե՛ք ինձ, ձեր աշխարհը շատ հեռու է կատարյալ լինելուց: Բայց, քանի որ ժամանակը փոխվել է, և հնարավորություններն էլ առկա են, ապա հատկապես հիմա է պահը, որպեսզի դուք գիտակցորեն մոտենաք այն ամենին, ինչը ձեզ շրջապատում է: Նկատե՛ք անկատար կերպերը մարդկանց վարքում, ձեզ շրջապատող կյանքում և դրանք փոխարինեք ավելի կատարյալ, աստվածային կերպերով: Սկզբում փորձեք դա անել պարզապես ձեր գիտակցության մեջ: Երագեք, որ ձեր տեսած անկատարությունը ձեր ուզած կերպով ստանա ավելի կատարյալ դրսևորում: Եվ դրանից հետո դիտեք, թե ինչ տեղի կունենա: Որքան մեծ լինի ձեր նկրտումը,

անքան ավելի արագ ձեր կյանքից կհեռանան անկատար դրսևորումները: Հարկ չկա պայքար մղելու անկատարության դեմ և ունենալու նույնիսկ ամենաչնչին պայքարի զգացում: Դուք պարզապես փոխարինում եք անկատար դրսևորումը կատարյալով: Նախ՝ ձեր գիտակցության մեջ:

Եթե դուք անհամբեր եք, և պայմաններն էլ թույլ են տալիս, դուք կարող եք անմիջականորեն մասնակցել որևէ անկատար դրսևորում կատարյալ կերպով փոխարինելու գործին: Դրա համար դուք տառացիորեն պետք է թեքներդ կշտեք և ֆիզիկական ոլորտում ձեռնամուխ լինեք կոնկրետ գործունեության: Ամենակարևորը՝ մի՛ կենտրոնացեք անկատարությունը դատապարտելու վրա: Մի՛ ներդրեք դրա մեջ ձեր լրացուցիչ էներգիան, ձեր ուշադրության էներգիան մի՛ առաքեք դեպի այն:

Եվ հակառակը, երբ տեսնում եք որևէ կատարյալ դրսևորում, առաքե՛ք նրան ձեր էներգիան, բազմապատկե՛ք ձեր կյանքում ամեն մի աստվածային դրսևորում: Սովորե՛ք ստեղծագործել ու արարել Աստվածների պես: Քանզի մոտակա ժամանակում հարկ կլինի, որ գիտակցեք ձեր պատասխանատվությունն այն ամենի համար, ինչը ձեզ շրջապատում է, և կարևորը՝ պետք է պատասխանատվություն զգաք, որ հենց դու՛ք պետք է, աստվածային կերպերին համապատասխան, բարեփոխություններ իրականացնեք Երկրում:

Ես ուրախ եմ, որ այսօր ինձ հնարավորություն ընձեռվեց տալու այս ոչ մեծ Ուսմունքը, և կրկնակի ուրախ եմ, որ հնարավորություն ունեցա տալու այս թելադրությունը մեր դեսպանորդի՝ Մոսկվա գնալու ընթացքում:

Եվ օգտվելով առիթից՝ ուզում եմ ձեզ տեղյակ պահել, որ այժմ՝ հատկապես ամառային արևադարձի այս օրերին, ձեր կյանքի հանգամանքներն ու ձեզ շրջապատող ամեն ինչը փոխելու ձեր կարողությունները զգալիորեն ուժեղանում են:

Մաղթում եմ ձեզ հաջողություններ և նոր հանդիպումներ Ձեռնադրումների Ուղու վրա:

ԵՍ ԵՄ Մայրորդյան

Սանատ Կումարա

1 հուլիսի, 2006 թ.

Ձեր գիտակցության մեջ դուք ձևավորում եք նոր իրականություն

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ նորից եկածը: Ինչպես արդեն ավանդույթ է դարձել, ես եկել եմ ուղերձ տալու այն մասին, որ մենք նոր շրջանն ենք բացում այն թելադրությունների, որոնք մենք մտադրվել ենք տալ Երկրի մարդկությանը: Ուրախ եմ այս անգամ հայտնելու, որ մենք պատրաստ ենք մեր ուղերձները տալ Բուդդարիայում՝ մի երկրում, որը մեզ համար ոչ պակաս կարևոր է, քան Ռուսաստանը, քանի որ պլանավորվում է հենց այդտեղ ստեղծել այն պայմանները, որոնք անհրաժեշտ են այդ երկրում ապրող մարդկանց գիտակցության արագ աճի համար:

Մենք ուրախ ենք, որ կրկին հնարավորություն ունենք խոսելու, քանի որ ոչ միշտ է հնարավոր լինում իրականացնել մեր պլանները Երկրի վրա: Դա կապված է Երկրի իրադրության անկանխատեսելիության մեծ աստիճանի հետ, երբ ընդամենը մի մարդու ոչ ճիշտ գործողությունների հետևանքով ի չիք են դառնում մեր բոլոր պլանները: Իսկ դա միշտ էլ ցավալի է: Սակայն մենք հույս ենք կապում այն բանի հետ, որ դեռևս մարմնավորման մեջ են գտնվում բավարար թվով անհատներ, ովքեր կարող են մեզ օգնել մեր պլանների ու մտադրությունների իրականացման գործում:

Ես եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ այն պարտավորությունների մասին, որոնք ձեզ վրա եք վերցրել նախքան մարմնավորվելը: Դուք պատրաստվել եք ձեր առաքելություններին շատ մարմնավորումների ընթացքում, իսկ այս մարմնավորման ընթացքում ստացել եք բոլոր անհրաժեշտ հմտություններն ու գիտելիքները: Այն ամենը, ինչը խանգարում է ձեր վերցրած պարտավորությունների կատարմանը, դա ձեր ունայն, անհնազանդ մարդկային խելքն է, ձեր մարմնական խելքը, որը մշտապես շեղում է ձեզ Ուղուց՝ հորինելով հազարավոր պատճառներ ու միլիոնավոր փաստարկներ, այն դեպքում, երբ սրտի ձայնը շարունակում է առաքել ձեզ քնքուշ, մեղմ ազդանշաններ, որոնք կանչում են դեպի Ուղին, դեպի գազաթ, դեպի Եղբայրության պլանների կենսագործում:

Ըստ այդմ՝ ևս մեկ անգամ մտորե՛ք այն մասին, թե որքա՛ն եք դուք կապված ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհին: Եվ այն մասին, թե որքա՛ն կարևոր է ձեզ համար սրտի ձայնին ականջալուր լինելն ու աշխարհի ունայնությունից հրաժարվելը, որպեսզի իրականացվի այն, ինչը կանխորոշված է այս մոլորակի համար: Ձեր մոլորակը պետք է դառնա զարգացած գիտակցության

մոլորակ: Երկրի թրթռանքները ժամանակի ընթացքում պետք է թույլ տան մարմնավորվել այն էակներին, որոնց այժմ դուք կոչում եք Համբարձյալ Վեհապետներ: Նրանք մարդկության Ուսուցիչներն են, և ձեզնից շատերն այժմ մարմնավորվել են, որպեսզի Երկրի վրա ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են Նրանց մարմնավորման համար: Մտածե՛ք այն մասին, թե որքան կարևոր խնդիր է դրված ձեր առջև: Եվ փորձեք որսալ այն պահը, երբ ձեր գիտակցությունն սկսում է սահել ցած՝ աստիճանաբար մերժելով աստվածային կերպերը և դրանք փոխարինելով մարդկային մոլորմներով: Ձեր մարմնական խելքը սկսում է ակտիվանալ ձեր մեջ այն բանին գուգրնթաց, երբ ձեր գիտակցությամբ մոտենում եք մեզ ծառայելուն: Այն շատ հնարամիտ է, և նրա բերած փաստարկներին ձեր արտաքին գիտակցությունը չի կարող ուշադրություն չդարձնել: Այդ պատճառով դուք ամեն ինչ թողնում եք, որպեսզի մի կտոր հաց ստանաք և հագեցնեք ձեր ֆիզիկական քաղցը՝ փոխանակ հոգ տանելու հոգևոր սննդի և այն հանապազօրյա հացի մասին, որը նկատի ունեք Հիսուս:

Մի՛ ձգտեք մտածել այն մասին, թե ինչպես պահպանեք ձեր ֆիզիկական գոյությունը: Մտածեք միայն այն մասին, թե ինչպես իրագործեք ձեր աստվածային պլանը: Թե՛ ձեր Հավատն այնքան քիչ է, որ դուք չեք կարող ենթադրել, թե Աստված կհոգա ձեր բոլոր կարիքները:

Ուսմունքը նույնն է մնացել: Այն տրվում է նորից ու նորից, և միայն ձեր գիտակցության ծուլությունն ու մատերիայի իներտությունն են ձեզ ստիպում լսել միևնույն Ուսմունքը հազարավոր ու միլիոնավոր տարիներ՝ մարմնավորումից մարմնավորում: Դուք ունկնդրում եք և չեք լսում, քանի որ ամեն անգամ կրկին ու կրկին շեղվում եք պայծառացման պահին ստացած ուղեցույցներից և նորից մղվում դեպի մանր-մունր բաների ու ֆիզիկական աշխարհի իրերի հետևից ընկնելը:

Որքա՛ն ցավալի է այդ ամենը տեսնելը: Հավատի պակասը մարդկության գլխավոր հիվանդությունն է: Նայե՛ք կենդանիներին, թռչուններին: Աստված հոգ է տանում բոլոր կենդանի էակների համար: Ոչ մեկը քաղցից չի մեռնում, եթե գտնվում է բնական պայմաններում: Եվ միայն այն ժամանակ, երբ մարդն իր անկատար գիտակցությամբ սկսում է միջամտել Աստծո Օրենքներին և սկսում արարել՝ իրեն Աստծո տեղ դնելով, տեղի են ունենում տարբեր դժբախտություններ ու համադետներ:

Այդ պատճառով մենք կրկնում ենք նորից ու նորից, որ ձեր միակ թշնամին թաքնված է ձեր անկատար գիտակցության մեջ, ձեր սրտում, որն իր մեջ չի ընդունում Աստծուն:

Այժմ ես կուզենայի ձեզ հիշեցնել այն մասին, որ բոլոր Համբարձյալ Դասերը երբեմն շունչները պահած սպասում են ձեր ընտրությանը, այն ընտրությանը, որը դուք կարող եք անել, բայց և կարող եք չանել: Իսկ ձեր յուրաքանչյուր ընտրությունից կախված է Էվոյուցիայի զարգացման ընթացքը Երկիր մոլորակի վրա: Հավատացե՛ք ինձ՝ այն ամենը, ինչ դուք ամեն օր անում եք, շատ կարևոր է: Մտորե՛ք ձեր ամենօրյա գործողությունների մասին: Փորձե՛ք վերլուծել, թե օրվա մեջ որքան ժամանակ եք մտածել Աստծո և ձե՛ր իսկ աստվածային կոչման մասին. թե ձեզնից քանի՞սն են իրոք պատրաստ ինչ-որ բան գոհել, որպեսզի լավ լինի աշխարհի համար:

Խոսքերով շատերն են արտահայտվում այն ծառայության ու աշխատանքի մասին, որն իրենք կատարում են հանուն Աստծո: Բայց երբ խոսքը հասնում է նրան, որ պետք է անել թեկուզ ոչ մեծ, բայց կոնկրետ որևէ գործ, ապա գտնվում են հազար պատճառներ ու փաստարկներ, որոնք ստիպում են մոռանալ Աստծո ու ծառայության մասին և մղվել դեպի այն իրերն ու հաճույքները, որոնք վաղուց տեղ չպետք է ունենային ձեր գիտակցության մեջ:

Ես նորից եկել եմ այս օրով և շատ ուրախ եմ, որ նորից կարող եմ խոսել և տալ այս հինավուրց Ուսմունքը: Քանի որ ձեզնից ամեն ոք, ով կարդում է այս տողերը, ցանկացած պահի կարող է արթնանալ, որպեսզի սկսի գործել նոր իրականության մեջ:

Դուք ձեր գիտակցության մեջ ձևավորում եք նոր իրականություն: Եվ այն ժամանակ, երբ հանկարծ զարմանքով հայտնաբերում եք, թե որքա՛ն աննպատակ են ձեր շրջապատի մարդիկ ծախսում իրենց ուժերը, դուք արթնանում եք նոր իրականության համար և դառնում եք այն մարտիկ-սպասավորները, որոնց վրա մենք կարող ենք հենվել: Գուրու-սան հարաբերությունների ամբողջ ինստիտուտը նախատեսված է այն բանի համար, որպեսզի ձեր գիտակցությունը մշտապես պահվի արժանավայել մակարդակի վրա: Ծատ հազվագյուտ երկրացիներ կարող են յոլա գնալ առանց կողմնակի օգնության և ինքնուրույնաբար ընթանալ Ձեռնադրումների Ուղով: Կարող եմ ձեզ ասել, որ եթե դուք Համբարձյալ Վեհապետի մասնակի կամ լրիվ մարմնացում չեք, ապա ինքնուրույն՝ առանց մարմնավորված Ուսուցչի օգնության, չեք կարող ընթանալ Ուղով և հասնել աստվածային գիտակցության գագաթին: Ուստի մենք նորից ու նորից առաքում ենք մեր դեսպանորդներին, որպեսզի դուք կարողանաք տեսնել Ուղին և հիշեք ձեր այն պարտավորությունների ու պլանների մասին, որոնք նախքան մարմնավորվելը մտադրվել էիք իրագործել: Դուք ինքներդ եք ձեզ վրա վերցրել այդ պլանները ձեր բարձրագույն գիտակցությամբ:

Եվ այժմ դուք պետք է փորձեք մուտք գործել ձեր գիտակցության բարձրագույն վիճակի մեջ, որպեսզի հիշեք այն ամենը, ինչը պլանավորել էիք նախքան Երկրի վրա մարմնավորվելը:

Շատ են նրանք, ովքեր կարդում են մեր ուղերձները: Կան, որ մղվում են դեպի Ձեռնադրումների Ուղին: Բայց միայն եզակիներն են դիմանում փորձությանն ու շարունակում ընթանալ Ուղով: Միշտ էլ այդպես է եղել: Բայց մենք հույս ունենք, որ ձեր ժամանակներում բացառություն կլինի, և մենք կգտնենք հազարավոր և հարյուր հազարավոր մարդկանց, որոնց հետ կկարողանանք կապ հաստատել արտաքին գիտակցության մակարդակով և կսկսենք Երկիր մոլորակի վերափոխման ասպարեզում աշխատանք տանել այնպիսի արագ տեմպերով, որ բոլոր փոփոխությունները տեսանելի լինեն ներկայումս ապրող սերնդի համար:

Ինձ պետք են կամավորներ, ովքեր ցանկանում են ծառայել Եղբայրությանը: Եվ ես պատրաստ եմ անձամբ գալ և ձեզ օգնություն ցուցաբերել՝ պայմանով, որ ձեր մտադրություններն իրենց հաստատումը գտնեն երկրացիների գիտակցության վերափոխմանն ուղղված կոնկրետ, գիտակցական գործողություններով:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան, ձեզ հետ եղա այս օրով, և մինչ նոր հանդիպում

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
2 հուլիսի, 2006 թ.

**Ձեր գիտակցության մակարդակը
որոշվում է աստվածային այն հատկանիշներով,
որոնք ձեռք եք բերում ձեր Ուղու վրա**

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ մեր դեսպանորդի միջոցով այսօր ձեզ այցի եկածը: ԵՄ ԵՄ եկել, որ ձեր ուշադրությունը հրավիրեմ ընթացիկ տեղեկատվության վրա՝ կապված Կարմայական Վարչության հենց նոր ավարտված նիստի հետ: Այս անգամ մեր նիստն անցավ բարձր տրամադրությամբ, քանզի այն փոփոխությունները, որոնք մենք ակնկալում էինք, սկսել են իրականանալ: Եվ այդ փոփոխությունների տեմպերը նույնիսկ գերազանցում են մեր սպասելիքները: Ոչ բոլորը, ամենևին ոչ բոլորն ընդունեցին մեր դեսպանորդին ու մեր ուղերձները, որ տալիս ենք նրա միջոցով, սակայն մարդկանց գիտակցության փոփոխություններին ընթացք տալու համար անհրաժեշտ, բավարար քանակի անհատներ արդեն միացել են մեր ուղերձների ընթերցմանը և ձեռնամուխ են եղել աշխատելու իրենց վրա՝ իրենց մտքերի ու զգացմունքների վրա: Իսկ ձեզ հայտնի է, որ ձեր աշխարհում ամեն ինչ որոշվում է ձեր գիտակցությամբ՝ ձեր գիտակցության այն մակարդակով, որին դուք կարող եք հասնել ու այն պահպանել ամենօրյա ձեր ջանադիր աշխատանքով:

Մեր Համբարձյալ Դասերիս խնդիրն է ուղորդել ձեր զարգացումը և նպաստել այն բանին, որ դուրս չգաք ձեզ հատկացված Էվոյուցիոն միջանցքի շրջանակներից: Այժմ մենք ուրախությամբ արձանագրում ենք, որ դուք հեռու եք քաշվել այդ Էվոյուցիոն միջանցքի սահմանագծից, որից ևս մի փոքր շեղվելու դեպքում կարող էր համադետ տեղի ունենալ:

Մենք հասել ենք կայուն, հավասարակշիռ վիճակի: Եվ այդ վիճակում մարդկությունը պատրաստ է շարունակելու իր Էվոյուցիան, և մենք կարող ենք ուղղորդել մարդկությանն ու համաձայնեցնել առավել զարգացած անհատների կառուցողական ջանքերը: Բարեբախտաբար այդպիսի անհատների թվաքանակն ավելի ու ավելի է մեծանում: Ձեզնից շատերն, ովքեր կրկին Ուղի և Ուսմունք են ձեռք բերել, ունակ են վիթխարի գործերի: Դուք չեք գիտակցում այն աշխատանքն ու պատասխանատվությունը, որն ընկած է ձեր ուսերին: Բայց ձեզնից առանձնապես շատ բան չի պահանջվում: Պարզապես պետք է ամեն օր հիշեք, որ դուք միայն այն ֆիզիկական մարմինը չեք, որը տեսնում եք հայելու մեջ: Եվ որ ձեր կյանքը չի ավարտվում ֆիզիկական մահով, այլ շարունակություն ունի: Եթե մշտապես ձեզ նույնացնեք ոչ թե ֆիզիկական մարմնի, այլ ձեր անմահ մասի հետ և մշտապես մտորեք այն մասին, որ ներկայումս կատարած ձեր գործողություններն ազդում են ձեր ապագայի ու հաջորդ կյանքի հանգամանքների վրա, ապա ձեր Էվոյուցիոն ընթացքը կլինի ավելի ու ավելի բարեհաջող: Ցավոք սրտի, մարդկանց մեծ մասը դեռևս չի հավատում վերամարմնավորմանը և ապրում է այնպես, կարծես առջևում միայն մահ է սպասվում: Ամեն անգամ, երբ դուք այդպես եք մտածում, սահմանափակում եք ձեր հնարավորությունները և ընդհատում բարձրագույն օկտավաների և մեզ՝ Համբարձյալ Դասերիս հետ ձեր կապի հնարավորությունը: Ձեր աշխարհը սոսկ հնազանդորեն հետևում է ձեր գիտակցությանը: Ահա թե ինչու է ասվել և նորից է ասվում գիտակցության ընդլայնման, ավելի

շատ բան ընկալելու կարողություն ձեռք բերելու և առանձին սովորական կրոնի ու մի առանձին երկրի շրջանակներից դուրս գալու մասին:

Ահա թե ինչու ենք մենք ձգտում, որ մեր դեսպանորդը հնարավորություն ունենա հաղորդակցվելու տարբեր կրոնական համոզմունքների և տարբեր երկրների ներկայացուցիչների հետ: Քանզի այն տեղեկատվությունը, որը մենք կարող ենք տալ նրա միջոցով, կախված է այն բանից, թե որքան է լայն նրա գիտակցության սանդղակը: Շատ հազվադեպ կարելի է հանդիպել հաղորդչի, որն այնքան բազմակողմանի զարգացած լինի և միաժամանակ մեզ անվերապահորեն նվիրված, որ նրա միջոցով մենք կարողանանք տալ տեղեկատվության այն ամբողջ ծավալը, որի կարիքը ներկա փուլում մարդկությունն ունի: Բայց հաճախ մեզ վիճակվում է օգտվել այն հաղորդչից, որը կարողանում ենք ստանալ: Այդ պատճառով ես խնդրանքով ձեզ եմ դիմում. ցուցաբերե՛ք այն ամբողջ օգնությունը, որն ի վիճակի եք ցուցաբերել մեր դեսպանորդին, քանի որ մի ուրիշ այդպիսի հաղորդիչ, որին հարկ կլինի դաստիարակել և հասցնել Եղբայրության հետ գիտակից աշխատանքի մակարդակին, հնարավոր է, որ մենք չստանանք մոտակա ժամանակներում: Ըստ այդմ՝ երախտագիտությամբ ընդունեք մեր ուղերձները: Ձեր գիտակցության մակարդակը չի որոշվում մենտալային տեղեկատվության այն քանակով, որը կարող է իր մեջ ներառել ձեր ուղեղը: Ձեր գիտակցության մակարդակը որոշվում է աստվածային այն հատկանիշներով, որոնք դուք ձեռք եք բերում ձեր Ուղու վրա: Եվ դրանց մեջ ամենակարևորներն են նվիրվածությունը, անկեղծությունը, անշահախնդրությունն ու հնազանդությունը:

Առանց այդ որակների՝ մենտալային ոչ մի կուտակում ձեզ թույլ չի տա բարձրանալ գիտակցության նոր մակարդակի վրա:

Ուստի մենք չենք հոգնում ամեն անգամ ձեզ համար կրկնելուց ձեր մեջ աստվածային հատկանիշներ զարգացնելու անհրաժեշտության մասին:

Ձեր նկրտումը ձեզ ստիպում է ստանալ այն, ինչն անհրաժեշտ է ձեր զարգացման համար: Ըստ այդմ՝ ձեզ անհրաժեշտ հաջորդ հատկանիշները նպատակամղվածությունն ու կայունությունն են:

Ուշադիր մտածե՛ք ասածներիս մասին՝ այն պահանջների մասին, որոնք մենք ներկայացնում ենք մեր աշակերտներին: Ձեզնից շատե՛րն են արդյոք պատրաստ ամեն օր իրենց գիտակցության մեջ պահպանելու ճիշտ ուղենիշները: Ձե՛ք շեղվի արդյոք ձեր ծառայությունից ամենօրյա ունայնության և այն նպատակների պատճառով, որոնք ձեր աշխարհում դնում եք ձեր առջև: Ձեզնից յուրաքանչյուրն ինքն է ընտրում իր մատուցելիք գոհողության այն չափը: Բայց կարող եմ ձեզ հավաստիացնել, որ մեծագույն գոհողությունը կլինի այն, որ ամբողջովին հրաժարվեք այն ամենից, ինչը կապում է ձեզ ֆիզիկական աշխարհի հետ և հասնեք մատերիայի կապանքներից ձերբազատվելուն, ինչը ձեզ թույլ կտա այլևս ֆիզիկական մարմնավորման մեջ չմտնել:

Եվ այսպես, տեղի է ունենում Էվոյուցիոն զարգացում մի ուղով, որը մենք ուսուցանում ենք մեր դեսպանորդի միջոցով: Ճիշտ նույն կերպ այդ Ուղին մենք ուսուցանել ենք վաղնջական ժամանակների և այնքան էլ ոչ վաղ ժամանակների մեր ուրիշ շատ դեսպանորդների ու մարգարեների միջոցով: Դուք միշտ կարող եք նշմարել այն ընդհանուրը, որը կա մեր կողմից տրված շատ Ուսմունքներում: Չնայած այն աղավաղումներին, որ մտցրել են մեր այն հետևորդները, որոնք մինչև վերջ չեն ըմբռնել Ուսմունքի էությունը, կամ էլ դիտմամբ են աղավաղել, այնուամենայնիվ այդ էությունը շատ կրոններում հավատալիքներում ու ուսմունքներում նշմարելի է նրանց համար, ովքեր ունեն ազատ բանականություն և պրպտուն միտք: Որևէ հակասություն չկա մեր դեսպանորդի միջոցով ներկայումս տրվող Ուսմունքի և այն հիմունքների միջև, որոնք տրվել են համաշխարհային կրոնների հիմնադիրներների կողմից: Ձեր գիտակցության մեջ փորձեք նշմարել ընդհանրականը և կհասկանաք, որ բոլոր դոգմաներից և կանոններից անդին ընկած է հենց այն Ուսմունքը, որը մենք այժմ տալիս ենք: Աշխարհում չկա մեր կողմից տրվող մի այլ Ուսմունք: Բայց կան շատ մարդիկ, ովքեր փորձում են գրավել զանգվածների ուշադրությունը և հորինում են բավականին տարօրինակ գործառնություններ և ուսմունքներ և, որ ամենացավալին է, գտնում են հետևորդներ: Ուստի ձեզ համար կարևորն այն է, որ ձեր գիտակցությունը բարձրացնեք այնպիսի մակարդակի վրա, երբ շղարշն ընկնում է ձեր աչքերից, և ձեզ տեսանելի է դառնում կեղծ գուրուի էությունն ու կարողանում եք զանազանել, թե նրա ուսմունքի մեջ որտեղ է առկա ճշմարտությունը և որտեղ՝ ստոր սուտը: Ըստ այդմ՝ մենք չենք խորշում նորից ու նորից ձեզ համար կրկնելուց, որ ձեր գլխավոր գործիքները, որոնցով պետք է գործեք ձեր աշխարհում՝ ձեր սիրտն է ու ձեր շարժառիթների անկեղծությունը: Եթե դուք անկեղծ եք, Երկրի՝ մարդիկ, անշահախնդիր եք և ունեք պրպտուն միտք, ապա հասու կլինեք ճշմարիտ աղբյուրներին և կհագեցնեք գիտելիքների ձեր ծարավը՝ շուրթներդ հպելով մեր Ուսմունքի զովացուցիչ ու կենարար հեղուկին, որը մենք միշտ մատուցում ենք ձեզ:

Ձեր ժամանակներում գոյատևման բարդությունն այն է, որ տեղեկատվական հոսքերն այնքան հագեցած ու աղտոտված են տարբեր փոխանակներով, որ ձեզնից պահանջվում է ներդնել ձեր ողջ ուշադրությունն ու ներըմբռնողականությունը, որպեսզի կարողանաք գլուխ հանել այդ հոսքերից: Երբեք մի՛ ձգտեք ամեն ինչ փորձել: Այդպես դուք ստամոքսի անմարսողություն կվաստակեք: Կլանեք միայն ստուգված, որակյալ սնունդ, որը մենք տալիս ենք մեր դեսպանորդների ու մարզարենների միջոցով: Հիմա, երբ դուք արդեն նախագգուշացված եք, ձեր կողմից օգտագործվող գրականության և աղբյուրի ընտրության պատասխանատվությունն ամբողջովին ձեզ վրա է: Դա ձեր այլընտրանքն է և սխալ ընտրության կարման, որը պետք է կրեք ինքնուրույնաբար:

Կարմայական Վարչության կողմից իրագործվող խնդիրներից մեկն այն է, որ թեթևացվի կարմայի այն բեռը, որը դուք ձեռք եք բերում՝ սխալ ուսմունքի հետևորդ դառնալով: Որպեսզի թեթևացնեք սխալ ուղով ընթանալու ձեր կարման, կարող եք դիմել Կարմայական Վարչությանը և անձամբ ինձ՝ խնդրելով, որ ձեր կյանքում հանգամանքներն այնպես դասավորվեն, որ դուք հասկանաք ու գիտակցեք ձեր բոլոր մոլորությունները և կարողանաք գիտակցված ձևով հաղթահարել կյանքում ձեր սխալ ընտրությունների կարման:

Մենք այսօր շատ բաների մասին գրուցեցինք, և ես հուսով եմ, որ այս գրույցը ձեզ համար օգտակար կլինի:

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ մշտապես ձեզ հետ

Տեր Ծիվա
3 հուլիս, 2006 թ.

**Ես հրամցնում եմ ձեզ սույն ուղեցույցն այն հույսով,
որ կկարողանաք այն օգտագործել
ձեր ամենօրյա հոգևոր աշխատանքում**

ԵՄ ԵՄ Ծիվան՝ կրկին եկածը...

ԵՄ ԵՄ Ծիվան... Ահա եկել եմ...

Ես եկա և ուրախ եմ ձեզ հետ նոր հանդիպման համար, որ կայանում է մեր դեսպանորդի միջոցով...

Այն բանից հետո, երբ մենք ավարտեցինք թելադրությունների գարնանային շրջանը, նուրբ աշխարհում տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ, և դրանց մեջ ամենակարևորն այն էր, որ Երկրի մարդկությունն սկսեց տեղի տալ մեր կողմից գործադրվող անխոնջ ջանքերին և ընթանալ այն Էվոյուցիոն ուղով, որը պլանավորված է: Որոշ ժամանակ առաջ Համբարձյալ Վեհապետներից ոչ մեկը դեռևս վստահ չէր, որ Երկրի առաջիկա փոփոխությունները հնարավոր կլինի առաջ մղել: Այժմ մենք վստահորեն արձանագրում ենք այն փաստը, որ մեզ հաջողվեց ամեն ինչ անել, որպեսզի մարդկությունը կարողանա վերադառնալ զարգացման Էվոյուցիոն ուղուն և ներդաշնակեցնի անցյալում աղավաղված էներգիաների մի մասը: Այժմ մենք տեմպերը չպետք է նվազացնենք: Ուստի ես եկել եմ, որ ձեզ մղեմ հետագա սխրանքների, ցուցումներ տամ նրանց, ովքեր ունակ են դրանք ընկալելու:

Այժմ մարդկության համար ամենագլխավորն ու կարևորը ներդաշնակվելու հարցն է: Դրա տակ ես նկատի ունեմ այն բոլոր միջոցների ու մեթոդների համախմբությունը, որոնք կրերեն գիտակցության զարգացման տեմպերի հավասարեցմանը Երկրի տարբեր հատվածների, տարբեր երկրների ու մայրցամաքների միջև: Դուք տեղյակ եք, որ մեր ուղերձները մեծ հաջողությամբ տարածվում են Եվրասիայում: Բայց կան և ա՛յլ մայրցամաքներ: Եվ դրանցում մեր ուղերձների ու նոր Ուսմունքի մասին շատ քչերն են տեղեկացված: Արդ, կա մոլորակի իրադրության ներդաշնակեցման երկու ուղի: Առաջին ուղին ենթադրում է մեր ուղերձների ուժեղացված տարածում մյուս մայրցամաքներում և առաջին հերթին՝ Ամերիկայում: Երկրորդ ուղին ավելի պարզ է, բայց և միաժամանակ ավելի դժվար, քանի որ ձեզնից պահանջում է անշահախնդրության որոշակի աստիճան և հոգևոր ձեռքբերումների որոշակի մակարդակ: Այն ենթադրում է որոշակի հոգևոր աշխատանքի իրագործում նուրբ ոլորտում: Այժմ ես ձեզ կասեմ, թե հատկապես ինչպիսի՛ աշխատանքի:

Ամեն անգամ, երբ կկարդաք մեր ուղերձները, մտովի պատկերացրեք այն մայրցամաքները, որոնցում մեր ուղերձները դեռևս չեն տարածվում: Մտապատկերեք Աֆրիկան, Ամերիկան, Ավստրալիան: Եվ ամեն անգամ պատկերացրեք, որ հաղորդակցվում եք այդ երկրների ներկայացուցիչների հետ և նրանց պատկերացում եք տալիս այն Ուսմունքի մասին, որը մենք մատուցում ենք ձեզ թելադրությունների միջոցով: Եթե ձեր ծանոթների մեջ կան մարդիկ, ովքեր

ապրում են այդ մայրցամաքներում, ապա խնդրում են, տեսապատկերե՛ք այդ մարդկանց և մտովի պատմե՛ք նրանց ձեր ստացած գիտելիքների մասին, մտովի երկխոսություն՝ն վարեք նրանց հետ: Փորձեք ձեր բառերով նրանց բացատրել ձեր ստացած Ուսմունքի հիմունքները: Դրանով դուք կհասնեք նպատակին, և բարեփոխումների մեր էներգիան կշռչափի նաև այն մարդկանց գիտակցությանը, ովքեր ապրում են այդ մայրցամաքներում, որից հետո նրանց մեջ ցանկություն կառաջանա կարդալու մեր ուղերձները և յուրացնելու նրանցում պարունակվող տեղեկատվությունը: Եթե նույնիսկ այդ մարդկանց արտաքին գիտակցությունը չարձագանքի ձեր կատարած աշխատանքին, այնուամենայնիվ նրանց նուրբ մարմինները կստանան փոփոխությունների համար անհրաժեշտ տպավորություններ: Եվ դրանով իսկ դուք մեզ հետ միասին կդնեք փոփոխությունների հիմնաքարն ու հիմնապունը:

Ես տալիս եմ ձեզ այս ուղեցույցը, իսկ դուք այն կարող եք կիրառել այն մարդկանց հետ ձեր աշխատանքում, որոնցից շատ բան է կախված իրենց երկրներում: Դրանք կարող են լինել հայտնի պետական գործիչներ, դերասաններ, գիտության ու մշակույթի գործիչներ: Ձեր գիտակցությունը կհուշի ձեզ, թե ում հետ և ինչպես աշխատեք: Ես հրամցնում եմ ձեզ այս ուղեցույցն այն հույսով, որ կկարողանաք այն օգտագործել ձեր ամենօրյա հոգևոր աշխատանքում: Նախքան ասածս մտապատկերներին ձեռնամուխ լինելը, խնդրում եմ, հետևեք այն բանին, որ ինքներդ ունենաք գիտակցության ներդաշնակ վիճակ, որպեսզի ձեզ չանհանգստացնեն ձեր առօրեական ու մանր կենցաղային հոգսերը: Հո՛գ տարեք ձեր ներքին տարածքի մաքրության մասին, քանի որ ձեր ներքին վիճակը կփոխանցվի այն մարդկանց, որոնց հետ հեռահար աշխատանք կվարեք:

Որքան ավելի մաքուր լինեն ձեր մտադրությունները, և որքան վսեմ լինի ձեր վիճակը, այնքան ավելի հրաշալի արդյունքների կհասնեք:

Ես ձեզ պետք է զգուշացնեմ ևս մեկ կարևոր պահի մասին: Եթե ձեր վիճակը ներդաշնակ չէ, և ձեր մղումները մաքուր չեն, ապա կարմա կստեղծեք, որը հետագայում ինքներդ պետք է բեռնաթափեք: Միշտ հիշեք, որ կարմա են ստեղծում ոչ միայն ձեր արարքներն ու գործողությունները, այլ նաև ձեր մտքերն ու զգացմունքները: Ուստի ես այժմ ձեզ եմ դիմում այն հույսով, որ դուք արդեն կարդացել եք բոլոր այն թելադրությունները, որոնք մենք տվել ենք մեր դեսպանորդի միջոցով, և ձեր գիտակցությունը լիովին նախապատրաստված է այն պատասխանատու աշխատանքին, որի մասին մենք ձեզ խնդրում ենք:

Ես ձեզ հետ խոսում եմ որպես ինձ հավասար էակների հետ, որոնք ունակ են հասկանալու մեր խնդիրները և զոհելու իրենց մանր-մունր հետաքրքրությունները՝ հանուն Ընդհանուր Բարօրության, հանուն հարազատ մոլորակի բարգավաճման:

Միշտ հիշեք, որ ձեր մոլորակի վրա չկան թշնամիներ. կան միայն մարդիկ՝ մթազնված ու ցածրորակ գիտակցության վիճակներով, այդ թվում նաև տգիտությամբ:

Տգիտությունն ու գիտելիքի բացակայությունն են այն թշնամիները, որոնց դեմ պետք է մարտնչեք: Ուստի Երկրի մարդկանց հասցրե՛ք գիտելիքի Լույսը: Մոտեցե՛ք, վառե՛ք ջահերը և Լույս տարեք նրանց, ովքեր դրա կարիքն ունեն:

Ճիշտ նույն սկզբունքը կարող է դրվել ձեր այն հարազատների հետ աշխատանքի հիմքում, ովքեր գիտելիքների կարիք ունեն, բայց ինչ-որ պատճառով պատրաստ չեն սեփական ջանքեր գործադրելու, որպեսզի ձեռք բերեն դրանք: Օգնեցե՛ք նրանց: Պատմե՛ք նրանց Ուսմունքի մասին: Պատմեք նաև մտովի, երբ գտնվում եք լավ, ներդաշնակ ներքին վիճակում: Դա վերաբերում է հատկապես ձեր մերձավոր հարազատներին, որոնց հետ կապված եք կարմայով: Փորձե՛ք նրանց գիտելիք փոխանցել մտքերի ու զգացմունքների մակարդակով: Մի՛ ամաչեք ձեր մերձավորներին Մեր առաքելուց: Քանզի ոչինչ այնքան կենարար չէ մարդկանց հոգիների համար, որքան ձեր սրտերի Սիրով նրանց ամենօրյա ոռոգումը:

Ես ուրախ եղա այսօր ձեզ հետ հանդիպելուս առիթով: Հուսով եմ, որ այս հանդիպումն ու իմ զրույցն օգտակար եղան ձեզ համար: Ես ձեզ հաջողություններ եմ մաղթում ձեր Ուղում...

ԵՍ ԵՄ Շիվան՝ մշտապես ձեզ հետ

Տեր Սուրիա
4 հուլիսի, 2006 թ.

**Որքանով կարողանաք ձեր մեջ զարգացնել
Աստծո Սիրո հատկանիշը,
նույնքան հաջող էլ կկարողանաք շարունակել
ձեր հրաշալի մոլորակի էվոլյուցիան**

ԵՍ ԵՄ Սուրիան՝ այս օրով ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ ձեզ այցելել Մեծ Կենտրոնական Արևից, որպեսզի ձեզ հաղորդակից դարձնեմ հավերժական Ուսմունքի ևս մեկ էջին՝ Հավերժական Կյանքին և մահվան բացակայությանը վերաբերող: Ձեզ կարող է թվալ, թե ես չափազանց վերամբարձ եմ արտահայտվում, սակայն այսպես է ընդունված խոսել այն շրջանակներում ու օկտավաներում, որտեղից եկել եմ: Մեր լեզուն ձեր լեզվին նման չէ: Մենք խոսում ենք մտքի լեզվով և նույնիսկ ոչ այնքան մտքի լեզվով, որքան էներգիայի: Մենք էներգիաներ ենք փոխանակում, և դա նման է այն բանին, երբ ձեր միջև Սիրո զգացմունք է փոխանակվում: Ահա և ձեզ հաղորդակից դարձրի Տիեզերքի մեծագույն գաղտնիքներից մեկին. համայն տիեզերքում ամեն ինչ հիմնված է Սիրո մեծ ուժի վրա: Եվ ամենայն ինչ տիեզերքում պարտական է միայն Սիրո ուժին:

Մերը համայն տիեզերքի հիմքն է: Ըստ այդմ, եթե ձեր թրթիռներն առավելագույն չափով մոտենում են տիեզերքի թրթռանքին, ապա վերածվում են բացառապես Սիրո թրթիռների: Եվ որքան շատ եք ձեր սրտում դրսևորում Սիրո հատկանիշը, այնքան ավելի եք մոտենում ճշմարիտ իրականությանը և հեռանում ձեր ֆիզիկական պատրանքից: Սակայն Սիրո հատկանիշը ձեր և մեր աշխարհներում իրարից ամբողջովին տարբերվող նրբերանգներ ունի: Եվ այն, ինչը ձեզնից շատերը Մեր են համարում, իրականում բոլորովին էլ Մերը չէ: Այն զգացմունքը, որը դուք երբեմն սեր եք անվանում, իր նշանակությամբ ավելի շատ մոտ է սեռական կամ սեռին հատուկ բնագրին: Եվ այդ զգացմունքը ոչնչով չի տարբերվում նրանից, ինչ զգում են կենդանիները կամ թռչունները: Ուստի նախ և առաջ հարկ է, որ մտորեք, թե ինչպիսին է այն Սիրո որակը, որը դուք զգում եք: Իսկական Մերը կապված չէ ո՛չ որոշակի սեռի, ո՛չ էլ ընդհանրապես որևէ Սիրո առարկայի հետ: Դա ներքին զգացմունք է, որը կապ չունի որևէ էակի կամ առարկայի հետ. դա Մերն է ամեն ինչի նկատմամբ, ամբողջ Կյանքի, համայն տիեզերքի նկատմամբ: Եվ ձեզնից շատերը, երբ գտնվում են բնության գրկում, ունակ են դառնում բարձրացնելու իրենց թրթիռները մինչև ճշմարիտ Սիրո իսկական զգացմունքի մակարդակը: Սակայն այդ Սիրո ուժն ու հագեցվածությունը կարելի է է՛լ ավելի մեծացնել: Ձեր ֆիզիկական մարմինները պարզապես ունակ չեն զգալու այդ զարմանահրաշ Սիրո հատկանիշի ավելի վսեմ ու նուրբ դրսևորումները: Ձեզնից յուրաքանչյուրը սիրում է յուրովի, և ձեզնից յուրաքանչյուրին հատուկ է Սիրո հատկանիշի իր անհատական, անձնական ըմբռնումը: Արարման սկզբում Աստված բաժանեց իր Մերն անթիվ առանձին մասերի, և ձեզնից յուրաքանչյուրը, լինելով Աստծո մի մասնիկը, ստացավ Սիրո իր չափաբաժինը: Եվ այժմ դուք հնարավորություն ունեք զգալու այդ Մերն ու կատարելագործելու այն: Դրա համար ձեզ անհրաժեշտ է ձեր կյանքից հեռացնել այն ամենը, ինչ խոչընդոտում է ձեր ներսում Սիրո զգացմունքի աճը: Ուշադրությամբ դիտեցե՛ք ձեր կյանքերն ու ձգտեք հետևել, թե ավելի հաճախ ինչպիսի՞ վիճակներ եք ապրում և զարմանաքով կնկատեք, որ այն Սիրո զգացմունքը, որն ի սկզբանե հատուկ էր ողջ արարվածին, Սիրո այդ ճշմարիտ զգացմունքը դուք համարյա երբեք չեք ապրում: Եվ նույնիսկ ձեր առաջին սիրո դեպքում շատ հազվադեպ է պատահում, որ այդ զգացմունքը չգունազարդվի սեփականատիրական բնագրով և սիրո առարկային տիրանալու ձեր ցանկությամբ: Արդ, որքանով կարողանաք ձեր մեջ զարգացնել Աստծո Սիրո հատկանիշը, նույնքան հաջող էլ կկարողանաք շարունակել ձեր հրաշալի մոլորակի էվոլյուցիան:

Ուստի ես այսօր եկա, որպեսզի ձեզ փոխանցեմ Երկրի մարդկության նկատմամբ իմ մեծ Սիրո զգացմունքի վրա հիմնված այս ուղերձը:

Եվ եթե ես և մյուս Վեհապետները մեր մեջ չունենայինք այդ անվերապահ, կատարյալ Սիրո զգացմունքը, ապա հազիվ թե կարողանայինք մատերիական աշխարհի զարգացման ամբողջ բոլորաշրջանի ընթացքում գալ և դայակություն անել ձեզ, հոգ տանել ձեզ համար և տալ ձեզ մեր խրատներն ու քարոզները:

Մենք չափազանց լավ գիտենք, որ ինչքան էլ համառեք, դուք այլ ընտրություն չունեք և վաղ թե ուշ կհետևեք այն Ուղուն, որը ձեզ համար նախատեսված է համայն տիեզերքի մեծ Արարչի կողմից:

Եվ դա բարձրագույն Սիրո ու բարձրագույն երանության Ուղին է: Այն ամենը, ինչ հեռացնում է ձեզ այդ վիճակից, ենթակա է աստիճանական հրաժարման և պետք է լքի ձեր գիտակցությունն ու ձեր կյանքը: Որովհետև դա՛ է Օրենքը: Եվ դուք ինքներդ պետք է ընտրություն կատարեք ու հետևեք այդ Օրենքին, բարձրագույն ու անվերապահ Սիրո Օրենքին:

Այժմ ձեզ համար դժվար է հավատալ, որ այն, ինչ ձեզ շրջապատում է, պարզապես ոչ-աստվածային, հակասիրո արտահայտություն է: Այո՛, այն ամենը, ինչ ստեղծել եք, չհիմնվելով Սիրո մեծ զգացմունքի վրա, ժամանակի ընթացքում կանհետանա՝ դադարելով գոյություն ունենալուց: Կմնա միայն այն, ինչը կատարյալ է Աստծո մեջ. և, առաջին հերթին, մարդկային գիտակցությամբ չմթազնված, անշահախնդիր, աստվածային Սիրո զգացմունքը:

Ես շատ ուրախ եմ այսօր ձեզ այս Ուսմունքը տալուս համար: Շատ հաճելի է խոսել Սիրո մասին և Սեր տածել ձեր նկատմամբ, Երկրի զավակներ: Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե որքա՛ն երջանիկ եմ:

Այժմ ես կուզենայի մի երկու խոսք ասել մեր հետագա պլանների վերաբերյալ: Ըստ էության, դրանք ոչնչով չեն տարբերվում նախկիններից: Մենք շարունակելու ենք վեր հանել Երկրի մարդկությանը մինչև Էվոյուցիոն այն մակարդակը, որին նա պետք է համապատասխանի, բայց դեռևս համառում է: Ձեզ թվում է, թե դուք մեծ նվաճումների եք հասել, բայց ձեր նվաճումներն ուղղված են այն բանին, որ բազմապատկեք պատրանքը, և դա այն դեպքում, երբ ձեզնից այս փուլում պահանջվում են ա՛յլ տիպի նվաճումներ: Դրանք պետք է լինեն ձեր ներսում Աստծո հատկանիշների զարգացման տիրույթին պատկանող նվաճումներ, որոնցից գլխավորը Աստծո Մերն է: Բայց կան և ուրիշ հատկանիշներ, որոնք ձեր ներսում պետք է զարգացնեք: Եվ, որպեսզի կենտրոնանաք ճշմարիտ ներքին նվաճումների վրա, ձեզ անհրաժեշտ է մուտք գործել ձեր իսկ ներսը: Եվ դա հենց այն ուղին է, որ մենք ուսուցանում ենք, միաստիկների ուղին, այն ուղին, որը տանում է ձեզ դեպի ձեր Սկզբնաղբյուրը:

Սակայն, որպեսզի ընթանաք Ուղով, ձեզ հարկ կլինի հրաժարվել ձեր աշխարհի հետ ունեցած կապվածություններից և բոլոր այն նպատակներին ձգտելուց, որոնք պատկանում են ձեր աշխարհին: Իսկ դա շատ դժվար գործ է: Քանզի մեզ հետ և ձեր իսկ Բարձրագույն մասի հետ ներքին կապին հասնելու համար ձեզ անհրաժեշտ է ունենալ պայմանականություններից զերծ ու անվերապահ Հավատ: Հավատն ու Մերը երկու քույրեր են, երկու սիրող քույրեր, որոնք հավերժ իրարից անբաժան են: Կա և Հույսը: Հույս, որը կարող է բացել ձեր գիտակցությունն այն դեպքում, երբ ձեզ արդեն թվում է, թե ելք չկա կյանքի խառնաշփոթություններից ու փոթորիկներից դուրս պրծնելու համար:

Ուստի մենք գալիս ենք, որպեսզի մշտապես ձեզ պահենք բարձրագույն իրականության հետ ներդաշնակ վիճակում և Հույս շնորհենք ձեզ վաղվա օրվա նկատմամբ, որն, անշուշտ, ավելի լավը կլինի: Որովհետև այդպիսին է համայն տիեզերքի Օրենքը: Եվ ամեն մի հաջորդ Էվոյուցիոն բոլորապատույտով դուք ավելի ու ավելի կմոտենաք Աստծո իրականությանը, և ավելի ու ավելի հեշտ կլինի ձեզ համար: Ժամանակին դուք կստանաք այդ իրականության ճանաչողությունը, և երջանկության զգացումը ձեզ կպարուրի՝ այլևս երբեք ձեզ չքելով: Ձեր գիտացության աղջամուղջն ավարտվում է: Առջևում լուսաբացն է և նոր իրականության մեջ արթնացումը:

Ես երջանիկ եմ, որ ձեզ ավետեցի նոր իրականության մոտալուտ Արևազալը:

ԵՍ ԵՄ Սուրիան՝ Սիրո մեծ զգացմունքով ձեզ այցի եկածը

Տեր Մայտրեյա
5 հուլիսի, 2006 թ.

**Միայն տգիտությունն ու սահմանափակությունն են
ձեզ հեռացնում կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ
ձեր միասնությունն ընդունելուց**

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ իմ դեսպանորդ Տառյանայի միջոցով նորից այս օրով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ ձեզնից յուրաքանչյուրն Աստծո անկրկնելի ու առանձնահատուկ մի մասնիկն է: Եվ համաձայն Աստծո պլանի՝ դուք պետք է զարգանաք, այսինքն՝ Էվոյուցիոն զարգացման Ուղով ընթանաք, ինչպես Աստծո կողմից պլանավորվել է համայն տիեզերքի արարման պահին: Ձեզ կարող է թվալ, թե դուք անկախ եք ու առանձին, կապված չեք ո՛չ իրար հետ, ո՛չ էլ համայն տիեզերքից որևէ մեկի հետ: Ձեր գիտակցության մակարդակում այդ համոզմունքը համարյա անվիճելի է, քանի որ ձեր շուրջը տեսնում եք ձեր համոզմունքի՝ ձեր այդ տեսակետի և աշխարհակառույցին վերաբերող ձեր հայացքի անվիճելի հաստատումները: Շատ անգամ է բերվել այն օրինակը, որ դեռևս մի քանի հարյուրամյակ առաջ դուք կարծում էիք, թե Երկիրը կլոր չէ և չի պտտվում արևի շուրջը: Ձեր ներկայիս հայացքներն ու համոզմունքներն այսուհետև ևս կենթարկվեն փոփոխությունների, ընդ որում հիմնարար փոփոխությունների: Դուք ուսումնասիրել եք ձեր ֆիզիկական աշխարհը: Եվ քանի որ արդեն լավ

յուրացրել էք այդ աշխարհը, ապա ձեր գիտակցությամբ պետք է առաջ շարժվեք դեպի այլ, ավելի նուրբ աշխարհների ճանաչում: Եվ ավելի ու ավելի խոր պետք է զգաք այն կապը, որը գոյություն ունի ձեր և իմ, ձեր և Համբարձյալ Դասերի և նույնիսկ ձեր և ձեր միջև:

Որքան էլ ձեզ թվա, թե դուք առանձին եք ու անկախ, ժամանակի հետ ձեզ կվիճակվի զգալ ոչ միայն համայն տիեզերքի Միասնական ու անբաժանելի Արարչի հետ ձեր ներքին միասնությունը, այլ նաև ձեր միասնությունը մեկդ մյուսի հետ:

Այս օրով ձեզ այցի գալով՝ ես կուզենայի, որ արդյունավետ օգտագործվի մեր հանդիպման ամեն մի ականջարթը: Ուստի ձեռնամուխ եմ լինում այն ամենագլխավորին, որի համար եկել եմ: Ձեզ հայտնի է, որ ձեր մոլորակը միակը չէ Տիեզերքում: Գոյություն ունեն այլ աշխարհներ և այլ աստղային համակարգեր: Տիեզերքում դուք միայնակ չեք: Եվ ձեր փոխազդեցությունը, այլ տիեզերական էակների հետ ձեր կապերը, որոնք ի հայտ են գալիս դեպքից դեպք, ձեզ մոտ տարբեր զգացմունքներ են առաջացնում՝ սկսած վախից, վերջացրած հետաքրքրասիրությամբ: Մակայն տիեզերական այլ էակների հետ ձեր փոխազդեցությունը ձեր զարգացմանը համընթաց կշարունակվի: Ամեն ինչ ձեր գիտակցության ներքին վիճակից է կախված. եթե շարունակեք պահպանել ձեր անկատարությունները, ապա դեպի ձեր մոլորակը կքաշեք տեխնոկրատական, իրենց մեջ պարփակված քաղաքակրթությունների ներկայացուցիչների. իսկ եթե ձգտեք փոխել ինքներդ ձեզ և ձեռք բերել աստվածային հատկանիշներ, ապա շատ շուտով կկարողանաք հաղորդակցվել հրեշտակների, տարրոգիների և այն աշխարհների ներկայացուցիչների հետ, որոնք զարգանում են Աստծո նախանշած ուղով: Այդ առումով մենք անդադար փաստարկներ ենք բերում, որպեսզի ձեզ համոզենք, որ ձեզ անհրաժեշտ է լրջորեն զբաղվել ձեր գիտակցության հարցերով:

Ուսմունքը, որը մենք հիմա տալիս ենք, անխզելիորեն կապված է միայն մի բանի հետ՝ փոխել ձեր գիտակցությունը, ընդլայնել այն: Մենք ամեն ինչ անում ենք, որ դուք կարողանաք դուրս գալ ձեզ բնորոշ սահմանափակումների շրջանակներից, կրոնական սահմանափակումների, ազգային մշակույթի և ազգային հետաքրքրությունների շրջանակներից: Այն ամենը, ինչ ուղղված է մերձեցմանը, ինտեգրմանը, Ընդհանուր Բարօրությանը, օգտակար է. Այն, ինչ տանում է դեպի առանձնացում, պետք է մոռացվի:

Մակայն մեր ասած միասնությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե դուք իրար հետ միավորվեք ընդհանուր սկզբունքների հիման վրա: Միավորվել հնարավոր չէ, եթե յուրաքանչյուրը պնդում է միայն իր տեսակետը և չի ցանկանում հաշվի առնել մյուսի տեսակետը: Բայց կա ընդհանուր շփման կետ՝ ընդհանուր դիրքորոշում, որի վրա հենվելու դեպքում միավորումը հնարավոր է դառնում: Իսկ այդ դիրքորոշումը ենթադրում է էզոյից հրաժարում: Մենք ուսուցանում ենք էզոյից հրաժարվելու ուղին: Ձեր մեկուսացվածությունն ուժեղ է, քանի դեռ ձեզնից յուրաքանչյուրը պնդում է իր տեսակետը՝ ի վնաս ուրիշի: Եվ միայն այնժամ, երբ դուք ունակ կլինեք հրաժարվելու այն ամենից, ինչը խանգարում է ձեզ անկողմնակալ ձևով դիտարկելու ուրիշի դիրքորոշումը, դուք կկարողանաք ընթանալ միասնության և համաձայնության հասնելու ուղով:

Միասնության մասին շատ են խոսում, սակայն շատ քիչ բան է փոխվում: Քանզի ամեն մեկը, խոսելով միասնության մասին, ենթադրում է, որ բոլորը պետք է ականջալուր լինեն և կիսեն հենց իր տեսակետը: Այնինչ դուք պետք է ձգտեք բարձրանալ գիտակցության այնպիսի մակարդակի վրա, երբ բոլոր հակասությունները հարթվում են և այլևս չեն երևում:

Ահա այդ խնդիրն է, որը մենք ուզում ենք, որպեսզի ձեզնից յուրաքանչյուրը լուծի իր գիտակցության մեջ:

Ջանացե՛ք վերլուծել, թե ինչն է ձեզ բաժանում զանազան հոգևոր ուղղությունների ներկայացուցիչներից, և դուք կհասկանաք, որ բաժանողը ձեր էզոն է և ձեր տգիտությունը: Ուստի, ինչպես միշտ, մենք ձեզ առաջարկում ենք մի ուղի, որով ընթանալով՝ դուք կկարողանաք ձերբազատվել ձեր անկատարություններից և հասնել նախասահմանված միասնությանը:

Ըստ էության, միայն տգիտությունն ու սահմանափակությունն են ձեզ հեռացնում այն բանից, որ ընդունեք կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ ձեր միասնությունը:

Մոտակա ժամանակներում ձեզ կվիճակվի ձեռնարկել այնպիսի քայլեր ու ջանքեր, որոնք ուղղված կլինեն ձեզ իրարից բաժանող ներքին սահմանափակումները հաղթահարելուն: Նկատի ունեցե՛ք՝ ես չեմ ասում, թե դուք պետք է որևէ մեկին համոզեք, որ իր ուսմունքը սխալ է, իսկ ձերը՝ միակ ճիշտը: Ես խոսում եմ այն մասին, որ ձեր գիտակցության մեջ դուք պետք է վերացնեք այն պատկերներն ու սահմանափակումները, որոնք ձեզ թույլ չեն տալիս այլ ուսմունքներ ընդունել:

Խորհեցե՛ք այն մասին, որ աշխարհի բոլոր կրոնների հիմնադիրները, հայտնվելով տարբեր ժամանակներում, տարբեր լեզուներով տվել են միևնույն ճշմարտությունը: Եվ եթե ինքներդ ձեզ համարում եք մարդկության ուսյալ, ինտելեկտուալ ներկայացուցիչներ, ապա ջանացեք գտնել այն

ընդհանուրը, որն ընկած է բոլոր կրոնների հիմքում: Ուշադրություն մի՛ դարձրեք տարբերությունների վրա: Ձեր ուշադրությունը կենտրոնացրեք ընդհանուր սկզբունքների և մոտեցումների վրա, և դուք պարզորոշ կտեսնեք տարբեր աղբյուրներից մարդկությանը երբևէ տրված բոլոր կրոնների և բարոյական ուսմունքների միասնությունը:

Բոլոր համաշխարհային կրոնների միավորմամբ նոր կրոնի ստեղծումն իրականություն կդառնա միայն այն ժամանակ, երբ ձեր գիտակցությամբ ունակ կդառնաք հարգելու և ընդունելու ուրիշի տեսակետը՝ կուրորեն, անգամ զենքի դիմելու գնով ձերը պնդելու փոխարեն: Այդ ամենը պետք է թողնեք անցյալում: Նոր Աշխարհում ո՛չ ընդհանուր, ո՛չ էլ որևէ առանձին թշնամանք տեղ չի ունենա: Ամեն մի թշնամանք ձեր աշխարհից կանհետանա ձեր գիտակցության փոփոխությանն ու աճին զուգընթաց:

Ձեր աշխարհի բոլոր խնդրահարույց հարցերը ծագում են ձեր գլխում՝ ձեր ներսում: Եվ Աստծո ամբողջ կատարելությունը նույնպես գտնվում է ձեր ներսում:

Ուստի ձեր կյանքի բոլոր գլխավոր խնդիրների լուծման համար դուք պետք է սովորություն դարձնեք դիմելու ձեր իսկ ներսում գտնվող ձեր Բարձրագույն Ես-ին:

Բարձրագույն Ես-ի հետ կապն ու էզոյից ձերբազատվելը մեր կողմից տրվող Ուսմունքի գլխավոր անկյունաքարերն են:

Իսկ այժմ ես ուզում եմ հրաժեշտ տալ ձեզ:

Մինչև նոր հանդիպումներ...

ԵՄ ԵՄ Մայրերևան

Վեհապետ Կոլթիումի
6 հուլիսի, 2006 թ.

Կարմայի Օրենքի հասկացության ընդլայնումը

ԵՄ ԵՄ Կոլթիումին՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Այն ժամանակահատվածում, երբ մենք ձեզ չէինք այցելում, ես հնարավորություն ունեցա վերլուծելու և առավել խորը գիտակցելու այն պատասխանատվությունը, որն ինձ ու ձեզ վրա է դնում մեր հաղորդակցությունը: Եթե ինքներդ էլ մտորեք, ապա կհանգեք այն անխուսափելի եզրակացությանը, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում մեր հաղորդակցության՝ մեր թելադրությունների փոխանցման ընթացքում, զարմանահրաշ է և հարգալից ու հոգատար վերաբերմունք է պահանջում: Հնարավոր է, սկզբում դուք չգիտակցեք և մեծ նշանակություն չտաք մեր ուղերձներին, բայց այն բանին զուգընթաց, երբ պարբերաբար կկարդաք մեր ուղերձներն ու կպարուրվեք մեր էներգիաներով, դուք ավելի ու ավելի շատ կկարևորեք մեր հաղորդակցության րոպեները՝ ըստ արժանավույն գնահատելով և՛ մեր ուղերձների որակը, և՛ մեզ հետ հաղորդակցվելու հնարավորության հանգամանքը: Ըստ այդմ՝ ես այսօր եկել եմ, որպեսզի զրուցեմ ձեզ հետ, ինչպես հին ընկերների հետ: Դեռ ավելին՝ ես կարող եմ ձեզ տեղեկացնել, որ ձեր գիշերային քնի ընթացքում ձեզնից շատերի հետ ես համարյա ամեն օր հանդիպում եմ երեքային ոլորտի իմ մենաստանում: Եվ այն գիտելիքները, որոնք ինձնից դուք ստանում եք իմ մենաստանում ինձ հետ հաղորդակցվելու ընթացքում, հենց որ իրենց հաստատումն են գտնում այս թելադրություններում, նոր աճ են ստանում ձեր գիտակցության մեջ, և ֆիզիկական ոլորտում դուք սկսում եք շատ բաներ անել ավելի գիտակցված ձևով: Եվ ձեր գիտակցությանն են հասնում այնպիսի ճշմարտություններ, որոնք այլ կերպ չէին կարող ներթափանցել ձեր թանձր աշխարհը:

Եվ մենք ձեզ հետ համատեղ շարունակում ենք ֆիզիկական աշխարհի ձևափոխման գործը: Ընդ որում, մեր ու ձեր համատեղ գործունեությունը ենթադրում է ոչ թե մեր խորհուրդներին ու հանձնարարականներին կուրորեն ենթարկում, այլ կյանքում ձեր ստացած գիտելիքների ստեղծագործական կիրառում: Մեզ պետք չեն կույր հետևորդներ, որոնք հենց առաջին բառից պատրաստ են անել այն, ինչ ասում ենք: Մեզ պետք են գիտակից, խոհուն աշակերտներ, որոնք ոչ թե պարզապես առանց մտածելու անում են ինչ-որ բան, այլ գիտակցորեն իրենց արտաքին գիտակցության մեջ բեկում են ստացած գիտելիքները և գտնում մեր պլանների հնարավոր օպտիմալ իրականացման լավագույն տարբերակը:

Այդպիսով դուք մասնակից եք դառնում տիեզերական համատեղ արարման գործին: Եվ մենք բարձր ենք գնահատում մեր այն աշակերտներին, որոնք ոչ թե հանապազօրյա կենսական իրավիճակներին վերաբերող խորհուրդներ ստանալու նպատակով մի ուսուցչից մյուսի մոտ են վազում, այլ իրենց գիտակցությունը բարձրացնում են կենցաղային ու առօրեական գործերից վեր, տեսնում բացվող հեռանկարները և ձեռնամուխ լինում դրանց կենսագործմանը՝ չսպասելով, թե երբ իդեալական պայմաններ կդասավորվեն ֆիզիկական ոլորտում: Ձեր զարգացումը հնարավոր է

միայն այն դեպքում, երբ դուք հաղթահարում եք ինքներդ ձեզ և այն դժվարությունները, որոնք ձեր կյանքում ձեզ շրջապատում են: Հարկ չկա վախենալու կյանքի խնդիրներից և ձեզ հետապնդող անհաջողություններից: Ամբողջ բանն այն է, թե դուք ինչպես եք վերաբերվում խնդրահարույց հարցերին ու անհաջողություններին: Ուսմունքը ձեզ տալիս է ճիշտ մոտեցումներ, և դուք ինքներդ, առաջնորդվելով ձեր մոտեցումներով, կառուցում եք ձեր կյանքերը:

Դուք փոխում եք ձեր գիտակցությունը և սկսում եք այլ կերպ նայել այն խնդիրներին, որոնց հետ բախվում եք. վերլուծում եք ձեր առջև ծագած խնդիրներն ու խոչընդոտները և ձեր երախտագիտությունն եք հայտնում Աստծուն, որ Նա ձեզ հնարավորություն է տվել գիտակցելու անցյալի սխալները և դրանք ուղղելու ձեր առջև ծագած խնդիրների նկատմամբ ճիշտ վերաբերմունք դրսևորելու ճանապարհով:

Երբեք չպետք է մատնվել հիասթափության ու վիատության: Զեզ ուսմունք է տրվում, որպեսզի ձեր մեջ ճիշտ վերաբերմունք ձևավորեք այն ամենի նկատմամբ, ինչն ուղեկցում է ձեզ կամ ինչին բախվում եք ձեր կյանքերում: Եվ եթե ձեզնից ոմանք իմ օգնությամբ կամ հենվելով իրենց ներքնաբանման՝ Բարձրագույն Ես-ի հուշումի վրա, գիտակցում են այն պատճառը, որը կարմայորեն հանգեցրել է իրենց կյանքում այս կամ այն իրավիճակի առաջացմանը, ապա սկսում են բազմակիորեն շնորհակալություն հայտնել Աստծուն, որ Նա թույլ է տվել այդպիսի հեշտ եղանակով մարել կարմայական պարտքը:

Իրոք, Երկնքի ողորմածությունն անսահման է, և հենց դուք եք, որ ձեր անխոհեմ վարքով ծնում եք այն խնդիրների ու դժբախտությունների պատճառները, որոնց հետ բախվում եք ձեր կյանքերում: Երբեմն ձեր այդ խնդիրներն այնքան մեծ են լինում, որ տառաջիորեն ձեր ամբողջ կյանքում նույնիսկ խաչ է քաշվում Եղբայրությանը լրիվ չափով ծառայելու ձեր հնարավորության վրա: Քանզի դուք չափից դուրս ծանրաբեռնված եք լինում կարմայական պարտքերով: Բայց այն իմաստությունը, որը դուք ձեռք եք բերում՝ մեզ հետ հաղորդակցվելով, ձեզ օգնում է գիտակցել, որ հաջորդ կյանքում կկարողանաք շարունակել ձեր ծառայությունը, և ձեր կյանքի հանգամանքներն արդեն այնպիսին կլինեն, որ այնքան էլ բարդ ու ծանրացուցիչ չեն լինի ձեզ համար, քանի որ դուք ձեր այս կյանքում արդեն մարած կլինեք ձեր կարմայական պարտքերի մեծ մասը: Կարմայական պարտքերը ճիշտ ժամանակին մարելը խիստ թեթևացնում է նաև ձեր գավակների բեռը, քանզի կարմայի հատկությունն այնպիսին է, որ երբեմն չմարված կարմայական բեռը՝ որպես ծանր լուծ, ընկնում է գավակների ու թոռների ուսերին: Ըստ այդմ՝ ուրախ եղեք այն դառնությունների ու աղետների համար, որոնք թափվում են ձեր գլխին: Դրանով դուք պայծառ ապագա եք նախապատրաստում ինչպես ձեր հաջորդ կյանքի, այնպես էլ ձեր գավակների ու թոռների ներկա կյանքերի համար: Կարմայի Օրենքի ճիշտ ըմբռնումը ձեզ երջանիկ է դարձնում նույնիսկ այն դեպքում, երբ, ձեզ շրջապատող մարդկանց կարծիքով, դուք ձեր ուժերից վեր կարմայական բեռ եք կրում:

Ամբողջ բանն այն է, թե ինչպես է ձեր արտաքին գիտակցությունն ընկալում ձեր բեռնվածությունը: Ուստի երբեք մի՛ տխրեք ձեր խնդիրների պատճառով: Բարի եղեք ուրախանալ, որ ձեր ընթացիկ խնդիրների հաղթահարմամբ դուք պայծառ ապագա եք պատրաստում և՛ ձեր, և՛ ձեր գավակների ու թոռների համար:

Հաջորդ սերունդն անհամեմատ ավելի երջանիկ կլինի, քան ձերը, քանի որ ձեզնից շատերն այս կյանքում իրենց վրա են վերցրել կարմայի բեռնաթափման չափազանց մեծ պարտավորություններ: Դուք դա արել եք գիտակցաբար, որպեսզի արագացնեք Երկրում տեղի ունեցող բարեփոխումների ու փոփոխությունների գործընթացը: Եվ ձեր շրջապատից նրանք, ովքեր ձեզ մատնացույց են անում, թե դուք երևի չափազանց շատ մեղքեր եք գործել, որ ձեր բեռն այդքան ծանր է, ոչինչ չեն հասկանում Կարմայի Օրենքի գործողությունից, և նրանց գիտակցությունն ունակ չէ գիտակցելու այն ամբողջ զոհողության չափը, որը դուք մարմնավորվելուց առաջ կամավոր կերպով ձեզ վրա եք վերցրել: Սակայն մենք՝ Համբարձյալ Դասերս, շատ բարձր ենք գնահատում ձեր զոհողությունը: Դեռ ավելին, մենք պատրաստ ենք արձագանքելու ձեր խնդրանքին և, որքանով Օրենքը թույլ է տալիս, օգնելու ձեզ, որպեսզի թեթևացնենք ձեր այդ բեռնվածությունը: Երբեմն, երբ ընթացիկ կյանքում ձեր ստեղծած բարի կարման թույլ է տալիս, մենք կարող ենք ձեր կանչով գալ և ձեզ օգնել այնպիսի իրադրության մեջ, որը, ձեր կարծիքով, այլևս ուժ չունեք հաղթահարելու: Եվ ձեր կանչից որոշ ժամանակ անց դուք զարմանքով հետ եք նայում ու հասկանում, որ այն, ինչ անհաղթահարելի լուծի պես ընկած էր ձեր ուսերին, հանկարծ չքացել է, գոյորշիացել, ընկել ձեր ուսերի վրայից: Նման դեպքում երբեք մի՛ մոռացեք փառք տալ Երկնքին և հղել ձեր երախտագիտությունը: Զեր լավագույն շնորհակալությունը կլինի այն ծառայությունը, որը դուք ունակ եք մատուցելու հանուն Երկրի կյանքի բարօրության:

Այժմ ես կտամ մի բանաձև, որի օգնությամբ դուք կարմայական բեռի թեթևացում կստանաք այն դեպքերում, երբ ձեր բարի կարման դա թույլ է տալիս: Եվ այսպես, դուք արտասանում եք.

«Հանուն ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ, հանուն իմ հզոր ԵՄ ԵՄ Ներկայության, հանուն իմ սուրբ ԵՄ-Քրիստոսի (կարելի է՝ հանուն ամենակարող Աստծո), ես դիմում եմ Մեծ Կարմայական Վարչությանը և խնդրում ձեզ՝ օգտագործել իմ բարի նվաճումների ողջ պաշարը, որպեսզի մարվի այն կարման, որը բերել է... (այնուհետև պետք է նկարագրեք այն իրադրությունը, որում ուզում եք ստանալ Կարմայական Վարչության օգնությունը): Թող ամեն ինչ Աստծո Կամքով լինի»:

Դուք կարող նամակ գրել, բարձրաձայն կարդալ ձեր դիմումը և այրել նամակը՝ այն հասցեագրելով Կարմայական Վարչությանը: Եթե ձեր ձեռք բերած բարի կարմայի պաշարը թույլ տա, և Կարմայական Վարչությունը հնարավոր համարի ձեր խնդրանքի բավարարումը, ապա ձեր կարմայական իրավիճակն այս կամ այն չափով կլուծվի:

Ձեզ նախկինում տրված հնարավորությունը* համապատասխան՝ քնի ընթացքում նուրբ մարմնով ձեզ կկանչեն Կարմայական Վարչության նիստին, և այնտեղ ձեր հոգին պետք է հաստատի ձեր այն խնդրանքը, որն արտահայտել էիք ձեր արտաքին գիտակցությամբ:

Երբեմն լինում են դեպքեր, երբ մարդու արտաքին գիտակցությունն այլևս չի ուզում դիմանալ կարմայական բեռին, բայց մարդու հոգին հրաժարվում է օգնությունից: Այդպիսի դեպքում Կարմայական Վարչությունը նախապատվություն է տալիս ձեր հոգու կարծիքին: Ուստի եթե որոշակի ժամանակահատվածում ձեր խնդրանքը չի բավարարվում, դուք կարող եք խոսել ձեր հոգու հետ և փորձել նրա հետ համաձայնության գալ տվյալ հարցի շուրջ:

Ես ձեզ շատ եմ խորհուրդ տալիս, որ ձեզ համար գործելակերպ դարձնել ձեր հոգու հետ զրուցելը: Եվ լավ կլինի, եթե Կարմայական Վարչությանը նամակ հղեք միայն այն բանից հետո, երբ ձեր հոգու հետ արդեն պայմանավորվել եք:

Դուք բազմաշերտ էակներ եք և շատ մարմիններ ունեք: Այդ պատճառով ձեզ անհրաժեշտ է հասնել ձեր բոլոր մարմինների ներդաշնակությանն ու միասնությանը: Մարդկանց մեծ մասի մարմիններն այնքան անհավասարակշիռ վիճակում են լինում, որ նույնիսկ չեն կարող հաշիվ տալ իրենց, թե ինչպես վարվեն իրենց բոլոր մարմինների հետաքրքրությունների հետ: Դադարե՛ք ձեզ նույնացնել միայն հայելու մեջ ձեր տեսածի հետ: Դուք անհամեմատ ավելի մեծ եք ձեր ֆիզիկական մարմնից: Եվ մարդկության զարգացման հաջորդ փուլը կլինի ձեր նուրբ էության գիտակցումն ու այդ էության դրսևորման համար ներդաշնակ պայմանների ստեղծումը: Քանզի այն պայմանները, որոնցում հիմա դուք ապրում եք, երբեմն բացարձակապես չեն նպաստում այն բանին, որ կարողանաք ներդաշնակություն հաստատել ձեր նուրբ մարմիններում: Դա մարդկության զարգացման հաջորդ փուլը կլինի: Սակայն այժմվանից արդեն դուք պետք է մտահոգվեք ձեր բոլոր մարմինների ներդաշնակ զարգացման համար ձեր շուրջը պայմաններ ստեղծելու խնդրով:

Ես այսօր ձեզ շատ նոր բաներ ասացի: Եվ ես լքում եմ ձեզ՝ նոր հանդիպումների հույսով:

ԵՄ ԵՄ Կույթում/ին

***«Ինքներից ձեզ թույլ տվեք ձեր գիտակցությամբ դուրս գալ ձեր ընտանիքի, ձեր քաղաքի, ձեր երկրի շրջանակներից և ընդունել ամբողջ Երկիրը որպես ձեր հարազատ տունը» - Տեր Մայտրեյա 5 հունիսի, 2006 թ.**

Վեհապետ Էլ Մորիա
7 հուլիսի, 2006 թ.

**Կգտնվեն նրանք, ովքեր կդրսևորեն
կայունություն ու նվիրվածություն
և կկարողանան մեզ օգնել մեր
նպատակների իրականացման գործում**

ԵՄ ԵՄ Էլ Մորիան, նորից եկել եմ իմ դեսպանորդի միջոցով, որ Ուսմունք տամ և ձեզ հետ զրուցեմ օրախնդիր հարցերի շուրջ:

Ես անչափ ուրախ եմ, որ ինձ ընձեռնվում է այսպիսի հնարավորություն: Ամեն անգամ ես գալիս եմ և չեմ կարողանում թաքցնել իմ հիացմունքը, որ կա մեր հաղորդակցության հնարավորությունը: Ուստի այսօր, առանց ժամանակ կորցնելու, ես ձեռնամուխ եմ լինում շարադրելու այն, ինչն անհրաժեշտ է ձեզ: Իսկ ձեզ շատ բան է անհրաժեշտ: Եվ եթե դուք կարողանայիք մշտապես կենտրոնանալ մնալ Եղբայրության նպատակների վրա ու իրագործել նրա պլանները, ապա մոլորակի Էվոյուցիան կընթանա անհամեմատ ավելի մեծ տեմպերով: Սակայն դուք շարունակում եք մնալ պատրանքի մեջ՝ ձեր գիտակցությունն զբաղեցնելով շրջակա

պատրանքային դրսևորումներով: Այդ պատճառով ես գալիս եմ նորից ու նորից և փորձում եմ ձեր գիտակցությանը հասցնել այն բաներ, որոնք ձեզ անհրաժեշտ են:

Դուք մոռանում եք իմ ասածները տառացիորեն անմիջապես այն բանից հետո, երբ դադարում եք կարդալ իմ ուղերձները: Եվ ես ստիպված եմ լինում նորից գալ և միևնույն Ուսմունքը տալ մի փոքր այլ տեսանկյունով՝ այն հույսով, որ կգտնվեն նրանք, ովքեր կդրսևորեն կայունություն ու նվիրվածություն և կկարողանան մեզ օգնել մեր նպատակների իրականացման գործում:

Դուք ձեր խլրտուն մարդկային խելքով կարծում եք, թե այն ամենը, ինչ մենք ասում ենք, դուք արդեն գիտեք, և ձեր մարմնական ուղեղը զբաղեցնելու հույսով մղվում եք նոր տպավորությունների հետևից: Սակայն ձեզ որևէ նոր գիտելիք պետք չէ: Քանզի կա միայն մեկ Ուսմունք և Աստծո մեկ ճշմարտություն: Եվ այդ Ուսմունքը ճանաչել հնարավոր է միայն մանկան խելքով:

Հրաժարվել ավելորդ իմաստակությունից և ինտելեկտուոլ խորամտությունից. ահա այն, ինչին պետք է հասնեք:

Ես հաշվի եմ առնում, որ ձեր մենտալային մարմինները դեռևս այնքան էլ զարգացած չեն: Հենց այդ պատճառով եք դուք դրանք ուզում բեռնավորել ինտելեկտուալ իմաստակություններով:

Դուք գալիս եք թանձր աշխարհ, և ձեր նպատակներից մեկն այն է լինում, որ զարգացնեք ոչ միայն ձեր ֆիզիկական մարմինը, այլ նաև ձեր նուրբ մարմինները՝ աստեղային մարմինը, մենտալային մարմինը և եթերային մարմինը:

Ձեր նուրբ մարմինները ձեր հոգին են կազմում: Եվ այն զարգացման կարիք ունի: Ուստի դուք մատերիայի մեջ կմնաք այնքան ժամանակ, քանի դեռ բավականաչափ փորձ ձեռք չեք բերել և չեք զարգացրել ձեր բոլոր մարմինները:

Այժմ բոլորաշրջանն այնպիսին է, որ ձեր մենտալային մարմինները զարգացման ազդակ են ստանում: Նրանք հետաքրքրասեր են, ինչպես մանուկները, և փորձում են նորանոր ասպարեզներ գտնել իրենց գործունեության համար: Սակայն ճիշտ այնպես, ինչպես դուք հրաժարվում եք ավոհոլից, նիկոտինից և ձեր ֆիզիկական մարմնի այլ կապվածություններից ու սովորություններից, այդպես էլ պետք է ձեր մեջ ուժ գտնեք և հրաժարվեք նաև ձեր մենտալային մարմնի՝ ձեր մարմնական խելքի, կապվածություններից:

Երկիր մոլորակի վրա էվոլյուցիա են անցնում ձեր բոլոր ստորին չորս մարմինները: Եվ դուք պետք է հասնեք ձեր բոլոր մարմինների ներդաշնակությանն ու զարգացածությանը:

Քանի դեռ ձեր մարմիններով բավականաչափ փորձ չեք կուտակել, դուք չեք կարողանա վերադառնալ այն աշխարհը, որտեղից սկզբնապես դուրս եք եկել որպես Աստծո մասնիկներ: Եվ Աստծո Աշխարհի դուք ձեզ հետ կբերեք ձեր կուտակված փորձի միայն այն մասը, որը կհամապատասխանի աստվածային կերպերին:

Եվ այսպես, քանի որ այժմ մարդկության մեծ մասի մենտալային մարմիններն իրենց փորձառությունն են անցնում, որպեսզի ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ, ապա դուք պետք է դա հաշվի առնեք ձեր զարգացման ընթացքում: Դուք պետք է մշտապես հետևեք, թե երբ է ձեր խելքը ձեզ տանում ինտելեկտուալ խորհրդածությունների կողմը, և երբ եք դուք իսկապես հաղորդակցվում Աստծո հավերժական Իմաստության հետ: Փորձեք այդ զանազանումն իրականացնել ձեր ներսում: Աստծո Իմաստությունը ոչ մի ընդհանուր բան չունի ինտելեկտուոլ իմաստակության հետ, ինչը ձեր մարմնական խելքի համար յուրատեսակ թմրանյութ է հիշեցնում:

Մարդկանցից շատ-շատերը, բացելով հերթական ուղերձը և նրա մեջ իրենց ճարտար խելքի համար կերակուր չգտնելով, մղվում են դեպի այդ կերակուրի փնտրտուքն այլ վայրերում և բավականին մեծ քանակությամբ ստանում են այն, ինչին ձգտում են: Սակայն մեզ համար տեսանելի են բաներ, որոնք ձեզ համար տեսանելի չեն: Մեզ համար տեսանելի է, որ այն, ինչ դուք երբեմն ստանում եք և դա համարում շատ արժեքավոր ու անհրաժեշտ, լավագույն դեպքում ձեզ համար անօգտավետ են, իսկ վատագույն դեպքում ձեր հոգու զարգացումը հետաձգում են տարիներով ու ամբողջ մարմնավորումներով:

Կան շատ ինտելեկտուոլ ծուղակներ, որոնցում հայտնվում են լուսավոր մարդկանցից շատերը: Իսկ այդ ծուղակներն այնպես հմտորեն են տեղադրված, որ երբեմն հնարավոր չի լինում նրա մեջ չընկնելը, եթե դուք մշտապես համահնչունություն չեք պահպանում մեր Հիերարխիայի հետ և օգնության չեք խնդրում Համբարձյալ Վեհապետներից:

Շատերը հույս են կապում իրենց սեփական ուժերի և մարմնական մկանի հետ՝ անտեսելով Լույսի Հիերարխիայի օգնությունը: Իսկ դա սոսկ ինտելեկտուոլ մեծամտության ևս մեկ դրսևորում է:

Մարդկության զարգացման ժամանակակից փուլում դուք չեք կարող տարբերել ճշմարիտ նմուշներն իրենց այլակերպ կրկնակներից, ինտելեկտուոլ իմաստակությունը՝ Աստծո Իմաստությունից: Քանզի նրանց միջև եղած տարբերությունը երբեմն տեսանելի է միայն

աստվածային ներըմբռնողականության և թրթռյունների այն մակարդակում, որն ունեն այդ դրսևորումները:

Այժմ ես ձեզ պետք է ասեմ ևս մեկ կարևոր բան: Եվ դա վերաբերում է Ձեռնադրումների ձեր Ուղուն, որով շատերն են ուզում ընթանալ. պարտավորվում են ընթանալ այդ Ուղով, բայց գործը ձեռնարկելու նույն խանդավառությամբ հետ են կանգնում Ուղուց կա՛մ սեփական ծուլության, կա՛մ էլ Հավատի ու նվիրվածության պակասի պատճառով:

Պատճառն այն է, որ կայունության, նվիրվածության և նպատակամղվածության որակները հատուկ են միայն շատ քիչ թվով անհատների: Եվ, որպես կանոն, այդ որակները նրանք ձեռք են բերել նախորդ մարմնավորումների ընթացքում՝ դրանք իրենց ներսում ամրապնդելով հոգևոր Ուսուցիչների համայնքներում կամ ճգնավորների կացարաններում:

Մի՛ կարծեք, թե այն ամենը, ինչ ունեք այս կյանքում, ժառանգություն եք ստացել ձեր ծնողներից, կամ էլ ինքներդ եք ձեռք բերել ձեր ներկա կյանքի ընթացքում: Ձեր շատ նվաճումների ու որակների հետքերը տանում են դեպի հեռավոր անցյալը՝ ընդհուպ մինչև հինավուրց Ատլանտիդայի ու Լեմուրիայի ժամանակները: Եվ միայն այժմ՝ այս կյանքում է, որ դրանք դուրս են լողում ձեր միջից, և ձեզ էլ դրանցից օգտվելու իրավունք է տրվում: Ըստ այդմ, խնդրում եմ, կիրառե՛ք ձեր աստվածային շնորհներն ու որակները, որպեսզի ծառայեք Ընդհանուր Բարօրությանը, Երկրի Կյանքին ու մեզ՝ Մեծ Սպիտակ Եղբայրությանը: Քանզի մենք մարդկության այն Ուսուցիչներն ենք, որոնք ուղեկցում են մարդկությանը միլիոնավոր տարիների ընթացքում: Մենք ձեզ հետ ենք եղել, երբ դուք մարմնավորվել էիք Լեմուրիայի և Անտլանտիդայի ժամանակներում, և մեր Դպրոցներում ու Աշրամներում ուսուցանել ենք ձեզ, երբ դուք դեռևս ավելի ցածր զարգացում ունեցող անհատներ էիք:

Արդ, գնահատե՛ք այն, ինչ ձեր ունեցվածքն է՝ ձեր ձեռքբերումները, որոնք գալիս են հեռավոր անցյալից: Ձեր շնորհներն օգտագործեք ոչ այն բանի համար, որ խորասուզվեք պատրանքի մեջ, այլ այն բանի համար, որ բարձրանաք աստվածային գիտակցության գագաթը:

Մի՛ կարծեք, թե դուք միայնակ եք ձեր Ճանապարհին: Մենք մշտապես ձեր կողքին ենք և կարող ենք բռնել ձեր ձեռքերը մեր ձեռքերով: Սակայն մենք չենք կարող բռնությամբ քաշել ձեր ձեռքերից ու տանել, եթե դուք համառ երեխաների պես հետ եք քաշում դրանք և հեռու փախչում էվոլյուցիոն զարգացման ուղուց:

Երևում է՝ ձեր ինտելեկտուոլ մարմինները դեռևս բավարար չափով զարգացած չեն, որպեսզի ենթարկվեք Օրենքին և գիտակցեք այն առավելությունը, որ ձեզ Համբարձյալ Վեհապետներն են առաջնորդում և օգնում Ուղով ձեր առաջընթացին:

Այսօր ես ձեզ հրաժեշտ եմ տալիս, սակայն ունեն մեր հաջորդ հանդիպումների ու գրույցների կանխավայելումը:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ ձեր նկատմամբ հույսով լի

Տեր Հիսուս
8 հուլիս, 2006 թ.

**Ես սրտից սիրտ հաղորդակցության եմ ձգտում նրանց հետ,
ովքեր պատրաստ են այդպիսի հաղորդակցության**

ԵՍ ԵՄ Հիսուս՝ այս օրով ձեզ այցի եկածը, որ տամ այն խրատները, որոնք նախապես պատրաստել էի:

Հաճախ չէ, որ մենք հնարավորություն ենք ունենում անմիջականորեն հաղորդակցվելու նրանց հետ, ովքեր այժմ գտնվում են մարմնավորման մեջ: Սակայն իմ և ձեր միջև անմիջական հաղորդակցության այդ հնարավորությունը դրված է ձեր էության մեջ: Եվ եթե դուք հանձն առնեիք ամբողջ սրտով, ամբողջ հոգով մղվել դեպի մեր հաղորդակցությունը, ապա կկարողանայիք լսել ինձ: Ես ձեզ մոտ կգայի ճիշտ այնպես, ինչպես այժմ եկել եմ Տառյանայի մարմնական տաճարը. այնժամ մենք կկարողանայինք գրուցել իրար հետ: Ես կկարողանայի խրատներ տալ ձեզ ուղղակիորեն՝ առանց միջնորդի մասնակցության: Եվ դա իմ բուն ցանկությունն է՝ ուղղակի կապի մեջ մտնել ձեզնից յուրաքանչյուրի հետ:

Այս թելադրությունները կարդացող մարդկանց մեծ մասը ծանոթ է քրիստոնեությանը: Սակայն դավանանքի տեսակը որևէ խոչընդոտ չի կարող հարուցել մեր հաղորդակցության համար: Քանզի մարդիկ իրենք են բաժանել հավատը տարբեր կրոնների: Եվ յուրաքանչյուր կրոնական համակարգ ձգտում է իրեն ենթարկել իր հոտն ու արթուն կերպով հսկել, որ նա չքի իր եկեղեցու սահմանները: Սակայն ես կամ և ձգտում եմ հաղորդակցվել բոլորի հետ՝ անկախ այն բանից, թե ո՛ր կրոնին եք

հարում դուք և ձեր ընտանիքը: Աշխատեք ձեր գիտակցության մեջ ընդունել ինձ որպես Համբարձյալ Վեհապետի, և ոչ որպես կուռքի, որին երկրպագում են աշխարհի քրիստոնյաներից շատերը: Ընկալեք ինձ որպես ձեր ավագ եղբայրը, ընկերը, որը պատրաստ է արձագանքել ձեր ամեն մի խնդրանքին և օգնության գալ, երբ կանչում եք:

Ես այն Վեհապետն եմ, որը շատ մոտ է կանգնած Երկրի մարդկությանը. դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե որքան մոտ է իմ այդ ներկայությունը: Ես կարող եմ ձեր ներսում լինել ինձ ուղղված ձեր աղոթքի պահին: Եվ ձեր մեկուսի լռության մեջ ես կարող եմ ձեզ այցի գալ այն դեպքում, երբ անկեղծ մտադրություն ունեք հանդիպել ինձ հետ և խորհուրդ խնդրել կյանքի դժվարին իրադրության պահին: Մի՛ ամաչեք ինձ դիմելուց: Ես Համբարձյալ Վեհապետ եմ և ծառայում եմ Երկրի մարդկությանն այն ժամանակից ի վեր, երբ որպես Հիսուս եղած իմ կյանքի ավարտին աշխարհից հեռացա: Այդ ժամանակից սկսած՝ ես հաճախ եմ երևում նրանց, ովքեր իսկական քրիստոնեական հավատ ունեն իրենց սրտերում, և ոչ նրանց, ովքեր քրիստոնեական կրոնը դարձրել են իրենց գոյատևման աղբյուրը, ոչ էլ նրանց, ովքեր կեղծ բարեպաշտությամբ պահում են եկեղեցական դոգմաներն ու կանոնները: Ես սրտից սիրտ հաղորդակցության եմ ձգտում նրանց հետ, ովքեր պատրաստ են այդպիսի հաղորդակցության: Ծառ-շատերի համար ես ավելի շուտ ընկեր եմ, քան քրիստոնեական սիմվոլ: Ծառ մարմնավորումներ առաջ ես հանդիպել եմ ձեզ հետ որպես Հիսուս եղած իմ մարմնավորման ընթացքում և տվել իմ Ուսմունքը: Եվ հիմա ևս մեր կապը չի ընդհատվել նուրբ ոլորտում: Դուք հնարավորություն ունեք ձեր քնի ընթացքում ուսուցում ստանալու իմ Մենաստանում: Ես կոչ եմ անում նրանց, ովքեր դեռևս չեն օգտվում մեր հաղորդակցության հնարավորությունից, որ սկսեն օգտվել այդ հնարավորությունից: Եթե քնից առաջ դուք գտնվում եք հանգիստ, ներդաշնակ վիճակում, ապա աղոթքից հետո մտքով կարող եք մղվել ինձ հետ հանդիպման, և մենք, անտարակույս, կհանդիպենք ձեր գիշերային քնի ընթացքում: Ես կպատասխանեմ ձեր հարցերին և կցուցաբերեմ ամբողջ հնարավոր օգնությունը: Թող ձեզ չանհանգստացնի այն, որ արթնանալուց հետո դուք չեք կարողանա հիշել մեր հանդիպման բոլոր մանրամասները: Հնարավոր է, որ ընդհանրապես չհիշեք, որ մեր հանդիպումը կայացել է: Բայց դա կարևոր չէ, քանի որ ձեր կյանքում դուք կօգտվեք ձեր ստացած խրատներից, նույնիսկ եթե դա տեղի ունենա ձեր արտաքին գիտակցության սահմաններից դուրս: Ուստի պահպանե՛ք ձեր մեջ ինձ հետ հանդիպելու ձեր ձգտումը, և մենք, անշուշտ, կհանդիպենք:

Մի՛ ակնկալեք, որ ես կգամ ձեզ մոտ այն մարդու պես, որը ներս է անցել՝ լուսամուտից լույս նշմարելով: Ո՛չ, մեր հաղորդակցությունը կկայանա նուրբ ոլորտում: Եվ դուք պետք է ջանքեր գործադրեք, որպեսզի լսեք ինձ: Ես խոսելու եմ ձեր հոգու կամ ձեր Բարձրագույն Ես-ի հետ: Եվ իմ խոսքերը դուք կլսեք ձեր սրտում: Դրանք սովորական մարդկային խոսքեր չեն լինի, նույնիսկ դրանք կարող են մտքեր չլինել: Դա կլինի իմ ներկայության և այն բանի զգացողությունը, որ դուք լցվում եք իմ էներգիայով: Ես կլցնեմ ձեր սրտի թասը կենարար հեղուկով և կտամ ձեզ խաղաղության, հանգստի ու երանության զգացողություն՝ այն ամենը, ինչի պակասն ունեք ձեր կյանքում: Եվ այն բանից հետո, երբ իմ թասից կխմեք երանության նեկտարը, դուք կհասկանաք, որ ձեզ անհանգստացնող ու տանջող բոլոր պրոբլեմները մի կողմ են քաշվել: Եվ դրանցից շատերն այլևս վերադարձ չեն ունենա, որովհետև ես ձեզ տված կլինեմ իմ գիտակցության մի մասնիկը: Եվ քանի որ ձեր գիտակցությունը փոխված կլինի, դուք այլևս չեք ներգրավվի այն կարմայական իրավիճակների մեջ, որոնք ձեզ պատճառում էին տագնապ ու անհանգստություն:

Ձեզ տրվում է ձեր Հավատի չափով: Եվ եթե ձեր Հավատն ամուր է, իսկ ձեր մղումը չի կարող խաթարվել ոչ մի կենսական անհաջողությամբ, ապա մենք միշտ էլ կհանդիպենք: Եվ ես մեծ հույսեր ունեմ, որ մենք կհանդիպենք: Քանզի ինձ հետ ձեր հանդիպումը հենց այն օգնությունն է, որը ձեզ է հասնում Երկնքից:

Մի՛ հավատացեք նրանց, ովքեր ասում են, թե ձեզ միջնորդ է պետք ինձ հետ հաղորդակցվելու համար: Ո՛չ, մենք կարող ենք հանդիպել ձեր սրտի անդորրության մեջ, և ես կօգնեմ ձեզ ձեր ընթացիկ խնդիրների լուծման գործում: Սակայն Հավատի ու նվիրվածության այն աստիճանը, որը թույլ է տալիս ինձ ներկա գտնվել ձեր աուրայում, այնքան էլ հաճախ չի պատահում մարդկանց մեջ: Ես չեմ կարող գալ ձեզ մոտ, եթե դուք գտնվում եք խոշոր քաղաքում, և եթե չափից դուրս շատ եք մտահոգված ձեր երկրային խնդիրներով ու գործերով: Ես չեմ կարող գալ ձեզ մոտ, եթե դուք ունեք այնպիսի սովորություններ, որոնք բաժանում են մեզ իրարից: Ես նկատի ունեմ ձեր կրքերը՝ հակումը դեպի ավոհոյը, նիկոտինը, հեռուստադիտումը, ինչպես նաև գիտակցության այն ցածրակարգ վիճակները, որոնք հետապնդում են ձեզ՝ նեղացկոտությունը, նախանձը, խանդը, չարամտությունը:

Ես չեմ կարող ներկա գտնվել ձեր աուրայում, եթե դուք բեռնավորված եք նմանատիպ և ցանկացած այլ թերություններով, որոնք ինքներդ էլ կարող եք թվարկել, քանի որ չափազանց լավ

գիտեք դրանց մասին և չեք կարողանում դրանցից ձերբազատվել՝ անընտհատ մի մարմնավորումից մյուսին անցնելով:

Ես բաց եմ հաղորդակցության համար, բույց ինքներդ պետք է ջանքեր գործադրեք, որ մոտենաք ինձ, բարձրացնեք ձեր թրթռոններն այն մակարդակին, որի դեպքում մեր հաղորդակցությունը կարող է կայանալ: Եվ ձեզնից յուրաքանչյուրը լավ գիտի իր այն թերությունները, որոնք խանգարում են ինձ մոտենալուն, այնուհանդերձ դուք չեք շտապում հրաժեշտ տալ ձեր թերություններին ու պրոբլեմներին:

Ի՞նչ արած, ես կսպասեմ, մինչև դուք հասունանաք և որոշեք անմիջականորեն հաղորդակցվել ինձ հետ: Իսկ առայժմ ես օգտվում եմ սույն հնարավորությունից և ձեզ հետ խոսում եմ այս դեսպանորդի միջոցով: Նաև ձեզ հիշեցնում եմ քնի ժամանակ ինձ հետ հանդիպելու հնարավորության մասին:

Մեր հանդիպման հնարավորությունը գոյություն ունի միշտ, և միայն ինքներդ եք սահմանափակում մեր հաղորդակցության հնարավորությունը:

Իսկ այժմ ես կուզենայի մաղթել ձեզ, որ ձեռք բերեք այն ներքին ձգտումը, որով կհաղթահարեք ձեր բոլոր թերությունները, և որը թույլ կտա ձեզ առանց կանգառի բարձրանալ աստվածային գիտակցության գագաթը՝ առանց այնտեղից ներքև սահելու: Քանզի երբեմն ձեր մեն մի սխալ ընտրությունը բավարար է լինում, որպեսզի դուք մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտն ի չիք դարձնեք մեր հաղորդակցության հնարավորությունը: Չգու՞յշ եղեք ձեր կյանքի ընթացքում և կշռադատե՛ք ձեր յուրաքանչյուր ընտրությունն ու քայլը:

Քանզի աստեղային ոլորտում շատ կան մենաստաններ, որոնք կուզենային ձեզ հետ կապի մեջ մտնել, որպեսզի հանձնեն ձեզ ձեռք բերեն իրենց կամքի ու մտահղացումների իրագործողին: Իսկ այդպիսի էությունների հետ շփման ու փոխազդեցության մեջ մտնելը շատ ավելի հեշտ է, քան ինձ հետ: Դրա համար չի պահանջվում, որ դուք հրաժեշտ տաք ձեր սովորություններից և ոչ մեկին:

Ըստ այդմ՝ ինքներդ միշտ կարող եք իմանալ, թե ում հետ եք հանդիպում նուրբ ոլորտում՝ ի՞նձ հետ, թե՞ իմ կրկնակի հետ, որը Լուսից չէ: Իսկ այդ հարցի պատասխանի բանալին ձեր գիտակցության մաքրությունն է և այն սովորություններն ու կապվածությունները, որոնցից առայժմ չեք կարողանում ձերբազատվել:

Դուք նույնիսկ կարիք չունեք որևէ մեկին հարցնելու, թե ում հետ եք հանդիպում նուրբ ոլորտում: Բավարար է և այն, որ պարզապես անկողմնակալ ձևով վերլուծեք ձեր մտքերը, ձեր կենսակերպն ու շրջապատի մարդկանց հետ ձեր փոխհարաբերությունները:

Արդ, ամեն ինչ ձեր ուժերի սահմաններում է, և դուք ինքներդ եք որոշում կայացնում, թե ում հետ կապի մեջ մտնեք նուրբ ոլորտում:

Չանագանման շնորհը ձեզ համար անհրաժեշտություն է, բայց երբեմն, որպեսզի զանազանեք, ոչ մի շնորհ էլ պետք չէ, այլ պարզապես պետք է վերլուծեք ձեր մտածելակերպը, ձեր սովորություններն ու կապվածությունները:

Ես չեմ կորցնում ձեզ հետ հանդիպելու իմ հույսը: Եվ ես անհամբերությամբ սպասում եմ մեր հանդիպմանը:

ԵՄ ԵՄ Հիսուս՝ ձեր նկատմամբ անսպասելի Սիրով լի

Սանատ Կումարա
9 հուլիսի, 2006 թ.

**Ուսմունք ձեր գործողությունների կարմայական
պատասխանատվության մասին՝ թելադրությունների
տեքստերի թարգմանության և դրամական
միջոցների տնօրինման բնագավառներում**

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ նորից ձեզ այցի եկածը:

Ես կուզենայի, որ դուք ամեն օր՝ այս օրվանից սկսած և մինչև թելադրությունների այս շրջանի ավարտը, նախքան թելադրությունն ընթերցելը կանչեք այն Վեհապետի Էլեկտրոնային ներկայությունը, ով տալիս է իր ուղերձը: Այդ, թվում է, թե հասարակ հնարքը թույլ կտա ձեզ զգալու մեր ներկայությունը, և մեր ուղերձների շատ դրույթներ կբացվեն ձեր առաջ բոլորովին այլ կողմից, որովհետև ուղերձի ընթերցման ժամանակ տվյալ Վեհապետի ներկայությունը բազմակիորեն կուժեղացնի այն ազդեցությունը, որը դուք կրում եք ուղերձի ընթերցման ընթացքում: Սա հատուկ թողության շնորհ է, և այն որոշ ժամանակ կգործի նաև

թելադրությունների սույն շրջանի ավարտից հետո: Դուք ինքներդ ձեր զգացողություններով կկարողանաք դատել, թե դեռ գործում է այս թողության շնորհը, թե՞ ոչ:

Այսպիսով, որպեսզի կանչեք այն Վեհապետի ներկայությունը, ով ուղերձ է տալիս, դուք պետք է բարձրաձայն կամ մտքի մեջ արտաբերեք.

«Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ՝ ես կանչում եմ...» (այնուհետև տալիս եք այն Վեհապետի անունը, ով ուղերձ է տալիս)... **Էլեկտրոնային ներկայությունը»:**

Փորձե՛ք կիրառել այդ թողության շնորհը՝ հենց այսօրվա թելադրությունից սկսած: Թելադրությունը մինչև վերջ կարդալուց հետո ուղղե՛ք ձեր կանչը, վերընթերցե՛ք թելադրությունը և փորձեք զգալ տարբերությունը:

Ես առաջարկում եմ մշտապես նման ձևով կանչ հղել մեր դեսպանորդի միջոցով տրվող ամեն մի ուղերձն ընթերցելիս: Կանչի ազդեցությունը կդրսևորվի այն ժամանակ, երբ դա հնարավոր և անհրաժեշտ կլինի:

Իրենց էլեկտրոնային ներկայությունը կարող են ի հայտ բերել բոլոր Վեհապետները, և այդ ներկայության աստիճանը ուղիղ համեմատական կլինի մեր թրթռանքներն ընկալելու ձեր կարողությանը՝ մեր թրթռանքներն ընկալելուն ձեր նուրբ մարմինների պատրաստվածությանը:

Դուք գիտեք, որ երբեմն մեր ուղերձները մենք տալիս ենք բարձր մակարդակով, երբեմն էլ որոշ ուղերձներ տալիս ենք մի փոքր ավելի ցածր մակարդակով: Եվ դա միշտ չէ, որ որոշվում է մեր դեսպանորդի մարմինների հաղորդականության որակով: Պարզապես գոյություն ունեն մարմնավորման մեջ գտնվող անհատների գիտակցությունների զարգացման տարբեր մակարդակներ: Եվ տարբեր անհատներ ունակ են ընկալելու տարբեր կարգի տեղեկատվություններ և էներգետիկական բաղադրիչներով իրարից տարբերվող ուղերձներ:

Մենք մանրագնին վերանայում ենք մեր կողմից տրվող տեղեկատվությունը: Եվ այն դեպքում, երբ ձեր արտաքին գիտակցությունը ձեռնամուխ է լինում տրված տեղեկատվության վերլուծությանը, այն ոչ միշտ է օգտակար լինում: Քանզի տեղեկատվության ցանկացած քննադատական ընկալում ընդհատում է էներգիայի հոսքը: Արդյունքում մեր ուղերձների ընթերցումը ձեզ համար դառնում է ապարդյուն: Ուղերձն ինքնին ձեր մեջ ուղղվածություն է արթնացնում դեպի Վեհապետների էներգիաները, և ուղերձների ընթերցման ընթացքում դուք ընդունում եք մեր էներգիաները: Կան բանալիներ, որոնք համակցում են ձեր նուրբ մարմինները, և դուք ունակ եք դառնում ընկալելու ուղերձների ոչ միայն տեղեկատվական, այլ նաև էներգետիկական բաղադրիչները: Դրանով է բացատրվում, թե ինչու հնարավոր չէ մեր ուղերձները վերապատմել: Վերապատմելու ընթացքում կորսվում են այն բանալիները, որոնք մտցված են բուն ուղերձի մեջ: Դուք մեր ուղերձը համարում եք տեքստ, որը գրի է առնված այս կամ այն լեզվի նշաններով, սակայն դա այնքան էլ այդպես չէ: Եվ այն դեպքում, երբ դուք մեր ուղերձները թարգմանում եք այլ լեզվի, այդ բանալիները կարող են և կորսվել: Ամեն ինչ կախված է թարգմանչի որակից: Եթե թարգմանիչը մեզ հետ համալարված է, ապա թարգմանությունն իր մեջ կրում է մեր թրթռանքները: Հակառակ դեպքում թարգմանությունը պարունակում է միայն տեղեկատվական բաղադրիչ: Դրանով է բացատրվում, որ նույնիսկ այն դեպքում, երբ մեր դեսպանորդը կարդում է մեր թելադրությունները, իսկ դուք լսում եք ու չեք հասկանում բառերը, որովհետև խոսում եք ուրիշ լեզվով, այնուամենայնիվ հասու եք դառնում մեր ուղերձների էներգետիկական բաղադրիչին, զգում եք Վեհապետների էներգիաներն ու թրթռանքները:

Իսկ այն դեպքում, երբ դուք ձեր հարազատ լեզվով կարդում եք մեր ուղերձների թարգմանությունը, ապա կարող է և կորսվել էներգետիկական բաղադրիչը: Ըստ այդմ՝ ես հանձնարարում եմ նրանց, ովքեր հետագայում մեր ուղերձները կթարգմանեն այլ լեզուների. նախքան թարգմանելը կանչեք այն Վեհապետի էլեկտրոնային ներկայությունը, ում թելադրությունը մտադիր եք թարգմանել: Նաև խորհուրդ եմ տալիս ձեռնամուխ լինել թարգմանության, երբ գտնվում եք հավասարակշիռ վիճակում մի լավ մեդիտացիա անելուց և աղոթելուց հետո:

Ձեր յուրաքանչյուր անկատարությունն իր հետքն է թողնում թարգմանության վրա: Եվ եթե դուք թարգմանության ընթացքում ստիպված լինեք աղավաղել տեքստը, ապա ձեզ վրա կարմայական պատասխանատվություն կընկնի՝ կապված Վեհապետների խոսքերն աղավաղելու հետ:

Ճիշտ է, այդ կարմայական պատասխանատվությունը կարող է չեզոքացվել այն բարի կարմայով, որը դուք ձեռք եք բերում թարգմանություն կատարելու ընթացքում և մեր ուղերձներն այլ լեզուներով տարածելուց:

Սակայն պետք է հաշվի առնեք, որ բարի կարման ձեռք եք բերում միայն այն դեպքում, երբ ձեր շարժառիթները մաքուր են, և դուք իսկապես թարգմանում եք, որ տարածեք մեր Ուսմունքը, այլ ոչ թե փող աշխատեք:

Դրամական փոխհարաբերությունների հարցը շատ բարդ է: Եվ իրականում փողերը հոսում են դեպի ձեզ ո՛չ այն ժամանակ, երբ դուք Եղբայրության համար ինչ-որ մի գործ եք կատարում:

Սակայն, կատարելով որևէ գործ Եղբայրության համար, դուք հնարավորություն եք ստանում, որ դրամի էներգիայով փոխհատուցվեն այն էներգետիկական ծախսերը, որոնք դուք կատարել եք՝ առաջ տանելով Եղբայրության գործերը:

Ամեն ինչ այս աշխարհում կառուցված է էներգիաների փոխանակման վրա: Եվ էներգիայի յուրաքանչյուր լնացում հանգեցնում է դրամական էներգիայի անբավարարության: Երբ դուք դրամ ունեք, պետք է մտածեք, թե ինչպես ծախսեք: Դրամական էներգիայի ոչ մի կուտակում օգտավետ չէ և ի հայտ է բերում փողերի հետ սխալ վարվելու կարմա: Մտածե՛ք, թե ինչպես պետք է տնօրինեք այն փողերը, որ ունեք: Եվ, եթե ծախսեք այդ փողերը, որ ինչ-որ հաճույքներ ստանաք, ապա հաջորդ անգամ դրամական էներգիայի համայրում չեք ստանա:

Եվ հակառակը, եթե ձեր դրամական խնայողությունները ծախսում եք բարի գործերի համար, ապա դրամական էներգիայի հոսքը կուժեղացվի՝ նույնիսկ անկախ այն բանից, թե որքան ջանքեր կգործադրեք փող աշխատելու համար: Ձեզ ժառանգություն բաժին կհասնի, կամ որևէ մեկը որևէ մի պատրվակով փող կտա ձեզ:

Ճիշտ տնօրինեք դրամական էներգիան: Որքան ավելի մեծ անշահախնդրությամբ տաք, այնքան ավելի շատ կստանաք:

Սակայն միշտ պետք է հիշեք, որ դուք պատասխանատու եք այն բանի համար, թե ում և ինչքան եք տալիս: Զանգի այն դեպքում, երբ ձեր տված փողն օգտագործվում է ո՛չ բարի գործերի համար, ապա սխալ օգտագործված դրամական էներգիայի կարման ընկնում է ձեզ վրա:

Եվ հակառակը, եթե դուք փող եք նվիրաբերում բարի գործերի համար, ապա ձեր փողերի ճիշտ օգտագործման բարի կարման ձեզ հնարավորություն է տալիս այդ կարման օգտագործել ըստ ձեր հայեցողության:

Դրա վրա է հիմնված նաև այն տասանորդի սկզբունքը, որը վերցնում է եկեղեցին: Եվ ըստ էության՝ դա շատ ստույգ ու ճիշտ սկզբունք է, բայց միայն այն դեպքում, եթե եկեղեցին կամ որևէ այլ կրոնական կազմակերպություն ձեր տասանորդը ծախսում է բարի գործերի, այլ ոչ թե անձնական կարողությունների բազմապատկման համար:

Ամեն ինչի հիմքում ընկած է Աստծո էներգիայի խելամիտ ու ճիշտ օգտագործման սկզբունքը, և դրամական էներգիան ոչնչով չի տարբերվում ցանկացած այլ տիպի էներգիայից:

Էներգիայի մի տեսակը բարեհաջող կերպով փոխակերպվում է մի այլ տեսակի: Եվ ձեր տասանորդը, եթե այն ճիշտ է տնօրինված, հանգեցնում է ձեզ համար ֆիզիկական ոլորտում հնարավորությունների դրսևորման: Եվ այդ հնարավորությունները կարող են ի հայտ գալ որպես ֆինանսական առատություն, որպես կենսուրախ ապագա ձեր զավակների համար, կամ էլ կարող են հանդես գալ ձեր սեփական առողջության ու մերձավորների առողջության տեսքով:

Բարի կարման կարող է օգտագործվել նաև այն գործի համար, ինչ գործի համար դուք անձամբ ուզում եք, որ այն օգտագործվի: Այդ նպատակով ձեզ տրված է Կարմայական Վարչությանը նամակ հղելու հնարավորություն:

Ես այսօր ձեզ տվեցի Ուսմունք ձեր գործողությունների կարմայական պատասխանատվության մասին՝ թելադրությունների տեքստերի թարգմանության և դրամական միջոցների տնօրինման բնագավառներում:

Եվ պահանջվում է, որ այս կարևոր Ուսմունքն անմիջականորեն կիրառվի ձեր կյանքերում:

Իսկ այժմ թույլ տվեք հրաժեշտ տալ ձեզ: Եվ մինչև նոր հանդիպումներ...

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Հաութամա Բուդդա
10 հուլիսի, 2006 թ.

Ուսմունք երջանկության մասին

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան՝ նորից ձեզ այցի եկածը: Եվ, ինչպես միշտ, եկել եմ, որ խրատեմ ձեզ և այն ուղերձս հղեմ աշխարհին, որի կարիքն այժմ աշխարհն ունի:

Ես կուզենայի այսօր ձեր ուշադրությունը կենտրոնացնել ձեր կյանքերում առկա այն հանգամանքների վրա, որոնք խանգարում են ձեզ ձեռք բերելու ներքին հավասարակշռություն, հանգստություն, ներդաշնակություն ու երջանկություն:

Իմ ասած երջանկությունն այնքան էլ այն երջանկությունը չէ, որը նկատի ունեն կյանքի խորխորատներում դեգերող մարդիկ: Երջանկության իմ ու ձեր ըմբռնումներն իրարից տարբեր են:

Եվ գիտե՞ք, թե ինչու: Որովհետև դուք երջանկությունը դիտարկում եք միայն ձեր ներկայիս կյանքի հանգամանքների տեսանկյունից, իսկ ես երջանկությունը դիտարկում եմ ոչ թե ընթացիկ կյանքի, այլ բոլոր իմ մարմնավորումների տեսանկյունից, ինչպես նաև բոլոր այն կենդանի էակների մարմնավորումների տեսանկյունից, որոնք կա՛մ արդեն մարմնավորվել են Երկիր մոլորակի վրա, կա՛մ սպասում են իրենց մարմնավորմանը:

Ուստի ակնհայտ է, որ երջանկության մեր ըմբռնումները տարբեր կլինեն: Սակայն մենք կարող ենք երջանկության մեր ըմբռնումները մոտեցնել իրար, եթե ձեզ թույլ տաք դուրս գալ ձեզ շրջապատող իրականության մասին ձեր ունեցած պատկերացումների շրջանակներից:

Փոքր-ինչ ընդլայնե՛ք աշխարհընկալման ձեր հորիզոնը: Դուրս եկեք ձեզ շրջապատող կյանքի շրջանակներից՝ ձեր ամենօրյա հոգսերից ու խնդիրներից: Քանզի այն, ինչը թույլ կտաք ձեր գիտակցության մեջ, վաղ թե ուշ կդրսևորվի ձեր կյանքերում: Եվ եթե մշտապես կենտրոնացած եք ձեր ընթացիկ խնդիրների վրա, ապա ապագայում ոչինչ չեք ստանա, բացի հենց այդ խնդիրներից:

Երջանկությունը պարզապես ձեր մտածողության վիճակն է: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ ձեր արտաքին գիտակցությանը թվում է, թե ձեր կյանքում խնդիրների ու հոգսերի վերջը չի երևում, ապա եթե կարողանաք փոքր-ինչ բարձրացնել ձեր գիտակցությունը, կհասկանաք, որ իրականում դուք ամենաերջանիկ էակներն եք ամբողջ տիեզերքում:

Ձեզ թվում է, թե ես ձեզ հետ կատա՛ղ եմ անում: Օ, ո՛չ, ես նույնիսկ համբարձյալ էակիս դիրքից նախանձում եմ ձեզ՝ մարմնավորման մեջ գտնվողներից... Հավատացե՛ք ինձ, որ ամբողջ գործը ձեր գիտակցության մեջ է և այն բանի մեջ, թե ինչպես եք ընկալում այն ամենը, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը: Եվ ձեր խնդիրների մեծ մասը՝ դրանց 99 տոկոսը, դուք ինքներդ եք ձեզ համար ստեղծում հենց միայն նրանով, որ ունակ չեք լինում ձեր գիտակցությամբ դուրս պրծնելու ձեզ շրջապատող իրականության շրջանակներից: Կրկնում եմ, երջանկությունը պարզապես ձեր մտածողության վիճակն է: Եվ, ըստ էության, Ուսմունքը, որը հիմա մենք տալիս ենք, հենց այն Ուսմունքն է, որն իր մեջ երջանկություն է պարունակում ձեզ համար:

Այն ձեր գիտակցությանը կսովորեցնի ձեզ շրջապատող ամեն ինչն ընկալել մի այլ, ավելի բարձր իրականության տեսանկյունից: Դուք նաև գիտելիքներ ձեռք կբերեք Կարմայի Օրենքի վերաբերյալ: Իսկ այդ գիտելիքներն ու հմտությունները թույլ կտան ձեզ, որ ինքներդ կառավարեք ձեր կյանքային իրադրությունները: Դուք պետք է հասկանաք, որ հենց ինքներդ եք ձեզ հեռացնում ձեր երջանկության վիճակից: Այլ կերպ ասած՝ հենց ինքներդ եք ձեզ խանգարում երջանիկ լինել:

Եկեք քննարկենք այդ իրավիճակը կոնկրետ օրինակով: Օրինակ՝ դուք անհանգստացած եք նրանով, որ ձեր հարևաններից կամ այլ մարդկանցից որևէ մեկն ավելին ունի, քան դուք: Դուք սկսում եք նախանձել, չարիք կամենալ այդ մարդուն և դրանով իսկ դառնում եք ավելի ու ավելի ապերջանիկ: Դուք տառացիորեն ինքներդ ձեզ նեղն եք լծում: Եվ ձեր գիտակցությունն արդեն ունակ չի լինում դուրս պրծնելու նախանձի ու չարամտության սարդոստայնից:

Իսկ հիմա տեսնենք, թե ինչպես է իրեն պահում իմաստուն մարդը: Նա կարողանում է ուրախանալ ուրիշ մարդկանց երջանկությամբ, ուրախանում է, երբ ուրիշ մեկը կարողանում է ինչ-որ բան գնել, ինչ-որ բան անել: Դրանով նա վաստակ է ձեռք բերում իր սրտում, իր գիտակցությամբ բարձր է կանգնում առօրեական ունայնությունից և ուրախություն ու երջանկություն է ձեռք բերում իր գիտակցության մեջ:

Երբ դուք կսովորեք ուրախանալ ուրիշի նվաճումներով, ապա դրանով ձեզ համար կբացվեք հաջողակ լինելու հնարավորություն: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ ձեր այս մարմնավորման կարման ձեզ թույլ չի տալիս շատ բան ունենալ և ապրել լիության մեջ, այնուամենայնիվ դուք ձեզ համար պայմաններ կստեղծեք, որպեսզի ձեր հաջորդ մարմնավորումը լինի ավելի բարենպաստ, և ձեր հաջորդ կյանքը լինի ավելի հաջող ու լի այն ամենով, ինչ մարդիկ համարում են երջանկության դրսևորում: Սակայն եթե ձեր ներսում է՛լ ավելի զարգացնեք դրական մտածողությունը, ապա կհասկանաք, որ հասարակության կողմից ընդունված երջանկության ոչ մի հայտանիշ չի համապատասխանում իրական երջանկությանը: Իսկ իրական երջանկությունն այն է, երբ դուք ունակ եք լինում ինքներդ ձեզ զոհաբերելու հանուն համայն գոյի: Թեև այդ դեպքում դուք Երկրի վրա ապրող մարդկանց տեսակետից անհաջողակ եք երևում, սակայն ձեր վիճակը հիշեցնում է խաղաղ ներքին երջանկության և երանության վիճակ:

Օ՛, այդ վիճակը, որի մասին խոսում եմ, մատչելի է միայն բարձրագույն ձեռնադրյալներին: Իսկ ձեզնից շատերը, որ հիմա կարդում են այս տողերը, կարող են կարծել, թե իմ ասածն իրենց որևէ կերպ չի վերաբերում, քանի որ իրենք չափազանց կլանված են մարդկային խնդիրներով:

Սակայն ձեզ համար ոչ մի գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ այն վիճակը, որի մասին խոսում եմ, ձեր զարգացման որոշակի փուլում մատչելի կլինի բոլորիդ համար: Դա Բուդդայի գիտակցության վիճակն է: Եվ բոլորդ ժամանակի ընթացքում կդառնաք Բուդդաներ: Քանզի դա մարդկության զարգացման հաջորդ աստիճանն է: Եվ, որքան էլ որ ձգտեք ձեզնից հեռացնել այդ

աստիճանը, այն, միևնույնն է, ձերն է լինելու: Դեռ ավելին, Բուդդայի գիտակցության աստիճանին հասած հազարավոր էակներ այժմ հերթի են կանգնած, որպեսզի մարմնավորվեն ձեր աշխարհում և օգնեն ձեզ՝ իրենց վրա վերցնելով աշխարհի մեղքերն ու տառապելով մարդկության համար: Նրանք ձգտում են քավել մարդկության կարման և մեկը մյուսի հետևից նոր հնարավորություններ տալ մարդկությանը, որպեսզի նա վերադառնա զարգացման էվոլյուցիոն ուղուն, այլ ոչ թե ոչնչանա հերթական կործանարար արհավիրքի հետևանքով:

Ես երջանիկ եղա այսօր ձեզ երջանկության մասին Ուսմունք տալուս առիթով: Քանզի ձեզնից շատ շատերն ապերջանիկ են միայն այն պատճառով, որ հայտնվել են Ճշմարտության մասին գիտելիքի բացակայության տիրություն: Տգիտությունը մարդկության համընդհանուր հիվանդությունն է: Տգիտությունը թմրանյութի մշուշի պես պարուրում է ձեզ և մարում ձեր ներսում բանականության այն կայծը, որը վաղեմի ժամանակներում դուք ստացել եք Իմաստության Տիրակալներից, և որը որոշ ժամանակով թաքցված է մնում ձեր էության մեջ: Սակայն գալիս է մի պահ, երբ ձեր ներսի այդ կայծը բռնկվում է, և ձեր էության մեջ բորբոքված բոցը լուսավորում է շատ մոլորյալ հոգիների ուղին: Ինքներդ վառվում եք, որ լուսավորեք ուրիշների ուղին: Դա է պատճառը, որ ջահը կամ մոմը հանդիսանում են լուսավորության խորհրդանիշ:

Ինքնագոհողություն և ծառայություն. ահա այն որակները, որոնք պետք է ձգտեք ձեր ներսում զարգացնել անմիջապես այն բանից հետո, երբ կսկսեք դուրս գալ տգիտության մշուշից:

Ձեր երջանկության վիճակն ուղղակիորեն կախված է այն բանից, թե որքան հաջող ձեր ներսում կհաղթահարեք տգիտությունն ու ծուլությունը, որոնք ներկա փուլում հատուկ են մարդկության մեծամասնությանը:

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ: Ափսոս, որ չեմ կարող իմ երջանկության վիճակը փոխանցել ավելի շատ անհատների, որոնք այժմ մարմնավորված են Երկրի վրա:

ԵՄ ԵՄ Հառթաման՝ ձեր լուսավորության ու երջանկության կամեցողությամբ լի

Կիկյուպետս

11 հուլիսի, 2006 թ.

Մի՛ ընկեք մարդկային գիտակցությունից ծագած ճշմարտությունների հետևից, այլ մղվեք դեպի այն Ճշմարտությունը, որը մուտք է գործում ձեր աշխարհ Լույսի Բարձրագույն օկտավաներից, և այնժամ դուք պայծառ ապագա կապահովեք Երկիր մոլորակի համար

ԵՄ ԵՄ Կիկյուպետսը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել, և ինչպես միշտ, ամեն մի հնարավորություն, որն ընձեռվում է Երկնոլորտների ու երկրային ոլորտի միջև հաղորդակցության համար, ես կուզենայի արդյունավետ օգտագործել ձեր գիտակցության զարգացման նպատակով:

Ձեր կոչումն է դառնալ բարձր զարգացած տիեզերական էակներ:

Դուք ձեր գիտակցությամբ աճում եք դեպի մենտալային ոլորտի, հետո ավելի բարձր ոլորտների ավելի ու ավելի նուրբ շերտերը: Եվ իմ փորձի վրա հիմնված՝ ձեր աճի ու կոչման վերաբերյալ իմ կանխատեսումը հուշում է ինձ, որ դուք կարդարացնեք մեր հույսերը: Ես ուրախ եմ, որ երկար տարիներ տևած լրիվ անհավատությունից ու խավարից հետո, որը պատել էր Երկիրը վերջին հարյուրամյակների ընթացքում, հաջողվում է հավերժական գիտելիքների ընձյուղներ արձակել: Ոչինչ, որ ոչ այնքան բարձր մակարդակով: Կարևորը ներկայիս սերնդի գիտակցությունն արթնացնելն է, որպեսզի հաջող սերունդները հիմք ունենան իրենց գիտակցության ավելի մեծ աճի համար և ունակ դառնան Աստծո Ճշմարտության վերաբերյալ ավելի շատ գիտելիքների ընկալմանը:

Դուք ձեր գիտակցությունը լցնում եք անպետք բաների զանգվածով: Իսկ այժմ եկել է ժամանակը, որ գիտակցական մոտեցում ցուցաբերեք այն ամենի նկատմամբ, ինչի վրա կանգ է առնում ձեր ուշադրությունը: Քանզի այն, ինչի վրա կանգ է առնում ձեր ուշադրությունը, ձեզ վրա թողնում է շատ ուժեղ ազդեցություն: Ուստի պետք է հասկանաք, որ երբեմն մի անորակ ֆիլմ դիտելը կամ բացասական թրթիռներ կրող մարդու հետ հանդիպելը բավարար է լինում, որ ձեր զարգացումն ընդհատվի կամ ընթանա ոչ այն հունով, ինչ պետք է:

Ըստ այդմ՝ մենք կուզենայինք, որ դուք ձեր մեջ զարգացնեք աստվածային տեսողության և իրադրության կանխատեսման հատկանիշներ:

Եվ հենց աստվածային տեսողության հատկանիշն եմ ես մարդկանց ուսուցանում իմ Մենաստանում: Ես երջանիկ եմ այսպիսի մեծ լսարանի առջև հայտնվելուս համար, որում այս

ուղերձներն ընթերցվում են տարբեր լեզուներով: Նաև երջանիկ են, որ իմ Ուսմունքը ձեզ եմ հասցնում ոչ թե ձեր քնի, այլ ձեր մտքի արթմնի վիճակում:

Այժմ եկել է ժամանակը, երբ պետք է արթնանան ձեր աստվածային ունակությունները, և դուք աստիճանաբար պետք է գիտակցեք ձեր աստվածային կոչումը: Այս գիտությունը, ցավոք սրտի, չի դասավանդվում ձեր ուսումնական հաստատություններում, և ձեր խանութների ու գրադարանների դարակներում հազվադեպ կարելի է հանդիպել գրքերի, որոնք իրապես ուսուցանում են աստվածային գիտելիքներ: Ցավոք, ձեր աշխարհում տարածված գրականությունը միայն շեղում է ձեզ ճշմարիտ Ուղուց և գրկում ձեզ աստվածային համալարվածքից՝ ստիպելով հույս դնել միայն մարմնական մտքի ու ինտելեկտուալ խորհրդածությունների վրա: Այդ ուղին աստվածային չէ, քանի որ ձեզ ստիպում է ձեր մեջ զարգացնել ոչ թե աստվածային, այլ գուռ մարդկային հատկանիշներ: Ձեր ներսում աստվածային հատկանիշներ զարգացնելու համար անհրաժեշտ է, որ դուք հրաժարվեք ձեր աշխարհի իրեղենի հետ ունեցած ձեր բոլոր կապվածություններից: Անհրաժեշտ է կանգնել Ձեռնադրումների Ուղու վրա և ընթանալ դրանով: Երկրի վրա տարբեր ժամանակներում գոյություն են ունեցել դպրոցներ, որոնցում ուսուցանվել է աստվածային գիտությունը: Եվ ես մոտ ապագայի համար կանխատեսում եմ Երկրի վրա այդ ավանդույթների վերականգնումը: Դրա համար անհրաժեշտ է այնքան փոխել մարդկանց գիտակցությունը, որ կառավարական մակարդակով այդպիսի դպրոցները լրիվ օժանդակություն ու հավանություն ստանան՝ մտնելով երեխաների ու տարեցների ուսուցման ու դաստիարակության պետական ծրագրի մեջ:

Սա կենսական կարևոր խնդիր է, և ես ահա հայտարարում եմ, որ այն երկրի կառավարությունը, որը պաշտոնական մակարդակով կճանաչի մեր դեսպանորդին և պետական մակարդակով կկարողանա իրագործել մեր պլանները, կստանա մեր ամբողջ օրհնությունն ու օգնությունը: Եվ դա կդառնա Երկիր մոլորակի զարգացման հաջորդ, շատ կարևոր քայլը: Ցայսօր, եթե նույնիսկ տարբեր երկրների կառավարիչներ գտնվել են մեր ազդեցության տակ, այնուամենայնիվ մեր կապերը ծածկված են եղել գաղտնիության քողով և թաքցվել են հետաքրքրասերների աչքից: Այժմ եկել է ժամանակը, երբ մենք պատրաստ ենք դուրս գալու գաղտնիության քողի տակից և մեր գիտելիքներն ու Ուսմունքը տալու բացահայտ ձևով: Քանզի մոլորակի իրադրությունը բարենպաստ է իրադարձությունների այդպիսի ընթացքի համար: Եվ, որպեսզի ձեզ համար ավելի հասկանալի լինի, ես կասեմ, որ նախորդ դեսպանորդները փորձել են տարբեր երկրների կառավարությունների հետ կառավարական կապեր հաստատել, բայց այդ փորձերը ձախողվել են: Մենք չենք դադարեցնում մեր փորձերը և այժմ մեր դեսպանորդի միջոցով հայտարարում ենք, որ Մեծ Սպիտակ Եղբայրությունը բաց է աշխարհի բոլոր երկրների կառավարությունների հետ կառավարական մակարդակի համագործակցության համար: Մենք այլևս ոչինչ չունենք թաքցնելու, քանի որ Ճշմարտությունն ազատորեն լուսաբանվում է համացանցի միջոցով, և մեր պատգամաբերները հնարավորություն են ստացել Ճշմարտությունն ազատորեն հրապարակելու՝ չենթարկվելով հետապնդումների:

Այժմ ես կուզենայի կանգ առնել ևս մեկ կարևոր հարցի վրա, որը վերաբերում է Երկիր մոլորակի մարդկության ապագային: Ձեր ապագան ուղղակիորեն կապված է ձեր երեխաների հետ: Այն բանից, թե ինչպես կկարողանաք դաստիարակել հաջորդ սերնդին, կախված է այն, թե որքանով այդ սերունդը կկարողանա իր մեջ զարգացնել աստվածային հատկանիշներ և իրագործել իր աստվածային առաքելությունը: Մի՛ մոռացեք, որ, հոգ տանելով հաջորդ սերնդի մասին, դուք փաստորեն հոգում եք ինքներդ ձեր մասին: Քանզի երկրային չափանիշներով այնքան էլ երկար ժամանակ չի անցնի, և դուք նորից կմարմնավորվեք Երկրի վրա: Եվ եթե բավարար ջանքեր զործադրեք աճող սերնդի դաստիարակության համար, ապա կմարմնավորվեք համապատասխան բարենպաստ միջավայրում, որը կնպաստի ձեր հոգևոր զարգացմանը: Ամեն ինչ Աստծո կողմից կանխամտածված է, և բոլոր հետևանքները բխում են իրենց պատճառներից: Մտորե՛ք ասածներիս մասին: Եվ եթե նույնիսկ ձեր զավակների դաստիարակության համար գործադրած ձեր ջանքերը ձեր ընթացիկ կյանքում հաջողությամբ չպսակվեն, այնուամենայնիվ ապագա սերնդի նկատմամբ հոգածության ձեր մղումն անջնջելի հետք կթողնի ձեր աուրայի վրա, և ձեր կաուզալ մարմնի ձեռքբերումները կկիրառվեն ձեր ապագա կյանքերում:

Կարմայի Օրենք և վերամարմնավորումների կամ ռեինկարնացիայի Օրենք. ահա երկու կարևորագույն օրենքներ, որոնք պետք է ուսումնասիրվեն ձեր ուսումնական հաստատություններում ֆիզիկայի, մաթեմատիկայի և քիմիայի հետ նույն կարգով: Եվ, հավատացե՛ք ինձ, այդ օրենքների ուսումնասիրությունից եկած օգուտն ավելի շատ կլինի, քան Նյուտոնի կամ Պասկալի օրենքներն ուսումնասիրելուց:

Իսկ այժմ ես կուզենայի, որ դուք ձեր սրտերում ուշադրությամբ կշռադատեիք և ի սրտե պատկերացում կազմեիք, թե անձամբ ինչ կարող եք անել, որպեսզի ձեր աշխարհ եկող նոր

սերունդը հենց իր առաջին քայլերից ճշմարիտ գիտելիքներ ու պատկերացում ստանա ձեր աշխարհի մասին: Ստանա գիտելիքներ, որոնք հիմնված են ոչ թե ծեծված մարդկային ճշմարտությունների, այլ այնպիսի ճշմարտության վրա, որն իր հաստատումն է գտել դարերի ընթացքում: Քանզի որքան էլ ճնշված են եղել մեր դեսպանորդներն անցյալում ու ներկա ժամանակներում, այն ճշմարտությունը, որը նրանք ուսուցանել են, ապրել է և կապրի դարերով: Քանի որ այն ամենը, ինչ Աստծուց է, կապրի հավերժ, իսկ այն, ինչ մարդուց է, կմոռացվի եթե ոչ այս, ապա հաջորդ սերնդի կյանքում:

Մի՛ ընկեր մարդկային գիտակցությունից ծագած ճշմարտությունների հետևից, այլ մղվեք դեպի այն ճշմարտությունը, որը մուտք է գործում ձեր աշխարհի Լույսի Բարձրագույն օկտավաներից, և այնժամ դուք պայծառ ապագա կապահովեք Երկիր մոլորակի համար:

ԵՄ ԵՄ Կիկլոպետսը՝ Երկիր մոլորակի համար պայծառ ապագա կանխատեսողը

Վեհապետ Լանելլո
12 հուլիսի, 2006 թ.

Ուսմունք աշակերտելու Ուղու մասին

ԵՄ ԵՄ Լանելլոն՝ այս օրով նորից ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ, որպեսզի խոսեմ ձեզ հետ կենսականի մասին: Եվ ամեն անգամ մեր գրույցն ավելի ու ավելի գործնական բնույթ է ստանում, քանի որ ձեր գիտակցությունն ունակ է դառնում ավելի շատ Աստծո ճշմարտություն ընկալելու: Ըստ այդմ՝ թելադրությունների բարդությունն ավելանում է: Եվ նույնիսկ ոչ այնքան նյութի մատուցման բարդությունը, որքան քննարկվող առարկաների բարդությունը: Քանզի շոշափվող հարցերի շրջանակն ընդլայնվում է, և դուք ձեր գիտակցությամբ ավելի ունակ եք դառնում ընկալելու հարցերի ավելի լայն շրջանակ և դուրս եք գալիս սովորական պատկերացումների սահմաններից: Ըստ այդմ՝ մենք ամեն անգամ մի փոքր այլ կերպ ենք մատուցում արդեն ձեզ ծանոթ նյութը կամ էլ ձգտում ենք մտցնել այնպիսի նոր հասկացությունների տարրեր, որոնց նախկինում դուք չէք առնչվել:

Բոլոր քննարկվող թեմաները վերաբերում են ներկայումս ապրող մարդկանցից յուրաքանչյուրին: Բայց կա ավելի հրատապ մի թեմա: Այն վերաբերում է Աստծո, Համբարձյալ Վեհապետների հետ ձեր փոխհարաբերություններին: Գոյություն ունեն հսկայական քանակությամբ կրոնական համակարգեր և բազմազան կրոնական ուղղություններ: Եվ այդ կրոնական ուղղություններում կողմնորոշվելը դառնում է ավելի ու ավելի դժվար: Հենց որ մարդիկ ինչ-որ գիտելիքների կարիք են զգում, կամ հենց որ ի հայտ է գալիս ինչ-որ գիտական հայտնագործություն, ակնթարթորեն մեզ ընդդիմադիր ուժերն օգտագործում են իրենց բոլոր կարողություններն ու հնարավորությունները, որպեսզի մարդկանց գիտակցությունը խճճեն կեղծ հասկացությունների, կեղծ պատկերացումների և կեղծ դոգմաների ու կանոնների սարդոստայնի մեջ: Ճիշտ նույն բանը դուք այժմ դիտում եք տարբեր կրոնական համակարգերի ու հասկացությունների բնագավառում: Արդեն հայտնի դավանաբանություններից զատ ի հայտ են գալիս բազմաթիվ նորերը: Ծառ-շատերը, հենց որ ինչ-որ պատկերացում են ստանում Աստծո, Համբարձյալ Դասերի մասին, ձգտում են իրենց հայտարարել որպես նորահայտ գուրուներ և ձեռք բերել իրենց խոսքին ականջ դնող հոտ: Եվ դա դառնում է ձեր ժամանակին բնորոշ երևույթ: Մարդիկ չեն գիտակցում ամբողջ կարմայական պատասխանատվությունը, երբ ընկնում են նմանատիպ գուրուների ազդեցության տակ: Նրանք չեն գիտակցում, որ խմբերի հավաքությունների և աղոթքային գործառությունների ընթացքում նմանատիպ ուսուցչի բոլոր անկատար թրթիռներն ու դրսևորումները նրա աուրայից փոխանցվում են իրենց սեփական աուրային: Իսկ այդ անկատարությունը գալիս է լրացնելու իրենց սեփական անկատարությունները, և արդյունքում, փոխանակ ձերբազատվելու իրենց կարմայական կուտակումներից, նրանք իրենց էլեկտրոնային գոտում ավելացնում են իրենց գուրուի ողջ անկատարությունը:

Առանձնապես ցավալի է իրերի այն վիճակը, Երբ մարդիկ անցում են կատարում մի խմբից մյուսին, ինչպես դաշտագլորը՝ քամու ազդեցության տակ: Դա ձեր ժամանակի համար վերածվում է պատուհասի:

Միակ բանը, որ մենք կարող ենք անել նման իրադրության մեջ, ձեզ զգուշացնելն է, որ դա գոյություն ունի, և այն վտանգավոր է, քանի որ ձեր ընտրությունները ձեզ վրա են դնում կարմայական պատասխանատվություն, որն ստիպված կլինեք բեռնաթափել ապագայում:

Այժմ ես կուզեմայի ձեզ պատկերացում տալ այն մասին, թե իչպես ձեզ պահեք ձեզ շրջապատող բազմազան հոսանքների ծովում: Նախ և առաջ դուք պետք է հարց տաք ինքներդ

ձեզ, թե ինչն է ձեզ մղում, որ միանաք այս կամ այն հոգևոր խմբին: Քանզի ձեր շարժառիթի մաքրությամբ որոշվում է այն խմբի կամ այն կրոնական առաջնորդի թրթիռների մակարդակը, դեպի ուր ձգվում եք: Դուք երբևէ չե՞ք մտորել այն մասին, որ իրականում ձեզ շրջապատող հանգամանքները պարզապես հանկատարությամբ ձեր ընտրությանն են առաջարկում հատկապես այն, ինչը կայուն կերպով նստած է ձեր գիտակցության ու ենթագիտակցության մեջ: Եվ եթե դուք ձգտում եք տիրապետել զանազան մոգական հնարքների, որպեսզի կառավարեք ինչպես ձեր, այնպես էլ ձեր շրջապատի մարդկանց կյանքի հանգամանքները, ապա դուք ինքնաբերաբար ու անխուսափելիորեն կձգվեք դեպի այն խումբը, որն զբաղված է սև մոգության գործառնությամբ և ձեզ կծանրաբեռնեք ոչ միայն ձեր ընտրության հետևանքներով, այլ նաև կկիսեք այդ խմբի առաջնորդի և այդ խմբի անդամների կարման:

Եկել է ժամանակը, որ գիտակից ձևով մոտենաք այն ամենին, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում՝ ձեր բոլոր ընտրություններին: Քանզի երբեմն ձեր մեն մի ընտրությունից է կախված ձեր հետագա ուղու ընթացքն ինչպես այս կյանքում, այնպես էլ հաջորդ մի շարք մարմնավորումների ընթացքում: Մի անգամ ձեզ կապելով այն խմբի հետ, որն զբաղվում է սև մոգությամբ, դուք ինքնաբերաբար այդ խմբի կուտակած ամբողջ կարման փոխանցում եք ձեր էլեկտրոնային գոտու մեջ:

Գիտակից ձևով մոտեցեք ամեն ինչին: Եվ առաջին հերթին գիտակից ձևով մոտեցեք ձեր ներքին վիճակի ու ձեզ առաջնորդող շարժառիթի վերլուծությանը:

Ահա այն ճշմարիտ շարժառիթները, որոնք բնորոշ են մեր աշակերտներին՝

- մեր աշակերտները ձգտում են հրաժեշտ տալ իրենց թերություններին և այս աշխարհի իրեղենի հետ ունեցած կապվածություններին, որպեսզի օգնություն ցուցաբերեն Երկիր մոլորակի բոլոր այն կենդանի էակներին, որոնք դրա կարիքն ունեն:

- մեր աշակերտները ձգտում են ինքնամաքվել՝ մաքրել իրենց բոլոր չորս ստորին մարմինները, որպեսզի առավել արդյունավետ իրագործեն իրենց ծառայությունը:

- մեր աշակերտները ձգտում են կապ հաստատել իրենց ներսում գտնվող Աստծո հետ, ականածանք են տածում Լույսի Հիերարխիայի նկատմամբ և գիտակցաբար կանգնում են Հիերարխիայի աստիճանի վրա:

- արտաքին աշխարհի և ոչ մի հանգամանք չի կարող մեր աշակերտներին շեղել Ուղուց, երբ նրանք լսում են իրենց Բարձրագույն Ես-ի պատասխանները և կյանքի բոլոր դժվարին կացություններում խորհրդակցում են իրենց Բարձրագույն Ես-ի հետ:

Իսկ այժմ ես կուզենայի ձեր ուշադրությունը կենտրոնացնել նաև այն ցավալի հանգամանքի վրա, որ մեր աշակերտներից շատերը, արդեն ձեռք բերած լինելով շատ գիտելիքներ ու հմտություններ, այնուամենայնիվ լքում են ուղին՝ ընկնելով հեղինակության, փառքի ու փողի հետևից: Խիստ ցավալի է դա, քանզի մեր այն սաների համար, ովքեր արդեն կանգնել են Ուղու վրա և նվիրվածությամբ ծառայել մեզ, Ուղուց հեռանալը հավասարեցվում է ամենաձանր հանցագործությանը՝ դավաճանությանը: Իսկ այդ դավաճանության հետևանքները հնարավոր է լինում բեռնաթափել միայն ավելի ծանր հանգամանքներով հազեցած մարմնավորմամբ, երբ Ուղուն վերադառնալը լինում է շատ ավելի բարդ: Դուք միշտ կարող եք վերադառնալ Ձեռնադրումների Ուղուն, բայց երբեմն դրա համար պահանջվում են մի քանի շատ բարդ մարմնավորումներ, և միայն դրանից հետո է ձեզ թույլ տրվում վերադառնալ Եղբայրությանը գիտակցաբար ծառայելուն:

Ես չեմ ձգտում ձեզ ահաբեկել: Ես ձեզ ուսուցանում եմ այն Ուսմունքը, որի կարիքը դուք այժմ ունեք: Եվ այդ Ուսմունքը շատ կարևոր է այս փուլում: Որովհետև մենք չափազանց շատ ենք բախվում այն բանին, երբ մեր աշակերտները, խանդավառվելով ու մեզ՝ Համբարձյալ Վեհապետներիս, ծառայելու հնարավորություն ստանալով, ինչ-որ մի չնչին պատճառաբանությամբ հասնկարծ ընդհատում են իրենց ծառայությունը և հեռանում Ուղուց՝ ընկնելով ֆիզիկական աշխարհի խաբկանքների հետևից: Եվ, որքան էլ ցավալի լինի խոստովանելը, չափազանց մեծ տոկոս են կազմում մեր այն աշակերտները, որոնց մենք կորցնում ենք Ուղու վրա:

Ըստ այդմ՝ եթե դուք գտել եք այս Ուսմունքը և ամբողջ սրտով ընդունել եք այն թելադրությունները, որոնք գալիս են մեր դեսպանորդի միջոցով, ապա, խնդրում եմ, կրկնակի ուժեղացրե՛ք ձեր շարժառիթներին հետևելը: Հսկողության տակ վերցրեք ձեր բոլոր այն մտքերը, որոնք շեղում են ձեզ Ուղուց: Հեռու՝ վանեք այն բոլոր նենգամիտ փափասցողներին, որոնք ձեզ կասկած են ներշնչում ընտրած Ուղու նկատմամբ և ստիպում ձեզ ընկնել նորանոր ինտելեկտուլ չիսկյականների հետևից:

Այս Ուղին գտնելը ձեզ համար մեծ պատիվ է, որը դուք վաստակել եք ձեր նախորդ մարմնավորումների ընթացքում: Ուստի պահպանեք այն, ինչը ձեռք եք բերել և ձգտեք այն բազմապատկել Եղբայրությանը ծառայելով:

Ամերիկայում որպես Մարկ Փրոֆեթ իմ մարմնավորման ընթացքում ես հնարավորություն եմ ունեցել բախվելու դավաճանության և Ուղուց հեռանալու շատ դեպքերի: Ուստի առաջարկում եմ ձեզ ավելի գիտակից ձևով վերաբերվել այն ամենին, ինչի մասին խոսվում է մեր դեսպանորդի միջոցով տրվող այս թելադրություններում: Հավատացե՛ք, մենք ոչ մի ավելորդ բառ չենք ասում: Եվ մեր բոլոր ասածներն ուղղված են այն բանին, որ դրանց շուրջ բազմակիորեն խորհրդածեք ձեր սրտի անդորրության մեջ:

Ես ուրախ եղա այսօրվա հանդիպման առիթով: Եվ ես ուրախ կլինեմ, եթե մեզ հաջողվի հետագայում նորից հանդիպել:

ԵՍ ԵՄ Լանդլոն

Հովհաննես Սիրեցյալ
13 հուլիսի, 2006 թ.

Ուսմունք մարգարեների և մարգարեությունների մասին

ԵՍ ԵՄ Հովհաննես Սիրեցյալը: Ես հայտնի եմ ձեզ որպես Հայտնության հեղինակ: Եվ ես նորից եկել եմ, որպեսզի Ուսմունք տամ՝ հիմնված ներքին գիտելիքի վրա, գիտելիքի, որը մատչելի է միայն մարգարեներին կամ պայծառատեսներին. նաև՝ գերզգայականներին, սակայն Աստծո Աշխարհի նրանց ընկալման շեմն այնքան էլ բարձր չէ, այնպես որ իրենց իսկ ապագայի առումով երբեմն ավելի լավ կլինի, եթե նրանք դադարեցնեն իրենց մարգարեությունները և լուռ մնան:

Ի՞նչ եք կարծում, կա՞րոյոք կարմա, որ կրում են մարգարեները, և ինչպիսի՞ն է այդ կարման: Ես կպատասխանեմ. քանզի շատ լավ գիտեմ, թե ինչ կարմայի մասին է խոսքը: Մարգարեանալը ոչնչով չի տարբերվում ցանկացած ուրիշ գործունեությունից, որը դուք վարում եք ֆիզիկական աշխարհում: Եվ մարգարեներն էլ են տարբեր լինում: Կան մարգարեներ, որոնք Լույսից են մարգարեանում, և կան մարգարեներ, որոնք մարգարեանում են խավարից: Ամեն մի մարգարե ինքն է ընտրում, թե ինչ ուժերի ծառայի:

Մարգարեությունը անտեսանելի աշխարհի հետ կապի շնորհ է: Եվ այդ շնորհն ընդամենը մեկ մարմնավորման ընթացքում չէ, որ ձեռք է բերվում: Եվ այնժամ, երբ այդ շնորհը դրսևորվում է, սովորական մարդը, ով Աստծուց է մարգարեանում, լիովին գիտակցում է այն ողջ կարմայական պատասխանատվությունը, որն ընկնում է իր ուսերի վրա: Մարգարեություններն իրենցից ներկայացնում են տարբեր իրադարձությունների հավանականությունների ընթերցում նուրբ ոլորտից: Կախված այն պլանից ու մակարդակից, որից ընթերցվում է մարգարեությունը, այն կարող է լինել այս կամ այն չափով հավաստի: Սակայն, քանի որ նուրբ ոլորտում չկան այն բաները, որոնց դուք սովոր եք ֆիզիկական ոլորտում, ապա մարգարեության շնորհը ենթադրում է իրադարձությունների մեկնաբանում այն տպավորությունների հիման վրա, որոնք ստացվում են նուրբ ոլորտի հետ հպման ընթացքում: Բայց երբ տպավորությունների մեկնաբանությանը միջամտում է մարդկային խելքը, ապա այդ փուլում տեղի է ունենում տեղեկատվության աղավաղում, և մարգարեության հավաստիությունը նվազում է: Քանի որ իմ Հայտնությունը ես գրի եմ առել խորհրդանիշներով, ապա ես կարողացա խուսափել այն կարմայից, որն ընկնում է մարգարեի վրա, եթե մարգարեությունը չի իրականանում: Բարձր մակարդակի հասած մարգարեներն իրենց մատուցած գիտելիքին տալիս են ոտանավորի, առակի, քառյակների տեսք: Նրանք ճիշտ են վարվում, քանի որ դրանով խուսափում են կարմայից, երբ պարզվում է, որ մարգարեությունը ճիշտ չէ:

Կան ուրիշ մարգարեներ, ովքեր տուրք են տալիս մարդկային հետաքրքրասիրությանը և իրենց մարգարեությունը տալիս են մատչելի լեզվով՝ հիմնվելով այն գիտելիքների վրա, որոնք ստանում են աստեղային ոլորտի ցածր շերտերից, կամ ստանում են՝ գտնվելով թմրանյութերի ազդեցության տակ:

Այդ մարգարեություններն իրենց մեջ մեծ ճշմարտություն չեն պարունակում: Եվ, որպես կանոն, դրանք չեն իրականանում: Իրականացման հավանականությունը նման դեպքերում կազմում է 50 տոկոս: Դա այն հայտնի դեպքն է, երբ ասում են. «Տատիկը և է՛ս ասաց, և է՛ն»:

Սակայն մարգարեության նկատմամբ մարդկանց հետաքրքրասիրությունը բավարարելու ձգտումն այդ մարգարեների և պայծառատեսների վրա դնում է մեծ կարմայական պատասխանատվություն: Եվ այդ պատասխանատվությունն այնքան ավելի մեծ է լինում, որքան

շատ մարդիկ են իրագել դառնում այդ մարգարեությանը, և այն կեղծ է դուրս գալիս: Բանն այն է, որ ցանկացած մարգարեություն ծրագրավորում է այն մարդկանց գիտակցությունը, ովքեր այն ընդունում են: Եվ եթե մարդիկ հակված են հավատալ մարգարեությանը (իսկ այդպիսի մարդկանց քանակը մեծ է), ապա այդ մարդիկ իրենց գիտակցությամբ հնարավորություն են ստեղծում այդ մարգարեության իրականացման համար: Եվ եթե մարգարեի նկարագրած երևույթը չի համընկել Աստվածային տեսիլքի հետ, այլ իրականացվել է այդ երևույթի մեջ ներդրված մարդկային գիտակցության ներուժի շնորհիվ, ապա այդ երևույթի իրականացման դեպքում կարման ընկնում է այդ մարգարեի և այն մարդկանց վրա, ովքեր իրենց գիտակցությամբ նպաստել են այդ երևույթի իրականացմանը:

Ըստ այդմ՝ ցանկացած մարգարեություն երկսայրի սուր է: Եթե մարգարեությունն աստվածային պլանը փոխում է լավ ուղղությամբ, ապա այդպիսի մարգարեության իրականացումը բարի կարմա է բերում բոլոր նրանց համար, ովքեր իրենց գիտակցությամբ մասնակցել են այդ մարգարեության իրականացմանը: Եթե մարգարեության արդյունքում աստվածային պլանը գնացել է վատի կողմը, ապա այդ մարգարեությունը բացասական կարմա է ստեղծում:

Մարգարեությունը նույնպիսի երկակի երևույթ է, ինչպես ձեր աշխարհում ամեն ինչ:

Եվ այն մարդիկ նույնպես, որոնք ենթարկվում են կեղծ մարգարեների մարգարեությունների էներգիայի ազդեցությանը, ստեղծում են բացասական կարմա:

Լույսից մարգարեացողները պատվի չեն արժանանում, քանի որ նրանց մարգարեությունները մարդկանց մեծ մասին դուր չեն գալիս: Մարդիկ մշտապես զգուշավորությամբ են վերաբերվել նման մարգարեներին: Նրանց հետ գերադասել են կապ չհաստատել կամ անգամ փորձել են ֆիզիկապես ոչնչացնել: Լույսից մարգարեացողների հետ հաշվեհարդարի կարման ծանր բեռ է դառնում հաջորդ սերնդի ուսերին:

Եվ հակառակը, Աստծո մարգարեին պատվելը բարի կարմա է բերում այն մարդու ընտանիքին, ով հյուրընկալում կամ իր հարկի տակ է վերցնում այդ մարգարեին:

Ճշմարիտ մարգարեները միշտ եղել են Աստծո դեսպանորդներ և իրենց առաքելությամբ նպաստել են մարդկանց գիտակցության ճիշտ զարգացմանը: Իսկ նրանք, ովքեր իրենց մարգարե են հայտարարել՝ իրենց վրա Աստծո կնիքը չունենալով, իրենք իրենց դրել են ծանր կարմայի տակ: Ուստի մշտապես նայեք ու զգոն եղեք՝ թույլ չտալով ձեզ ներգրավել կամայական մարգարեական գործունեության մեջ, որը ոչ թե Աստուց է, այլ դիվային բնույթ է կրում:

Ես եկել և տալիս եմ այս Ուսմունքը, քանի որ իմ մարմնավորումից հետո հարյուրավոր տարիներ են անցել, բայց այն չի կորցրել իր արդիականությունը: Ընդհակառակը, ավելի արդիական է դարձել, քանի որ շատ մարգարեացողներ ու պայծառատեսներ են ի հայտ եկել, որոնցից վնասն ավելի շատ է, քան օգուտը: Եվ եթե դուք ներգրավվեք նրանց գործունեության մեջ, օգտվեք նրանց ծառայությունից և վնարեք այդ ծառայության դիմաց, ապա դրանով հանդերձ կվաստակեք սխալ գործողությունների կարմա:

Ես եկել եմ, որպեսզի ձեզ տամ ճշմարիտ և կեղծ մարգարեների մասին այս Ուսմունքը, որպեսզի կարողանաք գիտակից ձևով մոտենալ այն ամենին, ինչն այդ բնագավառից հանդիպում է ձեզ ձեր ուղու վրա:

Չէ՞ որ շատ կարևոր է այն, թե ուր եք ուղղում ձեր էներգիան: Ոչ մի կեղծ մարգարե չի կարող մարգարեանալ, եթե նրան չտաք ձեր էներգիան ու ձեր փողերը՝ քաջալերելով զբաղվել անաստվածահաճո գործով:

Կեղծ մարգարեներն անմաքուր մարդկային գիտակցության, տգիտության և սնահավատության ծնունդ են:

Իսկ հիմա, երբ Ուսմունքի հիմնական մասն արդեն տրված է, ես կուզենայի մարգարեանալ ձեր ապագայի վերաբերյալ: Նախքան գալս ես և մյուս Համբարձյալ Վեհապետները խորհում էինք այն մասին, թե արժե՞ արդյոք այս մարգարեությունը ձեզ փոխանցել այս դեսպանորդի միջոցով: Քանզի պարտավոր ենք նախապես կշռադատել հաղորդչի մաքրության և տեղեկատվության հնարավոր աղավաղման աստիճանը: Մենք որոշեցինք չիսկի դիմել, ուստի ես սկսում եմ:

Այս բարդ ժամանակներում, որում ապրում եք, դուք մշտապես շատ բաների մասին եք մտորում և հատկապես այն մասին, թե ինչպիսին կլինի մոլորակի ապագան. արդյոք նրան չի՞ սպառնում հերթական համամոլորակային արհավիրքը: Ուստի ձեզ համար կարևոր կլինի իմանալ, որ ներկայումս ապրող սերնդի կյանքի ընթացքում ոչ մի համամոլորակային արհավիրք չի սպասվում: Սակայն իրավիճակը կարող է փոխվել, եթե չշարունակեք ամենօրյա ջանքեր գործադրել ձեր գիտակցության փոփոխման ուղղությամբ: Մոլորակի ներկայիս կայուն հավասարակշռության վիճակը ձեռք է բերված այն բանի շնորհիվ, որ շատ մարդիկ իրենց գիտակցության ներկա աստիճանով կարող են դրականորեն մտածել և իրենց ջանքերն ուղղել

դեպի Ընդհանուր Բարօրությունը, Բարին, Լույսը: Եվ եթե տարեցտարի այդպիսի մարդկանց թիվը մեծանա, ապա ոչ մի համամոլորակային արհավիրք տեղի չի ունենա նաև հաջորդ սերնդի կյանքի ընթացքում: Քանզի յուրաքանչյուր նախորդ սերունդ հող է նախապատրաստում հաջորդ սերնդի համար: Եվ հենց դուք եք ձեր գիտակցությամբ Երկիր մոլորակի ողջ կյանքի համար կայուն զարգացում ապահովում հաջորդ տիեզերական բոլորաշրջանի համար:

Մաղթում եմ, որ նույն հաջողությամբ շարունակեք ձեր գիտակցությունը պահել բարձր մակարդակի վրա:

*ԵՄ ԵՄ Հովհաննես Միրեցյալը՝
ձեր ԵՄ ԵՄ կենսահոսքի նկատմամբ մեծագույն հարգանքով*

Վեհապետ Սերապիս Բեյ
14 հուլիսի, 2006 թ.

**Ես կուզենայի, որ ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ տեղեկացվեին
մեր Ուղու մասին և կանգնեին Հիերարխիայի աստիճանի վրա**

ԵՄ ԵՄ Սերապիս Բեյը՝ նորից ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկողն այժմ, որպեսզի խրատներ տամ ձեզ: Եվ ճիշտ այնպես, ինչպես կես տարի առաջ*, կամենում եմ տալ գիտելիք և տեղեկություններ: Սակայն հիմա մոլորակի վրա իրադրությունը փոխվել է, և ես ուրախ եմ, որ փոխվել է դեպի լավը: Հեռու չէ այն օրը, երբ մենք կկարողանանք, ինչպես հավասարը հավասարի հետ, գրուցել Երկրի մարդկանց հետ: Իսկ այժմ ես ներկայանում եմ միայն նրանց, ովքեր պատրաստ են ինձ լսելու, քանի որ նրանց գիտակցության մակարդակն ինձ թույլ է տալիս դա անել: Սակայն մի՛ կարծեք, որ ձեր այս կյանքի նվաճումներն են ձեզ թույլ տվել կանգնել Ձեռնադրումների Ուղու վրա: Ձեզնից շատերի հետ ես ծանոթ եմ դեռևս Հին Եգիպտոսի ժամանակներից, երբ բուրգերում ինձ հետ միասին ձեռնադրումներ էիք անցնում: Սակայն հանգամանքները մեզ բաժանել են Կյանքի ուղու տարբեր ուղղություններով: Եվ ահա այսօր ես նորից հանդիպում եմ ձեզ հետ՝ իմ հին ընկերների ու ծանոթների հետ: Եվ եթե ձեզ տրված լինեք ինքնուրույն անցած ձեր այդ կյանքի հանգամանքները, ապա կհասկանայիք, որ ձեռնադրումները և՛ այն ժամանակ, և՛ ձեր ժամանակներում անցկացվում են ըստ մեկ հատկանիշի՝ ըստ ձեր կապվածության աստիճանի այն ամենի հետ, ինչը նյութական է, և ինչը պատկանում է ավելի նուրբ ոլորտներին՝ մտքերի և հույզերի ոլորտներին:

Քանի դեռ նյութական աշխարհի հետ ձեր կապվածությունը պահպանվում է, դուք շարունակում եք մարմնավորվել: Հնարավոր չէ ամբողջությամբ հրաժարվել նյութականությունից՝ չճաշակելով ձեր աշխարհում գտնվող բոլոր հրապուրանքները: Սկզբում դուք ճաշակում եք այդ հրապուրանքները, կարմայի տեսքով արժանանում եք դրանց պտուղներին, հաղթահարում եք ստեղծված կարման և աստիճանաբար ձերբազատվում եք այն կապանքներից, որոնք ձեզ կապում են նյութական աշխարհին: Ձեռնադրումները կարելի է անցնել՝ չհեռանալով կյանքից, մնալով կյանքի բովում: Սա բոլորովին նոր մոտեցում է, որը բնորոշ է ձեր ժամանակներին:

Պարզաբանեմ օրինակներով:

Նախկինում ձեռնադրյալների դպրոցում հայտնվելու համար հարկավոր էր լինում ընդունելության քննություն հանձնել՝ խոնարհության և հնազանդության առումով: Միայն դրանից հետո ձեզ կարող էին թույլ տալ դպրոցում ուսում ստանալ: Այժմ դուք հնարավորություն ունեք գիտելիքներ ստանալ՝ ընդունելության քննություններ չհանձնելով: Սակայն կյանքի հանգամանքները ձեզ ստիպում են հաղթահարել այն, ինչը խանգարում է ձեր ներսում խոնարհություն և հնազանդություն արմատավորելուն: Ե՛վ բազմաթիվ տառապանքներն ու գրկանքները, և՛ հիվանդություններն ու դառնությունները, որոնք վիճակվում են ձեզ, կարմայի արագացված վերադարձի արդյունք են, որպեսզի ձեր գիտակցության համար պարզ դառնա, թե ինչ է Օրենքը. իսկ այդ Օրենքը պահանջում է ձեր ամբողջական նվիրումը՝ ձեր լիակատար ենթարկվածությունը Օրենքին: Ընդ որում այդ ենթարկվածությունը դուք նվաճում եք այն ծանր աշխատանքով, որը կատարում եք ինքներդ ձեզ հետ՝ ձեր գիտակցության ու ենթագիտակցության, ձեր անցյալ կյանքերի այն բոլոր նվաճումների հետ, որոնք քողարկված ձևով առկա են ձեր ստորին մարմիններում:

Ինքներդ պետք փորփրեք ձեր գիտակցության այն կուտակները, որոնք ձեզ հեռացնում են համայն տիեզերքի Օրենքն ընդունելուց: Շատ մարմնավորումների ընթացքում դուք անհնազանդություն եք դրսևորել Օրենքի նկատմամբ և գործել եք այնպես, ինչպես կամեցել եք, ինչպես թելադրել է ձեր էգոն: Իսկ այժմ ձեր ազատ կամքով պետք է հրաժեշտ տաք ձեր էգոյին և

ձեզ ենթարկեք Բարձրագույն Կամքին ու Բարձրագույն Օրենքին, որը գործում է այս տիեզերքում: Պետք է ձեր Ուղով ընթանալուն զուգընթաց դրսևորեք ողջ կյանքի հետ միավորվելու ձգտում: Իսկ այն դեպքերում, երբ ձեր ներսում ինչ-ինչ հակասություններ են ծագում, ապա դրանք պայմանավորված են լինում այն անկատարություններով ու էներգիաներով, որոնք դեռևս անմշակ են մնացել: Դուք չեք կարող ակնթարթորեն ազատվել ձեր կարմայից՝ անցյալում ձեռք բերված բացասական էներգիաներից, սակայն կարող եք դրանցից ձերբազատվելու որոշում ընդունել և ձեռնամուխ լինել դրա իրականացմանը ինքներդ ձեզ հետ կատարվող ամենօրյա աշխատանքով, ամենօրյա նախընտրանքներով ու նկրտումներով:

Ձեզնից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ միայն ձեր գիտակցությունն ու ներքին մղման բացակայությունն են դանդաղեցնում Ուղով ձեր առաջընթացը: Քանզի եթե ձեր մեջ դաստիարակեք հնազանդության, խոնարհության ու կայունության հատկանիշներ, ապա դրանք երաշխիք կլինեն, որ կարողանաք հաջողությամբ առաջ գնալ: Ակնթարթորեն հնարավոր չէ ազատվել ձեր կարմայական բեռից, բայց դրան կարելի է հասնել ամենօրյա ջանքերի շնորհիվ: Օր օրի, տարեցտարի: Շատ քիչ են այն մարդիկ, որոնք ունակ են արագորեն ազատվել կարմայից: Եվ, որպես կանոն, այդպիսի մարդիկ աշխարհ են գալիս արդեն իսկ շատ մեծ նվաճումներով՝ աստվածային որևէ հատուկ առաքելություն իրականացնելու համար: Մնացած մարդիկ պետք է հասկանան, որ կյանքի ուղու իրենց վիճակը պայմանավորված է միայն անցյալի իրենց սխալներով և ոչ ճիշտ նախընտրանքներով:

Առաջին քարոզս այն է ձեզ, որ գիտակցեք, որ ոչ ոք մեղավոր չէ ձեր կյանքի ուղու այն վիճակի ու դիրքի համար, որում ներկայումս գտնվում եք: Միայն ինքներդ եք պատասխանատու ձեր կյանքի բոլոր հանգամանքների համար: Եվ հենց որ գիտակցեք իմ Ուսմունքի այս դրույթը, ապա բաց կդառնաք շատ ճշմարտությունների ընկալման համար, որոնք մինչ այդ արգելափակվում էին ձեր գիտակցությամբ:

Հիերարխիայի, Ուսուցիչների նկատմամբ ակնածանքը շատ կարևոր հատկանիշ է Ուղու վրա: Քանզի առանց Ուսուցչի նկատմամբ ակնածանքի դուք չեք կարող Ուղով առաջ ընթանալ:

Այն դեպքում, երբ անկեղծորեն ու սիրով Ուսուցչին եք նվիրաբերում ձեր նվիրվածությունն ու Մերը, դուք ձեր աուրայի մեջ եք ներառում նվաճումների այն պաշարը, որն արդեն ունի ձեր Ուսուցիչը: Եվ կարևոր չէ՝ այդ Ուսուցիչը ֆիզիկական՝ ոլորտում է գտնվում, թե՛ նուրբ ոլորտում:

Ձեզնից շատերին ֆիզիկական ոլորտում ուղեկցորդ է պետք ունենալ, որի կողքին կկարողանաք յուրացնել Բարձրագույն էներգիաները: Իսկ այդ էներգիաները ձեզ կօգնեն ազատվելու շատ թերություններից ու խնդիրներից, որոնք խոչընդոտում են Ուղով ձեր առաջընթացը:

Ըստ այդմ՝ ես ձեզ խորհուրդ եմ տալիս օգտվել այն ճոպանից, որը մենք մեկնում ենք ձեզ, երբ դուք սկսում եք դիք ժայռերով մագլցել դեպի գագաթ: Եվ այդ ճոպանի դերը մեր դեսպանորդն է կատարում: Մի՛ անտեսեք նրա օգնությունը և ետ մի՛ հրեք նրա ձեռքը, որը նա ձեզ է մեկնում օգնելու համար: Միայնակ ժայռեր մագլցելն անհամեմատ ավելի դժվար է: Մենք ձեզ փորձված ճանապարհ ենք առաջարկում, որը հիմնված է գուրու-սան հարաբերությունների ու Ձեռնադրումների Ուղու վրա, երբ դուք, կամավոր կերպով կանգնելով Հիերարխիայի աստիճանի վրա, ստանում եք մեր ամբողջ օգնությունն ու օժանդակությունը:

Դա այն Ուղին է, որը փորձարկվել է դարերով: Այն Ուղին է, որով ձեզ առաջնորդել են անցյալի բոլոր մեծագույն Ձեռնադրյալները: Իսկ այժմ եկել է ժամանակը, երբ պետք է պատկերացում ստանաք այդ Ուղու մասին: Օգտվե՛ք այս հնարավորությունից, որը ձեզ տալիս է Երկինքը և ձգտեք ստանալ այն, ինչ տրվում է: Հնարավորության դռները բաց են: Նոր թողության շնորհ է տրված: Եվ ձեզնից նրանք, ովքեր հասցրին կանգնել Հիերարխիայի աստիճանի վրա և ենթարկվել այդ հնարավորության ազդեցությանը, առ այսօր չտեսնված արագացում ստացան իրենց զարգացման մեջ: Շատերը նրանցից, ովքեր հենց ամենասկզբից կարդում են այս թելադրությունները և մասնակցում այն միջոցառումներին, որոնք մենք վարում ենք մեր դեսպանորդի օգնությամբ, իրենց վրա զգում են մեր օրհնանքն ու մեր օգնությունը:

Ես կուզենայի, որ ավելի ու ավելի շատ մարդիկ տեղեկացված լինեն մեր Ուղու մասին և կանգնեն Հիերարխիայի աստիճանի վրա:

ԵՄ ԵՄ Մերապիսը՝ Ուղու վրա ձեր հաջողությունների մատթանքներով

***«Ես եկել եմ զգուշացնելու, որ այս թելադրությունը կարող է վերջինը լինել»** - Մերապիս Բեյ, 23 դեկտեմբերի, 2005 թ.

Սուրբ Միքայել Հրեշտակապետ
15 հուլիս, 2006 թ.

Ես և իմ հրեշտակները պատրաստ ենք գալու ձեր առաջին իսկ կանչով...

ԵՍ ԵՄ Միքայելը՝ ձեզ այցի եկածը...

ԵՍ ԵՄ եկել... Եկել եմ, որպեսզի այս դեսպանորդի միջոցով իմ գալուստը ֆիզիկական ոլորտում դրսևորվի...

Ես երջանիկ եմ մեր նոր հանդիպման առիթով և հուսով եմ, որ այն ձեզ օգտակար կլինի: Քանզի ձեզ հետ ունեցած մեր բոլոր կապերն ու փոխազդեցությունները շատ կարևոր նշանակություն ունեն:

Դուք ինձ գիտեք որպես Տիրոջ զորագնդերը գլխավորողի, ով մարտնչում է ցանկացած բացասական էներգիայի դրսևորման դեմ: Այո՛, ես ծառայում եմ համայն տիեզերքի Տիրոջ շահերի պաշտպանությանը և իմ գործն անում եմ այնպես, ինչպես թելադրում է իմ պատիվը:

Ես և իմ հրեշտակները պատրաստ ենք գալու ձեր առաջին իսկ կանչով ու պահանջով, որպեսզի ցուցաբերենք ձեր խնդրած օգնությունը: Շատ աղտեր կան Երկիր մոլորակի աստեղային ոլորտում, և ես ի պաշտոնե պարտավոր եմ հետևել, որ այդ աղտերությունը չխոչընդոտի մոլորակի կենսահոսքերի զարգացումը: Ես հետևում եմ ձեր կոչերին և մանրակրկիտ կատարում եմ դրանք, բայց միայն այն դեպքում, եթե դրանք համապատասխանում են Աստծո Կամքին:

Այժմ ես պատրաստ եմ ծառայելու կրկնակի ուժով ու եռանդով, քանզի ուրախ եմ, որ մեծ թվով մարդկային անհատներ խելքի են եկել և փորձում են հասկանալ Տիեզերքի Օրենքն ու հետևել դրան: Դա շատ ուրախալի է: Բայց այդ ուրախալի լուրի մեջ նաև մի փոքր դառնահամ կա, քանզի կան նաև այնպիսիները, որոնք իրենց գիտակցությամբ այնքան են ցածրացել, որ այլևս չեն կարող ընթանալ Էվոյուցիոն ուղով: Այդպիսիների համար մենք գերեզմանափորների դեր ենք կատարում: Քանզի Աստծո հետ կապից իրենց վերջնականորեն զրկած այդ անհատների մահվանից հետո նուրբ ոլորտում մնում է միայն մույթ էներգետիկական ամպ, որը ենթակա չէ հետագա Էվոյուցիայի: Մեր խնդիրն է վերացնել այդ տիեզերական աղբը, որպեսզի առաջ ընթանալու հնարավորություն տանք այն ամենին, ինչն ընթանում է Էվոյուցիոն ուղով: Ցավալի է, բայց շատ մարդկային անհատներ այնպես են իրենց կապել ֆիզիկական ոլորտին, որ այլևս ունակ չեն հետագա զարգացմանը: Եվ սա նրանց վերջին կյանքը կլինի: Քանի որ շատ մարմնավորումների ընթացքում նրանք կապ չեն պահել Աստծո հետ և չեն ձգտել այդ կապն ունենալ: Ուստի և նրանց Էվոյուցիայի գործընթացն ավարտվում է: Նրանք այլևս չեն կարող մնալ Երկրի վրա և ստիպված կլինեն նորից սկսել իրենց Էվոյուցիոն ուղին այլ մոլորակների վրա և ավելի ստորին ձևերով: Կամ էլ ամբողջապես դուրս կգան իրենց անհատական զարգացման ուղուց և կվերադառնան Միասնականի սրտի մեջ, որպեսզի վերաբնեռացվեն: Այդ ամենը մեծ ծավալի աշխատանք է ստեղծում իմ հրեշտակախմբերի և ինձ համար, սակայն հենց այդ աշխատանքի շնորհիվ է, որ ազատվում է ձեր Ուղին, ձեզնից նրանց Ուղին, ովքեր հինազանդ են այս տիեզերքի Օրենքին:

Հարկ չկա, որ դուք շատ ուշադրություն դարձնեք այն ամենին, ինչը կապված չէ ձեր Էվոյուցիայի հետ: Բայց ես և իմ հրեշտակախմբերը ձեզ երախտապարտ կլինենք, եթե դուք կանչեր հղեք, որպեսզի նուրբ ոլորտում մենք կարողանանք ավելի հաջող կերպով իրականացնել մեր աշխատանքը:

Դուք գիտեք, որ բազմաթիվ արհավիրքներ ու տարերային աղետներ են տեղի ունենում, որոնց ընթացքում զոհվում են բազմաթիվ մարդիկ: Նրանց զոհվելու պատճառները տարբեր են, և դուք չէ, որ պետք է դատեք այդ պատճառներն ու քննարկեք դրանք: Սակայն դուք կարող եք օգնել այն մարդկանց հոգիներին, ովքեր ողբերգական հանգամանքների պայմաններում իրենց անցումն են կատարում: Եթե կոչ հղեք ինձ ու իմ հրեշտակախմբերին և կանչեք մեզ, որպեսզի մեր հսկողության տակ առնենք այս կամ այն արհավիրքի հետևանքով զոհված մարդկանց հոգիները, ապա դրանով կհեշտացնեք մեր աշխատանքը:

Ըստ այդմ, խնդրում եմ, եթե դուք վկա եք դարձել կամ նորություններից լսել եք ինչ-որ մի աղետի մասին, ապա այսպիսի կանչ հղեք.

«Հանուն Ամենագոր Աստծո, հա՛նում իմ Բարձրագույն Ես-ի, խնդրում եմ Միքայել Հրեշտակապետին և Պահապան հրեշտակներին, որ իրենց հսկողության տակ վերցնեն հետևյալ դեպքի հետ կապված իրադրությունը (նշեք ճշգրիտ տեղն ու նկարագրեք դեպքը, օրինակ՝ աղետ, որը կապված է այսինչ տեղում ինքնաթիռի վթարի հետ): Ես խնդրում եմ օգնություն ցուցաբերել այն մարդկանց հոգիներին, ովքեր զոհվել են այդ աղետի հետևանքով, և առաջնորդել նրանց դեպի նուրբ ոլորտի այն մակարդակը, որը համապատասխանում է այս կամ անցած կյանքերում նրանց ձեռք բերած նվաճումներին: Թող Աստծո Սուրբ Կամքը լինի: Ամեն»:

Հոգիներին ցուցաբերած ձեր օգնությունն անգնահատելի է, քանի որ նրանց հնարավորություն էր տալիս աստեղային ոլորտի ստորին մակարդակներում թափառելու փոխարեն մեր օգնությամբ բարձրանալու եթերային ոլորտում գտնվող այն մենաստանները, որտեղ նրանց ցուցաբերվում է անհրաժեշտ օգնություն և իրականացվում նրանց վերակենդանացումը հաջորդ մարմնավորման համար:

Երբեք մի՛ դատեք շրջապատի մարդկանց՝ արժանավոր՝ են Աստծո աչքին, թե՛ ոչ: Մարդկային գիտակցությունը չի կարող իմանալ ո՛չ ուրիշ մարդկանց նվաճումների մակարդակը, ո՛չ Աստծո առջև նրանց վաստակի աստիճանը: Եվ միայն մեր մակարդակից ու ոլորտից է տեսանելի, թե ով ով է, և որքան է Աստծո ու մարդկանց առջև յուրաքանչյուրի վաստակը:

Արդ, մի՛ ծանրաբեռնեք ձեզ ուրիշ մարդկանց փրկության հոգսով, այլ ավելի շատ մտախոգվեք ձեր սեփական հոգու փրկությամբ: Իսկ ես և իմ հրեշտակները միշտ պատրաստ ենք ձեզ օգնության գալու և պաշտպանելու ձեզ այն անկանխատեսելի իրավիճակներում, որոնցում հայտնվում եք, եթե, իհարկե, ձեր կարման ինձ ու իմ հրեշտակներին թույլ է տալիս, որ այդ օգնությունը ցուցաբերվի:

Ուստի հո՛գ տարեք, խնդրեմ, վաստակ ու բարի կարմա ձեռք բերելու մասին, որպեսզի ձեր կյանքի բեկումնային պահերին ձեր էներգիան բավարար լինի ձեր կանչի նպատակն իրագործելու համար:

Ես և իմ հրեշտակները մշտապես ու անխոնջ կերպով գտնվում ենք շուրջօրյա պահակային ծառայության մեջ: Մենք ծառայում ենք Երկրի մարդկությանը: Խնդրում եմ չմոռանալ, որ մենք կանք. օգնության կանչով ամեն օր դիմե՛ք մեզ ձեր սրտերի անդորրության մեջ:

Օ՛, որքան հաճելի է լսել այն մարդկանց երախտագիտության խոսքը, ում օգնություն է ցուցաբերվել: Ուղղակի ողողվում եմ ձեր Սիրո ճառագայթներով, երբ ինձ եք առաքում ձեր Մերն ու Երախտագիտությունը: Այդ բուպեններին ես այնպես եմ լցվում Աստծո էներգիայով, որ Երկրի մարդկությանը օգնելուն ուղղված իմ ջանքերը բազմակիորեն աճում են:

Ես երջանիկ եմ, որ ձեր մեջ կան այնպիսի մարդիկ, ովքեր պատրաստ են պարզապես ինձ Մեր առաքել՝ փոխարենն ինձնից ոչինչ չխնդրելով: Ձեր սերն օգնում է ինձ կրկնապատկված եռանդով օգնել նրանց, ովքեր իմ օգնության ու պաշտպանության կարիքն ունեն:

Իսկ այժմ ես պատրաստ եմ տալու ևս մեկ կարևոր խրատ: Այն վերաբերում է ձեր իսկ Բարձրագույն մասի հետ ձեր կապին: Այժմ շատ մարդիկ են իրենց իսկ Բարձրագույն մասի հետ հաղորդակցվելու փորձեր ձեռնարկում: Իսկ դա շատ ուրախալի է և ողջունվում է Համբարձյալ Դասերի կողմից: Սակայն դուք միշտ պետք է հիշեք, որ այդ ուղու վրա ձեզ շատ վտանգներ են սպառնում, ճիշտ այնպես, ինչպես Երկիր մոլորակի վրայի ցանկացած գործունեության դեպքում, որը կրում է երկակի բնույթ: Երբ ձեր շարժառիթն այնքան էլ մաքուր չէ, և ձեր չորս ստորին մարմինների մաքրությունը բավարար աստիճանի վրա չէ, իսկ նուրբ ոլորտում կապի մեջ մտնելու ձեր ցանկությունը հսկայական է, ապա հնարավոր է, որ դուք հաղորդակցության մեջ մտնեք ոչ թե ձեր Բարձրագույն մասի, այլ աստեղային ոլորտի այնպիսի էակների հետ, որոնք լավագույն դեպքում կարող են ձեզ հետ կատակ խաղալ, իսկ վատագույն դեպքում՝ ստրկացնել ձեզ և օգտագործել իրենց նպատակներով: Ըստ այդմ՝ ձեր Բարձրագույն Ես-ի հետ կապի մեջ մտեք փորձառու դաստիարակի ուղեկցությամբ, և մշտապես նախքան ձեր ներխուժումն սկսելը դիմեք ինձ կանչով ու խնդրանքով, որ պաշտպանեմ ձեզ նուրբ ոլորտի ցանկացած նեգատիվ, բացասական ազդեցություններից, ինչպես նաև ամեն տեսակի էակների՝ դևերի և ապամարմնավորված ոգիների ազդեցություններից:

Ձեր ներխուժման և Բարձրագույն Ես-ի հետ հաղորդակցվելու ամեն մի փորձից առաջ խստիվ խորհուրդ եմ տալիս ձեզ, որ աչքաթող չանեք այդ կոչը:

Հիշեք, որ ոչ ոք իրավասու չէ ձեզ արգելելու, որ փորձարարություն անեք նուրբ ոլորտում հաղորդակցվելու բնագավառում: Սակայն ինքներդ լիակատար կարմայական պատասխանատվություն եք կրում, երբ փոխազդեցության մեջ եք մտնում խավարի ուժերի հետ, որոնք գտնվում են աստեղային ոլորտում և գործում են հիմնականում այդ ոլորտի միջոցով: Իսկ ձեր ներխուժման ընթացքում դուք միշտ շփվում եք աստեղային ոլորտի հետ, համենայն դեպս՝ այնքան ժամանակ, քանի դեռ չեք սովորել ակնթարթորեն, արագընթաց վերելակի պես, վեր խոյանալ մինչև Լուսի Բարձրագույն օկտավաները:

Ես այսօր մտորումների համար բավականաչափ տեղեկություններ հաղորդեցի և այժմ հրաժեշտ եմ տալիս ձեզ:

*ԵՄ ԵՄ Միքայել Հրեշտակապետը,
ձեզ եմ բերում իմ պաշտպանության կապույտ բոցը*

Վեհապետ Հիլարիոն
16 հուլիսի, 2006 թ.

**Միայն ձեզնից է կախված, թե կկարողանա՞ք արդյոք
ձեր Բարձրագույն Ես-ի համար ապահովել գրույցի բարենպաստ պայմաններ**

ԵՍ ԵՄ Հիլարիոն Վեհապետը՝ խրատներ տալու և ներքին աշխատանքի նպատակով ձեզ այցելածը:

Խրատները, որոնք մեզնից ստանում եք, նախատեսված են այն բանի համար, որ դրանց շուրջ խորհրդածեք ձեր սրտի անդորրության մեջ: Մենք գործում ենք ձեր գիտակցության միջոցով, փորձում ենք ընդլայնել ձեր գիտակցությունը և նրան հասու դարձնել ճշմարտություններ, որոնք դարերի ընթացքում դրսևորվել են որպես անառարկելի: Եվ այդ ճշմարտությունները դուք կարող եք ստուգել ձեր սրտերում: Ունկնդրե՛ք ձեր սրտին: Որսացե՛ք անդորրության այն պահը, երբ լիակատար հանգիստ եք, և ձեր ներսում ամեն ինչ գտնվում է կատարյալ ներդաշնակ վիճակում: Շատ հազվադեպ են լինում այդպիսի րոպեները, բայց դրանք լինում են յուրաքանչյուր մարդու կյանքում: Աստված տալիս է ներքին անդորրության այդ ակնթարթները, որպեսզի դուք գիտակցորեն կարողանաք մղվել դեպի նման վիճակների կրկնությունը, երբ ձեր ներսում ամեն ինչ գտնվում է հանգստի ու հավասարակշռության մեջ: Հատկապես այդպիսի ակնթարթների ժամանակ է, որ ձեզ համար ավելի հեշտ է լսել ձեր Բարձրագույն Ես-ի ձայնը, ձեր սրտի անդորրության մեջ հնչող մեղմ ներքին ձայնը: Եվ երբեմն ձեզ համար դժվար է լինում այդ ձայնը տարբերել ձեր ներքին մտորումներից, որոնք վարում է ձեր մտածողությունը: Պետք է ձգտեք, որ կարողանաք դրանք իրարից զանազանել: Այդ ձայնն աչքի է ընկնում ձեր նկատմամբ բացառիկ հարգանքով. այն շատ փաղաքուշ է և աչքի է ընկնում իր պարզությամբ, անպաճուճությամբ, անկեղծությամբ ու սիրալիրությամբ: Դուք չեք կարող չզգալ այդ ձայնի և ձեր ամենօրյա ներքին մենախոսությունների միջև եղած տարբերությունը: Ձեզ ուղղակի անհրաժեշտ է ուշադիր ականջ դնել, որ տարբերեք ձեր Բարձրագույն Ես-ի ձայնը: Ձեզ այնքան էլ հաճախ չի վիճակվում լսել այդ ձայնը: Բայց եթե ձեր արտաքին գիտակցությամբ սպասում եք այդ քնքուշ ձայնը լսելուն, ապա միշտ կկարողանաք այն զանազանել հարյուրավոր ու հազարավոր այլ ձայներից, որոնք պատկանում են աստեղային ոլորտին:

Պետք է սովորեք կողմնորոշվել ձեր ներքին տարածքում և ձգտեք հասնել ներքին անդորրության ու հանգստի, այլապես ձեր առօրեական ունայնության մեջ չեք կարողանա լսել ձեր Բարձրագույն Ես-ին: Իսկ Բարձրագույն Ես-ին լսելը ձեզ խիստ անհրաժեշտ է, որովհետև այն խորհուրդներն ու գիտելիքները, որոնք ստանում եք ձեր ներսից, չեք կարողանա գտնել ոչ մի հանրագիտարանում կամ գրքում, չեք տեսնի ոչ մի հեռուստահաղորդման մեջ:

Ես ձեզ խրատ կտամ, որը ձեզ կօգնի ունկնդրել ձեր ներքին ձայնին: Այն առնչվում է ձեր կենսակերպը փոխելու հետ: Դուք նախ պետք է մեկուսանաք, որպեսզի լսեք ձեր Բարձրագույն Ես-ին: Նա ձեզ չի մերձենա, եթե չափից դուրս շատ եք անհանգստացած այն ամենով, ինչը ձեզ շրջապատում է ֆիզիկական աշխարհում: Պատկերացրեք հենց նոր ծնված երեխայի. ձեր աշխարհի ամեն ինչն այդ նորածնի մոտ ցնցում է առաջացնում. այն ամենը, ինչ ձեզ համար սովորական է, նրա համար սարսափելի է ու արտառոց: Մեքենաների աղմուկը, կոպիտ երաժշտությունը, ձեր աշխարհի բոլոր ձայները ձեր աշխարհի մուտք գործած հոգու համար անսովոր են և հարմարվելու համար որոշակի ժամանակ են պահանջում:

Ձեր Բարձրագույն Ես-ը նման է երեխայի, որը ձեր միջոցով մուտք է գործում ձեր աշխարհ: Իսկ այն իրադրությունը, որում դուք գտնվում եք, երբեմն այնքան ահավոր է լինում, որ ձեր Բարձրագույն Ես-ն անմիջապես հեռու է փախչում ձեր աշխարհից, որպեսզի երկար տասնամյակներով սպասի ավելի բարենպաստ հնարավորության և նորից փորձի գալ ձեր ներքին տարածքը ձեզ հետ գրուցելու համար:

Ուստի միայն ձեզնից է կախված, թե կկարողանա՞ք արդյոք ձեր Բարձրագույն Ես-ի համար ապահովել գրույցի բարենպաստ պայմաններ: Ձեր ֆիզիկական աշխարհն այնքան է տարբերվում Աստծո Աշխարհից, որ ոչ միայն ձեր Բարձրագույն Ես-ի, այլ նաև ավելի նուրբ ոլորտներում գտնվող Համբարձյալ Վեհապետների համար դժվար է ներկա գտնվել այդտեղ, երբեմն էլ պարզապես անհնար է: Ուստի նախապես դուք պետք է ձեր աշխարհում պայմաններ ստեղծեք, որպեսզի մենք և ձեր Բարձրագույն Ես-ը կարողանանք հյուր գալ և գրուցել ձեզ հետ:

Լիովին հասկանալի է, որ դուք չեք կարող ակնթարթորեն փոխել ձեր կյանքի պայմանները, վերաբնակվել խաղաղ, մեկուսի վայրում, թողնել ձեր սովորական աշխատանքն ու ընտանիքը: Ո՛չ, այդ ամենը ձեզնից չի պահանջվում, բայց դուք պետք է մղվեք դեպի ճիշտ վարվելակերպերը, դեպի մեղմ ու հմայիչ երաժշտությունը, խոտերի սոսափյունը, թռչունների ծվլոցն ու ջրի մեղմ խոխոջումը: Երբ ձեր գիտակցությունն ու ձեր շրջակա միջավայրը կլցվեն երաժշտության,

Ֆիլմերի, նկարների և, ընդհանրապես, ձեռք չըջապատող ամեն ինչի ավելի ճիշտ նմուշներով, դուք աստիճանաբար կկարողանաք հաղթահարել ձեր աշխարհի բացասական ազդեցությունը և անցում կատարել դեպի մի այլ, ավելի նուրբ աշխարհ: Դեպի նուրբ աշխարհ ձեր անցումը կկայանա միայն այն դեպքում, եթե կարողանաք ապահովել նուրբ աշխարհի առկայությունը ձեր ներքին տարածքում և ձեր շրջակա տարածքում: Այնժամ ձեզ կկարողանան հյուր գալ հրեշտակներն ու տարրոգիները, իսկ դուք ունակ կլինեք նրանց տեսնել ձեր սովորական մարդկային աչքերով: Ամեն ինչ ձեր իշխանության սահմաններում է, և ամեն ինչ հասանելի է ձեր գիտակցության փոփոխության պարագայում: Աստիճանաբար, քայլ առ քայլ: Բայց ձեր բոլոր քայլերը պետք է ճիշտ ողովաժողովուն ունենան: Ահա հենց դա է դժվարությունը: Քանզի ձեզնից շատերը հենց հաջորդ օրը մոռանում են իրենց բոլոր այն բարի մտադրություններն ու պլանները, որոնք իրենց գլխում կառուցած են լինում Վեհապետների թելադրությունները կարդալիս:

Արդ, ձեր ներսում առաջին հերթին պետք է մշակվի ձեր մղումների կայունության հատկանիշը: Ձեր մարմնական խելքին թույլ մի՛ տվեք, որ շեղի ձեզ և համոզի, որ առջևում դեռ շատ ժամանակ կա, և կարող եք ձեզ թույլ տալ այն մանր-մունր անմեղ թուլությունները, որոնց այդքան սովոր եք:

Չգացե՛ք նուրբ աշխարհի եզրագիծը և ձեր գիտակցությունից հեռացրեք այն ամենը, ինչը խանգարում է, որ հատեք այդ եզրագիծը: Հեռացրե՛ք ձեր գիտակցությունից բոլոր սխալական կերպերն ու դրսևորումները՝ այն ամենը, ինչը ստիպում է ձեզ խորասուզվել նյութականության մեջ ու կապվել դրա հետ:

Անհրաժեշտ է ունենալ ճիշտ տրամադրվածություն: Ձեր փոխարեն ոչ ոք չի կարող հաղթահարել ձեր թերություններն ու կապվածությունները: Երկնքի օգնությունը չի հապաղի, սակայն ինքներդ պետք է գիտակցեք ձեր թերությունները և ուզենաք դրանցից ձերբազատվել: Երբեմն անգամ շատ փոքր կապվածությունն ամենօրյա շատ ջանքեր է պահանջում, որպեսզի դրանից հնարավոր լինի ազատվել: Միևնույն ժամանակ, եթե ձեր մղումը հաստատուն է, ապա ձեր ամեն մի հաջորդ կապվածությունն ավելի ու ավելի քիչ ժամանակ ու ջանքեր կպահանջի, որպեսզի ձերբազատվեք դրանից:

Ձեր գիտակցության մեջ պահպանեք ճիշտ կողմնորոշիչներ: Եվ այն դեպքում, երբ կյանքը ձեզ հանում է հանգստի ու հավասարակշռության վիճակից, դրան հակադրեք անցյալի ձեր նվաճումների վկայությունները՝ լուսանկարներ, ֆիլմեր, օրագրային գրառումներ, որոնցում պահպանել եք ձեր գիտակցության բարձրաթիվ վիճակները: Դա կարող է լինել նաև ձեր սրտին մոտ Վեհապետի լուսանկարը կամ սրբապատկերը: Ոչ մի բան աչքաթող մի՛ արեք, որով հնարավոր է նորից վեր հանել ձեր թրթիռներն ու վերադառնալ ներդաշնակության և նուրբ աշխարհի հետ միասնության վիճակին:

Որքան ավելի բարձր են ձեր մարմինների թրթիռները, այնքան նուրբ աշխարհի ավելի բարձր շերտերն են հասանելի դառնում ձեր գիտակցությանը: Դուք նուրբ աշխարհ անցում եք կատարում ձեր գիտակցության ներսում՝ ինքներդ փոխելով ձեր մարմնի թրթիռները: Ձեր խնդիրն է պատկերացում ունենալ թրթիռների տարբերության մասին և մղվել դեպի ավելի բարձր թրթիռները՝ կիրառելով այն ամենը, ինչ հնարավորություն է տալիս ավելի երկար մնալ բարձր թրթիռների վիճակում: Ումանց համար դա կարող է երաժշտությունը լինել, որոշների համար՝ նկարները, որոշների համար՝ աղոթքները, մյուսների համար՝ ներխոսկումները: Օգտագործեք ձեզ համար մատչելի միջոցների ամբողջ զինանոցը, որպեսզի մշտապես լինեք ձեր գիտակցության բարձրաթիվ վիճակում՝ հեռու մնալով մութ մտքերից ու զգացմունքներից: Եվ այնժամ կտեսնեք, որ ձեր կյանքում ամեն ինչ փոխվում է: Կփոխվի ձեր շրջապատը, աշխատանքը: Հարկ է, որ վարժվեք այն բանին, որ ձեր թրթիռների փոխվելուն զուգընթաց ձեր շուրջն ամեն ինչ փոխվում է: Ձեր շրջապատն ու այն ամենը, ինչը չի համընկնի ձեր թրթռանքի հետ, դուրս կմղվի ձեր կյանքից, կամ էլ ինքներդ կհեռանաք այն ամենից, ինչը խանգարում է ձեր հոգևոր աճին: Հարկ է, որ ձեր էգոյի բոլոր քմայքները կարողանաք ստույգաբար զանազանել կանխավ ձեր ներսում առկա՝ դեպի նուրբ ու վսեմ աշխարհն ունեցած ձեր մղումից: Նրբորեն պետք է կարողանաք զանազանել բոլոր այն կարմայական պահերը, որոնք ձեր կողմից դեռևս հաղթահարված չեն և հարկադրում ու ստիպում են ձեզ, որ հայտնվեք ձեզ համար ոչ հարմարավետ պայմաններում: Ի՛նչ արած, մեր ստեղծածը մենք ինքներս էլ պետք է հաղթահարենք, որքան էլ դա մեզ համար ծանր ու տհաճ լինի:

Այնուհանդերձ զանազանման բոլոր նրբություններին լիովին տեղյակ է ձեր Բարձրագույն Ես-ը, այնպես որ միշտ կարող եք հենց ձեր Բարձրագույն Ես-ից ստանալ ձեզ անհրաժեշտ բոլոր խորհուրդները:

Ես այսօր ձեզ շատ բաներ ասացի: Եվ այդ ամենը ձեզ անհրաժեշտ է: Քանզի որքան ավելի առաջ է գնում մարդկության զարգացումը, այնքան պատրանքի ավելի ու ավելի նուրբ եզրաշերտեր են ի հայտ գալիս ձեր առջև. իսկ դուք պատրաստ պետք է լինեք կատարելու ձեր ընտրությունը՝ անկախ բոլոր ներքին ու արտաքին հանգամանքներից:

Վեհապետ Լանտո
17 հուլիսի, 2006 թ.

Ես ձեզ մաղթում եմ, որ ձեր կյանքերում դրսևորեք միայն դրական հատկանիշներ և մշտապես մղվեք դեպի Աստծո Աշխարհի լեռնագագաթները...

ԵՄ ԵՄ Լանտոն՝ ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկողը, որպեսզի, ինչպես միշտ, ձեզ ուղերձ տամ եթերային օկտավաների մեր մակարդակից: Հատկապես այդ մակարդակից են ակնհայտ դառնում Երկրում հաստատված իրադրությունը և այն խնդիրները, որոնց բախվում է մարդկությունը՝ դրանք չգիտակցելով, քանի որ գտնվում է խնդրահարույց իրավիճակների հենց ներսում: Փաստորեն, պաշտելիներս, մեր ուղերձները ձեզ համար տեղեկատվության այն աղբյուրն են, որը ձեզ թույլ է տալիս կողմնորոշվել ձեր աշխարհում: Ուստի մենք անխոնջ կերպով գալիս ենք, որպեսզի տանք մեր ուղերձները: Եվ դրա համար օգտվում ենք Երկնքի ընձեռած հնարավորությունից՝ մարմնավորման մեջ գտնվող դեսպանորդի միջոցով հաղորդակցության մեջ մտնելու Երկրի մարդկության հետ:

Դեսպանորդության ինստիտուտը միշտ է գործել: Միշտ էլ Երկրի վրա մարմնավորվել են մարդիկ, ովքեր ունեցել են աշխարհների միջև կապ ստեղծելու առաքելություն և, որպես հաղորդիչ հանդես գալով, ի կատար են ածել Աստծո էներգիայի ու գիտելիքների փոխանցումը ֆիզիկական ոլորտին: Առանց այդ հնարավորության Երկրի մարդկությունը չէր կարող զարգանալ, որովհետև մշտապես խնամքի ու հոգածության կարիք ունի, ինչը նրան կարող են տալ միայն ավելի բարձր զարգացած էակները, որոնք բնակվում են ավելի նուրբ ոլորտներում, եթերային և հրեղեն ոլորտներում: Ուստի մենք մեզ համար առաքելություն ենք ընտրել, որ ծառայենք Երկրի մարդկությանը և նրան վեր հանենք մինչև մեր զարգացման մակարդակը: Ձեզ թվում է, թե ասածներս անմիջականորեն ձեզ չեն վերաբերում, սակայն թույլ տվեք ձեզ համար մի ոչ մեծ գաղտնիք բացել: Ես այժմ հնարավորություն եմ ստացել խոսելու այն մարդկանց հետ, որոնց հետ արդեն զրույց եմ ունեցել նախքան Երկրի վրա իրենց մարմնավորվելը: Ձեզ հիմա պատահական բան է թվում, որ գտել եք այս թելադրություններն ու կարդում եք այս ուղերձները, սակայն նախքան մարմնավորվելն արդեն գիտեիք, որ գտնելու եք այս Ուսմունքը. քանզի այն անկասելիորեն ձգում է ձեզ իր թրթռանքով, և դուք զգում եք նաև այն, ինչ տեքստի հետևում է՝ գրված է տողատակերին: Դա հատուկ զգացողություն, ներըմբռնում ու ծրագիր է, որը ձեր մեջ ներառել եք նախքան Երկրի վրա մարմնավորվելը:

Դուք չէիք կարող զարգանալ, եթե քնի մեջ ամենօրյա ցուցումներ չստանայիք՝ հաճախելով մեր սուրբ մենաստանները, և չէիք կարող զարգանալ, եթե ձեր հոգիները երկրային ձեր մարմնավորումների միջակայքում անհրաժեշտ խրատներ չստանային: Յավով, ձեր թանձր աշխարհի թրթռումները ձեզ գրկում են այն հնարավորությունից, որ հիշեք այն ամենը, ինչ նուրբ ոլորտում ստանում եք որպես ձեր գործունեության ուղեցույց: Այնուամենայնիվ, դուք ձեր կյանքերում մշտապես իրականացնում եք ձեզ վրա վերցրած պլանները: Պարզապես դուք համարում եք, որ գործում եք ըստ ներշնչանքի ու ու ձեր ներըմբռնման թելադրանքով: Ծատերը համարում են, որ դիպվածն է իրենց բերում այս կամ այն մարդկանց մոտ, և որ իրավիճակները կազմավորվում են ինքնրստինքյան: Դե ինչ, դուք կարող եք համարել այս կամ այն կերպ, սակայն էվոյուցիոն գործընթացը տեղի է ունենում նախօրոք գծված պլանով: Անհնար է կանխատեսել բոլոր նրբություններն ու մանր-մունր պահերը, սակայն Երկիր մոլորակի էվոյուցիայի ընդհանուր գործընթացը մանրագնին կերպով վերահսկվում է, և նուրբ ոլորտում գտնվող միլիոնավոր էակներ ապահովում են ձեր զարգացումը: Դրանց թվում են և՛ հրեշտակները, և՛ տարրոգիները, և՛ Համբարձյալ Դասերը, և՛ տիեզերական տարբեր հիերարխիաների ու կառույցների բազմաթիվ ներկայացուցիչներ: Հարկ չկա, որ դուք չափազանց շատ խորանաք տիեզերական հիերարխիայի կառուցվածքի մեջ: Կգա ժամանակը, և դուք կստանաք անհրաժեշտ գիտելիքներն ու պատկերացումները: Ձեզ համար ամենագլխավորն այժմ ձեր գիտակցության բարձրացումն է այնպիսի մակարդակի վրա, որ դուք գիտակցորեն կկարողանաք ընկալել նուրբ աշխարհն ու դրա խնդիրները: Այդ դեպքում դուք կկարողանաք շփվել ձեր Բարձրագույն մասի հետ, իսկ նրա միջոցով, մեզ՝ Համբարձյալ Դասերիս հետ: Այն դեպքում, երբ մարդկության գիտակցության մակարդակը թույլ կտա, այդպիսի հաղորդակցությունը կհեշտանա և բնորոշ կդառնա Երկրի բնակչության մեծամասնության համար ճիշտ այնպես, ինչպես հիմա համացանցն է լայն

տարածում ստացել: Հաղորդակցության այդ նոր ցանցը մարդկությանը կհանի հաղորդակցության նոր մակարդակի վրա, որի դեպքում նրան մատչելի կդառնա տիեզերական տվյալների բանկը ճիշտ այնպես, ինչպես ձեզ հիմա մատչելի է դառնում համացանցում առկա տվյալների բազան:

Ուստի մենք գալիս ենք նորից ու նորից, որպեսզի արթնացնենք ձեր գիտակցությունը երկարատև քնից և ցույց տանք ձեզ այն հնարավորություններն ու հեռանկարները, որոնք կբացվեն ձեր առաջ, երբ կամավոր կերպով կհրաժարվեք ֆիզիկական ոլորտի հետ ունեցած ձեր կապվածություններից: Հապա հիշեք, թե ինչպիսի դժվարությամբ եք առաջին անգամ միացել համացանցին և բավարար պատկերացում ստացել դրա աշխատանքի վերաբերյալ: Իսկ հիմա արդեն գտնվում եք նոր հնարավորության շեմին, երբ կկարողանաք միանալ Տիեզերական Համացանցին: Եվ ճիշտ նույն կերպ կլինեն մարդիկ, ովքեր առաջինը կստանան այդ հնարավորությունը, բայց կլինեն նաև այնպիսիներն, ովքեր բազմաթիվ մարմնավորումների ընթացքում անտեղյակ կմնան այդ մասին: Ոչ այն պատճառով, որ իրենց համար այդ հնարավորությունը գոյություն չի ունենա, այլ որովհետև հենց ինքը՝ մարդը, ծուլանում է օգտվել Աստծո կողմից իրեն ընձեռված հնարավորությունից: Արդ, մի կողմ դրեք ձեր ծուլությունը, ֆիզիկական աշխարհի ու ձեր մարդկային սովորությունների հետ ունեցած ձեր կապվածությունները և վերջապես ձեր հայացքն ուղղեք Երկնքին: Ընդլայնե՛ք իրականության ընկալման ձեր տիրույթը: Մղվե՛ք դեպի բարձրագույն աշխարհներ, և դուք կստանաք այն, ինչին ձգտում եք:

Հնարավոր չէ հասնել ինչ-որ բանի, եթե պատկերացում չունեք, թե ինչ է ձեզ պետք և ինչին պետք է ձգտեք: Այդ պատճառով մենք գալիս ենք և ձեզ պատկերացում ենք տալիս այն մասին, թե ինչին պետք է ձգտեք, նաև տալիս ենք այն գործիքներն ու մոտեցումները, որոնց դուք պետք է տիրապետեք:

Ամբողջ աստվածային կատարելությունը ձեր ներսում է: Եվ դուք պարզապես պետք է սովորեք մոտենալ այդ կատարելությանը: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ձեր մարմինները մաքրեք այն ամբողջ աղբից, որը Երկրի վրա ունեցած ձեր հազարավոր մարմնավորումների ընթացքում կուտակել եք ձեզ վրա: Դուք պետք է սովորեք հրաժեշտ տալ այն ամենին, ինչը ձեզ պետք չի գա ձեր նոր կյանքում:

Մի՛ վախեցեք փոփոխություններից, մի՛ վախեցեք ձեր հին սովորություններին ու կապվածություններին հրաժեշտ տալուց: Այդ ամենը խոչընդոտում է ձեր առաջխաղացումը, խանգարում ձեզ, որ բարձրանաք գիտակցության նոր մակարդակի վրա և ձեռք բերեք հիրավի տիեզերական հնարավորություններ:

Ձեր աշխարհին կապված մնալը խանգարում է ձեզ: Իմացեք, որ վերջին հաշվով ամեն ինչ որոշվում է ձեր գիտակցության մակարդակով, իսկ վերջինս էլ որոշվում է ձեր այն ձգտմամբ ու կարողությամբ, որ հրաժեշտ տաք այն ամենին, ինչը խանգարում է էվոյուցիոն ուղով ձեր առաջընթացին: Չարժե, որ ինքներդ ձեզ նեղը լծեք ձեր բացասական մտքերով, ձեր բացասական աշխարհընկալմամբ և ձեզ շրջապատող ամեն ինչը քննադատելով ու դատափետելով: Կարողացեք ներքին բերկրանք ապրել անգամ այն դեպքերում, երբ ձեր կյանքի արտաքին հանգամանքները ձեր կարծիքով դասավորվում են վատից էլ վատ: Քանզի վատ օրվան անպայման լավ օր է հաջորդում, և մութ գիշերվան հաջորդում է նոր օրվա լուսաբացը: Եվ այդպես էլ կշարունակվի, քանի դեռ գոյություն ունի այս մատերիական տիեզերքը: Շուտով ձեր բերկրանքի զգացումը ձեր էության այնքան բնական դրսևորումը կդառնա, որ դուք այլևս չեք ապրի ոչ մի բացասական զգացմունք ու վիատություն:

Մաղթում եմ, որ ձեր կյանքերում դրսևորեք միայն դրական հատկանիշներ և մշտապես մղվեք դեպի Աստծո Աշխարհի լեռնագագաթները...

ԵՄ ԵՄ Լանտոն, մաղթում եմ ձեզ երջանիկ ուղի

Սանատ Կումարա
18 հուլիսի, 2006 թ.

**Մենք ձեզ տալիս ենք Կենդանի Խոսք և Կենդանի Ուսմունք
և ակնկալում ենք, որ ֆիզիկական ոլորտի ձեր կոնկրետ գործերով
կյանքում կներդնեք մեր Խոսքն ու մեր Ուսմունքը**

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ այս օրով կրկին ձեզ այցի եկածը: ԵՄ ԵՄ եկել՝ Աստծո Ճշմարտությունը ձեզ հասցնելու նպատակով: Դուք երազում էիք որ ձեր սրտերին մատչելի դառնա Աստծո ողջ Ճշմարտությունը: Եվ ահա գալիս է ժամանակը, երբ ձեզ համար պետք է հնչի Աստծո

Խոսքը: Այն մինչև հիմա ձեզ համար անհասկանալի էր այն պատճառով, որ ձեր սրտերը փակ էին Աստծո ճշմարտության առջև:

Դուք ձեր սրտերում կարող եք լսել միայն այն, ինչին պատրաստ եք և ինչին սպասում եք: Մենք էլ մեր հերթին միշտ պատրաստ ենք ձեզ տալու այն, ինչին ձգտում եք: Դա շատ նման է երեխաների դաստիարակությանը: Երբ նրանք հասակ են առնում, նախկին խաղալիքներն անհետաքրքիր են դառնում, և նրանք իրենց հայացքն ուղղում են այն նոր խաղալիքներին, որոնց հասու է դարձել իրենց գիտակցությունը: Հետո երեխաներն ավելի են հասունանում և մտնում հասուն կյանքի մեջ՝ շարունակելով հասուն կյանքում խաղալ այն խաղերը, որոնց պատրաստ է իրենց գիտակցությունը: Եվ ահա վերջապես գալիս է մի պահ, երբ ֆիզիկական աշխարհի ոչ մի խաղ այլևս ի գործու չի լինում բավարարելու մարդու գիտակցությանը, իսկ դա նշանակում է, որ մարդը պատրաստ է անցում կատարելու դեպի գիտակցության նոր մակարդակ՝ նոր աշխարհ:

Սկզբում նոր աշխարհ անցնելը լինում է աննկատելի ու հազիվ նշմարելի: Այդ աշխարհը բացվում է ձեր ներսում: Նախ՝ մի փոքր, իսկ հետո ավելի ու ավելի ուժեղ եք դուք զգում այդ աշխարհը, որը տարբերվում է ձեր ֆիզիկական աշխարհից: Այդ աշխարհի հետ դուք շփվում եք ձեր քնի մեջ, ինչպես նաև՝ ձեր սրտի անդորրության մեջ ունեցած պայծառացման պահերին: Եվ այդ աշխարհը ձեր սրտերի միջից աստիճանաբար սկսում է տարածվել ձեր ֆիզիկական աշխարհում: Այնուհետև ձեր ֆիզիկական աշխարհն սկսում է փոխվել, նրբանալ ու ձեռք բերել նուրբ աշխարհի ուրվագծեր: Աշխարհների այդ փոխներթափանցումը սկիզբ է առնում ձեր ներսում, և դուք դառնում եք այն առաջապահ կամավորականների ջոկատը, ովքեր իրենց գիտակցությամբ ընձյուղներ են տալիս Նոր Աշխարհում՝ մոտեցնելով այդ Աշխարհի գալուստը ողջ մոլորակի համար:

Այդ գործընթացն այժմ ընթանում է: Այն վաղուց է սկսվել: Բայց վերջին ժամանակներում այդ գործընթացն անընդհատ արագանում է: Եվ անցումը Նոր Աշխարհին՝ զարգացման նոր մակարդակին, կարող է ի կատար ածվել անհամեմատ ավելի արագ, քան պլանավորված էր, եթե ձեր գիտակցության աճի տեմպը նույնպես սրընթացորեն արագանա:

Հավատացե՛ք ինձ, որ ձեր գիտակցությունն ամենամեծ արգելակող գործոնն է, որը խանգարում է ձեր մոլորակի էվոլյուցիայի ընթացքին: Մինչ այժմ դուք հիշեցնում էիք երկտարեցիների, ովքեր ունակություն չունեն յուրացնելու տրվող դասերը: Եվ մենք ստիպված էինք լինում շատ արհեստական հնարքների դիմել, որպեսզի ձեր զարգացումը շարժենք այն մեղայ կետից, որի վրա այն լռել-մնացել էր: Եվ հիմա գալիս է ձեր գիտակցության մեայլ միջնադարի վերջը: Գալիս են արթնացումն ու նոր օրվա լուսաբացը: Ես երջանիկ եմ արձանագրելու ձեր գիտակցության նոր մակարդակի վրա անցնելը:

Ինչպե՛ս են ցնծում Երկնային ուժերը, որ այդքան մեծ թվով անհատներ հասել են իրենց գիտակցության արթնացումին...

Մի՛ թուլացեք, քանի որ ֆիզիկական աշխարհի ճահճատիղմը կարող է նորից իր մեջ ներքաշել ձեր գիտակցությունը և այն իջեցնել ավելի ցածր մակարդակի վրա, որը բնորոշ է մարդկենդանուն: Հիշե՛ք և միշտ իմացե՛ք՝ դուք Աստվածներ եք, և ձեր էվոլյուցիայի հաջորդ փուլն այն կլինի, որ վերջապես վերածվեք բանական մարդու և Աստվածամարդու:

Դուք մեզանից տարբերվում եք միայն ձեր գիտակցության մակարդակով, և Համբարձյալ Վեհապետներից շատերը պատրաստ են զոհաբերելու իրենց կառույց մարմնի մի մասը, որպեսզի ձեզ համար գիտակցության աճ ապահովեն: Եվ իրոք, Համբարձյալ Վեհապետներից շատերը շատ բան են զոհաբերում՝ մասնակիորեն մարմնավորվելով այն անհատների ներսում, ովքեր նուրբ ոլորտում տվել են իրենց համաձայնությունը նման բնակեցման առնչությամբ: Դա ձեզ համար գիտակցության զարգացման մակարդակի թռիչքային հնարավորություն է ստեղծում: Եվ, ստանալով նման արագացում, դուք կարող եք ազդեցություն գործել նրանց վրա, ովքեր գտնվում են ձեր կողքին՝ հարազատների, ծանոթների, գործընկերների: Ձեր գիտակցության նմանատիպ թռիչքը չի կարող աննկատ մնալ այն մարդկանց համար, ովքեր ձեզ վաղուց գիտեն: Նրանք ո՛չ կարող են բացատրել այն, թե ինչ է ձեզ հետ տեղի ունեցել, ո՛չ էլ այն, թե ինչու են ձեր նկատմամբ կորցրել հետաքրքրությունն ու այլևս չեն ուզում շփվել ձեզ հետ: Սակայն ուրիշ մարդիկ, զգալով ձեր մեջ այն թրթիռները, որոնց իրենք վաղուց էին ձգտում հասնել, ձեզ հետ շփման ընդհանուր կետեր կգտնեն: Եվ դուք ունակ կդառնաք միավորվելու գիտակցության նոր մակարդակի վրա և կառուցելու նոր ապագա՝ գտնվելով այդ նոր մակարդակի վրա: Դուք կկարողանաք ազդեցություն գործել այն ամենի վրա, ինչը ձեզ շրջապատում է: Միավորվել կարողանալն ու համատեղ գործերի կատարումն այն բանի անառարկելի վկայությունն են, որ դուք բարձրացել եք ձեր գիտակցության նոր մակարդակի վրա: Դուք, ինչքան ասեք, կարող եք ուրիշ մարդկանց պատմել ձեր վաստակի ու նվաճումների մասին, բայց եթե ձեր ներքին նվաճումները ֆիզիկական աշխարհում չեն արտահայտվում կոնկրետ գործերի, պտուղների տեսքով, ապա ձեր այդ նվաճումները գրոշի

արժեք չունեն։ Եվ, ամենայն հավանականությամբ, աստեղային ոլորտի կատակարարները պարզապես ձեզ հետ կատակ են արել՝ ձեզ վերագրելով այնպիսի մեծություն, որին դուք դեռևս չեք հասել, քանի որ ձեր գիտակցության մակարդակը թույլ չի տալիս, որ աստեղային ոլորտից ավելի վեր բարձրանաք։

Ձեր բոլոր նվաճումները պետք է իրենց դրսևորումը գտնեն ֆիզիկական ոլորտում։ Եվ ձեր հիմնական նվաճումն այն կլինի, որ կարողանաք կոնկրետ գործեր անել ֆիզիկական ոլորտում։ Ոչ թե առասպելական պլաններ հյուսեք նույր աշխարհում, այլ թևներդ քշտեք ու կառուցեք ծերանոց, երեխաների համար մանկապարտեզ, այգի հիմներ, օգնեք ձեր մերձավորին։ Ձեր աշխարհում շատ գործեր կան, և այդ գործերն արվում են նրանց կողմից, ովքեր իրապես հասել են որոշակի հոգևոր նվաճումների, այլ ոչ թե սոսկ մտածում են, թե հասել են ինչ-որ բանի։

Այդպես մենք կարող ենք փոխել աշխարհը՝ գործելով նրանց միջոցով, ովքեր նախապատրաստել են իրենց տանարները մեր գալստյան համար և հայտնել սպասավորության պատրաստակամություն։

Ժամանակը ներկայումս փոխվել է։ Եվ եթե նախկինում կարմայի բեռնաթափման համար անհրաժեշտ էր լինում պատգամներ ու աղոթքներ կարդալ, ապա այժմ եկել է ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործեր անելու ժամանակը։ Եվ երբ դուք սկսում եք իրար հետ փոխհամագործակցել Վեհապետներիցի պլանները ֆիզիկական ոլորտում կենսագործելու ասպարեզում, ապա ձեր կարման բեռնաթափվում է կայծակնային արագությամբ։ Սա նոր թողության շնորհ է ձեր ժամանակի համար։ Կարմայի բեռնաթափումը կարագացվի նրանց համար, ովքեր կոնկրետ գործեր են ձեռնարկում ֆիզիկական ոլորտում՝ ուղղված Եղբայրության պլանների կենսագործմանը։

Մեր պլաններն անփոփոխ են մնացել միլիոնավոր տարիների ընթացքում։ Մեր պլաններն իրենց մեջ ներառում են Ուսմունք տալն ու Ուսմունքին հետևելը։ Եվ հատկապես լավ կլինի, եթե դուք ջանքեր գործադրեք երեխաների ու երիտասարդության դաստիարակության բնագավառում։ Քանզի ընդամենը տասը-քսան տարի հետո ձեր ջանքերն իրական պտուղներ կտան, երբ նոր սերունդը կմտնի հասուն կյանք և կկառուցի այդ կյանքը՝ հիմնվելով աստվածային սկզբունքների վրա։

Ես կամեցա այսօր մեկ անգամ ևս ձեր ուշադրությունը հրավիրել ձեր գիտակցության վրա աշխատելու անհրաժեշտության վրա և ֆիզիկական ոլորտում կոնկրետ ու համատեղ աշխատանքը սկսելու վրա։ Այլևս ժամանակ չկա սպասելու, որ դուք լիովին կատարյալ դառնաք։ Ձեր մղումները պտուղներ կտան շատ ավելի շուտ, եթե ձեր ստացած գիտելիքները առօրյա կյանքում կիրառեք հենց ստանալուն պես։ Այն, ինչը չի ամրապնդվում գործնական կյանքում, վերածվում է անօգուտ, մեռյալ գիտելիքի։

Մենք ձեզ տալիս ենք Կենդանի Խոսք և Կենդանի Ուսմունք և ակնկալում ենք, որ ֆիզիկական ոլորտի ձեր կոնկրետ գործերով կյանքում կներդնեք մեր Խոսքն ու մեր Ուսմունքը։

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ ձեր նկատմամբ Հույսով ու Հավատով լի

Վեհապետ Էլ Մորիա
19 հուլիսի, 2006 թ.

Ամսի 23-ի թողության շնորհի և Երկնքից շնորհված մյուս հնարավորությունների մասին,

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը՝ ուղերձ տալու նպատակով ձեզ այցի եկածը։

Եվ այսօր ես կրկին պետք է հիշեցնեմ ամեն ամսվա 23-ի համար ձեզ հատկացված թողության շնորհի մասին։ Այդ թողության շնորհը ճիշտ տրամադրվածություն և վարվելակերպ ցուցաբերելու դեպքում ձեզ հնարավորություն է ընձեռում բեռնաթափելու հաջորդ ամսվա կարման։

Թողության շնորհի պայմանները ձեզ հայտնի են, և ես այսօր կուզենայի մեկ անգամ ևս կանգ առնել այն պահի վրա, որը վերաբերում է ձեր անձնական կարմայի բեռնաթափմանը։

Տվյալ թողության շնորհը դուք կարող եք օգտագործել, որպեսզի նպաստեք համայն մոլորակի և ձեր երկրի կարմայի բեռնաթափման գործին։ Բայց կուզենայի հիշեցնել և մեկ անգամ ևս պարզաբանել, որ այդ հնարավորությունը կարող եք նաև օգտագործել, որպեսզի բեռնաթափեք ինչպես ձեր անձնական, այնպես էլ կարմայական կապերով ձեզ հետ կապված ձեր

ամենամերձավոր հարազատների կարման: Եվ եթե ամսի 23-ին ընդամենը մեկ ժամ հատկացնեք աղոթքային գործառնությանն ու համապատասխան կոչ հղեք, ապա ամբողջ էներգիան կբազմապատկվի այդ թողության շնորհի օրը մասնակցություն ունեցած մասնակիցների թվով: Այդ էներգիան առաջին հերթին կհատկացվի այն կարմայի փոխակերպության գործին, որը խանգարում է Երկիր մոլորակի կայուն էվոլյուցիոն զարգացմանը: Մնացած էներգիան կտրամադրվի ձեր այն անձնական կարմայական խնդիրների լուծմանը, որոնց համար հատուկ խնդրած կլինեք:

Դա ձեզ համար մի հնարավորություն է, որ թեթևացնեք ձեր կարմայական բեռը: Ուստի օգտվե՛ք դրանից, խնդրեք, և ձեզ օգնություն կհասնի այնքանով, որքանով դուք ջանքեր գործադրած կլինեք ոչ միայն աղոթքներով, այլ նաև այդ օրն արած ձեր մյուս գործերով. չե՞ որ այդ օրվա ձեր յուրաքանչյուր գործողությունը կարող եք ծառայեցնել հաջորդ ամսվա կարմայի բեռնաթափմանը:

Անցկացրե՛ք ձեր միջով Աստծո էներգիան և այն ուղղեք ձեր կարմայական այն խնդիրների հանգուցալուծմանը, որոնցով կապված եք ձեր կողակցի, երեխաների, ծնողների կամ աշխատանքային ընկերների հետ:

Սա շատ կարևոր թողության շնորհ է, որն այժմ իրապես գործում և օգնում է ձեզ, որ հաղթահարեք ձեր կարմայական խնդիրները: Երկնքից շնորհ ստացած ամեն մի այդպիսի «մեխանիզմից» պետք է կարողանաք օգտվել դրա ողջ հզորությամբ:

Այս ամենը ձեզ հիշեցնելուց հետո թույլ տվեք անցնել իմ գալու գլխավոր նպատակին: Եկել եմ, որ ձեզ որոշակի պատկերացում տամ ձեր իրավիճակի մասին: Ոչ թե կոնկրետ ձեզնից յուրաքանչյուրի, այլ Երկիր մոլորակի ընթացիկ իրավիճակի մասին: Մեր դեսպանորդի միջոցով այս շրջանում տրված թելադրություններից ձեզ արդեն հայտնի է դարձել, որ մոլորակի իրադրությունը լավացել է: Սակայն հարկ չկա, որ դուք թուլանաք և դադարեք ջանքեր գործադրել: Քանզի գործընթացը դեռ նոր է սկսվել, և ամեն մի թուլացում անհարկի ու վաղաժամ կլինի: Միայն այն դեպքում, երբ դուք ունակ կլինեք ամենօրյա ջանքեր գործադրելու, կհաջողվի պահպանել Երկիր մոլորակի բարեփոխությունների կայուն ընթացքը:

Այժմ ձեր ջանքերը դեռևս բավարար չեն, և էներգիայի այն պահուստը, որը մեր կողմից օգտագործվում է կայունություն պահպանելու համար, դեռևս չի համալրվում: Էներգիայի համալրումը հնարավոր կդառնա, եթե ավելի ու ավելի մեծ թվով աշխատակիցներ կարողանան նվիրաբերել իրենց սրտերի էներգիան: Մենք բարձր ենք գնահատում այն Մերը, որը դուք առաքում եք մեզ: Այն կարող է լրացնել էներգիայի պակասը:

Մենք բարձր ենք գնահատում նաև ձեր այն գործերը, որոնք անշահախնդրորեն կատարում եք հանուն Եղբայրության: Եվ այն օգնությունը, որը Երկնքից ստանում են մեր աշխատակիցներն իրենց կյանքի կրիտիկական պահերին, որոշվում է այն զոհաբերություններով, որոնք նրանք ցուցաբերել են՝ նախկինում մեզ ծառայելով:

Մենք բարձր ենք գնահատում նրանց, ովքեր իրենց գիտակցությունը կարող են վեր հանել Հիերարխիայի հետ գիտակից համագործակցության մակարդակի վրա:

Մենք ձեզ առաքում ենք մտքեր ու ցանկություններ, և դուք զգում եք այն էներգիան, որը ձեզ անհրաժեշտ է, որպեսզի ֆիզիկական ոլորտում կատարեք Եղբայրության գործերը: Եվ մարմնավորման մեջ գտնվող այդպիսի աշխատակիցների թիվն ավելի ու ավելի է մեծանում:

Ես չեմ կարող գալ և յուրաքանչյուրիդ հայտնել իմ երախտապարտությունն ու երախտագիտությունը Եղբայրության համար ձեր կատարած աշխատանքի դիմաց, բայց իմ երախտապարտությունն ու երախտագիտությունը ես կարող եմ հայտնել այս դեսպանորդի միջոցով: Ես խորը գլուխ եմ խոնարհում ձեր առջև: Ես անկեղծորեն խոնարհվում եմ ձեր մեջ եղած Աստծո Լույսի և ձեր այն աստվածային հատկանիշների առջև, որոնք ձեզ թույլ են տալիս չեղվել ճիշտ ուղուց և գործել ի շահ Եղբայրության՝ մոլորակի համար դժվարին այս ժամանակներում գտնվելով Երկրի վրա:

Զգացե՛ք ձեր պատասխանատվությունն ու պահպանե՛ք ձեր մղումը:

Իրականում մեր աշակերտներն աչքի են ընկնում մշտական լարվածության նկատմամբ սիրով և ուժերի անխոնջ գործադրումով: Ձեր շրջապատում դուք կարող եք անսխալ կերպով ճանաչել մեր աշակերտներին: Նրանք չեն տրտնջում ու չեն դժգոհում կյանքից, այլ օր օրի կատարում են իրենց այն գործը, հանուն որի մարմնավորվել են: Եվ կյանքի ոչ մի անհաջողություն ու փորձություն չեն կարող կանգնեցնել նրանց: Քանզի նրանց Հավատն ամուր է, և իրենց իսկ Բարձրագույն մասի հետ ունեցած իրենց կապը թույլ չի տալիս, որ շեղվեն Ուղուց:

Մեր աշխատակիցները դիտավորյալ իրենց վրա ուշադրություն չեն գրավում: Բոլորին չեն ասում, թե ինչ մեծ աշխատանք են կատարել ու շարունակում են կատարել: Ո՛չ, նրանք

գերադասում են իրենց գործն անել լռելայն ու անխոնջ՝ չգրավելով մեզ հակադիր ուժերի ավելորդ հետաքրքրությունը: Յուրաքանչյուրը գիտի ու անում է իր գործը:

Մեր աշխատակիցները ցրված են տարբեր երկրներում ու մայրցամաքներում: Կուզենայի նշել մեր աշխատակիցների հատուկ աշխատանքն այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Բուլղարիան, Գերմանիան, Ուկրաինան, Լիտվան, Հայաստանը:

Մենք սպասում ենք, որ Ամերիկայում ի հայտ գան նրանք, ովքեր նույնպես կարթնանան և կվերականգնեն Հիերարխիայի հետ ունեցած ու արդեն կորցրած իրենց կապը: Երկնքի ընձեռած ամեն մի նոր հնարավորություն ու թողության շնորհ նոր հեռանկարներ է բացում այն մարդկանց ու երկրների համար, որոնք օգտվում են այդ հնարավորությունից ու միանում դրան: Ուստի մի՛ ամաչեք կապ հաստատել մեր ժուռ դեսպանորդի հետ:

Մեր Ուսմունքն ազգային ու միջմայրցամաքային սահմաններ չի ճանաչում: Մենք Երկրի մարդկությանն ուսուցանել ենք դեռ այն ժամանակ, երբ ներկայումս մոլորակի վրա եղած մայրցամաքների հետքն անգամ չէր երևում: Եվ այժմ էլ մենք շարունակում ենք մարդկությանն ուսուցանելու ու լուսավորելու մեր աշխատանքը, քանի որ հավատում ենք, որ Երկրի մարդկությունը կհաղթահարի բոլոր փորձությունները և պատվով կդրսևորի իր այն աստվածային հատկանիշները, որոնք մեծամասնության մոտ դեռևս քնած վիճակում են:

Մենք համագործակցության հույս ունենք յուրաքանչյուրի հետ, և, որպեսզի համագործակցության մեջ մտնեք Հիերարխիայի հետ, դուք կարող եք օգտվել իմ կիզակետից՝ իմ պատկերից: Ձեր խնդրանքներով ու խնդիրներով, ձեր հարցերով ու ցանկություններով կարող եք ամեն օր դիմել ինձ:

Իմ գիտակցության բաժանելիությունն ու Աստծո շնորհած հնարավորությունն ինձ թույլ են տալիս ներկա գտնվել միանգամից շատ վայրերում և տալ ձեզ իմ խրատներն ու հանձնարարականները: Ես լսում եմ բոլորին, ովքեր դիմում են ինձ: Մնում է, որ դուք էլ սովորեք ինձ լսել:

Ես գալիս եմ ձեզ մոտ և խոսում ձեր սրտի անդորրության միջից: Ձանացե՛ք լսել ինձ: Հեռացե՛ք ունայնությունից, լուռ նստեք իմ պատկերի առաջ կամ պարզապես ձեր երևակայությամբ պատկերացրեք ինձ: Վստահեցնում եմ ձեզ՝ եթե ինձ լսելու ձեր ձգտումն ուժեղ է, ապա անպայման ձեր սրտի խորքում դուք կլսեք իմ ձայնը: Միայն թե դա սովորական մարդկային ձայն չի լինի: Բայց այն կպարունակի ձեր բոլոր հարցերի պատասխանները: Դուք պատասխան կստանաք, նաև կիմանաք, որ հենց ես եմ այն տվել:

Փորձեցե՛ք: Հնարավոր է՝ չլսեք ինձ հենց առաջին անգամից: Չարգացրե՛ք ձեր մեջ նուրբ աշխարհի հետ հաղորդակցվելու ունակություն:

Ես միշտ ձեզ հետ եմ ձեր սրտերի անդորրության մեջ, բայց չեմ կարող լինել ձեզ հետ, եթե դուք չնախապատրաստեք ձեր տանքներն ինձ հետ հաղորդակցվելու համար և չներբազատվեք մարդկությանը հատուկ սովորությունների մեծամասնությունից: Թվարկեմ դրանցից մի քանիսը. ալկոհոլը, ծխելը, ռոք երաժշտության ունկնդրումը, ձեր գիտակցության բացասական վիճակները՝ նեղացկոտությունը, զայրույթը, վիատությունը, խղճահարությունն ինքն իր և ուրիշների նկատմամբ: Այդ բոլորը խանգարում են ինձ, որ նուրբ ոլորտում կապ հաստատեմ ձեզ հետ, և ձեզ խանգարում են, որ լսեք ինձ:

Մի՛ վիատվեք, եթե շատ են ձեր թերությունները: Եթե ընտրել եք Ուղին և ամեն օր առանց հոգնելու ընթանում եք նրանով, ապա շատ շուտով բոլոր այն ավելորդ բաները, որոնք խանգարում են ձեզ, դուք դեն կնետեք որպես անպետքություն և ավելորդ բեռ ձեր ընթացքի համար:

Եվ կմնան միայն ձեր այն հատկանիշները, որոնք Աստծուց են ու անանց: Բառացիորեն մի քանի տարի հետո կնայեք ինքներդ ձեզ և զարմանքով կնկատեք, թե որքան եք փոխվել ձեր ներկայիս վիճակի համեմատ:

Ես լքում եմ ձեզ և անհամբերությամբ նոր հանդիպումների եմ սպասում ձեր սրտերում:

Մինչ նոր հանդիպումներ...

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ մշտապես ձեզ հետ

**Ստորև բերված է Վեհապետների կողմից նախկինում տրված այն թելադրությունների ցանկը, որոնք վերաբերում են ամսի 23-ի թողության շնորհին՝*

Առաջիկա ամառային արևադարձի օրվա և այդ օրվա հետ կապված աստվածային ողորմածությունների մասին Տեր Մայրեյա - 15 հունիսի, 2006 թ

Խրատներ այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվեք այն ամենին, ինչը ձեզ շրջապատում է թանձր և ավելի նուրբ աշխարհներում - Էլ Մորիա 20 ապրիլի, 2006 թ

Ես ձեզ երկու լուր եմ բերել: Մեկը տխուր է, իսկ մյուսն՝ ուրախ - Էլ Մորիա 7 հունվարի, 2006 թ

Աստծո նոր ողորմածության մասին - Էլ Մորիա 27 հունիսի, 2005 թ

Սպիտամա Չրադաշտ
20 հունիսի, 2006 թ.

**Ձեռքից բաց մի թողեք ձեր հնարավորությունը և ձգտեք միշտ մնալ
Էվոյուցիոն հնարավորության անցուղում**

ԵՄ ԵՄ Չրադաշտը՝ կրկին ձեզ այցի եկածը...

ԵՄ ԵՄ եկել, որպեսզի, ինչպես միշտ, օրվա պահանջին համապատասխան տամ իմ խրատները:

Գիտելիքներ ստանալու ձեր պահանջները պետք է բավարարվեն այնքանով, որքանով թույլ է տալիս Օրենքը: Ձեզ թվում է, թե դուք ամեն ինչ գիտեք, ամեն ինչ կարողանում եք և ձեր աշխարհում հասու եք դարձել ամեն ինչին: Թույլ տվեք նկատել, որ այդ դեպքում ձեր մեջ պարզապես խոսում է սովորական մարդկային գոռոզությունը: Քանզի հնարավոր չէ հասու դառնալ համայն տիեզերքի Օրենքին՝ գտնվելով մարդկային գիտակցության զարգացման ձեր մակարդակի վրա: Եվ միայն այն դեպքում, երբ կիրառարվեք ձեր գոռոզությունից, իսկական գիտելիքը կկարողանա մուտք գործել ձեր տաճարը՝ ելնելով այն հանգամանքից, որ ձեր անոթում դատարկ տեղ է առաջացել, ինչը վերջապես կարող է լցվել Գիտելիքով: Իսկ մինչ այդ դուք ձեր անոթը լցնում եք այնպիսի բաներով, որոնք ոչ միայն կիրառելի չեն, այլ նաև ծայրահեղ վնասակար են ձեզ համար: Քանզի այն ամենակուլությունը, որն այժմ գոյություն ունի մոլորակի վրա, միլիոնավոր տարիների ընթացքում երբեք այդ աստիճանի հասած չի եղել: Միշտ էլ շատ դրսևորումների նկատմամբ արգելք է դրված եղել, որը գործի է դրվել կա՛մ կրոնական, կա՛մ էլ պետական մակարդակով: Հիմա անցել են այդ ժամանակները: Եվ ձեզ համար մատչելի են դարձել շատ բաներ, որոնք բնավ ձեզ համար օգտակար չեն, բայց չեն էլ արգելվում: Եվ միայն ձեր գիտակցությունը կարող է ծառայել որպես գրաքննիչ՝ արգելելով ձեզ անել այս կամ այն բանը, կարդալ այս կամ այն բանը:

Ուստի մենք գալիս ենք, որպեսզի ձեզ հնարավորություն տանք պատկերացում կազմելու, թե ինչն է օգտակար ձեր գիտակցության համար, և ինչն է, որ անհրաժեշտ է ձեր զարգացման համար: Իսկ ընտրելը՝ ձեր ընտրությունը, ինքնեղ եք կատարում: Եվ այն ընտրությունը, որը կատարում եք տառացիորեն այս օրերի ընթացքում, որոշում է ձեր հետագան, ձեր անհատական զարգացման ընթացքը և Էվոյուցիայի այն ընթացքը, որը տեղի կունենա Երկրի վրա:

Ձեզ ոչինչ չի արգելվում, բայց ձեր ներսում առկա բարոյական օրենքն ինքը պետք է որոշի, թե ինչն է օգտակար և ինչը՝ ոչ: Իսկ զանազանման շնորհիվ, որն այժմ ելել է առաջին պլան, օդի ու սննդի պես անհրաժեշտ է ձեզ: Դուք պետք է սովորեք զանազանել: Եվ ձեր ներկա կյանքը վճռորոշ նշանակություն ունի ձեր հոգու Էվոյուցիայի համար: Քանզի ձեր ներկա կյանքում կատարած ընտրությունից է կախված ձեր հոգու Էվոյուցիայի հետագա ամբողջ ընթացքը: Կա՛մ դուք հսկայական տեմպերով առաջ կգնաք, կա՛մ էլ քարշ կգաք Էվոյուցիայի պոչից: Եվ ես չեմ զարմանա, եթե մոտակա ձեր մարմնավորումներից մեկում ձեր կյանքը նմանվի Նոր Գլինեայի պես ինչ-որ վայրում ապրող պապուասների կյանքին, քանի որ ձեր ներկա կյանքի նախապատվությունները, հեռու չեն այն մակարդակից, ինչ ունեն պապուասները: Ահա նորից շարունակում եք ձեր Էվոյուցիայի փակուղային ճյուղը՝ նստելով խարույկի մոտ ու խժռելով ձեր բաժին միսը:

Աստված այնքան ողորմած է, որ բավարարում է ձեր ոչինչ չանելու ցանկությունը՝ միայն ուտեք, քնեք ու կենակցեք: Նմանատիպ հետընթաց միշտ էլ եղել է մոլորակի վրա: Եվ այն ցեղախմբերը, որոնց դուք համարում եք թերզարգացած մարդիկ, ինչ-որ ժամանակ կատարել են իրենց վերջնական ընտրությունը, երբ դրա համապատասխան ժամանակը հասած է եղել: Արդյունքում նրանց Էվոյուցիոն ուղու հետագա ընթացքը փակվել է: Նրանք այժմ բեռնաթափում են իրենց ֆիզիկական և մյուս ստորին մարմինների կարման, բայց նրանց Էվոյուցիան հասել է իր վերջին, և տիեզերական աղբահավաքները նրանց վերացնում են Էվոյուցիոն զարգացման ուղու բեմից:

Ներկայումս, բոլոր տիեզերական ժամկետներին համապատասխան, դուք պետք է կատարեք ձեր ընտրությունը: Չափազանց շատ հոգիներ են կուտակվել Երկիր մոլորակի վրա, և հետագա Էվոյուցիայի համար նրանցից ոչ բոլորն են պիտանի: Որոշների համար ընտրության հարցն այնքան էլ սուր չի դրված, և նրանք դեռևս կարող են անվտանգ կյանք վարել ու բարձրագույն գիտակցությունը զարգացնելու փորձ անել: Մյուսների համար բոլոր ժամկետներն արդեն սպառված են, և նրանց ներկա մարմնավորումը վճռորոշ կլինի իրենց հոգու հետագա անհատական Էվոյուցիայի համար:

Ես չեմ ուզում ձեզ ահաբեկել, բայց մեզ նպատակահարմար է թվում, որ դուք ավելի գիտակից ձևով վերաբերվեք այն ընտրություններին, որոնք կանգնած են ձեր առջև, և հասկանաք, թե ինչ վտանգ է կախված ձեր գլխին, եթե ձեր ընտրությունը չտեղավորվի ընձեռված տիեզերական հնարավորության շրջանակներում:

Հենց այդ պատճառով ենք մենք այսքան բաց խոսում: Եվ ես ուրախ եմ, որ հասել է այն ժամանակը, երբ մենք կարող ենք ահա այսպես՝ անմիջականորեն, ասել ձեզ մեր հոգածության մասին: Եվ եթե դուք հարկ չեք համարում մեզ լսել, ապա դա ձեր ընտրությունն է, որը դուք անում եք գիտակցորեն՝ առաջնորդվելով ազատ կամքի այն Օրենքով, որը գործում է ձեզ համար: Մակայն այդ Օրենքն ունի իր ժամանակային շրջանակները: Եթե մյուս Օրենքները գործում են մինչև դրսևորված տիեզերքի վերջը, ապա ազատ կամքի Օրենքը դադարում է գործել այն ժամանակ, երբ ձեր զարգացումը չի տեղավորվում Օրենքով նախատեսված տիեզերական հնարավորության շրջանակներում: Ուստի մենք նախազգուշացնում ենք: Ժամանակ դեռ կա, բայց շատ քիչ է մնացել, և շատերի համար ընտրության շրջանն ավարտվում է այս մարմնավորմամբ:

Ձեռքից բաց մի՛ թողեք ձեր հնարավորությունը և ձգտեցեք միշտ մնալ Էվոյուցիոն հնարավորության միջանցքում:

Համաձայնեք, որ եթե մարդը չի ուզում սովորել դպրոցում կամ ինստիտուտում, ապա ծնողները որոշ ժամանակ անց դադարեցնում են ստիպելու իրենց փորձերը և իրենց զավակին թողնում են իր կամքին: Նմանապես և մենք, ուղղորդելով ձեզ դեպի զարգացում և Օրենքին հետևում, որոշ ժամանակ անց դադարեցնում ենք մեր փորձերը և թողնում, որ դուք վայելեք ձեր կատարած ընտրության պտուղները որևէ պապուսասական ցեղախմբի կազմում:

Գիտակից ձևով վերաբերվեք այն ընտրություններին, որոնք դուք կատարում եք օր օրի: Ձեր առաջընթացին զուգընթաց ձեր ընտրությունները դառնում են ավելի ու ավելի քիչ միանշանակ ու ակնհայտ, պատրանքը նվազում է ձեր շուրջը, և ձեզնից պահանջվում է, որ ձեր մեջ զարգացնեք նուրբ աշխարհը տեսնելու աստվածային որակներ և ունակություններ, որպեսզի չմոլորվեք, լքեք պատրանքային աշխարհի սահմանները և բարձրանաք ձեր գիտակցության Էվոյուցիոն զարգացման նոր գալարի վրա: Եվ մենք ձեզ կանչում ու անխոնջ կերպով գալիս ենք, որպեսզի կրկին ու կրկին փորձենք ձեզ բացատրել համայն տիեզերքի Օրենքներին վերաբերող գիտելիքների հիմնադրույթները: Իսկ շատերը ձեռք են թափ տալիս մեր կողմը և շարունակում հափշտակված կարդալ ու վերընթերցել այն գրականությունը, որը քնեցնում է իրենց աստվածային հնարավորությունները և սնունդ տալիս պատրանքի ծավալմանը իրենց ստորին չորս մարմիններում:

Փիզիկական տեսողությունից գատ ձեզ տրված է նաև հոգևոր տեսողություն: Ինչու՞ չեք օգտագործում ձեր այդ շնորհը: Դեռ որքա՞ն պետք է ընկնեք այն բախտախնդիրների ազդեցության տակ, որոնք գրպանները լցնում են նրանով, որ մթազնում են ձեր ուղեղներն ու ստիպում, որ մեկը մյուսի հետևից սխալ ընտրություններ կատարեք: Ամբողջ զանազանման կարողությունը՝ զանազանման ամբողջ մեխանիզմը, գտնվում է ձեր ներսում՝ ձեր սրտերում: Դուք բոլորդ ստեղծված եք ըստ Աստծո պատկերի և նմանության: Ինչու՞ եք մշտապես մոռանում այդ մասին և հենարան փնտրում ֆիզիկական աշխարհում, որպեսզի ցած չգլորվեք: Ձեզ պետք չէ, որ հենվեք պայծառատեսների, գերզգայականների և գուշակ կանանց ասածների վրա: Դուք պարզապես պետք է օգտվեք ձեր ներսում առկա զանազանման մեխանիզմից: Ձեր Բարձրագույն Ես-ը հարյուր հազարավոր տարիներ է, ինչ սպասում է, թե երբ վերջապես ուշադրություն կդարձնեք իր վրա և կլսեք այն խորհուրդները, որոնք Ինքը պատրաստ է տալ ձեր սրտի անդորրության մեջ: Բայց ո՞չ, դուք մշտապես ձեր ուշադրությունը զբաղեցնում եք արտաքին չխկնկաններով, միայն թե չմեկուսանաք և ականջ չդնեք ձեր սրտին:

Այսօր ես խիստ խոսեցի: Բայց ուզեցի իմ սրտի ողջ հուրն ու կայծերը տալ ձեզ, որպեսզի ջերմացնեմ ձեր սրտերն ու դուրս քաշեմ ձեզ տգիտության խավարի ցրտից, որի մեջ շարունակում են դեգերել ձեզնից շատերը:

Ես ի կատար ածեցի այն, ինչի համար եկել էի: Եվ ես հանգիստ եմ նրանով, որ հիմա դուք այլևս չեք ասի, թե ոչինչ չգիտեիք, և ձեզ ոչ ոք չի նախազգուշացրել:

*ԵՄ ԵՄ Չրադաշտը՝ ձեր նկատմամբ Սիրով,
քանզի միայն Մերն ինձ մղեց ձեզ հետ այս գրույցին*

Վեհապետ Էլ Մորիա
21 հուլիսի, 2006 թ.

**Մեր դեսպանորդի միջոցով Բուլղարիայում տրվող
թելադրությունների ամառային շրջանն ավարտված է**

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը՝ կրկին ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկել իրագեկելու, որ մեր դեսպանորդի միջոցով Բուլղարիայում տրվող թելադրությունների ամառային շրջանն ավարտված է:

Ես ուրախ եմ, որ թելադրությունների այս շրջանն անցավ Բուլղարիայում: Քանզի ամեն անգամ, երբ մենք տալիս ենք մեր ուղերձները, Լույսի հսկայական քանակություն է հորդում այն վայրում, որտեղ ընդունվում են թելադրությունները: Եվ այն երկիրն ու այն մարդիկ, որոնք մասնակցում են թելադրությունների ընդունման գործընթացին, ստանում են Լույսի բավական մեծ չափաբաժին: Եվ ամեն անգամ մնում է միայն տեսնել, թե ինչպես դուք կտնօրինեք ձեր ստացած Լույսը:

Երբ երկու տարուց մի փոքր ավելի առաջ Եղբայության դեսպանորդի պատմունանը գցվեց Տատյանայի ուսերին, ոչ ոք չէր կարող երաշխավորել, որ Ռուսաստանին պայծառ ապագա է սպասվում: Ֆիզիկական ոլորտում լիակատար քառս ու անկարգություն էր տիրում: Բայց մենք եկանք ու մեր ուղերձներով հաստատեցինք, որ նուրբ ոլորտում այդ երկրի համար մեծ ապագա է նախապատրաստվում: Եվ չանցած երկու տարի՝ այն, ինչ նախապատրաստվում էր նուրբ ոլորտում, սկսեց իրականանալ ֆիզիկական ոլորտում: Եվ նույնիսկ այն հոռետեսները, որոնք երկու տարի առաջ փնթփնթում էին և ասում, թե Ռուսաստանը կորած է, այժմ տարակուսանքով վեր են կացել ու ծոծրակներն են քորում:

Ահա այդպես էլ նաև Բուլղարիան է: Եթե այդ երկիրը կարողանա որակյալ ձևով տնօրինել ստացված Լույսը, ապա շատ շուտով մեծ փոփոխություններ տեղի կունենան և՛ կրթության, և՛ տնտեսության ասպարեզներում: Ամեն ինչ ձեր ձեռքերում է: Եվ բոլոր փոփոխությունները տեղի են ունենում ձեր գիտակցության փոփոխության շնորհիվ:

Միշտ կա այն վտանգը, որ մեր կողմից Երկիր առաքված Լույսը կարող է սխալ օգտագործվել ու աղավաղվել, բայց ամեն անգամ մենք հույս ենք կապում, որ ձեր անոթը ծակ դուրս չի գա և ստացված էներգիան դուք կտնօրինեք՝ Աստծո Պլանին ու Աստծո Մտահղացմանը համապատասխան:

Ես ուրախ եմ, որ մեզ հաջողվեց գիտելիքների մեծ պաշար տալ թելադրությունների այս շրջանում: Միշտ հիշեք, որ Գիտելիքները ձեզ տրվում են խորհրդածելու համար, ձեր սրտի անդորրության մեջ մտահայելու համար: Մի՛ շտապեք հնարավորին չափ շուտ մի կողմ դնել թելադրությունների գիրքը: Ջանացեք լրիվ ընկալել այն ամենը, ինչ պարունակվում է ամեն մի թելադրության մեջ. Աստծո կենարար էներգիայի ամեն մի կաթիլն ու Աստծո Ճշմարտության ամեն մի Խոսքը:

Մենք այցելում ենք Երկրի մարդկանց, որպեսզի ամրապնդենք մեր կապերը, ֆիզիկական և նուրբ աշխարհների միջև կապերը: Եվ մեր նպատակներն ու խնդիրներն ամբողջովին կախված են այն բանից, թե կկարողանա՞ք արդյոք լիակատար ձևով ընկալել այն տեղեկատվությունն ու էներգիան, որոնք առկա են լինում մեր ուղերձներում:

Մի՛ ստիպեք մեզ նորից ու նորից ձեզ հիշեցնել, որ ձեզ վրա հսկայական պատասխանատվություն է դրված Երկրի մոլորակի ֆիզիկական ոլորտի ձևափոխության առումով: Հիշեք, որ դուք մարմնավորվել եք, որպեսզի կոնկրետ գործողություններ իրականացնեք ֆիզիկական ոլորտում: Սակայն, որպեսզի ձեր գործողությունները կատարյալ լինեն և համապատասխանեն Աստծո Պլանին, դուք նախ և առաջ պետք է մտահոգվեք ձեր մարմինների հարցով: Անխոնջ կերպով մաքրե՛ք ձեր նուրբ մարմիններն աղոթքով ու պասով, բնության գրկում զբոսնելով և երեխաների ու կենդանիների հետ շփվելով: Մտահայեք գեղեցիկը, և գեղեցիկի ազդեցությամբ դուք կկարողանաք փոխել ձեր ներքին վիճակը: Ոչինչ այնպես չի ազդում մարդու վրա, ինչպես գեղեցիկն ու բնությունը: Պահպանե՛ք ու աճեցրե՛ք ճշմարիտ կերպերը ձեր կյանքերում: Ձգտեցեք, որ ձեր շրջապատը ձեզ պարուրի ներդաշնակությամբ ու գեղեցկությամբ: Մի՛ երկնչեք մյուս մարդկանց ուղղություն ցույց տալուց, հիշեցրե՛ք նրանց, որ շրջապատի ամեն ինչը մշտական ազդեցություն է թողնում իրենց գիտակցության ու ներաշխարհի վրա: Եվ դա վերաբերում է նաև հեռուստադիտումներին ու անվերահսկելի ռադիոունկնդրությանը: Հնարավորինս հեռու՝ մնացեք բոլոր այդ բացասական թրթռումներից: Բազմաթիվ եղանակներ կան բացասական էներգիաներից հեռու մնալու համար, և դրանցից շատերը դրամական միջոցների ներդրում չեն պահանջում:

Ուստի ես եկել եմ, որպեսզի հիշեցնեմ ձեզ այն, ինչը ձեր ուժերի սահմաններում է: Դուք կարող եք հույս կապել Վեհապետների օգնության հետ և համապատասխան կանչեր հղել, բայց ֆիզիկական ոլորտում պետք է գործեք ինքներդ: Բոլոր տեղի ունեցող հրաշքները մանրակրկիտ կերպով պլանավորված են: Եվ ֆիզիկական ոլորտի ձևափոխության հրաշքն անպայման տեղի կունենա, եթե այդ հրաշքը նախապատրաստեք ձեր սրտերում:

Ես ձեզ հաջողություն եմ մաղթում ինքներդ ձեզ հետ տարվող աշխատանքում: Հետևեցեք, որպեսզի Աստծո Էներգիայի ոչ մի Էրգը չծախսվի ոչ իր նշանակությամբ: Ձեզ շատ բան է տրված, և հիմա դուք պետք է դրսևորեք Երկնքի հետ համագործակցելու ձեր պատրաստակամությունը:

Բոլոր ձեր ջանքերը կբազմապատկվեն և անպայման կտան իրենց պտուղները:

Թվում է, թե ֆիզիկական ոլորտի փոփոխությունները կապված չեն մեր տված թելադրությունների հետ, սակայն հավատացե՛ք ինձ, մոլորակի բոլոր դրական փոփոխությունները միշտ կապված են եղել այն բանի հետ, թե որքանով են մարդիկ ընդունել մեր դեսպանորդներին ու նրանց բերած Խոսքը: Իսկ այն դեպքում, երբ մեր դեսպանորդներին չեն ընդունել ու չեն պատվել, ապա այն երկիրը, որը թույլ է տվել նման բացասական վերաբերմունք, երկար տարիներով ընկել է գիտակցության աղջամուղջի մեջ: Եվ մեզ մնացել է միայն խնդրել Աստծուն, որ *ների նրանց, քանի որ չգիտեն ինչ են անում*:

Մենք անկեղծորեն ուզում ենք հուսալ, որ մարդկության գիտակցության աղջամուղջը մնացել է հեռավոր անցյալում: Իսկ առջևում Գիտելիքի պայծառ լուսաբացն է, որը դուք կրում եք ձեր սրտերում:

Ես եկա, որպեսզի տամ այս շրջանի վերջին թելադրությունը և ձեզ տեղյակ պահեմ, որ այս դեսպանորդի հետ մենք կշարունակենք մեր աշխատանքը, քանի դեռ ֆիզիկական ոլորտում առկա կլինի մեր աշխատանքի այս հնարավորությունը:

Մի՛ մոռացեք, որ ձեզնից յուրաքանչյուրի վրա պատասխանատվություն է դրված հոգ տանելու մեր դեսպանորդի մասին: Քանզի Աստծո մարդիկ միշտ ապրել են բարի մարդկանց հոգածության շնորհիվ:

Ես ձեզ հրաժեշտ եմ տալիս, բայց հուսով եմ, որ մեր բաժանումը երկարատև չի լինի, և մենք նորից կհանդիպենք այս դեսպանորդի միջոցով: Իսկ ձեզնից նրանց հետ, ովքեր պատրաստ են, ես կգամ ու կհանդիպեմ իրենց սրտի անդորրության մեջ:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան, մինչ նոր հանդիպումներ

Ուղերձների հինգերորդ շրջան (սեպտեմբեր, 2006 թ. – հունվար, 2007 թ.)

Տեր Մայտրեյա
13 սեպտեմբերի, 2006 թ.

Գիտակցությունը փոխել կարողանալը պատմական այս ժամանակահատվածում ձեր ամենակարևոր բարեմասնությունը կլինի

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ կրկին եկածը...

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի, ինչպես միշտ, ողջունեմ Երկրի մարդկությանը և իմ կողմից արտահայտեմ այն ողջ Մերն ու օժանդակությունը, որը Երկինքը ցուցաբերում է այս պահին և մշտապես կցուցաբերի՝ անկախ ձեր թերություններն ու անկատարությունները պահելու ձեր համառությունից:

Դուք երեխաներ եք, և, ինչպես անցումային տարիքի բոլոր երեխաները, դուք ևս ունեք ձեր անցումային շրջանի դժվարությունները: Մարսափելի ոչինչ չկա. այնքան էլ շատ ժամանակ չի անցնի, դուք կփոխվեք և ձեր անցումային շրջանը հիշելիս ձեզ վատ կզգաք ու կվրդովվեք:

Տեսեք, թե ինչ է ստացվում. ընդամենը մի քանի հարյուրամյակ առաջ, երբ մենք գալիս ու գործում էինք Երկրի առանձին մարդկանց միջոցով, այդ մարդկանց հետապնդում էին, մահապատժի ենթարկում, այրում խարույկի վրա: Ինչքան են փոխվել ժամանակները... Կարող եմ ասել, որ ժամանակի արագացումն արդեն հասել է իր սահմանագծին: Եվ գիտակցության փոփոխության դրանից ավելի մեծ արագություն դժվար թե հասանելի լինի ձեր ֆիզիկական աշխարհում: Դա կապված է հենց ձեր ֆիզիկական աշխարհին բնորոշ առանձնահատկությունների հետ:

Ես եկել եմ ձեզ վստահեցնելու, որ ձեզնից յուրաքանչյուրը, ով, անկախ հանդիպած դժվարություններից ու անհաջողություններից, շարունակում է նախանձելի համառությամբ ու կայունությամբ առաջ ընթանալ Ձեռնադրումների Ուղով, իմ մակարդակից ինձ համար տեսանելի է դառնում՝ որպես դեպի վեր մղվող բոց: Ես ձեզ իրարից զանազանում եմ և ձեր առաջին իսկ կանչով ցուցաբերում եմ ամբողջ հնարավոր օգնությունը: Ձեր կյանքի հանգամանքներն ու ձեր ծննդյան հորոսկոպը ո՛չ միշտ են թույլ տալիս ինձ, որ հապճեպորեն ձեզ օգնություն ցուցաբերեմ, բայց այն չափով, որքանով թույլ է տալիս Տիեզերական Օրենքը, ես միշտ օգնություն ցուցաբերում եմ: Դա պայմանավորված է նրանով, որ դեռևս եզակիներն են պահպանում իրենց հավատարմությունը Եղբայրությանը: Եվ եթե բռնկվում ու առաջ են մղվում միլիոնավորները, ապա միայն եզակիներն են կարողանում տարեցտարի՝ երկար ժամանակով, վառ պահել իրենց սրտի բոցը: Է՛լ ավելի քիչ է նրանց քանակը, ովքեր նպատակապես ու գիտակից ձևով գործում են մեր հանձնարարականներին համապատասխան:

Այժմ ես պատրաստ եմ ևս մի փոքր տեղեկատվություն տալ, որը վերաբերում է ձեր իսկ Բարձրագույն մասի հետ ձեր փոխհարաբերությանը: Բոլորովին ոչ վաղուց նոր ուղերձ է տրվել Կարմայական Խորհրդի կողմից՝ Երկիր մոլորակի նկատմամբ հատուկ ողորմածության վերաբերյալ: Եվ այժմ ձեզնից նրանց, ովքեր հարկ եղած չափով ամենօրյա նկրտում են դրսևորում, օգնություն կցուցաբերվի իրենց իսկ Բարձրագույն մասի հետ կապ ստեղծելու գործում: Այդ նպատակով դուք պետք է նամակ հղեք Կարմայական վարչությանը և խնդրեք, որպեսզի, ըստ Տիեզերական Օրենքի, ողորմածություն ցուցաբերվի ձեր նկատմամբ և ժամանակավորապես դադարեցվի ձեր այն կարմայի բեռնումը, որը խանգարում է ձեր Բարձրագույն մասի հետ կապ ստեղծելուն:

Ճիշտ հասկացա՞ք ինձ, սիրելիներ՛ս: Դա չի նշանակում, որ բոլորի համար կարմայի բեռնավորումը կընդհատվի: Ո՛չ, խոսքն այն անհատների մասին է միայն, ովքեր համարյա հասել են իրենց Բարձրագույն մասի հետ կապ ստեղծելու պահանջված մակարդակին, բայց իրենց խանգարում է ինչ-որ հինավուրց կարմա, էներգակուտակ, կամ էլ դեռևս չվերամշակված ինչ-որ անհատական հատկանիշ: Նման դեպքում ձեզ ողորմածություն կցուցաբերվի և հենց այդ մասով կդադարեցվի ձեր կարմայի բեռնումը, որպեսզի կարողանաք կապ հաստատել ձեր Բարձրագույն մասի հետ: Դուք կզգաք այդ կապը և հետագայում կառաջնորդվեք ձեր կենսափորձով ու զգացողություններով: Իսկ երբ կարմայի նոր բեռնումը վերսկսվի, ձեզ այլևս ոչինչ չի խանգարի, որ կրկին ձեր Բարձրագույն մասի հետ կապ ստեղծեք ու պահպանեք այն: Դրանից հետո այդ կապի միջոցով դուք կկարողանաք կապի մեջ մտնել բոլոր Համբարձյալ Դասերի հետ և, հնարավոր է, նաև ինձ հետ: Որովհետև ԵՍ ԵՍ այն Տիրակալը, ով նախապատրաստում է իր գալուստը Երկիր, և ձգտում եմ աշխատել բոլոր նրանց հետ, ովքեր գործադրում են հարկ եղած ջանքերն ու նկրտումը:

Իսկ այժմ ես պետք է խոսեմ այն գլխավորի մասին, որը տեղի է ունեցել վերջին ժամանակներում և չի լուսաբանվել մեր նախորդ թելադրություններում:

Պետք է ձեզ ասեմ, որ այն մարդկանց ջանքերը, ովքեր զբաղվում են այս դեսպանորդի միջոցով տրվող մեր ուղերձների տարածման գործով, իզուր չեն անցել, և Երկրի իրադրությունը դասավորվել է ամենաբարենպաստ ձևով: Դա չի նշանակում, թե արհավիրքներ ու համադետներ չեն լինի, այլ միայն նշանակում է, որ մարդկության Էվոյուցիայի ընդհանուր ընթացքը վերցրված է մեր ուժեղացված հսկողության տակ, և այժմ մենք կարող ենք ամբողջությամբ վերահսկել Երկիր մոլորակի իրադրությունը: Ես ուրախ եմ, որ ձեր ջանքերն այդքան արդյունավետ եղան: Հիմա փորձեք պատկերացնել, թե ինչ կլինեք, եթե մեր ուղերձները մատչելի դառնային Երկիր մոլորակի բնակչության մեծամասնությանը: Ի՞նչ տեղի կունենար այդ դեպքում:

Ասեմ, թե ինչ տեղի կունենար: Եթե Երկրի մարդկության միայն մեկ տոկոսի գիտակցությունը փոխվի, ապա դրա շնորհիվ ամբողջովին կփոխվի մոլորակի Էվոյուցիայի ընթացքը: Իսկ Երկրի բնակչության կեսի գիտակցության փոփոխությունը կարող է ակնթարթորեն մոլորակն

ամբողջությամբ տեղափոխել էվոլյուցիոն նոր մակարդակի վրա: Եվ մենք այդ դեպքում ստիպված կլինենք արգելակել փոփոխությունների գործընթացը, որպեսզի ձեր ֆիզիկական մարմինները դիմանային այդպիսի կայծակնային փոփոխությանը: Զանգի դուք դեռ որոշ ժամանակով պետք է մնաք ձեր ֆիզիկական մարմիններում, որպեսզի լրիվ բեռնաթափեք այն կարման, որն արարել եք ֆիզիկական ոլորտում: Այնուհետև դուք հրաժեշտ կտաք ձեր մարմիններին և կշարունակեք ձեր գոյությունն ավելի նուրբ աշխարհում: Իսկ դա տեղի կունենանա, եթե դուք հարկ եղած չափով ձգտեք դրան:

Իմ ներկայությունը Երկիր մոլորակում դեռ երբեք այսքան մեծ չի եղել՝ շնորհիվ մեր ու ձեր կապի, շնորհիվ դեպի ինձ ունեցած ձեր մղման և փոխվելու ձեր ունակության:

Գիտակցությունը փոխել կարողանալը պատմական այս ժամանակահատվածում ձեր ամենակարևոր բարեմասնությունը կլինի: Եվ ձեզնից նրանք, ովքեր ունեն այդ բարեմասնությունը, հասկանում են, որ, ըստ էության, միայն այդ բարեմասնության շնորհիվ կարելի է փոխել ողջ աշխարհը:

Սակայն այդ բարեմասնությունը ձեռք բերելուց առաջ հարկ է, որ ունենաք անվերապահ Մեր, աստվածային համբերություն և հանդուրժողականություն այն ամենի նկատմամբ, ինչը դեռ անկատար է:

Ես մաղթում եմ, որ դուք ձեր ներսում հնարավորինս արագ հաղթահարեք այն, ինչն Աստծուց չէ: Նաև կցանկանայի հանդիպել ձեզնից յուրաքանչյուրի հետ, ով արհաբար հաղթահարում է իր կյանքի բոլոր դժվարություններն ու խոչընդոտները, և սեղմել նրա ձեռքը:

Եվ այսպես, մինչ նոր հանդիպում...

ԵՄ ԵՄ Մայտրեյան

Տեր Մայտրեյա

9 հոկտեմբերի, 2006 թ.

Ես եկել եմ, որպեսզի ձեր գիտակցության մեջ ամրապնդեմ բերկրանքի, մղման ու հաղթանակի հատկանիշը

ԵՄ ԵՄ Մայտրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով նորից եկածը: ԵՄ ԵՄ եկել, որպեսզի Երկիր մոլորակի մարդկանց տամ հերթական ուղերձ: Ինչպես միշտ, կուզենայի շատ բան ասել, բայց ստիպված կլինեմ կենտրոնանալ ամենագլխավորի՝ այն բանի վրա, որը հետաձգել չի կարելի ու պետք է հաղորդվի՝ չապասելով թելադրությունների հաջորդ շրջանին: Այսպիսով, ես եկել եմ, որ ձեզ որոշակի նոր տեղեկատվություն հաղորդեմ, որպեսզի դուք նորովի նայեք այն ամենին, ինչ ասվել է նախկինում և վերանայեք ձեր որոշ հայացքներն ու կոտրեք կարծրատիպերը: Եվ այսօրվա տեղեկատվությունն առաջին հերթին վերաբերում է այն փոփոխություններին, որոնք արագացված տեմպերով շարունակում են տեղի ունենալ մարդկանց գիտակցության մեջ: Մենք ուրախ ենք, որ այդ տեմպերն այնքան են արագացել, որ հասել է այն ժամանակը, երբ մենք վերջապես կարող ենք համոզված կերպով արձանագրել, որ փաստորեն Երկրի բարեփոխություններն էվոլյուցիայի առումով տեղի են ունենում բարենպաստ ձևով: Դրանք տեղի են ունենում գործունեության բոլոր բնագավառներում: Եվ հատկապես պետք է նշեմ այն, որ արագացել է այն ժողովուրդների գիտակցության փոփոխության գործընթացը, որոնք բնակվում են Ռուսաստանում և այն երկրներում, որտեղ կարդում են մեր դեսպանորդի միջոցով տրվող ուղերձները: Ես ուրախ եմ, և Համբարձյալ Դասերը նույնպես ուրախ են, որ մարդկությունը թևակոխում է կայուն զարգացման շրջան, և ոչ մի արտաքին հանգամանք արդեն չի կարող մեզ խոչընդոտել մեր պլանների իրականացման գործում: Հենց որ աշխարհները հպվեն իրար՝ նրանց փոխներթափանցման գործընթացը կարագանա, և այլևս ոչինչ չի կարող խանգարել ընթացող փոփոխություններին: Ես ուրախ եմ, որ գտնվեցին մարմնավորման մեջ գտնվող բավարար քանակությամբ մարդիկ, ովքեր արձագանքեցին մեր կոչերին և անշահախնդրորեն իրենց ուսերին վերցրին Երկրի մարդկությանը ծառայելու բեռը: Ձեր ջոկատներն ամեն օր համալրվում են: Իհարկե, կան նաև այնպիսիները, որոնք թույլ տվեցին, որ կասկածը տիրի իրենց գիտակցությանը, և շատ բան կորցրին այն ամենից, ինչը վաստակել էին ծանր աշխատանքով: Բայց կորսված չէ ամեն ինչ, քանի որ անկումն ու կասկածներն անխուսափելի են ձեր աշխարհում: Այն միշտ զարգանում է ալիքաձև: Թույլ մի՛ տվեք, որ բացասական վիճակները տիրեն ձեր գիտակցությանը: Ես հասկանում եմ, որ դա նաև տարվա եղանակի փոխվելու հետ կապված. երբ սկսվում են աշնանային մռայլ օրերը, և արևն արդեն հազվադեպ է փայլում, ձեզ համար դժվար է լինում ձեր գիտակցությունը պահել հարկ եղած բարձրության վրա: Ուստի ես այսօր եկել եմ, որպեսզի

քաջալերեմ ձեզ և հատուկ ուղերձով ամրապնդեմ ձեռք բերված առաջընթացը: Իսկ ձեր առաջընթացն այնքան աչքի զարնող է, որ միայն շատ հոռետես մարդիկ կարող են այնպես ներկայացնել, թե ոչ մի փոփոխություն էլ չի եղել: Ես եկել եմ, որպեսզի ձեր գիտակցության մեջ ամրապնդեմ բերկրանքի, մղման ու հաղթանակի հատկանիշը, որն անխուսափելի է և սպասվում է ձեզ ոչ այնքան հեռու ապագայում: Հենց այդպես էլ շարունակե՛ք...

Ես երջանիկ եմ, որ այս ծանր, ճակատագրական ժամանակներում հաջողվեց Աստծո ճշմարտությունը հասցնել մարմնավորման մեջ գտնվող այդքան մեծ թվով մարդկանց: Եվ երջանիկ եմ, որ ձեզնից շատերն արթնացան այն խորունկ քնից, որի մեջ մի մարմնավորման ընթացքում չէ, որ գտնվում էին: Անշուշտ, ժամը հասավ, և Երկրի համար բացվեց այն տիեզերական հնարավորությունը, որի մասին պատգամում էին անցյալի մարգարեները: Եվ այդ հնարավորությունը չի հապաղի իրեն դրսևորել արար աշխարհում: Հետևե՛ք այն հանգամանքներին, որոնք փոխվում են ձեր շուրջը: Մի՛ ալարեք ձեր օրագրերում նշել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում: Քանզի դեռևս չէին եղել այսպիսի հրաշքներ, որոնք ավելի ու ավելի ակներև են դառնում: Եվ ես չեմ զարմանա, եթե շուտով աշխարհի շատ երկրների ղեկավարներ սկսեն իրենց երկրներում քաղաքականությունը կառուցել Տիեզերական Օրենքին համապատասխան: Նրանք պարզապես չեն կարողանա կառավարման հին հնարքներից օգտվելով ղեկավարել, որովհետև զանգվածների գիտակցությունը փոխվել է, և անհրաժեշտաբար պահանջվում է, որ իշխանական մարմինները հարմարվեն մարդկանց փոխված գիտակցությանը:

Իսկ նոր կյանք մտնող սերունդը հատուկ խնամքի ու հոգածության կարիք ունի: Քանզի հատկապես այդ սերնդին կվիճակվի մոտակա տեսանելի ապագայում ավարտին հասցնել Աստծո գործերը: Մի՛ վախեցեք ոչ ձեր կյանքի, ոչ էլ աշխարհի իրադրության փոփոխություններից: Ձեզ ոչինչ չի կարող սպառնալ, եթե ձեզ պահում էք հարկ եղածին պես և հարկ եղած ձևով ենթարկվում եք Օրենքին: Ոչ մի արհավիրք ու համադետ չի կարող սարսափ ազդել նրա վրա, ով նվիրվածությամբ ծառայում է ամբողջ Կյանքում, Կյանքի յուրաքանչյուր մասնիկում ներկա գտնվող Աստծուն:

Ես ուրախ եղա իմ այս ուղերձով արտահայտելու սեփական հիացմունքս ու արժանին մատուցելու ձեր ամենօրյա ջանքերին:

Իսկ այժմ՝ ևս մեկ ոչ մեծ տեղեկատվություն, որը վերաբերում է, այսպես կոչված, Անցումի իրադարձություններին, որին շատերն սպասում են ու նախապատրաստվում դրան: Երբեք չարժե լրջորեն վերաբերվել որևէ մարգարեության և որևէ սպասվող համադետի: Քանզի շատ են այնպիսի մարգարեությունները, որոնք արտաբերվել են, բայց չեն իրականացել, և այնպիսի մարգարեությունները, որոնք չեն արտաբերվել, բայց իրականացել են: Ես ձեզ խորհուրդ եմ տալիս ապրել ներկայով և ձեր կյանքի յուրաքանչյուր պահն ընդունել որպես հավերժական արժեքի կրող: Իրականում Աստծո աշխարհում ոչինչ գոյություն չունի, բացի հավերժական «հիմա»-ից: Իսկ այդ «հիմա»-ն դուք ձևավորում եք սեփական գիտակցությամբ: Երբեք չարժե չափազանց շատ ուշադրություն հատկացնել այն բանին, ինչն արդեն տեղի է ունեցել, ոչ էլ այն բանին, ինչը պետք է տեղի ունենա: Միայն ձեր կյանքի յուրաքանչյուր պահի ձեր լարվածքն է ձևավորում այն ապագան, որը սպասվում է ձեզ: Ուստի կենտրոնացեք միայն այն բանի վրա, որ ձեր կյանքի յուրաքանչյուր պահը լցնեք բերկրանքով, սիրով, ջերմությամբ ու երջանկությամբ: Քանզի ինքներդ եք ձեր երջանկության արարողը, և ինքներդ եք ձեր ապագայի կերտողը:

Մենք գալիս ենք, որպեսզի Ուսմունք տանք, բայց դուք և միայն դուք կարող եք փոփոխություններ կատարել ձեր մոլորակի վրա և միայն այնժամ, երբ այս Ուսմունքով սնուցեք ինքներդ ձեզ և Ուսմունքի կրողը դառնաք այն միլիոնավոր մարդկանց համար, ովքեր դեռևս չեն արթնացել:

Ես ուրախ եմ, որ շատերի համար հասնում է արթնացման ժամը, նաև ուրախ եմ, որ այսպես հեշտորեն կարող եմ գալ և ձեզ հետ կիսել իմ վիճակն ու տրամադրությունը: Ես առավել երջանիկ կլինեմ, եթե ինձ հաջողվի իմ վիճակը փոխանցել մարմնավորման մեջ գտնվող հնարավորինս շատ մարդկանց:

Ես ուրախ եղա մեր նոր հանդիպման առիթով, և, ինչպես միշտ, ավստում եմ, որ բաժանվում ենք:

Մինչ նոր հանդիպումներ, սիրելի՛ բարեկամներ...

ԵՍ ԵՍ Մայրերյան

Տեր Մայտրեյա
3 նոյեմբերի, 2006 թ.

Ողջերթի խոսք՝ ուղղված հայ ընթերցողին

ԵՍ ԵՄ Մայտրեյան. եկել եմ, որ ուղերձ տամ, որը կարևոր ուղենիշ կարող է դառնալ մարդկության Էվոլյուցիոն զարգացման Ուղու վրա: Լույսի շատ աշխատակիցներ ցրված են Երկրով մեկ, և երջանկություն է, երբ նրանք կարողանում են գտնել իրար և, շնորհիվ իրենց ձեռք բերած նվաճումների մակարդակի, ունակ են դառնում համատեղ գործելու:

Ես ուրախ եմ, որ հայոց լեզվով հրատարակվում է գիրք, որը պարունակում է մեր ուղերձները: Ոչինչ, որ շատ չեն դրանք, և պատկանում են միայն մեկ Տիրակալի՝ Տեր Հիսուսին. ես կարծում եմ, որ դա միայն առաջին քայլն է, և դրան կհետևեն ոչ պակաս հուզիչ և ուրախալի քայլեր: Եվ ամեն մի նոր քայլի հետ երկրի թանձր ոլորտին կմերձենա մեր աշխարհը, մի աշխարհ, որում գտնվում են համբարձյալ Վեհապետները՝ մարդկության ավագ եղբայրները:

Ներկայումս Երկրի մարդկության հետ մենք հնարավորություն ունենք խոսելու մեր ռուսագգի դեսպանորդ Տատյանայի միջոցով, և մենք ուրախ ենք, որ ողջ երկրագնդի վրա գտնվեցին մարդիկ, ովքեր պատրաստ եղան իրենց վրա վերցնելու մեր ուղերձներն այլ լեզուներով թարգմանելու առաքելությունը: Ես ուրախ եմ, որ մեր ուղերձները թարգմանվել են հայերեն, քանի որ Հայաստանը միշտ աչքի է ընկել Ռուսաստանի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքով, և այդ երկու երկրների ժողովուրդների բարեկամությունը երբեք չի ընդհատվել: Եվ մենք հույս ունենք, որ ապագայում ևս Հայաստանի ժողովուրդն իր ներսում կկարողանա հաղթահարել այնպիսի մտածողությունը, որը սահմանափակում է նրա գիտակցությունը: Ուզում ենք հուսալ, որ նա իր գիտակցությամբ կբարձրանա մի այլ՝ ավելի բարձր, մակարդակի վրա, որտեղ նա այլևս չի տեսնի տարբեր կրոնների միջև որևէ հակասություն: Մարդկային գիտակցությունն է միայն հավատը բաժանել տարբեր կրոնների ու դավանաբանությունների, իսկ ճշմարիտ հավատը չի ենթադրում որևէ հակասություն կամ հակամարտություն կրոնական հոդի վրա: Բոլոր հակամարտությունները մարդկային սահմանափակ գիտակցության ծնունդ են, իսկ մարդկային գիտակցության մեջ հակամարտությունների հաղթահարումը կարող է հանգեցնել մարդկանց, բոլոր երկրների ու ժողովուրդների միջև ճշմարիտ սիրո ու բարեկամության:

Իսկ այժմ ես կուզենայի անդրադառնալ այս կարևոր քայլին՝ Վեհապետների կողմից մեր ռուս դեսպանորդի միջոցով տրվող ուղերձների հրատարակմանը Հայոց հողի վրա: Այնքան էլ շատ ժամանակ չի անցնի, և աշխարհի բոլոր երկրները, հետևելով Ռուսաստանին, իրենց գիտակցությամբ կբարձրանան նոր աստիճանի վրա և կկարողանան վեր կանգնել ոչ միայն կրոնական, այլ նաև ազգային հողի վրա ծագած բոլոր հակասություններից: Միշտ կարևորը սկսելն է: Յուրաքանչյուր հաջորդ քայլը կլինի ավելի ու ավելի հեշտ:

Մարդկային անհատների գիտակցությունն արդեն փոխվում է, և ամեն հաջորդ քայլի հետ մենք հույս ենք կապում, որ ավելի ու ավելի շատ մարդկային անհատներ ունակ կդառնան ընկալելու մեր Ուսմունքներն ու իրենց կյանքում առաջնորդվելու դրանցով:

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ հաջողության մաղթանքներով: Մենք ուժեղ ենք Սիրով...

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի, 2006 թ.

Ձեզնից կպահանջվի ձեր կամքի ողջ լարումը, որպեսզի չընկնեք անցյալի էներգիաների թակարդը և մղվեք դեպի նոր օրվա կողմը

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ նորից եկածը, որպեսզի ձեզ ուրախալի նորություն հայտնեմ... Մեր դեսպանորդի միջոցով մենք սկսում ենք թելադրությունների նոր շրջան: Եվ ինչպես միշտ, շատ բան կա ասելու: Իսկ մեր հաղորդակցության այս գործընթացն ու մեր կողմից գործադրված ջանքերն իզուր չեն անցնում: Ամեն անգամվա հետ այս բարդ ժամանակներում մարմնավորման մեջ գտնվող ավելի ու ավելի մեծ թվով մարդկային անհատականությունների գիտակցության մեջ մենք նշմարում ենք նորանոր փոփոխություններ:

Մենք գալիս ենք, որպեսզի հաստատենք ու ամրապնդենք Լույսի մեր կիզակետը, մեր բոցը, որը միլիոնավոր տարիներ ի վեր մենք անխոնջ կերպով բերում ու հրամցնում ենք մարդկությանը: Եվ այժմ էլ, ինչպես երբեք, մենք երջանիկ ենք հայտնելու այն մասին, որ մեր ջանքերն այնքան

պարզորոշ են արտացոլվում մարդկանց մտքերում ու ֆիզիկական ոլորտում սփռված իրականության մեջ, որ մենք չենք դադարում այն հրաշքների վրա զարմանալուց, որոնք արդեն տեղի են ունեցել և դեռևս տեղի կունենան Երկիր մոլորակի վրա մեր ու ձեր օգնությամբ, այն մարդկանց օգնությամբ, ովքեր որոշել են իրենց նվիրաբերել Կյանքին, Երկրի մարդկությանը ծառայելուն: Եվ դուք՝ մեր սպասավորներից յուրաքանչյուրը, պետք է գիտակցեք, որ այս բարդ, ճակատագրական ժամանակներում երբեմն չի հայտնվում այն մարդը, ով իրենով կփակեր ընձեռված աստվածային հնարավորության շղթան: Եվ եթե դուք դեռևս գտնվում եք անվճռականության ու տատանվելու վիճակում, ապա ես խորհուրդ եմ տալիս որքան հնարավոր է արագ վերջ տալ ձեր մանր կենցաղային խնդիրներին ուշադրություն դարձնելուն և ամբողջ էությամբ մղվել դեպի մեզ, դեպի այն խնդիրների իրականացումը, որոնք մենք ամրագրում ենք ձեր գիտակցության մեջ և կոչ անում դրանք իրականություն դարձնել:

Մենք չենք հոգնում նորից ու նորից կրկնելուց, որ մեզ հարկավոր են նվիրված սպասավորներ, ովքեր առաջին իսկ կանչով ոտքի կելնեն ու կգնան այնտեղ, որտեղ պահանջվում է իրենց ջանքերի և ունակությունների գործադրումը և այն աստվածային պլանի իրականացումը, հանուն որի իրենք մարմնավորվել են այժմ՝ մոլորակի համար այս բարդ ժամանակներում:

Ես անխոնջ կրկնում եմ ձեր պատասխանատվության ու ձեր պարտավորությունների մասին, որոնք դուք ինքներդ եք ձեզ վրա վերցրել մարմնավորվելուց առաջ: Քանզի ամեն անգամ, կարդալով մեր ուղերձները, դուք ներքին սարսուռ եք զգում և ձեր պարտքը կատարելու պատրաստակամություն: Բայց անցնում է մի փոքր ժամանակ, և դուք մոռանում եք ձեր պարտավորությունների, ձեր մղման մասին և հանձնվում եք կյանքի ունայնությանը, որը ճահճատիղմի պես քաշում է ու ստիպում ձեզ մղվելու կեղծ ուղով, թուլեական բարիքների ու զվարճությունների ուղով՝ ի վնաս հավերժականի:

Իսկ այժմ ես կուզենայի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնել, որ մոտենում է տարվա ամենամեայլ ու բարդ ժամանակը: Դա նոր տարվա, նոր օրվա նախաշեմն է: Հատկապես հենց լուսաբացից առաջ է գիշերը մուռ լինում, ինչպես երբեք: Ուստի և՛ ձեր շուրջը, և՛ ձեր գիտակցության միջից դուրս կլողան անցյալի ուրվականները, անցյալի ձեր վրիպումների ու սխալների ուրվականները՝ չբեռնաթափված էներգիաների տեսքով: Եվ այդ էներգիաները կսկսեն դուրս քաշել ձեզ Ուղուց: Եվ ձեզնից կպահանջվի ձեր կամքի ողջ լարումը, որպեսզի չընկնեք անցյալի էներգիաների թակարդը և մղվեք դեպի նոր օրվա կողմը...

Ձեզ համար շատ դժվար է հավատալ, որ այն, ինչ հիմա ես ասում եմ, ձեզ համար շատ կարևոր ու հրատապ նշանակություն ունի: Հավատացե՛ք ինձ: Ոչ թե տոնական ունայնությունն ու իրարանցումը պետք է գրավեն ձեր ուշադրությունը, այլ մոմի լույսի տակ ընթացող ձեր խորհրդածություններն այն մասին, թե ինչ պետք է դուք անեք և ինչպես հաղթահարեք այն խոչընդոտները, որոնք խանգարում են ձեզ իրականացնելու այն, ինչի համար կոչված եք: Մի՛ փնտրեք այդ խոչընդոտները ձեզնից դուրս: Վերլուծե՛ք ձեր անցած կյանքի ուղին և ջանացե՛ք հասկանալ, թե հենց ձեր ներսում ի՞նչն է խոչընդոտում Ուղով ձեր առաջընթացին:

Դուք գիտեք Ուղին: Այն ձեզ ցույց է տրված: Եվ ձեզնից նրանք, ովքեր պատկերացում են ստացել այդ Ուղու մասին և զգացել ներքին խոչընդոտների ու անկատարությունների հաղթահարման համը, այլևս ես չեն դառնա Ձեռնադրումների այն Ուղուց, դեպի ուր մենք ձեզ կանչում ենք, և որը միակն է, որ կարող է ակնթարթորեն դուրս քաշել ձեզ կյանքի ճահճատիղմից և արագընթաց վերելակի նման ձեզ հասցնել աստվածային գիտակցության գագաթին: Ես ուրախ եմ, որ շատերը մղվել են առաջ: Եվ ուրախ եմ, որ շատերի համար մեր ուղերձներն այն փարոսն են խավարի մեջ, որը ցույց է տալիս Ուղին: Ես ուրախ եմ, որ արթնացել են հազարներն ու տասնյակ հազարները. բայց մեր խնդիրն է արթնացնել միլիոնավոր քնած հոգիների:

Ուստի մենք գալիս ենք և չենք հոգնում աշխարհի պես հինավուրց Ուսմունքը կրկնելուց: Եվ ձեզնից շատերն սկսում են հիշել իրենց նախորդ մարմնավորումների մասին՝ այն սխրանքների մասին, որ իրենք կատարել են հանուն համայն Գոյի: Եվ դա պատահական չէ, քանի որ այժմ մոլորակի վրա մարմնավորվել են այնքան շատ լուսավոր հոգիներ, որ Երկնադրությունը տառացիորեն ամայացել են. քանզի յուրաքանչյուր ոք, ով գտնվում է վարագույրից այն կողմ, ձեզ օգնության է մղվում իր ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ձգտում է նպաստել նոր մտածողության, նոր գիտակցության ծննդին՝ հիմնված ոչ թե անցյալի դոգմաների, այլ հազարամյա Գիտելիքների և Իմաստության վրա: Դուք մոռացել եք այն Իմաստության մասին, որը կանխավ ուսուցանվել է ձեզ մեր մենաստաններում: Եվ այժմ եկել է Աստծո Իմաստությանը վերադառնալու և մարմնական խելքի լաբիրինթոսները լքելու ժամանակը: Ձեր մարմնական խելքը փորձում է ձեզ համոզել ու տանել կեղծ տրամաբանության գաղտնի դռներով ու ստորգետնյա լաբիրինթոսներով: Մակայն մոտակա ժամանակներում ձեր անմիջական խնդիրը կդառնա միակ ճշմարիտ տրամաբանությունը, Աստվածային տրամաբանությունը հիշելը: Եվ որքան էլ այդ

տրամաբանությունը տարբերվի այն ամենից, ինչին ձեր կյանքում բախվում եք, ձեզ կվիճակվի ընդունել այդ տրամաբանությունն ու այն ուսումնասիրել ոչ թե ձեր արտաքին գիտակցությամբ, այլ ձեր սրտում: Քանզի միայն այնժամ, երբ կբացեք ձեր սիրտը և կցուցաբերեք հարկ եղած մղումը, դուք ունակ կդառնաք հասկանալու Աստծո Օրենքն ու Աստծո Իմաստությունը: Միայն նա կարող է համակվել աստվածային տրամաբանությամբ, ով հրաժարվում է երկրային տրամաբանությունից: Եվ հենց դա է ձեր ժամանակի բարդությունը: Քանզի ձեզ վիճակվում է ուղղակի հավատալ մեր խոսքերին և մղվել դեպի ուղղաձիգ ժայռերը՝ երբեմն չունենալով որևէ ապահովության երաշխիք: Եվ միայն այնժամ, երբ ձեր հավատն ամուր է, ձեզ են հանձնվում այն գործիքները, որոնք ձեզ հնարավորություն են տալիս առավելագույն արդյունավետությամբ հաղթահարելու ձեր ուղին: Եվ ահա մի գեղեցիկ պահի դուք կհայտնաբերեք, որ ձեր գիտակցությունն անճանաչելիորեն փոխվել է, և այլևս անցյալին վերադարձ չկա: Եվ ձեր ներսում Աստծո Բանականությունը հաղթանակ կտոնի մարմնական խելքի տրամաբանության նկատմամբ: Մենք կրկնում ենք բաներ, որոնք ակնհայտ են թվում: Եվ այնուամենայնիվ որքան քիչ են այն մարդկային անհատները, որոնք ունակ են ամբողջությամբ հասկանալու և գիտակցելու մեր Ուսմունքը:

Աստվածային ամեն ինչը շատ պարզ է: Եվ հենց այդ պարզությունն է, որ վախեցնում է ու ստիպում կասկածել նրանց, ովքեր առաջվա պես բարդ ուղիներ են փնտրում և կամավոր կերպով իրենք իրենց խցկում այն ուսմունքների թավուտները, որոնք հոգին կործանելուց բացի ոչ մի ուրիշ տեղ չեն տանում: Մենք չենք ահաբեկում, բայց զգուշացնում ենք, որ տիեզերական ժամկետները մոտեցել են, և որ իր դարն ապրած ոչ մի բան Նոր աշխարհում տեղ չի ունենա: Եվ նոր տարվա նախաշեմին դուք պետք է մանրագին վերստուգեք ձեր մտքերը, ձեր գիտակցությունը և ձեր ազատ կամքով ձերբազատվեք այն ամենից, ինչն Աստծուց չէ, և ինչը խանգարում է Ուղով ձեր առաջընթացին: Դուք դեռևս ժամանակ ունեք, բայց այդ ժամանակը սուղ է:

Ես այսօր եղա ձեզ հետ: Ես ուրախ եղա մեր նոր հանդիպման առիթով:

ԵՍ ԵՄ Սանատ Կունարան: ՕՄ

Տեր Սուրիա

21 դեկտեմբերի, 2006 թ.

**Այժմ՝ տարեկան շրջանի հերթափոխության ժամանակ,
հատկապես օգտակար է որոշում կայացնել և ձերբազատվել
այն ամեն ոչ պետքականից, ինչն առկա է ձեր գիտակցության մեջ**

ԵՍ ԵՄ Սուրիան, կրկին եկել եմ, որպեսզի ուղերձ տամ Երկրի մարդկանց: Ես ձեզ մոտ եմ եկել Մեծ Կենտրոնական Արևից՝ հաղթահարելով հսկայական հեռավորություն: Սակայն ես ձեզ շատ մոտ Տիրակալ եմ, քանզի այն ամենը, ինչ վերաբերում է Երկրին և նրա զարգացումներին, գտնվում է իմ վարույթի և խնամակալության տակ, որովհետև Երկիր մոլորակի Էվոլյուցիոն զարգացման յուրաքանչյուր փուլ անմիջականորեն ուղեկցվում և վերահսկվում է իմ կողմից: Ես առաջնորդում և ուղորդում եմ Երկիր մոլորակի Էվոլյուցիան: Ես նա եմ, ով պատասխանատու է մոլորակի վրայի զարգացումների ընթացքի համար: Եվ ես այն էակն եմ, ով մշտապես ձեր կողքին է՝ անկախ մեզ իրարից բաժանող տիեզերական տարածությունից: Այժմ ես եկել եմ, որպեսզի ձեզ պատկերացում տամ ձեր զարգացման ընթացքի և այն փուլի մասին, որում Երկրի մարդկությունն այժմ գտնվում է: Ինչպես միշտ, իմ խոսքերը շատ պարզ կլինեն, սակայն շարադրանքի պարզությունն իր տակ թաքցնում է ձեր ֆիզիկական աչքի համար անտեսանելի այն հազարավոր ու միլիոնավոր Լույսի էակների բարդ աշխատանքը, որոնք հետևում են ձեր մոլորակի Էվոլյուցիային և պատրաստ են օրվա մեջ 24 ժամ ձեզ ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը:

Դուք հիշեցնում եք մանկապարտեզի կրտսեր խմբի երեխաների, որոնք պահանջում են մշտական խնամք և հոգածություն: Եվ դուք կարող եք չտեսնել այն բոլոր մարդկանց, ովքեր հոգում են ձեր մասին. ձեզ համար կերակուր են պատրաստում, լվանում են սպիտակեղենը, մաքրում են շենքը: Այդ մարդիկ մշտապես ձեր կողքին են, չնայած ոչ միշտ եք դուք նրանց տեսնում ձեր ֆիզիկական աչքերով: Մեր ներկայությունը դուք կարող եք զգալ նաև այն արդյունքներով, որոնք ձեզ շրջապատում են: Եվ այն հանգամանքը, որ Երկրի մարդկանց ոչ միշտ խելամիտ գործողություններից անկախ՝ մեզ հաջողվում է ձեր մոլորակի զարգացման համար բարենպաստ պայմաններ պահպանել, վկայում է Համբարձյալ Դասերի ոսկերչական աշխատանքի մասին, ինչն ուղղված է ի շահ Երկրի Էվոլյուցիայի: Մեր աշխատանքը դուք կարող եք գնահատել ոչ միշտ, սակայն մենք մշտապես ձեր կողքին ենք: Դժվարություն է ստեղծում այն, որ մեր աշխարհներն

իրարից բաժանող վարագույրը դեռևս շատ թանձր է, և շատ ու շատ բաներ, որոնք կարող էին և կանխարգելվել ու վնասագերծվել, մենք ի գորու չենք լինում կանխարգելել հատկապես այն պատճառով, որ մեր աշխարհները չափազանց շատ են տարբաժանված և գտնվում են իրարից հեռու՝ ոչ թե ըստ տարածության, այլ ըստ թրթռանքների մակարդակի: Ըստ այդմ, մենք չենք հոգնում կրկնելուց ձեր գիտակցության, ձեր թրթռանքների մակարդակի բարձրացման անհրաժեշտության մասին: Այնժամ, երբ ձեր թրթռանքը կհասնեն ավելի բարձր մակարդակի, մենք կկարողանանք ավելի մոտենալ ձեզ և ցուցաբերել ձեզ ավելի մեծ օգնություն և օժանդակություն: Ուստի, ձեր թրթռանքների բարձրացման նպատակով դուք պետք է օգտագործեք ձեռքի տակ եղած բոլոր միջոցները: Ձեր կյանքում առկա է այն, ինչը ցածրացնում է ձեր թրթռանքները, նաև ձեր կյանքում առկա է այն, ինչը բարձրացնում է ձեր թրթռանքները: Եվ դա վերաբերում է ամեն ինչին: Ե՛վ սննդին, և՛ հագուստին, և՛ այն ամենին, ինչը ձեզ շրջապատում է: Ձեր բնակարաններն ու քաղաքները գտնվում են շատ ցածր էներգետիկական մակարդակի վրա: Ուստի, հոգ տանելով ձեր ապրելու վայրի ու շրջապատի իրադրության մասին, դուք ինքնաբերաբար բարձրացնում եք ձեր թրթռանքների մակարդակը և ունակ եք դառնում զանազանելու ձեր գիտակցության վիճակը, լսելու նուրբ աշխարհի ձայներն ու զգալու մեր ներկայությունը:

Տարօրինակ կլիներ հույս կապել այն բանի հետ, որ դուք կկարողանաք լսել մեզ, եթե շարունակում եք ձեր այն ապրելակերպը, որը բնորոշ է մարդկության զանգվածային գիտակցությանը: Այժմ ձեզ անհրաժեշտ է մոտրել այն մասին, թե ինչով եք շրջապատված, և դա ձեր զարգացման հաջորդ փուլն է. դուք ստիպված կլինեք ավելի շատ ուշադրություն դարձնել այն ամենի վրա, ինչը շրջապատում է ձեզ ձեր կյանքում՝ տանը, աշխատանքի վայրում: Ստիպված կլինեք հոգ տանել ձեր շրջապատի մասին, քանզի եթե ոչ մի ջանք չգործադրեք, որպեսզի հեռու մնաք ցածր թրթռանքներ ունեցող ամեն ինչից, ապա դրանով իսկ դուք կդանդաղեցնեք ձեր զարգացումը և չեք կարողանա հայտնվել տիեզերական հնարավորության այն միջանցքում, որը մոտենում է, և որն արդեն վրա է հասել:

Մենք խոսում ենք անցում կատարելու մասին, իսկ այդ անցումը պետք է ի կատար ածվի ձեր գիտակցության մեջ: Դուք ինքներդ պետք է նախապատրաստեք ձեր սեփական անցումը: Քանզի եթե դուք ունակ չլինեք դա անելու բնական, էվոլյուցիոն ճանապարհով, ապա մենք ստիպված կլինենք ավելի կոշտ միջոցների դիմել՝ գոտիով ծեծելու կամ անկյուն կանգնացնելու պես, որոնք անհնազանդ երեխաներին պատժելու ամենատարածված միջոցներն են: Մի՛ համառեք: Եկել է հասունանալու և այն Օրենքին հնազանդվել սովորելու ժամանակը, որը գործում է համայն տիեզերքում: Այլապես չեք կարողանա լքել մանկապարտեզը և շարունակել ձեր զարգացումը դպրոցում, համալսարանում, ինչպես և չեք կարողանա կատարել այն աշխատանքը, որը ձեր կենսահոսքի նպատակն է հանդիսանում:

Արդ, մի՛ հետաձգեք և ուղղակի հենց հիմա սկսեք վերլուծության ենթարկել այն, ինչը ձեր կյանքում շրջապատում է ձեզ, և ձգտեք ձերբազատվել այն ամենից, ինչի կարիքը չեք ունենա ձեր էվոլյուցիոն զարգացման հաջորդ փուլում: Դադարե՛ք խաղալ երեկվա խաղերը, մղվե՛ք դեպի բերկրալից արևով և բարեփոխումների թարմ քամիով լեցուն նոր օրվա կողմը:

Ձեր գիտակցությունը օդափոխության և արևի տակ չորացման կարիքն ունի: Հեռացրե՛ք ձեր գիտակցությունից բոլոր անպետք մտածներն ու պատկերները, հեռացրե՛ք այն ամենը, ինչն Աստծուց չէ, և ձեր կյանքը կսկսի փոխվել, ինչպես կախարդական փայտիկի մի շարժումով: Թո՛ւյլ տվեք ինքներդ ձեզ վերածվել մարմին առած աստվածների: Թո՛ւյլ տվեք ինքներդ ձեզ գիտակցության բերկրալից վիճակներ ունենալ, թո՛ւյլ տվեք ինքներդ ձեզ հոգ տանել մերձավորների համար, թո՛ւյլ տվեք ինքներդ ձեզ ուղղակի ԼԻՆԵԼ և ուրախանալ կյանքով: Եվ միայն այնժամ, երբ կփոխեք ձեզ շրջապատող ամեն ինչի նկատմամբ ձեր մոտեցումը, կփոխվեն նաև ձեր կյանքի բոլոր հանգամանքները:

Այժմ՝ տարեկան շրջանի հերթագայության ժամանակ, հատկապես օգտակար կլինի որոշում կայացնել և ձերբազատվել այն ամեն ոչ պետքականից, ինչն առկա է ձեր գիտակցության մեջ: Մի՛ մոռացեք Կարմայական Վարչությանն ուղղված նամակների թողության շնորհի մասին: Գրե՛ք նամակներ: Դուք այդ հնարավորությունն ունեք մինչև այս տարվա վերջը: Կարմայական Վարչությանը խնդրեք ազատել ձեզ այն ամենից, ինչից ուզում եք ձերբազատվել: Ի՞նչ հատկանիշներ ու վնասակար սովորություններ են ձեզ ծանրաբեռնում և խանգարում ձեր զարգացմանը: Մոտակա կես տարվա ընթացքում ձեր աղոթքի զորությունն ուղղեք այն բանին, որպեսզի ձերբազատվեք ձեզ այդքան սրտամոտ թերություններից: Եվ կես տարի հետո արդեն չեք ճանաչի ինքներդ ձեզ: Կարմայական Վարչության առջև որքան ավելի մեծ քանակի աղոթքի էներգիա հանձն առնեք առաքել, այնքան ավելի արագ կազատվեք ձեր բոլոր անհարկի կապվածություններից ու կարմայական խնդիրներից:

Եվ այսպես, որպեսզի օգտվեք թողության շնորհից և նամակ հղեք Կարմայական Վարչությանը, դուք պետք է ուշադրությամբ վերլուծեք, թե ինչից կուզենայիք ձերբազատվել առաջին հերթին: Դիմե՛ք Կարմայական Վարչության անդամներին, թվարկե՛ք ձեր խնդրանքներն ու ցանկությունները: Ստանձնե՛ք աղոթքային կամ այլ պարտավորություններ, որոնք մոտակա կես տարվա ընթացքում պետք է կանոնավորապես ի կատար ածեք: Շարադրե՛ք ձեր խնդրանքներն ու պարտավորությունները թղթի վրա, խնդրե՛ք Միքայել Հրեշտակապետին և պահապան հրեշտակներին, որպեսզի ձեր ուղերձը տանեն ըստ հասցեի՝ ուղիղ Կարմայական Վարչություն, ապա վառե՛ք նամակը: Կարող եք ձեզ մոտ պահել այդ նամակի պատճենը, և կես տարի հետո, եթե կատարել եք ձեզ վրա վերցրած պարտավորությունները, ապա տեսեք, թե ինչն է փոխվել: Ես վստահ եմ, որ դուք ազատված կլինեք ձեր մեկ կամ մի քանի գլխավոր թերություններից: Մի՛ մոռացեք երախտագիտության մասին: Հենց որ ազատվեք ձեր խնդիրներից, շնորհակալական նամակ հղեք Կարմայական Վարչությանը:

Ես ափսոսանքով եմ բաժանվում ձեզնից: Քանզի մեծ է ձեզ ամբողջ հնարավոր օգնությունը ցուցաբերելու և այն ամենակարևոր խորհուրդը տալու ցանկությունս, որն առավել օգտակար կլինի ձեզ համար: Հուսով եմ, որ, թեկուզ մասնակիորեն, ես կարողացա տալ մի քանի շատ կարևոր խորհուրդներ:

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ, և մինչ նոր հանդիպումներ:

ԵՍ ԵՄ Սուրբան

Վեհապետ Սերապիս Բեյ
22 դեկտեմբերի, 2006 թ.

**Բռնեք մեր ձեռքը և բաց մի՛ թողեք,
քանի դեռ ձեր Հավատը չի վերականգնվել,
և ձեր կասկածները չեն ցրվել աշնանային մշուշի պես**

ԵՍ ԵՄ Սերապիս Բեյը, կրկին եկել եմ, որպեսզի հերթական ուղերձս տամ, որն օգտակար և անհրաժեշտ է ձեզ համար:

Հիրավի, մեր ամեն մի ուղերձն ավելի ու ավելի անհրաժեշտ է դառնում ձեզ համար: Դուք վերջապես սկսում եք յուրացնել մեր խաղի կանոնները: Իսկ կանոններն այն են, որ պետք է կանոնավոր կերպով կյանքը Աստծո էներգիայի չափաբաժիններ: Եվ հենց որ ներգրավվում եք ձեզնից նոր մարդ կերտելու գործընթացի մեջ, դրանով իսկ ձեռնամուխ եք լինում ձեր վերափոխման գործընթացին՝ աստվածային կերպին համապատասխան: Եվ ամեն անգամ գալով՝ մենք, ձգտում ենք ձեր գիտակցության մեջ ներարկել կենարար բալասանի նոր չափաբաժին: Եվ դուք ունակ եք դառնում վերափոխվելու:

Իրականում ձեր գիտակցության վերափոխման այդ գործընթացը չի պարունակում ոչինչ, որով մեր առաջնորդությամբ իրականացվող ուսուցման գործընթացը տարբերվեր ցանկացած այլ ուսուցման գործընթացից: Եվ ինքներդ եք ընտրում ու որոշում՝ ընկնել մե՛ր, թե՛ տեղեկատվական զանգվածային միջոցների կամ այն անձանց ազդեցության տակ, որոնք իբր մեզ են ներկայացնում, բայց իրենց պարտքն են համարում ձեզ հրամցնել իրենց ուսմունքը:

Մեր դեսպանորդի միջոցով իրականացվող ուսուցումը շատ ու շատ այլ մարդկանց ուսուցումից տարբերվում է աղբյուրի մաքրությամբ: Քանզի միայն այն դեպքում ենք մենք սկսում կանոնավորապես տալ մեր ուսմունքը, երբ հնարավորություն ենք ունենում համոզվելու մեր ներկայացուցչի նվիրվածության ու անկեղծության մեջ: Եվ ամեն անգամ գալով՝ մենք ստիպված ենք լինում հիշեցնել արդեն անցած նյութը, ապա տալ նորի ևս մի փոքր հատված: Քանզի ձեր գիտակցությունը շատ սահմանափակ է, և այն ամենը, ինչ վերաբերում է մեր Աստծո Աշխարհին, մարդկային գիտակցության համար այնքան անսովոր է, որ երբեմն այն ձեզ թվում է տհաճ ու վանող:

Սակայն մենք ոչ մի տեղ չենք շտապում: Մեզ համար անհամեմատ ավելի կարևոր է, որ դուք յուրացնեք թեկուզ ոչ մեծ ճշմարտություններ, քան թե արագացված տեմպերով սլանաք չփորձված ու չտրորված ճանապարհներով, որոնք առատորեն հրամցվում ձեզ: Ես նկատի ունեմ բազմաթիվ կեղծ ուսմունքներն ու աղանդները: Հավանաբար ձեր գիտակցության մեջ կտարակուսեք, թե ահա նորից խոսվում է միակ ճշմարիտ ու իսկական Ուսմունքի մասին՝ մերժելով մնացած բոլորը, որոնց հետ առնչվում եք ձեր կյանքում: Թույլ տվեք ձեզ հետ չհամաձայնել, քանզի Ուսմունքը սփռված է համարյա բոլոր ուսմունքներում և առկա է տարբեր աղբյուրներում: Սակայն ամբողջ հարցը ճշմարտության ու ստի հարաբերակցության և այն հնարավորության մեջ է, որ զանազանվի, թե

որտեղ է ճշմարտությունը և որտեղ՝ սուտը: Մենք ձեզ սովորեցնում ենք զանազանել: Մենք չենք ասում, թե ամեն ինչ հալած յուրի տեղ ընդունեք: Տրված Ուսմունքը դուք կարող եք վերլուծել ձեր արտաքին գիտակցությամբ, առնել դրա համը, համեմատել ուրիշ ուսմունքների հետ և հանգել որոշակի եզրակացության: Միևնույն է, վաղ թե ուշ ձեզ կվիճակվի ընտրություն կատարել և ընտրել այն Ուղին, որը մենք ենք ձեզ ուսուցանում: Քանզի այդ Ուղին ամենակարճն է և ձեզ համար կանխորոշված է հենց ձեր էվոլյուցիոն զարգացման ընթացքով:

Մենք Իմաստության այն Տիրակալներն ենք, ովքեր վաղեմի ժամանակներում ձեզ օժտել են իրենց գիտակցությամբ: Ձեր ներսում առկա է մեր մասնիկը: Եվ, ուզեք թե չուզեք, դուք պետք է վերադարձնեք մեզ այն, ինչը ձեզ փոխ է տրված, որպեսզի կարողանաք զարգանալ: Եկել է ժամանակը, երբ ինքներդ պետք է ձեր մեջ աճեցնեք աստվածային բանականություն և վերադարձնեք մեզ այն հենակները, որոնք մենք ենք ձեզ տվել: Այժմ դուք ապաքինվում եք, ձեր գիտակցությունը նորից ձեռք է բերում աստվածային մաքրություն, և կարող եք առաջ գնալ՝ առաջնորդվելով մեր Ուսմունքով ու մեր սկզբունքներով: Սակայն ձեզնից ոչ բոլորն են հասել զարգացման պահանջվող մակարդակին: Ուստի մենք ստիպված ենք լինում կրկին ու կրկին գալ և տալ մեր Ուսմունքը: Այս անգամ այն նախատեսված է բավականաչափ լայն լսարանի համար և հասկանալի է շատերին: Մենք լայնորեն ուռկան ենք ձգում և ձգտում ենք ներգրավել հնարավորինս շատ հոգիների, որպեսզի նրանք, որքան հնարավոր է, արագ գտնեն ճշմարիտ Ուղին և վերադառնան Տուն: Մենք ձեզ չենք ստիպում ընթանալ մեր Ուղով, այլ պարզապես ասում ու իրազեկում ենք, որ այդ Ուղին ամենակարճն է: Բայց այդ Ուղին ընտրում և դրանով ընթանում եք ինքներդ ձեր կամքով:

Ամեն անգամ չեմ դադարում զարմանալուց, թե ինչպես շատ մարդիկ, կարոտելով ճշմարիտ Ուսմունքին, գալիս են մեր դասարաններում սովորելու, և ամեն անգամ գտնվում են հազարավոր ու միլիոնավոր տարբեր պատճառներ ու պատճառաբանություններ, որ աստիճանաբար հեռանան Ուղուց: Երբ մարմնավորումների միջակայքում նրանք վերադառնում են մեր եթերային դասասենյակները, ապա շատ են զարմանում իրենց կուրության և այն բանի վրա, թե ինչպես էին մեկը մյուսի հետևից սխալ ընտրություններ կատարում և տեսնում բոլորովին ոչ այն, ինչը բացվում էր իրենց աչքերի առջև, այլ միայն այն, ինչ իրենք էին ուզում տեսնել: Դե ինչ, դուք սխալվելու իրավունք ունեք:

Կարող եք ընթանալու փորձ անել, վայր ընկնել, վեր կենալ և նորից ընթանալ: Իսկ ես պարզապես ուզում եմ ձեր ձեռքը հանձնել վստահության ճոպանը: Ես ուզում եմ ձեզ տալ իմ Հավատի, իմ մղման ողջ ներուժը և իմ նվաճումների ողջ պաշարը: Ես շատ եմ ցանկանում ձեզ օգնել: Ցանկանում եմ, որ ձեզնից նրանք, ովքեր ապրում են գիտակցության բացասական վիճակներ և հաճախակի կասկածներ են ունենում ընտրած ուղու ճշմարտացիության վերաբերյալ, ավելի հաճախ դիմեն ինձ և գրուցեն ինձ հետ: Դուք ինձ կարող եք գտնել Լուստրի վերևում գտնվող մենաստանում: Քնելուց առաջ մտախայեք իմ մենաստանի պատկերը և փորձեք ձևակերպել ձեր հարցերը, հատկապես այն, ինչը ձեր ներսում կասկած է հարուցում: Ես կաշխատեմ ձեզ հետ ձեր քնի ընթացքում, և առավոտյան դուք թեթևացում կզգաք, որովհետև ես կգտնեմ հենց այն խոսքերն ու փաստարկները, որոնք ձեզ օգտակար կլինեն ձեր Ուղու այդ հատվածում: Ես կմեկնեմ ձեզ իմ ձեռքը, և օրվա ընթացքում դուք կհիշեք, թե ինչպես էիք ամուր բռնել իմ ձեռքն ու չէիք ուզում բաց թողնել:

Ես ձեզ կցուցաբերեմ հնարավոր ամբողջ օգնությունը, եթե միայն օգնություն խնդրեք: Քանզի այն դեպքում, երբ ձեր հպարտությունը թույլ չի տալիս օգնություն խնդրել, մենք չենք կարող ձեզ օգնել: Մի՛ երկնչեք, ձեր գիտակցությունից հեռացրեք այն ամենը, ինչ խանգարում է ձեզ, որ խնդրեք մեր օգնությունն ու օժանդակությունը: Ձեզ հայտնի է, որ համայն տիեզերքի Օրենքով ձեզ նվիրված է կամքի ազատություն, և մենք չենք կարող խախտել ձեր ազատ կամքն ու ձեզ օգնություն ցուցաբերել՝ առանց ձեր խնդրանքի ու կանչի: Բայց հենց որ կանչն արտաբերեք, մենք պարտավոր ենք արձագանքել: Եվ այդ դեպքում մենք կցուցաբերենք ամբողջ հնարավոր օգնությունն ու օժանդակությունը: Մի՛ անտեսեք մեր օգնությունը հատկապես հենց հիմա՝ տարվա վերջին, երբ հին բացասական էներգիաներն ակտիվացել են, և ձեզնից շատերը հայտնվել են ընկճվածության և անելանելիության ծանր վիճակում:

Մենք ձեզ օգնության ձեռք ենք մեկնում: Մենք ուզում ենք և կարող ենք ձեզ օգնել: Բռնե՛ք մեր ձեռքը և բաց մի՛ թողեք, քանի դեռ ձեր Հավատը չի վերականգնվել, և ձեր կասկածները չեն ցրվել աշնան մշուշի պես:

Իսկ այժմ ես պատրաստ եմ տալու ևս մեկ կարևոր խրատ, որն, անշուշտ, օգտակար կլինի ձեզ: Այն վերաբերում է ձեր նվիրվածությանն ու ձեր Սիրուն: Խնդրում եմ, խթանե՛ք ձեր մեջ նվիրվածությունն ու Սերը: Մի՛ հապաղեք շնորհակալ լինել մեզ այն պահերին, երբ զգում եք տրամադրության անառիթ վերելք և պատրաստ եք լինում գրկելու ու սիրելու ողջ աշխարհը:

Առաքել՝ մեզ ձեր Սերը: Եվ այնժամ, երբ ձեր եղբայրակիցներից որևէ մեկը զգա մեր օգնության կարիքը, մենք ձեր Սիրո ու երախտագիտության հոսքը կուղղենք այդ կարիքավոր սրտին: Եվ այդպիսով դուք կկարողանաք օգնել մեկը մյուսին: Այդպիսով մենք կկարողանանք բազմապատկել Բերկրանքն ու Սերը ձեր աշխարհում:

Ես ձեզ եմ առաքում իմ Սերն ու օժանդակությունը:

ԵՍ ԵՄ Սերասլիսը

Բաբաջի

23 դեկտեմբերի, 2006 թ.

**Մենք գալիս ենք, որպեսզի ձեզ պատմենք այն սկզբունքների մասին,
որոնց հիման վրա կառուցվում է Համայնքը**

ԵՍ ԵՄ Բաբաջին, կրկին եկել եմ, որպեսզի աշխարհի պես հինավուրց Ուսմունք տամ: ԵՍ ԵՄ եկել այս օրով, և արևը հայտնի դարձրեց իմ գալուստը*:

Ես երջանիկ եմ ընձեռված հնարավորությամբ: Քանզի մեր հաղորդակցության կայացման ամեն մի հնարավորությունը դեռևս նշանակալից ջանքեր ու զգալի էներգետիկական ծախսեր է պահանջում: Բայց մենք ընդառաջ ենք գնում ձեզ և հաղթահարում ենք մեր աշխարհների թրթռանքների տարբերության հետ կապված բոլոր տարածական ու ժամանակային դժվարությունները:

Ես եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ձեր գիտակցության մեջ ամրապնդեմ հինավուրց ճշմարտություններն ու դարերի իմաստությունը: Եվ այդ ճշմարտությունն ու իմաստությունը կայանում են նրանում, որ դեռ երբեք որևէ բան, որն իրեն բաժանում է աշխարհից, չի կարողացել երկար գոյատևել: Ամեն անգամ գտնվել են իմաստուններ ու մարգարեներ, որոնք հեռացել են աշխարհից և միայնության մեջ փորձել են գտնել Աստծո ճշմարտությունն իր ամբողջության մեջ: Նրանց ուղին հեշտ չի եղել, այլ լի է եղել բազմատեսակ զրկանքներով: Նրանցից շատերը պարզապես զոհվել են՝ այդպես էլ չճանաչելով Աստծո ճշմարտությունն ու նույնիսկ չշոշափելով այն: Դա մենակյացների ուղին է, առաջագնացների ուղին: Նրանցից շատ քչերին է հաջողվել անասելի ջանքերի գնով շոշափել իրենց սրտի խորքում թաքցված Աստծո ճշմարտությունը: Եվ արդյունքում ամեն անգամ աշխարհն ստացել է մի նոր փրկիստփայի, մի նոր իմաստունի կամ մարգարեի, որը կարողացել է ուրիշ հազարավոր ու միլիոնավոր մարդկանց հաղորդակից դարձնել իր նվաճած ճշմարտությանը: Ճշմարտությանը հասու դառնալն ու այդ ճշմարտությունն ուրիշ մարդկանց հասցնելը այն երկու գործընթացներն են, որոնք փոխարացնում են իրար և առանց մեկը մյուսի չեն կարող գոյություն ունենալ: Քանզի հնարավոր չէ տեր դառնալ Երկնքի անհաշիվ հարստություններին և այդ հարստությունները չկիսել ուրիշների հետ: Ամեն անգամ, երբ որևէ մեկը փորձել է երկնային հարստությունները ձեռք բերել միայն անձամբ իր համար ու իր զարգացման համար, նրա այդ փորձն ավարտվել է անհաջողությամբ: Աստված կամենում է, որ մարդկության զարգացումն ընթանա քիչ թե շատ ճշմարիտ յիշմով, և ձեր աշխարհում հնարավոր չէ գոյատևել, եթե դուք ձեր թրթիռների մակարդակով չափազանց շատ եք տարբերվում ձեր շրջապատից:

Ուստի ինչպես ես, այնպես էլ բոլոր Համբարձյալ Դասերը գալիս են, որպեսզի ուսուցանեն ձեզ: Քանզի համայն տիեզերքում անհնարին է լինել մեկուսացված: Վաղ թե ուշ ամեն ոք, ով մեկուսանում է, զրկվում է գոյատևելու հնարավորությունից:

Այսօր ես կփորձեմ ձեր գիտակցությանը հասցնել Համայնքի սկզբունքները, այն սկզբունքները, որոնք թույլ են տալիս Համայնքի հիման վրա ձեր աշխարհում տարածել մեր Ուսմունքը: Դարերի փորձություն անցած Համայնքի սկզբունքով ամրապնդվում են նոր գիտելիքները, և Երկրի բնակիչների բարոյականությունը բարձրացվում է նոր մակարդակի վրա: Ամեն անգամ, երբ Համայնք է ստեղծվում, նրա կոչումը լինում է այն, որ որակական նոր մակարդակով ամրապնդի այն գիտելիքները, որոնք մարդկության հերթական զարգացման փուլում տրվում են Երկնքից: Համայնքն ինքնին ոչ մի գործնական արժեք չի ներկայացնում: Համայնքն արժեք ունի միայն այն դեպքում, երբ բավարարում է Երկնքից տրված խնդիրներին: Եթե համայնք ասելով՝ հասկացվում է միևնույն տարածքում մարդկանց իրար հետ ապրելը, ապա դրանով իրականացվում է համայնքի կեղծ սկզբունք: Իրական Համայնքը կարող է միաբանվել միայն այնպիսի էակների շուրջ, ովքեր կրում են մեր ազդեցությունն ու վստահությունը: Քանզի այն դեպքում, երբ Համայնքը կառուցվում

Է մեր սկզբունքներով, մենք Համայնքի թափի մեջ Աստծո Էներգիա ենք ներարկում, որն անհրաժեշտ է զարգացման ու օժանդակության համար:

Իսկ այժմ ես խորհուրդ եմ տալիս ձեր սրտերում խորհրդածել այն ամենի մասին, ինչ ասվեց ձեզ այսօր և ինչ երբևէ կարդացել եք Համայնքի ու համայնականների մասին:

Հենց որ Համայնքից հեռանում է նա, ով ֆիզիկական ոլորտում ներկայացնում է մեր շահերը, Համայնքն աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը և քայքայվում: Դեռևս չկա այն բավարար մեխանիզմը, որը թույլ կտար Համայնքին գոյատևել, երբ չկա այն հիմքը՝ Լույսի այն կիզակետը, որը մենք ամրացնում ենք մեր դեսպանորդի սրտում: Դա նման է այն բանին, որ տունը չի կարող գոյություն ունենալ խստաշունչ ձմռան պայմաններում և բնակելի լինել, եթե նրանում բացակայում է ընտանեկան օջախի կրակը:

Մենք գալիս ենք, որպեսզի պատմենք ձեզ այն սկզբունքների մասին, որոնց հիման վրա կառուցվում է Համայնքը: Համայնքի կառուցման գործը շատ աստիճանական է: Սկզբում նուրբ ոլորտում կազմվում է մատրիցա: Եվ այդ մատրիցան ամբողջովին համապատասխանում է աստվածային կերպերին՝ Համայնքի ստեղծման աստվածային սկզբունքներին: Այնուհետև տիեզերական որոշակի ժամանակահատվածի ընթացքում, երբ բոլորաշրջանները հաջորդում են իրար, այդ մատրիցան սկսում է իջնել ֆիզիկական ոլորտ և ի հայտ գալ տարածքի, շինությունների և հիմքում դրվող գույտ մարդկային կանոնների ու սկզբունքների տեսքով: Ամեն անգամ Համայնքը ստիպված է լինում հարմարվել այն երկրի պայմաններին, որը մենք ընտրում ենք Համայնքի շինարարության համար: Ընդ որում, Համայնքի շինարարության պայմանները մեր կողմից ձևավորվում են նուրբ ոլորտում, որից հետո իջեցվում են տարածության ու ժամանակի մեջ: Այժմ Համայնքի շինարարությունն ավարտված է նուրբ ոլորտում, և մենք սպասում ենք այն բանին, որ մոտակա ժամանակում Համայնքը սկսի իջնել ֆիզիկական ոլորտ: Դա չի լինի նյութականացում լրիվ իմաստով: Դրա համար մեծ քանակի Էներգիա է պահանջվում, որն առայժմ մենք ի գործու չենք տալու: Բայց մենք հաճույքով կօգտվենք ձեր օգնությունից ու ձեր այն ռեսուրսներից, որոնք դուք պատրաստ եք գոհաբերել Համայնքի շինարարության համար: Բնական է, որ այդ Համայնքում չեն կարող հայտնվել բոլոր ցանկացողները: Համայնքն իր դռները կբացի միայն այն մարդկանց առաջ, որոնց թրթռներն ու մղումները կհամապատասխանեն մեր պլաններին ու հույսերին հետ:

Ես շատ երջանիկ կլինեի, եթե մի քանի տարվա ընթացքում նման Համայնքն իրականություն դառնար Ռուսաստանի տարածքում՝ մի երկրում, որտեղ մենք այժմ սկսում ենք մեր շինարարությունը: Մի երկրում, որին մենք տվել ենք մեր հովանավորչությունը, և որը պարտավոր է մոտակա ժամանակներում իրականություն դարձնել այն սկզբունքները, որոնք մենք կցանկանայինք հետագայում հաստատել աշխարհի բոլոր երկրներում:

Ես շատ ուրախ եմ, որ այսօր ինձ հաջողվեց լուսաբանել մի քանի հիմնահարցեր, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ձեր սրտերում և ուղեղներում ամրագրվի Համայնքի գիտակցությունը: Շատ ուրախ եմ, որ դա տեղի ունեցավ արեգակնային տարեկան շրջանի հերթագայման կարևոր աստղաբաշխական պահին: Արդ, նոր գիտակցությունն ու նոր մտածողությունը, որոնք կապված են Համայնքի հետ, կանեն ձեր գիտակցության մեջ հյուսիսային կիսագնդում արևային օրվա աճին գուզընթաց: Եվ այն ամենը, ինչ խոչընդոտում է նման Համայնքի ստեղծումը, կհավի, ինչպես գիշերվա խավարն է հալվում արևածագի պահին:

Ես խոսեցի Համայնքի մասին և ձեր գիտակցությանը հասցրի որոշ համայնավարական սկզբունքներ: Ես ուրախ կլինեմ, եթե այն, ինչ ցանկել է, կարողանա ծլել, ընձուղներ արձակել և բերք տալ՝ տարվա իր ժամանակին համապատասխան:

Ավելի ուշ, երբ դուք կվերադառնաք այս ուղերձը կարդալուն, ձեր գիտակցության մեջ ի հայտ կգան նորանոր մանրամասներ: Եվ դուք կկարողանաք հասկանալ այն մտահղացումը, որը մենք ունենք և ներարկում ենք ձեր սրտերի մեջ մայր Ռուսաստանի հողում:

Ես երջանիկ եմ, որ հատկապես հիմա տվեցի այս Ուսմունքը:

Իսկ այժմ ստիպված եմ հրաժեշտ տալ ձեզ, բայց չեմ կորցնում ձեզ հետ կրկին հանդիպելու իմ հույսերը: ՕՍ

ԵՄ ԵՄ Բարաշին

*Առավոտից սկսած՝ մթամած էր, ձյուն էր գալիս: Այն պահին, երբ եկավ Բարաշին, արևի ճառագայթները ճեղքեցին ամպերը, և արևը երևում էր մինչև թեյադրության ավարտը, որից հետո նորից մթնոլեց ու սկսեց ձյուն գալ:

Վեհապետ Լանելյոն*
24 դեկտեմբերի, 2006 թ.

Եկել է ոչ թե Աստծո մասին խոսելու, այլ ձեր կյանքերում Աստծո Օրենքին համապատասխան գործելու ժամանակը

ԵՄ ԵՄ Լանելյոն՝ այս օրով ձեզ այցի եկածը, որպեսզի տամ հերթական ուղերձը: Մեր ուղերձները լավ են նրանով, որ հնարավորություն ունեն ազդելու լայն լսարանի վրա: Մենք տալիս ենք հավասարակշռված տեղեկատվություն, որն ընդունակ են յուրացնելու միլիոնավոր մարդիկ: Եվ մենք անկեղծորեն հույս ենք կապում, որ մոտ ժամանակներում միլիոնավոր մարդիկ կկարողանան հավատ ընծայել մեզ՝ Համբարձյալ Վեհապետներին, և ձեռնամուխ կլինեն մեր առաջնորդությամբ փոխակերպության ենթարկելու ֆիզիկական ոլորտի պատրանքը: Վերջապես եկել է ժամանակը, որ ֆիզիկական ոլորտի փոխակերպություններն իրականանան Աստծո՝ այդ ժամանակին վերաբերող Մտաւորացմանը համապատասխան: Ընթացիկ դարաշրջանը փոխակերպություններ է պահանջում մարդկանց կյանքի բոլոր ոլորտներում: Եվ դա վերաբերում է ոչ միայն հոգևոր ոլորտին, այլ նաև քաղաքականությանը, տնտեսությանը, կրթությանը, առողջապահությանը: Ամեն ինչ պետք է ձևափոխության ենթարկվի այն նոր էներգիաների ու նոր թրթռանքների ազդեցությամբ, որոնք իջանում են ֆիզիկական ոլորտ:

Եվ եթե նախկինում որոշակի փոխակերպությունների իրականացման համար պահանջվում էին հարյուրամյակներ, ապա այժմ անհրաժեշտ փոփոխությունները տեղի կունենան հաշված տարիների ընթացքում: Քանզի այդպիսին է ժամանակի պահանջը, և այդպիսին է Բարձրագույն Տիեզերական Խորհրդի կողմից Երկիր մոլորակի համար կայացված որոշումը: Ուստի ձգտեք փոխել ինքներդ ձեզ և, որքան հնարավոր է, շուտ հրաժեշտ տվեք ձեր այն որակներին ու թերություններին, որոնք խանգարում են փոխակերպությունների Ուղով ձեր առաջընթացին: Միայն այնժամ, երբ կմաքրեք ինքներդ ձեզ անցյալի էներգիաներից և կձերբազատվեք կարմայական նստվածքներից, դուք կկարողանաք տեսնել այն խնդիրները, որոնք կանգնած են ձեր առջև և ենթակա են կենսագործման: Բայց, քանի դեռ ներքուստ դիմադրում եք ու համառում՝ հետամուտ լինելով ձեր նախկին մտածողության կարծրատիպերին ու հին թերություններին, դուք չեք կարողանա ընթանալ դեպի այն Նոր Օրվա հիասքանչ հորիզոնները, որը կանխատեսված է ձեզ համար:

Մի՛ վախեցեք անկեղծորեն ինքներդ ձեզ, ձեր թերություններին նայելուց: Եթե իմ այս խոսքերը ձեզ գրգռում են, և ձեզ թվում է, թե դուք տեղով մարմնացյալ կատարելություն եք, և ոչ ոք, ներառյալ նաև Համբարձյալ Վեհապետները, իրավունք չունի ձեզ խրատելու, ուրեմն ձեր Ուղով վրա ձեզ պակասում է ամենակարևոր հատկանիշը՝ աստվածային խոնարհությունն ու հնազանդությունը: Ձեզ թվում է, թե դուք ձեր ճակատագրի տերն եք և կարող եք ինքներդ ձեզ հետ անել այն ամենն, ինչ ձեր խելքին փչում է: Սակայն դուք պետք է ըմբռնեք աստվածային տրամաբանությունը: Ձեր Հայր Աստված շատ հոգատար ու սիրող ծնող է: Երկնային Հոր հարցում ձեր բախտը շատ է բերել: Եվ քանի որ Նա շատ է սիրում ձեզ, ապա չի կարող թույլ տալ, որ այսուհետ ևս դուք շարունակեք ձեր գործողություններով վնաս հասցնել ձեր հոգուն: Հավատացե՛ք ձեր Հորը և հնազա՛նդ եղե՛ք Նրա Կամքին:

Տիեզերական բոլորաշրջանների հերթագայությունը ժամանակի անխուսափելի պահանջն է: Ըստ այդմ՝ ինչը ձեր ներսում խանգարում է Մեծ Անցումին, պետք է հաղթահարվի հենց ձեր կողմից: Մի՛ համառեք. միայն այնժամ, երբ ինքներդ ձեր ներսում որոշում կկայացնեք ոչ պետքական ամեն ինչից ձերբազատվելու մասին, որն իր դարձն ապրել է ու բացասական բնույթ է կրում, հետո կխնդրեք Աստծուց, որ Նա ազատի ձեզ ձեր կարմայական բեռից, ապա նոր միայն Համբարձյալ Դասերը կշտապեն ձեզ օգնության հասնել և օգնել, որ ազատվեք բացասական էներգիայի բազմադարյան շերտանստվածքներից:

Իսկ եթե համառեք և շարունակեք մնալ ձեր թերություններով ու կործանարար սովորություններով, ապա ձեզ ոչ ոք չի կարողանա օգնել՝ ո՛չ Աստված, ո՛չ էլ որևէ մարդ:

Չղջանքն ու խոստովանանքը միշտ էլ եղել են այն միջոցները, որոնք հոգուն թույլ են տվել մաքրվել և ընթանալ աստվածային Ուղով:

Ոչ միշտ է պատահում, որ Աստծուց շատ խոսող մարդիկ նաև ընթանում են աստվածային Ուղով: Ոչ միշտ է լինում, որ օրվա մեծ մասն աղոթքով անցկացնող մարդը նաև ընթանա աստվածային Ուղով:

Եկել է ժամանակը, որ ձեզնից յուրաքանչյուրն իր կյանքում կիրառի այն պատվիրանները, որոնք տրվել են մարգարեների կողմից, և այն պատվիրանները, որոնք դեռևս Մովսեսի ժամանակներում գրվել են քարե սալիկների վրա*:

Վերլուծեք այդ պատվիրանները, ինչպես նաև վերլուծեք ձեր վարքը: Ձեր շարքերում արդյոք շատե՞րը կան, որ իրապես իրենց կյանքում պահպանում այդ պատվիրանները: Շատե՞րն են արդյոք իրենց կյանքում վարվում Աստծո Օրենքին համապատասխան:

Եկե՛ք է ոչ թե Աստծո մասին խոսելու, այլ ձեր կյանքերում Աստծո Օրենքին համապատասխան գործելու ժամանակը:

Եվ ձեզնից շատերի համար դա անհամեմատ ավել բարդ կլինի, քան պաշտամունքի գնալը, աղոթելն ու պաս պահելը: Սակայն դա՛ է ժամանակի պահանջը: Դադարե՛ք կեղծել գոնե ինքներդ ձեր առջև: Մենության մեջ ձեզ պահեք այնպես, ինչպես կպահեիք ուրիշ մարդկանց ներկայությամբ, և ուրիշ մարդկանց ներկայությամբ ձեզ պահեք այնպես, ինչպես կպահեիք, եթե ձեր առջև տեսնեիք Հայր Աստծուն:

Ձեր բոլոր արարքներն ու մտքերն անխոնջ կերպով ձեր կյանքի ամեն թույլին ու ամեն վայրկյանին գրի են առնվում ակաշայի ժամանակագրություններում: Եվ այնժամ, երբ ունակ կլինեք տեսնելու այդ ժամանակագրությունները, ակնթարթորեն կիմանաք, թե այն, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում, ինչու՞ է հենց այդպես տեղի ունենում և ոչ այլ կերպ: Եվ՝ թե ինչու՞ են ձեզ հետապնդում փորձանքներն ու դժբախտությունները:

Բոլոր այն փորձանքները, որոնց բախվում եք ձեր կյանքերում, անցյալում դուք ինքներդ եք ստեղծել: Կարմայի Օրենքը գործում է անթերի:

Ըստ այդմ՝ այն բանի գիտակցումը, որ ձեր կյանքերում դուք բախվում եք անցյալի ձեր սեփական արարքների հետևանքների հետ, և որ ձեր կյանքում տեղի ունեցածի համար ձեզնից բացի ոչ ոք մեղավոր չէ, կլինի ձեր կյանքի ամենամեծ նվաճումը: Եվ ձեր կյանքի ոչ մի իրադարձություն իր նշանակությամբ չի կարող համեմատվել այդ հայտնագործության հետ, որը դուք կանեք ձեր սրտում:

Եվ այնժամ, երբ կտեսնեք Մեծ Օրենքի գործողությունը, կհասկանաք, որ Աստված շատ ողորմած է ձեր նկատմամբ: Քանզի այն, ինչ արել եք անցյալում, պետք է որ առաջ բերեր ավելի մեծ գրկանքներ, հիվանդություններ ու տհաճություններ: Ձեզ կգարմացնի Աստծո անսահման ողորմածությունը, և դուք ամբողջովին խոնարհ ու հնազանդ կդառնաք Նրա Կամքին և Նրա Օրենքին:

Միայն այն դեպքում, երբ դուք կկործանվեք ձեր սրտում, ունակ կդառնաք ճանաչելու Երկնային Արքայությունը և ընթանալու Ուղով՝ առանց շրջվելու և հեռու փախչելու այն պարտավորություններից, որոնք հանձն եք առել ձեր մարմնավորվելուց առաջ:

Իսկ հիմա ես կարող եմ հիշեցնել ձեզ, որ մոտենում են Ծննդյան տոները***: Մարդկության արևմտյան մասը նշում է այդ լուսավոր տոնը՝ որպես տարվա ամենանշանակալից տոներից մեկը: Ուստի այդ տոնի նախօրյակին խորհրդածե՛ք այն մասին, որ ձեզնից յուրաքանչյուրի ներսում կարող է Քրիստոս ծնվել, եթե դուք ձեր Բարձրագույն Ես-ին թույլ տաք գործելու ձեր միջոցով: Ձեր Բարձրագույն Ես-ը չի կարող գործել ձեր միջոցով, քանի դեռ համառում եք և չեք ենթարկվում համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքին: Իսկ այն պահից սկսած, երբ ձեր սրտում կորոշեք հետևել Օրենքին, ձեր Բարձրագույն Ես-ը հնարավորություն կստանա գործելու ձեր միջոցով, և ձեր գործողությունները կնմանվեն մարմին առած Քրիստոս-Էակի գործողությունների:

Ես ձեզ լուսավոր Քրիստոսի Ծննդյան տոն եմ մաղթում և ցանկանում, որ ձեզնից յուրաքանչյուրը գտնի իր մեջ Քրիստոսին...

ԵՄ ԵՄ Լանելլոն՝ ձեր նկատմամբ սիրով լի

*Վերջին մարմնավորման ժամանակ Վեհապետ Լանելլոն եղել է Մարկ Փրոֆեթը Ամերիկայում: Պաշտելի Լանելլոն իր մասին պատմում է 2005 թ.-ի ապրիլի 6-ին տրված իր «Մենք մեր Լույսի կիզակետը տեղադրում ենք Ռուսաստանի հողում» թելադրության մեջ:

**Մովսեսի 10 պատվիրանները Հին կտակարանում:

***Արևմտյան քրիստոնյա աշխարհը Ծննդյան տոնը նշում է դեկտեմբերի 25-ին: Ուղղափառները Քրիստոսի ծնունդը նշում են հունվարի 7-ին, իսկ Հայ առաքելական եկեղեցին՝ հունվարի 6-ին:

Հաութամա Բուդդա

25 դեկտեմբերի, 2006 թ.

Ամսի 23-ի թողության շնորհին ավելանում է ևս մեկ կարևոր կետ

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան՝ կրկին ձեզ այցի եկածը, որպեսզի հերթական ուղերձը տամ՝ հիմնված Սիրո ուժի վրա, որն ինչպես ես, այնպես էլ մյուս Համբարձյալ Վեհապետները տաժում ենք ձեր՝ Երկրի վրա մարմնավորվածներիդ նկատմամբ: Շատ բարդ ժամանակներ են, և տարվա

վերջնամասն էլ առանձնահատուկ բարդ ու կարևոր ժամանակահատված է: Հատկապես արեգակնային բոլորաշրջանի փոխման սահմանագծի վրա ենք մենք գալիս և ուսուցանում ձեզ, քանի որ այն ամենը, ինչ մենք հավելում ենք աճող արևին, իր անն է ստանում զարնանն ու ամռանը՝ արեգակնային շրջակետերի վրա հասնելուն պես, ինչպիսիք են զարնանային գիշերահավասարի ու ամառային արևադարձի օրերը: Ավարտվում է հինն ու սկսվում նորը, իսկ այդ նորը կատարելապես հիասքանչ է: Ես այդ մասին կարող եմ ասել, քանի որ անմիջական հարաբերություն ունեմ այն ապագայի հետ, որը շատ շուտով վրա կհասնի: Մենք ուրախ ենք, որ գտնվեցին բավարար քանակով մարդկային անհատներ, ովքեր ցանկացան ծառայել մեզ՝ Համբարձյալ Վեհապետներին, և մենք ձեզ հետ միասին կարողանում ենք կյանքում իրականացնել մեր պլանները: Ես մեծ հուզմունքով եմ այժմ ներկայացել ձեզ, քանի որ Կարմայական Վարչության այսօրվա նիստում տեղի ունեցավ շատ կարևոր իրադարձություն, որը չի հապաղի իր ազդեցությունը թողնել Երկրի ամեն մի բնակչի կյանքի վրա: Այսօրվա նիստում որոշում է ընդունվել, որ գիտակցության զարգացման որոշակի մակարդակի հասած ցանկացած երկրաբնակի թույլատրվի այն էներգիայի մի մասը, որը նա կուտակել է աղոթքների կամ Կյանքին ծառայելու ընթացքում, ներդնել այն բանի համար, որ Երկրի բնակչության մնացյալ մասը նույնպես կարողանա հնարավորինս արագ հասնել գիտակցության այն մակարդակին, որն անհրաժեշտ է ունենալ Էվոյուցիոն զարգացման այս փուլում: Այս կարևոր որոշումը մենք կցում ենք ամսի 23-ի թողության շնորհին: Ուստի սկսած հաջորդ տարվա հունվարի 23-ից՝ ի լրումն այդ կարևոր թողության շնորհի դրույթների, որոնք կշարունակեն գործել ողջ հաջորդ տարվա ընթացքում, ավելանում է ևս մեկ շատ կարևոր կետ. ձեզնից յուրաքանչյուրը ցանկության դեպքում կարող է իր ձեռք բերած էներգիայի մի մասով փոխակերպության ենթարկել որևէ ուրիշ մեկի կարման, որն իր զարգացման դանդաղ ընթացքի պատճառով դեռևս ունակ չէ հասկանալու շատ աստվածային ճշմարտություններ: Դա կարող է լինել ձեր մերձակիցը, ձեր հարազատը կամ նույնիսկ բոլորովին անծանոթ մեկը, որի նկատմամբ դուք առանձնահատուկ մոտեցություն եք զգում: Կարող եք հաջորդ տարվա ամեն ամսվա 23-ին կոչ հղել և փոխակերպության ենթարկել կարմայի այն մասը, որը խանգարում է, որ ձեր ընտրած մարդը հասնի իր գիտակցության հաջորդ մակարդակին: Առայժմ ձեզնից յուրաքանչյուրն այս թողության շնորհը կարող է կիրառել ընդամենը մեկ մարդու նկատմամբ: Օրինակ՝ ձեր ամուսնու, ձեր երեխայի, ծնողներից որևէ մեկի կամ որևէ այլ մարդու նկատմամբ, որին որոշել եք օգնել: Մենք անկեղծորեն հույս ենք տածում, որ այս նոր աստվածային հնարավորությունը թույլ կտա մեզ ձեզ հետ միասին Է՛լ ավելի արագ տեմպերով բարձրացնելու Երկրի մարդկանց գիտակցության ընդհանրական մակարդակը: Պատկերացրեք, թե ինչ կլինի, եթե այն մարդկանց թիվը, որոնք արդեն գիտակցորեն ծառայելու մակարդակին են հասել, հաջորդ տարվա վերջին՝ Կարմայական Վարչության նիստից հետո, կրկնապատկված լինի: Այդպիսով մենք տարվա վերջին կրկնակի շատ սպասավորներ կունենանք, որոնք ունակ են իրենց վրա պատասխանատվություն վերցնելու բուն Երկիր մոլորակի և նրա բոլոր կենդանի էակների Էվոյուցիոն զարգացման հանդեպ: Ուրախ եմ, որ ձեզ տեղեկացրի այս կարևոր որոշման մասին: Իսկ հիմա պատրաստ եմ տալու ևս մի ոչ մեծ տեղեկատվություն, որը ձեզ կողմնորոշվելու հնարավորություն կտա աշխարհում հաստատված իրադրության մեջ: Այն վերաբերում է բացասական թրթռանքների տարեվերջյան աղետալի աճին: Ծատ մարդիկ ընկճախտի վիճակում են հայտնվում, և շատ կան այնպիսիները, որոնք Նոր տարվա և Ծննդյան տոնակատարություններն անց են կացնում թրթռանքի շատ ցածր մակարդակում՝ օգտագործելով ավիոհոլային խմիչքներ և զբաղվելով անհարկի ու անարժան գործողություններով: Այդ ամենն ստեղծում է մոլորակային կարմայի լրացուցիչ բաժնեմաս, որը որոշ մայրցամաքներում կարող է հանգեցնել անդառնալի աղետների: Ըստ այդմ՝ տարվա վերջին, ինչպես միշտ, ես խնդրանքով դիմում եմ ձեզ, որ հավասարակշռություն պահպանեք առաջին հերթին ձեր ներսում, և ապա, որքան հնարավոր է, շատ ջանքեր գործադնեք համայն մոլորակի և ձեր իսկ երկրի կարմայի թեթևացման համար: Եթե դուք ձեր ներսում նման պահանջ եք զգում, ապա մինչև տարեվերջ մնացած բոլոր օրերի ընթացքում կարող եք կրկնակի, եռակի ուժով զբաղվել աղոթքային գործառնությանը: Մի՛ երկնչեք նույնիսկ արձակուրդ խնդրելու աշխատատեղից, որպեսզի մոլորակի բարօրության համար ջանքեր գործադրեք տանն առանձնացված կամ համակիրների շրջապատում: Վարդարաններ կարդացեք կամ աղոթքներ ու մանտրաներ, զբաղվեք ներխոնկումային գործառնությամբ: Ձեր Մերն ու Երախտագիտությունն առաքեք Երկրին: Մայր Երկիրն ընդունեք որպես կենդանի էակ, որը ձեզ ապրելու և զարգանալու հնարավորություն է տալիս, հոգում ձեր մասին: Ձեր Մերն առաքեք Երկրին և այն տարրոգիներին, որոնք սպասարկում են Երկրի մարդկության Էվոյուցիային: Տարեվերջին ամեն անգամ մենք ձեզնից լրացուցիչ էներգիա ենք խնդրում, որքանով որ դուք ի գործ եք տալ: Ձեր առաքած ողջ էներգիան իր հերթին մեզ հնարավորություն է տալիս հավասարակշռելու մոլորակի իրադրությունը և կանխարգելելու

շատ համադետներ: Ուստի ես գալիս և խնդրանքով ձեզ եմ դիմում որպես մի էակ, որն իշխանություն ունի Երկիր մոլորակի վրա և կոչված է պահպանելու մոլորակի հավասարակշռությունը:

ԵՍ ԵՄ Բուդդան, և ես ուրախ եմ, որ ձեզնից շատերը որոշում են կայացրել ու առաջ մղվել Երկրի մարդկությանը ծառայելու ճանապարհով՝ մոռանալով սեփական խնդիրների, անձնական դժվարությունների ու դառնությունների մասին: Իրապես, երբ դուք կլանված եք լինում Կյանքին ծառայելու գործով, մեկը մյուսի հետևից ձեզ լքում են ձեր բոլոր մանր խնդիրները, և մի գեղեցիկ օր դուք հասկանում եք, որ ազատվել եք այն բոլոր մանր ու անհարկի բաներից, որոնք նախկինում ծանրացնում էին ձեր կյանքը: Գիտակցում եք, որ դա ուրիշ կյանք էր, այնպիսի մեկի կյանք, որը կենտրոնացած էր միայն իր և իր խնդիրների վրա: Իսկ հիմա դուք Լուսի էակ եք դարձել, որին ի սրտե մտահոգում են ողջ մոլորակի բարօրության և ներդաշնակության հարցերը:

Թող որ լավ լինի աշխարհի համար...

Թող որ երջանիկ լինեն մեր սիրելի Երկիր մոլորակում բնակվող բոլոր կենդանի էակները:

ՕՍ

ԵՍ ԵՄ Հատկառեն Բուդդան

Վեհապետ Կուրթումի

26 դեկտեմբերի, 2006 թ.

**Դուք մշտապես պետք է վերլուծեք ձեր գործողությունների
հետևանքները և փորձ չանեք ուսուցանելու այնտեղ,
որտեղ ձեր տված ուսմունքի վրա անմիջապես ցեխ կնետեն**

ԵՍ ԵՄ Կուրթումին՝ մեր դեսպանորդի միջոցով այս օրով ձեզ այցի եկածը:

Եկել եմ, որպեսզի մեր Ուսմունքի հերթական այն չափաբաժինը տամ, որի յուրացման պահն արդեն հասել է ձեզ համար:

Ժամանակներն այնպիսին են, որ ձեր կյանքում Աստծո յուրաքանչյուր դրսևորում ձեր հոգիների համար տոնի է վերածվում: Քանզի ձեր հոգիները կարոտել են Աստծո այն աշխարհին, որտեղից դուրս են եկել և ուր ժամանակն է, որ վերադառնան: Ուստի ես միշտ շատ ուրախ եմ լինում Աստծո աշխարհից ձեզ փոքրիկ լուրեր բերելու և ձեզ ոչ մեծ խրատներ տալու առիթներով: Գիտեմ, որ ձեզնից շատ շատերը սիրում են ինձ և ինձ հետ զրուցել: Համարյա միշտ, երբ դուք համալարված եք լինում իմ ալիքին, ես կարողանում եմ ձեզ լսել և ընկալել ձեր մտքերը: Չի այդպիսին է իմ ծառայությունը, և դրա շնորհիվ է, որ գիտեմ ձեզնից շատերին: Գիտեմ և այն խնդիրները, որոնցով ծանրաբեռնված եք: Ուստի շատ կուզենայի անել ինձնից կախված հնարավոր ամեն ինչ, որպեսզի ձեզ բացատրեմ ձեր առջև ծառացող խնդիրների արմատները և փոխանցեմ ձեզ այն անհրաժեշտ ազդակը, որով կկարողանայիք ձեր ներսում հաղթահարել այդ դժվարությունների պատճառները:

Ուստի այսօր մենք կխոսենք այն մասին, թե ինչն է, որ հրատապ ու կարևոր է ձեզնից շատերի համար: Իսկ դա հենց այն է, ինչը կապված է ձեր կյանքերի ընթացքում ձեզ շրջապատող այն մարդկանց հետ ունեցած ձեր փոխհարաբերությունների հետ, որոնք չեն հասկանում ու չեն ընդունում ձեր ուսմունքը, ձեր խրատները, ձեր կենսակերպն ու աշխարհայացքային համակարգը:

Ցավոք սրտի, մարդիկ զարգացման տարբեր աստիճանների վրա են գտնվում: Եվ ձեր մեջ շատերը կան, որ իրենց գիտակցության զարգացման մակարդակով դեռ պատկանում են նախորդ՝ չորրորդ արմատական ռասային: Մեծ մասը հինգերորդ արմատական ռասայի տարբեր ենթառասանների ներկայացուցիչներ եք, և կա անհատների որոշակի ոչ մեծ քանակություն, որոնք պատկանում են հինգերորդ արմատական ռասայի վերջին՝ եզրափակիչ, ենթառասային: Է՛լ ավելի քիչ են այն անհատները, որոնք պատկանում են վեցերորդ արմատական ռասային: Վերջինիս ժամանակը դեռ չի թևակոխել, բայց այդ ռասայի առանձին առաջապահներ, հատկապես նրանք, ովքեր շատ անհամբեր են, արդեն ձեռնամուխ են եղել իրենց փորձնական մարմնավորումներին:

Ինչ վերաբերում է ռասաների զարգացման պատմությանը, այն երկարատև քննարկման նյութ է, և այս թեմադրության մեջ մենք դա չենք քննարկել:

Միայն ձեր ուշադրությունն ուզում եմ հրավիրել այն անառարկելի փաստի վրա, որ ամենքդ գտնվում եք Էվոլյուցիոն զարգացման տարբեր աստիճաններում: Ուստի ձեր գիտակցությունների միջև տարբերությունը երբեմն այնքան մեծ է լինում, որ թվում է, թե իրար հետ խոսում եք տարբեր լեզուներով. իրարից խիստ տարբեր են թե՛ ձեր հետաքրքրությունների շրջանակները, թե՛ գիտակցությունների մակարդակները:

Արդ, երբ հերթական անգամ ձեր մեջ ցանկություն է առաջանում սկսել ուսմունք շարադրել կամ քարոզել ձեր հայացքները նրանց, ովքեր ձեր կարծիքով ձեր քարոզի կարիքն ունեն, հիշե՛ք իմ այս թելադրությունը և Հիսուսի այն խոսքը, թե՝ *ձեր մարգարիտները մի նետեք խոզերի առաջ**:

Այն ամենը, ինչ տրվում է, պետք է տրվի ըստ գիտակցության մակարդակի, և շատ բաներ, որ ձեզ համար այնքան ակնհայտ են, որ դրանց վրա արդեն դադարել եք ուշադրություն դարձնել, կարող են սաստիկ ցնցում առաջացնել այն մարդկանց մոտ, ում պատկերացումները հեռու են ձերինից: Եվ, որ ավելի վատ է, ձեր ասածները նրանց մոտ կարող են առաջ բերել բացասական հույզերի և նույնիսկ գործողությունների մի ամբողջ գամմա: Եվ ի՞նչ եք կարծում. նման դեպքում ու՞մ վրա կրնկնի այդ բացասական դրսևորումների կարման: Եթե դեռ գլխի չեք ընկել, ապա հուշե՛մ՝ հենց ձեզ վրա: Քանզի նա, ով Էվոլյուցիոն գարգացման ավելի բարձր աստիճանի վրա է գտնվում, լիարժեք կարմայական պատասխանատվություն է կրում ոչ միայն իր գործողությունների, այլ նաև այն մարդկանց գործողությունների համար, որոնց հրահրողն ինքն է եղել: Դա չի նշանակում, թե այդ մարդիկ ընդհանրապես ազատվում են իրենց ոչ ճիշտ գործողությունների կարմայից: Ես միայն ուզում եմ ասել, որ այդ կարմայի մեծագույն մասն ընկնում է ձեզ վրա, քանի որ դուք եք եղել նրանց սխալ գործողությունների հրահրողը: Ուստի նախքան քարոզելն ու որևէ մեկին խորհուրդներ տալը, թե ինչպես վարվի իր կյանքում, բազում անգամ կշռադատե՛ք արժե՞ արդյոք այդ բանն անել:

Ձեր պատասխանատվությունն ուղիղ համեմատական է Էվոլյուցիոն սանդուղքի այն աստիճանին, որի վրա կանգնած եք: Դա չի նշանակում, որ դուք պետք է ներփակվեք ձեր մեջ և դադարեցնեք մարդկանց հետ շփվելն ու նրանց հետ հոգևոր թեմաներով զրուցելը: Պարզապես պետք է մշտապես վերլուծեք ձեր գործողությունների հետևանքները և չփորձեք ուսուցանել այնտեղ, որտեղ ձեր տված ուսմունքի վրա անմիջապես ցեխ կնետեն:

Մտածե՛ք ասածներիս մասին: Եվ միշտ հիշեք, որ լավագույն քարոզը ձեր օրինակը կլինի, թե կյանքում ինչպես եք ձեզ պահում, ինչպես եք արձագանքում կենսական այս կամ այն իրադրությանն ու խառնաշփոթ վիճակին: Ձեր ողջ քարոզը ձեր արարմունքի մեջ է: Եվ հենց ձեր արարքների պտուղներով մարդիկ հանձինս ձեզ կճանաչեն այն մարդուն, ում արժե լսել և նրա հետ խորհրդակցել:

Այսպիսով, ես նորից ծռում եմ այն կողմը, որ միակ մարդն աշխարհում, ում համար հարկավոր է ջանք թափել, հենց ինքներդ եք: Եվ հենց ինքներդ եք ամենաարժանին, որի համար արժե ներդնել ողջ ուժերն ու կարողությունները:

Մի՛ մտահոգվեք, երբ ինչ-որ մեկը սխալ է վարվում, և մի՛ մտածեք այն մասին, թե ինչպես ճիշտ կլինեք, որ նա վարվեր: Կենտրոնացեք ինքներդ ձեզ վրա և խորհեք, թե ինչու են ձեզ գրգռում ուրիշ մարդկանց արարքներն ու խոսքերը: Արդյոք ո՞չ այն պատճառով, որ ձեզ գրգռող այդ բաներն առկա են ձեր մեջ՝ որպես անցյալի ձեր սխալ արարքների հետևանքներ:

Ձեզ շրջապատող աշխարհը մի հայելի է, որն անդրադարձնում է ձեր անկատար գիտակցությունը: Ուստի բնական կլինեք ենթադրել, որ եթե մեկն իր կյանքում մշտապես բախվում է տգիտության ու անհասկացողության հետ, ապա այդ հատկանիշներն առկա են հենց իր մեջ: Եվ եթե դուք մշտապես այլ մարդկանց կողմից ենթարկվում եք չարամիտ հարձակումների, ապա ձեր մեջ առկա է բացասական էներգիա, ինչը մարդկանց դրդում է հենց այդպես վարվել ձեզ հետ:

Մենք այս նյութը շա՛տ անգամ ենք մատուցել: Եվ, հավանաբար, դուք սա շատ անգամ եք լսել ու կարդացել: Սակայն ձեր մտքերը, ձեր սեփական մտքերը, որոնք առաքում եք ինձ, ստիպում են ինձ նորից ձեզ համար կրկնել այս ոչ մեծ Ուսմունքը և հիշեցնել ձեզ Ճշմարտություններ, որոնք շատ լավ գիտեք, բայց, չգիտես ինչու, չեք կիրառում ինքներդ ձեր նկատմամբ:

Ես երջանիկ եմ ընձեռնված հնարավորությամբ, որ կրկնեմ ձեզ համար այս Ուսմունքը: Բայց ավելի երջանիկ կլինեի, եթե ձեզնից որևէ մեկն այն կիրառեր գործնականում: Եվ նույնիսկ այնժամ, երբ ձեզ կթվա, թե իմ ասածները ձեզ բոլորովին չեն վերաբերում, այնուամենայնիվ մի՛ շտապեք մի կողմ դնել այս թելադրությունը կամ այն թողնել անորոշ «հետո»-ին: Աշխատեք գոնե երեք անգամ կարդալ այս ուղերձը տարբեր օրերի և օրվա տարբեր ժամերի ընթացքում, երբ գտնվում եք գիտակցության տարբեր վիճակներում: Կարծում եմ, որ երրորդ անգամից կսկսեք հասկանալ, որ այս թելադրությունը հենց ձեզ է վերաբերում:

Հավատացե՛ք ինձ, ես շատ լավ ծանոթ եմ մարդկային հոգեբանությանը և երբեմն հաճույք եմ ստանում այն գլուխկոտրուկները լուծելուց, որոնք բաղկացած են Երկրում ունեցած ձեր բազմահազար վերամարմնավորումների ընթացքում ձեր իսկ ստեղծած հոգեբանական խնդիրներից: Այնուհանդերձ ես միշտ ուրախ եմ ձեզ օգնելու համար և միշտ արձագանքում եմ օգնության ձեր այն կանչերին, որ, իմ պատկերին նայելով, արտաբերում եք ձեր սրտերում կամ երբ սիրտ եք անում ինձ նամակ հղել հրեշտակների անթերի գործող փոստով:

Գիտե՞ք, երբ հղում եք ձեր կոչը և վառում նամակը, որպեսզի պահապան հրեշտակներն այն հասցնեն ըստ հասցեի՝ ինձ կամ մի այլ Համբարձյալ Վեհապետի, թեև ֆիզիկապես նամակը վառվում է, բայց նրա էներգետիկ նուրբ սուբստանցն ակնթարթորեն հասնում է հասցեատիրոջը: Ես ուրախ եղա ձեզ ոչ մեծ Ուսմունք տալուս առիթով:

ԵՍ ԵՄ Կոյթոնմին՝ ձեր նկատմամբ մեծագույն Սիրով և օգնելու ցանկությամբ լեցուն

*Մտթ. 7:6

Վեհապետ Էլ Մորիա
27 դեկտեմբերի, 2006 թ.

Այժմ՝ նոր տարվա նախաշեմին, մենք շտապում ենք ձեր գիտակցությանը հասցնել այն նոր խնդիրները, որոնց անհրաժեշտ է լուծում տալ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով այս օրով ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկել... Եկել եմ, որպեսզի տամ այս տարվա իմ եզրափակիչ ուղերձը, քանզի մենք նորից կհանդիպենք միայն հաջորդ տարում:

Եվ այսպես, եկեք ամփոփենք այս տարվա արդյունքները և որոշենք՝ արդյո՞ք այն ամենն, ինչ նախանշվել էր, ի կատար է ածվել:

Ես պետք է ընդգծեմ այն կարևոր փաստը, որ ի տարբերություն անցած տարվա՝ այս տարին ավելի հաջողակ էր Երկրի մարդկանց գիտակցության զարգացման առումով:

Ամեն ինչ չէ, որ հարթ ընթացավ, և ամեն ինչ չէ, որ տեղի ունեցավ այնպես, ինչպես կուզենայինք: Շատ մարդիկ, որոնց հետ հույսեր էինք կապում, կամեցան դրսևորել իրենց ազատ կամքն ու շեղվեցին Ուղուց: Ինչ արած, դա իրենց ընտրությունն է և իրենց որոշումը: Ուստի և մենք երկար կանգ չենք առնի տխուր բաների վրա: Փոխարենը ես ուրախությամբ կմատնանշեմ այն փաստը, որ շատ մարդիկ, որոնց հետ մենք առանձնապես հույսեր չէինք կապել, և որոնք հեռու էին մեր Ուղուց, Ձեռնադրումների Ուղուց, արթնացան և նշանակալից օգնություն ցուցաբերեցին այն գործին, որը մենք կատարում ենք մեր դեսպանորդի միջոցով: Իսկ դա շատ ուրախալի է և ստիպում է հուսավառ ակնկալիքներ ունենալ հաջորդ տարուց, որի մեջ աստիճանաբար մուտք ենք գործում:

Ուրախ եմ ես, ուրախ եմ բոլոր Համբարձյալ Դասերն այս փաստով, որ 2006 թվականն այսպես հաջող եղավ...

Ուստի և այժմ՝ նոր տարվա նախաշեմին, մենք շտապում ենք ձեր գիտակցությանը հասցնել այն նոր խնդիրները, որոնց անհրաժեշտ է լուծում տալ: Եվ այդ խնդիրներն ուղղակիորեն կապված են Եղբայրության պլանների իրականացման հետ:

Ինչպես միշտ, երբ սկսում է գործել նոր շնորհ, բացվում է նոր աստվածային հնարավորություն: Այս անգամ աստվածային հնարավորությունը բաց է մայր Ռուսաստանի համար: Մենք երկար տասնամյակներ սպասում էինք այս հնարավորությանը, և ահա վերջապես այն բացվեց: Այժմ ձեզնից՝ մարմնավորման մեջ գտնվող լուսակիրներիցդ է կախված, թե այդ հնարավորությունն ինչպես կկենսագործվի ֆիզիկական ոլորտում:

Մեզ դետք է անհրաժեշտ՝ ֆիզիկական ոլորտում մի վայր, որի միջոցով մենք կիրականացնենք մեր գործողությունները, որի շնորհիվ մենք տեղ կհասցնենք մեր պլանները և ձեզ հետ կխորհրդակցենք դրանց կենսագործման ժամկետների հերթականության վերաբերյալ: Հուսով եմ, որ հաջորդ տարին մեզ հնարավորություն կընձեռի իրականացնելու մեր հերթական պլանները, և մենք վերջապես կկարողանանք ձեռնամուխ լինել ֆիզիկական ոլորտում մեր գործնական աշխատանքների կատարմանը:

Մեզ հրատարակչություն է պետք ունենալ, որը կծառայի մեր խնդիրներին՝ ամբողջովին գտնվելով Մեծ Սպիտակ Եղբայրության հովանավորչության տակ:

Մեզ ուսումնական կենտրոն է պետք, որի միջոցով կարողանանք կանոնավոր կերպով գիտելիքներ տալ Աստծո ճշմարտության վերաբերյալ: Ուսումնական կենտրոն, որ ծառայեր որպես նշաձող այն քառսի ծովում, որն առատորեն փրփուր է տարածում ձեզ շրջապատող կյանքում:

Մեզ Համայնք է պետք, մի քանի համայնքներ, այնքան համայնքներ, որքան ի վիճակի եք ստեղծելու: Համայնքներ, որոնք ֆիզիկական օկտավայում կյանքի կկոչեն Մեծ Սպիտակ Եղբայրության ոգին: Մեր Համայնքների օգնությամբ մենք կկարողանանք հասարակության մեջ մտցնել ճշմարիտ ցուցանմուշներ և ճշմարիտ բարոյական ուղեւիշներ:

Մեզ պետք են մարդիկ, որ ներդնեն գործունեության տարբեր ոլորտների իրենց փորձը, որպեսզի աստվածային սկզբունքների հիման վրա վերակառուցեն գործունեության բոլոր ոլորտները: Իսկ այդ սկզբունքները երևան կգան որպես պայծառացումներ և հայտնություններ: Դուք կկարողանաք աստվածային կերպերին համապատասխան շատ արագ վերափոխել կյանքը, եթե պահպանեք ձեր նվիրվածությունը և շարժառիթների ու նկրտումների մաքրությունը:

Որքան շատ ձեր գիտակցությունը լցվի աստվածային կերպերով և աստվածային տեսիլներով, այնքան քիչ հնարավորություն կունենա դրսևորվելու այն, ինչն Աստծուց չէ և այն ամենը, ինչ միտում ունի խոչընդոտելու մարդկության զարգացման էվոլյուցիոն ուղին և մղելու նրան դեպի կեղծ մշակույթի, կեղծ աստվածայնության, կեղծ գեղեցկության և կեղծ սիրո թավուտները: Բոլոր այդ անաստված դրսևորումները մենք հանձնում ենք Աստծո կամքին, և ես կարծում եմ, որ դուք այլևս չեք ծախսի ձեզ հատկացված Աստծո էներգիան, որպեսզի շարունակեք սնունդ տալ ձեր աշխարհի որևէ բացասական դրսևորմանը:

Միշտ հիշեք, որ համայն տիեզերքի ողջ էներգիան կենտրոնացված է Աստծո ձեռքում: Եվ միայն անժամ, երբ դուք Աստծուց ձեզ բաժին հասած էներգիան ծախսում եք ոչ ըստ իր նշանակության, դրանով իսկ բազմապատկում եք չարը ձեր աշխարհում:

Եկել է Բարին արարելու ժամանակը: Հասել է ժամանակը, որ ձեր գիտակցությամբ ընտրեք Բարին և ձեր կյանքերում առաջնորդվեք դրանով: Ձի այդպիսին է ժամանակի պահանջը: Չափազանց երկար դուք խարխափեցիք պատրանքներում, և չափազանց երկար ձեզ թույլ տրվեց փորձարարություն անել՝ ձեր ազատ կամքին հագուրդ տալով: Այժմ պետք է արագացված տեմպերով ձեռնամուխ լինեք ձեր ֆիզիկական աշխարհը բարեփոխելուն: Եվ ես հուսով եմ, որ, մտնելով ձեզ հետ համագործակցության մեջ, մենք կկարողանանք տիեզերական առումով սեղմ ժամկետներում ամեն ինչ ի կատար ածել: Ձի այլևս ժամանակ չունենք: Ժամանակի բոլոր պահուստները, որոնք հատկացվել են էվոլյուցիոն ուղուն վերադառնալուն, արդեն սպառված են:

Այժմ մենք մուտք ենք գործում նոր տիեզերական հնարավորության նեղ միջանցքի շերտուղու մեջ: Իսկ այդ շերտուղին շատ կարճ կլինի: Ուստի ձեզնից պահանջվում է ներդնել բոլոր ուժերը, ձեր ողջ էներգիան, որպեսզի ժամանակին ավարտին հասցնեք Երկիր մոլորակի բոլոր բարեփոխումները, որոնք նախանշված են և հաստատված:

Ես ձեզ որոշակի տարեթիվ չեմ ասի, թե երբ պետք է բարեփոխումներն ավարտված լինեն: Բայց կասեմ, որ դա պետք է տեղի ունենա մեկ-երկու սերնդի հիշողության մեջ: Ամեն դեպքում, հիմնական վերափոխումները տեղի կունենան շատ արագ:

Ուղու վրա առկա են վտանգներ: Կան շատ ստորջրյա խութեր, և, ինչպես միշտ, բոլոր վտանգներն ու ստորջրյա խութերն ի հայտ կգան այնտեղ, որտեղ շատ է մարդկային տգիտությունը: Ուստի ձեզ անհրաժեշտ են գիտելիքներ, աստվածային գիտելիքներ, որոնցով առաջնորդվելով՝ կկարողանաք վերափոխել ձեր կյանքը և օրինակ ծառայել ուրիշների համար:

Բոլոր վերափոխումները շատ արագ կընթանան: Եվ, դրա հետ կապված, ես նորից եմ խոսում ձեր պատասխանատվության մասին: Ձեր թույլ տված յուրաքանչյուր դավաճանական քայլը հետ է մղում տիեզերական պլանի իրականացման ժամկետը: Եվ եթե դուք դեռևս ձեր կյանքը չեք դիտարկել ընդհանուր էվոլյուցիայի ընթացքի տեսանկյունից, ապա հիմա այդ մասին խորհելու իսկական ժամանակն է: Ձի դուք գոյություն չունեք այս տիեզերքից անկախ: Դուք այս տիեզերքի միասնական օրգանիզմի առանձին բջիջներն եք: Ուստի և, կախված այն բանից, թե որքան ճիշտ կգործեք ըստ Աստծո Մտահղացման, այնքան հաջող կլինի ամբողջ գործը, և դրա իրականացումը կլինի ժամանակին:

Դադարե՛ք ձեզ դիտարկել Աստծուց կտրված: Թեկուզ կարճ ժամանակով ձեզ զգացեք ողջ կյանքի հետ միասնության մեջ: Պատկերացրեք, թե ինչպես ձեր մի բացասական մտքի կամ թույլ տված սխալ ընտրության պատճառով կարող են մոլորակի հակառակ երեսին գոհվել մարդիկ:

Մշտապես կա դեպքերի զարգացման աստվածային հնարավորություն, և մշտապես կա վատագույն տարբերակը, որը կարող է դրսևորվել մարդկային անճարակության պատճառով: Ուստի մշտապես հո՛գ տարեք ոչ թե ինքներդ ձեր մասին, այլ աշխարհի: Եվ համաչափեք ձեր բոլոր արածները տիեզերական նպատակահարմարության և ընձեռված աստվածային հնարավորության հետ:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան

**Մենք ձեր գիտակցությունը նախապատրաստում ենք
Նոր Դարաշրջանի գալուստին**

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ: Ես խոսում եմ քո ներսից: Ինչպես միշտ, ես ոչ մեծ ուղերձ կտամ, որը թույլ կտա ճիշտ կողմնորոշիչներ ունենալ և ճիշտ ուղղություն պահպանել էվոլյուցիոն զարգացման ընթացքում: Քանզի ժամը հասել է, և այն անհետաձգելի է: Հասել է ոգեղեն աշխարհ վերադառնալու մասին մտորելու ժամը: Հասել է Հայրական Տան մասին մտորելու ժամը, այն Տան մասին, որից սկիզբ է առել ողջ Արարվածը և ուր պետք է վերադառնա ամեն ինչ:

Որքա՞ն հաճախ եք դուք ձեր կյանքի ընթացքում մտորում Հավերժականի մասին: Որքա՞ն հաճախ եք ձգտում հասկանալ, թե ո՞վ եք դուք իրականում: Խոսքն այն մասին չէ, թե կյանքում ի՞նչ մասնագիտության եք տիրապետում, ոչ էլ այն մասին, թե ովքեր են ձեր ազգականները: Այլ այն մասին է, թե մտորո՞ւմ եք երբևէ ձեր ոգեղեն ազգակցության մասին: Իսկ ձեր երկնային ծնողների մասի՞ն: Մտորո՞ւմ եք երբևէ, թե դեպի ուր եք գնում և թե որտեղից եք սկիզբ առել:

Ես եկել եմ, որպեսզի բացատրություններ տամ Լինելիության այդ կարևոր հարցերի շուրջ: Քանզի եթե չսկսեք մտորել Բարձրագույն Իրականության մասին, ապա այն երբևէ չի կարող դրսևորում գտնել ձեր կյանքերի ընթացքում:

Այդպիսի՞ն է այս տիեզերքի Օրենքը. մինչև զարգացման որոշակի փուլին հասնելը աշխարհների փոխներթափանցումը չափազանց դժվարացված է: Իսկ դա թույլ է տալիս շատ ու շատ աշխարհների՝ այլ աշխարհների մեջ զարգանալու՝ պահպանելով իրենց օրենքները: Սակայն այնժամ, երբ վրա է հասնում բոլորաշրջանների հերթագայման մեծ ժամկետը, աշխարհները սկսում են հետ հավաքվել: Աշխարհների թրթռանքները մոտենում են իրար, և դրանք սկսում են ներթափանցել իրար մեջ:

Սակայն դա տեղի չի ունենա ավելի շուտ, քան ձեր գիտակցությունը պատրաստ կլինի աշխարհների մերձեցման ու փոխներթափանցման գործընթացին: Այդ գործընթացը կտևի միլիոնավոր տարիներ: Այժմ դուք դեռ գտնվում եք ձեր ուղու ամենացածր կետում: Եթե համեմատելու լինենք սար բարձրանալու հետ, ապա դուք գտնվում եք լեռան ստորոտի ամենացածրում: Եվ որքան էլ ջանաք արագ հասնել գագաթին, միևնույնն է, գոյություն ունեն տարածական ու ժամանակային բնական սահմանափակումներ, որոնք կհանգարեն աստվածային գիտակցության գագաթին հասնելու ձեր ընթացքին:

Մատերիականության մեջ իջնելու բոլորաշրջանը, մատերիայի մեջ սուզվելու գործընթացն ավարտվում է: Սկսվում է վերադարձը դեպի Հայրական Տուն: Ուստի, որքան էլ երկար դուք դիմադրեք, ձեզ կվիճակվի մտորել այն աշխարհի մասին, որտեղից սկիզբ են առել ձեր հոգիները: Երբ սուզվում էիք մատերիայի մեջ, նման էիք դեռ չփետրավորված թռչունների: Դուք դեռ չեք կրում այն փայլփուլն հագուստները, որոնք ձեռք կբերեք մոտակա ժամանակներում: Իսկ ձեր ներկայիս հագուստները ձեր ստորին մարմիններն են, որոնք ենթակա են մաքրման: Դուք լրջորեն պետք է զբաղվեք ձեր ստորին չորս մարմինների մաքրման գործով: Ձեզ լավ հայտնի է, որ ֆիզիկական մարմին ունեք: Եվ սոսկ լսել եք այն մասին, որ ունեք նաև այլ՝ ֆիզիկական տեսողության համար անտեսանելի, էներգետիկական մարմիններ, որոնք կազմում են ձեր աուրան: Ունեք աստեղային կամ ցանկությունների մարմին, մենտալ կամ մտքի մարմին և եթերային կամ հիշողության մարմին: Այժմ ձեր այդ մարմինները գտնվում են խղճուկ, ողբալի վիճակում: Ֆիզիկական աշխարհում ունեցած ձեր դեգերումների ընթացքում դուք աղտոտել եք ձեր այդ մարմինները: Եվ հիմա հասել է ժամանակը, որ լրջորեն զբաղվեք դրանց մաքրման գործով:

Սկսեք ֆիզիկական մարմնից: Մտորեք այն մասին, թե ի՞նչ եք ուտում և խմում: Ինչպիսի՞ն ձեր սնունդն ու ջուրն են, այնպիսին էլ դուք եք: Ձեր մտքով երբեք չի՞ անցել, որ ձեր կերած ուտելիքն ու ձեր խմած ջուրը համեմատեք ձեր ռացիոնալ աստվածային սնուցման նմուշների հետ: Մի՞թե կարծում եք, թե ձեր աշխարհի սննդադրյունաբերության հրեշներին լրջորեն մտահոգում է ձեր ֆիզիկական մարմնի առողջությունը: Ձեզնից բացի ոչ ոք ի վիճակի չէ սկսելու ձեր ֆիզիկական մարմնի մաքրման գործը: Մաքրման սկզբունքը շատ պարզ է. դուրս հանել օրգանիզմի միջից բոլոր աղտոտությունները և այն հազեցնել իրապես օգտակար այնպիսի նյութերով, որոնք առկա են առանց քիմիայի և գենային տեխնոլոգիաների կիրառման անեցրած բնամթերքներում:

Մտորե՛ք ձեր սննդառության համակարգի կառուցվածքի մասին: Վստահ եղեք, որ հենց որ հարց ծագի ձեր ճիշտ կամ սխալ սնվելու վերաբերյալ, տարածությունից անմիջապես կստանաք ձեզ անհրաժեշտ գրականությունը: Ներկայումս, քանի որ բոլորաշրջանները փոխվում են, ֆիզիկական մարմինն այլևս չի կարող իր վրա փորձարկումներ թույլ տալ: Ֆիզիկական մարմինն

այլևս չի կարողանա գոյատևել նոր էներգետիկական պայմաններում, եթե դուք նրանով չմտախոզվեք:

Նույնը վերաբերում է նաև ձեր մյուս մարմիններին: Եթե ձեր զգացմունքները մաքրված չեն ձեր մերձավորների, այլ մարդկանց, մոլորակի, հարազատ երկրի նկատմամբ ունեցած ձեր վերաբերմունքի բացասական նստվածքներից, ապա չեք կարողանա գոյատևել նոր թրթռանքների պայմաններում: Նախանձի, չարականության, շահամոլության, ատելության ցածր թրթռանքները չեն կարող գոյություն ունենալ Նոր Դարաշրջանում, և ձեզ կվիճակվի ձերբազատվել դրանցից:

Նույնը վերաբերում է նաև ձեր մտքերի ոլորտին: Եթե ձեր ուղեղը մշտապես զբաղված է բացասական իրավիճակներ մարսելու գործով, ապա դուք մշտապես գտնվում եք մռայլ մտքերի գորշ ամպի մեջ, և նոր թրթռանքները դառնում են ձեզ հետ անհամատեղելի: Ձեզ կվիճակվի ընտրություն կատարել և ազատվել ձեր գիտակցության բացասական վիճակներից: Եվ եթե դա չանեք, ապա ձեզ համար ավելի ու ավելի կոժվարանա Նոր Աշխարհի պայմաններում գոյատևելը:

Եվ վերջապես, եթե ձեր եթերային մարմինը չմաքրեք անցյալի բացասական գրառումներից ու վիճակներից, ապա կրկին համատեղելի չեք լինի այն էներգիաների հետ, որոնք արդեն մուտք են գործել և շարունակում են մուտք գործել Երկիր մոլորակ:

Ինչպես տեսնում եք, ըստ էության, ձեզ այլընտրանք չի մնում:

Բայց եթե շարունակեք համառել ու պնդել ձեր նախկին կործանարար կրքերն ու սովորությունները, ապա պարզապես դուրս կմղվեք տարածությունից ու ժամանակից, որոնցում այժմ գտնվում եք: Ես չեմ ուզում երկար կանգ առնել այն բանի վրա, թե ինչ կարող է տեղի ունենալ այդ դեպքում, քանի որ հավատում եմ, որ իմ խոսքերը կստիպեն ձեզ մտորել ձեր իսկ կենսակերպի մասին, որպեսզի ձգտեք այն փոխել հնարավորինս շուտ: Այն, ինչը ոչ վաղ անցյալում կոչվում էր գիտատեխնիկական առաջընթաց և պատվաբեր էր համարվում, այժմ բոլորովին կորցրել է իր իմաստը: Հսկա քաղաքներում ապրելը, զանգվածային զվարճությունները՝ ներառյալ հեռատեսիլն ու կոնծաբանության ու շատակերության տոնական խրախճանքները, պատկանում են անցած օրվան, և այդ ամենից մոտակա ժամանակում մարդկությունը պետք է ձերբազատվի:

Դուք պարզապես այլևս չեք կարողանա ապրել ձեր քաղաքներում և կմղվեք դեպի բնությունը: Ձեր երաժշտությունն այլևս չեք կարողանա լսել, այլ կլսեք միայն բնության ձայները: Ձեր կերակուրը չեք կարողանա ուտել, այլ ստիպված կլինեք փնտրել ավելի բարձր թրթռանք ունեցող մթերքներ և ժամանակի ընթացքում կանցնեք արևային էներգիայով ու Աստծո Սիրո թրթիռներով սնվելուն:

Այն ամենը, ինչ իմ խոսքերում ձեզ թվաց երևակայական կամ անընդունելի, շատ շուտով կդառնա ձեր ոճն ու կենսակերպը: Հավատացե՛ք ինձ և հավատացեք այլ աշխարհների համակարգերի փորձին:

Որքան էլ շատ ջանքեր թափեք ձեր սովորություններն ու կապվածությունները պաշտպանելու համար, այնուամենայնիվ ամբողջ հիմն ու անպետքականը մոտակա ժամանակներում կարբվի-կտարվի վերափոխությունների թարմ քամիով և Հրո Աշխարհի կիզիչ էներգիայով:

Մենք ձեր գիտակցությունը նախապատրաստում ենք Նոր Դարաշրջանի գալուստին:

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ

Հգոր Հաղթանակ
29 դեկտեմբերի, 2006 թ.

**Ես եկել եմ հիշեցնելու ձեր աստվածային ծագման և
ձեր անիրական մասի նկատմամբ հաղթանակ
տոնելու անհրաժեշտության մասին**

ԵՄ ԵՄ Հաղթանակը՝ այս օրով ձեզ այցի եկածը...

ԵՄ ԵՄ՝ Հգոր Հաղթանակ Տիեզերական Էակս...

Եվ, քանի որ ԵՄ ԵՄ Հաղթանակը, ապա Ես հաղթություն եմ բերում ձեզ...

Ամբողջ տիեզերքի Էվոյուցիայի Հաղթանակը կանխորոշված է: Եվ դուք ձեր մեջ պետք է զարգացնեք հաղթականության կամ հաղթանակի հատկանիշը: Այդ հատկանիշը ձեզ համար ուղղակի անհրաժեշտություն է: Քանզի մարդկության ողջ վիթխարի պատմության ընթացքում հենց հաղթականության ու հաղթանակի հատկանիշն է, որ մշտապես չի բավականացրել:

Հնարավոր է, Հաղթանակ հասկացության տակ դուք բոլորովին էլ այն հատկանիշը չեք հասկանում, ինչը ե՛ս նկատի ունեմ: Քանզի ձեր երկդիմի աշխարհում աստվածային ամեն մի

հատկանիշ ունի իր հակատիպը: Եվ աստվածային հաղթանակին էլ իր հերթին հակադրվում է որևէ մեկի նկատմամբ անաստված հաղթանակի հասնելու հատկանիշը: Բայց ես եկել եմ ձեզ ուսուցանելու հաղթանակի հաստատումը: Հատկապես այնժամ, երբ դուք հրաժարվում եք բոլոր մարդկային թերություններից և ցածրորակ վիճակներից, հաղթանակ եք տոնում ձեր անհրական դրսևորման նկատմամբ և ձեր մեջ ամրապնդում աստվածայինը:

Եվ ես եկել եմ հիշեցնելու ձեր աստվածային ծագման և ձեր անհրական մասի նկատմամբ հաղթանակ տոնելու անհրաժեշտության մասին: Ձեր աշխարհում թափառելու միլիոնավոր տարիների ընթացքում դուք չափազանց շատ եք տարվել ձեր իսկ անհրական մասով: Սակայն ոչ ոք չի կարող ձեզ ստիպել, որ հրաժարվեք ձեր անհրական մասից: Այդ որոշումը դուք ինքներդ պետք է ընդունեք ձեր սրտում:

Դուք պետք է մղվեք դեպի Աստված և պետք է հրաժարվեք անհրականից: Քանզի առանց դրա անհնար է ձեր հետագա էվոլյուցիոն զարգացումն այս տիեզերքում: Եվ եթե նախկինում մենք գալիս և պատմում էինք հինավուրց մարդու և մի այլ, իսկական մարդու մասին, ով թաքնված է ձեր ներսում, ապա այժմ նման գրույցների ժամանակն ավարտվել է, և դուք պարտավոր եք այնպիսի կոնկրետ գործողություններ ձեռնարկել, որոնք ձեզ կազատեն պատրանքի երկակիությունից և ձեզ կմղեն դեպի Աստծո Աշխարհի Միասնականությունը: Հավատացե՛ք ինձ, բոլոր պատրանքային դրսևորումները ձեր գիտակցության մեջ են, և հենց ինքներդ պետք է հաղթահարեք ձեր պատրանքային գիտակցությունը: Այլ ուղի չկա: Իսկ ինչպե՞ս դա անել: Ձեր պատրանքային աշխարհի հաղթահարման ուղին հենց այն Ուսմունքի մեծագույն մասն է կազմում, որը ձեզ տրվում է մեր դեսպանորդի միջոցով:

Դուք պետք է ձեզ համար կանոն դարձնեք և ամեն օր վերլուծեք ձեր ներսի անհրականի այն դրսևորումները, որոնք խանգարում են ձեզ և խոչընդոտում ձեր հաղթանակը: Աշխատեք վերացարկվել այն աշխարհից, որը շրջապատում է ձեզ և պատկերացնել, թե հայտնվել եք Աստծո Աշխարհում: Այն գուրկ է ձեզ համար սովորական կաղապարներից, այնտեղ ձեռակերտ ոչինչ չկա: Այնտեղ մարմնի մասին հոգալու հարկ չկա: Դա Հրո Աշխարհն է: Մի Աշխարհ, որտեղ հրեղեն մտքերն են տիրում. այն կերտված է մտքի ուժով և գոյատևում է Աստծո Սիրո շնորհիվ, Մեր, որը միայն իրենով է լցրել Հրո Աշխարհի ողջ ազատ տարածությունը: Հենց այդ Սիրո շնորհիվ է, որ գոյություն ունի այդ Աշխարհը:

Հիմա փորձեք տեսնել, թե ձեր աշխարհում ձեր շուրջը եղած ի՞նչն է, որ կարող է ձեզ պետք գալ Աստծո Աշխարհում:

Պետք կգա՞ն ձեզ արդյոք ձեր շուրջը եղած իրերը. փողերը, ճոխության առարկաները, պարենը, հագուստը...

Ո՛չ, իմ թվարկած իրերից և ոչ մեկը ձեզ պետք չի գալ Աստծո Աշխարհում: Այդ դեպքում ի՞նչ է մնում:

Ի՞նչն է, որ ձեզ հետ կմնա մեր Աշխարհում:

Ասեմ ձեզ, թե ինչը կմնա: Մեր Աշխարհում ձեզ հետ կմնան միայն ձեր աստվածային հատկանիշները: Դրանք են՝ անշահախնդրություն, նվիրվածություն, սեր, կարեկցանք, աստվածային բարեսրտություն, անարատություն... Անքա՛ն շատ հատկանիշներ կան Աստծո Աշխարհում, որոնք կարող եք ունենալ ձեզ հետ. սակայն, որպեսզի կարողանաք տիրել այդ հատկանիշներին, դուք դրանք պետք է վաստակեք ձեր ֆիզիկական, դրսևորված աշխարհում:

Այլապես, երբ գա Հայրական Տուն վերադառնալու ժամը, դուք այնտեղ կհայտնվեք՝ ձեր բարեմասնությունները ներկայացնող փայլուն հագուստներից զրկված: Պատշաճ չէ Աստծո Աշխարհում մերկ քայլելը: Դուք մշտապես ձեզ վրա կզգաք Աստծո Աշխարհի կենվորների ցավակցական հայացքները: Եվ անհարմար կզգաք այն բանի համար, որ աննպատակ ժամանակ եք անցկացրել ձեր երկրային մարմնավորումների ընթացքում: Ուստի, հենվելով Աստծո Աշխարհի այն նկարագրությունների վրա, որոնք ստանում եք մեր ուղերձներից, ձեր մեջ ուժ և արիություն գտեք, որպեսզի հրաժարվեք ձեր գուտ մարդկային հատկանիշներից՝ աշխատելով դրանք փոխարինել աստվածային հատկանիշներով ու կատարելություններով:

Այն, ինչը լավ է համարվում ձեր աշխարհում, Աստծո Աշխարհում այդպիսին չէ: Սակայն ձեր աշխարհում միշտ տեղ կա աստվածային հատկանիշների դրսևորման համար: Եվ դրանք այն վիճակներն են, որոնք դուք երբեմն ապրում եք ինքնագոհողության, աստվածային կարեկցանքի, անանձնական սիրո տեսքով: Ձեզնից ամեն ոք իր կյանքում գոնե մեկ անգամ ունակ է եղել գիտակցության նմանատիպ վիճակներին համապատասխանող զգացումներ ունենալու: Ձեզ միայն մնում է հիշել այդ ակնթարթները և ձգտել տարածելու դրանք ձեր կյանքի հնարավորինս ավելի երկար ժամանակի վրա. անել այնպես, որ ձեր ամբողջ կյանքը բաղկացած լինի բարձրաթրթիռ, աստվածային գիտակցության վիճակներից:

Ես եկել եմ, որպեսզի կրկին անգամ ձեզ հիշեցնեմ ձեր Աստվածայնության մասին: Որովհետև դուք ձեր ունայնության և օրվա իրարանցման պատճառով չափազանց շատ եք կտրվում իրականությունից: Ժամանակն է, որ հիշեք ձեր իսկական Տան և ձեր աստվածային առաքելության մասին: Մի՛ վախեցեք ձեր շրջապատի մարդկանց աչքում ծիծաղելի երևալուց: Ծիծաղելին այն ժամանակ կերևա, երբ դուք հայտնվեք Աստծո Իրականությունում: Եվ երբ ես ասում եմ, որ բոլորաշրջանները կարճացված են, և ժամանակն էլ արագացել է, ապա դա նշանակում է, որ ձեզ այնքան էլ շատ ժամանակ չի մնացել ֆիզիկական աշխարհում փորձարարություն անելու համար: Շտապեցե՛ք: Քանզի այն, ինչ ձեզ հեշտորեն է տրվում ֆիզիկական աշխարհում մարմնավորված լինելու ընթացքում, ձեզ հասանելի չի լինի Աստծո Աշխարհում: Դրսևորված աշխարհի խտության շնորհիվ այդ աշխարհում իրականացված ամեն մի գործողություն գործնականում կայծակնային արդյունք է տալիս: Իսկ Հրո Աշխարհում, որպեսզի հասնեք նման արդյունքի, ձեզնից կպահանջվեն միլիոնավոր տարիներ:

Մեր աշխարհներն իրար փոխարացնում են, և այն, ինչ հնարավոր է ձեր աշխարհում, մեր Աշխարհում անհնար է: Ցավոք, դուք միայն կարող եք հավատ ընծայել իմ խոսքին: Քանի որ, որպեսզի հասնեք այն աշխարհին, որում ես եմ գտնվում, ձեզ պետք կգան բազմամիլիոն երկրային տարիներ:

Սակայն ես հավատս չեմ կորցնում, որ կգտնվեն այնպիսի մարդկային անհատներ, որոնց համար իմ այսօրվա ուղերձի ամեն մի բառը կունենա կարևոր էներգետիկական և տեղեկատվական հազեցվածություն, այն աստիճան, որ նրանց կյանքն այնքան արագ կփոխվի, որքան չեն երագել նույնիսկ իրենց ամենահամարձակ երագներում:

Ես մաղթում եմ ձեզ, որ վաստակեք Հաղթանակի հատկանիշ և ձեր ողջ էությամբ սուրբաբղի ձեր աստվածային Հաղթանակը:

ԵՍ ԵՄ Հաղթանակը

Վեհապետ Լանտո

30 դեկտեմբերի, 2006 թ.

Եկեք միասին կենտրոնանալ մեր խնդիրների լուծման վրա

ԵՍ ԵՄ Լանտոն, մեր դեսպանորդի միջոցով այսօր եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ձեր գիտակցության մեջ ամրագրեմ մեր Ուսմունքի այն դրույթները, որոնք անհրաժեշտ են ձեզ:

Ինչպես միշտ, եկել եմ ցնծությամբ և խորին Սիրո զգացումով, որը տաժում եմ այժմ մարմնավորման մեջ գտնվող Երկրի մարդկանց նկատմամբ: Ձեզ համար այժմ բացվում են գաղտնիքներ, որոնք երբևէ այլոց համար չեն բացվել անցյալ ժամանակներում, քանի որ ձեր գիտակցությունն այժմ ունակ է ընկալելու շատ բաներ, որոնք ընկալելի չէին նախկին ժամանակներում: Գիտե՛ք, ձեր բախտն անչափ բերել է, քանի որ ձեր զարգացումն արագացվել է համարյա սահմանային արագության աստիճանի, և գիտակցության այդ փոփոխությունները նույնիսկ այն Էվոլյուցիոն կենսահոսքերի զարմանքն են հարուցում, որոնք երբևէ ուղղակի առնչություն չեն ունեցել Երկիր մոլորակի Էվոլյուցիոն կենսահոսքերի հետ:

Այժմ Երկիր մոլորակը գտնվում է համատիեզերական ուշադրության կիզակետում: Եվ եթե դա թարգմանենք ձեր երկրային լեզվով, Երկրից անընդհատ հաղորդումներ են հեռարձակվում, իսկ հրեշտակները Երկրին վերաբերող ուրախալի լուրերը հասցնում են տիեզերքի ամենահեռավոր անկյունները: Ձեզ երևի մի պահ թվաց, թե ես հատուկ եկել եմ, որ ձեզ ոգևորեմ, դրա համար էլ այսպիսի բաներ եմ ասում: Սակայն հատուկ խաղերն ու հերթապահ արտահայտություններն այստեղ տեղ չունեն, և ես ձեզ ասում եմ այն, ինչ կա: Քանզի ամեն ժամանակաշրջան իր օրենքներն ունի, և այս ժամանակաշրջանի օրենքն իրոք թույլ է տալիս, որ բոլոր փոփոխություններն իրականանան առավելագույնս սեղմ ժամկետներում և ամենաարդյունավետ կերպով:

Ձեզ թվում է, թե իրավիճակն ինչպես կար, այնպես էլ մնացել է, և ձեզ շրջապատող ամեն ինչ կա՛մ չի փոխվում, կա՛մ փոխվում է բավականաչափ դանդաղ: Դուք դատում եք այսօրվա՝ չափորոշիչներով: Բայց եթե պատահաբար ձեր գիտակցությամբ մի տասը-քսան տարի հետ գնայիք, ապա խիստ կզարմանայիք. ձեզ կթվար, թե ձեր շուրջն ամեն ինչ կարծես քուն է մտել և շարժվում է դանդաղեցված տեմպով: Ո՛չ, արագացումն իրոք ապշեցուցիչ է, և մարդկային գիտակցության զարգացումը գրավում է աշխարհների տարբեր համակարգերի լարված ուշադրությունը: Եվ մեզ՝ երկրային Վեհապետներին համար դա լրացուցիչ հոգսեր է առաջացնում, քանի որ մեզ վրա է դրված ներկայումս դեպի Երկիր շտապող օգնության տարբեր

առաքելությունների գործողությունների համակարգման պատասխանատվությունը: Ուստի և մեր բոլոր ջանքերն այժմ կենտրոնացված են մի ընդհանուր նկրտման շուրջ՝ օգնել մարդկությանը, որպեսզի նա հնարավորինս հանդարտ ձևով հաղթահարի իր զարգացման բեկումնային շրջանը:

Դուք լավ գիտեք, որ եթե ավտոմեքենան ընթանում է բարձր արագությամբ, ապա նույնիսկ այն իրավիճակները, որոնք ճանապարհի վրա սովորաբար անվտանգ են համարվում, արդեն դառնում են վտանգի բարձր աստիճանի աղբյուրներ: Նույնիսկ ճանապարհին ընկած փոքրիկ քարը կարող է հանգեցնել ճակատագրական հետևանքների: Ուստի մենք ամենայն ուշադրությամբ կենտրոնացել ենք ուղու վրա և գործադրում ենք մեր բոլոր ջանքերը, որպեսզի կանխարգելենք իրավիճակի ցանկացած անբարենպաստ դրսևորում:

Իսկ դուք կարո՞ղ եք արդյոք մեզ օգնել այս իրավիճակում:

Իրոք, կարող եք օգնել, և մենք հաճույքով կընդունենք ձեր այն օգնությունը, որը կլինի շատ տեղին:

Եվ այսպես, ի՞նչ պետք է դուք ձեռնարկեք, որպեսզի թեթևացնեք իրավիճակը և կանխարգելեք իրադարձությունների անբարենպաստ զարգացումները: Խորհուրդները նույնն են, ինչ որ այն դեպքում, երբ դուք վատ եղանակային պայմաններում տրանսպորտային միջոց եք վարում և ընթանում եք բարձր արագությամբ: Ձեզնից պահանջվում է ուշադրություն, կենտրոնացում և հանգստություն: Ձեր ուշադրությունը չպետք է շեղվի ոչ մի բանով, որն ուղղակիորեն կապված չէ ձեր նպատակի՝ ձեր շարժման հետ: Դուք առավելագույնս պետք է կենտրոնացած լինեք ճանապարհի վրա և այն ամենի վրա, ինչ տեղի է ունենում ճանապարհին. ուշադիր հետևեք ամեն ինչին և թույլ չտաք, որ ձեր միտքը ձեզ շեղի ուրիշ կողմ: Դե, ձեր միտքը շատ խլրտում է, և երբեմն ձեզ այնպիսի թավուտներ է տանում, որ կարող եք մոռանալ ամեն ինչի մասին, նույնիսկ այն մասին, որ մեծ արագությամբ սլանում եք վտանգավոր ճանապարհով:

Ուստի պահպանե՛ք ձեր կենտրոնացվածությունը շարժման նկատմամբ և այն ամենի նկատմամբ, ինչը կապված է ձեր այդ շարժման հետ:

Ոչ մեկին թույլ մի՛ տվեք, որ ձեզ շեղի: Եվ ձեր կյանքի բոլոր հանգամանքները կարողացեք հարմարացնել այն բանին, որ պահպանվի ձեր ընտրած շարժման արագությունը: Իհարկե, կարող եք դանդաղեցնել ձեր ընթացքը. բայց մտածեք, թե այդ դեպքում որքա՞ն հետ կմնաք էվոյուցիոն զարգացման լավ հնարավորությունից: Դեռ ավելին, էվոյուցիոն զարգացման այդ լավ հնարավորությունը կարող է վազանցել ձեզ, իսկ դուք դա նույնիսկ չեք էլ նկատի:

Այսպիսով, ձեր բոլոր ջանքերը պետք է նպատակաուղղվեն այն բանին, որ պահպանեք ձեր գիտակցության փոփոխման առաջադրված տեմպը: Եվ ուղու վրա ձեր կենտրոնացումը կնպաստի ձեր առաջընթացին:

Եթե անդրադառնալու լինենք գազաթ բարձրանալու մեր սիրած համեմատությանը, ապա պատկերացրեք, թե գտնվում եք ուղղաձիգ ժայռի վրա և դրա հետ մեկտեղ փորձում եք ունկնդրել հանրահայտ երգչի համերգը կամ հեռախոսով դատարկաբանել ձեր ընկերների հետ: Դուք, իհարկե, կարող եք ձեր սովորական կյանքի ձեր սիրած բոլոր բաներն անել, բայց քամու հանկարծակի պոռթկումն ու ճոպանից կառչելու ձեր ուշացած փորձերը կարող են հանգեցնել ողբալի արդյունքի:

Ուստի եկեք միասին կենտրոնանալ մեր խնդիրների լուծման վրա: Դուք մեզ կօգնեք նրանով, որ կաշխատեք չշեղվել և դես ու դեն ասք չգցել, իսկ մենք մեր հերթին կհետևենք փոփոխությունների տեմպին և կկորդինացնենք ձեր զարգացումը:

Հուսով եմ, որ ձեզ ամեն ինչ կհաջողվի: Քանզի այլ կերպ լինել պարզապես չի կարող:

Ամեն անգամ, երբ ինձ հնարավորություն է տրվում մի քանի խոսք ասել, ցանկանում եմ կանգ առնել ամենագլխավորի՝ այն բանի վրա, ինչը ձեզ համար ամենաօգտակարը կլինեք և Ուղու վրա ձեզ կցուցաբերեք առավելագույն օգնություն: Ուստի այսօր որոշել եմ տալ ևս մեկ կարևոր խորհուրդ՝ կապված ձեր գիտակցության փոփոխության և դրա հետ առնչվող դժվարությունների հետ: Աշխատեք ձեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչն ընկալել որպես իրադարձությունների բնականոն զարգացում: Եվ, որքան էլ ձեր կյանքերում հանդիպած շատ բաներ ձեզ զարմանալի թվան, փորձեք չափից դուրս համաթրթիռ չլինել այդ իրադարձությունների հետ: Դրանց մի՛ արձագանքեք չափազանց մեծ զգացականությամբ: Քանզի ցանկացած զգացական բռնկում կարող է արգելակել ձեր առաջընթացի տեմպի պահպանումը: Ես հատուկ ուշադրություն եմ դարձնում ձեր հույզերի կայունությանը, քանի որ ձեր խոցելիությունը կապված է այն բանի հետ, որ ձեր զգացական մարմինը ոչ միշտ է հարկ եղած չափով մաքուր, և կարող է անկանխատեսելի արձագանքներ թույլ տալ:

Աշխատեք հավասարակշռել ձեր հույզերը: Եվ ձեր կյանքում ինչ էլ որ ձեր շուրջը տեղի ունենա, դիտարկեք դրանք ոչ թե ձեր այսօրվա տեսանկյունից, այլ հավերժության: Եվ այդ դեպքում այն

ամենը, ինչ ձեր մեջ չափազանց բուռն արձագանք է առաջացնում, դուք արդեն կոհտարկեք կարծես թռչնի թռիչքի բարձրությունից:

Ձեր կյանքի դեկորացիաների հերթագայությունը պարզապես կարագացվի: Ձեր կյանքի արագ փոփոխվող հանգամանքների նկատմամբ ձեզնից հարմարվողականության նոր որակ կպահանջվի: Եվ այն ձեռնադրումները, որոնք նախկինում անց էին կացվում գաղտնածեսների դպրոցներում, այժմ ձեր կյանքի պայմաններում բնականորեն կանցկացվեն մի քանի ամսվա ընթացքում, նույնիսկ, մի քանի օրում:

Ձեռնադրումներն արագացվել և հնարավոր են դարձել առօրյա կյանքում: Իսկ դա նոր թողության շնորհ և նոր հնարավորություն է, որը ձեզ է հասել՝ կապված տիեզերական բոլորաշրջանի հերթագայման հետ:

Ուրախացե՛ք, քանի որ այն, ինչ ձեզ համար հնարավոր էր մի քանի կյանքերի ընթացքում, վստահաբար դուք կարող եք անցնել ընդամենը մեկ կյանքում: Եվ ձեզնից շատերին կթվա, թե մի կյանքի ընթացքում մի քանի կյանք են ապրում: Ուստի նոր մարմնավորման հարկ չի լինի. մի կյանքի ծրագիրն ավարտվում է, և համարյա անմիջապես սկսում է գործել այն կյանքի ծրագիրը, որը կարող էր համապատասխանել հաջորդ մարմնավորմանը:

Հրաշքները ձեր կյանքում դեռ նոր են սկսվում: Վարժվեցե՛ք հրաշքներին:

ԵՄ ԵՄ Լանտոն, ձեր նկատմամբ մեծ Միտոլ լի

Սպիտամա Չրադաշտ
31 դեկտեմբերի, 2006 թ.

**Որքան արագ փոխեք ձեր վարքն ու երեկվա ձեր սովորությունները,
նույնքան արագ էլ ողջ աշխարհը կթևակոխի Նոր Դարաշրջան**

ԵՄ ԵՄ Չրադաշտը. ձեզ մոտ եմ եկել տարեկան շրջանի փոխման այս օրով, որն ընդունված է ժամանակի հաշվանքի ձեր համակարգում:

Երբ ես մարմին էի առել Երկրի վրա, օրերի ու տարիների այլ հաշիվ էր ընդունված: Սակայն դա խանգարիչ հանգամանք չէ, որ դուք նշեք ձեր տոները՝ հարմարեցնելով դրանք որոշակի ամսաթվերի հետ:

Ձեր աշխարհում ամեն ինչ հարաբերական է, և այն, ինչն ընդամենը մի քանի հազար տարի առաջ այլ կերպ էր, հիմա լրիվ փոխվել է: Եվ անչափ նշանակալից կլինեք, եթե մարդկային բնույթն էլ փոխվեր այնպես արագ, ինչպես մնացյալ ամեն ինչն է փոխվում ձեր աշխարհում: Սակայն հատկապես դանդաղ է փոխվում հենց այն, ինչը կապված է մարդկային գիտակցության ու շրջապատի աշխարհի ընկալման հետ: Եվ իմ օրոք էլ էին մարդիկ նախանձում, ատում, հայհոյում. փառաբանում Աստծուն և անմիջապես մոռանում Նրան: Ուստի մենք անկեղծորեն հույս ենք կապում, որ ձեր ժամանակներն ունակ կլինեն փոխելու մարդկային բնույթը, հանելու մարդկային գիտակցությունն արմատապես այլ մակարդակի վրա, մի մակարդակի, որը համապատասխանում է բանական մարդու գիտակցությանը, այլ ոչ թե մարդ-կենդանու, ինչպիսին այժմ մարդկանց մեծամասնությունն է:

Որքան էլ ցավալի լինի ձեզ համար այս մասին լսելը տարվա ավարտին, այնուամենայնիվ ես հանդգնում եմ դա մատնացույց անել ձեզ: Ե՛վ ձեր տոները տոնելու համառ սովորույթը, և՛ այդ սովորույթը պահպանելու ձեր համառությունը կարող էին անհամեմատ ավելի լավ կիրառություն գտնել: Ի՛նչ արած, դուք դեռևս ժամանակ ունեք, որ համառություն դրսևորեք ձեր սովորություններով: Սակայն անհամեմատ ավելի լավ կլինեք, եթե ձեր մեջ ուժ գտնեիք արմատախիլ անելու ձեր հին կարծրատիպերը և սկանչալուր լինելիք մեզ՝ Համբարձյալ Դասերիս:

Շատ և շատ սովորություններ, որոնք դուք սրբորեն պահպանում եք, վերանայման են արժանի: Իսկ դա շատ էական է, քանի որ նոր սերունդն անգիտակցաբար՝ ենթագիտակցական մակարդակով, ներծծում է իր մեջ ձեր վարվելակերպը, հիշարժան տարեթվեր տոնելու ձեր սովորույթը: Եվ այդքանից հետո դուք միամտաբար ակնկալում եք, որ ձեր երեխաները ձեզանից ավելի խելացի՝ կլինեն, ավելի վեհ և ավելի նրբակի՞րթ... Ո՛չ, դուք ինքներդ ձեր ամենօրյա գործողություններով ձեր երեխաների գիտակցության մեջ ամրապնդում եք վարվեցողության այն կարծրատիպերն ու կենսակերպերը, որոնցից նրանք չեն կարողանում ձերբազատվել երբեմն մինչև իրենց կյանքի վերջը:

Մտորե՛ք. մի՞թե ավելի հեշտ չէր լինի, եթե ինքներդ ազատվեիք ձեր թերություններից, փոխանակ ձեր զավակների մեջ դրանք բազմացնելու՝ ի հավելումն այն կարմայական բեռի, որոնցով նրանք կյանք են մտնում: Եթե դուք իրոք հոգ եք տանում ձեր երեխաների մասին՝

ցանկանալով նրանց ամենալավ բաները, ապա ձեզ համար կանոն դարձրեք վերահսկել ձեր վարվելակերպը տանը, աշխատանքի վայրում և փողոցում: Կանոն դարձրեք վերահսկել ոչ միայն ձեր գործողությունները, այլ նաև ձեր մտքերն ու զգացմունքները: Քանզի այնժամ, երբ ձեր վարվեցողությունն աստվածային գծեր ձեռք կրերի, ձեր զավակներն իրապես կկարողանան ձեզնից շատ բաներ սովորել և հարյուրապատիկ փոխհատուցել ձեզ, երբ այլևս չեք կարողանա հոգալ նրանց մասին, այլ հենց ինքներդ կզգաք նրանց հոգածության ու խնամքի կարիքը:

Դուք ձեր զավակների մեջ ներդնում եք վարվեցողության բոլոր ճիշտ և ոչ ճիշտ նմուշները՝ սկսած նրանց ծննդյան օրից և նույնիսկ նախքան ծնվելը, երբ մի գեղեցիկ օր հանկարծ ձեզ համար պարզ է դառնում, որ երեխա եք ունենալու:

Այսօր հենց այն օրն է, երբ ձեզ հնարավորություն է տրվում հրաժեշտ տալու հինին և ձեռնամուխ լինելու նոր վարվեցողության: Փորձեք ցանկություն դրսևորել նոր տարում այնքան փոխվելու, որ ձեր վարվեցողությունը համապատասխանի աստվածային այն ամենալավ կերպերին, որոնց կարող է հասու դառնալ ձեր գիտակցությունը: Փորձեք նոր կյանք սկսել և կտեսնեք, թե որքան դժվար կլինի դա. ոչ միայն որոշում կայացնելը, այլ նաև այն կյանքում կիրառելը՝ թեկուզ նոր տարվա առաջին մի քանի օրերի ընթացքում:

Ես ձեզ չափից դուրս շատ հոգնեցրի ձեր ինքնադաստիարակության թեմայի շուրջ իմ խորհրդածություններով: Այնուհանդերձ, որքան ավելի շուտ մտածեք այն մասին, թե ինչը կարող եք փոխել ձեր մեջ՝ ձեր վարքում, այնքան ավելի շուտ կկարողանաք վերափոխել և ձեր մերձավորներին՝ նրանց, ում հետ շփվում եք: Մի՛ փորձեք վերափոխել ձեր շրջապատը, այլ փորձեք վերափոխել ինքներդ ձեզ, և ձեր շրջապատը ստիպողաբար կհամակերպվի ձեր որդեգրած վարվեցողության նոր կերպերին: Երբևէ ինչ-որ մեկը պետք է սկսի: Հետո աստիճանաբար ոչ մոդայիկ կդառնան հեռուստացույց դիտելը, ծխախոտով և գարեջրի զավաթով երեկոն անցկացնելը: Կչքվեն սխալ կարծրատիպերը, նրանց փոխարեն ի հայտ կգան վարքի նոր կերպեր:

Ձեր կյանքում կարգ սահմանողը դուք ինքներդ եք: Եվ վաղ թե ուշ պետք է սկսեք փոխել ձեր կյանքն՝ ըստ ժամանակի պահանջի: Փորձե՛ք և կզգաք, որ ձեր ինքնազգացողությունը լավանում է, քանի որ դրանով ձեր վարքը կհամապատասխանի ժամանակի պահանջին և այն նոր թրթռանքներին, որոնք մուտք են գործում Երկիր:

Բոլորաշրջանը փոխվել է, և ժամանակը շարունակում է արագանալ: Ուստի, որքան արագ փոխեք ձեր վարքն ու երեկվա ձեր սովորությունները, նույնքան արագ էլ ողջ աշխարհը կթևակոխի Նոր Դարաշրջան:

Դուք կարիք չունեք որևէ մեկին մեղադրելու կամ ցուցումներ տալու այն մասին, թե ինչպես վարվի: Պարզապես պետք է փոխեք ձեր սեփական վարքի կարծրատիպերը և ձեր օրինակով ցույց տաք ուրիշներին, թե դա ինչպես պետք է արվի: Եկել է ձեր գիտակցության մեջ հեղափոխություն անելու ժամանակը: Եվ վարքի կարծրատիպերի այն փոփոխությունները, որոնք մոտակա ժամանակում տեղի կունենան, ընդամենը մի քանի տարի հետո այլևս չեն զարմացնի մարդկանց, քանի որ նոր ժամանակների համար գործեր վարելու նոր կարգեր ի հայտ կգան, ա՛յլ կլինեն ընտանեկան փոխհարաբերություններն ու ամբողջ ընտանեկան դրվածքը: Նոր ընտանիքը կհիմնվի աստվածային սկզբունքների վրա, ո՛չ ջերմեռանդ աղոթքների և անվերջ ինքնաչարաչարանքի վրա: Նոր ժամանակը կտարբերվի նրանով, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամի վարքի մեջ կենսականորեն կներդրվեն աստվածային սկզբունքներ: Եվ դուք զարմանքով կնկատեք, որ ուրիշ մարդկանց հետ ունեցած ձեր հարաբերությունները շատ քիչ են տարբերվում այն հարաբերություններից, որոնք ընդունված են ձեր ընտանիքի կազմում: Քանզի բոլորդ ազգակիցներ եք և պատկանում եք մեկ մեծ մարդկային ընտանիքի, որի համար երկրագունդը միասնական տուն է:

Եվ ճիշտ այնպես, ինչպես մարդկային հասարակությունը բաժանում եք առանձին ընտանիքների, հետո զարմանքով ձեզ հայտնաբերում ավելի մեծ ընտանիքի կազմում, այնպես էլ զարմանքով կպարզեք, որ ոչ մի հակասություն գոյություն չունի տարբեր երկրներում բնակվող ժողովուրդների և ազգերի միջև: Եվ ազգերի միջև տարբերություններն ավելի շատ չեն, քան ձեր և ձեզնից հազարավոր կիլոմետրեր հեռու ապրող ձեր ազգականների միջև եղած տարբերությունները:

Համաձայն եմ, որ ամեն ինչ իր ժամանակն ունի, և այն ամենը, ինչի մասին այստեղ խոսվեց, ի կատար չի ածվի հենց եկող տարում: Բայց հաջորդ հազարամյակի որևէ մի տարում դա լիովին կարող է ի կատար ածվել:

Ամեն դեպքում, ես այդ դրական տեսլականը պահում եմ իմ գիտակցության մեջ և ձեզ ջանադիր խորհուրդ եմ տալիս ձեր գիտակցության մեջ պահել հնարավորինս շատ դրական տեսլականներ հատկապես զանգվածային տոների շրջանում:

Ի վերջո որևէ մեկը պե՞տք է պաշտպանի հավասարակշռությունն այն պայմաններում, երբ մնացած բոլոր մարդիկ դեռ իրենց գիտակցությամբ չեն յուրացրել աստվածային վարվեցողության տարրական նորմերը:

ԵՍ ԵՄ Չրադաշտը, ձեզ հաջողություններ եմ մաղթում Նոր տարում.

Հաութամա Բուդդա
1 հունվարի, 2007 թ.

Տարեմուտի ուղերձ

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան՝ տարեմուտի այս օրով կրկին ձեզ այցի եկածը:

Ամեն անգամ, երբ սկսվում է նոր տարեկան շրջան, մենք գալիս ենք, որպեսզի խրատներ տանք ժամանակի նոր բոլորաշրջանի վերաբերյալ:

Դուք գիտեք, որ տարեկան շրջանի վրա Կարմայի Օրենքի ազդեցությունն այնպիսին է, որ կարման իջնում է ոչ թե միանգամից, այլ փոփոխվում է ամբողջ տարվա կտրվածքով: Յուրաքանչյուր ամիս ձեզ վրա իջնում է կարմայի որոշակի քանակություն: Այդպիսով դուք հնարավորություն եք ստանում բեռնաթափելու կարման աստիճանաբար՝ տարի առ տարի, ամիս առ ամիս: Եթե ձեզ հնարավորություն տրվեր միանգամից բեռնաթափելու ձեր ամբողջ կարման՝ ամբողջ ձեր բացասական էներգիան՝ ողջ այն էներգիան, որն աղավաղել էր ձեր անցած կյանքերի ընթացքում, ապա դուք չէիք կարողանա դիմակայել դրան: Ձեր մարմիններն ակնթարթորեն կվերածվեին գզգզված կծիկների: Այդ պատճառով Օրենքը գործում է այնպես, որ դուք ձեր կյանքի յուրաքանչյուր պահի հնարավորություն ունենաք լուծելու ուղիղ այնքան բացասական էներգիայի հարցը, որքան որ ի վիճակի եք լուծել: Ձեզ վրա երբեք ավելի շատ բեռ չի դրվում, քան կարող եք կրել: Ուստի ձեզնից պահանջվում է պարզապես հնազանդվել այս տիեզերքի Օրենքին և խոնարհությամբ սպասել ձեր իսկ ստեղծած կարմայական էներգիայի վերադարձին, որը ձեր բեռնաթափմանն է հանձնվում բոլորաշրջանային չափաբաժիններով:

Տարեմուտը պայմանականորեն կարելի է համարել որպես անցյալի էներգիայի նոր շերտադարսվածքի բեռնաթափման սկիզբ: Եվ ամեն մի հաջող ավարտած տարով դուք բեռնաթափում եք ձեր անցյալի կարման և մերձենում գիտակցության նոր մակարդակի: Եվ եթե այն նոր կարման չլիներ, որը դուք անդուլ կերպով կուտակում եք, ապա ընդամենը մի քանի տարին բավական կլիներ, որպեսզի ձերբազատվեիք ձեր անցյալի կարմայի բեռի առյուծի բաժնից:

Սակայն ձեզնից ոչ բոլորն են խելացիորեն տնօրինում իրենց ստացած Աստծո էներգիան և մարմնավորման մեջ գտնվելու իրենց ժամանակը: Այդ պատճառով բացասական էներգիայի այն քանակությունը, որը ձեզնից շատերը բեռնաթափում են՝ տառապանքներ, հիվանդություններ ու դժբախտություններ կրելով, նորից համալրվում է նոր կարմայով, որը դուք անխոնջ կերպով կուտակում եք ձեր կյանքի ոչ ճիշտ գործողություններով ու նախընտրանքներով:

Եվ եթե չլիներ Աստծո բարեհաճությունը, ապա դուք լրիվ կգրկվեիք հետագա առաջընթացի հնարավորությունից՝ ելնելով այն հանգամանքից, թե որքան մեծ կարմա եք կուտակում ձեր կյանքերի ընթացքում: Սակայն Աստծո բարեհաճության շնորհիվ այդ կարման ձեզ միանգամից չի վերադարձվում, այլ սպասվում է այն բարենպաստ հնարավորությանը, երբ դուք ի վիճակի կլինեք կրելու անցյալի բացասական էներգիան. ոչ միայն դիմանալու կարմայական բեռի ծանրությանը, այլ նաև մտորելու այն մասին, թե ինչու ձեր գլխին միանգամից այդքան շատ դժբախտություն թափվեց: Եվ այդ կերպ միայն ձեզնից շատերն ի վիճակի կլինեն գիտակցելու Բարձրագույն Օրենքի գոյությունն ու ողջ էությամբ ձգտելու, որ ենթարկվեն այդ Օրենքին:

Ձեզնից շատերը հասել են գիտակցության այնպիսի մակարդակի, որ դիմում են Կարմայական Վարչությանը՝ խնդրելով արագացնել իրենց կարմայի վերադարձը, որպեսզի այս կյանքում հնարավորություն ունենան բեռնաթափելու կարմայի առավելագույն քանակություն և կարողանան ծառայություն իրականացնել նոր՝ կարմայից ազատ, գիտակցության մակարդակով:

Միակ բանը, որի մասին կուզենայի ձեզ զգուշացնել, հետևյալն է. այն բանից հետո, երբ նամակով նման խնդրանք եք արտահայտում, և կարման սկսում է արագացված ձևով վերադառնալ, մի՛ մոռացեք ձեր խնդրանքի մասին և մի՛ դժգոհեք ճակատագրից: Բանն այն է, որ կարմայի վերադարձը կարող է ինչպես ձեր խնդրանքով արագանալ, այնպես էլ կանգնեցվել կամ էլ ետ բերվել նախկին բնականոն վերադարձի արագությանը: Մի՛ մոռացեք ձեր խնդրանքների մասին, և եթե տաքցուիս կերպով հաշվի չեք առել ձեր կարողությունները, ապա նորից նամակ

հղեք Կարմայական Վարչությանը և խնդրեք, որ այլևս ձեր կարմայի վերադարձի գործընթացը չարագացվի:

Շատ շատերդ հաշվի չեք նստում այն պարտավորությունների հետ, որոնք ձեզ վրա եք վերցրել նուրբ մարմնով եղած ժամանակ՝ հոգու մակարդակով: Ուստի այնժամ, երբ ձեր կյանքերում բախվում եք դժվարությունների հետ, և այդ դժվարություններն ամբողջությամբ կլանում են ձեզ, խորհրդածե՛ք ներքուստ: Չրուցե՛ք ձեր Բարձրագույն Ես-ի հետ, խորհու՛րդ հարցրեք: Չե՛ որ Երկնային մեծ բարեհաճության շնորհիվ կարմայի վերադարձի գործընթացը կարող է ձեր կողմից կարգավորվել: Հատկապես կարևոր է դա այն դեպքում, երբ դուք բարի կարմա եք ձեռք բերել՝ օգնելով համայն գոյին և Վեհապետներին: Քանզի ձեր բարի կարման այդ դեպքում կարող է օգտագործվել և կիրառվել այն բանի համար, որպեսզի թեթևացվի ձեր կարմայական բեռի ինտենսիվությունը:

Եթե գիտակցել եք Կարմայի Օրենքի գործելակերպը և ձեր կյանքում ձգտում եք գործել՝ համաձայն այդ Օրենքի, ուրեմն բավարարել եք ձեր հետագա զարգացման կարևորագույն պայմաններից մեկը, և Երկնային բարեհաճությունը չի հապաղի ձեր առաջին իսկ կանչով օգնության հասնելու ձեզ:

Կարեկցանք են հարուցում այն անհատները, որոնք անտեսում են Կարմայի Օրենքը և շարունակում ապրել այն օրենքով, թե «Ինձնից հետո՝ թեկուզ ջրհեղեղ»: Հարկ է, որ լավ մտածեք այդ արտահայտության մասին. գուցե հաջորդ ձեր կյանքում ինքներդ ընկնեք հենց այն ջրհեղեղի մեջ, որը հիմա ձեր այդ խոսքով ձեր գլխին եք կապում: Խորհեցե՛ք այն մասին, թե որքան դժբախտություններից ու խնդիրներից կհաջողվեր խուսափել, եթե մարդիկ իրենց կյանքի յուրաքանչյուր վայրկյանին մտածեին ոչ միայն իրենց գործողությունների, այլ նաև իրենց մտքերի ու զգացմունքների հետևանքների մասին:

Մեր ուղերձների նպատակներից մեկն էլ հենց այն է, որ ձեզ սովորեցնենք հաշիվ տալ ձեր ամեն մի գործողության, մտքի ու զգացմունքի համար: Քանզի Աստծո, տիեզերական Օրենքի առաջ ոչինչ գաղտնի չի մնում, և ձեր բոլոր մտքերն ակաշիի ժամանակագրություններում գրի են առնվում այնպես, ինչպես և ձեր բոլոր գործողություններն ու արարքները: Դուք կարող եք կեղծավորություն անել մեկդ մյուսի հանդեպ և թաքցնել ձեր իրական շարժառիթներն ու բացասական մտքերը: Բայց Աստված ամեն ինչ տեսնում է, և հնարավոր չէ Նրանից թաքցնել ձեր հոգու շարժի ոչ մի նշույլը:

Եվ վատ չէր լինի, եթե ձեզ համար կանոն դարձնեիք ձեր կողքին մշտապես անտեսանելի վկայի ներկայություն զգալը, վկա, որը հետևում է ձեր բոլոր գործողություններին և ձեր հոգու յուրաքանչյուր շարժմանը: Այդ դեպքում դուք ավելի մեծ պատասխանատվություն կցուցաբերեիք ձեր կյանքի բոլոր գործողությունների ու նախընտրանքների նկատմամբ:

Նաև կամենում եմ ձեզ մի շատ կարևոր խորհուրդ տալ, որով առաջնորդվելով՝ կկարողանաք շատ արագ մեծացնել ձեր բեռնաթափած կարմայի տոկոսը: Ամեն անգամ, երբ կյանքում ձեր առաջ այլընտրանք կլինի, թե ինչպես վարվել, աշխատեք հասկանալ այն շարժառիթը, որը ձեզ դրել է այդ այլընտրանքի առաջ: Եվ եթե դուք ձգտում եք անել այնպիսի մի բան, որ լավ լինի անձամբ ձեզ համար, ապա սխալ շարժառիթ ունեք, և ձեր ընտրության հետևանքը կլինի այն, որ կմեծացնեք ձեր կարմայական բեռը:

Իսկ այն դեպքում, երբ առաջնորդվում եք այնպիսի շարժառիթով, որ լավ լինի ուրիշ մարդկանց կամ այլ կենդանի էակների համար, ապա, եթե նույնիսկ ձեզ թվա, թե ձեր ընտրությունը կորստաբեր կլինի ձեզ համար և բոլոր մարդկային օրենքներով ու տարրական տրամաբանության տեսակետից ոչ շահավետ, ապա մի՛ վիստվեք: Աստվածային տրամաբանության տեսակետից դուք ճիշտ ընտրություն եք կատարում, և այն անխուսափելիորեն կհանգեցնի ձեր կարմայական բեռի թեթևացմանը: Դուք կորցնում եք փոքրում, բայց շահում մեծում:

Ասենք, օրինակ, դուք քայլում եք լեռնային կաճանով, և ձեր առաջ հանկարծ հայտնվում է մեկը, որը ձեր օգնության կարիքն ունի: Դուք զբաղվում եք նրան օգնելով և ժամանակ եք կորցնում: Արևը մայր է մտնում, և դուք ձեր ուղուց հետ եք մնում: Բայց եթե հագուրդ չտաք ափսոսանքի զգացմանը, ապա վաղը ձեր առջև կբացվի մի նոր ճանապարհ, որի մասին առաջ գաղափար չունեիք, և որով առաջանալով՝ դուք անհամեմատ ավելի շուտ տեղ կհասնեք, քան ինքներդ նախապես պլանավորել էիք:

Ահա այդպես է գործում Կարմայի Օրենքը:

Բարի գործեր անելիս երբեք մի՛ մտածեք ձեր օգուտի մասին: Թողեք, որ ձեր կարմայական պարտքերն ու նվաճումները հաշվեն այն երկնային էակները, որոնք դա պետք է անեն ի պաշտոնե: Պարգապես բարի գործեր կատարեք և մի՛ մտածեք պարգևի մասին:

Ես ուրախ եղա տարեմուտի այս օրով տիեզերքում գործող Մեծ Օրենքի մասին ձեզ հիշեցնելուս առիթով և հույս ունեմ, որ դա արեցի, ինչպես միշտ, ճիշտ ժամանակին:

Տեր Շիվա
2 հունվարի, 2007 թ.

Ձրույց Աստծո մասին

ԵՄ ԵՄ Շիվան, կրկին եկել եմ, որպեսզի տամ հերթական ուղերձս...

Շիվան ԵՄ ԵՄ...

Եկել եմ, որպեսզի իմ այցելության ակնառատաբար դառնաք հատկապես տարվա սկզբին՝ մի ժամանակ, երբ ձեզնից շատերը, կենտրոնացած լինելով ապագայի պլանների վրա, զարմանքով դիտում են, թե ինչպես է փոխվում իրենց կյանքն ու շրջակա ամեն ինչ: Եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ուղղություն տամ ձեր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աշխատանքին:

Ձեր ներքին աշխատանքը մշտապես հետևյալն է՝ կայանալ որպես Աստծո դրսևորում և հրաժարվել ներքին այն ամենից, ինչ Աստծուց չէ:

Ամեն անգամ, երբ փորձում եք ձեր ներսում գտնել մի բան, ինչն անիրական է, և այդ հատկանիշը պատվանդանի վրա հանել աստվածայինի փոխարեն, այլ բան չեք անում, քան Ուղուց շեղվելն է: Պետք է աչալուրջ վերահսկեք նման պահերը:

Ձեր կյանքերում դուք կրախվեք ձեր մերձավորների, կողակիցների, զավակների և ձեզ սիրելի այլ մարդկանց աստվածացմանը: Կրախվեք առարկաների, ճոխության իրերի, փողերի աստվածացմանը: Կրախվեք նաև ուժի և իշխանության աստվածացմանը: Դուք շատ բաներ կդնեք պատվանդանին և կխոնարհվեք այդ կուռքերի առաջ Աստծո փոխարեն:

Սակայն կանցնի որոշ ժամանակ, և դուք կսկսեք գլխի ընկնել, որ չկա ոչինչ, որ կարողանար զբաղեցնել ձեր սրտերում առկա ճշմարիտ Աստծո տեղը:

Ձեզնից որոշներն արդեն սկսել են հասկանալ այս հասարակ ճշմարտությունը: Եվ քանի որ շատ աստվածություններ են պատվանդաններից տապալվել հենց ձեր կամ կյանքի հանգամանքների շնորհիվ, ապա արդեն վախենում եք հերթական անգամ զրկվել որևէ բանի հետ ունեցած ձեր կապվածությունից: Ուստի և շատերդ կասկածամտությամբ եք մոտենում այն ճշմարիտ Աստծուն, որը պահ է մտել ձեր սրտում և ուզում է հարաբերակցվել ձեզ հետ:

Մի՛ երկյուղեք: Վերջապես եկել է ժամանակը, երբ ձեզ վիճակված է հանդիպել Աստծո իրական դրսևորման հետ: Ձեզ վիճակված է հանդիպել ձեր ներսի Աստծո հետ: Եվ դա տեղի կունենա միայն այնժամ, երբ դուք մեկը մյուսի հետևից պատվանդանից ցած կգործեք կեղծ կուռքերին:

Մի՛ երկյուղեք: Միշտ առկա է չափանիշ, որով կկարողանաք կեղծ աստվածների ու աստվածուհիների բազմության մեջ զանազանել ճշմարիտ Աստծուն:

Եվ հենց ինքներդ մշտապես գիտեք, թե երբ եք ձեր կյանքում առնչվում ճշմարիտ Աստծո ի հայտ գալու հետ:

Այնժամ, երբ հանգիստ եք, խաղաղված, և ձեր սիրտը լի է աստվածային անդորրով, ոչ ոք ձեզ չի կարող համոզել, թե չեք գտել ճշմարիտ Աստծուն:

Դա հնարավոր չէ շփոթել որևէ այլ բանի հետ: Սակայն ձեզնից շատերը դեռ շարունակում են փնտրել և գտնել կեղծ աստվածներ և կուռքեր:

Իսկ ի՞նչ անեք, որ չմոլորվեք. ինչպե՞ս ձեր սրտում գտնեք ճշմարիտ Աստծուն:

Ճշմարտությունը հենց այն է, որ դուք չեք կարողանա գտնել ճշմարիտ Աստծուն, քանի դեռ չեք հրաժարվել կեղծ աստվածներից և ձեր աշխարհի հետ ունեցած կապերից: Եթե դուք փորձում եք գտնել Աստծուն, որպեսզի իրականացնեք ձեր որևէ մոլուրդ կամ դրսևորեք ձեր որևէ հատկանիշը, ապա չեք կարողանա գտնել Նրան: Չեք կարողանա գտնել ճշմարիտ Աստծուն, քանի դեռ ողջ սրտով չեք ձգտում դեպի Նա, քանի դեռ չեք կարողացել հրաժարվել ձեր ցանկացած զուտ մարդկային նկրտումներից, այդ թվում նաև՝ Աստծուն պաշտելու ձեր ձգտումից:

Ձեզ համար դժվար է դրան հավատալ և դա հասկանալ, սակայն շատ մարդիկ Աստծո նկատմամբ ճշմարիտ հավատը փոխարինում են աստվածության կույր պաշտումով:

Աստծո արտաքին պաշտամունքը ոչ մի ընդհանուր բան չունի Աստծո ներքին պաշտման հետ: Եվ Աստծո արտաքին պաշտամունքը միայն առաջին՝ սամենաառաջին, քայլն է այն ուղու, որը տանում է դեպի ճշմարիտ Աստված, որ նստած է ձեր սրտի գահին:

Ձեզնից յուրաքանչյուրը պետք է մերձենա Աստծուն: Ձեզնից յուրաքանչյուրն անխուսափելիորեն կմերձենա իր այն Աստծուն, որը նստած է իր սրտի գահին: Սակայն ձեզնից յուրաքանչյուրը դեռ կփնտրի՝ շատ աստվածների, որոնք տեղ են գտնում տաճարներում ու եկեղեցիներում, վանքերում ու մզկիթներում:

Դուք երկա՛ր կփնտրեք ձեր Աստծուն: Եվ կգտնեք Նրան այն հրաշալի օրը, երբ ձեզ կթվա, թե կյանքը ձեզ համար լրիվ կորցրել է իմաստը, որ չկա աշխարհում ոչինչ, որի հետ ձեզ կապված զգաք: Դուք ձեր կյանքում կհայտնվեք կոտրած տաշտակի առաջ, ձեր ընտանիքի, ձեր աշխատանքի և էլի ինչ-որ բանի փլուզման առաջ, այն ամենի առաջ, ինչը ձեզ համար նշանակալից էր և այլևս չկա: Ահա այդ պահին, երբ ձեր աշխարհում ոչինչ չի մնա, որի հետ ձեզ կապված զգաք, վերջին հույսով ձեր հայացքը կհառեք դեպի երկինք և կասեք ձեր սրտում. «Տե՛ր, օգնի՛ր, Տե՛ր: Ես գիտեմ, որ Դու կաս: Գիտեմ, որ Դու յուրեք ես ինձ: Ես հավատում եմ Քո հզորությանն ու բարեհոգությանը: Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և հավատում եմ, որ այն ամենը, ինչ արել ես ինձ հետ, անհրաժեշտ է եղել, որպեսզի մոռենամ Քեզ: Ների՛ր ինձ, Տե՛ր, այն ամենի համար, ինչ արել ես չիմացությանը: Շնորհակալ եմ Քեզ, Տե՛ր, Քո գիտության և այն բանի համար, որ թույլ տվեցիր ինձ անցնել բոլոր փորձություններն ու պատվով դիմանալու դրանց: Օգնի՛ր ինձ, Տե՛ր, գտնելու Քեզ և կյանքում այլևս երբեք չբաժանվելու Քեզնից»:

Եվ ահա այդ պահին ձեզ կթվա, թե Երկինքը բացվել է: Դուք կզգաք մի բան, ինչը երբևէ չեք զգացել ձեր կյանքում: Կհասկանաք, որ այն ամենը, ինչին ձգտում էիք, արդեն ունեք և միշտ եք ունեցել: Եվ այդ ամենը ձեր ներսում է՝ ձեր սրտում, բայց դուք մինչև ձեր կյանքի այդ պահը, երբ արդեն ձեր ականջները լսում են, և աչքերն էլ՝ տեսնում, չեք կամեցել ո՛չ լսել, ո՛չ էլ տեսնել:

ԵՍ լի եմ ՀՎՎՏ-ով և ՀՈՅՍ-ով, որ ձեզնից յուրաքանչյուրը նման զգացում կամ արդեն ապրել է, կամ դեռ կապրի: Եվ հուսով եմ, որ այդ զգացումը ձեր մեջ այնպիսի անջնջելի հետք կթողնի, որ դուք մշտապես՝ մինչև ձեր տվյալ կյանքի ավարտը, կմնաք Աստծո հետ համահունչ վիճակում: Եվ կյանքի ինչպիսի դժվարին իրավիճակում էլ հայտնվելու լինեք, դուք այլևս ձեր ձախորդություններից ու դժբախտություններից հետո չեք հայիոյի Աստծուն և չեք մեղադրի Նրան: Դուք կհասկանաք և կընդունեք, որ ձեր բոլոր ձախորդությունների ու դժբախտությունների համար մեղավոր եք եղել ինքներդ, քանի որ պարտաված եք եղել գոռոգությամբ ու տգիտությամբ: Եվ հենց այդ տգիտությունն էլ փակել էր ձեր աչքերը:

Ես ուրախ եմ, որ մեր այսօրվա գրույցը կայացավ: Եվ ուրախ եմ, որ ձեր գիտակցությանը հասցրի այն վիճակի նկարագրությունը, որը թույլ կտա հաղթահարելու ինքներդ ձեզ և մերձենալու Աստծուն:

ԵՍ ԵՄ Շիւխան՝ ձեր մեջ եղած ողջ անխրակսանն ավերողը

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
3 հունվարի, 2007 թ.

Լուր Կարմայական Վարչության նիստից

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ այս օրով ձեզ այցի եկածը, որպեսզի տամ հերթական ուղերձը, որը կապված է այս օրերի՝ ժամանակի հաշվանքի տարեկան շրջանի սկզբի հետ:

Կա ևս մեկ կարևոր բան. ավարտվել է Կարմայական Վարչության ամենամյա ձմեռային նիստը, և ես պատրաստ եմ ձեզ հաղորդակից դարձնելու դրա մի քանի որոշումներին:

Ես կանխավայելում եմ, որ շունչներդ պահած կկարդաք իմ այս ուղերձը, քանզի այն ձեզ շատ անսպասելի անակնկալներ կմատուցի: Ես նման եմ ձեր տոնական Ձմեռ Պապին, որը, նվերների պարկը շալակն առած, սպասում է դռան շեմին:

Բացե՛նք իմ բերած պարկը և տեսնենք, թե ինչ եմ ձեզ համար բերել: Այս անգամ ուրախ լուրերն անհամեմատ ավելի շատ են, քան տխուրները: Մենք կամենում ենք ձեր գիտակցությանը ներկայացնել անցած տարվա արդյունքները: Իսկ դրանք, ինչպես, հավանաբար, գլխի եք ընկնում, անհամեմատ ավելի հուսադրող են, քան անցած գույգ տարիներին: Արդյունքները լավ են այն իմաստով, որ ձեզնից շատերն արթնացան և սկսեցին իրենց արթմնի գիտակցությամբ ձեռնարկել գործողություններ, որոնք հանգեցնում են այլոց արթնացմանը: Ձեզ հայտնի է, որ ձեր աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է: Իսկ նուրբ ոլորտում դուք անհամեմատ ավելի միասնական եք, քան Ֆիզիկական ոլորտում: Եվ այն, ինչ մատչելի է դառնում մեկին՝ դառնալով նրա հոգևոր նվաճումը, կարող է յուրացվել շատերի կողմից: Այդպիսին է Օրենքը: Ուստի մենք այդքա՛ն հոգածություն ենք ցուցաբերում ձեզնից նրանց նկատմամբ, ովքեր կանգնած են նոր գիտակցության արթնացման շեմին: Մենք տառացիորեն նմանվում ենք դայակների, ովքեր պատրաստ են խնամելու ձեզ և ավարտին հասցնելու ձեր այն գործերը, որոնք սկսում եք և երբեմն չեք կարողանում ավարտել՝ ձեր ծուլության և անճարակության պատճառով: Քանզի ձեզնից ամեն ոք, ով ունակ է իր գիտակցությունը հասցնելու մինչև որոշակի մակարդակի, նուրբ ոլորտում որպես արագացուցիչ և տեղեկատվության փոխանցիչ է ծառայում հազարավոր հոգիների համար, որոնց հետ կա՛մ

կապված է կարմայական կապերով, կա՛մ պատկանում է մարդկային տոհմաժառի միևնույն ճյուղին:

Այդ պատճառով մենք ձգտում ենք, որ մեր Ուսմունքը թարգմանվի հնարավորինս շատ լեզուներով և տարածվի աշխարհի հնարավորինս շատ տարածքներում: Մենք պատրաստ ենք այդ ուղղությամբ գործող յուրաքանչյուրին ցուցաբերելու հնարավոր ողջ օգնությունը: Մի՛ ամաչեք օգնություն հայցել Կարմայական Վարչությունից: Նաևակ հղեք անձամբ ինձ: Եթե ձեր դեմ ինչ-որ խնդիրներ են ծառացել, որոնք խանգարում են մեր ուղերձները տարածելու ձեր ծառայությանը, ապա, եթե կարմայական իրավիճակը թույլ է տալիս, ձեր խնդրանքները կքննարկվեն և կձեռնարկվեն բոլոր միջոցները, որպեսզի ձեզ օգնություն ցուցաբերվի, վերացվեն ձեր ներքին խոչընդոտները և փոխվեն կարմայական հանգամանքները:

Քանզի ձեզնից ամեն ոք, ով գրադվում է մեր ուղերձները տարածելու գործով, իրականում հազարավոր մարդկանց համար է աշխատում: Եվ այդ մարդկանց հոգիներն ունակ են դառնում նուրբ ոլորտում արթնանալու և ձեր միջոցով այնտեղ ստանալու ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Դուք չեք կարող պատկերացնել, թե ձեր օրոք որքա՛ն արագ է ամեն ինչ տարածվում: Եվ այստեղ միայն համացանցն ու մյուս կապի միջոցները չէ, որ դեր են խաղում: Հենց ինքը ժամանակն է ձեզ ահռելի հնարավորություններ ընձեռում: Եվ մենք՝ Համբարձյալ Դասերս, պատրաստ ենք ամեն անգամ ձեզ տալու հերթական հնարավորությունը: Ուստի լինում է այնպես, որ մենք մեր նիստերի ընթացքում ի սպաս ենք դնում բոլոր պահուստները, որ ձեզ օգնություն ցուցաբերենք: Մենք տառացիորեն կորզում ենք ազատ էներգիայի ամեն մի էրզը, որ օգնենք ձեզ հաղթահարելու այն արգելքները, որոնք հանդիպում են ձեր ծառայության ճանապարհին: Ուստի մի՛ ամաչեք ձեր խնդրանքներով ու պրոբլեմներով մեզ դիմելուց: Հենց որ հնարավոր դառնա, մենք ընթացք կտանք ձեր խնդրանքին և կօգնենք ձեզ:

Հատկապես կարևոր է ձեզնից նրանց ծառայությունը, ովքեր անշահախնդրորեն մեզ են առաքում իրենց աղոթքի էներգիան: Այդ դեպքում մենք հնարավորություն ենք ստանում էներգիա կուտակել, որն օգնության տեսքով առաքվում է առաջին հերթին նրանց, ում աշխատանքն ու ծառայությունը կապված են մարդկանց գիտակցությունը փոխելու հետ:

Ես ուրախ եմ, որ երկար տարիներից հետո, այս տարի առաջին անգամ կարող եմ ձեզ ասել. «Ապրե՛ք, այդպես էլ շարունակե՛ք...»:

Ձեր ջանքերն իզուր չանցան, և մեր համագործակցությունը՝ ձեր, որ գտնվում եք մարմնավորման մեջ, և մեր, որ Համբարձյալ Դասերն ենք ներկայացնում, ավելի ու ավելի հաջող է ընթանում:

Ամեն անգամ, երբ մենք սկսում ենք հերթական նիստը, որը համընկնում է տարվա վերջի հետ, ես սրտի թրթիռ եմ ապրում: Քանզի ընդհանուր նկարագիրը ոչ միշտ է ակնհայտ լինում, և իրադարձությունների բարենպաստ ընթացքի հնարավորության գերակշռությունը հազիվհազ է նկատելի լինում:

Այս անգամ նախքան նիստը սկսելը մեզնից ոչ ոք չէր կասկածում, որ երկար տարիներից հետո Երկիր մոլորակի իրադարձությունների բարենպաստ ընթացքը զգալիորեն գերակշռող է անբարենպաստի նկատմամբ: Իհարկե, կան առանձին երկրներ և ամբողջ տարածաշրջաններ, որտեղ իրավիճակը դեռևս շատ լուրջ է, և որոնք մեր և ձեր անշահախնդիր օգնության կարիքն ունեն: Այնուհանդերձ մենք ուրախ ենք, որ այնպիսի հսկա մայրցամաքում, ինչպիսին Եվրասիան է, իրավիճակը շտկվում է:

Արևմտյան կիսագունդն իր գիտակցության զարգացման մակարդակով ետ է մնում: Եվ դա մեզ վշտացնում է: Մենք հատկապես տխրությամբ ենք համակվում, երբ մեր հայացքը հառում ենք Ամերիկայի հողին: Այդ երկրի հսկայական ներուժը, ցավոք սրտի, դեռևս ուղղվում է ո՛չ դեպի էվոլյուցիոն զարգացման կողմը: Մենք շատ ջանքեր ենք գործադրում, որ այդ ազգի մի քանի ներկայացուցիչների գիտակցության վրա ազդելու մոտեցում գտնենք, որոնք ունակ են ընկալելու մեր Ուսմունքի մեջ եղած նորն ու այն նոր մոտեցումները, որ վերաբերում են ոգու զարգացման բնագավառին: Ես անկեղծորեն հույս եմ տածում, որ նոր տարում մեր ջանքերի պտուղներն ի հայտ կգան: Խնդրի դժվարությունը հենց այդ ազգի բնավորության մեջ է: Քանզի ամերիկացիք չեն կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ իրենց երկիրը չի արդարացրել մեր հույսերը: Եվ հիմա այն պետք է վերակառուցվի և իր մեջ ուժ ու ցանկություն գտնի, որպեսզի նորից նստի դասասեղանի առաջ և սովորի. սովորի հարմարվել նոր գիտակցությանն ու նոր մտածողությանը՝ անկախ այն բանից, թե ո՛ր երկրից իրեն կհասնեն այդ նոր մտածողությունն ու նոր գիտակցությունը:

Փոխել կարծրատիպերն ու փոխել սեփական գիտակցությունը՝ ահա այն, ինչը մոտակա ժամանակներում ձեզ վիճակված է յուրացնել՝ անկախ այն բանից, թե ո՞ր երկրում կամ մայրցամաքում եք դուք գտնվում:

Մարդկային գիտակցության զարգացումը պետական և կրոնական սահմաններ չի ճանաչում: Մարդկային գիտակցության զարգացումն անհուն է և անսահման:

Հնարավոր չէ սահմանափակել Աստծուն: Եվ հնարավոր չէ, ձեր մարդկային գիտակցության մակարդակից ելնելով, թելադրել Աստծուն, թե Նա ինչպես վարվի:

Մենք հուսով ենք, որ նոր, արդեն մոլորակի վրա ընթացքի մեջ մտած 2007 թվականին ձեռք բերված հաջողությունները կամրապնդվեն:

Ինչպիսի՞ն կլինի այս տարին... Ցավոք, նույնիսկ մենք՝ Համբարձյալ Դասերս ու Կարմայական Վարչության անդամներս, կարող ենք միայն խոսել իրադարձությունների հավանական ընթացքի մասին: Ապագան մնում է անկանխատեսելի: Եվ ապրելն էլ հետաքրքիր չէր լինի, եթե արդյունքը նախապես լիներ հայտնի ու կանխատեսելի:

Մենք պատրաստ ենք դժվարություններին ու դրանց հաղթահարմանը:

Իսկ դուք պատրաստ եք...

*ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝
մեր համատեղ հաջողության նկատմամբ հավատով լի*

Վեհապետ Հիլարիոն
4 հունվարի, 2007 թ.

Չրույց հոգու և մարմնի ապաքինման մասին

ԵՍ ԵՄ Հիլարիոն Վեհապետը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել, որպեսզի, ինչպես միշտ, տամ այն խրատները, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր այն ներքին աշխատանքի համար, որը ձեզնից յուրաքանչյուրը կատարում է՝ ինքն իր սրտի խորքում առանձնացած:

Որքա՞ն հազվադեպ են լինում այնպիսի թույլները, երբ հենց ինքներդ եք կանգնած ձեր իսկ հայացքի դեմ. բոլոր գործերը հետին պլան են մղված, և դուք մենակ եք ինքներդ ձեզ հետ:

Մտորեք, թե որքա՞ն լավ կլիներ, եթե ինքներդ ձեզ հետ խորհրդածեիք ոչ թե դեպքից դեպք, այլ ամեն օր՝ սրտի հետ հաղորդակցվելու այդ կարևոր գործին հասկացնելով գոնե մի քանի թույլ:

Ես՝ Հիլարիոն Վեհապետս, հիշում եմ այն թույլները, երբ իմ մարմնավորման ընթացքում, խուլ մի վայրում գտնվելով միայնության մեջ, օրերով հնարավորություն ունեի ինքս ինձ կողքից դիտելու: Ես հասկանում էի, որ մարմնավորված կենդանի մարդ եմ՝ մարմնական օրգաններիս բոլոր ֆունկցիաներով հանդերձ, բայց միևնույն ժամանակ գիտակցում էի, որ իմ ներսում ուրիշ մեկը կա, որն ուղղակիորեն կապված չէ իմ մարդկային մարմնի ֆունկցիոնալ գործունեության հետ: Դա անձի տարօրինակ երկատվածություն մի զգացում էր: Ես մարմնավորված էի Երկրի վրա և միաժամանակ գիտակցում էի, որ մահ չունեմ, որ հավերժ եմ. որ այս մարմնավորմամբ հանձնված եմ ինքս իմ հայեցողությանը և փորձում եմ հասկանալ կյանքիս իմաստը. միևնույն ժամանակ իմ մեջ շատ ավելի մեծ բան է պարփակված, քան իմ ֆիզիկական մարմինն է: Գիտակցում էի, որ, ըստ էության, իմ ֆիզիկական մարմինն ընդամենը մի հանդերձանք է, որն իմ Բարձրագույն մասին հնարավորություն է տալիս ներկա գտնվելու իր մեջ:

Եվ այդ թույլներին, երբ ես պարզորոշ գիտակցում էի, թե ով եմ իրականում, իմ գիտակցությունը հասնում էր աներևակայելի բարձունքների, որտեղից հստակ տեսնում էի Երկրի վրա գոյություն ունեցող համայն գոյի միասնականությունը:

Ես պարզորոշ տեսնում էի բնության բոլոր թագավորությունների, հրեշտակների ու տարրոգիների միասնությունը: Սրտի հետ խաղաղ հաղորդակցության այդ հրճվալից պահերին ես զգում էի, թե ինչպես են ինձ հետ զրուցում և փորձում ինձ հետ կապ հաստատել մարդու աչքի համար անտեսանելի հազարավոր էակներ, որոնք, չնայած չեն երևում, բայց ապրում են ու ներկա են իմ շուրջ: Այդ պահերին ես զգում էի իմ միասնությունը բոլոր միջատների, թռչունների, զազանների հետ: Որքա՞ն հիասքանչ բան էր դա... Եվ դա հնարավոր էր լինում միայն այնժամ, երբ ինքս ինձ հետ միայնակ էի մնում: Գազաններից, թռչուններից, հրեշտակներից ու տարրոգիներից բացի իմ շուրջը ոչ ոք չէր լինում:

Հետո ինձ սկսեցին այցի գալ նաև մարդիկ: Նրանք գալիս էին ապաքինվելու: Ձգտում էին գալ ինձ մոտ, որպեսզի իմ անալեկոծ երջանկությունից ու խաղաղվածությունից իրենց փոքրիկ բաժինը ստանան: Բայց հենց որ նրանք իրենց հոգսերով ու խնդիրներով մուտք գործեցին իմ

աշխարհը, այնտեղի բնակիչները մտան թաքստոցները, որովհետև այդ մարդկանց թրթռանքներն օտար էին ու անհարիր այն էակների ու իմ սեփական թրթռոներին, որոնք արդեն ներդաշնակվել էին մեր խաղաղ հաղորդակցության ընթացքում:

Ես շատ մարդկանց կարողացա օգնել: Բուժեցի նրանց հոգիները: Բույսերից դեղեր պատրաստեցի և տվեցի նրանց: Բայց, ըստ էության, դեղաբույսերը չէին, որ ամոքեցին նրանց վերքերն ու տկարացած մարմինները: Հենց իրենք բուժեցին իրենց, երբ իրենց գիտակցությունը բարձրացավ այնպիսի մակարդակի, որ սկսեցին գիտակցել իրենց իսկ հոգուն ու ֆիզիկական մարմնին հասնող վնասները, երբ սխալ արարքներ և զգացմունքներ են թույլ տալիս:

Երբ անաստված զգացմունքները տիրում են մարդուն, կարծես նրա նուրբ մարմիններով փոթորիկ է անցնում: Եվ եթե ձեզ հաճախ տիրում են աստվածությունը, թախիծը, տխրությունը, նախանձը, խանդը և այլ բացասական զգացմունքներ, ապա ամեն անգամ ձեր նուրբ մարմիններով անցնում է փոթորիկ փոթորկի հետևից և, ի վերջո, ձեր նուրբ մարմինները նմանվում են զգզված կծիկների և այլևս ի վիճակի չեն լինում Աստծո էներգիա անցկացնել իրենց միջով: Նման դեպքերում ձեր ֆիզիկական մարմինն սկսում է տկարանալ: Եվ դուք սկսում եք տառապել այնպիսի ախտերով, որոնք ձեզ ստիպում են վազել տարբեր հեքիմների ու դեղագործների մոտ:

Անասելի բախտավոր կլինեք, եթե ձեր ճանապարհին հանդիպեք բուժարարի, որը կբուժի ոչ թե ձեր մարմինը, այլ հոգին:

Չի առաջին հերթին ամոքման կարիք ունեն հենց ձեր նուրբ մարմինները՝ ձեր զգացական մարմինը, ձեր հիշողության կամ եթերային մարմինը և ձեր մենտալ մարմինը: Հենց այդ մարմիններն են, որ, հանդիսանալով ձեր առավել փոփոխական մասերը, ավերածության են ենթարկվում առաջին հերթին:

Ֆիզիկական մարմնի քայքայվելն ու նրա ախտերը միայն և միայն ձեր նուրբ մարմինների քայքայման ու ախտահարվելու հետևանքն են: Ուստի նախ և առաջ պետք է բուժվի ձեր հոգին: Հարկ է, որ հասկանաք, դուք ձեր ոչ ճիշտ գործողություններով, մտքերով ու զգացմունքներով ստիպում եք, որ ձեր ֆիզիկական մարմինը հիվանդանա:

Ձեզնից շատերն, իրենց սրտերում ագրեսիվություն պահպանելով, իրենց վատ վիճակի համար մեղավոր են համարում բժիշկներին, մերձավորներին, աշխատանքը, իրենց պետին: Դա սխալ մոտեցում է: Ձեր ապաքինման առաջին քայլն այն կլինի, որ հասկանաք, որ ձեր հիվանդությունների համար, բացի ձեզնից, ոչ ոք մեղավոր չէ: Բոլոր հիվանդությունների սանձերն ինքներդ եք ձեր մեջ արձակել, երբ զայրացել եք, վնաս հասցրել ուրիշներին, թույլ տվել տգեղ խոսքեր ու արարքներ և ձեր օրգանիզմն աղտոտել անորակ մթերքներով ու խմիչքներով:

Ձեր հիվանդությունների պատճառը հենց ինքներդ եք: Եվ երբ հասկանում ու հանգում եք այդ պարզ իրողությանը, ապա դրանով իսկ կատարում եք ձեր ապաքինման առաջին և ամենակարևոր քայլը:

Հաջորդ քայլն այն կլինի, որ որոշում կայացնեիք այլևս այնպիսի արարք թույլ չտալ, որը ձեր տկարացման պատճառը կարող է դառնալ: Մեկի համար դա բացասական մտքերից ձերբազատվելն է, մյուսի համար՝ բացասական հույզերից, մի ուրիշի համար՝ բացասական արարքներից:

Դուք պետք է կամենաք ձերբազատվել այն ամենից, ինչը ձեր հոգու և մարմնի հիվանդացման պատճառ կարող է դառնալ: Եվ միայն դրանից հետո է, որ պետք է անեք ձեր հաջորդ քայլը՝ վիատված սրտով, անկեղծորեն դիմել Աստծուն, որպեսզի Նա բոլոր տկարություններից ամոքի ձեր ֆիզիկական մարմինն ու ձեր հոգին:

Ձեզնից շատերի վիճակն այնքան ողբալի է, որ ընթացիկ կյանքում ֆիզիկական մարմինը բուժելն այլևս հնարավոր չէ: Սակայն ձեր հիվանդության պատճառների գիտակցումը և ճիշտ վարվելակերպի ու մտածելակերպի ստանձումը կսփոփեն ձեր հոգին, և հաջորդ կյանքում անհամեմատ ավելի արագ կգիտակցեք ձեր տկարությունների պատճառները, փոքր հասակից սկսած՝ ոչ միայն կհոգաք ձեր ֆիզիկական մարմնի մասին, այլ նաև կհետևեք ձեր մտքերի և հույզերի ճիշտ ուղղվածությանը:

Շատ հազվադեպ է լինում, որ մարդն ինքնուրույն գիտակցի իր հիվանդությունների և այն արարքների միջև եղած անմիջական կապը, որոնք ինքը թույլ է տվել երիտասարդ կամ հասուն տարիքում: Եվ եթե ձեզնից շատերին հիշեցվեն այն զագրելի արարքները, որոնք իրենք ժամանակին թույլ են տվել, ապա կտարակուսեն, թե ինչպե՞ս է հնարավոր նման արարքներ թույլ տալ ձեր քաղաքակիրթ ժամանակներում:

Սակայն ձեր քաղաքակրթությունը, ցավոք սրտի, միտված է ավերելու ձեր հոգիները: Շատ, այսպես կոչված, գեղարվեստական կինոնկարներ մրկակահողմի պես ավերիչ ազդեցություն են գործում ձեր նուրբ մարմինների վրա: Ուստի բժախնդրորեն նման «ստեղծագործություններից» պաշտպանեք և՛ ինքներդ ձեզ, և՛ ձեր երեխաներին: Քանզի երեխաների նուրբ մարմինները դեռ

բավարար պաշտպանվածություն չեն ունենում, և ամբողջ այն մղձավանջը, որը նրանց հրամցվում է հեռուստատեսությամբ, պարզապես ծրագրավորում է նրանց հիվանդությունն ու մահը:

Մենք ընդամենը նախագուշացնում և փորձում ենք ձեզ բացատրել ձեր տկարությունների պատճառները, իսկ ձեր քաղաքակրթության պրոբլեմների արատավոր շրջապտույտը ցանկացած պահի կարող էք կանգնեցնել հենց ինքներդ: Ձեզնից պահանջվում է միայն, որ պարզապես որոշում կայացնեք և ձեր կյանքերում գործեք աստվածային սկզբունքներին համապատասխան:

Իսկ այժմ ես կցանկանայի անդրադառնալ ևս մեկ կարևոր պահի: Երբ օգնություն եք խնդրում հրեշտակներից, Աստծուց կամ Վեհապետներից, միշտ ձգտեք համակվել խոնարհությամբ և արտահայտեք ձեր խնդրանքը՝ Կյանքի ու Արարչի նկատմամբ օրհնանքի զգացումով համակված:

Քանզի ամբողջ բարեհաճությունն Աստծուց է գալիս, իսկ այն ստանալ ձեզ խանգարում է եսասիրության այն անթափանց կեղևը, որն իր կաղապարի մեջ է առել ձեր սիրտը:

ԵՍ ԵՄ Հիլարիոնը՝ Ձեր նկատմամբ Սիրով լեցուն

Սուրբ Միքայել Հրեշտակապետ
5 հունվարի, 2007 թ.

Ուսմունք Աստծո էներգիայով վախը փոխարինելու մասին

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը՝ այս օրով ձեզ այցի եկածը...

ԵՍ ԵՄ եկել... Եկել եմ, որպեսզի ձեզ ծանուցեմ Նոր Օրվա սկզբի մասին... Ձեր մոլորակը թևակոխում է Նոր Օր: Եվ Նոր Օրը մուտք է գործում նաև ձեր գիտակցության մեջ: Աղջամուղջներն ավարտվում են, և ձեր գիտակցությունը մաքրվում է բոլոր այն գիշերային սարսափներից, որոնցում գտնվում էր երկար հազարամյակների ընթացքում: Ձեր անկատար գիտակցությամբ դուք ծնունդ եք տվել վախերի մի ողջ հրոսակախմբի, և այդ հրոսակախումբը, անկախ ձեզանից, թափառում է աստեղային ու մենտալային ոլորտներում: Եվ այնժամ, երբ դուք բախվում եք ձեր իսկ գիտակցության արգասիքներին, ապրում եք վախի ու սարսափի պահեր, որոնք, թվում է, ո՛չ սահման ունեն, ո՛չ էլ կառավարում:

Ես եկել եմ, որպեսզի փարատեմ ձեր վախերը... Եկել եմ, որպեսզի ծանուցեմ այն մասին, որ Նոր Օրվա գալով՝ ձեր բոլոր վախերը խամրում են և կորցնում իրենց ուժը: Դուք և ձեր գիտակցությունն եք վախի աղբյուրն ու նրան ուժ տվողը: Ուստի այնժամ, երբ ձեր գիտակցությունից կհեռացնեք վախերը, դրանք կդադարեն գոյություն ունենալ ձեզ շրջապատող աշխարհում, քանի որ կզրկվեն այն էներգիայից, որով դուք նրանց սնուցում եք:

Չափազանց շատ մարդիկ են վախեր ապրում: Փաստորեն վախերը ձեր ժամանակի մարտահրավերն են: Վախն առկա է այնտեղ, որտեղ պակաս է Աստծո Սերը, իսկ ձեր աշխարհում ամենուրեք Սիրո պակաս կա:

Դուք չեք կարող պայքարել ձեր վախերի դեմ: Էներգիան, որը դուք կկիրառեք այդ պայքարում, միայն ավելի կուժեղացնի ձեր վախերը: Բայց դուք կարող եք տարրալուծել ձեր վախերն այն տիեզերական համապիտանի լուծիչով, որը ձեր սրտերի Սերն է: Ուստի այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է անել մոտակա ժամանակներում ձեր սրտերը բացելն է Սիրո, Աստծո Սիրո հանդեպ: Եվ այնժամ, երբ ձեր աշխարհը կյցվի Աստծո Սիրով, ձեր վախերը կցրվեն այնպես, ինչպես աղջամուղջն է ցրվում բացվող օրվա դեմ:

Ձեր վիճակը որոշվում է նրանով, թե որքանով եք ունակ ընդունելու Աստծո էներգիան: Եվ այնժամ, երբ ձեզ չի բավականացնում Աստծո էներգիան, դուք ապրում եք զանազան բացասական վիճակներ, որոնց թվում են նաև վախերը:

Մահվան նկատմամբ վախը ձեր աշխարհում գերակա դիրք է գրավում: Դուք հատկապես վախենում եք մի բանից, որը գոյություն չունի բնության մեջ: Վախենում եք մի բանից, որն ստեղծել եք ձեր անկատար գիտակցությամբ: Վախենում եք մահից, իսկ մահը գոյություն չունի: Այն գոյություն ունի միայն ձեր գիտակցության մեջ: Աստծո Աշխարհում գոյություն ունի միայն հավերժական Կյանք և հավերժական աստվածային Երջանկություն: Իսկ մահը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձեր հոգու անցումը գոյության մի ձևից մյուսին:

Դուք հիվանդագին ձևով եք ընկալում մահվան հետ կապված վիճակը միայն այն պատճառով, որ վախենում եք մահից: Եվ այնժամ, երբ լուծած կլինեք այդ վախի հարցը, մահվան գործընթացը ձեզ ավելի քիչ կանհանգստացնի: Դեռ ավելին, ծնվելու վիճակն ու անցման վիճակը չեն լինի այնպես հիվանդագին ու սարսափելի, ինչպես հիմա է ձեր աշխարհում: Փոխել՝ ձեր գիտակցությունը, և ձեր աշխարհի շատ խնդիրներ նախ կդառնան ոչ այդքան սուր, այնուհետև

կչքվեն, ինչպես ստվերը կեսօրին: Կմնան միայն անցյալի ստվերները, բայց դրանք արդեն ավելի ու ավելի քիչ կգրավեն ձեր ուշադրությունը:

Ես եկել եմ ասելու, որ մահ չկա, և որ բոլոր վախերը ծնունդ են առել ձեր գիտակցության միջոցով: Եվ այնժամ, երբ ձեր գիտակցության մեջ կներառեք Մերը, այն կլուծի ձեր բոլոր վախերը, այդ թվում նաև վախը մահվան նկատմամբ:

Ինչպե՞ս սրտի մեջ ներառել Մերը: Իրականում դա շատ հեշտ է: Պարզապես պետք է սիրտն ազատագրել այն բոլոր բաներից, որոնցով նա ծանրաբեռնված է: Դրանք են անհանգստությունը, ատելությունը, չարականությունը, նախանձը... Հատկապես ձեզ խանգարում է ատելությունը: Այն տգիտության հարազատ քույրն է: Եվ հենց ատելությունն է, որ ձեր սրտում փոխարինում է Աստծո Միրուն և թույլ չի տալիս նրան դրսևորվելու: Ուստի այնժամ, երբ գիտեք այն թշնամիներին, որոնք բռնազավթել են ձեր սիրտը, դուք կարող եք աստիճանաբար, քայլ առ քայլ ձերբազատվել դրանցից:

Ես կտամ ձեզ համապիտանի մեթոդ, որը կօգնի ձեզ մաքրելու ձեր սրտերը այն բոլոր ոչ աստվածային որակներից, որոնք կանգնած են ձեր ուղու վրա և խանգարում են ձեզ:

Եվ այսպես, այն պահին, երբ ազատ ժամանակ եք ունենում, պատկերացրեք, որ վերցնում եք մաքուր գործվածքի մի կտոր և թրջում ցուցյացող բացարձակ մաքուր ջրի մեջ, որը խայտում է ուղիղ ձեր ոտքերի առջև: Կռացեք և ջուր լցրեք ձեր բռի մեջ: Թրջեք այդ ջրով գործվածքի կտորը և պատկերացրեք, որ ձեր սիրտն առել էր ձեր բռի մեջ: Ձեր սիրտը նման է բյուրեղապակյա անոթի: Բայց Երկրի վրա ունեցած ձեր մարմնավորումների ընթացքում այդ անոթը մթագնել է և այլևս իր միջով բաց չի թողնում Աստծո Լույսը: Վերցրե՛ք ձեր անոթը՝ ձեր սիրտը, և պատկերացրեք, թե ինչպես եք շերտ առ շերտ նրա վրայից մաքրում կուտակված բացասական հատկություններն ու զգացմունքները: Ատելություն, հակակրանք, վախ, չարականություն, տգիտություն, ծուլություն, նախանձ: Ձեզնից յուրաքանչյուրը կունենա մի քանի հատկանիշներ, որոնցից նա պետք է ձերբազատվի առաջին հերթին: Լվացե՛ք ձեր սիրտն այդ բացասական հատկանիշների ու դրսևորումների շերտանստվածքից:

Կրկնեցեք այդ գործընթացն ամեն օր: Մի՛ կարծեք, թե մեկ անգամով դուք կավարտեք այդ գործը և ձեր սիրտը միանգամից կմաքրեք բացասական էներգիաների բազմադարյան նստվածքից:

Ձգտեցեք ձեր գիտակցության մեջ մշտապես պահել այն պատկերացումը, որ հրաժեշտ եք տալիս ձեր բացասական հատկանիշներին: Պատկերացրեք, թե ամեն անգամվա հետ ձեր սիրտն ունակ է դառնում իր միջով անցկացնելու Աստծո ավելի ու ավելի շատ էներգիա:

Կանցնի որոշակի ժամանակ, և ձեր սիրտն ամբողջությամբ կմաքրվի անցյալի կուտակումներից, իսկ դուք կկարողանաք լրիվ չափով յուրացնել Աստծո էներգիայի այն թրթիռները, որոնցով լեցուն է ողջ աշխարհը՝ համայն Արարչությունը, բայց դուք պարզապես չեք կարողանում ընկալել այդ թրթռանքը ձեր սեփական անկատարության և այդ անկատարությունից ձեր հրաժարվել չկամենալու պատճառով:

Բայց ես լիահույս եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը կմտորի ու կորոշի փոխել իր մոտեցումը կյանքի նկատմամբ և կդադարի մռայլ տեսք ընդունել՝ Նոր Օրվա դեմ բերկրանքով բացելով իր ժպտացող դեմքը:

Պատկերացրեք, որ նստած եք գետի, լճի կամ առվակի մոտ, և արևի պայծառ շողերն ընկնում են ուղիղ ձեր դեմքին: Ձեզ հաճույք է պատճառում արևի քնքուշ ճառագայթների հալումը: Օրեցօր արևն ավելի ու ավելի շատ է թափանցում ձեր մեջ, և մի գեղեցիկ օր արդեն դուք ինքներդ եք վերածվում արևի և նվիրաբերում եք ձեր Լույսը, ձեր Մերը բոլոր նրանց, ովքեր Լույսի ու Միրո կարիքն ունեն:

Կգա օրը, և ձեր աստվածային գիտակցության արևը կճառագի ձեր միջից և ջերմություն կպարզևի շատ մարդկանց, ովքեր դեռևս չեն կարողացել ձերբազատվել այն ամենից, ինչը խանգարում է մերձենալու իրենց իսկ ներսի Աստծո ներկայության Արևին:

Դուք արևակերպ եք: Պարզապես պետք է մաքրեք բազմադարյա ցեխի նստվածքը ձեր անոթի վրայից, որպեսզի այն նորից ձեռք բերի իր մաքրությունն ու թափանցիկությունը: Այնժամ դուք կլցնեք ձեր անոթը Աստծո էներգիայով և յուրաքանչյուրին, ով ծարավ է, հնարավորություն կտաք ըմպելու ձեր անոթից:

Աստծո էներգիան երբեք չի սպառվում: Աստծո էներգիայի հոսքը ձեր աշխարհում սահմանափակվում է միայն մարդկանց գիտակցության պատճառով:

Բացվում է Նոր Օրը, որին բնորոշ է սահմանափակումների բացակայությունը, աստվածային Ազատությունը և աստվածային Մերը:

*ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը՝
ձեր նկատմամբ անսահման Միտքով լի*

Ուսմունք ձեր հոգու մասին

ԵՍ ԵՄ Կուրթումին՝ կրկին ձեզ այցի եկածը:

Ինչպես միշտ, ես եկել եմ ձեզ համար անհրաժեշտ խրատներ տալու, որոնց կարիքն ունի Աստծո իրական աշխարհի նկատմամբ կարոտով համակված ձեր հոգին:

Մենք այսպես մերթ ընդ մերթ գալիս ենք, որպեսզի հոգանք ձեր հոգիների մասին և նրանց տանք այն սնունդը, որի կարիքն իրենք ունեն: Ահա այսօր էլ ես եկել եմ, որպեսզի ոչ մեծ Ուսմունք տամ ձեր հոգու մասին, ձեր հոգու համար:

Եկե՛ք մի փոքր միասին մտորենք, թե ինչ է իրենից ներկայացնում ձեր հոգին: Ներառու՛մ է արդյոք իր մեջ ձեր ամեն ինչը:

Ի՞նչ ենք հասկանում՝ հոգի ասելով:

Իրականում դուք շատ բարդ կառույց եք: Դուք Աստծո աշխարհում ունեք ձեր մի մասը, որը երբեք չի լքել Աստծո աշխարհը: Եվ դուք ունեք հոգի՝ ձեր այն մասը, որը ձևարարների կողմից հատուկ ստեղծված է, որ դրանով ճամփորդեք արար աշխարհներում: Ունեք և ֆիզիկական մարմին, որը ձեր հոգու համար կացարան է ծառայում ձեր երկրային մարմնավորումների ընթացքում:

Հիրավի, շատ բարդ կառույց եք ձեզնից ներկայացնում: Եվ եթե ժամանակի պահանջը չլիներ, ես չէի գա, որպեսզի ձեր հոգու վերաբերյալ տամ այս կարևոր Ուսմունքը:

Բանն այն է, որ ձեզնից շատերը խրվում են տերմինների խառնաշփոթի մեջ և *հոգի* ասելով մի փոքր այլ բան են հասկանում, քան այն կա իրականում:

Ձեր հոգին սերտորեն և անխզելիորեն կապված է ձեր ֆիզիկական մարմնի հետ, իսկ ավելի նուրբ, աստվածային մարմինների հետ, ձեր հոգու ունեցած կապը իր զարգացման որոշակի փուլում կորսվել է: Այդ խզումն առաջացել է այն բեկումնային պահին, երբ ցանկություն եք արտահայտել թողնելու Աստծո աշխարհը և խորասուզվելու նյութականում: Դուք կամեցաք ձեռք բերել մարդկային փորձ, ինչը ձեր հոգու էվոլյուցիայի համար անհրաժեշտություն էր: Քանզի ձեր հոգին չէր կարող զարգանալ, եթե մարդկային էվոլյուցիայի փորձ չկուտակեր: Չարգացումն անհնար է, եթե դուք մշտապես չհարստացնեք ձեր փորձը: Դուք խորասուզվում եք ֆիզիկական աշխարհի ավելի ու ավելի թանձր դրսևորումների մեջ, նման այն բանին, որ ձեր հոգին ու ձեր իսկ բարձրագույն մասը բառիսկաֆով սուզվեն մինչև ֆիզիկական օվկիանոսի հատակը: Տվյալ դեպքում «բառիսկաֆը» հենց ձեր ֆիզիկական մարմինն է: Իսկ նրա հետ անխզելիորեն կապված ձեր հոգին ձեր նուրբ մարմինների՝ աստեղային մարմնի, մենտալային մարմնի և էթերային մարմնի համախմբությունն է: Ձեր նուրբ մարմինները սերտորեն կապված են ձեր ֆիզիկական մարմնի հետ և զարգանում են ֆիզիկական մարմնի շնորհիվ:

Եթե վերադառնանք բառիսկաֆի համամասնությանը, ապա ձեր նուրբ մարմինները կներկայանան որպես բառիսկաֆի էլեկտրոնային և կենսաապահովման համակարգեր: Սակայն այն ժամանակ է միայն բառիսկաֆն օվկիանոսի հատակում իրագործում իր առջև դրված որոշակի խնդիրները, եթե ունի իր ղեկավարը:

Ձեզնից շատերի գիտակցության վիճակն այնպիսին է, որ կորսված է «բառիսկաֆի» ղեկավարումը: Ձեր բարձրագույն, աստվածային մարմինների կապը բառիսկաֆի հետ կտրված է, և վերջինս թողնված է ինքն իր բախտին:

Կարելի է բերել նաև առազաստանավի համամասնությունը, որը փոթորկի ժամանակ կորցրել է կառավարումը: Դուք ապրում եք ձեր գուտ ֆիզիկական կյանքով և չեք մտորում այն մասին, թե ո՞վ եք դուք, որտեղի՞ց եք եկել և ու՞ր եք գնում: Իսկ դա ձեր նպատակներն ու խնդիրները սահմանափակում է ֆիզիկական աշխարհով և թույլ չի տալիս, որ շարունակվի ձեր զարգացումը:

Կար մի շրջան, երբ ձեզ անհրաժեշտ էր մատերիայի մեջ սուզվելու փորձ ձեռք բերել ձեր մարմնավորումների փորձը: Ձեր նուրբ մարմինները՝ ձեր հոգին, նյութականի մեջ ճամփորդելու ընթացքում կարողացել են զարգանալ և կատարելագործվել: Ձեր կառույցն ավելի ու ավելի է բարդացել: Սակայն որոշակի փուլում դուք կորցրել եք միասնությունը ձեր հոգու հետ: Դուք դադարել եք զգալ նուրբ աշխարհները, կտրվել եք ձեր հոգուց: Ինչպես ձեր հոգին է դարձել ձեզնից առանձին մի բան, այնպես էլ առանձնացել են ձեր նուրբ մարմինները: Հենց դա է սկիզբը է դրել ձեր հոգու տառապանքին: Ձեր շատ մարմնավորումների ընթացքում ձեր հոգու շատ բաղադրիչ մասեր ձեր կողմից կորսվել են: Եվ երբ դրսևորել եք աններդաշնակ վարքագիծ, ցայտուն արտահայտված անաստված արարքներ, ձեր հոգին շատ է տառապել, և այդ տառապանքը ստիպել է նրան, որ

մասնակիորեն լքի ձեզ: Ուստի հենց ձեր ծննդյան պահից ձեր նուրբ մարմիններն արդեն կրում են իրենց մեջ նախորդ մարմնավորումների կորուստները:

Դուք պետք է հստակ գիտակցեք, որ գոյություն ունի ձեր իսկ նրբին մասը: Դա ձեր հոգին է, որը նման է մանկիկի: Եվ ձեր աշխարհի անչափ շատ դրսևորումներ սաստիկ խոցում են ձեր հոգին: Այն կույ է գալիս և կարող է նույնիսկ լքել ձեր ֆիզիկական մարմինը: Սակայն առանց հոգու դուք կորցնում եք աստվածային զգացմունքներ ունենալու ունակությունը և ավելի շատ եք կտրվում Աստծո աշխարհից, քանզի ձեր բարձրագույն մասը կարող է դրսևորվել միայն ձեր հոգու միջոցով:

Ձեզնից պահանջվում է վերադառնալ ձեր հոգու, ֆիզիկական մարմնի և ձեր իսկ բարձրագույն մասի ներդաշնակ զարգացմանը: Անհրաժեշտ է հավասարակշռել և ներդաշնակել ձեր բոլոր մարմինները:

Որպեսզի կարողանաք ուտք դնել ձեր էվոյուցիոն զարգացման հաջորդ աստիճանին, անհրաժեշտ է, որ հավաքեք ձեր հոգու բոլոր կորսված մասերը: Անհրաժեշտ է, որ վերականգնեք ձեր ամբողջականությունը, ներքին ներդաշնակությունն ու անդորրը: Իսկ դա հասանելի է հատուկ գործառնությունների ու վարժությունների միջոցով: Ամեն ժամանակի համար տրվել են համապատասխան գործառնություններ ու մեթոդներ, որոնցով հնարավորություն եք ունեցել կարգ ու կանոն մտցնելու ձեր նուրբ մարմիններում:

Այժմ, քանի որ նոր էներգիաներ ու թրթռանքներ են մուտք գործում Երկիր, ապա ձեր հոգու համար ամենալավն այն կլինի, որ հայտնվեք բնության անդորրության մեջ: Երկրագնդի վրա կան առանձին վայրեր, որոնք դեռևս չեն ենթարկվել քաղաքակրթության ավերիչ ազդեցությանը: Հենց այդ վայրերում էլ պետք է կառուցեք ձեր այն օթևաններն ու առողջարանները, որոնցում գտնվելով՝ կկարողանաք վերականգնել ձեր հոգու, մարմնի և ձեր իսկ աստվածային մասի ամբողջականությունը:

Դուք դա չեք կարող անել՝ գտնվելով խոշոր քաղաքներում:

Ձեր էներգիաները վերականգնելու համար շատ ժամանակ կպահանջվի:

Եվ եթե բնության գրկում ձեր մտասևեռումների գործառնությունը հնարավորինս երկարատև լինի, ապա աստիճանաբար կկարողանաք տարածությունից դեպի ձեզ քաշել ձեր հոգու բոլոր կորսված մասերը: Այնժամ, երբ ձեր հոգին կզգա ձեր սերն ու հոգածությունը, տարածությունից կծգվի ձեր կողմը, որպեսզի այլևս ձեր ուղու վրա չլքի ձեզ:

Ես փորձում եմ ձեզ շատ կարևոր Ուսմունք տալ: Եվ փորձում եմ ձեր գիտակցությանը հասցնել այն, որ ձեր հետագա էվոյուցիան անհնարին կլինի, քանի դեռ չեք կարողանա վերականգնել ձեր հոգու ամբողջականությունն ու ձեր բոլոր մարմինների միջև ներդաշնակությունը: Բնության գրկում դա տեղի կունենա բնականորեն: Եվ այնժամ, երբ կկարողանաք ամոքել ձեր հոգին, բուժել բազմադարյա ձեր վերքերը, կկարողանաք նաև օրինակ ծառայել այն մարդկանց համար, որոնք հոգնել են ձեր տեխնոկրատական քաղաքակրթության դժոխքում գտնվելուց: Ձեր քաղաքակրթությունն այդպիսով կկարողանա վերադառնալ այն ուղուն, որը նախապես պլանավորված է եղել նրա համար, այն է՝ հոգևոր զարգացում և աստվածային ունակությունների ու հնարավորությունների զարգացում:

Որքան էլ փորձեք համոզել ինքներդ ձեզ, թե դուք անխաթար ու ներդաշնակ եք, միևնույն է՝ պետք է ասեմ, որ ինքնաներշնչմամբ ձեռք բերված ձեր ներդաշնակությունը ոչ մի ընդհանուր բան չունի այն բնական ներդաշնակության հետ, որին կհասնեք անխուսափելիորեն:

Ես ձեզ կարևոր ուսմունք տվեցի, Ուսմունք ձեր հոգու մասին:

ԵՍ ԵՄ Կույթումին

Սանատ Կումարա
7 հունվարի, 2007 թ.

Ընտրություն կատարելու ժամանակն է

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը: ԵՍ ԵՄ եկել շտապ կարգով, որպեսզի բարդ ժամանակներ ապրող ձեր մոլորակի վերաբերյալ կարևոր տեղեկություն հաղորդեմ ձեզ: Դուք լսո՞ւ եք ինձ:

ԵՍ ԵՄ՝ Սանատ Կումարաս, Նա, որին դուք գիտեք Հինավուրց անունով. Նա, ով եկել է ձեր մոլորակը նրա ամենախավար ժամանակներում և մինչև օրս չի լքում այն:

ԵՍ ԵՄ Նա, ով ձեր ամենահոգատար Հայրն է: Եվ, որպես ձեր Հայրը՝ ես եկել եմ, որ ուղերձ տամ ձեր ապրած ժամանակի վերաբերյալ:

Դուք բոլորդ այժմ գտնվում եք գիտակցության ավելի բարձր մակարդակի անցման փուլում: Բոլորդ պետք է անցում կատարեք ձեր գիտակցության մեջ: Սակայն ձեր մեջ կան այնպիսիները, որոնք չեն ցանկանում ընթանալ զարգացման էվոլյուցիոն ուղով: Դուք արգելակում եք էվոլյուցիայի ընթացքը, ուստի ձեզ համար վրա է հասնում այն ժամանակը, որի մասին մենք նախագգուշացնում էինք:

Մոլորակի վրա ամեն մի փոփոխություն հնարավոր է դառնում միայն այնժամ, երբ այն թույլատրվում է համայն այս տիեզերքի ուղղություն տվող և համակարգող բարձրագույն մարմնի կողմից: Եվ ահա ես եկել եմ, որպեսզի տամ այն բացատրությունը, որը հենց նոր է ստացվել և վերաբերում է Երկիր մոլորակին ու նրա էվոլյուցիային:

Ձեզնից նրանք, ովքեր չեն կարողանա մինչև այս տարվա վերջն իրենց մեջ հաղթահարել այն հատկանիշները, որոնք խանգարում են ուղով իրենց առաջընթացին, առանձնահատուկ ու համառ կերպով առաջ կմղվեն իրենց զարգացման ուղղությամբ:

Ցավոք, ձեզնից նրանք, ովքեր իմ այս ուղերձի կարիքն ունեն առաջին հերթին, հազիվ թե կարդան այս թելադրությունները, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով: Սակայն նուրբ ոլորտում, այն մարդկանց գիտակցության միջոցով, որոնք կարդում են այս ուղերձները, այս նախագգուշացումը նրանց կհասնի:

Մեր նախագգուշացումն արդեն արտաբերվել է ձեր ֆիզիկական աշխարհում, և ուրեմն ձեր ֆիզիկական աշխարհում ամեն ոք ունակ է և պետք է լսի այն, անկախ այն բանից՝ իր արտաքին գիտակցությամբ ընկալում է դա, թե ոչ: Ներքին ոլորտում դուք կստանա՞ք մեր ուղերձը: Եվ ձեր առջև կկանգնի հետևյալ այլընտրանքը՝ կա՞մ հետևել էվոլյուցիային, կա՞մ էլ շարունակել սփոփել սեփական էգոյին և հաճույքների հետևից ընկնել պատրանքի մեջ:

Ձեր մեջ կան այնպիսիները, որոնց համար տիեզերական հնարավորության ժամկետը դեռ չի հասել: Նրանք դեռ ժամանակ ունեն և կարող են շարունակել իրենց զարգացումը: Սակայն կան նաև այնպիսիները, որոնց համար բոլոր ժամկետներն արդեն անցել են, և այսօրվա իմ ուղերձը ես նրանց համար եմ տալիս:

Ներքուստ դուք գիտեք, թե ում է վերաբերում այս ուղերձը: Դուք մեկը մյուսի հետևից ձեռքից բաց եք թողնում բոլոր տիեզերական հնարավորությունները: Եվ ձեզ թվում է, թե զարգացման այն ուղուց, որը ձեզ համար նախանշված է, ձեր խուսանավումները սահման չեն ունենա: Դե ինչ, հասել է ժամը, երբ ամենայն համառությամբ ձեզ կպարտադրեն, որ կայացնեք ձեր վերջնական որոշումը՝ կա՞մ շարունակել հետագա զարգացումը, կա՞մ էլ խաչ քաշել հետագա զարգացման վրա:

Աստված շատ ողորմած է: Եվ Նա իրենց բախտի քմահաճությին է թողնում բոլոր նրանց, ովքեր չեն ցանկանում ենթարկվել համայն տիեզերքի Օրենքին: Եվ էվոլյուցիոն զարգացման այն փակուղային ճյուղերը, որոնց ականատեսն եք դառնում օվկիանոսի որոշ կղզիներում՝ խարույկի մոտ նստածներ, որոնք իրենց բաժին միսն են խժռում, վաղուց ինչ-որ ժամանակ նույնպես կատարել են իրենց ընտրությունը: Ճիշտ նույն ընտրությունը, որն այժմ դրված է ձեր առջև:

Նոր թողության շնորհին համապատասխան՝ դուք ձեր ընտրությունը կատարում եք գիտակցորեն: Ձեր արտաքին գիտակցությամբ դուք կիմանաք, թե որն է եղել ձեր վերջնական ընտրությունը: Եվ մենք ձեզ հանգիստ կթողնենք: Էվոլյուցիան ձեզ համար կդադարի գոյություն ունենալուց և շատ ու շատ հազարամյակներով դուք ցած կգլորվեք դեպի ներքև ձգվող սանդուղքով:

Եվ ձեր այս կյանքի ավարտին դուք արդեն կնաշակեք ձեր կատարած ընտրության պտուղները:

Ձեզնից յուրաքանչյուրը գտնվում է էվոլյուցիոն զարգացման իր աստիճանի վրա:

Ձեր մեջ կան երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ արմատական ռասաների ներկայացուցիչներ: Այժմ հասել է նրանց ընտրություն կատարելու ժամկետը, որոնք պետք է անցնեն հաջորդ աստիճանին, բայց չեն կարողանում դա անել սեփական ծուլության և անփութության պատճառով: Ես խոսում եմ հինգերորդ արմատական ռասայի այն ներկայացուցիչների մասին, որոնք չեն շտապում ընթանալ դեպի վեր ելնող սանդուղքով և շարունակում են ապրել այնպես, կարծես աշխարհում ոչինչ տեղի չի ունեցել: Իբր, ժամանակը չի փոխվել, և գործընթացներն էլ չեն արագացել:

Այնուհանդերձ ձեզ վիճակված է մինչև տարեվերջ գլուխ հանել ինքներդ ձեզնից և հասկանալ, թե ինչպես եք մտադրվել այսուհետ գոյատևել:

Ձեր ժամանակը հասել է ոչ այն պատճառով, որ հետ եք մնացել ձեր զարգացմամբ: Ձեր ինտելեկտը կարգին վիճակում է, բայց դուք հետ եք մնացել՝ ըստ ձեր հոգու զարգացման ցուցանիշների: Եվ այն նախընտրանքները, որոնք դուք կատարում եք, ավելի ու ավելի են ձեզ հեռացնում զարգացման էվոլյուցիոն ուղուց և ստիպում ձեզ գլորվելու կործանարար ուղով, մարմնական խելքի զարգացման ուղով: Եվ տվյալ դեպքում ձեր ինտելեկտը ձեզ ծառայում է ոչ

ամենալավ ձևով: Դուք փորձում եք, ձեր խելքի դիրքերից ելնելով, լուծել աստվածային բարդ խնդիրներ: Բայց աստվածային լուծումները միայն այն ժամանակ են երևան գալիս, երբ դուք հրաժարվում եք երկրային մարդու տրամաբանությունից և ամբողջովին ձեզ՝ ձեր ողջ էությունը, ենթարկեցնում եք Բարձրագույն Օրենքին ծառայելուն:

Եվ այսպես, ես այսօր եկել եմ ո՛չ ուրախ լուրով: Եվ, որպեսզի ձեր գիտակցության մեջ համակշռեմ էներգիաները, կուզենայի մի փոքր այլ տեղեկատվություն տալ, որն ավելի ուրախ բնույթ ունի:

Ձեզնից նրանց համար, ովքեր ընտրել են էվոլյուցիոն զարգացման ուղին և ընթանում են այդ ուղով՝ չնայած այն դժվարություններին, որոնց բախվում են իրենց կյանքում, ես նոր հնարավորության և նոր թողության շնորհի լուր եմ բերել: Ձեր առջև բացվում է ձեր գիտակցության առավել արագ զարգացման հնարավորություն: Եվ ձեզնից շատերն արդեն այս տարվա վերջին կնկատեն, թե որքան արագ է փոխվում իրենց գիտակցությունը, և գիտակցության այդ փոփոխությունը ձեր կողմը կձգի այն մարդկանց, որոնք ձեզ հետ միևնույն ուղղությամբ են ընթանում: Դուք կկարողանաք մեկը մյուսին ճանաչել ձեր աչքերի շողով, ձեր սրտերի զարկով, ամբողջ կյանքին ձեր զարմանալի ու շռայլ նվիրումով:

Դուք կկարողանաք համախմբվել նոր սկզբունքների հիման վրա և կկառուցեք ձեր կյանքն այն օրենքների հիման վրա, որոնք գոյություն ունեն Երկնոլորտներում:

Նուրբ ոլորտում մենք ձեզ համար նախապատրաստում ենք մեր Համայնքների նախագծերը: Եվ դուք, համախմբվելով ֆիզիկական ոլորտում, կստեղծեք նոր բնակավայրերի, նոր համայնքների և նոր քաղաքների նախատիպերը:

Ես ուրախ եմ, որ վերջացնում եմ իմ այս ուղերձն այս ուրախ նոտայով...

Մշտապես բոլոր ժամանակներում գոյություն է ունեցել ընտրության հնարավորություն: Մարդկանց մի մասը մի ճանապարհ է ընտրել, մյուսներն էլ այլ բան են նախընտրել:

Եվ դա հենց այն գործընթացն է, որը նկարագրված է Աստվածաշնչում՝ որպես հատիկը որոմից ջոկելու գործընթաց:

Պարզապես ժամանակը փոխվել է, և այդ գործընթացը, որը նախկինում շատ կյանքեր էր պահանջում, այժմ ձեր աչքի առաջ կարող է լինել հենց ձեր այս ընթացիկ կյանքում:

Ես մաղթում եմ, որ դուք ձեր կյանքում միայն ճիշտ ընտրություն կատարեք և ընթանաք զարգացման էվոլյուցիոն ուղով:

Աստված ձեզ հետ...

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

Տեր Հիսուս

8 հունվարի, 2007 թ.

Ուսմունք ճշմարիտ Հավատի մասին

ԵՍ ԵՄ Հիսուս՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Որպեսզի ձեզ հասկանալի լինի իմ գալստյան նպատակը, կկամենայի կենտրոնանալ այն հանրահայտ բաների վրա, որոնք ընդունված են ձեր հասարակության մեջ՝ զարգացման ներկա աստիճանին համապատասխան:

Եվ այսպես, դուք ապրում եք ձեր աշխարհում և հազվադեպ եք առնչվում այնպիսի բաների հետ, որոնց մասին հարկ է, որ մտորեք առաջին հերթին: Դուք մտահոգված եք այն ամենով, ինչով ձեր կյանքում չըջապատված եք: Մտածում եք, թե ինչպես ապահով դարձնեք ձեր ընտանիքը, այն մասին, թե ինչ հագնեք, ինչ ուտեք: Ունայն բաները շա՛տ են ձեր կյանքում: Եվ ձեզ թվում է, թե ձեր այդպիսի կյանքն էլ է արդարացված, ինչպես մյուսներին:

Սակայն, եթե մտորեք այն մասին, թե ինչով եք զբաղված ձեր կյանքում, և թե որքանով է դա արդարացված այն Ուսմունքի տեսանկյունից, որը ես տվեցի 2000 տարի առաջ, ապա կտեսնեք, որ ոչինչ չի փոխվել: Մնում է, որ նորից մարմնավորվեմ և ձեզ հետ զրուցեմ հենց այն նույն բաների մասին, որոնց մասին ժամանակին խոսել եմ:

Հիշում եք, ես ասում էի՝ հարկ չկա, որ անհանգստանաք ձեր հանապազօրյա հացի համար, որ ինչքան էլ ջանաք՝ հովտաշուշանը ձեզնից ավելի գեղեցիկ հագուկապ ունի: Երկնքի թռչունները չեն վարում, չեն ցանում, բայց կուշտ են: Եվ որ Տերը նույն կերպ նաև ձեր մասին կարող է հոգալ*:

Ինչպե՞ս է լինում, որ դուք, գտնվելով երկրային կենսահոսքերի Էվոյուցիոն զարգացման ամենավերին աստիճանին, այդքան շատ եք ուշադրություն դարձնում ձեր ամենասովորական պահանջմունքների բավարարմանը: Դուք տառացիորեն կուռք եք դարձնում հագուստը, ուտելիքը, հարգի համարվող իրերը:

Ոչինչ չի փոխվել այն ժամանակներից ի վեր, երբ 2000 տարի առաջ ես մարմին առա Երկրի վրա: Դուք շատ ժամանակակից բաներ եք արդեն յուրացրել. ձեր կյանքը հագեցած է ժամանակակից տեխնիկայով՝ մեքենաներով, համակարգիչներով, սակայն ձեր գիտակցությունը մնացել է այն նույն մակարդակի վրա, ինչպիսին 2000 տարի առաջ էր: Ողբալի՜ բան է դա:

Հասկանում եք, թե խոսքս ուր եմ տանում: Դուք տարված եք ձեր աշխարհում գոյություն ունեցող անթիվ-անհամար ոչ պետքական բաներով և ձեր ժամանակի 99 տոկոսը ծախսում եք դրանց վրա: Մտորե՛ք այն մասին, թե ի՞նչ երեսով եք մոտենալու ձեր Երկնավոր Հորը, եթե մշտապես աշխարհիկ խնդիրներով եք տարված:

Նույնիսկ այնժամ, երբ ձեզ թվում է, թե նվիրված եք Աստծուն. եկեղեցի եք գնում, աղոթում եք, պահպանում եք եկեղեցական կանոնները, այնուհանդերձ ավելի շատ ոչ թե Աստծո մասին եք մտածում, այլ մտահոգված եք լինում այն բանով, թե ձեր մասին ուրիշներն ինչ կասեն. ինչպիսի՞ տեսք ունեք դուք և ձեզ նման մյուս մարդիկ՝ տաճարում գտնվելով: Երբ ես հնարավորություն եմ ունենում ներկա լինելու որևէ տաճարի եկեղեցական արարողության, ապա զարմանում եմ՝ լսելով ձեր մտքերը, որսալով ձեր զգացմունքները: Եվ գիտե՛ք, շատ հազվադեպ է լինում, որ մարդկանց մեջ դրսևորվեն ճշմարիտ աստվածային զգացմունքներ: Որպես կանոն, դուք տաճար եք մտնում, որ լուծեք ձեր աշխարհիկ խնդիրները, որ Է՛լ ավելի լավ ապրեք, որ առողջ լինեք դուք և ձեր մերձավորները: Լինում է և հակառակը. չարիք եք կամենում բոլոր այն մարդկանց, որոնց ճանաչում եք:

Եկեղեցում դուք, ըստ էության, շարունակում եք լուծել ձեր երկրային հարցերը: Դուք չեք մտածում Աստծո մասին: Եվ եթե մոտենում եք իմ պատկերին, ապա սոսկ այն բանի համար, որ խնդրեք մի բան, ինչը ձեզ չի բավականացնում ձեր երկրային կյանքում:

Մտորե՛ք ասածներիս մասին: Ձեզ թվում է, թե ես հանելուկներո՞վ եմ խոսում. հայտնի չէ, թե ո՞ր կողմ եմ ծռում:

Այնինչ ես ասում եմ այն, ինչ ասել եմ 2000 տարի առաջ: Ես կրկին փորձում եմ ձեզ հասկացնել, որ անհրաժեշտ է մտածել հոգու մասին՝ այն փոխհարաբերությունների մասին, որ ունեք Աստծո հետ, և առաջին հերթին՝ ձեր ներսի Աստծո հետ: Ես ուսուցանել եմ աղոթքի ընթացքում մեկուսանալ Աստծո հետ, նաև պախարակել եմ երկերեսամիությունը**։ Ես ընդվզել եմ օրենքի մեռած տառի դեմ, և ես ստիպել եմ մտորել հոգու մասին: Եվ հիմա՝ էլ նույն բաներն եմ ասում: Աստծո հետ ունեցած ձեր փոխհարաբերությունից զատ ձեզ ոչինչ չպետք է հետաքրքրի: Եվ այնժամ, երբ դուք փնտրում եք Աստծուն, որպեսզի ձեր կյանքն իմաստ ձեռք բերի, որից հետո էլ սկսեք այդ իմաստն ուսուցանել ուրիշներին, ապա ոչ թե մոտենում եք Աստծուն, այլ հեռանում եք Նրանից:

Միայն այնժամ, երբ հենց ձեր ներսում եք լրիվ բավարարվածություն ստանում Աստծո հետ հաղորդակցվելուց և կարիք չեք զգում ձեր խաղաղ հրճվանքը կիսելու ուրիշների հետ, քանզի արդեն լրիվ բավարարված ու երջանիկ եք լինում, ահա հենց այդ ժամանակ եք դուք գտնում ճշմարիտ Աստծուն: Եվ նման դեպքում ես հնարավորություն եմ ունենում հիանալու ձեզնով, իսկ դուք՝ զգալու իմ ներկայությունը:

Ես միշտ ձեր կողքին եմ: Բայց ձեր գիտակցության վիճակն ու աշխարհիկ հոգսերով տարված լինելը մեզ իրարից բաժանում ու հեռացնում են:

Այնքան եմ ուզում հաղորդակցվել ձեզ հետ... Որքան հազվադեպ եմ այն պահերը, երբ ինձ հաջողվում է անմիջականորեն հաղորդակցվել ձեզնից որևէ մեկի հետ: Որքան եմ ինձ երջանկացնում նման պահերը... Ես շատ լավ գիտակցում եմ, որ ամեն ոք, ով ինձ հետ անմիջական հաղորդակցություն է ունենում, այլևս չի կարող ապրել այնպես, ինչպես մնացած բոլորը: Դրանից հետո նա կսկսի առանձնանալ և կրկին ներքնապես հաղորդակցվել ինձ հետ: Եվ առանց այդ հաղորդակցության նա այլևս չի պատկերացնի իր հետագա կյանքն ու ինքն իրեն:

Այն խաղաղ հրճվանքն ու խաղաղվածությունը, որ նման մարդը կյանքում սփռում է իր շուրջը, ավելի գերադասելի է, քան ցանկացած քարոզն ու խրատը: Նա ինձ հետ և իր ներսի Աստծո հետ միասնության կենդանի օրինակ է ծառայում:

Ամենալավ և ամենամոլորված քրիստոնյաները եղել են նրանք, ովքեր իրենց սրտի անդորրության մեջ հասել են այդ միասնությանը: Սակայն եղել են և այնպիսիները, որոնք

ընդամենը խաղաղվածություն, սեր, երանություն են խաղացել: Բայց նրանց վրա նետված իմ մի կարճ հայացքը բավարար է եղել, որպեսզի ինձ համար բացահայտեմ նրանց երկերեսանիությունն ու հեռանամ:

Ես կուզեմայի, որ դուք ձեր սրտերում ձեռք բերեք զանազանելու շնորհ և կարողանաք ճանաչել զառան դիմակով գայլերին՝ անկախ այն բանից, թե ինչ խոսքերով են քողարկվում և ինչեր են անում: Շատերը կարծես թե ճիշտ բաներ են անում. խոսում են Աստծո մասին, եկեղեցի են գնում, բայց իրենց սրտերով անհամեմատ հեռու են ինձնից, քան շատերը նրանցից, ովքեր ի ցույց չեն դնում իրենց հավատը, բայց և իրենց սրտերում կատարում են Հոր պատվիրանները:

Ես այսօր եկա, որպեսզի ձեզ հիշեցնեմ իմ այն Ուսմունքը, որը տվել եմ 2000 տարի առաջ, և որը մինչև այսօր էլ հրատապ է: Ուզում եմ ձեզ հիշեցնել, որ ինձ խաչեցին հենց իմ բերած Ուսմունքի համար: Եվ հիմա՝ էլ, եթե գայի և սկսեի տարածել իմ Ուսմունքը, ապա նույն կերպ կհալածվեի այն դպիրների ու փարիսեցիների կողմից, որոնք առաջվա պես նստած են եկեղեցիներում:

Ճշմարիտ սպասավորներ էլ կան, իհարկե, բայց կեղծերն ավելի շատ են: Ուստի կուզեմայի, որ ձեր գիտակցությամբ տարբերակում մտցնեիք և անխտիր աջ ու ձախ չհայիոյեիք այս կամ այն եկեղեցին և այս կամ այն ուսմունքը:

Ճշմարիտ ուսմունքը կարող է և սխալ ընկալվել անմաքուր սրտերով մարդկանց կողմից: Դրանից, սակայն, չի հետևում թե տվյալ ուսմունքը սխալ է: Աստծուն փնտրեք նախ և առաջ ձեր ներսում՝ ձեր սրտերում: Եվ այնժամ, երբ Աստծո հետ ներքին համահնչունություն ձեռք կբերեք, ձեզ համար այլևս սարսափելի չեն լինի ո՛չ զառան դիմակով գայլերը, ո՛չ էլ կեղծ հովիվները:

Ես ուրախ եղա այսօր գալով և ձեզ հիշեցնելով իմ նախկինում տված Ուսմունքը, որով այժմ կրկին եկա այս դեսպանորդի միջոցով:

ԵՄ ԵՄ Հիսուս

*Մտթ. 6:25-33

**Մտթ. 6:5-6

Տեր Մայրեյա
9 հունվարի, 2007 թ.

Նախազգուշացում ընթացողներին

ԵՄ ԵՄ Մայրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը...

Ես եկել եմ, որպեսզի ձեզ ծանուցեմ որոշ անհետաձգելի բաների մասին, որոնց հարկ է, որ ծանոթ լինեք:

Դուք գիտեք, որ հատուկ թողության շնորհ է գործում, որպեսզի մենք հնարավորություն ունենանք գալու և հատուկ պատրաստություն անցած անհատների միջոցով, որոնք ծառայում են մեզ և զբաղեցնում են մեր դեսպանորդների ու սուրհանդակների պաշտոնները, հաղորդակցվելու ձեզ հետ և տալու մեր ուղերձները: Ահա այժմ ևս մենք ձեզ հետ խոսելու հնարավորություն ենք ստացել մեր դեսպանորդներից մեկի միջոցով:

Մենք ուրախ ենք, որ մեր կողմից տրվող Ուսմունքը բավականին լայն տարածում է գտել և արձագանք է գտնում ձեր սրտերում: Սակայն, ցավոք սրտի, ամեն ինչ չէ, որ այնպես լավ է ընթանում, ինչպես մենք կուզեմայինք: Ձեզնից շատերը, որոնց հասնում է մեր դեսպանորդի միջոցով տրվող Ուսմունքը, նախ բոցավառվում են, ապա որոշ ժամանակ հետո հեռանում: Նրանց գիտակցությունն աստիճանաբար ցած է սահում, և նրանք սկսում են հետաքրքրվել այնպիսի բաներով, որոնք հեռացնում են Ուղից: Նրանք տարվում են ձեր աշխարհի այլազան չխկնկտվածներով:

Դուք պետք է սովորեք ճշմարիտ Ուսմունքը տարբերել ձեր աշխարհում առատորեն հանդիպող փոխնականներից:

Մենք ասել ենք, և ես նորից եմ կրկնում՝ ձեր գրախառնությունների դարակներն 90 տոկոսով լցված են այնպիսի ուսմունքներով, որոնցում Ճշմարտությունն առկա է ոչ ավել, քան 10 տոկոսով: Եվ ահա դուք այդ փոխնականների օգտին եք ընտրություն կատարում՝ երես թեքելով մեր սեղանից բարեկամաբար ձեզ տրամադրվող բարիքներից:

Ինչու՞ է այդպես: Որովհետև ձեր աշխարհում տարածում գտած բազմաթիվ ուսմունքներում ձեզ որևէ ընտրություն չի առաջարկվում: Չի պահանջվում աշակերտի կարգապահություն և չկա որևէ պարտավորություն վերցնելու կարիքը: Ձեզնից ոչինչ չի պահանջվում, բացի ձեր էներգիայից՝

Աստծո այն էներգիայից, որն առանց հսկողության դուր ծախսում եք՝ ձեր ուշադրությունը հատկացնելով այդ փոխնականերին: Եվ կեղծ ուսմունքների ողջ պատրանքային աշխարհն իր գոյությունը պահպանում է հենց այն պատճառով, որ դուք ձեր էներգիայով սնուցում եք այն:

Ուստի ես նորից եմ կրկնում նախկինում ձեզ տրված Ուսմունքի այն դրույթը, որ դուք պատասխանատվություն եք կրում Աստծո էներգիայից ձեր ծախսած յուրաքանչյուր էրգի համար: Ձեզ թվում է, թե դուք առանձնապես ոչինչ չեք անում. պարզապես հաճախում եք սեմինարների կամ ուսուցում եք ստանում, որն, ինչպես ձեզ է թվում, օգտակար է ձեզ համար: Դուք ծախսում եք ձեր փողերը և, որ ամենից ավելի վատ է, վատնում եք Աստծո կողմից ձեզ տրված էներգիան: Դուք այնպիսի ընտրություն եք կատարում, որը ծանրացնում է ձեր կարմայի բեռը:

Այո՛, պաշտելիներս, դուք կարմա եք ստեղծում, երբ աջակցում եք կեղծ ուսմունքներին: Բանն այն է, որ ամենքդ գտնվում եք ձեր զարգացման տարբեր աստիճանների վրա: Եվ ձեզնից որոշներն այնքան միամիտ են, որ թանկարժեք քարի տեղ են ընդունում հանկատարորեն տրամադրվող գեղծարարությունները, որոնք արտաքինապես փայլում են, բայց ներքուստ որևէ արժեք չունեն:

Նաև ձեզնից նրանք, ովքեր արդեն հնարավորություն են ունեցել ճաշակելու Ճշմարտության համը, բայց հետո պահանջ են զգացել էլի ինչ-որ տեղ ինչ-որ բան փնտրելու, նույնպես սխալ ընտրություն են կատարում և ավելացնում Աստծո էներգիայի սխալ օգտագործման իրենց կարման: Որպես կանոն, նման դեպքում դուք առաջնորդվում եք ձեր էգոյով: Դուք անբավարարվածություն եք զգում տոսկ այն բանի պատճառով, որ չեք ցանկանում ձերբազատվել ձեր իսկ այն մասից, որը ձեզ ներշնչում է, թե *ուղիները շատ են, չարժե սահմանափակվել միայն մեկով: Բոլոր ճանապարհները տանում են դեպի Աստված:*

Սա ձեր օրերում ամենալայն տարածում գտած մոլորությունն է: Զանգի ճանապարհներ կան, որոնք տանում են Աստծո մոտ, և կան ճանապարհներ, որոնք հեռացնում են Աստծուց:

Ես ձեզ ճշմարիտ կողմնորոշիչ կտամ, որ չէղվեք ձեր Ուղուց:

Դուք պետք է խորհեք, թե ինչն է ձեզ դրդում, երբ ցանկանում եք փնտրել ինչ-որ նոր, մոդայիկ ուսմունք: Ո՛րն է լինում ձեր շարժառիթը: Որպես կանոն, ձեր էգոն է շնչում այն մասին, թե կարիք չկա կառչած մնալու ինչ-որ մի բանից, թե ոչ մի նոր բան չկա այն թելադրություններում, որոնք Վեհապետները տալիս են իրենց դեսպանորդի միջոցով:

Իրոք, մեր ուղերձները ոչ մի նոր բան չեն պարունակում: Այս Ուսմունքը մեր բազմաթիվ դեսպանորդների միջոցով մենք տվել ենք բազում հազարամյակների ընթացքում: Բայց եթե դուք այդ Ուսմունքը յուրացնեիք թեկուզ 10 տոկոսով, ապա երբեք մեր Ուսմունքը չէիք փոխարինի այն ճոխությամբ, որը մեր ուսմունքի անվան տակ մատուցվում է ձեզ:

Ուղուց հեռանալու ձեր պատճառը փնտրեք հենց ձեր ներսում: Ինքներդ եք ընտրություն կատարում և որոշում կայացնում: Ցավոք, մենք չենք կարող ձեզ հարկադրել, որ ընթանաք մեր մատնանշած Ուղով: Դուք այլընտրանք ունեք և ունեք ազատ կամք, որով կարող եք առաջնորդվել ձեր բոլոր այն ընտրություններում, որոնք ի կատար եք ածում ֆիզիկական ոլորտում:

Սակայն ընտրություն կատարելու ձեր ժամանակն իր շրջանակներն ունի: Եվ եթե դուք ոչ մի բան չյուրացնեք և մարմնավորումից մարմնավորում շարունակեք տուրք տալ ձեր էգոյի քմայքներին՝ փոխանակ նրանից ձերբազատվելու, ապա նախ շատ խիստ նախագուշացում կստանաք ձեր սխալ ընտրության համար: Իսկ եթե համառեք ու շարունակեք ճակատներդ պնդացնելով ու աչքներդ փակելով ընթանալ ձեր ուզած ուղով, ապա ձեզ հանգիստ կթողեն:

Դրանից հետո ձեզ կկարողանանք օգնել միայն այն դեպքում, եթե հանկարծ ձեզ համար բարեխոսեն ձեր այն երկնային ուղեկիցները, որոնց հետ մի մարմնավորում չէ, որ անց եք կացրել: Բայց առավել հավանական է, որ ձեզ պարզապես հանգիստ կթողեն, և դուք ստիպված կլինեք պատրանքի մեջ էլի՝ երկար մարմնավորումներ ունենալ, քանի դեռ էվոյուցիան խաչ չի քաշել ձեր կենսահոսքի վրա և դուք չեք ճանաչվել որպես անպետք բեռ: Աստված ձերբազատվում է մեռյալ և հիվանդ բջիջներից: Եթե առողջ օրգանիզմը չձերբազատվի քաղցկեղային բջիջներից, որոնք միայն իրենց մասին են հոգում, ապա ամբողջ օրգանիզմը կարող է հիվանդության ճարակ դառնալ:

Ըստ այդմ՝ մենք գալիս ենք և զարմանալի հետևողականությամբ կրկին ու կրկին նախագուշացնում ենք ձեզ, որ մանրագին կերպով կշռադատեք կյանքում կատարած ձեր ամեն մի քայլը:

Այն մարդիկ, ովքեր երբևէ չեն լսել մեր Ուսմունքի մասին և երբևէ չեն եղել մեր դասասենյակներում, կրում են ուղու սխալ ընտրության իրենց որոշակի բեռը:

Սակայն նրանք, ովքեր մեկ անգամ արդեն որոշում են կայացրել իրենց մարմնավորումը նվիրաբերել Եղբայրությանը ծառայելու գործին, բայց չեն կատարել իրենց պարտավորությունները, համարվում են դավաճաններ, իսկ նրանց կարման այնքան է ծանր, որքան ծանր չէ հանցագործների ու մարդասպանների կարման:

Ահա այսպիսի ծանր ուղերձով ես այսօր եկա: Հնարավոր է՝ ձեզնից որոշների տրամադրությունը փչացրի: Բայց ես պետք է ձեզ տայի ամեն ինչ կշռադատելու այս հնարավորությունը, որպեսզի կարողանաք հետ մղել ձեր էգոյի գրոհները և կշռադատված որոշում կայացնեք՝ հենվելով ձեր ներսի աստվածային բանականության վրա:

Ես ուրախ կլինեմ օգնության ձեռք մեկնելու ձեզնից նրանց, ովքեր իրենց ճակատագրի շուրջ ծանր մտորումների պահին կդիմեն ինձ և օգնություն կխնդրեն:

ԵՄ ԵՄ Մայրոնյան

Վեհապետ Էլ Մորիա
10 հունվարի, 2007 թ.

Ուսմունք հավատարմության մասին

ԵՄ ԵՄ Էլ Մորիան՝ այս օրով ձեզ այցի եկածը...

Ես Եկել եմ, որ ձեզ հայտնեմ մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների ընթացիկ շրջանի ավարտի մասին:

Այսպիսով, շրջանն ավարտված է: Եվ մենք անկեղծորեն հույս ենք տածում, որ մեր էներգիան ու ջանքերը, որոնք մենք ծախսել ենք մեր ուղերձները հաղորդելու համար և ներդրել դրանք ուղերձների տեքստերում, իզուր չեն անցնի: Դուք կվերընթերցեք մեր ուղերձները, և այն, ինչն առաջին անգամից ձեզ պարզ չի եղել, ունակ կդառնաք ընկալելու երկրորդ, երրորդ կամ չորրորդ անգամ կարդալիս:

Հավատացե՛ք ինձ, շատ ու շատ ակնհայտ ճշմարտություններ, որոնք ձեր աչքից վրիպում են, քանզի ձեզ թվում է, թե այդ ամենի մասին շատ անգամ եք լսել ու արդեն գիտեք, որոշ ժամանակ անց ձեզ համար նոր հնչողություն ձեռք կբերեն, եթե այլ տեսանկյունից դիտեք դրանք: Քանզի ճշմարտության այդ պահերը կապրվեն ձեր կյանքում: Այո՛, ճշմարտությունը բոլորովին այլ կերպ է ընկալվում՝ կախված այն բանից, թե դուք սոսկ կարդում եք այն, թե՞ ապրում ձեր կյանքում: Եվ ողջ տարբերությունն այն է, որ Աստծո ճշմարտությունը բացահայտում եք ձեր սրտերում, այլ ոչ թե սահեցնում եք ձեր աչքերը տեքստի բառերի վրայով: Սրտում բացված ճշմարտությունն այլևս երբեք չի լքի ձեզ, և դուք կդառնաք այդ ճշմարտության կրողը: Այն ներհատուկ կդառնա ձեզ՝ որպես ձեր իսկ անբաժանելի մասը: Եվ դա գիտակցության այն վիճակն է, որին մենք ձգտում ենք ձեզ հասցնել: Հարկ է ոչ թե վերապատմել աշխարհի չափ հին ճշմարտությունները, այլ իրապես դառնալ մեր Խոսքի կրողն ու կյանքում մեր Ուսմունքի կենսագործողը:

Ցավոք, նման մարդիկ շատ չեն: Միայն եզակիներն են ունակ ամբողջովին իրենց կյանքը նվիրաբերելու մեր պատգամների կատարմանը և ծառայելու անշահախնդրորեն՝ իրենց ողջ կյանքը վերածելով ծառայության:

Մենք գիտենք ձեզ: Գիտենք յուրաքանչյուրին, ով ունակ է կատարելու մեր հանձնարարությունները և ի կատար ածելու մեր գործերը ֆիզիկական ոլորտում:

Ձեզնից յուրաքանչյուրը գտնվում է մեր ուշադիր հսկողության ու հայացքի ներքո: Եվ շատերդ, վաստակելով մեր ողջ վստահությունը՝ մեր վստահության վկայագրերը, այդպես էլ ձեր ներսում սկսած գործը շարունակելու ուժ չեք գտնում և հեռանում եք Ուղուց:

Ամեն անգամ, երբ շփման եզրեր եք գտնում մեզ հետ և ստանում մեր վստահությունը, մի՛ կարծեք, թե դա եզակի պատահականություն է: Ծա՛տ մարմնավորումների ընթացքում եք դուք իրավունք ձեռք բերել հեշտորեն մեզ հետ շփվելու և ձեր իսկ վերցրած պարտավորությունները տվյալ մարմնավորման ընթացքում ի կատար ածելու համար:

Սակայն ամենացավալին այն է լինում, երբ դուք, վաստակելով մեր ողջ վստահությունը՝ մեր վստահության վկայագրերը, այնուհետև խույս եք տալիս ձեր պարտավորություններից: Ամեն անգամ ձեր խելքը հաճկատարորեն ձեզ է տրամադրում բազմաթիվ տրամաբանական ապացույցներ, թե իբր դուք ճիշտ եք վարվում: Սակայն ձեր սիրտը երբեք ձեզ չի խաբի: Եվ մինչև ձեր այդ մարմնավորման ավարտը դուք մշտապես ծանրություն կզգաք ձեր սրտում, անկատար պարտքի ծանրությունը:

Ես չեի ուզենա ձեր տեղը լինել: Քանզի ձեր աշխարհում ավելի ծանր բան չկա՝ ավելի մեծ հանցանք, որն իր ծանրությամբ համեմատելի լինի հանուն Երկրի Կյանքի ի կատար ածվող սրբազան աշխատանքին դավաճանելու հետ:

Այսօր ես ձեզ այցի եմ եկել նաև այն բանի համար, որ ձեզ հիշեցնեմ ձեր վերցրած պարտավորությունների մասին: Եվ եթե մինչև այս տարվա վերջ դուք այնուամենայնիվ փոխեք ձեր որոշումը և վերադառնաք ձեր պարտավորությունների կատարմանը՝ ձեր պարտքին, ապա

Կարմայական Վարչությունում մենք հանդես կգանք որպես ձեր պաշտպաններ և առավելագույնս կփորձենք մեղմել անցյալի ձեր սխալ ընտրության կարմայական հետևանքները:

Մարմնավորվածների մեջ շատ քիչ են ճշմարիտ սպասավորները: Եվ անտանելի է դիտելը, թե ինչպես են նրանք մեկը մյուսի հետևից հրաժարվում իրենց պարտքը կատարելուց և մղվում դեպի ձեր աշխարհի տեսլապատրանքների կողմը:

Հավատացե՛ք ինձ, ձեր աշխարհում չկա մի բան, որը հնարավոր լինի, թեկուզ հեռավոր կերպով, համեմատել սպասավորության հրճվանքի հետ՝ այն բավականության հետ, որը ստացվում է պարտքի կատարման համար ի կատար ածված գործից: Եվ երբ ֆիզիկական ոլորտից անցում եք կատարում Լույսի եթերային օկտավաները, համայն տիեզերքի Լույսի միլիոնավոր էակներ շտապում են իրենց հարգանքի հավաստիքը մատուցելու ձեզ և շնորհակալություն հայտնելու ձեր երկրային մարմնավորման ընթացքում ձեր կատարած անձնվեր աշխատանքի համար:

Միայն հայտնի դարձածներից չէ, որպեսք է օրինակ վերցնեք: Մեր շատ հավատարիմ սպասավորներ մի ողջ կյանքն են սպասում, որպեսզի խաղան իրենց փոքրիկ դերը: Եվ այդ աննշան թվացող դերը երբեմն բերում է իրենց երկրի, երբեմն էլ ողջ աշխարհի իրադրության փոփոխությանը:

Արդ, նրբագագցորեն ունկնդի՛ր եղեք ձեր սրտին: Չի՞ հասել արդյոք ձեր ժամը, որ ծառայեք Կյանքին:

Մենք ուրախությամբ ձեզ կցուցաբերենք հնարավոր ամբողջ օգնությունը: Հնարավորություն կգտնենք ձեր արտաքին գիտակցությանը հասցնելու այն խնդիրը, որի լուծման անհրաժեշտությունն արդեն հասունացել է: Սակայն այն պահին, երբ արդեն պետք է գործի անցնել, մի՛ տրտնջացեք և մի՛ ասեք, թե ծանր վիճակում եք, թե մղկտում են ձեր հին վերքերը, և որ բավարար չափով պահեստավորված սնունդ չունեք:

Ձեր աշխարհում չկա ոչինչ, որ կարողանար ետ պահել ճշմարիտ աշխատակցին իր կյանքի խնդիրը լուծելուց:

Ուստի ջանացեք մշտապես մնալ հավատարիմ ու պատրաստակամ: Մշտապես մարզե՛ք ձեզ. մարզեք ձեր այն ներքին մկանները, որոնք ձեզ գործելու հնարավորություն կտան այն պահին, երբ կթվա, թե այլևս ուժ ու հնար չի մնացել:

Ձեր կյանքում մշտապես տեղ կա սխրանքի համար: Եվ ձեր սխրանքը ոչ թե մարդկանց արտաքին գիտակցությամբ, այլ Երկնքում կգնահատվի: Քանզի միայն այստեղ գիտեն այն սխրանքի գինը, որը դուք գործում եք ձեր մարմնավորված լինելու ընթացքում՝ ձեր հավատարմությունը պահպանելով ֆիզիկական ոլորտում ձեր շուրջն առկա երբեմն անտանելի պայմաններում:

Ես ուրախ եղա հավատարմության մասին այս ոչ մեծ Ուսմունքը ձեզ մատուցելուս առիթով: Եվ ես կրկնակի ուրախ եմ, որ այդ Ուսմունքը տվեցի մեր դեսպանորդի միջոցով այս շրջանում տրվող թելադրություններից վերջինով:

Ես իմ շնորհակալությունն եմ հայտնում Տառյանային իր ծառայության համար:

ԵՄ ԵՄ Էլ Մորիան՝ ձեր նկատմամբ Հավատով, Հույսով և Միտով լեցուն

Ուղերձների վեցերորդ շրջան (հունիս –հուլիս, 2007 թ.)

Սանատ Կումարա
20 հունիսի, 2007 թ.

Ուրախալի լուր

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը: ԵՄ ԵՄ եկել այսօր, որպեսզի ավետեմ մեր դեսպանորդի միջոցով փոխանցվող թելադրությունների այս նոր շրջանի սկիզբը, որը մենք մտադիր ենք իրականացնել: Ահա եկել եմ, և, անկախ իմ կամքից, ուրախության արցունքներ են գլորվում այտերիս վրայով: Օ՛, դուք չեք կարող պատկերացնել, թե ի՛նչ ցնծություն է տիրում այսօր Երկնքում:

Ձեզ թվում է, թե ձեր շուրջն ամեն ինչ առաջվա պես է, թե փոփոխությունների ոչ մի նշան չի երևում: Առաջվա պես շողում է արևը, երգում են թռչունները, և ձեր առջև անդադար հառնում են

ձեր առօրյա հոգսերը: Այնուհանդերձ համարձակվում եմ ձեզ վստահեցնել, որ շատ բան է փոխվել այն բանից ի վեր, երբ մենք վերջին թելադրությունը տվեցինք մեր դեսպանորդի միջոցով:

Անցել է կես տարուց մի փոքր պակաս: «Ի՞նչ կարող էր փոխված լինել այդ ընթացքում», - կհարցնեք դուք:

Տեղի է ունեցել հենց այն, ինչը պետք է տեղի ունենար: Եվ մենք երջանիկ ենք, որ մեր կողմից դեսպանորդի միջոցով ընթացիկ տարվա մարտ ամսին առաջադրված պայմանը գործնականում բավարարված է: Մեզ ֆիզիկական աշխարհից մի նշան էր պետք ստանալ, որ Ռուսաստանի ժողովուրդներն ընդունում են մեր դեսպանորդին: Մեզ ֆիզիկական աշխարհից մի նշան էր պետք ունենալ, որը վկայեր այն մասին, որ Երկրի մարդիկ լսում են մեզ և պատրաստ են համագործակցել մեզ հետ:

Մենք ստացանք այդ նշանը՝ մեր դեսպանորդի համար Աշրամի կառուցման սկիզբը: Մենք էլ մեր հերթին կարողացանք այդ ուրախալի լուրը հասցնել Մեծ Կենտրոնական Արևին և նոր թողության շնորհի ու նոր աստվածային ողորմածություն ստանալ ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև Երկիր մոլորակը բնակեցնող բոլոր ժողովուրդների համար:

Մենք ուրախ ենք, ուրախ եմ ինքս, որ դժվարագույն թեստն ու դժվարագույն փորձությունը հաղթահարված են: Իսկ դրա վկայությունն է այն, որ ահա շարունակվում է ուղերձների փոխանցումը, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով՝ արդեն առկա աստվածային հնարավորությանը համապատասխան:

Ներկա պահին, նախքան բուն թելադրությանն անցնելը, ես մանրագնին կերպով կշռադատեցի մեր կայանալիք գրույցի բովանդակությունը: Եվ գիտե՞ք, թե ինչ կասեմ. ես հասկացա ու գիտակցեցի, որ մեր հույսերն այն տեսքով, ինչպես մենք ակնկալում էինք համագործակցել Երկրի մարդկանց հետ, չեն իրականացել: Մենք ակնկալում էինք, որ կգտնվի ոմն մեկը, որն անշահախնդիր կերպով, առանց պայմաններ առաջադրելու, բարեգործական օգնություն ցույց կտար մեր դեսպանորդին: Եվ այդ անշահախնդիր օգնությունը որպես երաշխիք կարող էր ծառայել, որ մենք նոր ողորմածություններ ու հնարավորություններ խնդրեինք Երկիր մոլորակի համար: Բայց դա տեղի չունեցավ: Ոչ ոք չկարողացավ հասնել գիտակցության նման մակարդակի, որպեսզի առանց որևէ նախապայմանի օժանդակի մեր դեսպանորդին:

Այդ դեպքում կհարցնեք՝ ինչո՞վ ենք այսքան ուրախացած և ինչու՞ ենք ցնծում...

Բանն այն է, որ ռուս ժողովուրդը խորամանկություն բանեցրեց Աստծո Օրենքի նկատմամբ. մեկի փոխարեն գտնվեցին հարյուրավոր և հազարավոր մարդիկ, ովքեր իրենց անշահախնդիր ներդրումն արեցին մեր դեսպանորդի Աշրամի շինարարության գործում: Եղան մարդիկ, որոնք շատ համեստ գումարներ նվիրաբերեցին: Սակայն մենք տեսանք և կարդացինք նրանց սրտերը: Նրանց ներդրումն արքայական պարզևի արժեք ունի, քանի որ այդ փողերը կտրեցին իրենց ընտանիքներից, որոնք ամենևին էլ առատության մեջ չեն ապրում: Եղան նաև մարդիկ, որոնք զգալի գումարներ ներդրեցին, եղան այնպիսիները, որոնք նվիրաբերեցին իրենց աղոթքի էներգիան, ինչից մենք օգտվեցինք օգնություն ցուցաբերելու նպատակով:

Մենք շնորհակալություն ենք հայտնում բոլորիդ, որ մասնակցեցիք շինարարության գործին: Աստծո աչքում ձեր ներդրումն անգին է, քանի որ այն մեզ հնարավորություն ընձեռեց նոր աստվածային ողորմածություններ ու հնարավորություններ խնդրել ոչ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ մոլորակի համար:

Ես ուրախ եմ ձեզ հայտնել, որ մի քանի բոլեից կսկսվի Կարմայական Վարչության նիստը: Եվ ես անկեղծ հույսեր եմ փայփայում, որ բոլոր նրանք, ովքեր մասնակցել և ներդրում են արել շինարարությանը, հանձն կառնեն նամակներով դիմել Կարմայական Վարչությանը և կխնդրեն այն ողորմածությունները, որոնք կուզենային ստանալ իրենց և իրենց մերձավորների համար:

Մի՛ երկնեք խնդրելուց: Եթե ձեր խնդրանքներն ամբողջովին չբավարարվեն էլ, ապա զոնե կարմայական բեռի առավելագույն թեթևացում, որքանով թույլ է տալիս Աստծո Օրենքը, դուք անպայմանորեն կստանաք:

Եվ այսպես, ես իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն եմ հայտնում յուրաքանչյուրին, ով մասնակցել է մեր այն վերջնագրի պահանջների բավարարման գործին, որը մենք մարդկանց առջև դրեցինք այս տարվա մարտ ամսին: Հուսով եմ, որ ձեր գործադրած ջանքերը դրանով չեն ավարտվի: Օ՛, ես ձեզ կուզենայի նաև տեղեկացնել, թե Աստված ձեզ համար ինչ մեծ հրաշքներ է նախապատրաստում... Հեռանկարները, որոնք կբացվեն ձեր առաջ, կգերազանցեն ձեր բոլոր սպասելիքները:

Սակայն նաև պետք է հաշվի առնեք, որ դեռևս գտնվում եք Ուղու սկզբնամասում: Իսկ առջևում դեռ դժվարին ու վտանգավոր ճանապարհ է ընկած: Եվ եթե հիմա դուք ընթանում էիք ձեր ներսից բխած և աստվածային ազդակից ծնված խանդավառության հաշվին, ապա հետագա Ուղին հաղթահարելը ձեզնից ձեր ողջ ուժերի է՛լ ավելի մեծ լարում կպահանջի:

Երկիր մոլորակի վերափոխումները մենք մտադիր ենք իրականացնել սեղմ ժամկետներում: Իսկ դա նշանակում է, որ այն ուժերի դիմադրությունը, որոնք փոփոխություններ չեն ցանկանում, աղետալիորեն կանգնեն: Չգոն և զգույշ եղեք Ուղով ընթանալիս: Թույլ մի՛ տվեք, որ պատրանքն այնքան տիրի ձեր գիտակցությանը, որ մոռանաք Աստծուն ու Վեհապետներին և սայթաքուն ու վտանգավոր արահետով սահեք դեպի սարսափների ու դառնությունների անդունդը:

Մենք ձեզ կանչում ենք դեպի Լեռնագագաթները: Ցած մի՛ նայեք դեպի կուտակ-կուտակ ողբերի անդունդները, որոնցով դեռևս լի է Երկիրը:

Մենք հուսով ենք, որ Ուղու վրա հանդիպած բոլոր վտանգները դուք պատվով կհաղթահարեք: Ծանր կլինի ձեզ համար: Դուք ահեղի բեռնվածություն կզգաք և ուժերի անասելի լարում: Խնդրում եմ. այն ժամանակ, երբ ձեզ համար առավել ծանր կլինի, երբ բոլոր հույսերը կկորցնեք և առջևում Լուսի ոչ մի շող չեք տեսնի, հիշե՛ք իմ մասին, այս թելադրության մասին. հիշե՛ք, որ դուք անմահ Լուսի էակ եք, և ձեզ ոչինչ չի կարող սպառնալ, քանի դեռ ձեր սրտերում պահում եք Հավատը, Հույսը և Մերը...

Բավական է միայն, որ պահպանեք Հավատի մի մասնիկ և դրանով կանչ հղեք դեպի Երկինք՝ անձամբ ինձ, ցանկացած Համբարձյալ Վեհապետի, Միքայել Հրեշտակապետին: Եվ նույնիսկ այնժամ, երբ ձեզ կթվա, թե արդեն կործանված եք, հրաշք կկատարվի, և ձեր Ուղու վրայի բոլոր արգելքները մշուշի պես հողս կցնդեն: Երբեք մի՛ մոռացեք, որ գտնվում եք պատրանքային աշխարհում: Եվ ձեր պատրանքային աշխարհի բոլոր սարսափներն ու ահեղը մի գեղեցիկ օր ի չիք կդառնան: Չի այդպիսին է Աստծո Օրենքը: Եվ նրանք, ովքեր կառչած են մնում հին, սովոր ու դարձ ապրած բաներին, որոնցից արդեն բորբոսի հոտ է փչում, իրենք իրենց ենթարկում են պատրանքային աշխարհի հետ համատեղ հողս ցնդելու և անէանալու վտանգին:

Ուստի հրաժարվե՛ք ձեր կասկածներից, ձեր վատ տրամադրությունից և մղվեք դեպի այնտեղ, ուր վերափոխությունների թարմ քամին է փչում, ուր հսկա փոփոխություններ ու արարումներ են սպասվում և ուր մենք ձեզ կանչում ենք:

Ես վստահ եմ, որ իմ այս ուղերձից հետո ձեզնից շատերը նորովի կնայեն իրենց կյանքին և ընտրություն կկատարեն փոփոխությունների օգտին, որքան էլ դրանք իրենց մարմնական խելքի տեսակետից ահավոր թվան:

Ոչինչ ձեզ վնաս չի պատճառի: Մի՛ վախեցեք մարմինը կորցնելուց՝ պահպանելով հոգին: Անհամեմատ ավել վատ կլինի, եթե պահպանեք ֆիզիկական աշխարհում մաշվող ձեր մարմինը, բայց կորցնեք ձեր հոգին:

Ես եկա այս օրով և ահա լքում եմ ձեզ...

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

Տեր Սուրիա
21 հունիսի, 2007 թ.

Երկրի մարդկությանն ուղղված հանձնարարականներ

ԵՍ ԵՄ Սուրիան՝ Մեծ Կենտրոնական Արևից կրկին ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ կրկին մերձեցել Երկրի մարդկությանը, որպեսզի խրատներ տամ, որպեսզի աշխարհների միջև կապն ամրանա և կատարելագործվի: Ինչպես միշտ, կուզենայի անդրադառնալ ընթացիկ իրադարձությունների այն նորություններին, որոնք այժմ բացահայտվել են և կա՛մ արդեն իրականանում են ձեր աշխարհում, կա՛մ էլ ուր որ է կիրականան, քանի որ նուրբ ոլորտից դրանք արդեն պատրաստ են իջանելու ֆիզիկական ոլորտ:

Ձեզ հայտնի է, որ Երկրի մարդկության հետ մենք աշխատանք ենք տանում Աստծո ողորմածության շնորհիվ՝ այն թողության շնորհի, որը մեզ թույլ է տալիս ճշգրտելու մոլորակի էվոլյուցիայի ընթացքը: Գիտեք և այն մասին, որ Երկրի մարդկությունը միլիոնավոր տարիներ առաջ շեղվել է էվոլյուցիոն զարգացման ուղուց, ինչը հանգեցրել է էվոլյուցիայի ընդհանուր ընթացքի մեջ որոշ խառնաշփոթի առաջացման: Որոշ կենսահոսքերի համար զարգացումը դանդաղել է, որոշներն էլ, ընդհակառակը, զարգացման արագ ընթացք են ստացել՝ շնորհիվ աստվածային ողորմածությունների և հնարավորությունների: Ձեզնից ամեն ոք կարող է ընտրություն կատարել. արդյոք համաքա՞յլ գնա Աստծո Օրենքի հետ, թե՞ շարունակի ապրել այն օրենքներով, որոնք ձևավորվել են Երկրի վրա և այնքան էլ չեն համապատասխանում այս պահին

մոլորակի համար նախատեսված այն մտահղացմանը, որն առկա է աստվածային մակարդակում և շատ շուտով պետք է կյանքի կոչվի:

Հասկացե՛ք, խնդրեմ, մենք չենք ուզում ձեզ ցավ ու տառապանք պատճառել: Ողջ Տիեզերքի միլիոնավոր Լույսի Էակներ պատրաստ են ձեզ օգնել: Բայց ինքներդ և միայն ինքներդ եք դանդաղեցնում մոլորակի Էվոլյուցիայի ընթացքը: Դուք թույլ եք տալիս այնպիսի արարքներ և ապրում եք գիտակցության այնպիսի անկատար վիճակներ, որոնք Էվոլյուցիոն զարգացման ներկա փուլում ուղղակի անթույլատրելի են: Եվ մենք ստիպված ձեռնարկում ենք այնպիսի միջոցներ, որ հենց ձեր աչքի առաջ ձեր բոլոր անկատար արարքները, մտքերն ու զգացմունքները նյութականանան որպես արտաքին հանգամանքներ, ինչպիսիք են անբարենպաստ եղանակային պայմանները, համադետները կամ այն դժվարությունները, որոնց բախվում եք ձեր կյանքի ընթացքում՝ հիվանդություններ, դառնություններ, դժբախտություններ:

Ձեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչի պատճառը հենց դուք եք: Նուրբ աշխարհում մենք բոլորս կապված ենք իրար հետ, և մենք բոլորս պատկանում ենք տիեզերքի Էվոլյուցիայի ընդհանուր շղթային: Ձեր և իմ միջև առանձնակի տարբերություն չկա: Ես ձեզնից մի քանի հարյուր աստճան վեր եմ կանգնած, և դա է միայն մեր միջև եղած տարբերությունը: Ուստի հարկ է, որ հնազանդվեք ինձնից ձեզ հասած խորհուրդներին կամ այն խորհուրդներին, որոնք Վեհապետներից ստանում եք Երկրի վրայի մեր ներկայացուցչի՝ մեր դեսպանորդ Տատյանայի միջոցով:

Ներկայումս դուք համարյա թե ուղիղ հաղորդակցության հնարավորություն ունեք: Օգտվե՛ք այդ հնարավորությունից և մեր ուղերձներն ընդունեք ոչ թե որպես հեքիաթներ, ինչպիսիք քնելուց առաջ լսում էիք մանուկ հասակում, այլ դրանք դիտարկեք որպես ղեկավարող ցուցումներ, որոնցից անհրաժեշտ է օգտվել կյանքի ընթացքում: Հավատացե՛ք ինձ, հնարավորությունը, որը ներկայումս ստացել եք, ձեզ հսկայական առավելություն է տալիս: Եվ դրա շնորհիվ մենք մտադիր ենք պատրանքի ցանցերից դուրս կորզել միլիոնավոր կենսահոսքերի՝ մոլորյալ հոգիների, որոնք մարմնավորումից մարմնավորում դեգերում են պատրանքի ջունգլիներում՝ բախվելով սարսափների, կասկածների, դառնությունների ու հիվանդությունների ամբողջ զորախմբին:

Մենք հերթական անգամ նետում ենք մեր ցանցերը, որպեսզի աստեղային ոլորտի ջրերի տակից դուրս կորզենք միլիոնավոր մոլորյալ հոգիներ:

Մենք գալիս ենք, որ խթանենք ձեզ. տանք այն էներգետիկական խթանը, որով դուք կկարողանաք արթնանալ և ձեր հայացքը հառել դեպի Երկինք, դեպի Նոր Օրվա պայծառ արևը, այն Օրվա արևը, որի լուսաբացն արդեն ցուլեր է տալիս:

Ես եկել եմ այս օրով, որպեսզի ապագայի համար անհրաժեշտ ցուցումներ տամ ձեզ: Դուք Լույսի այն Էակներն եք, որոնք մոլորվել են նյութականի թավուտներում, ուստի և մենք ձեզ օգնության ձեռք ենք մեկնում: Աղաչու՛մ եմ, մի՛ մերժեք մեր օգնությունը, այլևս մի՛ դրսևորեք դեռահասներին հատուկ ինքնավստահություն, այլ ականջալու՛ր եղեք մեր խորհուրդներին:

Տիեզերքում գործող Ազատ Կամքի Օրենքի շնորհիվ դուք հնարավորություն ունեք ընտրելու ձեր ապագան: Հնարավորություն ունեք հնազանդվելու իմ և մեր խորհուրդներին, նաև հնարավորություն ունեք ետ մղելու մեր օգնության ձեռքը:

Պետք է ձեզ զգուշացնեմ, որ հիմա դուք անդունդի վրա եք կախված, և եթե ձեր շրջապատի մշուշը փակում է ձեր աչքերը, որպեսզի չտեսնեք ձեր ողբալի վիճակը, ապա դրանից չի հետևում, որ դուք ամեն ակնթարթ կանգնած չեք դեպի անդունդ գահավիժելու վտանգի առջև:

Դուք կարող եք ինձ չհավատալ. կարող եք համառորեն մերժել առաջարկվող օգնությունը: Դա ձեր իրավունքն է: Բայց ձեր մեջ կան անհատներ, ովքեր մեզնից օգնություն են խնդրում, և մենք չենք կարող չցուցաբերել այդ օգնությունը, քանի որ կանչը պետք է պատասխանի արժանանա: Մենք ձեզ բռնի կերպով չենք կարող փրկել, սակայն օգնության կարիք ունեցողին ձեռք մեկնելը մեր պարտքն է:

Մատերիայից դեպի Աստծո Աշխարհ վերադարձի ձեր ամբողջ երկարատև Ուղու ընթացքում մենք մշտապես ձեր կողքին ենք: Եվ շատ շուտով, եթե հետևեք մեր խորհուրդներին, կկարողանաք մեզ ճանաչել և գիտակցորեն ընդունել մեր օգնությունը: Իսկ հիմա դեռևս ստիպված կլինեք ուղղակի հավատ ընծայել մեր ուղերձներին և այն տեղեկատվությանը, որը ձեզ ենք հասցնում մեր դեսպանորդի միջոցով:

Մշտապես՝ բոլոր ժամանակներում, եղել են մարդիկ, ովքեր իրենց հռչակել են Երկնքի դեսպանորդներ: Խոսել են Աստծո անունից: Ոմանք լսել և հետևել են վերից եկող խորհուրդներին, ոմանք էլ քմծիծաղ են տվել և ընթացել իրենց ճանապարհով:

Դու՛ք եք ընտրողը: Ազատ կամքը ձերն է:

Իմ և մեր գործն այն է, որ ձեզ զգուշացնենք ձեր ընտրության հետևանքների մասին: Եվ ձեզ մատնացույց անենք այն հանգամանքը, որ ժամանակն արագացել է, և ձեր կատարած ընտրության այդ հետևանքներն ի հայտ կգան տառացիորեն մի քանի օր անց՝ հաշված այն

պահից, երբ կատարել էք ձեր ընտրությունը: Դա հատուկ է արվում, որպեսզի դուք ձեր արտաքին գիտակցությամբ կարողանաք հետևել համայն տիեզերքում գործող Մեծ Տիեզերական Օրենքի գործողությանը, ինչը հին ժամանակներում ձևակերպվում էր այսպես. «*Ինչ ցանես, այն էլ կինձես*»:

Շատ լավ մտածված Օրենք է, Օրենք-Ուսուցիչ, որի օգնությամբ կարող եք ինքներդ դաս քաղել անցյալում գործած ձեր սխալներից: Եվ հարկ է, որ այդ Օրենքը դուք ուսուցանեք ձեր դպրոցներում: Այդ Օրենքն իմանալն ուղղակի անհրաժեշտություն է այն սերնդի համար, որն այժմ կյանք է մտնում: Եվ եթե դժվարություններ ծագեն Տիեզերական Օրենքը դպրոց մտցնելու հարցում, ապա միշտ էլ ինքներդ կարող եք այդ Օրենքի գործելու կերպը բացատրել ձեր երեխաներին ու թոռներին: Որքան մեծ թվով երեխաներ իրազեկ դառնան այդ Օրենքին, այնքան ավելի ու ավելի դյուրին կդառնա Երկիր մոլորակի իրավիճակը, քանի որ այն մարդիկ, ովքեր քաջատեղյակ են այդ Օրենքից, արդեն կխուսափեն զանց առնել այն ոչ թե վախի ազդեցությամբ, այլ այն ցանկությունից ելնելով, որ խուսափեն իրենց Ուղու ավելորդ դժվարություններից:

Հավատացե՛ք ինձ, երբեմն ավելի ձեռնտու է շրջանցել ճանապարհին հանդիպած ուղղաձիգ ժայռը, քան թե մագլցել՝ առանց որևէ ապահովության:

Մենք գալիս ենք, որպեսզի ձեզ փոքր-ինչ ծանոթացնենք գործելակարգին: Աղաչու՛մ եմ, փոխանցե՛ք ձեր զավակներին ու թոռներին Երկիր մոլորակի վրա ապրելու անվտանգության կանոնները:

Ես անկեղծորեն հույս եմ տածում, որ կատանամ ձեր օգնությունն ու օժանդակությունը:

ԵՄ ԵՄ Մուրիան՝ ձեր նկատմամբ տածվող իմ ողջ Միտով

Վեհապետ Էլ Մորիա
22 հունիսի, 2007 թ.

Ընթացիկ օրվա խրատներ

ԵՄ ԵՄ Էլ Մորիան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել...

Եվ, ինչպես միշտ, կուզենայի խրատներ տալ, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր Ուղու վրա:

Ամեն անգամ, երբ գալիս եմ, ցանկություն եմ ունենում ձեզ հաղորդակից դարձնելու իմ լարված հոգեվիճակին, քանզի անասելի ջանքեր եմ գործադրում, որպեսզի իմ աշակերտներին հասցնեմ իրենց համար կարևոր ու անհրաժեշտ տեղեկատվությունը: Ես առաքում եմ նրանց իմ մտքերը, նշաններ եմ տալիս, ուղարկում հրեշտակներ: Եվ ամեն անգամ, երբ Ուղու վրա ստանում եք իմ նշանները, ձեր միտքն ինձ անհայտ պատճառով այնպիսի տեսք է ընդունում, թե իբր ոչ մի նշան չկա, կամ էլ տեղի ունեցածը համարում է թյուրիմացություն կամ պատահականություն:

Ամեն անգամ գալիս եմ և ամեն անգամ ուսուցանում եմ կարդալ նշանները: Ես չեմ կարող ձեզ հետ հաղորդակցվել բառերի միջոցով: Որպեսզի դա տեղի ունենա, դուք ձեր գիտակցությունը պետք է մշտապես պահեք բարձր մակարդակի վրա: Ուստի ավելի հեշտ է նշաններ ուղարկել ձեր աշխարհ: Սակայն ձեզ չի բավականացնում նրբագացությունը, նուրբ աշխարհի ընկալողունակությունը, այդ աշխարհը զգալու կարողությունը:

Դուք առավել զգայուն եք աստեղային ոլորտի նկատմամբ և պատրաստ եք համագործակցել դրա հետ: Բայց Լինելիության ավելի բարձր ոլորտները վրիպում են ձեր ուշադրությունից, և ձեր կյանքի արտաքին հանգամանքները ծածկում են ձեզնից աստվածային մակարդակները՝ դժվարացնելով մեր աշխարհի հետ ձեր կապ հաստատելը:

Նրբագացություն եմ ուսուցանում և նշանների ընթերցման կարողություն: Իմ ամեն գալստյամբ խիստ գործնական խրատներ եմ տալիս: Դուք լսում եք ինձ և բառացիորեն մի քանի բոլոր կամ ժամ հետո մոռանում ասված բաները: Ձեր միտքը շրջվում է դեպի ձեր աշխարհի գործերի կողմը՝ դեպի ձեր շրջապատը, և նախանձելի համառությամբ խույս եք տալիս նվիրվածության ու Հավատի բռնկման պահին կայացրած ձեր որոշումից՝ ընկնելով ձեր աշխարհի վաղանցիկ զվարճանքների ու հաճույքների հետևից: Անհրաժեշտ է, որ սովորեք ձեր գիտակցության մեջ մշտապես պահել մեր աշխարհի պատկերացումը: Մշտապես պետք է զգաք, որ մեր աշխարհները հպվում են իրար: Եվ ամեն անգամ, երբ ինքներդ ձեզ թույլ տաք կտրվել ձեզ շրջապատող իրականությունից և հայացքներդ հառեք Երկնքին, այն կմերձենա ձեզ: Իսկ երբ կենտրոնանաք ձեր աշխարհի պատրանքային խնդիրների վրա, Երկինքը կհեռանա ձեզնից:

Հավատացե՛ք ինձ, ձեր աշխարհի թրթռանքներն օրվա ընթացքում մշտապես անփոփոխ չեն մնում: Կան ժամեր՝ հատկապես վաղ առավոտյան և ուշ երեկոյան, երբ ձեր աշխարհի թոհուրթոհը խաղաղվում է, և մեր աշխարհը մերձենում է ձերին: Եվ այդ հրաշալի պահերին ձեզնից ոմանք

ունակ են դառնում սովորական ֆիզիկական տեսողությամբ նկատելու հրեշտակներին ու տարրոգիներին: Մեր աշխարհի մերձեցման այդ պահերին շատ մարդիկ, որոնց թրթռները չեն հասել բավարար մաքրության ու ներդաշնակության, ընդհակառակը զգում են անբացատրելի հակակրանք, ճնշվածություն ու կյանքի իմաստի բացակայություն:

Ուստի կամենում եմ կոչ անել, որ դուք ձեր կյանքում ուշադրություն դարձնեք նման վիճակներին: Երկրային չափանիշներով այնքան էլ շատ ժամանակ չի անցնի, և տեղի կունենա Երկրի բնակչության վերաշերտավորում ու դասակարգում: Առավել բարձր թրթռանք ունեցող մարդիկ դուրս կելնեն ժամանակակից քաղաքների սողոմ-գոմորից, զանգվածային գիտակցության ու ցածր թրթռանքների աղտուղիներից: Նրանք բնակության մաքուր վայրեր կընտրեն, ինչպիսիք դեռևս կան երկրագնդի երեսին: Իսկ այն մարդիկ, որոնց թրթռանքը համահունչ է ժամանակակից քաղաքներին, կմնան դրանցում: Այդպիսով, բնական ճանապարհով տեղի կունենա նոր ռասայի մարդկանց ելքը դեպի ավետյաց երկիր: Իսկ հրեշտակները հնարավորություն կստանան անցավ կերպով կատարելու իրենց աշխատանքը՝ մոլորակից այն ողջ տիեզերական աղբը հեռացնելու առումով, ինչն այլևս ենթակա չէ հետագա Էվոլյուցիայի:

Այս մարգարեությունը տրվել է շատ մարգարեների կողմից: Եվ ամեն անգամ այն լսելով՝ մարդիկ շարունակում են զբաղվել իրենց առօրեական գործերով և դրա վրա ուշք չեն դարձնում իրենց գիտակցության մեջ: Միայն լսողունակ շատ քիչ մարդիկ կան, որ դիմում են Երկնքին և ստանում իրենց Ուղու նշանները: Նրանք ձգտում են հասնել ավետյաց երկիր և դրանով իսկ թույլտվություն են ստանում շարունակելու իրենց Էվոլյուցիան:

Ոչ թե ահաբեկում եմ, այլ խրատում: Քանզի հենց հիմա է, որ հասել է ձեզնից նրանց հետ անկեղծ գրույց վարելու ժամանակը, ովքեր ունակ են լսելու և պատրաստ են գործնական քայլեր անելու ֆիզիկական ոլորտում: Ես չեմ ստիպում, որ անհապաղ թողնեք ամեն ինչ և անհապաղ սուրաք դեպի հեռավոր վայրեր: Ո՛չ, ձեր մղման վեկտորը մշտապես դեպի իրեն կձգի աստվածային հնարավորություններ: Դուք անպայման մի օր բարեփոխման անհաղթահարելի ցանկություն կզգաք և ձեր կյանքը կփոխեք աստվածային Էվոլյուցիայի ընթացքին համապատասխան: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ վերաիմաստավորեք ձեր կյանքը և կյանքի նկատմամբ ձեր վերաբերմունքը:

Էվոլյուցիոն ուղուց դուրս մնալու պատճառը կենտրոնացվածությունն է սեփական անձի վրա, ավելորդ եսակենտրոնությունն ու եսասիրությունը: Ուստի մոտակա ժամանակներում դուք պետք է զարգացնեք ձեր ներսում ինքնագոհաբերման ունակություն, մերձավորներին կարեկցելու և օգնելու կարողություն: Այնժամ, երբ դուք ունակ եք գործելու արարքներ, որոնք մարդկության մեծամասնության աչքին անմիտ են թվում, բայց անշահախնդիր են և լի Եղբայրության նկատմամբ նվիրվածությամբ, ամուր կանգնած եք Ուղու վրա, և մենք պինդ բռնում ենք ձեր ձեռքը: Բավական է, որ մի փոքր անշահախնդրություն, նպատակամղվածություն և նվիրվածություն ցուցաբերեք, և այդ հատկանիշները դեպի ձեզ կքաշեն այն աստվածային հնարավորությունները, որոնք ժամանակակից սողոմներից ու գոմորներից ձեզ կհանեն դեպի Լույսի ու Յնծության ուղին:

Մտորեք, թե որքան կշահեք, եթե ընթանաք մեր մատնանշած Ուղով, և թե որքան քիչ բան պետք է գոհաբերեք դրա համար՝ ընդամենը ձեր եսակենտրոնությունն ու անձամբ ձեզ համար ինչ-որ բան ձեռք բերելու ցանկությունը:

Ձեր գիտակցության մակարդակն անհրաժեշտ է վեր հանել մինչև այն ցուցանիշը, երբ կհասկանաք, որ մերձավորի համար ինչ-որ բան անելով՝ դուք փաստորեն ձեր մասին եք հոգում. կա՛մ մարում եք ձեր կարմայական պարտքերը, կա՛մ ստեղծում եք այնպիսի բարի կարմա, որը մի ակնթարթում ձեզ թույլ կտա դուրս պրծնել վտանգավոր իրադրությունից, հենց որ կանչ հղեք:

Մենք այն հույսով ենք խրատներ տալիս, որ ձեզնից շատերն ունակ են ընկալելու մեր խոսքերը, և ոչ միայն ընկալելու, այլ նաև գործելու՝ ըստ մեր կողմից տրված Ուսմունքի:

Հատկապես կարևոր է տեսական գիտելիքների ամրապնդումը գործնական հողի վրա: Այն դեպքում, երբ Օրենքը գիտեք, բայց այն չեք կիրառում ձեր կյանքում, ձեր կարման ոչ թե նվազում է, այլ բազմապատկվում: Ձեր կարման բազմակի աճում է, քանի որ կա կարմայի այնպիսի տեսակ, ինչպիսին չգործելու կարման է*։ Դուք ստացել եք այս Ուսմունքը, ուրեմն ունակ եք այն ընկալելու և գործելու դրան համապատասխան: Եթե ստացված Ուսմունքին համապատասխան չեք գործում, ապա դրանով իսկ շեղվում եք Ուղուց. շեղվում եք նույնիսկ այնժամ, երբ ոչինչ չեք անում: Իսկ մեղքն այն երկդիմի աշխարհինն է, որն ինքներդ եք ստեղծել այն էներգիաներով, որոնք կամեցել եք վատնել ոչ թե աստվածային կերպերի դրսևորման, այլ անձամբ ձեզ համար ինչ-որ բան ստանալու նպատակով:

Հասել է ձեր աշխարհը վերափոխելու ժամանակը: Եվ առաջին բանը, որ պետք է անեք, ձեր կյանքում մեր տված Ուսմունքին համապատասխան գործել սկսելն է:

Ես այսօր շատ խիստ և անզիջում եղա: Քանզի ժամանակը փոխվել է, և այլևս սպասելու հնարավորություն չկա:

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը

*«Ուսմունք չգործելու կարմայի մասին» - Վեհապետ Կուրծիումի, 2005թ.

Սպիտամա Չրադաշտ
23 հունիսի, 2007 թ.

Ուսմունք Խաչելությամբ Ձեռնադրում անցնելու մասին

ԵՍ ԵՄ Չրադաշտը՝ կրկին ձեզ այցի եկածը...

ԵՍ ԵՄ եկել այս օրով և երջանիկ եմ, որ այս հնարավորությունը, դեսպանորդի միջոցով ձեզ հետ շփվելու աստվածային հնարավորությունը, շարունակություն ստացավ: Դուք, ամենայն հավանականությամբ, տեղյակ չեք, որ որպեսզի մեր աշխատանքը շարունակվի, ֆիզիկական ոլորտի կողմից պետք է հավաստվի հետագա աշխատանքին պատրաստ լինելու հանգամանքը: Նման հավաստում մի կողմից իրականացրեց Ռուսաստանի ժողովուրդը, այն երկրի ժողովուրդը, որն ապաստան է տվել մեր դեսպանորդին: Եվ այդ թեստը՝ այդ փորձությունը, ժողովուրդը հաղթահարեց: Մենք չենք կարող ասել, թե ամեն ինչ հարթ ընթացավ, բայց տեսնում ենք, որ Ռուսաստանի շատ բնակիչների սրտերում մեր Ուսմունքը դրական արձագանք գտավ: Շատ սրտեր հրավառվեցին, և այդ հույսը մեզ՝ Համբարձյալ Դասերիս, տեսանելի եղավ: Քանզի Բոցը՝ ձեր սրտերի հրեղենությունը, երևում է մեր մակարդակից: Մենք տեսնում ենք յուրաքանչյուր մարդու սրտի ամեն մի բոցը, որտեղ էլ նա գտնվելիս լինի: Եվ այդ Բոցից, այդ Բոցերից ելնելով՝ մենք դատում ենք պատրաստվածության մասին և որոշում կայացնում հետագա աշխատանքը շարունակելու մասին:

Մյուս կողմից՝ մեր դեսպանորդը միաժամանակ շատ ծանր փորձություն անցավ, որը մենք Խաչելություն ենք անվանում: Այդ փորձությունն անցնում է յուրաքանչյուր ոք, ով հասնում է գիտակցության որոշակի մակարդակի: Այն Ուղու բնականոն մասն է: Ես մտադիր եմ կանգ առնել դրա վրա և մի փոքր պատմել ձեզ դրա մասին, քանզի ձեզնից յուրաքանչյուրը, եթե ոչ այս կյանքում, ապա հետագա որևէ կյանքի ընթացքում ստիպված կլինի անցնելու նմանատիպ թեստ:

Ուղու օրինաչափ հատվածն է դա՝ կապված այն բանի հետ, որ ամեն ոք, հասնելով այդ հատվածին, ստիպված է լինում դեմ առ դեմ դուրս գալու այնպիսի փորձությունների ու թեստերի, ինչպիսիք հաղթահարեց Հիսուս՝ կրելով իր խաչը դեպի Գողգոթա և դրանից հետո անցնելով իր Խաչելությունը: Այդ փորձության մասին եմ ուզում ձեզ պատմել: Ամեն անգամ, երբ դուք մոտենում եք ձեր Ուղու այդ կետին, դեմ առ դեմ բախվում եք նման փորձության: Դուք ստիպված եք լինում առաջ ընթանալ այնպիսի պայմաններում, երբ ձեզ որևէ մեկն օգնություն չի ցուցաբերում: Չանգվածային գիտակցությանը ենթակա մարդիկ պարզապես ունակ չեն լինում հասկանալու, թե ինչ է տեղի ունենում:

Իսկ տեղի է ունենում հետևյալը. Խաչելության Ձեռնադրմանը հասած մարդու թրթիռներն այնքան են բարձրանում, որ մեզ հակադրվող ուժերը սկսում են օգտվել բոլոր նրանցից, ովքեր շրջապատում են փորձությունն անցնողին: Նման իրավիճակում այնպիսի տպավորություն կարող է ստեղծվել, թե ողջ աշխարհը գազազել է կամ խելակորույս եղել: Իհարկե, Հիսուսի օրոք այդ փորձությունը տեղի ունեցավ ֆիզիկական ոլորտում: Բոլոր չարչարանքները, զրպարտանքներն ու դժվարություններն արտահայտվեցին ֆիզիկական ոլորտում: Այժմ՝ ձեր լուսավորյալ դարում, բոլոր փորձությունները տեղափոխվել են հոգեբանական ոլորտ: Իհարկե, մարդիկ իրենց գործն անում են, ինչը հանգեցնում է փորձության ենթարկվողի վիճակի ծանրացմանը, սակայն հիմնական թեստը հանձնվում է նուրբ ոլորտում: Ստեղծվում է իրական Խաչելության տպավորություն՝ մատերիական խաչին գամվածություն:

Ձեզ համար դժվար է դա պատկերացնել, այնուհանդերձ ասեմ, որ այդ թեստն ամենադժվարինն է: Ձեզ թուլանալու հնարավորություն չեն տալիս ոչ մի բույս, ոչ մի օր, ոչ մի գիշեր: Ձեզ վրա են թափվում ֆիզիկական, մտավոր և աստեղային ոլորտների բոլոր երևակայելի և աներևակայելի իրավիճակները:

Դուք մշտապես գտնվում եք այն ուժերի ճնշման տակ, որոնք պատրանքն են պաշտպանում: Իսկ այն ուժերը, որոնք ձեզ նախկինում օժանդակում էին, հայտնվում են մեկուսացված վիճակում: Մենք հնարավորություն չենք ունենում ո՛չ օգնելու, ո՛չ լվանալու այն վերքերը, որոնք հասցվում են նուրբ ոլորտում, ո՛չ էլ որևէ կերպ պաշտպանելու փորձության ենթարկվողին: Նրա բոլոր մարմինները վերքեր են ստանում, և դրանցից դուրս է հորդում արյուն, Լույս և Աստծո էներգիա,

որը դեպի իրեն է քաշում աստեղային ոլորտի այլազան էակների. վերջիններս վրա են տալիս, որպեսզի բզկտելով ստանան Լույսի իրենց հասանելիք բաժինը:

Նույն կերպ են վարվում և մարդիկ: Նրանք մոտենում և Լույս են կլանում, որն անվերահսկելիորեն դուրս է հորդում վիրավոր աուրայից: Եվ միայն եզակիներն են ունակ լինում գիտակցելու, թե ինչ է տեղի ունենում: Մնացյալի արտաքին գիտակցությունը հասու չի լինում կատարվածի իմաստին:

Եթե փորձության ենթարկվողը չի դիմանում այդ թեստին, պայքարի մեջ է մտնում, վիատվում և զրկվում է Միրուց ու Հավատից, ապա համարվում է, որ նա չի անցել իր Խաչելության Ձեռնադրումը:

Հիշե՛ք Հիսուսին և նրա խոսքերը. « Տե՛ր, ների՛ր սրանց, քանզի չգիտեն, թե ինչ են անում»: Ծշմարիտ է ասված, քանի որ մարդիկ իրենց արտաքին գիտակցությամբ հասու չեն լինում տեղի ունեցողի իմաստին: Եվ նրանցից ամեն մեկն իր բաժին դերն է խաղում. մեկը հայհոյանք է տեղում, մեկը գամերն է զարկում փորձության ենթարկվողի ձեռքերին ու ոտքերին, մեկը մատնությունն է իրականացնում, մի ուրիշն էլ օգնում է խաչը տանել:

Վիթխարի ներկայացում է խաղացվում մատերիական ոլորտում: Իսկ Համբարձյալ Դասերն իրավունք չեն ունենում միջամտելու: Փորձության ենթարկվողը դեմ առ դեմ է մնում արտաքին աշխարհի հանգամանքների առջև և միայնակ՝ ինքն իր Բարձրագույն մասի հետ: Եվ հնար չունի ուժերը վերականգնելու, հնար չունի բալասան ստանալու Վերին աշխարհից: Թեստի ամենավատթար պահին կորսվում է կապը նաև իր Բարձրագույն մասի հետ: Եվ դա նմանվում է Ոգու ահավոր խավար գիշերի:

Ահավոր փորձություն է... Սակայն դա Ուղու անխուսափելի մասն է, քանզի առանց Էգոյի վերջին ծվեններից ազատվելու, առանց ֆիզիկական աշխարհի կապանքներին վերջնականապես հրաժեշտ տալու՝ Ուղով հետագա առաջընթացը հնարավոր չէ:

Երկրի վրա միայն եզակիներն են պատրաստ այդ փորձությանը և կարողանում են անցնել այն: Նրանց թվին է պատկանում նաև մեր դեսպանորդը:

Բայց այս ամենը ես պատմում եմ ոչ այն բանի համար, որ հագուրդ տաք դատարկաբանություններին ու խելքին զոռ տալուն: Պատմում եմ միայն այն բանի համար, որ դուք նույնպես պատրաստ լինեք մատերիայում ձեր խաչելությանը և բոլոր կապանքներից վերջնականապես ազատվելուն:

Մենք ձեզ չենք ահաբեկում փորձությունների խստությամբ: Մենք միայն նախազգուշացնում ենք, որ դա Ուղու օրինաչափ հատվածն է: Եվ ձեզնից ամեն ոք, ով ընթանում է Համբարձյալ Վեհապետների մատնանշած Ուղով, վաղ թե ուշ մատերիայում կանցնի իր Խաչելությունը, այնուհետև վեր կելնի դեպի Ոգու Գագաթը:

Նախքան Աստված ձեզ պատասխանատու գործ կվստահի, Նա պետք է վստահ լինի, որ դուք պատրաստ եք այդ աշխատանքին, և որ ֆիզիկական աշխարհի ոչ մի կառչածող չի կաշկանդի ձեզ, երբ կատարելիս կլինեք Աստծո գործը:

Հիմա դեռևս մի՛ փորձարկեք ձեզ վրա այդ թեստը: Հիշե՛ք, թե ինչ ասացի. երկրագնդի վրա ներկայումս միայն եզակիներն են պատրաստ, որ անցնեն այդ թեստը: Մնացյալի համար փորձությունները կապված են սեփական կարմայի վերադարձի հետ: Այնինչ Խաչելության թեստը կապված է համամոլորակային կարման կրելու հետ. որպեսզի ձեզ վստահեն այդ խաչը կրելը, դուք դեռևս շահտ պետք է աշխատեք ինքներդ ձեզ և ձեր թերությունների վրա, ձեր կապվածությունների ու սովորությունների վրա:

Մարդկանց բնորոշ է հոգևոր Ուղու իրենց նվաճումները գերազնահատելը: Սակայն, հենց որ հնարավորություն է ընձեռվում, դուք անմիջապես մոռանում եք մեր ուղերձների և ձեր կեղծ նվաճումների մասին, ապա առույգ ու կայտառ նետվում եք պատրանքի ջրերի ու զանգվածային գիտակցության թավուտների գիրկը:

Ուստի նախքան Քրիստոսի զգեստը ձեզ վրա փորձելը անկեղծ եղեք ինքներդ ձեզ հետ և ուշադիր վերլուծե՛ք ձեր կենսակերպը, կապվածություններն ու սովորությունները: Չեմ ասում, թե միանգամից ազատվեք ձեր թերություններից ու սովորություններից: Երևի թե դժվար կարողանաք: Սակայն ճիշտ ուղղություն ընտրելուն և կյանքում դրան հավատարիմ մնալուն ի վիճակի են մեր ուղերձները կարդացողներից շատ-շատերը:

Ուզում եմ ձեզ հիշեցնել, որ մեր ուղերձները պատրանքի ջրերից դուրս գալու փրկարար ճոպան են ձեզ համար: Ընդունե՛ք Երկնային այդ շնորհը ողջ այն գուրգուրանքով ու սրտի թրթռոքով, որ ունեք ձեր ներսում:

Իսկ հիմա ես հրաժեշտ եմ տալիս ձեզ: Ես ուրախ եղա մեր Ուսմունքի ևս մի ծածուկ մասը՝ Խաչելության Ուսմունքը, ձեզ հասցնելուս համար:

Վեհապետ Սերապիս Բեյ
24 հունիսի, 2007 թ.

Պատեհ ու տեղին խրատներ

ԵՄ ԵՄ Սերապիս Բեյը՝ կրկին ձեզ այցի եկածը:

Ես այսօր եկել եմ, որպեսզի տամ հերթական ուղերձը, որն աշխարհի չափ հին Ուսմունք է պարունակում իր մեջ:

Մենք ստեպ-ստեպ գալիս ենք ոչ այն բանի համար, որ նոր ճշմարտություն բացահայտենք ձեզ համար, այլ որ հիշեցնենք այն Հինավուրց Ճշմարտությունը, որը ձեզ վաղուց հայտնի էր, բայց մոռացել էք, քանի որ չափազանց շատ եք խորասուզվել նյութականի մեջ: Եվ ահա հասել է ժամանակը, որպեսզի հիշեք ձեր Սկզբնաղբյուրի մասին և վերադառնաք այնտեղ: Մենք ուրախ ենք, որ, անկախ ձեզ շեղող նյութական շատ գործոններից, այնուհանդերձ բավարար քանակի անձինք հետաքրքրություն են ցուցաբերում մեր Ուսմունքի նկատմամբ: Կան նաև ձեր կողմից նորառն համարվող շատ ուսմունքներ, որոնք շատ նյութեր են հրամցնում ձեր դիտարկմանը և ուսումնասիրմանը: Սակայն եթե անկողմնակալ կերպով քննարկեք մեր մատուցած Ճշմարտությունն ու այն համեմատեք հոգևոր շուկայում առատորեն ձեզ հրամցվող ուսմունքների հետ, ապա կհասկանաք մի կարևոր բան. մեր մատուցածը հենց այն Ճշմարտությունն է, որը մշտապես եղել է ձերը: Դա այն Ճշմարտությունն է, որ ուսումնասիրել էք հինավուրց Լեմուրիայում և Ատլանտիդայում, բոլոր ժամանակներում Երկրի վրա գոյություն ունեցած Գաղտնի Ծեսերի Դպրոցներում:

Ձեզ մատուցվող այս Ուսմունքում չկա ուրիշ նոր բան բացի հետևյալից. այս Ուսմունքը կոչված է ետ բերելու ձեզ դեպի բարձրագույն իրականություն: Ծնորհիվ այս Ուսմունքի՝ դուք պետք է սկսեք վերընթաց բոլորաշրջան, վերընթաց նոր գալար, որը ձեզ վեր կհանի նյութականից և թույլ կտա վերադառնալու այն աշխարհը, որտեղից դուրս գալով՝ սուզվել եք նյութականի մեջ: Դուք պետք է հիշեք ձեր Սկզբնաղբյուրի և ձեր առաքելության մասին: Պետք է հասկանաք այն պարզ ճշմարտությունը, որ ձեր աշխարհում ոչինչ չի կարող կյանքի իմաստ ծառայել: Քանզի ձեր աշխարհը ժամանակավոր բնույթ է կրում. այն արարված է մի ժամանակահատվածի համար, որի ընթացքում դուք պետք է դաս առնեք և առնականանաք:

Եվ ահա առնականացման համար հատկացված ձեր ժամանակն արդեն մոտենում է իր ավարտին: Ծա՛տ ափսոս, որ չափազանց շատ հոգիներ դեռևս գտնվում են խոր քնի մեջ և չեն ուզում արթնանալ՝ անկախ մեր ձեռնարկած բոլոր փորձերից: Մենք զարկում ենք Ազատության զանգը, մենք կանչում ենք ձեզ դեպի Ազատություն, դեպի մատերիայի կապանքներից ազատագրում:

Մենք մեր պարտքն ենք համարում ձեզ տեղեկացնել, որ քնած մնալու ժամանակը մոտեցել է իր ավարտին: Ձեզնից շատերը կոպտորեն կարթնացվեն, քանի որ այլևս հնարավոր չէ սպասել: Դուք ուշք չեք դարձնում մեր իրազեկումներին, շարունակում եք դեգերել պատրանքի մեջ՝ ուշադրություն չդարձնելով մեր կանչին:

Երկինքը ձեզ է կանչում: Մենք զգում ենք ձեր օգնության կարիքը: Եվ ձեզնից նրանք, ովքեր պատրաստ են ընկալելու մեր Ուսմունքը, ովքեր ոչ միայն կարդում են մեր ուղերձները, այլ նաև պատրաստ են իրապես ինչ-որ բան անել Եղբայրության համար, պետք է արձագանքեն մեր կոչին առաջին հերթին: Մենք ձեզ ոչ միայն աղոթքի ենք կոչում, այլ նաև որ պատրաստ լինեք գործնական քայլեր անելու ֆիզիկական ոլորտում: Ասվածից չի հետևում, որ պետք է ամեն ինչ թողնեք և սլանաք այնտեղ, ուր մենք մատնացույց կանենք: Առաջին հերթին դուք պետք է աստվածային գիտակցություն և աստվածային կերպեր ներմուծեք երկրագնդի հենց այն վայրում, որտեղ ապրում եք՝ ձեր ընտանիքում, ձեր աշխատավայրում: Դուք և միայն դուք եք ունակ նոր գիտակցություն ներմուծելու ձեր աշխարհ: Եվ ես կանխագուշակեմ, որ ձեզ համար հեշտ չի լինի դա անելը: Ձեզնից սիրանք կպահանջվի. շա՛տ սիրանքներ պետք է գործեք, քանզի ձեր շրջապատի ամեն ինչը կընդդիմանա ձեզ: Ձեր առջև կհառնեն մի դժվարությունը մյուսի հետևից, մի արգելապատնեշը մյուսի հետևից: Ձեզ շրջապատող աշխարհում շատ դժվար է գործելը, շատ դժվար է նոր գիտակցություն և մտածողություն ներմուծելը:

Ամեն ինչը պետք է փոխվի: Եվ պետք է փոխվի՝ ըստ աստվածային կերպերի, այն Օրենքին համապատասխան, որն ավետվել է մարգարեների կողմից և իր արտահայտությունը գտել անցյալի սրբազան շատ գրվածքներում:

Հիմա այն ժամանակն է եկել, երբ աստվածային կերպերն ու Աստծո Օրենքը պետք է իջեցվեն ֆիզիկական ոլորտ: Մի՛ կարծեք, թե դա հեշտ կլինի: Մի՛ կարծեք, թե ձեր շրջապատում գրկաբաց կրնդունեն նորը: Ո՛չ, ճիշտ ուղղությամբ ամեն մի քայլը հարկ կլինի կատարել անասելի դժվարությամբ: Եվ կասկածներ կծնվեն ձեր ընտրած Ուղու ճշմարտացիության վերաբերյալ: Ձեր ականջին կփսփսան կամ ուղղակի կասեն, թե չի կարող Աստծո գործն այդքան դժվարություններ ծնել և այդպիսի դիմադրության հանդիպել: Սակայն կուզենայի ձեզ հիշեցնել, որ ձեր աշխարհն այնքան է հեռացել աստվածային կերպերից, որ դրանց վերադառնալը շատերը կրնկալեն որպես հիմքերի խարխուլում: Եվ իրոք, բազում հազարամյակների ընթացքում մարդկությունն այնքան է առաջ տարել այն, ինչ Աստծուց չէ ու ենթակա է ավերման, որ այդ հնին հրաժեշտ տալուն արդեն շատերը կընդդիմանան:

Հիշեք, թե ինչպիսի՜ դժվարությամբ եք ինքներդ ձեզ ստիպում, որ ինչ որ բան փոխեք ձեր կյանքում, թեկուզ հրաժարվեք ընդամենը մի վատ սովորությունից: Իսկ հիմա պատկերացրեք, որ սեղմ ժամկետներում պետք է փոխվի միլիոնավոր մարդկանց կյանքի դրվածքը: Ի՞նչ եք կարծում, անպատրաստ անհատներն ինչպե՞ս կընդունեն ձեր ներմուծած նոր վարվելակերպերը: Իհարկե, ամեն մի քայլը կանեք մեծագույն դժվարությամբ: Եվ ճիշտ ուղղությամբ կատարված ձեր ամեն մի քայլն օրինաչափորեն դիմադրության կհանդիպի այն անձանց կողմից, ովքեր կառչած են մնում իրենց հին կենսակերպին ու Աստծո Օրենքի իրենց ընկալմանը:

Մարդկության քաղաքակրթության գոյության բազում հազարամյակների ընթացքում մարդիկ կարողացել է աղավաղումներ մտցնել կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրոնի ոլորտում: Ուստի և կրոնական շատ դոգմաներ ու կանոններ մարդկանց կստիպեն կառչած մնալ կրոնական աշխարհընկալման արդեն հաստատված համակարգին:

Ուստի մի՛ ակնկալեք, թե ձեզ համար հեշտ կլինի: Պետք է գիտակցեք այն աշխատանքի ողջ վեհությունը, որը ձեզ կվիճակվի կատարել: Պետք է համառորեն ամեն ինչում ներդնեք աստվածային կերպեր՝ բարոյականության մեջ, կրթության ասպարեզում, կրոնում, առողջապահության բնագավառում: Մարդկային գործունեության բոլոր բնագավառներում փոփոխություններ են անհրաժեշտ: Դա գիտակցության հեղափոխություն կլինի:

Ուստի այն մարդիկ, ովքեր պատրաստ չեն փոփոխությունների, կդիմադրեն և կառչած կմնան իրենց կենսակերպին, Աստծո իրենց ընկալմանը:

Ձեզ վիճակված է, առանց պայքարի մեջ խրվելու, հատատել աստվածային վարվելակերպեր: Ձեզ վիճակված է հատատել Աստծո Օրենքը: Եվ այդ Օրենքը դուք պետք է ցուցադրեք ձեր կյանքով: Անցյալում շատերն այնքան կոպտորեն են պնդել նոր կերպերի, նոր կենսաձևերի վրա, որ դրանով իսկ շեղվել են անհանդուրժողականության և կրոնական ծայրահեղականության կողմը: Նախագգուշացնում եմ, որ դուք պետք է ավելի շուտ զոհաբերեք ձեր կյանքը, քան թույլ տաք անհանդուրժողականության ու մոլեռանդության դրսևորում:

Ձեզնից պահանջվում է կրկնել Զրիստոսի այն սխրանքը, որ նա գերադասեց խաչվել, քան թե զենքը ձեռքն առած՝ պաշտպանել Օրենքը:

Ձեզնից ամեն ոք պետք է պատրաստ լինի զոհվելու, բայց չխախտելու Աստծո որևէ Պատվիրան, որը գրի է առել Մովսեսը սալիկների վրա: Եվ հիմա այն ժամանակն է, երբ միայն այդ տասը պատվիրանները չեն, որ պետք է պահվեն: Դուք պետք է պահեք հիմնական պատվիրանը՝ մարմինը զոհել, բայց Ոգում պահել այն սկզբունքները, որոնք մենք ուսուցանում ենք:

Պատրաստ եղեք հրաժեշտ տալու մարմնին, բայց պահպանելու հոգին:

Բոլորը չեն մեռնի, բայց ամեն ինչ կփոխվի:*

Ես ուրախ եմ, որ ձեզ օգնություն հասցրի՝ տալով իմ պատեհ ու տեղին խրատները:

ԵՍ ԵՄ Սերասյիսը

**Գաղտնիք եմ հայտնում ձեզ, բոլորը չեն մեռնի, բայց ամեն ինչ կփոխվի... (1 Կորնթացիներին 15:51)*

Մայր Մարիամ
25 հունիսի 2007 թ.

Ռուսաստանի հոգևոր առաքելության մասին

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ այս օրով ձեզ այցի եկածը: Այնքան ուրախ եմ, որ ձեզ հետ հաղորդակցվելու աստվածային հնարավորությունը շարունակություն ունեցավ, այնքան ուրախ եմ, որ կրկին կարող եմ գալ ձեզ հետ զրուցելու...

Այն, եթե իմանայիք, թե որքան շատ բան կուզենայի ձեզ ասել... Եթե չեք առարկում, ապա կսկսենք ամենագլխավորից: Խոսենք Աստծո այն նոր ողորմածության մասին, որն ընձեռվել է բառացիորեն այս օրերին ընթացող Կարմայական Վարչության նիստի ժամանակ:

Ես շտապում եմ ձեզ հասցնել ուրախալի լուրը... Ձեզ հայտնի է, որ ես Ռուսաստանի խնամակալուհին եմ, և գիտեք նաև, որ այդ երկրի ժողովուրդը հնուց ի վեր իր աղոթքներով ինձ է հառել իր ուշադրությունը: Ես օգնում եմ ապաքինման գործում, իմ սրբապատկերներն օժտված են հրաշագործ ազդեցությամբ. նրանք պաշտպանում ու ամրոքում են պաշտպանության և օգնության կարիք ունեցողներին:

Ես ապահովում եմ իմ ներկայությունն իմ պատկերն ունեցող շատ սրբապատկերների վրա, ուստի իմ դեմքի արտահայտությունից, իմ աչքերից դուք կարող եք ստանալ ձեզ հուզող հարցերի պատասխանները: Ես ձեզ հետ հաղորդակցության եմ ձգտում և ուժերիս ներածին չափ օգնում եմ ձեզ, ո՛վ, իմ սիրելի զավակներ:

Ես հենց նոր եմ վերադարձել Կարմայական Վարչության նիստից: Եվ այն ուրախալի լուրը, որ ուզում եմ ձեզ հայտնել, վերաբերում է իմ սիրելի Ռուսաստանին: Ձեզ հայտնի է, որ այդ երկրի համար մեծ առաքելություն է նախապատրաստված՝ ժողովուրդներին իր հետևից տանել հոգևոր Ուղով: Եվ ահա վերջապես ճանապարհը բաց է, և Ռուսաստանը հայտնվել է իր ուղու այն հատվածին, որտեղից կարող է սկսել իր առաքելությունը:

Ձեզ հայտնի է, որ անցյալի շատ մարգարեներ են մատնանշել այդ երկրի մեծ դերն ու առաքելությունը: Սակայն գործնականում ամեն ինչ դասավորվեց լրիվ հակառակ կերպով, և Ռուսաստանի այն կերպարը, որը վերջին տասնամյակներում հաստատվել է արևմուտքում, այնքան էլ հրապուրիչ չէ:

Մենք ուշադրությամբ հետևում էինք այն անհատականությունների զարգացմանը, որոնց ճակատագրերը կապված են Ռուսաստանի հետ, և որոնք շատ հարյուրամյակների ընթացքում մարմնավորվել են այդ երկրում: Եվ, գիտե՞ք ինչ, մենք այն եզրակացությանն ենք հանգել, որ իր լավագույն ներկայացուցիչների շնորհիվ Ռուսաստանն իրավունք է վաստակել կանգնելու աշխարհի հոգևոր առաջատարի Ուղու վրա: Ես խնդրում եմ, որ չշփոթեք այդ դերն ու առաքելությունն այն դերի հետ, որը ոչ վաղ անցյալում ամբողջ աշխարհը վերագրում էր Ռուսաստանին՝ այսպես կոչված, Խորհրդային Միությունը նկատի ունենալով:

Ներկա դերն ինչ-որ բանով հակադիր է վերցրած նախորդ առաքելությանը: Եվ այդ տարբերությունը կապված է այն բանի հետ, որ Ռուսաստանը կոչված է հասնելու հոգևոր բարձր աստիճանի: Հատկապես հենց հիմա՝ թվացյալ անհոգևորության վիճակում, դրվում են ապագա հոգևոր երկրի հիմքերը: Հատկապես հենց հիմա է, որ Ռուսաստանի ժողովուրդը՝ հոգնած լինելով անելանելիության և անհավատության վիճակից, պատրաստ է մղվելու դեպի Աստծո բարեշնորհության Աղբյուրը և ծնկաչոք իր սրտում արտաբերելու. *«Տե՛ր, ների՛ր ինձ, Երկնավոր Հայր, ների՛ր մեզ: Չգիտեինք, թե ինչ ենք անում: Մեր հույսը դրել էինք մկանի ուժի վրա, և մեր անգիտության երեսից շատ դժբախտություններ բերեցինք մեր գլխին: Խնդրում ենք, Տե՛ր, ընդունի՛ր մեր աղոթքը: Ների՛ր մեզ, Տե՛ր, մեր գործած այն չարիքների ու դժբախտությունների համար, որոնք պատճառել ենք աշխարհին: Տե՛ր, եթե դա է Բո Կամքը, արի՛ մեր երկիրը, ուշքի՛ բեր մեզ և օգնի՛ր, որ ընթանանք Բո Ուղով»:*

Եվ հատկապես այն բանից հետո, երբ Ռուսաստանի ժողովուրդը՝ հանձինս իր լավագույն ուսուրերի ու դուստրերի, ունակ կդառնա սրտագին ապաշավանքի, այդ երկրի համար կբացվի չտեսնված աստվածային հնարավորություն:

Դուք շատ շուտով ականատեսը կդառնաք Ռուսաստանի ոգեղենության վիթխարի պոթելմանը: Եվ ձեզ համար որևէ նշանակություն չի ունենա, թե ո՛ր տաճարը գնաք և այնտեղ ծնկի իջնեք: Քանզի ձեր գիտակցությամբ կբարձրանաք այն աստվածային զագաթը, որտեղից այլևս հակասություններ չեն երևում տարբեր դավանանքների ու կրոնների միջև: Ձեր սրտերը կլցվեն Տիրոջ այնպիսի բարեշնորհությամբ, որ կդադարեք բացասաբար վերաբերվել ձեր այն մերձավորների նկատմամբ, որոնք արտաքնապես նման չեն ձեզ: Անհրաժեշտ է միաբանվել սրտերի միասնական պոթելմամբ: Անհրաժեշտ է միաբանավել ազգի հոգևոր միասնության լոգունգով: Միայն ապաշավանքից հետո է հնարավոր հոգևոր միասնությունը, և միայն հոգևոր միասնության հասնելուց հետո Ռուսաստանը կկարողանա ֆիզիկական ոլորտ իջեցնել մարդկության լավագույն ներկայացուցիչների հոգևոր արարումների այն նմուշները, որոնք արդեն պատրաստ են նուրբ ոլորտում և պետք է իջանեն:

Պետք է ձեզ ասեմ, որ Ռուսաստանի ապագան կապված է ոչ թե առանձին մի հավատի կառչած մնալու հետ, այլ այն հանդուրժողականության հետ, որը պետք է ցուցաբերվի Աստծո ամեն մի ճշմարիտ երկրպագության նկատմամբ: Ես նկատի չունեմ անհանդուրժողականության այն դրսևորումները, որոնք եղել են անցյալում: Ես խոսում եմ գիտակցության որակապես նոր

մակարդակի մասին, որն, իր մեջ ներառելով Աստվածայնություն, կհարթի այն հակասությունները, որոնք չարամիտ մարդկային խելքը դիտմամբ սրել է վերջին հազարամյակների ընթացքում:

Ես այս օրով եկել եմ, որ ձեր գիտակցության մեջ ամրագրեմ Ռուսաստանի առաքելության անհրաժեշտության գիտակցումը: Ես եկել եմ ոչ այն բանի համար, որ դրանով հպարտանաք, այլ որպեսզի ոգեշնչվեք և ելնեք զարգացման նոր գալարի վրա:

Գիշերը, խավարամած գիշերը վերջացավ Ռուսաստանի համար: Ելե՛ք լուսաբացին և նայեք, թե ինչպես է ծագում արևը: Ահա ճիշտ այդպես էլ աստվածային գիտակցության Արևն է սկսում ծագել Ռուսաստանի մարդկանց մեջ:

Դադարե՛ք նայել Արևմուտքին: Դադարե՛ք ընդօրինակել այն նմուշները, որոնք ոչ միայն օգտակար չեն, այլև վնասակար են: Ձեր առաքելությունը նոր նմուշներ չի հայտ բերել: Ծատ շուտով երկրագնդի ժողովուրդները կսկսեն զարմանքով ուշք դարձնել այն փոփոխություններին, որոնք տեղի են ունենում Ռուսաստանում: Դրանք երկրում սկիզբ կառնեն ոչ իշխանությունից, ոչ էլ քաղաքագետներից ու տնտեսագետներից: Այդ երկրի փոփոխությունները կծագեն մարդկանց սրտերից, և դրանք հնարավոր չի լինի չնկատել:

Ամեն անգամ, երբ կնայեք նոր մարմին առնող մանկանց աչքերին, ջանացեք հասկանալ այն ուղերձը, որ կրում են այդ աչքերը:

Ձեր պարտականությունների մեջ է մտնում նոր սերնդին օգնելը, որպեսզի ոչ միայն նրան ապահովեք նյութական ոլորտի համար անհրաժեշտ ամեն ինչով, ձեր խնդիրը նաև այն է, որ նոր մարմին առնողին օգնեք, որ նա կատարի իր աստվածային առաքելությունը:

Հատկապես հիմա են սկսել մարմնավորվել այն անհատները, որոնք Ռուսաստանը կդարձնեն աշխարհի հոգևոր մայրաքաղաքը: Ձեռքից բաց մի՛ թողեք համաշխարհային սպասավորության ձեր հնարավորությունը: Օգնություն՝ ցուցաբերեք Երկրի զավակներին՝ նոր ռասայի ներկայացուցիչներին:

Այժմ ես պատրաստ եմ սկսելու իմ Օրհնանքը: Այս օրով ես եկել եմ, որ իմ սրտի մի մասնիկը, երկնային իմ շնորհը տամ նրանց, ովքեր կարդում են իմ ուղերձը: Եկել եմ, որ ձեզ փոխանցեմ իմ Սիրո, Հավատի և Հույսի ողջ ներուժը:

Մոսկ մի բան եմ խնդրում ձեզնից. օրվա ընթացիկ գործերի քողի տակ մի՛ մոռացեք ձեր աստվածային ծագումն ու ձեր աստվածային առաքելությունը:

Ես ձեզ սիրում եմ ամբողջ սրտով և պատրաստ եմ առաջին իսկ կանչով օգնություն ցուցաբերելու դրա կարիքն ունեցողներին:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը. այս օրով եղա ձեզ հետ

Վեհապետ Կուրթումի
26 հունիսի, 2007 թ.

Խրատներ ամեն օրվա համար

ԵՍ ԵՄ Կուրթումին՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Այսօրվա իմ այցի նպատակն այն է, որ ձեզ որոշակի ընթրնում և պատկերացում տամ Եղբայրության՝ ընթացիկ ժամանակին վերաբերող հետագա պլանների մասին:

Մենք կրկին ու կրկին գալիս և բացատրություններ ենք տալիս, պատկերացում ենք տալիս շատ բաների մասին, որոնցից դուք արդեն տեղյակ եք, սակայն այն եզրաշերտերը, որոնք բացվում են ձեր առջև, ձեզ կհիացնեն հին, բարի գիտելիքի թանկարժեք քարերի իրենց նոր փայլով:

Մենք գալիս ենք, և դուք կրկին լցվում եք մեր էներգիայով ու մեր Սիրով: Չի հնարավոր չէ Ուսմունք տալ և Մեր չտաճել: Ամբողջ գիտելիքն ու ըմբռնումը հիմնված են խոր և անշահախնդիր Սիրո զգացման վրա: Մենք մեր գիտելիքը տալիս ենք Սիրո թևերով, իսկ դուք ունակ եք լինում ընկալելու տրված տեղեկատվությունը միայն այն դեպքում, երբ կարողանում եք տոգորվել Սիրո խոր և անշահախնդիր զգացմունքով իմ, մյուս Վեհապետների և մեր դեսպանորդի նկատմամբ:

Միայն Աստծո Սիրո զգացմունքով դուք կարող եք ընկալել Ճշմարտությունը: Սա օրենք է, որն անխափան գործում է օկտավաների միջև էներգիայի փոխանակության ընթացքում: Իսկ այն դեպքերում, երբ դուք վախ, կասկած և այլ անկատար հույզեր եք ունենում, չեք կարող ընկալել Աստծո Ճշմարտությունն իր ողջ կատարելությամբ: Եվ հակառակը՝ եթե ձեզ հաջողվի խնամք տանել ձեր մեջ եղած Աստծո անշահախնդիր Սիրո նկատմամբ, ապա կկարողանաք հասու լինել

ընդամենը մեկ արտահայտության մեջ պարփակված հսկայական Ճշմարտության: Այդ արտահայտությունը մարդկանց մեծամասնության համար ոչինչ չի նշանակի, բայց ձեզ համար կբացի Աստծո ողջ Ճշմարտությունը, քանի որ ձեզ տրվել է այն բացելու բանալին, այն է՝ ձեր սրտում առկա Աստծո Սերը:

Ուստի ձեր ներսում աճեցրեք ոչ թե ձգտում դեպի գիտելիքը, այլ ձգտեք ձեր ներսում բացել Աստծո Սերը: Աստծո մեջ ձեր կատարելագործումը հնարավոր չի լինի, եթե ձեր մեջ չգարգացնեք Աստծո Սիրո հատկանիշը:

Ձեր կարող պատկերացնել, թե որքա՛ն բուռն ու ակնառու կդառնար զարգացման աստվածային Ուղով մարդկության առաջընթացը, եթե գիտակցեիք համընդգրկուն Սիրո զգացմունքի նշանակությունը: Ձեր Ուղու վրա հանդիպող շատ փորձություններ, եթե ոչ բոլորը, կարող եք հաղթահարել միայն Սիրո զգացմունքի շնորհիվ: Իսկ այն դեպքում, երբ ձեզ լքում է Աստծո Սերը, նմանվում եք ծանր հիվանդի: Եվ այդ հիվանդությունից ձեզ ոչ ոք չի կարող փրկել, եթե ինքներդ չկամենաք վերականգնել ձեր գիտակցության վերամբարձ վիճակն ու Սիրո համընդգրկուն զգացմունքը:

Անշահախնդիր Սիրո զգացմունքը հենց այն է, ինչի պակասը դուք ունեք, նաև այն է, ինչը ձեզ համար լավագույն դեղ կարող է ծառայել ձեր հոգևոր Ուղու վրա:

Հնարավոր չէ զգալ Սերը, եթե ձեզ պարուրել են այլ անկատար զգացմունքներ: Օրինակ՝ վախի զգացմունքը ծագում է Սիրո անբավարարությունից: Դուք վախենում եք ինչ որ բան կորցնելուց կամ ինչ որ բանից վնասվելուց, բայց այդ երկյուղները հենց այն պատճառով են տիրում ձեզ, որ ձեր սրտերում բացակայում է Սերը:

Ուստի վախի դեմ լավագույն դեղը կլինի Սերը, իր բնույթով աստվածային Սերը: Իսկ ձեր ապրած ոչ աստվածային սերն այն է, որն իր անկատար որակով ձեզ կարող է կապել սիրո որևէ առարկայի հետ: Դուք պետք է զգաք անշահախնդիր (անանձնական) Սեր, որը ոչ թե կոնկրետ մարդու հետ է կապված, այլ ընդհանրական Սեր է: Դուք պետք է սիրեք ինչպես ձեզ, այնպես էլ Աստծո աշխարհի ամեն մի էակի:

Եվ եթե ուրիշ մարդկանց մոտ չափազանց շատ թերություններ եք նկատում, ուրեմն ձեր Սերը պակաս է: Դուք չեք կարող և՛ թերություններ նկատել, և՛ Սիրել: Դրանք անհամատեղելի բաներ են:

Սկզբում ձեզ համար դժվար կլինի անշահախնդիր Սեր զգալը: Քանզի սիրո հասկացողությունը չափազանց գունազարդել եք մարդկային զգացմունքներով: Ուստի մի՛ ամաչեք, եթե ձեր սերը սկզբում գունազարդված լինի անկատարությամբ:

Նաև կարևոր է ձեր Սիրո ուժը: Չի Սերն այն հատկանիշն է, որը թույլ է տալիս գործել ձեր աշխարհում: Ուժն առանց Սիրո վերածվում է ոխերիմության ու ատելության: Այդ պատճառով ձեր աշխարհում ամեն ինչ պետք է սկսեք և անեք՝ միայն հենվելով Սիրո զգացմունքի վրա:

Ձեր ամեն մի անձնական շարժառիթն անկատար է դարձնում ձեր յուրաքանչյուր գործը: Եվ այնժամ, երբ միայն խելք բանեցնելով եք կատարում որևէ բարի գործ, որին կամերտոնի պես չի արձագանքում ձեր ներսի Աստծո Սիրո զգացմունքը, ապա ձեր գործողության արդյունքը ոչ թե լավ, այլ վատ կլինի:

Հիշե՛ք, թե ինչ էր ուսուցանում Հիսուս. «Գործն իր պտղո՛ւմ դասեք»:

Ձեր գործողությունները կարող են բացարձակ ճիշտ թվալ. դուք աղոթում եք, բարեգործությամբ եք զբաղվում, օգնում եք մերձավորներին, բայց ինչ էլ անում եք, հանգեցնում է ողբալի արդյունքի: Պատճառն այն է, որ նախապես՝ գործողությունը կատարելու որոշում կայացնելու պահին, ձեր մտադրությունը պարուրված չի եղել Սիրով: Եվ պտուղը՝ ձեր գործողության արդյունքը, փտած է դուրս գալիս:

Ուստի ես ձեր փոխարեն կգերադասեի ոչինչ չանել, քան որևէ գործ նախաձեռնել՝ առանց այն հազեցնելու Սիրո զգացմունքով: Քանզի կարման, որպես ձեր գործողության արդյունք, այդ դեպքում բացասական բնույթ է ստանում:

Հասկանո՞ւ եք, թե ինչպես է գործում կարմայի Օրենքը: Գիտե՞ք արդյոք, թե այդ Օրենքի որքա՛ն նուրբ եզրաշերտեր են բացվում ձեր առջև, երբ ընթանում եք ձեր Ուղով:

Հենց դրա համար էլ մենք տալիս ենք մեր Ուսմունքը: Եվ նրանք, ովքեր վերջերս են սկսել ընթերցել մեր Ուղերձները, չեն կարողացել թելադրություններն ամենասկզբից, այլ ընթերցումը սկսել են թելադրությունների այս վերջին շրջանից, մեր ասածներից շատ բան չեն հասկանա:

Ես ևս մեկ անգամ ստիպված եմ անդրադառնալ ուսումնական հաստատությունների հետ համամանությանը: Դպրոց գնալիս սկզբում առաջին դասարանում եք սովորում, հետո նոր՝ երկրորդում, երրորդում: Միայն շատ ինքնավստահ մարդիկ կարող են նստել միանգամից 10-րդ դասարանում և պահանջել, որ իրենց ուսուցանեն այդտեղից սկսած:

Գիտելիքները չեն կարող լցվել մի անոթի մեջ, որը դեռևս նախապատրաստված չէ դրա համար: Իսկ մենք պատասխանատվություն ենք կրում այն բանի համար, որ դուք ընկալեք մեր տված

Ուսմունքը: Ուստի շատ պարզ բառերով տալիս ենք շատ բարդ ճշմարտություններ: Շատերը դրանից մոլորության մեջ են ընկնում: Նրանց թվում է, թե մեր ողջ ասածն արդեն վերաբերում է անցած օրվան:

Թույլ տվեք նկատել, որ այդ դեպքում ձեզ կուրացնում է գոռոզությունը, և մի գեղեցիկ օր Աստծո Սիրո բացակայությունը ձեր գլխին չար կատակ կխաղա: Այդ պատճառով մեր ուղերձները մենք տալիս ենք խոր և անշահախնդիր Սիրո զգացմունքով, բայց դուք էլ ձեր հերթին պետք է ճաշակեք մեր Ուսմունքի նեկտարը՝ համալարված աստվածային լադով և Սիրով լեցուն:

Ես ընդհանրապես խորհուրդ չեմ տալիս ձեռնամուխ լինել մեր ուղերձների ընթերցմանը, քանի դեռ ձեր գիտակցությունը չեք բերել հավասարակշիռ վիճակի: Մտորե՛ք ասածիս մասին և ձեզ շրջապատող կյանքում ջանացեք գտնել այն մեխանիզմները, որոնք կարող են ձեր գիտակցությունը բերել հավասարակշիռ վիճակի:

Խորհուրդ կտայի, որ ուշադրություն դարձնեք բոլոր այն մանրուքներին, որոնցով շրջապատված եք ձեր կյանքում: Անհրաժեշտ է կարգ ու կանոն հաստատել տանը և աշխատավայրում, սնունդ ընդունել խիստ ընտրողաբար և հետևել մարմնի մաքրությանը: Նկատի ունեցեք, որ օրվա ընթացքում ֆիզիկական կեղտից բացի ձեզ վրա նստում է նաև մեծ քանակությամբ աստեղային ու մենտալային կեղտ: Այդ կեղտերից մաքրվելու լավագույն ձևը բնական ջրավազանում լողանալն է կամ թեկուզ օրը երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան, ընդհանուր ցայվելը:

Ես այսօր ձեզ հետ եղա խրատներ տալու նպատակով, որոնք վերաբերում են ձեր ամենօրյա կյանքին: Մի՛ կարծեք, թե իմ ասածները չեն վերաբերում ձեզնից յուրաքանչյուրին:

ԵՄ ԵՄ Կույթումին

Տեր Մայտրեյա
27 հունիսի, 2007 թ.

Նախագգուշացում նուրբ աշխարհի հետ կապի մեջ մտնելու վտանգավորության մասին

ԵՄ ԵՄ Մայտրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

ԵՄ ԵՄ եկել և, ինչպես միշտ, պատրաստ եմ ձեզ նոր տեղեկություններ հաղորդել ձեր Ուղու ներկա փուլի վերաբերյալ: Դուք կարող եք հաղորդվածին չվստահել, սակայն խելամիտ կլինեք գոնե այն ի գիտություն ընդունել և մի լավ խորհել դրա շուրջ: Քանզի մենք այնքան էլ հաճախ չենք ձեզ հետ խոսելու հնարավորություն ունենում: Եվ համաձայնեք, որ վերջին ժամանակներում առանձնապես չեք լիացել այնպիսի տեղեկատվությամբ, որը ձեզ է հասնում Երկնային ուղիներից:

Ես այսօր եկել եմ, որպեսզի տամ հերթական ուղերձը, որը վերաբերում է մեզ հետ՝ Համբարձյալ Դասերիս հետ, ձեր ունեցած փոխհարաբերություններին: Գիտեք, որ վերջերս շատերն են հայտարարում, որ իրենք ընդունում են մեր ուղերձները: Սակայն ինչ որ բան ձեր ներսից ձեզ ստիպում է, որ զգուշավորություն ցուցաբերեք նման կարգի ուղերձների և դեսպանորդների նկատմամբ:

Ինչու՞ է դա այդպես. որովհետև հաղորդակցության գործընթացը մեր և չհամբարձված մարդկության միջև դեռևս ինքնին շատ բարդ գործընթաց է: Եվ մեծամասնությունը, եթե չասենք՝ այն բոլոր մարդիկ, ովքեր համարում են, թե ուղերձ են ընդունում մեզնից, ավելի շուտ կրում են աստեղային ոլորտի և նրանում գտնվող էակների ազդեցությունը: Աստեղային ոլորտի ոչ բոլոր կենվորներն են թշնաբար տրամադրված մարդկանց նկատմամբ: Նրանց մեջ շատ են այնպիսիները, որոնք, այսպես ասած, լուրջ են երկնքի ու երկրի միջև: Նրանք նոր մարմնավորում չեն կարող ստանալ, քանի որ արդեն հասել են զարգացման բավականին բարձր մակարդակի, սակայն դեռևս որոշակի չափի չբեռնաթափված կարմա ունեն, որը կարող են բեռնաթափել միայն այն մարդկանց օգնությամբ, որոնք ներկայումս գտնվում են մարմնավորման մեջ: Եվ այդ էակները ստիպված են մարդկանց մեջ փնտրել և գտնել փոխանցողների, որպեսզի նրանց միջոցով մարդկությանը փոխանցեն որոշակի տեղեկություններ ու գիտելիքներ: Այդ կերպ համագործակցելով մարդկանց հետ՝ նրանք հնարավորություն են ստանում մարելու իրենց դեռևս չմարված կարմայական պարտքերը:

Կան և նուրբ ոլորտի այնպիսի կենվորներ, որոնք դիտմամբ հեռացել են Աստծուց և չեն ցանկանում մարմնավորվել: Դրանց մեջ շատ կան այնպիսիները, որոնք իրենք իրենց համբարձյալ վեհապետ են համարում և նույնիսկ ներկայանում են մեր անուններով:

Գոյություն ունեն նաև մեր աստեղային կրկնակները, որոնք ստեղծվել են մարդկային էգրեգորի կողմից: Դրանք լիարժեք բանական էակներ չեն, բայց կարող են բավականին կապակցված ուղերձներ տալ, որոնք իրենց մեջ պարունակում են հանրահայտ պնդումներ ու ճշմարտություններ:

Դուք այդ էակներին մշտապես կարող եք զանազանել իրենց թրթիռներից և տրված ուղերձի բովանդակությունից ելնելով: Որպես կանոն, նման էակները հաղորդում են տալիս թրթռանքի որոշակի մակարդակով, և դրանց ուղերձները բազմազանությամբ առանձնապես աչքի չեն ընկնում:

Ես այսքան մանրամասն տեղեկացնում եմ ձեզ աստեղային ոլորտի կենվորների մասին, որովհետև չափազանց շատ խնդիրների առաջ ենք կանգնում, երբ որոշ անհատներ, կարծելով, թե հաղորդակցվում են Համբարձյալ Դասերի հետ, կախվածության մեջ են ընկնում աստեղային ոլորտի էակներից: Եվ հետո, երբ հենց իրենք կամ շրջապատի մարդիկ սկսում են հասկանալ նման կապի ամբողջ վտանգավորությունը, այդ ազդեցությունից ազատվելն արդեն շատ է բարդացած լինում: Վիճակը դառնում է այնպիսին, որին ձեր հոգեբույժները շիզոֆրենիա են անվանում, իսկ եկեղեցականները՝ դիվահարություն: Նման դիվահարությունից ազատվելը հեշտ չի լինում, որովհետև ինքներդ եք ձեր ազատ կամքով նրանց հրավիրում ձեր տաճարը և ցանկանում համագործակցել նրանց հետ:

Եթե գործ եք ունենում այնպիսի էակների հետ, որոնք Աստծուց իրենց կապը չեն կտրել և ձեր օգնությամբ բեռնաթափում են իրենց կարման, ապա ձեր այդ օգնությամբ սեփական կարմա չեք ստեղծում: Այդ համագործակցությունը պայմանավորված է ձեր հեռավոր անցյալի կարմայական կապերով: Իսկ եթե Աստծուց կտրված էակների հետ եք որոշել համագործակցել, ապա դրանց ուղերձներն ընդունելով՝ դուք կարմա եք ստեղծում: Եվ որքան ավելի շատ ջանք եք թափում այդ ուղերձները տարածելու համար, այնքան էլ շատ կարմա եք ստեղծում:

Ահա այդ պատճառով է, որ մենք դիմում ենք հատուկ ուսուցում անցած դեսպանորդների օգնությանը, որոնք կրում են մեր պատմությանները և ձեր աշխարհն են եկել հատուկ առաքելությամբ՝ վերկանգնել այն Ուղին, որով մենք առաջ ենք տանում Երկրի մարդկությանը:

Ուստի ձեզ մատուցվում է ամբողջական տեղեկատվություն և տրվում կամքի լրիվ ազատություն, որպեսզի ինքներդ որոշեք, թե ում լսեք և ում հետևիք գնաք:

Ես այսօր եկել եմ այն որոշակի նպատակով, որ ձեզ գիտելիք ու տեղեկություններ հաղորդեմ նուրբ աշխարհի և նրա կենվորների հետ ձեր կապ հաստատելու վերաբերյալ:

Մեր դեսպանորդներն առավել բարձր օկտավաների թրթռանքներ են կրում, և հենց դրանց մակարդակից ելնելով էլ դուք կարող եք մեր դեսպանորդներին զանազանել մնացած բոլոր ինքնակոչներից ու մոլորյալներից:

Ես հիմա ձեզ կտամ ևս մեկ հայտանիշ, որից կարող եք օգտվել զանազանման ընթացքում: Նուրբ ոլորտի յուրաքանչյուր նվաճում, որի մասի ձեզ ասում են, պետք է իր հաստատումը ստացած լինի ֆիզիկական ոլորտում:

Ուստի, եթե ձեզ համոզում են, թե դուք Հիսուսն եք, Տեր Մայրերեյան եք կամ էլի ուրիշ մի Վեհապետ, ապա նայեցե՛ք, խնդրեմ, ինքներդ ձեզ և ձեր շրջապատին, ուշադիր վերլուծե՛ք մարդկանց, մերձավորների հետ ունեցած ձեր հարաբերությունները: Ոչ ամեն ինչն է միշտ ակնհայտ լինում, բայց եթե ձեր կյանքում չեք հետևում այն Ուսմունքին, որը տվել են Հիսուսը, Մովսեսը, անցյալի մյուս դեսպանորդներն ու մարգարեները, ապա հազիվ թե լինեք այն, ում ձեզ համարում են և ձեզ համոզում դրանում:

Ձեր քաղաքակիրթ դարում մարդիկ դավանանքի և նուրբ աշխարհի հետ հաղորդակցվելու հարցերում, այնուամենայնիվ, չափազանց անհավատ վիճակում են: Ուստի և շատ բախտախնդիրներ են ի հայտ գալիս և օգտվում ձեր տգիտությունից: Այդ պատճառով մենք առաքում ենք մեր դեսպանորդներին, որպեսզի ձեզ սովորեցնեն զանազանել և տան ճշմարիտ Ուսմունք:

Դուք ունեք ընտրելու հնարավորություն: Կարող եք շարունակել ձեր մոլորությունը կամ վերադառնալ այն Ուղուն, որի մասին մենք ուսուցանում ենք մարդկության զարգացման ողջ ընթացքում:

Ես այսօր շատ բաց ու անկեղծ խոսեցի, քանզի հասել է ժամը, որ դես ու դեն ընկնելու փոխարեն ձեզ տրվի այն տեղեկատվությունը, որը կօգնի ձեզ գերծ մնալ մոլորություններից:

Նուրբ աշխարհի հետ ձեր հաղորդակցվելու վտանգներին վերաբերող ավելի պարզ ուղերձ մենք դեռ չեինք տվել: Սակայն արդեն հասել է այն պահը, երբ մենք այլևս չենք կարող դիմանալ ձեր օգնության կանչերին, երբ հայտնվում եք չարամիտ էությունների ճիրաններում: Հավատացե՛ք, ավելի հեշտ է կանխավ զգուշացնել վտանգի մասին, քան հետո դիմել Երկնային Դասերին, որ զան ու ձեզ փրկեն վտանգից:

Որպեսզի չափից դուրս շատ չահաբեկվեք, պետք է ասեմ նաև, որ նուրբ ոլորտի՝ Աստծուց կտրված էակների հետ հիմնականում կապի մեջ են մտնում այն անհատականությունները, որոնք անցյալում Աստծո դեմ կարմա են ունեցել, ինչն էլ իրենց ստիպում է, որ նման կապերի մեջ մտնեն: Եվ այն դիվահարությունը, որին ենթարկվում են, հենց Աստծո դեմ ունեցած կարմայի հետևանքն է: Կարմայի վերադարձից խուսափել հնարավոր չէ, բայց գիտակցորեն կարելի է ընդունել անցյալի սխալները, ապաշխարել և խնդրել, որ հրեշտակները պաշտպանեն ձեզ աստեղային ոլորտի ազդեցությունից: Աստված չի կամենում, որ դուք տառապեք: Աստված կամենում է, որ դասեր քաղեք անցյալի սխալներից և այլևս դրանք չկրկնեք:

Ձեզ տրված է ձեր կարմայի հետ աշխատանք տանելու միջոց՝ կապված Կարմայական Վարչությանը նամակ հղելու հետ. յուրաքանչյուր ամսվա 23-ին կարող եք թեթևացնել հաջորդ ամսվա կարման: Ինչու՞ հարկ եղած չափով չեք օգտվում շնորհված հնարավորությունից:

Եթե չօգտվեք ձեզ ցուցաբերված ողորմածությունից, ապա աստվածային հնարավորությունը կարող է բարակել կամ ընդհանրապես կտրվել:

Հիշեցնում եմ ձեզ, որ ընդհուպ մինչև հուլիսի 1-ը դուք կարող եք նամակով դիմել Կարմայական Վարչությանը՝ խնդրելով թեթևացնել ձեր կարմայական բեռը: Միայն թե հաջորդ կիսամյակի ընթացքում՝ մինչև Կարմայական Վարչության հաջորդ նիստը, ձեզ անհրաժեշտ կլինի որոշակի պարտավորություններ ստանձնել, որպեսզի բարի կարմա ձեռք բերեք ձեր իսկ կարմայական բեռի թեթևացման համար:

Դուք կարող եք օգնություն խնդրել նաև ձեր մերձավորների համար, և այդ դեպքում ձեր ձեռք բերած բարի կարման կծառայի այդ օգնության ցուցաբերմանը:

Ես հատուկ ընդգծում եմ, որ Աստծո դեմ ունեցած կարման հանգեցնում է խելագարության կամ դիվահարության, բայց կարմայի մյուս տեսակների պես այն նույնպես ենթակա է թեթևացման ու բեռնաթափման: Անհրաժեշտ է միայն, որ գիտակցեք անցյալի ձեր սխալ արարմունքները և այլևս չկրկնեք դրանք:

Ինչպես տեսնում եք, նուրբ ոլորտի հետ ձեր կապի մեջ մտնելն այնքան էլ դյուրին գործ չէ: Եվ դուք լիովին պետք է գիտակցեք կարմայական ողջ պատասխանատվությունը, երբ այդպիսի կապի մեջ եք մտնում, ուղերձներ եք ընդունում այդ ոլորտից և տարածում դրանք:

ԵՍ ԵՄ Մայրերեյան՝ ձեր նկատմամբ անկեղծ սիրով ու հոգածությամբ

Սուրբ Միքայել Հրեշտակապետ
28 հունիսի, 2007 թ.

Նուրբ ոլորտի ստորին շերտերից պաշտպանվելու մասին

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

ԵՍ ԵՄ եկել պաշտպանության կապույտ բոցի իմ գորախմբի ուղեկցությամբ: ԵՍ Եմ եկել, որպեսզի ասեմ ձեզ, որ անկախ Երկրում հաստատված բարդ ու անկանխատեսելի իրավիճակից՝ մենք շարունակում ենք մեր ծառայությունը և պատասխանատու ենք յուրաքանչյուրի պաշտպանության համար, ով մեզ դիմում է օգնության ու պաշտպանության խնդրանքով:

Այժմ ես ձեզ կբացատրեմ, թե ինչով են ձեր ժամանակները տարբերվում անցյալ ժամանակներից:

Անցյալում էլ են եղել այնպիսի պահեր, երբ նուրբ ոլորտը, հատկապես աստեղային ոլորտի ստորին շերտերը մերձեցել են Երկրին, սակայն այժմ աշխարհների այդ մերձեցումը կապված է հենց Էվոյուցիոն զարգացման բուն ընթացքի հետ:

Բարձրագույն ոլորտները ձերբազատվել են իրենց ոչ հատուկ ներթափանցումներից, և բոլոր նրանք, ովքեր անբարյացակամորեն են տրամադրված երկրային կենսահոսքերի նկատմամբ և չեն ցանկանում համագործակցել մեզ հետ՝ Համբարձյալ Դասերիս հետ, հեռու են քշվել դեպի այն շերտերը, որոնք մոտ են երկրի ֆիզիկական ոլորտին: Այդ պատճառով ներկայումս ուժգնացել է նուրբ ոլորտի ոչ այնքան լավ շերտերի ազդեցությունը երկրաբնականների վրա:

Սա Էվոյուցիայի օրինաչափ փուլ է, և ձեզ վիճակված է վարժվել աստեղային ոլորտի և մենտալային ոլորտի ստորին շերտերի մերձավոր հարևանությամբ ապրելուն: Այդ շերտերում կենտրոնացված են մարդկության ոչ այնքան լավ արգասիքները: Մարդկանց շատ սերունդների կողմից ծնունդ են առել ցածրորակ կերպեր ու մտքեր, և դրանք այժմ ստիպված են բախվել իրենց ծնող պատճառին: Դա նման է մի ճակատամարտի, երբ դուք ստիպված եք բախվել ոչ միայն ձեր, այլ նաև համայն անգիտակից մարդկության անիրական մասին, որը մարդկանց բազմաթիվ սերունդների ծնունդն է:

Աշխարհները մերձեցել են իրար, և կարման միայն ինքներդ կարող եք բեռնաթափել: Եվ բացասական էներգիայի այն կուտակները, որոնք այժմ առկա են, պետք է փոխակերպության ենթարկվեն հենց ձեր կողմից: Կան անհատականություններ, որոնք իրենց աուրան ու չակրաներն այնքան են մաքրել, որ կարող են ֆիզիկական աշխարհ ներմուծել Լուսի մեծ քանակությամբ: Իսկ այդ Լուսը, մուտք գործելով ձեր աշխարհ, ունակ է ցրելու այն խավարը, որը կուտակված է Երկրին մերձակա նուրբ ոլորտներում:

Այնժամ, երբ ձեր մարմինների թրթռանքներն անհամեմատ բարձր են դառնում մարդկության միջին թրթռանքներից, դուք ունակ եք դառնում զգալու աստեղային ոլորտն ու դրա կենվորներին: Այն մարդիկ, որոնք նշանակալի առաջընթաց չեն ունեցել իրենց ստորին չորս մարմինների մաքրման գործում, նախկինի պես շարունակում են ապրել ֆիզիկական աշխարհում՝ չզգալով նուրբ ոլորտի գոյությունը:

Ձեր օրոք արդեն կան վայրեր, ուր աշխարհները շատ են մոտեցել իրար և ներթափանցում են իրար մեջ: Ոչ բոլոր մարդկային անհատներն են ունակ զգալու նուրբ աշխարհը, սակայն, որպեսզի շարունակեք ձեր ընթացքն էվոլյուցիոն ուղով, պետք է պահպանեք անվտանգության որոշակի կանոններ, երբ շփման մեջ եք մտնում նուրբ ոլորտի՝ աստեղային և մենտալային ոլորտների ստորին շերտերի հետ:

Լինում են որոշակի ժամանակահատվածներ, երբ այդ ոլորտների էակները տեսանելի ու զգալի են դառնում առավել նրբագագ մարդկային անհատների համար: Հնարավոր է, որ զգաք անստիժ տագնապ, տառապեք անքնությամբ, կողային տեսողությամբ նկատեք կեղտա-մոխրագույն շարժվող կերպարանքներ: Պետք է իմանաք, որ աստեղային ոլորտի ոչ մի բնակիչ և այդ ոլորտի ոչ մի էներգիա ձեզ չեն կարող վնաս հասցնել, քանի դեռ համոզված եք ձեր անխոցելության և պաշտպանվածության մեջ: Ուստի պետք է սովորեք չերկյուղել ոչ մի իրավիճակում, որում կհայտնվեք կամ զգացումներ կունենաք: Միայն ձեր անկատարություններն են աստեղային ոլորտին ստիպում նախահարձակ լինել և վնասել ձեզ: Քանի դեռ ձեր գիտակցությունը կենտրոնացած եք պահում Աստծո Աշխարհի վրա և դրանով իսկ զգում ձեր անխոցելիությունը, դուք վախենալու ոչինչ չունեք: Աստեղային ոլորտի կենվորներից շատերն ահաբեկվում են ձեր չակրաների հրեղեն բնույթից: Դուք նրանց համար վտանգի աղբյուր եք. հիրավի, ձեզնից նրանք, ովքեր հուր են ներմուծում ֆիզիկական աշխարհ, Կունդալինիի հրով ու սրով մաքրում են աստեղային ոլորտը: Կունդալինիի էներգիայի ակամա բարձրացումը չեզոքացնում է աստեղային ոլորտում բնավորված ամբողջ հրոսակախմբերի:

Աստեղային ոլորտի համար դուք անխոցելի եք: Բայց այն դեպքերում, երբ թույլ եք տալիս, որ ձեզ տիրեն գիտակցության այնպիսի անկատար վիճակներ, ինչպիսիք են տրտմությունը, թախիծը, վախը, ատելությունը, հակակրանքը, ապա ձեր թրթռոներն իջնում են, և դուք խոցելի եք դառնում աստեղային ոլորտի համար: Ուստի մենք կրկին ու կրկին գալիս և խնդրում ենք ձեզ, որ հետևեք ձեր գիտակցության մաքրությանը և այն մաքրեք բոլոր այնպիսի բաներից, որոնք ցածր թրթռանքներով են օժտված և անհամատեղելի են Աստծո Աշխարհի հետ:

Ձեզնից յուրաքանչյուրն ինքն է պատասխանատվություն կրում իր գիտակցության վիճակի համար: Որոշ մարդիկ չեն հասկանում մեր տված Ուսմունքը: Շատերը նյարդայնանում են մեր ուղերձները կարդալիս: Դա վկայում է այն մասին, որ նրանց թրթռոների և գիտակցության մակարդակը բավարար բարձրության վրա չէ, որպեսզի ընկալեն մեր դեսպանորդի միջոցով մեր կողմից տրվող Ուսմունքը: Հարկ է իմանալ, որ գիտակցության զարգացածության մակարդակները շատ տարբեր են ձեր աշխարհում: Անհատներ կան, որոնք համառոտ են չեն ուզում զարգանալ և մեկը մյուսի հետևից բաց են թողնում ընձեռված տիեզերական հնարավորությունները:

Այժմ եկել է այն ժամանակը, երբ առավել բարձր գիտակցությամբ օժտված մարդիկ պետք է միավորվեն, որպեսզի աճեցնեն բարոյականության ու բարեկրթության նոր կերպեր: Անշուշտ հիշում եք աստվածաշնչյան Սողոմի ու Գոմորի պատմվածությունը: Մշտապես եղել են բարձր գիտակցությամբ օժտված մարդիկ, բայց նաև եղել են մարդիկ, ովքեր չեն կամեցել պահպանել վարքի աստվածային կերպերը: Այն, ինչ մենք ուսուցանում ենք, վերաբերում է ներկայումս Երկրի վրա ապրող յուրաքանչյուրին ու բոլորին: Եվ երջանիկ են նրանք, ովքեր հասկանում են մեր Ուսմունքը և հետևում նրան: Նկատած կլինեք, որ մենք միտումնավոր կերպով հեռու ենք մնում կրոնականությունից, ցանկացած կրոնական դոգմայից ու կանոնից: Մեր խնդիրը ձեզ բարոյական օրենքի նոր նմուշ տալն է, որին հետևելով՝ կկարողանաք ապահովել ձեր ելքը դեպի նոր իրականություն:

Ես և իմ հրեշտակները միշտ պատրաստ ենք ձեզ ծառայելու, ուստի ձեր կյանքի հատկապես դժվարին պահերին, երբ չեք կարողանում ինքներդ ձեզ վերահսկել ու խոցելի եք դառնում մուժ ուժերի համար, մշտապես կարող եք դիմել մեր օգնությանը: Պաշտպանության հրեշտակների իմ բոլոր գորախմբերն օրվա մեջ 24 ժամ պատրաստ են ձեզ օգնելու և պաշտպանելու: Մի՛ երկնեք

օգնություն խնդրելուց, քանզի մարդկանց օգնելը մեր պարտքն ու պարտականությունն է: Մենք չենք կարող ձեռնամուխ լինել մեր պարտականությունների կատարման գործին, քանի դեռ դուք մեզ չեք կանչել. բայց երբ կանչն առկա է, մենք պարտավոր ենք արձագանքել և օգնության հասնել դժվարին իրավիճակում:

Այժմ ես ձեզ կտամ կանչի մի հակիրճ օրինակ, որից կարող եք օգտվել իրադրության սրման պահին.

«Հանուն Ամենակարող Տեր Աստծո, ո՛վ Միքայել Հրեշտակապետ, օգնության հասիր ինձ այս պահին...»

Կարող եք այդ կանչը հղելուց հետո համառոտ նկարագրել այն իրավիճակը, որում պահանջվում է միջամտություն և օգնություն: Մի՛ երկնչեք ձեր խնդրանքներով ու կոչերով մեզ ներդրություն պատճառելուց, քանի որ մարդկությանն օգնելը մեր անմիջական գործն է:

Իսկ այժմ՝ հրաժեշտ տալուց առաջ, կուզենայի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնել, որ ձեզ համար լավագույն պաշտպանությունն այն կլինի, որ ձեր թրթռուները պահեք բարձր մակարդակի վրա: Հետևե՛ք Վեհապետների տված խորհուրդներին, որպեսզի մշտապես բարձր պահեք ձեր գիտակցությունը:

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը

Հաւոթամա Բուդդա
29 հունիսի, 2007 թ.

Ուսմունք ֆիզիկական ոլորտում գործելու մասին

ԵՍ ԵՄ Հաւոթամա Բուդդան՝ նոր խրատներ տալու համար այս օրով ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ ձեզ մի Ուսմունք տալու, որին, հավանաբար, արդեն ծանոթ եք, սակայն, երբ ընկալում եք աշխարհի չափ հին Աստծո ճշմարտությունը, ամեն անգամվա հետ ունակ եք դառնում այն ըմբռնելու ավելի ու ավելի բարձր մակարդակով:

Ձեր մեջ կան այնպիսիները, որոնք պատրաստ չեն և չեն ուզում իմանալ որևէ ճշմարտություն. նրանց լրիվ բավարարում է իրենց շրջապատող աշխարհը: Ես դիմում եմ ձեզնից նրանց, որոնց սրտերում վառվում է դեպի լավագույն աշխարհի մղվելու հուրը. դիմում եմ նրանց, ովքեր պատրաստ են շատ բան զոհաբերելու, նույնիսկ իրենց կյանքը՝ հանուն ֆիզիկական աշխարհի նոր կերպեր ներմուծելու՝ անկախ այն բանից, թե այդ նոր կերպերն ինչի՞ն են առնչվում կամ գործունեության ո՞ր բնագավառում են դրսևորվում: Ձեր աշխարհում չափազանց շատ են անկատարությունները, որոնք պետք է փոխարինվեն ավելի կատարյալ կերպերով: Մենք այդ ուղղությամբ աշխատում ենք՝ համագործակցելով մեր հավատարիմ աշակերտների հետ, որոնք մեզ հետ են շատ հազարամյակների ընթացքում: Նրանք ստեպ-ստեպ մարմնավորվում են, որպեսզի օգնեն մեզ աստվածային կերպերը ֆիզիկական աշխարհում դրսևորելու գործում:

Կան ճշմարտության ընկալման տարբեր մակարդակներ, և կան Սպասավորության տարբեր մակարդակներ: Որոշ մարդկանց համար լիովին բավարար է աղոթքներ, Վարդարաններ, պատգամներ ու մանտրաներ կարդալը: Կան և այնպիսիները, որոնք Կյանքին ծառայելու ճանապարհով ներդաշնակ են դարձրել իրենց մարմինները և պատրաստ են աշխատանք կատարելու Եղբայրության համար: Նրանք պատրաստ են այնպիսի Սպասավորության, որն արտահայտվում է ֆիզիկական ոլորտում իրագործվող խիստ որոշակի աշխատանքով: Շատ շատերը մարմնավորվում են աննշան աշխատանք կատարելու համար: Անհրաժեշտ է միայն հարկ եղած պահին օժանդակել մեր գործին, պաշտպան կանգնել դրան: Եվ անգամ հարկ եղած պահին ի կատար ածված այդ աննշան գործը կարող է միլիոնավոր մարդկանց գիտակցությունն ասելությունից, հակակրանքից, վախվորված վիճակից շրջել դեպի աստվածային Մերը, Ներդաշնակությունն ու աստվածային կարգ ու կանոնը:

Մեր նվիրյալ աշակերտների արածների մեջ փոքր գործեր չկան: Բոլոր այն գործերը, որոնք համաքայլ են աստվածային Էվոյուցիայի հետ, հավասարապես պատվաբեր են, և մարդկային գիտակցությամբ հնարավոր չէ գնահատել, թե Եղբայրության կողմից հանձնարարված ո՞ր գործի կատարումն է ավելի նշանակալից:

Աստվածային Սպասավորությունը մանրուքներ չի ճանաչում: Եվ ամեն անգամ, երբ ձեզ թվում է, թե ձեր ներդրումն աննշան է, և ձեզնից ոչինչ կախված չէ, հիշե՛ք իմ այս թելադրությունը՝ իմ ասածն այն մասին, որ բոլոր գործերն էլ մեծ են ու կարևոր, եթե ուղղված են Համընդհանուր Բարիքին և արված են անշահախնդիր Սպասավորության գործադրմամբ: Մշտապես հիշեք, որ

կարևորը ոչ թե հենց ինքը գործն է, այլ այն մղումն ու կարողությունը, որը ներդնում էր ֆիզիկական ոլորտում ի կատար ածված ձեր գործողության մեջ:

Եթե ներդնում էր ձեր ունեցած ողջ Սիրո կարողությունը, եթե շատ փոքր գործը մեծ Սիրով էր կատարում, ապա ձեր այդ ներդրումը չափազանց շատ բան կարող է փոխել Երկիր մոլորակի վրա:

Զպետք է մոռանալ, որ դուք միայն ֆիզիկական մարմինը չեք: Եվ եթե ձեր ֆիզիկական մարմնի համար նշանակություն ունի այն, ինչը տեսնում էր ձեր աչքերով և կարող էր շոշափել, ապա ձեր նուրբ մարմինների համար կարևոր է այն, թե ինչ վիճակով էր գործում: Նուրբ աշխարհը շատ զգայուն է ձեր ներքին վիճակի և տրամադրվածության նկատմամբ: Ուստի, նույնիսկ այնժամ, երբ ֆիզիկական ոլորտում ճիշտ արարքներ էր գործում, բայց ձեր ցիտակցությունն այդ ընթացքում լավագույն վիճակում չէ, ապա նուրբ ոլորտում այնպիսի արգելապատնեշ կարող էր առաջացնել, որն ամենաանհարմար պահին գլխիվայր շուռ կտա ձեր ներդրած բոլոր ջանքերը:

Մի՛ մոռացեք, որ ձեր բոլոր մարմինները պետք է հավասարակշիռ վիճակում լինեն այն պահին, երբ որևէ գործողություն էր իրականացնում ֆիզիկական ոլորտում:

Նաև կուզենայի անդրադառնալ այն գործառնություններին, երբ փորձում էր մտքով ինչ-որ բան անել կամ երբ կենտրոնանում էր նուրբ ոլորտում ինչ-որ խնդիր լուծելու վրա: Հիշա՛վի, եթե դուք բարձր մակարդակի աղեկատ էք, ապա ձեր ցանկացած միտքն ու մտառքումը կարող է ի կատար ածվել ոչ միայն նուրբ ոլորտում, այլ նաև ֆիզիկական ոլորտում: Իսկ եթե չեք հասել աղեկատի կատարելության աստիճանի, բայց փորձում էր նուրբ ոլորտում մտքով կամ հույզով արարչություն անել, ապա նուրբ ոլորտում ծնում էր նույնպիսի անկատար կերպեր, ինչպիսիք շատ կան ձեր աշխարհում: Դրանից հետո էլ՝ որոշ ժամանակ անց, ինքներդ ստիպված կլինեք կարգ ու կանոն հաստատել նուրբ ոլորտի այն շերտերում, որոնք աղտոտել էր ձեր սխալ արարմունքներով:

Ավելի հեշտ չի՞ լինի, եթե ֆիզիկական ոլորտում գործեք գիտակցության ճիշտ վիճակով: Այդ դեպքում ձեր գիտակցության ճիշտ և ոչ ճիշտ վիճակներն իրենց արտացոլումը կգտնեն, և դուք կկարողանաք ձեր զգայարաններով զգալ ձեր ստեղծածի անկատարությունը և այն շտկել:

Շա՛տ դժվար բան է կուրորեն արարելը: Ուստի ֆիզիկական ոլորտում գտնվելիս ձեզ համար ավելի հեշտ կլինի, եթե ֆիզիկական ոլորտում սկսեք գործել գիտակցության ճիշտ վիճակի պայմաններում: Այդ դեպքում ակնառու կերպով կտեսնեք ձեր գործողության արդյունքը, կճշգրտեք և ժամանակին կուղղեք թույլ տված սխալները:

Փորձ ձեռք բերեք այնպիսի գործնական աշխատանքով, որը նպատակաուղղված է ձեր ֆիզիկական աշխարհի կերպափոխմանը:

Երբ ձեր անկատար գիտակցությամբ խառնվում էր նուրբ աշխարհի կերպափոխման գործին, դեպքերի 99 տոկոսում դրանով որևէ լավ արդյունքի չեք հասնում: Հավատացե՛ք, որ Լինելիության նուրբ և ավելի բարձր ոլորտներում բավարար քանակի էակներ կան, որոնք կատարում են այդ ոլորտների իրենց գործը: Եվ այնժամ, երբ ձեր գիտակցությունը թույլ կտա ձեզ լքել երկրային աշխարհը և այլևս թանձր մարմին չառնել, ձեր առջև կբացվեն Լինելիության այլ ոլորտների պատկանող աշխատանքների նոր հորիզոններ:

Իսկ հիմա դուք մոտք էք գործել ձեր աշխարհ, որպեսզի խիստ որոշակի գործեր կատարեք ֆիզիկական ոլորտում:

Որոշակի գործից առաջ աղոթք անելն ուժի մեջ է մնում, որովհետև գիտակցության աղոթքային վիճակում ունակ էր դառնում ներդաշնակ դառնալու և, ըստ այդմ, լավագույն ձևով լուծելու ձեր առջև դրված խնդիրը:

Այժմ կուզենայի կանգ առնել այն պահի վրա, որը վերաբերում է որևէ մեկի դեմ ուղղված ձեր ցածրակարգ մտքերին: Հավատացե՛ք ինձ, ձեր յուրաքանչյուր բացասական մտառքումը կարող է տարածությունից դեպի իրեն ձգել թրթիռներով իրեն համահունչ մտածներ: Արդյունքում չեք էլ նկատում, թե ինչպես էր հայտնվում մարդկային ցածրորակ արտադրանքի այնպիսի գարշահոտ ամպում, որ այլևս չեք կարողանում տեսնել ու զանազանել ճշմարտությունը: Ուստի լավ կլինի, որ ձեր գիտակցությունը մշտապես համալարված պահեք աստվածային կերպերի հետ: Շատ ու շատ մարդիկ, ովքեր չեն հետևել որևէ ուսմունքի կամ դավանանքի, այլ միայն իրենց կյանքում առաջնորդվել են աստվածային չափանիշներով ու սկզբունքներով, անհամեմատ ավելի մեծ հաջողությունների են հասել, քան նրանք, ովքեր համարում են, թե Ուղով շատ են առաջացել, բայց իրականում ոչ մի քայլ առաջ չեն գնացել աստվածային գազաթի ուղղությամբ:

Խնդրում եմ ազատ ժամանակ ունենալու դեպքում մտորել իմ այս ուղերձի շուրջ: Բնավ մի՛ շտապեք զայրույթով մերժել կամ դատապարտել այն ամենը, ինչ լսեցիք: Քանզի տարբերություն կա իմ ու ձեր միջև, և լավ կլինեք, որ ձեռք բերե՛ք մի պատառիկն այն խոնարհության, որով ես եմ համակված:

ԵՄ ԵՄ ձեր եղբայր Հատյաան

Բաբաջի
30 հունիսի, 2007 թ.

Ուսմունք մեր Ուղու մասին

ԵՍ ԵՄ Բաբաջին՝ կրկին ձեզ այցի եկածը:

Այս րոպեների մեջ, երբ ինձ ձեզ հետ հաղորդակցվելու հնարավորություն է տրված, կուզենայի շատ բան տեղավորել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Եվ այն էներգիաները, որոնք այս թելադրությունների հետ մուտք են գործում ձեր աշխարհի, սահմանվածից ավելի շատ տեղեկատվություն փոխանցել թույլ չեն տալիս: Մեր աշխարհները հաղորդակցվում են հատուկ թողության շնորհի կամ Աստծո ողորմածության շնորհով: Եվ ամեն մի այդպիսի թողության շնորհի համար հատկացվում է որոշակի քանակությամբ էներգիա, որով ուղերձների ընդունման ընթացքում իրականացվում է մեր դեսպանորդի պաշտպանությունն արտաքին ազդեցություններից ու ներքին անկատարություններից:

Որքան էլ ջանք թափենք, մեր հնարավորությունները սահմանափակված են թողության շնորհի գործողության շրջանակներով: Եվ ես կասեմ, թե ինչպես կարող եք ընդլայնել մեր հնարավորությունները և ձեզ մոտեցնել մեր աշխարհը: Մենք կարող ենք գործել միայն այնժամ, երբ ֆիզիկական ոլորտում մաքուր հաղորդիչ ունենք, որն ունակ է փոխանցելու մեր էներգիաները: Ձեզնից յուրաքանչյուր ոք, որպեսզի դառնա նման հաղորդիչ, պետք է անցնի իր Ուղին և ձերբազատվի իր գույտ մարդկային կապվածություններից ու թերություններից:

Հենց որ ձեր շարքերում այդպիսի մի հաղորդիչ է հայտնվում, մենք սկսում ենք նրա հետ մեր աշխատանքը՝ ֆիզիկական ոլորտը վերափոխելու առումով, և ամեն ոք, ով մոտենում է մեր դեսպանորդին, ստանում է մեր էներգիան ու օգնությունը: Ոչ միշտ է, որ դուք կարող եք գիտակցել ընթացող գործընթացների էությունը: Իմ առջև այսօր նպատակ է դրված, որ ձեզ որոշ բաներ բացատրեմ:

Երբ փոխհարաբերության մեջ եք մտնում մեր դեսպանորդի հետ, դուք նրա ատրապից լրացուցիչ էներգիա եք ստանում ձեր ատուրայի ու մարմինների մեջ, և ձեր թրթիռները բարձրանում են այնքան ավելի շատ, որքան ավելի երկար եք հաղորդակցվում մեր դեսպանորդի հետ և նրա միջոցով է՝ մեզ հետ: Եվ ամեն անգամ, երբ լրացուցիչ էներգիայի չափաբաժին եք ստանում ձեր ատուրայի մեջ, այն ձեր միջից դուրս է մղում ողջ անկատարությունը՝ բազում մարմնավորումների ընթացքում ձեր ներսում կուտակված ողջ բացասականը: Ուստի ձեզ կարող է այնպես թվալ, թե դժվարությունները ձեր կյանքում ավելանում են, երբ գտնում եք մեր Ուսմունքը և փոխհարաբերությունների մեջ մտնում մեր դեսպանորդի հետ: Իրականում դուք պարզապես արագ եք ընթանում ձեր Ուղով, և ձեր առաջ հառնում են անցյալի ձեր իսկ կողմից ստեղծված բացասական էներգիաները, որի հետևանքով ձեր բացասական հատկանիշները սուր բնույթ են ստանում:

Մեր դեսպանորդի առանձնահատկությունն է ձեր կարմայի վերադարձը արագացնելը և ձեր թրթիռները բարձրացնելը: Ուստի մենք ասում և նախագուշացնում ենք ձեզ, որ նախքան հաղորդակցության մեջ մտնելը կամ, առավել ևս, աշակերտի պարտավորություններ ստանձնելը մանրագնին կշռադատեք, թե կկարողանա՞ք արդյոք դիմանալ ձեր կյանքում ծագած լրացուցիչ դժվարություններին և եղածի համար ոչ ոքի չմեղադրել, երբ գուրու-սան հարաբերության մեջ կմտնեք մեր դեսպանորդի հետ: Քանզի Տունդարձի ամեն մի քայլը կապված է դժվարությունների հետ:

Դուք ակնկալում եք հրաշք և երանություն: Հրաշք տեղի է ունենում: Ուղով ձեր առաջընթացն արագանում է, և եթե կարմայի բնականոն վերադարձի պայմաններում պետք է անցնեիք տասնյակ մարմնավորումների միջով, հիմա այն վերադառնում է մի քանի տարվա ընթացքում՝ կախված ձեր կարմայի ծանրությունից: Իսկ ինչ վերաբերում է երանությանը, ապա դրանում մշտապես գտնվելու հույս մի՛ կապեք, քանի դեռ չեք բեռնաթափել ձեր կարմայի առյուծի բաժինը:

Առանց ձեզ հետ տեղի ունեցող գործընթացների այս բացատրությունն ունենալու՝ ձեզ համար դժվար կլինի հասկանալ մեր դեսպանորդի պատմունքների ազդեցությունը, և դուք տիպիկ զգացողություններ կարող եք ապրել: Ամեն ինչ ձեզ համար պետք է լինի առավելագույնս հստակ: Այդ պատճառով մենք մատչելի ձևով բացատրում ենք ինչպես մեր դեսպանորդի պատմունքների ազդեցության, այնպես էլ թողության շնորհի ազդեցության մեխանիզմները:

Դուք մերձենում և որոշակի հարաբերությունների մեջ եք մտնում Լուսի էակների մի ողջ Հիերարխիայի հետ, որի երկրային ներկայացուցիչը մեր դեսպանորդն է: Եվ դա անում եք ձեր նախընտրանքով և ցանկությամբ: Առանց ձեր ազատ կամքի դրսևորման և Ուղով ընթանալու ձեր

ցանկության արտահայտման՝ դուք չեք կարող կանգնել Հիերարխիայի աստիճանի վրա: Ուստի մենք մանրամասնորեն ձեզ բացատրում ենք աստվածային հնարավորության գործողության բոլոր մեխանիզմները, որոնցով արագացվում է ձեր ընթացքն Ուղով: Արագ զարգացման այդ Ուղին անվանվել է Ձեռնադրումների Ուղի: Եթե հին ու բարի ժամանակներում այդ Ուղին մատչելի ու հասկանալի էր միայն եզակիներին, ապա այժմ եկել է այն ժամանակը, երբ աստվածային հնարավորությունը բաց է միլիոնավոր մարդկանց համար, որոնք ցանկություն կունենան արագորեն հաղթահարելու Էվոյուցիայի մնացյալ աստիճանները և անցում կատարելու Երկիր մոլորակի Էվոյուցիայի համար բացված նոր տիեզերական հնարավորությանը:

Կան այնպիսիները, որոնք պատրաստ են դրան, և կան այնպիսիները, որոնք ամբողջ ուժով դիմադրում են բարեփոխումներին: Ինչ արած, դա ձեր իրավունքն է ու ձեր ազատ կամքը: Բայց, ի տարբերություն մեր հետևորդների, դուք արգելակում եք Երկրի Էվոյուցիոն զարգացումը և ընդդիմադիր դիրք գրավում Աստծո Օրենքի նկատմամբ:

Ուզում եմ ձեզ հիշեցնել, որ համայն տիեզերքն Աստված է, և ինքներդ ձեզ կտրելով Աստծուց՝ դուք ձեզ դատապարտում եք այն խաշամի կարգավիճակին, որը զարնան ինքներդ վառում եք ձեր ամառանոցային հողամասում կամ բանջարանոցում:

Եթե համայն տիեզերքը չձերբազատվի տիեզերական աղբից, չի կարող հետագա զարգացում ունենալ: Նույն գործընթացը տեղի է ունենում նաև ձեր օրգանիզմում: Եթե միջոցներ չձեռնարկեք կուտակված աղբից ու թույլներից ազատվելու համար, ապա կհիվանդանաք ու կմեռնեք:

Աստված գործում է բանական էակների Հիերարխիայի միջոցով: Եվ մեր Հիերարխիայի ներկայացուցիչը մեր դեսպանորդն է: Ուստի վճռեք և գիտակից որոշում կայացրեք՝ կապված ձեր հետագա զարգացման հետ:

Միշտ չէ, որ ձեր ընդունած որոշումները ճակատագրական են լինում: Աստված ձեզ բազմազան հնարավորություններ է ընձեռում: Սակայն, երբ բանը հասնում է տիեզերական ժամկետներին, ցանկացած հետաձգում տրվում է մեծագույն դժվարությամբ:

Եթե նույնիսկ չեք կարող մինչև վերջ ընթանալ Ուղով, ապա ես ձեր փոխարեն չեի հրաժարվի կրկին փորձելուց: Իսկ, այժմ, Երկրի վրա այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց առկայության դեպքում մենք կկարողանայինք ձեզ փոխանցել մեր էներգիաներն ու ուսուցումը, ինչպես նաև մեր դեսպանորդի աշխատանքի համար պայմանների ստեղծումը ձեր անմիջական պարտականություններն են:

Միշտ հիշեք, որ մեր դեսպանորդի հետ ունեցած ձեր հարաբերությունից ելելով՝ Երկնությունները դատում են տիեզերական էակների Հիերարխիայի հետ ունեցած ձեր հարաբերության մասին, այն Հիերարխիայի, որը հայտնի է որպես Մեծ Սպիտակ Եղբայրություն կամ Լուսի Ուժերի Հիերարխիա:

Ձեր Ուղու ողջ ընթացքում մենք ձեզ հետ ենք: Ուստի մտորեք և կշռադատեք բոլոր «թեր» և «դեմ» կողմերը: Ձեզնից պահանջվում է, որ գիտակից որոշում ընդունեք՝ հետևե՞ք աստվածային Էվոյուցիային, թե՞ փորձեք գտնել ձեր ուրույն ճանապարհը:

Շա՛տ են դեպի Աստված տանող ճանապարհները, սակայն հնարավոր չէ միաժամանակ ընթանալ բոլորով:

Երբեմն, երբ փորձում եք գտնել ձեր բացառիկ ուղին և ընթանալ դրանով, առաջնորդվում եք սովորական մարդկային գոռոզամտությամբ: Բայց հիշեք, որ Ուղու վրա ձեր ունեցած գլխավոր հատկանիշը պետք է լինի խոնարհությունն ու Աստծո Կամքին հնազանդ լինելը: Դուք փորձում եք գտնել ձեր հատուկ ուղին, քանի դեռ ձեր գիտակցության մեջ ինքներդ ձեզ առանձնացնում եք Աստծուց: Այն դեպքում, երբ գիտակցում եք Կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ ձեր միասնականությունը, այլևս դադարում եք վիճել, դեսուդեն ընկնել և ի վերջո հասնում եք երանության այն վիճակին, որին նախկինում երբեք չէիք կարողացել հասնել:

Դուք բոլորդ կգաք առ Աստված: Իսկ մենք ընդամենը ձեզ ցույց ենք տալիս ամենակարճ և հազարամյակներով փորձված Ուղին:

ԵՄ ԵՄ Բարաշին՝ ձեր նկատմամբ Միրով ու հոգածությամբ լի

Ընտրություն կատարելու ժամանակը

ԵՍ ԵՄ Համբարձյալ Վեհապետ Նիկողայ Ռերիխը՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ իմ ու ձեր հաղորդակցության երկարատև ընդմիջումից հետո: Այդ ընդմիջումը կապված էր այն բանի հետ, որ իմ նախորդ թելադրություններում ես տվել էի որոշակի ցուցումներ ու նպատակաուղղել դեպի Ռուսաստանի ապագան, և համբերությամբ սպասում էի, որ Ռուսաստանի բնակիչները կարձագանքեն իմ կոչին: Ցավով պետք է արձանագրեմ, որ ներկայիս ռուսաստանաբնակներից շատ քչերն ի սրտե ընկալեցին իմ կոչը: Շատերը սոսկ կարդացին ու մոռացան, որոշներն էլ պարզապես ներքուստ մեղադրանքներ հյուսեցին: Ես եկել եմ ևս մեկ փորձ կատարելու, որպեսզի ձեզ հասու դարձնեմ այն Ուսմունքի բուն էությանը, որը կապված է Ռուսաստանի մեծ ապագայի հետ: Դուք կարող եք չհավատալ, բայց այդ երկրի համար առկա է Աստծո պլան, և, ուզեք թե չուզեք, այդ պլանը պետք է ի կատար ածվի:

Մենք գալիս ենք, որպեսզի արթնացնենք մարդկանց ներկա սերնդին և նրան մղենք մեր այն պլանների իրագործումը, որոնք վերաբերում են այս մեծ երկրին: Դրանից չի հետևում, որ մենք քարոզում ենք ռուս ազգի բացառիկությունը: Այլ միայն հետևում է, որ երկրի վրա պետք է լինի մի կետ, որտեղից իրենց տարածումը ստանան այն նոր մտածողությունն ու գաղափարախոսությունը, որոնք երկրային չափանիշներով շատ մոտ ապագայում տիրապետող կդառնան աշխարհում: Այդ գաղափարախոսությունը կապված չէ քաղաքականության կամ ֆիզիկական ուրրտում ինչ-որ պլանների իրագործման հետ: Այդ գաղափարախոսությունը կապված է մատերիայի մեջ Ոգու էջքի հետ: Դա այն գաղափարախոսությունն է, որն ուսուցանում էին անցյալի մարգարեները: Եվ եթե նախկինում մարդիկ պատրաստ լինեին իրենց գիտակցությամբ ընկալելու և լայնորեն տարածելու Աստծո ճշմարտությունը, ապա ամեն ինչ տեղի կունենար մի քանի հարյուրամյակ առաջ: Միայն անհավատ մարդկանց միջոցով գործող խավարի ուժերի դիմադրության պատճառով է, որ ժամկետները ձգձգվել են:

Եվ ահա այժմ մենք ասում ենք, որ ժամանակը հասել է, և Ռուսաստանի մեր դեսպանորդը պատրաստ է Մտահղացվածի կենսագործմանը: Բանը միայն ձեր օժանդակության մեջ է: Միայն ձեր օգնության ու օժանդակության բացակայությունն է, որ ետ է պահում մեր պլանների էջքը:

Մենք անմիջապես գործի կանցնենք, հենց որ ասպարեզ գան այն նախապատրաստված սրտերը, որոնք ունակ կլինեն դիմանալու Երկնային Հրին: Եվ հենց որ մենք սկսենք գործը Ռուսաստանում, հետաքրքրություն կծագի ողջ աշխարհում: Նմուշօրինակ է պետք: Անհրաժեշտ է սկսել:

Նոր գաղափարախոսությունն արդեն պատրաստ է իջանելու: Բայց ծննդյան չարչարանքները երկար տևեցին: Ուր որ է կծնվի և Երկիր կիջանի նոր գիտակցությունը:

Մենք անհամբերությամբ սպասում ենք այդ պահին:

Ձեր մտածողությունը կապված է ֆիզիկական աշխարհի հետ և չի կարող իր մեջ ներառել այն հնարավորությունները, որոնք ձեզ համար նախապատրաստում է Երկինքը: Ձեզ միայն անհրաժեշտ է հավատալ մեր գոյությանը, հավատալ այն բանին, որ Երկնային բոլոր Դասերը պատրաստ են ձեզ օգնելու: Մենք ձեր կանչին ենք սպասում ու ձեր պատրաստ լինելուն:

Արթնացե՛ք խոր քնից... Վե՛ր կացեք ու գործի՛ անցեք...

Հերի՛ք է քնեք, պարապ պառկելու և կողքից կողք շուռ գալու ժամանակը չէ...

Ռուս ժողովուրդը միշտ էլ ծանրաշարժ է եղել, քանի դեռ գործի անցնելու թունդ գրգիռ չի ստացել: Մենք գալիս ենք, որպեսզի արթնացնենք ձեր քնած միտքը, նոր խթան տանք ձեր գիտակցության զարգացմանն ու նպատակասլաց գործունեությանը՝ ուղղված աստվածային նպատակահարմարության սկզբունքներով ձեր աշխարհի վերափոխման գործին:

Ամբողջ դժվարությունն այն է, որ ձեր գիտակցությունն ինչ որ մի արտաքին խթանի կարիք է զգում, արտաքին մի կազմակերպության կամ դեկավարի կարիքը: Սակայն այս անգամ Երկնությունները ողջ հույսը կապում են նոր տիպի դեկավարի ի հայտ գալու հետ: Եվ այդ դեկավարը կլինի ձեր սեփական Բարձրագույն Ես-ը: Ձեզնից պահանջվում է միայն ականջալուր լինել ձեր իրական մասի ձայնին: Չգալ Բարձրագույն աշխարհների հպումը: Վե՛րջ տվեք ձևացնելուն, թե դուք ոչինչ չեք լսում ու չեք զգում: Մենք ամեն օր ջանում ենք ձեզ արթնացնել... Մենք նշաններ ենք տալիս և զարկում զանգերը...

Զանգերի դողանքով հնչում է մեր կոչը ողջ Ռուսաստանով մեկ:

Գործելու ժամը հասել է... Եվ որքան էլ ձեր արտաքին գիտակցությունը հեռու մղի աստվածային գործողությունների անհրաժեշտության մասին միտքը, ամեն դեպքում ստիպված կլինեք սկսել:

Ձեր բոլոր գործողությունները պետք է հիմնվեն ներքին խորը համոզմունքի վրա: Եվ իրենց հիմքում պետք է ունենան կատարյալ անշահախնդիր, ձեր սրտից բխած շարժառիթ: Ձեր ամեն մի կապվածությունն ու վատ սովորությունը ձեզ կխանգարեն: Անջատե՛ք ձեր գիտակցության մեջ ֆիզիկականը, նուրբ աշխարհի ստորին շերտերից կապվածությունը բարձրագույն գիտակցությունից:

Առաջ մղվող յուրաքանչյուրի արտում այդ բաժանումը պետք է տեղի ունենա: Ամբողջ մարտն ու հաղթանակը ձեր ներսում են ամփոփված: Արմագեդոնը ձեր սրտերում է տեղի ունենում: Նաև որոմը հատիկից ջոկելու գործընթացն է ընթանում ձեր սրտերում: Եվ ինքներդ եք ձեր դատավորը, երբ վերջնական ընտրություն եք կատարում անմահության և մահվան միջև, որը կապված է ձեզ շրջապատող, ձեր մարմնական մտքերից ու զգացմունքներից կազմված ողջ հնի հետ:

Մենք ձեզ կանչում ենք դեպի աստվածային գիտակցության լեռնագագաթները: Հերի՛ք է քնեք... Ոգեկոչվե՛ք վերջապես... Կյանքի ու մահվան կռիվ է գնում: Կռիվ է գնում ամեն մարդու, ամեն հոգու համար, որն այժմ մարմին է առել: Իսկ դուք ձեզ համար հանգիստ քնած եք...

Ֆիզիկական ոլորտի ձեր բոլոր գործողությունները ճշգրտման կարիք են զգում ձեր սրտերին պահ տրված ներքին կողմնացույցի միջոցով: Ուշք մի՛ դարձրեք ձեզ շրջապատող կյանքի հանգամանքներին: Բոլոր այդ հանգամանքները շուտով փոփոխության կենթարկվեն: Աստված կփոխի ձեր ողջ կյանքը և կյանքի բոլոր հանգամանքները: Հենց որ ձեր էության առաջատուն ընտրի ճիշտ ուղղություն, մենք կապահովենք թարմ քամի, և դուք ճիշտ ուղղությամբ կկարողանաք ընթանալ այնպիսի արագությամբ, որի մասին հին ժամանակների մարգարեներն ու պայծառատեսները չէին էլ երագել: Ահա ասում եմ ձեզ. «Առջևում նոր հնարավորություններն են»:

Եվ հիմա Երկինքը միայն ձեր ընտրությանն է սպասում և ձեր գործելու ունակությանը:

Աստվածային հնարավորությունը բաց է Ռուսաստանի համար և նրա միջոցով նաև մնացյալ աշխարհի համար:

Եվ այդ հնարավորությունը կապված է նոր գիտակցության հետ, որով պետք է փոխարինվի հին գիտակցությունը:

Ամեն ինչ կփոխվի ձեր շուրջը, հենց որ փոխեք ձեր նպատակամղման վեկտորի ուղղությունը, հենց որ կատարեք ձեր ընտրությունն ու մղվեք դեպի Աստվածայինը՝ դեն նետելով ձեր նախկին կապվածությունների հնոտիները:

Ես ձեզ կանչում եմ դեպի Ուղին... Ես ցույց եմ տալիս ուղղությունը: Սպասում եմ յուրաքանչյուրիդ, ով մղվածություն ունի:

Ես պատրաստ եմ օգնության ձեռք մեկնելու, որպեսզի պաշտպանեմ ձեզ Ուղու ամենավտանգավոր մասերում: Եվ նույնը պատրաստ եմ անելու բոլոր Համբարձյալ Վեհապետները, որոնք շունչները պահած հետևում են, թե ի՞նչ ընտրություն կանեք և ո՞ր ուղղությամբ կընթանաք:

Գտնվում եք ձեր Ուղու բեկումնային կետում: Մի՛ վրիպեք և մի՛ տրվեք ևս հարյուր տարի առանց Լույսի թափուտներում դեգերելուն:

Ես ձեզ հետ հույսեր եմ կապում:

ԵՄ ԵՄ Նիկոլայ Ռերիխը

Վեհապետ Լանելլո
2 հուլիսի, 2007 թ.

Չրույց կարմայի Օրենքի մասին

ԵՄ ԵՄ Լանելլոն՝ մեր դեսպանորդի միջոցով այս օրով ձեզ այցի եկածը:

Ինչպես միշտ, ես ուրախ եմ մեր հանդիպման համար. և, ինչպես միշտ, մեր հանդիպումը կայանում է այն հսկայական Միտո նշանի ներքո, որ ես տածում եմ Երկրի մարդկության նկատմամբ՝ ձեր նկատմամբ, իմ եղբայրներն ու քույրերն, որ այժմ գտնվում եք մարմնավորման մեջ:

Գիտակցության իմ այսօրվա համբարձյալ վիճակից իմ կյանքի շատ դրվագներ, երբ ես մարմնավորվել էի որպես Մարկ Փրոֆեր, երևում են ինչպես ժամանակի և ուժերի անտեղի վատնում: Երբ գիտակցությունը ձերբազատվում է զուտ մարդկային հույզերից ու կապվածություններից, շատ բաներ ու հանգամանքներ բոլորովին այլ կերպ են երևում: Եվ այն դեպքերում, երբ գիտակցության բացասական վիճակներ կունենաք, խնդրում եմ, վերադարձե՛ք իմ

այս թելադրությանը և այն նորից ընթերցե՛ք: Որովհետև ձեզ հետ տեղի ունեցող ամեն ինչի վրա ձեր գիտակցությունն իր զգալի հետքն է թողնում: Եվ ամեն անգամ, երբ անդրադառնում եք ձեր կյանքի միևնույն իրադարձություններին, այլ կերպ եք վերագնահատում դրանք, որովհետև ձեր գիտակցությունը փոխված է լինում: Ահա հենց գիտակցության այդ փոփոխությանը դուք պետք է հետևեք ձեր կյանքի ընթացքում, որպեսզի հասկանաք, թե ինչպես է ձեր գիտակցության մակարդակը կապված այն ամենի հետ, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում:

Ձեր կարման, որպես անցյալում ձեր կողմից ոչ ճիշտ օգտագործված Աստծո էներգիա, անխուսափելիորեն վերադառնում է ձեզ: Եվ եթե զինված եք գիտելիքով ու հասկանում եք, որ ձեր կյանքում տեղի ունեցող ամեն ինչի պատճառը թաքնված է հենց ձեր այս կամ նախկին մարմնավորման մեջ, ապա ձեզ համար անհամեմատ ավելի հեշտ է դառնում կյանքի հանգամանքներին դիմագրավելը, քան այն մարդկանց համար, որոնք ծանոթ չեն կարմայի Օրենքի գործողությանը: Այդ մարդիկ նմանվում են ոչ բանական էակների, որոնք խճճվել են իրենց իսկ ստեղծած հանգամանքներում և չեն կարողանում դուրս պրծնել այդ ցանցից: Ամեն մի ոչ ճիշտ շարժումն ավելի ու ավելի է ամրացնում նրանց ցածրորակ վիճակների կապանքները և դրանցով պարուրում իրենց: Իսկ երբ արդեն զգում են, որ ստեղծված վիճակից դուրս գալու ոչ մի ելք չկա, տառապակոծ հայացքները հառում են Երկնքին: Եվ վերջին հույսով բացվում է նրանց սիրտը: Ահա հենց այդ պահին նրանց միտքը հանկարծ պայծառանում է Բարձրագույն աշխարհի կանխագագացությամբ: Անցնում է ևս որոշ ժամանակ, և մարդը սկսում է մտորել այն մասին, որ կա Բարձրագույն Օրենք, որով ղեկավարվում է իր ողջ կյանքը:

Իհարկե, շատ մեծամիտ պետք է լինեիք, որպեսզի համարեիք, թե ձեր կյանքում ամեն ինչ ինքներդ եք անում և ղեկավարում ինքներդ ձեզ: Դուք ձեր կյանքը կառավարում եք այնքանով, որքանով թույլ է տալիս Աստծո Օրենքը:

Մի՛ կարծեք, թե կկարողանաք անվերջ ու անվերահսկելիորեն օգտագործել Աստծո էներգիան ձեր ստորին մարմինների քմահաճությամբ ու կրքերը բավարարելու համար: Երբ կարմայի թասը բերնեբերան լցվում է ձեր անցյալի բացասական արարմունքների հետևանքով, անխուսափելի հաստատունությամբ դուք հետ եք ստանում ողջ այն էներգիան, որը ճիշտ չեք օգտագործել: Դուք ձեր կյանքում բախվում եք այն խնդիրներին, որոնց սկզբնավորողը հենց դուք եք եղել անցյալում: Եվ հենց որ սկսում եք գիտակցել, որ ձեր կյանքում տեղի ունեցող ամեն ինչի սկզբնավորողը դուք ինքներդ եք եղել, հենց որ դադարում եք բողոքել ճակատագրից և ձախորդությունների ու դժբախտությունների համար մեղադրել ուրիշներին, հենց որ ունակ եք դառնում մեղա գալու և թեթևացնելու ձեր սիրտն ապաշխարանքով, ապա կարմայի մամլիչը թուլացնում է իր սեղմակները, և դուք կարողանում եք նորովի նայել աշխարհին, ինքներդ ձեզ ու աշխարհում ունեցած ձեր դիրքին:

Այս շատ պարզ Օրենքի իմացությունը բավականին թեթևացնում է ձեր կյանքը: Քանզի Օրենքի գործողության օրինակներով դուք ուսում եք առնում: Եվ ունակ եք դառնում ճիշտ վերաբերմունք դրսևորելու այն ամենի նկատմամբ, ինչին բախվում եք ձեր կյանքի ընթացքում: Եվ երբ ճիշտ եք ընկալում կյանքի դասերը, դրանով իսկ անցնում եք ձեր թեստերն ու փորձությունները և բեռնաթափում ձեր իսկ ստեղծած բացասական կարման:

Որքան ավելի գիտակցորեն մոտենաք ձեր կյանքի հանգամանքներին, այնքան ավելի հեշտ կապրեք: Եվ եթե ախտորոշումը գիտեք, ապա ճիշտ բուժում կստանաք, որով և կթեթևացնեք ձեր վիճակը:

Հավատացե՛ք, ձեր գիտակցության վիճակով են որոշվում ձեր կյանքի հանգամանքները: Դրանք անխուսափելիորեն փոխվում են, երբ փոխում եք ձեր գիտակցությունը: Ուստի ձեզնից նրանց, ովքեր հետևում են մեր կողմից ուսուցանվող Ուղուն, ես խորհուրդ կտայի, որ սովորեն շատ արագ փոխել իրենց կյանքի բոլոր հանգամանքները, որոնցով շրջապատված են: Եթե դուք երեկ, այսօր և վաղը ձեր կյանքում ոչ մի փոփոխություն չեք նկատում, ապա դա միանշանակ խոսում է այն մասին, որ ձեր գիտակցությունը չի փոխվում: Այն դեպքում, երբ կանգնում եք աշակերտելու Ուղու վրա և հաստատականորեն ընթանում եք դրանով, ձեր կյանքում ամեն ինչ սկսում է փոխվել կայծակնային արագությամբ: Եվ ձեզնից պահանջվում է ունենալ ընդամենը մի հատկանիշ, այն է՝ հանգիստ ընդունել բոլոր փոփոխությունները և գիտակցել, որ բոլոր թե՛ լավ, թե՛ վատ փոփոխություններն ի հայտ են գալիս ճիշտ այն հաջորդականությամբ, որով պետք է որ ի հայտ գային՝ ըստ Կարմայի անբեկանելի օրենքների:

Ձեր կյանքի հանգամանքներն ու դժվարությունները ուղղակիորեն կապված են անցյալի ձեր իսկ կողմից կատարված գործողությունների հետ: Ուստի չեք կարող դժգոհել ո՛չ ձեր կողակցից, ո՛չ ձեր զավակներից, ո՛չ պետից, ո՛չ էլ ընկերներից ու ծանոթներից: Քանի որ բոլոր հետևանքները դուք ինքներդ եք սկզբնավորել այն պահերին, երբ ձեր սխալ գործողություններով կուտակել եք ձեր կարման:

Այս պարզ ճշմարտության գիտակցումն ու Օրենքի հետ համակերպվելը ձեզ հնարավորություն է տալիս այսուհետև գործելու համաձայն այդ Օրենքի և նոր կարմա չստեղծելու:

Նաև լիովին սկսում եք գիտակցել, որ եթե ձեր ոչ ճիշտ արարքները բացասական կարմա են ստեղծում, ապա ձեր աստվածահանո և ճիշտ արարքները նույնպես կարմա են ստեղծում, բայց բարի կարմա: Եվ ձեր բարի ու բացասական կարմաների հարաբերակցությունը ձեզ հնարավորություն է տալիս, օգտվելով թողության շնորհներից, Վեհապետների պարզևած աստվածային ողորմածություններից, կարգավորելու կարմայի վերադարձի գործընթացն ու կառավարելու այն:

Ճակատագրի կույր գործիքից կարման վերածվում է ձեր օգնականի և Ուսուցչի:

Այնժամ, երբ Աստծո ճշմարտությամբ այնքան եք պարուրվում, որ ձեր կյանքի յուրաքանչյուր արարքը դիտարկվում եք՝ կարմայի Օրենքից ելնելով, դուք հասկանում եք, որ ազատվում եք այդ Օրենքի ազդեցությունից և ձեռք եք բերում իրական աստվածային Ազատություն:

Ճիշտ այդպիսի համանմանություն է առկա ձեր աշխարհում: Եթե ենթարկվում եք հասարակության մեջ գործող օրենքին, ապա ազատություն եք վայելում. իսկ եթե ուզում եք խախտել օրենքը, ապա վաղ թե ուշ հայտնվում եք բանտում և ստիպված եք լինում պատիժ կրել:

Դուք բոլորդ գտնվում եք մատերիայի բանտում: Եվ ձեր ազատությունը կստանաք միայն այնժամ, երբ կյուրացնեք Աստծո Օրենքը և ձեր կյանքում կառաջնորդվեք դրանով:

Ես երջանիկ եմ, որ կարողացա ձեզ մի փոքր բացատրել կարմայի Օրենքի գործողությունը: Եվ անկեղծորեն հույս եմ տածում, որ իմ այս գրույցն օգտակար կլինի բոլորիդ համար:

ԵՄ ԵՄ Լանդլոն

Տեր Հիսուս
3 հուլիսի, 2007 թ.

Ուսմունք դարաշրջանների հերթագայման մասին

ԵՄ ԵՄ Հիսուս՝ ձեզ այցի եկածը:

Ես այսօր երջանիկ եմ ձեզ հերթական Ուսմունքը տալուս համար, որը, հավանաբար, ծանոթ է ձեզ, բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ է այն ձեզ նորից հիշեցնել:

Մարդկային գիտակցությունն այնքան շարժուն է և այնքան աննկատելիորեն է խույս տալիս մեր խրատներից, որ մենք չենք դադարում ջանքեր գործադրել, որպեսզի ձեզ վերադարձնենք ձեր առաքելությանը և հիշեցնենք ձեր Սկզբնաղբյուրի մասին:

Դուք ձեր աշխարհ եք մուտք գործել միլիոնավոր տարիներ առաջ: Մուտք եք գործել, որպեսզի անցնեք Էվոյուցիայի անհրաժեշտ աստիճանները և անգնահատելի մարդկային փորձ ձեռք բերեք: Եվ երբ ֆիզիկական աշխարհում սկսեցիք ձեր ուղին, նման էիք մանկահասակ երեխաների: Իսկ հիմա հասունացել եք: Եվ ինչպես երեխաներն են նոր աշխարհ գալիս դեռևս հիշում իրենց առաքելության մասին և հասուն դառնալուց հետո մոռանում, այնպես էլ դուք եք մոռացել, թե ինչու էիք մուտք գործել ձեր աշխարհ:

Այս ճշմարտությունը, որը միլիոնավոր տարիներ ի վեր մենք ուսուցանում ենք, շատ պարզ է: Սակայն դուք մեզնից ինչ-որ շատ բարդ բանի ակնկալիք ունեք: Ձեր միտքն անխոնջ կերպով նորանոր անլուծելի խնդիրներ է փնտրում ձեր աշխարհում: Ձեր զգացմունքները փորձում են ձեր աշխարհում փոխարինող փնտրել այն հրաշալի ապրումներին, որոնք հատուկ են Աստծո աշխարհի հետ հաղորդակցությանը:

Դուք անվերջ շարունակում եք ճշմարտություն փնտրել ձեր աշխարհում: Սակայն ես եկել և ահա ասում եմ՝ ձեր աշխարհում ճշմարտություն չկա: Ձեր աշխարհը ստեղծված է որպես մի հսկայական թատերաբեմ, որպեսզի այնտեղ փորձ ձեռք բերեք և ապա լքեք այն:

Երբ մանկապարտեզ եք մտնում, դարակներից խաղալիք եք վերցնում ու խաղում: Բայց երբ մեծանում ու լքում եք մանկապարտեզը, երեխա ժամանակվա ձեր խաղալիքներն արդեն ձեզ համար հետաքրքիր չեն լինում:

Այժմ եկել է ձեր երկրային դպրոցը լքելու ժամանակը, և դուք պետք է ելնեք Էվոյուցիոն զարգացման ավելի բարձր աստիճանի վրա: Այդ աստիճանին այլևս չեն սազի այն անկատարությունները, որոնցով իր զարգացման ընթացքում մարդկությունը հասցրել է ծանրաբեռնել ինքն իրեն: Ուստի այդ աստիճանին կկարողանան հասնել միայն ձեզնից նրանք, ովքեր իրենց կյանքն ամբողջովին կենթարկեն Աստծո Օրենքին: Դպրոցում ձեր սովորելու որոշակի ժամանակահատվածում ձեզ թույլ է տրվում զանազան չարություններ անել, սակայն

մատնանշվում են նաև ճիշտ պահվածքի ձևերը: Մանկավարժության մեջ հայտնի է մի սկզբունք, համաձայն որի՝ անհատը միայն այն ժամանակ է յուրացնում գիտելիքը, երբ ունակ է դառնում կիրառելու այն: Ուստի և ձեզ հնարավորություն է տրվում աստվածային գիտելիքն ստանալ և այն կիրառել գործնականում:

Ոմանք ավելի հաջող են յուրացնում աստվածային գիտությունը, ոմանք էլ դեռ չեն կարողացել հասկանալ դրա հիմնադրույթները: Սակայն բոլորդ պետք է ավարտեք երկրային դպրոցը: Եվ ձեզնից ամեն ոք պետք է ցուցադրի հետագա ուսում ստանալու իր պատրաստակամությունը:

Մենք խոսում ենք ճիշտ կերպերի, այն կերպերի մասին, որոնք բնորոշ են այն աշխարհին, ուր պետք է փոխադրվեք: Դուք չեք կարող փոխադրվել հաջորդ դասարան, քանի դեռ չեք յուրացրել նախորդ դասարանի ծրագիրը: Ուստի ձեզնից պահանջվում է, որ դրսևորեք այնպիսի որակներ, որոնք բնորոշ են Աստծո աշխարհին: Աստիճանաբար պետք է հրաժարվեք այն բոլոր բացասական որակներից, որոնք ձեռք եք բերել ձեր երկրային էվոլյուցիայի ընթացքում: Միայն ինքներդ կարող եք հիմն ու իր դարն ապրածը փոխարինել նորով՝ որոշակի նախընտրանքներ իրականացնելով ձեր կյանքում:

Ամեն ինչ իրար է խառնված ձեր կյանքում՝ լավն ու վատը, աստվածայինն ու ոչ աստվածայինը: Միայն ինքներդ կարող եք կարգ ու կանոն մտցնել ձեր աշխարհում՝ հրաժարվելով անաստված դրսևորումներից և մղվելով դեպի Աստված: Մենք ձեր փոխարեն դա չենք կարող անել: Մենք կարող ենք տալ հանձնարարականներ, տալ մեր Ուսմունքը, բայց ինքներդ պետք է գործնական քայլերով ամրապնդեք ստացված տեսական գիտելիքները:

Մի՛ կարծեք, թե շատ ժամանակ ունեք: Օր օրի ձեր աշխարհի վիճակը վատթարանում է: Ֆիզիկական ոլորտի թրթռանքները ստիպողաբար բարձրացվում են, և դուք հայտնվում եք թեստային պայմաններում, երբ ձգտում եք վերադառնալ վարքի սովորական կարծրատիպերին. սակայն այն, ինչ նախկինում ձեզ հաճույք էր պատճառում, արդեն դադարում է ձեզ գրավել: Դուք չեք կարողանում հասկանալ, թե նախկինում ձեզ համար դուրեկան բաներն ինչու՞ այլևս ձեզ չեն բավարարում: Դուք շարունակում եք ձեր կյանքում առաջնորդվել վարքի հին կարծրատիպերով, բայց և գիտակցում եք, որ այդ ամենն արդեն գուրկ է որևէ իմաստից:

Անհրաժեշտ է, որ ձեր վարքը համապատասխանեցնեք ֆիզիկական ոլորտի բարձրացող թրթռանքներին, այլապես դուքս կմնաք տարածությունից ու ժամանակից և չեք կարողանա շարունակել ձեր էվոլյուցիան:

Միայն այն ձեզ հաճույք կպատճառի, ինչն ունակ է վեր հանելու ձեր գիտակցությունը: Իսկ այն, ինչն իջեցնում է ձեր թրթռները, ձեզ զզվանք ու տհաճություն կպատճառի:

Իհարկե, ոչ բոլորն են ունակ գիտակցելու, թե ինչ է տեղի ունենում: Սակայն մարդկանց մեծամասնության համար արդեն հասկանալի է դառնում, որ ո՛չ ակոհողը, ո՛չ շրջակա տարածքը փլեցնող ծանր ռոք երաժշտությունը, ո՛չ էլ նախկին զբաղմունքներն այլևս բավարարվածություն չեն տալիս: Նորի փնտրտուքն ավելի ու ավելի է շատանում:

Ձեզ տրվում են հանձնարարականներ, թե ինչպես ձեզ պաշտպանեք այն ամենից, ինչը հանգեցնում է թրթռների անկման: Այնժամ, երբ ունակ կլինեք ձեր կյանքը լցնելու աստվածային կերպերով, կկարողանաք բավարարվածություն ու ներդաշնակություն զգալ: Իհարկե, ոչ բոլոր մարդիկ ունակ կլինեն մղվելու դեպի ճշմարիտ կերպերը: Եվ դա բնական ու օրինաչափ փուլ է, երբ միաժամանակ գոյություն կունենան մարդիկ, որոնք իրարից այնքան կտարբերվեն թրթռներով, որ փողոցում հանդիպելիս իրար այլամոլորակայինի տեղ կդնեն:

Լավի ու վատի խառնվածությունը Երկրի վրա պետք է աստիճանաբար վերացվի: Աստծո աղացում տեղի է ունենում հատիկը որոմից ջոկելու գործընթաց:

Եվ հենց այդ ժամանակներում եք դուք ապրում: Ուստի ձեզ համար շատ ծանր է: Սակայն այդ գործընթացը ևս ունի իր սկիզբն ու վերջը, ինչպես ամեն ինչը ֆիզիկական աշխարհում:

Օրինաչափ է և այն գործընթացը, երբ Երկրի վրա սկզբում ձևավորվում են գոտիներ, որտեղ ապրող մարդիկ նոր գիտակցություն ու նոր մտածողություն ունեն. այնուհետև նման գոտիների քանակն ավելի ու ավելի կշատանա: Աստիճանաբար Երկիրը կազատվի այնպիսի վայրերից, որտեղ գերակշռում են ցածր թրթռանքները: Ժամանակի ընթացքում ջուրն ու հուրը երկրի երեսից կարբեն այն վայրերը, որտեղ կենտրոնացած կլինեն հին մտածողության ու ցածր թրթռների կրողները:

Երկրագնդի նոր վայրերն իրենց գիրկը կընդունեն նոր ռասայի ներկայացուցիչներին, որոնք արդեն հայտնվում են մոլորակի վրա:

Այժմ այնպիսի բարդ ժամանակ է, երբ բառացիորեն ամեն մարդ իր նախընտրանքով զգալիորեն փոխում է Երկրի մոլորակի իրավիճակը:

Մենք ձեզ տալիս ենք մեր օժանդակությունն ու օգնությունը: Համբարձյալ Վեհապետների աշխարհի և ձեր աշխարհի միջև երբեք այսպիսի սերտ համագործակցություն չի եղել: Մենք

սպասում ենք, թե երբ Երկրի իրադրությունն այնքան կփոխվի, որ վերջապես կարողանանք ձեզ այցի գալ որպես հյուր և տալ մեր խրատներն անմիջականորեն՝ առանց միջնորդների: Եվ դուք ինքներդ եք այդ պայմանները ստեղծում՝ փոխելով ձեր գիտակցությունն ու ձեզ վրա փորձելով նոր հագուստ, այնպիսի մաքուր հագուստ, որը գործված է ձեր կատարյալ մտքերով ու զգացմունքներով:

Ես եկա և ներկայացա որպես ձեր այն ավագ եղբայրներից մեկը, որոնք արդեն ավարտել են երկրային դպրոցն ու համբերությամբ ձեզ են սպասում Լինելիության բարձրագույն ոլորտներում:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր ավագ եղբայրը

Վեհապետ Կուրթումի
4 հուլիսի, 2007 թ.

Ուսմունք ձեր ստորին մարմինները մաքուր պահելու անհրաժեշտության մասին

ԵՍ ԵՄ Կուրթումին՝ Երկրի մարդկանց հերթական ուղերձ տալու նպատակով կրկին եկածը:

Ես այսօր եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ ձեր պարտքի մասին: Ձեզնից շատերը նախքան մարմնավորվելը նուրբ ոլորտի մեր դպրոցներում ու աշրամներում հատուկ ուսուցում են անցել:

Դուք հաճախել եք մեր պարապմունքներին և պատրաստվել ձեր առաքելությանը: Ձեզնից շատերը պատանեկության տարիներին դեռևս աղոտ հիշողություններ էին պահպանում աշխարհի համար ինչ որ բան անելու անհրաժեշտության մասին: Ձեր սրտերը վառվում էին Սպասավորության բոցով, սակայն շրջապատում ոչինչ ձեզ չէր հիշեցնում ձեր պարտքի մասին:

Եվ ահա ես եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ ձեր մարմնավորման նպատակը: Առօրեական ողջ ունայնությունը պետք է մղվի երկրորդ պլան: Պետք է կարողանաք ձեր կյանքում ճիշտ դասավորել գերապատվությունները: Կա գլխավորը, և կա երկրորդականը: Կան հավերժի խնդիրներ, կան տվյալ մարմնավորմանը վերաբերող խնդիրներ, և կա օրվա ունայնությունը: Այնժամ, երբ օր օրի, տարեցտարի թույլ եք տալիս, որ օրվա ունայնությունը տիրի ձեզ, ապա ձեր զգայարանները կորցնում են նուրբ աշխարհին ընկալելու կարողությունը, դուք ձեր գիտակցությունը լցնում եք այնքան մեծ քանակի անպետք տեղեկություններով, որ այլևս ունակ չեք լինում առանձնանալու և հայտնվելու մեր աշխարհի անդորրության մեջ:

Դուք չափազանց զգայուն էակներ եք: Ձեր նուրբ մարմինները, երբ համալարված են Բարձրագույն աշխարհների հետ, նման են Ստրադիվարիուսի ջութակի: Սակայն ձեզնից շատերը գերադասում են այդ ջութակն օգտագործել մեխա խփելու համար: Պատկերացնում եք Ստրադիվարիուսի ջութակը... Մարդկանց շատ սերունդներ են զմայլվել դրա կախարհիչ հնչյուններով: Ձեզ սովորեցնում են գնահատել այդ, հիրավի, արվեստի ստեղծագործության արժեքը: Բայց ինչու՞ եք ինքներդ ձեզ ավելի ցածրարժեք համարում, քան ջութակն է: Դուք նուրբ աշխարհի էներգիաների անհամեմատ ավելի լավ փոխանցիչ եք: Դուք ունակ եք Բարձրագույն աշխարհների էներգիաները փոխանցելու ձեր աշխարհ: Սակայն անհամեմատ ավելի մեծ հարգանքով ու ակնածանքով եք վերաբերվում ձեր աշխարհի անշունչ իրեղենին, քան ինքներդ ձեզ:

Ինքներդ ձեզ լսելու և ձեր ներսը մաքուր պահելու չկամությունը կապված է ձեր հոգեբանական խնդիրների հետ, որոնց հիմքում ընկած է ինքզինք չսիրելը: Դուք պետք է սիրեք ինքներդ ձեզ, բայց ոչ թե որպես ֆիզիկական մարմին, այլ որպես Երկրի վրա Աստծո դրսևորում: Դուք Աստծո մի մասնիկն եք, ուստի պետք է խնամք տածեք ձեր բոլոր մարմինների նկատմամբ և մաքուր վիճակում պահեք Աստծո դրսևորումը:

Ձեր բոլոր մարմինները ճիշտ խնամքի կարիք են զգում: Ձեր ֆիզիկական մարմինը պետք է ստանա ճիշտ և լիարժեք սնունդ: Եվ, որքան բարձր են սննդի թրթռիմները, այնքան քիչ սնունդ է ձեզ պետք:

Ձեր զգայական մարմինը պետք է սնվի Բարձրագույն աշխարհներից ստացված նուրբ էներգիաներով: Այն մշտապես նուրբ էներգիաներով սնուցվելու կարիքն ունի: Դուք ձեր զգայական մարմնի քաղցը փորձում եք հագեցնել այնպիսի փոխնակներով, ինչպիսիք են անորակ երաժշտությունն ու հեռուստահաղորդումները: Դուք աղոտոտում եք ձեր զգայական մարմինը՝ անընդհատ պահելով այն ձեր աշխարհում գոյություն ունեցող անբարենպաստ պայմանների ազդեցության տակ: Չանագե՞ք պաշտպանվել ամեն կողմից ձեզ հասնող ձայներից: Բավական է, որ օրվա մեջ մեկ ժամ ռադիո ունկնդրեք կամ հեռուստացույց դիտեք, որպեսզի ամբողջ մի ամսով ինքներդ ձեզ զրկեք Բարձրագույն աշխարհների հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

Մտորե՛ք այն մասին, թե ինչո՞վ եք ինքներդ ձեզ շրջապատում կյանքում: Որքա՛ն հեռու են այդ ամենի թրթռումները մեր աշխարհից:

Ձեր ըմպած մեկ փոքրիկ բաժակ սպիրտային խմիչքը կամ ծխած մեկ գլանակը մի քանի օրով ձեզ զրկում են բարձրագույն եթերային օկտավաներ հասնելու հնարավորությունից: Դուք ստիպված եք լինում մշտապես գտնվելու աստեղային ոլորտի մակարդակներում, քանի որ, ինչպես ճոպաններով, ձեր կործանարար սովորություններով ինքներդ ձեզ կապում եք դրանց:

Ուշադիր վերլուծե՛ք, թե ինչո՞վ եք ծանրաբեռնում ձեր մենտալային մարմինը: Որքա՛ն ժամանակ եք ծախսում փուչ օպերաների ու մարդկանց հետ անվերջ զրուցելու վրա: Մի՛ երկյուղեք ինքներդ ձեզ հետ դեմ առ դեմ մնալուց: Սովորե՛ք լսել լռությունն ու գմայլվել միայնությամբ:

Անհրաժեշտ է օրենսդրական միջոցներ ձեռնարկել նրանց դեմ, ովքեր փորձում են խլացնել աշխարհը զգգված ռիթմի հնչյուններով: Ռոք երաժշտության կամ ոչ ճիշտ կառուցված ռիթմով երաժշտության ամեն մի սիրահար իր շրջապատի շատ մդոնների տարածքում իջեցնում է միջավայրի թրթռումները: Նման խուլիգանությանը պետք է վերջ տրվի:

Եթե ձեր խմած մեկ բաժակ սպիրտային խմիչքը կամ ծխած մեկ գլանակը միայն ձեր ու ձեզ հետ ապրող մարդկանց թրթռումներն են իջեցնում, ապա դորդացող երաժշտությունն ազդում է հազարավոր մարդկանց վրա: Եվ եթե խմանալիք, թե այդ խուլիգանությունն ինչպիսի հետևանքներ է թողնում ձեր նուրբ մարմինների վրա, ապա առաջին բանը, որ կանեիք, ձեր զավակներին ընդմիջտ կարգելիք նման երաժշտություն լսելը:

Շատ պարզ միջոցներ կան, որոնք թույլ են տալիս արագորեն բարձրացնել ֆիզիկական ոլորտի թրթռանքները, և դրանցից մեկը բարձր հնչող երաժշտության արգելումն է:

Դուք նույնիսկ չեք կարող պատկերացնել, թե ինչպիսի ազդեցություն է գործում երաժշտությունը ձեզ վրա: Ամեն գիշեր ես մոտենում եմ իմ երգեհոնին և, Աստծով ոգեկոչված, նվագում հոգեզմայլ մեղեդիներ: Շատ քիչ է քանակն այն մարդկանց, որոնք գալիս են իմ մենաստանը, որպեսզի լսեն այդ երաժշտությունը: Եվ է՛լ ավելի քիչ են նրանք, ովքեր կարող են արթմնի վիճակում վերարտադրել այդ երաժշտությունը, նոտագրել ու նվիրել աշխարհին:

Ա՛խ, որքա՛ն կուզենայի, որ Բարձրագույն աշխարհի հետ համահնչունությունը ձեզ մատչելի դառնար այն երաժշտության միջոցով, որը ես նվագում եմ իմ երգեհոնով:

Եվ եթե օրվա ընթացքում դուք ձեզ վրա կրել եք ձեր ահավոր երաժշտության ազդեցությունը, եթե նույնիսկ ականջի ծայրով լսել եք այն տրանսպորտում կամ խանութում, ապա այդ օրվա գիշերը դուք չեք կարողանա բարձրանալ այն օկտավաները, որտեղ լսվում է իմ երգեհոնի ձայնը:

Դուք ինքներդ եք ձեզ սահմանափակում: Հարկ է, որ հիշեք ձեր առաքելությունը և միջոցներ ձեռնարկեք, որպեսզի ինքներդ ձեզ մաքրեք այնքան, որ հնարավոր դառնա այն առաքելության իրագործումը, որի համար մարմնավորվել եք: Դուք ամեն ինչ մոռացել եք, և ձեր այդ մոռացկոտության մեղավորը հենց ինքներդ եք, քանի որ հարկ եղած խնամքը չեք տաժում ձեր ստորին չորս մարմինների նկատմամբ:

Մտորե՛ք, թե որքա՛ն ավելի հեշտ կլինի հաջորդ սերնդի համար, որ իրագործի իր առաքելությունը, եթե հենց հիմա մտահոգվեք Երկրում այնպիսի վայրեր ստեղծելու մասին, որտեղ նոր սերունդը կկարողանար մարմնավորվել և կյանքի առաջին տարիներն անցկացնել անդորրության մեջ ու բնության գրկում: Եթե նման վայրեր երկրագնդի վրա հիմա ստեղծված լինեին, ապա նոր ռասայի մարդիկ կսկսեին արդեն մարմնավորվել: Հավատացե՛ք ինձ, զարգացած շատ հոգիներ պատրաստ են մարմնավորվելու, որպեսզի մատուցեն աշխարհին իրենց Սպասավորությունը: Եվ միայն ֆիզիկական ոլորտի անպատրաստ լինելու պատճառով է, որ տարիներով ու տասնամյակներով հետաձգում են իրենց մարմնավորվելը:

Շատ բարձրագույն հոգիներ ռիսկի են գնում և մարմնավորվում անպատրաստ պայմաններում: Եվ ի՞նչ եք կարծում, ի՞նչ է տեղի ունենում: Նրանք ստիպված են լինում ծնվելուց անմիջապես հետո իրենց ծանրաբեռնել ու իրենց աուրայի մեջ ներառել շրջապատի մարդկանց պատկանող կարմայի այնպիսի քանակություն, որ չորս տարեկանից սկսած՝ այդ արտառոց երեխաներն այլևս ի վիճակի չեն լինում մինչև իրենց մարմնավորման ավարտը բացելու իրենց ողջ ընդունակություններն ու ծառայելու աշխարհին:

Մեզ համար ցավալի է դիտելը, թե ինչպես են մարդկության լավագույն ուստրերն ու դուստրերը կործանվում ձեր միջավայրում՝ կրելով ձեր բեռն ու մահանալով դրա ծանրության տակ:

Մի՞թե իմ այսօրվա ասածները դուք երբևէ չեք լսել կամ չեք կարդացել: Ի վերջո, քանի՞ անգամ պետք է լսեք այս պարզ ճշմարտությունները, որ հետո դրանք իրականացնեք գործնականում:

Ես պատրաստ եմ այցի գալու ևս այնքան անգամ, որքանի կարիքն ունեք, որպեսզի յուրացնեք իմ Ուսմունքը: Մակայն ձեր հաջողությունն ավելի նշանակալից կլինի, եթե քնելուց առաջ ցանկանաք հայտնվել եթերային ոլորտի այն դահլիճում, որտեղ ես նվագում եմ իմ երգեհոնը:

Սակայն օրվա ընթացքում ջանացեք ձեզ տարանջատել այն ամենից, ինչը կարող է արգելք հանդիսանալ իմ երգեհոնի ձայնը լսելուն:

ԵՍ ԵՄ Կույթումին՝ ձեզ միշտ սիրող

Պաշտելի Ալֆա
5 հուլիսի, 2007 թ.

Վերջին նախագգուշացում

ԵՍ ԵՄ Ալֆան՝ այս օրով Երկրի մարդկությանն այցի եկածը: Ես եկել եմ ձեզ մոտ և կուզենայի իմ ուղերձը սկսել մի ուրախ իրադարձության ազդարարմամբ, որը, հավանաբար, արդեն կանխավայելել էք ձեր սրտերում: Այդ իրադարձությունը կապված է Երկրին հատկացվող նոր հնարավորությունների և նոր աստվածային ողորմածությունների հետ:

Կարմայական Վարչության հետ համատեղ որոշում է կայացվել շարունակելու այն թողության շնորհը, որը կապված է այս դեսպանորդի միջոցով աշխատելու հնարավորության հետ: Ձեզ հայտնի է, որ պահանջվեց անցնել չափազանց ծանր թեստ, որպեսզի հաստատվի աշխատանքը շարունակելու իրավունքը: Այդ թեստը հանձնեց մեր դեսպանորդը, և այն տարածվեց մարմնավորման մեջ գտնվող շատ անհատականությունների վրա: Դա այն հասունության քննությունն էր, որը իրավունք է տալիս աշխատանք կատարելու հանուն Աստծո:

Ամեն անգամ, երբ նոր աստվածային հնարավորություն է իջանում Երկիր, դա կապված է լինում մոլորակի համար նոր, ավելի բարձր թրթռանքով էներգիաների գալստյան հետ:

Ձեզ թվում է, թե իմ խոսքերը ձեզ չեն վերաբերում, թե ես ինչ որ վերացական բաներից եմ խոսում: Սակայն իմ այս ուղերձը և այն հնարավորությունը, որն իջել է Երկիր, վերաբերում է նրա ամեն մի բնակչին՝ յուրաքանչյուր երկրաբնակի:

Ֆիզիկական ոլորտի և Երկրին մերձակա ոլորտների թրթռանքները հետագա բարձրացման կենթարկվեն: Եվ դա կապված է էվոլյուցիոն զարգացման նոր, անհրաժեշտ փուլի հետ: Իսկ ձեզ համար դա կապված է ձեր օրգանիզմի վերակառուցման, ձեր ֆիզիկական և ավելի նուրբ մարմինների թրթռանքի բարձրացման հետ:

Թրթռանքների բարձրացումը մոլորակի վրա կհանգեցնի մեծ փոփոխությունների: Նախ և առաջ, նրանք, ովքեր չեն կարողանա համաքայլ ընթանալ թրթռանքների փոփոխության՝ դրանց բարձրացման հետ, չեն կարողանա իրենց վստահ զգալ նոր պայմաններում: Հավատացե՛ք, մենք ձեզ միայն բարին ու լավն ենք կամենում: Եվ գիտե՛ք, որ ձեզնից նրանք, ովքեր հնազանդ են Աստծո Կամքին և իրենց սրտերով պատրաստ են հետևելու Աստծուն, իրենց զարգացման համար չտեսնված խթան կստանան, իսկ մոլորակը բարգավաճելու ու լիանալու հնարավորություն կստանա: Սակայն նրանք, ովքեր որոշել են իրենք իրենց կտրել Աստծուց, ովքեր փքվել են օճառի պղպջակի պես, ստիպված կլինեն քաղելու իրենց սխալ նախընտրանքների ու արարմունքների պտուղները: Սա Օրենք է, համայն այս տիեզերքի էվոլյուցիայի Օրենքը:

Ուստի այն ցնծությունը, որն ապրում են Համբարձյալ Դասերը և նրանց հետ էլ՝ մարդկության լավագույն ներկայացուցիչները, չեն կիսի շատ հոգիներ, որոնցից յուրաքանչյուրն իր պատճառներից ելնելով որոշել է ընտրել իր ուրույն ուղին, որը տարբեր է աստվածայինից: Երբեք չպետք է մոռանալ, որ բոլորդ Աստծո որովայնում եք գտնվում, և որ ամենայն ինչ Աստված է: Եվ կան տիեզերական ժամկետներ, որոնց մասին նախագգուշացվում է: Նաև կա ընտրություն կատարելու ժամանակ: Ոչ ոք չի կարող պնդել, թե իրեն չի ասվել ու չի նախագգուշացվել:

Ընտրություն կատարելու ժամանակը մոտենում է իր ավարտին: Ժամկետները սպառված են, և ավարտվում է տիեզերական բերքահավաքի շրջանը:

Հասել է այն ժամը, որ Աստծո բարի ուստրերն ու դուստրերը ստանան բարի գործերի իրենց վարձքը: Նաև նրանք կստանան իրենց վարձքը, ովքեր իրենց ուրույն ուղին ընտրեցին. բայց դա այլ տիպի վարձք կլինի:

Չեմ ահաբեկում: Նախագգուշացման ժամանակն անցել է: Որոշումն արդեն կայացված է, և որոշումը պետք է ի կատար ածվի:

Միշտ էլ այլ ուղի ընտրելու հնարավորություն կա: Նույնիսկ վերջին պահին մեղա գալու մի կանչը բավարար է, որպեսզի կանգ առնի Աստծո աղացը:

Սպասում և հնարավորություն ենք տալիս: Սպասման ժամկետը սպառվում է:

Ես եկել եմ, որպեսզի ցնծություն հաղորդեմ: Սակայն շատերի համար այդ ցնծությունը տխրության կփոխվի: Քանզի չափազանց շատ անտեղի էներգիա և ուժեր են վատնվել: Եվ ամեն ինչ պետք է վերականգնվի:

Գալիս է բերքի ժամանակը: Եվ յուրաքանչյուրը պետք է ստանա այն, ինչ վաստակել է՝ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտում բազում հազարամյակներ դեզերելով:

Գաղտնիք հայտնած չեմ լինի, եթե ասեմ, որ այն ժամկետները, որոնց մասին Տեր Հիսուս նախագգուշացնում էր իր աշակերտներին, նոր միայն մոտենում են և իջանում ֆիզիկական ոլորտ:

Փորձում եմ ձեզ հասկացնել և երկարաձգել ընտրություն կատարելու ժամանակը: Փորձում եմ ձեզ մինչև վերջ հասկացնել Օրենքի գործելակերպը, որպեսզի ձեր ներսում հաղթահարեք այն, ինչն ընդվզում է և չի ներառում իր մեջ Աստծո Օրենքը:

Ես եկա՝ ձեզնից յուրաքանչյուրի նկատմամբ հսկայական Սիրով տոգորված: Եկա, որպեսզի իմ ուղերձը տամ Երկրի մարդկանց: Ես շատ կափոսսամ, եթե իմ խոսքը չհասնի այն հոգիներին, ովքեր դեռևս ունակ են լսելու ինձ, բայց չեն լսում, քանի որ գերադասում են ենթարկվել այն շեփոթին, որն իրենց դեպի անհայտություն է կանչում:

ԵՄ ԵՄ Ալֆան

Տիեզերական Էակ
Հգոր Հաղթանակ
6 հուլիսի, 2007 թ.

Ուսմունք Հաղթանակի ձգտելու մասին

ԵՄ ԵՄ Տիեզերական Էակ Հգոր Հաղթանակը՝ այս օրով ձեզ այցի եկածը...

ԵՄ ԵՄ եկել տիեզերքի լայնարձակ հեռաստաններից: Ձեզ համար հասկանալի է դժվար, իսկ ինձ համար՝ բացատրելը, բայց հենց որ ձեր գիտակցությունը հասնի ավելի բարձր մակարդակի, դուք կկարողանաք կտրվել հարազատ մոլորակից և վեր ձգվել դեպի Լուսի եթերային այն օկտավաները, որոնք թույլ կտան ձեզ Ազատություն ձեռք բերել և տեղաշարժվել տիեզերքի լայնարձակությունում: Դուք կհասնեք Ազատության այդ վիճակին և անկախ կդառնաք և՛ մատերիայից, և՛ որևէ մոլորակի կամ մոլորակների համակարգի ձգողությունից: Մակայն դա ձեզ հետ տեղի չի ունենա ավելի վաղ, քան կկարողանաք ձեր գիտակցության մեջ հաղթահարել ձեր մոլորակի մատերիայի ձգողությունը:

Ձեր գիտակցությունն այժմ սահմանափակված է ձեր մոլորակի ժամանակային ու տարածական շրջանակներով: Դուք դատում եք ձեր եռաչափ աշխարհի սահմաններով: Եվ այժմ եկել է այն փուլը, երբ պետք է վերակառուցեք ձեր գիտակցությունը և թույլ տաք նրան մուտք գործել Էվոլյուցիոն զարգացման հաջորդ փուլ: Նոր գիտակցության ծննդի այդ գործընթացը ոչ միշտ է անցավ լինում ձեզ համար: Ինչպես յուրաքանչյուր նոր Էակի ծնունդն է ցավով ուղեկցվում ձեր աշխարհում, այնպես էլ ձեր վերածնունդը տառապազին կլինի, մինչև որ ունակ դառնաք նոր գիտակցության կրողներ լինելու: Դա, հիբավի, բեռ է, հենց այն բեռն է, որը կրել են անցյալի բոլոր սուրբ նահատակները: Չափազանց մեծ է մատերիայի դիմադրությունը, և չափազանց շատ են այն ուժերը, որոնք խոչընդոտում են նոր գիտակցության ու նոր մտածողության գալուստը ձեր աշխարհ: Այդ է պատճառը, որ նորը ձեզ է հասնում այդպիսի դժվարությամբ: Եվ դժվար թե երկրաբնականների մեծամասնությունը հասկանա, թե ինչի մասին եմ ես խոսում:

Միլիոնավոր տարիներ առաջ ես գտնվել եմ ձեր ներկայիս Էվոլյուցիոն զարգացման աստիճանին: Եվ հիմա փորձում եմ հիշել այն հիմնական դժվարությունը, որն իմ առաջ հառնել էր որպես անլուծելի խնդիր: Եվ գիտե՞ք, թե ինչն էր դա. մատերիայի ձգողությունը. թանձրաշխարհին հրաժեշտ տալ չուզենալը: Դա նման է այն բանին, երբ նորածին մանուկը պետք է դուրս գա օրորոցից, որպեսզի իր առաջին քայլերն անի անձանոթ աշխարհում: Դուք պարզապես վախենում եք հրաժեշտ տալ հին ու մատերիայի հետ կապվածության ձեր սովորական վիճակին: Մատերիան ձեր Մայրն է: Բայց կա նաև Հայր, որը ձեզ կանչում է վեր ելնելու գիտակցության ավելի բարձր մակարդակի վրա: Այլապես ձեզ կենթարկեք հավերժորեն օրորոցում մնալու վտանգին:

Նորը միշտ էլ վախ է առաջացնում: Մակայն ձեզ անհրաժեշտ է ձեռք բերել անվախություն և ձեր գիտակցությունը փոխելու կարողություն: Որևէ բանից վախենալու հարկ չկա: Դուք ձեր գիտակցությամբ մշտապես պետք է հիշեք, որ անմահ եք, և որ Աստված հոգում է ձեր մասին: Ձեր գիտակցության այն անցումը, որի մասին մենք ասում ենք, և որը դուք պետք է ի կատար ածեք, անխուսափելիորեն տեղի կունենա: Եվ այդ անցումը ձեզ հնարավորություն կտա բարձրանալու Էվոլյուցիոն զարգացման պարույրի նոր գալարի վրա:

Այժմ դուք թանձրաշխարհում եք գտնվում: Մենք ձեզ կանչում ենք դեպի տիեզերքի լայնարձակությունները. մենք ուզում ենք, որ ձեր գիտակցությամբ սովորեք լքել թանձրաշխարհի

սահմանները: Իսկ դրա համար անհրաժեշտ է ձերբագատվել մատերիական կապվածություններից և գիտակցությամբ թեաժեղ դեպի վեր:

Ձևը փոխելն ու դեպի ավելի նուրբ ապրումներին ձգտելն իրենց մեջ ոչ մի սարսափելի բան չեն պարունակում: Սովորե՛ք զանազանել այն տարբեր վիճակները, որոնցում հայտնվում եք օրվա ընթացքում: Սովորե՛ք կառչել ձեր հույզերի այն ամենանուրբ դրսևորումներից, որոնք նման են կեսօրվա տապին փչող անորսալի գեփյուռի: Արդեն հենց հիմա էլ կարող եք ձեր գիտակցությամբ զանազանել նուրբ աշխարհի դրսևորումները և ձեր աշխարհում դրսևորել այդ նուրբ աշխարհների իմացությունը:

Հարկ է, որ հասկանաք, որ ձեր թանձրաշխարհի սահմաններից անդին մի ողջ տիեզերք է առկա:

Դուք նմանվում եք անտառային այն միջատներին, որոնք միայն իրենց աշխարհն են տեսնում: Հիմա պատկերացրեք, որ ձեր այդ աշխարհ է մուտք գործում մարդկային էակ: Քանի՞ միլիոն տարի է ընկած էվոլյուցիոն զարգացման ձեր աստիճանների միջև: Կարո՞ղ եք պատկերացնել այնպիսի վիճակ, որ ուղերձ եք տալիս միջատներին: Բայց իմ ու ձեր միջև էվոլյուցիոն հենց այնպիսի մի ժամանակահատված է ընկած, ինչպիսին ձեր ու ձեր աշխարհի միջատների միջև է: Եվ ահա փորձում եմ ձեզ ուղերձ տալ: Սա մի ուղերձ է, որը, բառեր ու ներքին իմաստ պարունակելուց զատ, նախ և առաջ նպատակ է հետապնդում ձեզ մղելու դեպի ապագան, կանչում է ձեզ դեպի Հաղթանակ մահկանացու գիտակցության նկատմամբ:

Ես ներարկում եմ ձեզ Սիրո գգացմունք, իմ այն Սիրո, որը հատուկ է իմ գիտակցության մակարդակին: Եվ ես փորձում եմ ձեր ուժերի նկատմամբ վստահության խթան ներարկել ձեզ: Ձեզ ամեն ինչ կհաջողվի, և դուք կհասնեք ձեր Հաղթանակին:

Դուք պարզապես պետք է ձեր սրտերում պահեք ձգտումը դեպի Բարձրագույն աշխարհներ: Մշտապես պետք է փորձեք հաղթահարել ձեզ շրջապատող պատրանքի երկրային ձգողությունը: Հավատացե՛ք, ձեզ համար ավելի կարևոր խնդիր չկա, քան ձեր գիտակցությունն ավելի վեր հանելն է կյանքի քարացած դրսևորումների նկատմամբ:

Մշտական փոփոխություններ և ուժերի մշտական լարում: Եվ այդ հարատև ինքնահաղթահարմամբ դուք կկարողանաք մուտք գործել էվոլյուցիոն զարգացման նոր փուլ: Առանց ջանքերի գործադրման ոչնչի հնարավոր չէ հասնել: Մի՛ սփոփեք ձեզ այն մտքով, թե հաջորդ փուլն ինքն իրեն կգա, և ձեզ հարկ չի լինի որևէ բան անելու: Ո՛չ, ձեզ չի՝ հաջողվի շրջանցել Աստծո Օրենքը և հաջորդ աստիճանին անցնել ուրիշի ուսերին բազմած և ուրիշի ջանքերի գնով:

Բոլոր ջանքերը ստիպված կլինեք ինքներդ գործադրել՝ ավելի ու ավելի վեր բարձրացնելով ձեր գիտակցությունը: Եվ դրանից զատ՝ պատասխանատվություն պետք է զգաք այն մարդկանց նկատմամբ, որոնց հետ կարմայական կապեր ունեք: Դուք նրանց պետք է օգնության ձեռք մեկնեք ճիշտ այնպես, ինչպես, այս ուղերձը տալով, ես եմ հիմա ձեզ օգնության ձեռք մեկնում:

Ամեն ոք, ով ունի ավելի բարձր գիտակցություն, պարտավոր է օգնել նրանց, ովքեր հետ են մնացել ու լռել Ուղու վրա: Մանուկ հասակում ձեզ ուսուցանել են օգնել փոքրերին: Նույնիսկ կարող եք ինքներդ չընթանալ Ուղով, այլ պարզապես օգնել շրջապատի մարդկանց. և այդ դեպքում դուք նրանց հետ համատեղ կհաղթահարեք ձեր Ուղու բոլոր արգելքներն ու դժվարությունները:

Ես երջանիկ եղա իմ այսօրվա խրատները տալուս համար:

ԵՄ ԵՄ ՀՊոր Հաղթանակը՝ Ուղու վրա ձեր Հաղթանակի մաղթանքով

Տեր Սուրիա
7 հուլիսի, 2007 թ.

Չրույց գիտակցության փոփոխման ճանապարհով Ֆիզիկական ոլորտը վերափոխելու մասին

ԵՄ ԵՄ Սուրիան՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ, որպեսզի անգամ վկայեմ այն հանգամանքի մասին, որ մենք որոշում ենք ընդունել շարունակելու ֆիզիկական ոլորտի մեր աշխատանքը մեր դեսպանորդի միջոցով: Իսկ այդ աշխատանքը չի սահմանափակվում միայն ուղերձներ փոխանցելով: Իրականում Վեհապետների թելադրությունների կամ ուղերձների փոխանցումն այն առաքելության մի մասն է, որը մենք իրականացնում ենք Երկրի վրա: Թելադրություններն ընդամենը ձեզ ծանոթացնում են այն ուղղությանը, որով հարկ է, որ ընթանաք՝ էվոլյուցիոն գործընթացից դուրս չմնալու համար: Սակայն, ճիշտ այնպես, ինչպես կան տեսական ու դասախոսական պարապմունքներ, կա նաև դրանց գործնական մասը: Ձեզ հայտնի է, որ տեսությունն առանց գործնական մասի մեռած է: Եվ

այնժամ, երբ միայն որևէ գիտություն կամ գրականություն եք ուսումնասիրում՝ առանց կյանքում դա կիրառելու, դուք պարզապես առաջ չեք շարժվում: Դա նմանվում է տեղում վազքի:

Ուստի մենք գալիս ենք և ձեզ համար պայմաններ ենք ստեղծում մեր էներգիաների տեսքով, որոնք կլանելով՝ դուք Աստծո էներգիա եք ձեռք բերում, դրա հետ մեկտեղ՝ ձեր գիտակցությունը փոխելու աստվածային հնարավորություն և միաժամանակ նաև ֆիզիկական ոլորտը վերափոխելու հնարավորություն:

Ձեր օրոք շա՛տ քիչ է, պաշտելիներս, որ պարզապես կարդաք մեր ուղերձները: Ձեզ անհրաժեշտ է բարեփոխել ձեր կյանքը այն սկզբունքներին համապատասխան, որոնք ստանում եք մեզնից: Ձեզ անհրաժեշտ է վերլուծել ձեր ամբողջ կյանքը և հասկանալ, թե ինչպես այն փոխեք: Ձեզ համար դժվար կլինի, քանի որ ձեր ստեղծած կարման ու կարմայական պարտավորությունները թույլ չեն տա, որ ձեր կյանքը փոխեք մի ակնթարթում: Սակայն, քանի դեռ ձեր ներսում չեք ձևավորի ճշմարիտ կերպար, որին հարկ է, որ ձգտեք, ձեր կյանքում ոչինչ չի փոխվի: Նախ գիտակցում եք, թե ո՞ր ուղղությամբ շարժվեք, հետո սկսում եք հասկանալ, թե կյանքում ի՞նչն է ձեզ խանգարում, որպեսզի հետևեք տրված ուղղությանը: Իսկ այնուհետև ձեր կյանքում սկսում եք հաղթահարել մի խոչընդոտը մյուսի հետևից:

Հավատացե՛ք ինձ, այն խոչընդոտները, որոնց կյանքում բախվում եք ձեզնից դուրս, ընդամենը ձեր անկատար գիտակցության ծնունդն են: Եվ այնժամ, երբ ձեր գիտակցությունից ու ենթագիտակցությունից դուրս կմղեք անկատար էներգիան, երբ կփոխեք ձեր ներքին կողմնորոշիչներն ու ուղղությունը՝ ձեր նկրտումների վեկտորը, ձեր կյանքի բոլոր արտաքին հանգամանքները կսկսեն փոխվել:

Հենց սկզբից չէ, որ դուք հայտնվում եք ջերմոցային պայմաններում և հնարավորություն ստանում զարգանալու՝ ըստ աստվածային սկզբունքների: Ո՛չ, նախ դուք հաղթահարում եք ձեր գիտակցության անկատարությունը, որից հետո ձեր կյանքի արտաքին հանգամանքներն էլ են սկսում փոխվել: Մատերիայի իներտությունը թույլ չի տալիս, որ ձեր կյանքի արտաքին հանգամանքներն արագ փոխվեն: Միշտ էլ որոշ ժամանակի կարիք է զգացվում, որպեսզի արտաքին հանգամանքների վերադասավորումն ընթանա ձեր փոխված գիտակցությանը համապատասխան: Սակայն սկզբունքը մշտապես նույնն է մնում. նախ փոխում եք ինքներդ ձեզ, հետո փոխվում են արտաքին հանգամանքները:

Շատ անգամ է ասվել, և ես հիմա նորից եմ կրկնում. ձեզնից ամեն ոք ունի կարմա, որը կապված է անցյալում Աստծո էներգիայի ոչ ճիշտ օգտագործման հետ: Եվ դա ոչ միայն ներկա մարմնավորմանն է վերաբերում, այլ նաև ձեր անցյալի մարմնավորումներին: Ուստի այդ կարման կաշկանդում է ձեր զարգացումը և թույլ չի տալիս, որ կայծակնային արագությամբ փոխեք ձեր կյանքի բոլոր հանգամանքները: Երբեմն ձեզ անհրաժեշտ է անասելի ջանքեր գործադրել որևէ մի ուղղությամբ, որպեսզի կարողանաք գլուխ հանել ձեր չբեռնաթափված էներգիայի ընդամենը մի ասպեկտից: Իսկ այդպիսի ասպեկտները շատ են: Ձեզնից յուրաքանչյուրն անցյալում արարքներ է թույլ տվել, որոնք կապված են Աստծո Օրենքի խախտման հետ: Այժմ եկել է ժամանակը գիտակցելու, որ սխալ եք օգտագործել Աստծո էներգիան, և միջոցներ ձեռք առնելու, որպեսզի այդ սխալ գործողություններն այլևս չկրկնվեն:

Սկզբում ձեր գիտակցությունից դուրս եք մղում ոչ ճիշտ հատկանիշը, որից հետո ձեր կյանքը փոխվում է՝ ճիշտ ուղղությամբ ձեր կիրառած ջանքերի հետ համամասնորեն:

Հարկ է, որ ճիշտ նույն կերպ առաջնորդվեք ֆիզիկական ոլորտի ցանկացած գործ կատարելու ընթացքում: Եթե ջանում եք ֆիզիկական ոլորտում անել որևէ թեկուզ և շատ բարի գործ, ասենք, կապված ֆիզիկական ոլորտում Վեհապետների պլանների իրագործման հետ, սակայն ձեր էներգետիկական դաշտում ունեք կարմայական ծանրաբեռնվածություն, ապա այդ կարման ձեզ թույլ չի տա, որ սկսած գործն ավարտին հասցնեք: Նախ և առաջ դուք պետք է հրաժեշտ տաք ձեր թերություններին և նոր միայն կատարեք Աստծո գործերը: Դուք չեք կարողանա կատարել Աստծո գործերը, մինչև չվերածվեք կատարյալ շինարարների:

Կասեք, թե ձեր աշխարհում կատարյալ շինարարներ չկան: Եվ դա իրոք այդպես է: Ուստի և ձեզանից պահանջվում է ուժերի մշտական գործադրում ճիշտ ուղղությամբ: Եվ նույնիսկ այնժամ, երբ ձեր անկատարությունը թույլ չի տալիս որևէ գործ կատարել Աստծո համար, դուք կարող եք և պետք է շարունակեք ճիշտ ուղղությամբ ուժեր գործադրելը: Որոշ ժամանակ անց ձեր կողմից անցյալում սխալ որակավորված էներգիաները կայրվեն ձեր բարի նկրտումների աստվածային բոցում:

Ուստի մենք ձեզ ուսուցանում ենք, որ կանգ չառնեք ձեր Ուղով ընթանալիս: Գործե՛ք, սխալվե՛ք, նորի՛ց փորձե՛ք, բայց շարունակե՛ք ձեր ջանքերը: Քանզի այնժամ, երբ սկսում եք ինչ-որ բան ձեռնարկել, մենք հնարավորություն ենք ստանում, որ ձեզ օգնենք, շտկումներ մտցնենք ձեր արածի մեջ և այն ուղղորդենք ճիշտ ուղղությամբ: Իսկ այն դեպքում, երբ դուք ոչինչ չեք անում,

մենք միջամտել չենք կարող: Էներգիան պետք է հոսի, պետք է փոփոխության մեջ լինի, որպեսզի հեշտանա այն կառավարելը:

. Ձեր գիտակցության փոխվելն ու ֆիզիկական ոլորտի գործողությունները անընդհատ ընթացող և փոխներթափանցվող գործընթաց են: Այնժամ, երբ գործում եք, դուք հնարավորություն եք ունենում ձեր գործունեությամբ բեռնաթափելու ձեր կարման: Այն բեռնաթափվում է ոչ միայն աղոթքներով ու այն նախընտրանքներով, որ կատարում եք: Կարման բեռնաթափվում է նաև այն ճիշտ գործողություններով, որոնք միտված են ձեր ֆիզիկական աշխարհի վերափոխմանը:

Եվ այնժամ, երբ ճիշտ շարժառիթ եք ունենում և ընթանում եք ճիշտ ուղղությամբ, դուք հնարավորություն եք ստանում շատ արագ բեռնաթափելու ձեր կարման: Համեմատության համար ասեմ, որ եթե ձեզնից 10000-ժամյա անընդհատ աղոթք է պահանջվում, որպեսզի բեռնաթափեք կարմայի որոշակի քանակություն, ապա այդ նույն արդյունքին դուք կարող եք հասնել, օրինակ, որևէ գործով մասնակցելով մեր դեսպանորդի Աշրամի շինարարությանը:

Ես մոտեցա մի կարևոր թեմայի, որը կապված է ֆիզիկական ոլորտում մեր պլանների իրականացման հետ: Մեզ անհրաժեշտ է խարիսխ ձգել մաքուր մի վայրում, որից սկսելով՝ կկարողանայինք աշխատանք տանել ձեր աշխարհում կատարյալ նմուշներ արմատավորելու ուղղությամբ: Երկրագնդի վրա մեզ մի անկյուն է պետք, որ մենք սկսենք գործել: Եվ այդպիսի անկյուն դու՛ք պետք է ստեղծեք, առաջին հերթին՝ ձեր գիտակցության մեջ: Նախ դուք ձեր գիտակցությունը նախապատրաստում եք այն բանին, որ ապրեք և աշխատեք՝ ըստ Վեհապետների պլանի, որից հետո Վեհապետները վստահում են ձեզ, որ աշխատեք իրենց համար:

Ուստի ձեր առաջ շատ ու շատ գործեր կան, որպեսզի փոխեք ձեր գիտակցությունը և անցնեք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի վերափոխմանը:

Մենք կլինենք այնտեղ, որտեղ թույլ կտաք, որ ներկա լինենք: Մենք կլինենք այնտեղ, որտեղ ձեր թրթռանքները թույլ կտան, որպեսզի այդ վայրի թրթռանքները բարձրանան այնքան, որքան որ անհրաժեշտ է մեր իջանելու և ձեզ հետ գրույց վարելու համար:

Սույնով ես հայացք նետեցի դեպի ապագան: Սակայն այդ ապագայի գալուստը դուք կարող եք արագացնել՝ ձեր գիտակցությունն արագ փոխելու շնորհիվ:

ԵՄ ԵՄ Սուրիան, ձեզ հետ եղա այսօր

Տեր Շիվա
8 հուլիսի, 2007 թ.

Ուսմունք Անցման մասին

ԵՄ ԵՄ Շիվան՝ կրկին ձեզ այցի եկածը...

Շիվան ԵՄ ԵՄ...

Ես եմ այս օրով եկել ձեզ մոտ... Ես եկել եմ ահա...

Ես այսօր երջանիկ եմ, որ իմ դեսպանորդի միջոցով ձեզ հետ խոսելու հնարավորություն ունեմ...

Ամեն անգամ ես գալիս եմ, որպեսզի կապ պահպանեմ մեր աշխարհների միջև և շարունակեմ ձեզ ուսուցանել: Ձեզ հայտնի է, որ հիմա այնպիսի ժամանակներ են թևակոխում, որ դուք պետք է հրաժեշտ տաք ձեր գիտակցության պատրանքներին: Դուք գիտեք, որ ձեր հաղթանակը մահվան նկատմամբ անխուսափելի կլինի, եթե միայն կարողանաք ձեր գիտակցությունը բարձրացնել ձեր իսկ անմահ մասի մակարդակին:

Դուք նման եք գեղջկատիկնիկի: Եվ ամեն անգամ, երբ հերթական կափույրն եք բացում, նորն եք տեսնում: Նույն սկզբունքով է ընթանում նաև ձեր զարգացումը: Երբ բաժանվում եք ձեր ֆիզիկական մարմնից, ձեր գիտակցությամբ պարզապես անցում եք կատարում թրթռանքի ավելի բարձր մակարդակի վրա: Եվ դուք կշարունակեք մարմնավորվել ու ֆիզիկական մարմին առնել, քանի դեռ չեք սովորի մշտապես մնալ էներգետիկական ավելի բարձր մակարդակի վրա:

Ուստի մեր խնդիրն այն է, որ ձեր գիտակցությանը հրահանգ տանք անցնելու էներգետիկական ավելի բարձր մակարդակի վրա: Աստիճանական բնույթ կրող այդ գործընթացը պարզապես այժմ արագացել է: Տիեզերական ժամկետներից դուք մի փոքր հետ եք ընկել, ուստի ստիպված մենք ձեզ շտապեցնում ենք:

Դուք հետևում եք մեզ, քանի դեռ ունակ եք փոխելու ձեր գիտակցությունը: Երբ սկսում եք, ինչպես ձեզ է թվում, մեզնից ավելի լավ գլուխ հանել շատ բաներից և գերադասում եք փնտրել նորահայտ ուսմունքներ ու գործառնություններ, ապա մենք արգելքներ չենք հարուցում: Շատ հետաքրքիր է լինում դիտել, թե ինչպես եք ձեզ երևակայում որպես հզոր տիեզերական էակներ: Մեծ տիեզերական էակներ եք ձեզ երևակայում: Սակայն նախքան իրապես այդպիսի մեծ տիեզերական էակներ դառնալը հարկ է, որ ավարտեք ձեր երկրային դպրոցը և հաջորդաբար անցնեք Ուղու բոլոր փուլերը:

Երբ ձեզ միջոց են առաջարկում, որ ակնթարթորեն փոխեք ձեր գիտակցությունը և անցում կատարեք այլ էներգետիկական մակարդակներ, ապա ես ձեր փոխարեն շատ լուրջ կմտորեի այդ առաջարկի իրատեսական լինելու շուրջ:

Միլիոնավոր տարիներով մենք հետևում ենք մարդկության էվոլյուցիոն զարգացման ընթացքին: Եվ ձեր գիտակցությունը վերջին հազարամյակների ընթացքում այնքան էլ շատ առաջ չի գնացել Աստծո ճշմարտությանը հասնելու առումով: Հարկ չկա, որ ձեր ինտելեկտի զարգացումը շփոթեք աստվածային գիտակցության զարգացման հետ: Առաջվա պես ձեզ շատ մեծ դժվարությամբ են հասու դառնում այնպիսի պարզ աստվածային ճշմարտություններ, ինչպիսիք են Վերամարմնավորումների և Կարմայի Օրենքները: Ձեր առջև հսկայական դժվարություն է հարուցում փոքրիկ կապվածության կամ աննշան մի սովորության հաղթահարման գործը: Իսկ դրա պատճառն այն է, որ ամենամեծ դժվարությունը կապված է ֆիզիկական ոլորտի հետ կապվածության հաղթահարման հետ:

Եվ տարօրինակ է, որ ձեզ առաջարկում են ակնթարթորեն անցնել մեծ ձեռնադրումներով և ուղով հասնել նշանակալից առջընթացի: Ես ձեր փոխարեն կմտորեի, թե ինչի՞ հաշվին պետք է տեղի ունենա այդ մեծ առաջընթացը: Ո՞վ ձեզ էներգիա կտա, որպեսզի ի չիք դարձնեք ձեր կարմայական կուտակները: Եվ ի՞նչ պայմաններով են ձեր արագ առաջընթացի գործով զբաղվում ձեր այդ բարերարները: Չի՞ նմանվում դա արդյոք ձեր հոգին, ձեր կենսական էներգիան սատանային վաճառելուն:

Փորձեցե՛ք հասկանալ Տիեզերական Օրենքի գործելակերպը:

Դուք իջնում եք մատերիայի մեջ, երբ ազատ կամքի Օրենքի շնորհիվ նախընտրում եք իջեցնել ձեր թրթիռները, որպեսզի ավելի ու ավելի խորը սուզվեք: Դրանից հետո կարիք եք ունենում մեծ քանակի էներգիայի, որն իր չափով պետք է հավասարվի ձեր կողմից երբևէ սխալ օգտագործված Աստծո էներգիայի քանակին: Իսկ այդ էներգիան ձեզ կարող է հասնել միայն որոշակի պայմանների առկայության դեպքում:

Մի պահ պատկերացրեք, թե հրաշք է կատարվել, և ակնթարթորեն ձեզ է վերադարձվել միլիոնավոր տարիների ընթացքում ձեր սխալ օգտագործած ողջ էներգիան: Ինչպե՞ս կարող եք ձեր ֆիզիկական մարմնով ու ձեր թրթիռներով դիմանալ այդ էներգիային: Ձեր էության համար այն հավասարազոր կլինի գերնոր աստղի բռնկմանը: Ձեր գիտակցությունը չի կարող ակնթարթորեն տեղափոխվել նոր էներգետիկական մակարդակի վրա: Ուստի մենք ձեզ ուսուցանում ենք աստիճանական էվոլյուցիոն ուղին: Խիստ արագացված էվոլյուցիայի դեպքում կգոհվեք համարյա ողջ մարդկությունը: Մենք ցանկություն չունենք նպաստելու ձեր կործանմանը, այլ միայն ուզում ենք, որ ձեր էվոլյուցիան շարունակեք՝ ելնելով ավելի բարձր էներգետիկական մակարդակի վրա:

Ուշադիր մտածեք և իմ ասածը համեմատեք ձեզ հանդիպող այն շատ ուսմունքների ու տեսությունների հետ, որոնք ակնթարթային թռիչք են խոստանում: Իսկ ո՞վ էներգիա կտա այդպիսի թռիչքի համար:

Ես ձեզ հետ խոսում եմ որպես Էակ, որն օժտված է պատրանքները հետ հավաքելու իշխանությամբ: Եվ ահա ասում եմ ձեզ, որ հնարավոր չէ ակնթարթորեն թռիչք կատարել գիտակցության ավելի որակյալ մակարդակի վրա, որը չուղեկցվի Երկիրը բնակեցնող համարյա բոլոր մարդկային անհատների կործանմամբ: Մենք ձեզ ուսուցանում ենք էվոլյուցիոն ուղին և գիտելիք ենք տալիս, որի շնորհիվ կկարողանաք բնականորեն ձեր գիտակցությունը բարձրացնել ավելի բարձր էներգետիկական մակարդակի վրա: Այդ դեպքում մեծ քանակությամբ երկրաբնակներ կկարողանան շարունակել իրենց էվոլյուցիան: Թրթռանքի ցանկացած հեղափոխական փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե մեր գործադրած ջանքերը մոտակա ժամանակներում չպսակվեն հաջողությամբ:

Մենք կարծում ենք, որ ձեզնից շատերը պատրաստ են շարունակելու էվոլյուցիան և իրենց մարմնի թրթիռներն այնպես փոխելու, որ կարողանան գոյատևել նոր պայմաններում: Սակայն դուք ևս պետք է ջանքեր գործադրեք էվոլյուցիան երկարաձգելու ուղղությամբ, որպեսզի չընկնեք այնպիսի անբարենպաստ պայմանների մեջ, որոնք առաջանում են Աստծուց կտրվել կամեցող մոլորակների վրա:

Ամենայն բան, որ համընթաց է համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքի հետ, իր էվոլյուցիոն զարգացման համար պետք է ապահովվի անհրաժեշտ ամեն ինչով: Նա, ով չի կամենում համընթաց քայլել Աստծո Օրենքի հետ, ավելի ու ավելի շատ դժվարությունների կրախվի, մինչև որ իր զարգացմամբ լրիվ կանգ կառնի. ապա մահվան հրեշտակները նրա հոգու մնացորդները կհանձնեն վերամշակման:

Ձեզ տրվում է ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ է ուղու գիտակից ընտրության և ձեր էվոլյուցիայի շարունակման համար: Անցյալի ու ներկայի ոչ մի դեպքում որդի միջոցով մենք դեռևս այսքան մանրամասն ու պարզ չէինք խոսել այս թեմայի շուրջ:

ԵՄ ԵՄ Շիվան... Ես այսօր եկա, որպեսզի ձեր գիտակցությանը հրամցնեմ կարևոր տեղեկատվություն, որպեսզի մտորեք դրա շուրջ ձեր սրտի անդորրության մեջ և համապատասխան որոշում կայացնեք:

ԵՄ ԵՄ Շիվան

Հաղթանա Բուդդա
9 հուլիսի, 2007 թ.

Ուսմունք Բուդդայի գիտակցության մասին

ԵՄ ԵՄ Հաղթանա Բուդդան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Այս օրով ես եկել եմ, որպեսզի խոսեմ Երկրում տարվող մեր աշխատանքում եղած գլխավորի մասին: Այն կապված է երկրացիների գիտակցության փոփոխության հետ: Ընդհանրապես ասած՝ մեր աշխատանքի այս սկզբունքն անփոփոխ է մնում միլիոնավոր տարիների ընթացքում:

Հենց որ մարդն իր գիտակցությամբ հասնում է Բուդդայի մակարդակին, շրջապատող կյանքում ամեն ինչ նոր իմաստ ու նշանակություն է ձեռք բերում: Քանզի այն, ինչը սովորական մարդու աչքին միայն իրադարձությունների հերթագայություն և մտքերի ու հույզերի փոփոխություն է երևում, Բուդդայի համար Կյանքի բաց գիրք է, որը նա կարող է կարդալ՝ թերթելով էջ առ էջ: Այնժամ, երբ հասնում եք Բուդդայի գիտակցության մակարդակին, դրանով իսկ ձեր գիտակցությամբ անցում եք կատարում դեպի էվոլյուցիոն զարգացման նոր փուլ:

Ես չեմ հղում իմ ուղերձը միայն բուդդայականների կամ միայն նրանց համար, ովքեր ընդունում են Բուդդային որպես Աշխարհի Տիրոջ: Ես իմ ուղերձը հղում եմ ամբողջ մարդկությանը՝ այն մարդկանց, ովքեր ունակ են այն ըմբռնելու, գիտակցելու և կյանքի կոչելու: Քանզի իրականում այնքան էլ կարևոր չէ, թե ինչպես կկոչվի ձեր գիտակցության հաջորդ աստիճանը, այլ կարևոր է այն, որ էվոլյուցիոն զարգացման այդ աստիճանի վրա մարդկությունը ելնի քիչ կորուստներով:

Այս տարվա ընթացքում ես դիմել եմ ձեզ նաև այն ժամանակ*, երբ Երկիրը հերթական բեկումնային պահին էր ապրում՝ գտնվելով հերթական ճգնաժամային կետում: Պարբերաբար Երկրի վրա այնպիսի իրավիճակներ են առաջանում, որոնք պահանջում են Լույսի շատ զորագնդերի անհապաղ միջամտությունը: Այդ կրիտիկական պահին ես օգնության խնդրանքով դիմեցի ձեզ, քանզի Երկիր մոլորակի վրա տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ դուք պետք է համակվեք պատասխանատվության զգացումով:

Բուդդայի գիտակցությամբ դուք ունակ եք դառնում բարձրանալու ձեր գիտակցության այնպիսի մակարդակի վրա, երբ ձեզ համար նշանակություն չեն ունենում ո՛չ ազգային, ո՛չ ունեցվածքային, ո՛չ քաղաքական, ո՛չ էլ կրոնական բաժանումները մարդկանց միջև: Քանզի դուք զուտ մարդկային գիտակցությամբ ստեղծված բոլոր տիպի բաժանումներից վեր եք կանգնում և կարողանում եք Միասնականություն տեսնել կյանքի ամբողջ բազմազանության մեջ:

Ձեր աշխարհում այն մարդիկ, ովքեր հասել են Բուդդայի գիտակցության վիճակին, չեն կարող երկար ժամանակով մնալ մարդկային զանգվածների շրջապատում: Քանզի Բուդդայի գիտակցության մակարդակը ենթադրում է օգնության հասնել դրա կարիքն ունեցող բոլոր մարդկային անհատներին: Եվ հենց որ իսկական Բուդդան հայտնվում է ձեր քաղաքներում, նա զոհաբերում է իր գիտակցության մակարդակը և իր բոլոր նվաճումները հատկացնում է այն բանին, որ օգնությամբ ապահովի բոլոր կարիքավորներին: Ձեր քաղաքներում այնքան շատ են մեր օգնության կարիքն ունեցողները: Այնքան շատ դժբախտություններ ու տառապանքներ կան ձեր աշխարհում: Ուստի և այն Բուդդաները, որոնք մուտք են գործում ձեր աշխարհ, ինքնազոհությամբ լուծվում են ձեր մեջ. մարդկային օվկիանոսում լուծում են իրենց կատարյալ էներգիաները՝ դրանով իսկ բարձրացնելով մարդկության գիտակցությունը և հնարավորություն ստեղծելով, որ մարդիկ գիտակցեն համայն տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքը:

Կան և ուրիշ մարդկային անհատականություններ, որոնք մուտք են գործել ձեր աշխարհ, որպեսզի կապ հաստատեն աշխարհների միջև. որպեսզի ձեր աշխարհի համար Լույսի աղբյուր, փարոս ծառայեն և ուղի ցույց տան մարդկանց կենսական ճախորդությունների ու խառը իրավիճակների ժամանակ: Մշտապես կան մարդիկ, ովքեր հուր են կրում իրենց սրտերում և պատրաստ են ծառայելու մարդկությանը: Եվ եթե ուշադիր նայեք ձեր շուրջը, ապա մարդկային սովորական դրսևորումներից անդին կարող եք նկատել Բուդդայի գիտակցության մակարդակի դրսևորումներ:

Ես այսօր եկել եմ, որպեսզի ձեզ օգնեմ գիտակցելու, որ ձեր գիտակցությունը շատ ճկուն է, և ձեզնից շատերն օրվա ընթացքում իրենց գիտակցությամբ կարող են հասնել Բուդդայի մակարդակին: Դժվարությունն այն է միայն, որ հնարավորինս երկար ժամանակով պահեք գիտակցության այդ վիճակը: Դրա համար անհրաժեշտ է, որ ձեզ համար ապահովեք գոյատևման այնպիսի պայմաններ, որ նույնիսկ հավասարակշռությունից դուրս գալու դեպքում կարողանաք հնարավորինս արագ վերդառնալ ներդաշնակ վիճակին: Ձեզնից շատերն ունենում են ներքին ներդաշնակության ու անդորրության բավականին բարձրաթիվի վիճակներ: Շատ չեն այն բուդդայական եկեղեցիները, որոնց վանականներն ունակ են գիտակցության նման բարձրաթիվի վիճակի հասնելու: Ձեզ մնում է միայն ընդլայնել այդ վիճակը և այն զլխավորը դարձնել ձեր կյանքում. հասնել այն բանին, որ ձեր կյանքում ոչինչ չկարողանա ձեզ հանել աստվածային ներդաշնակության ու անդորրության վիճակից:

Նման փորձերը մեկը մյուսի հետևից դուք պետք է շարունակեք ձեռնարկել, որովհետև, կախված այն բանից, թե որքանով եք կարողանում իրապես ձեր ներքում պահպանել անդորրության ու ներդաշնակության վիճակը, մեծ կլինի և ձեր շուրջ եղած այն մարդկանց քանակը, որոնց կփոխանցեք ձեր անդորրության, ներդաշնակության և երջանկության վիճակը: Եվ, որքան շատ լինեն մշտապես գիտակցության ներդաշնակ վիճակում գտնվող մարդիկ, այնքան մոլորակի իրադրությունը կայուն կլինի: Բոլոր փոթորիկները, համադետներն ու տարերային աղետները մարդկության ամբողջական գիտակցության աններդաշնակության արդյունք են:

Դուք չեք կարող բոլորին օժտել Բուդդայի գիտակցությամբ, բայց կարող եք ձեր ներքին ներդաշնակ վիճակը տարածել ձեր շրջապատի մարդկանց վրա: Ձեր աուրան ընդարձակվելու կարողություն ունի, և նրանք, ովքեր հայտնվում են ձեր աուրայի գործողության դաշտում, զգում են այդ ազդեցությունը: Շատերին թվում է, թե դուրս են եկել գիտակցության սովորական վիճակից, ուստի փորձում են իջեցնել իրենց թրթիռները՝ դրա համար օգտագործելով ընդունված միջոցներ՝ ակոհոլ, նիկոտին, ոչ ճիշտ ռիթմով և բարձր հնչող երաժշտություն: Սակայն բարձր թրթռանքների ներթափանցումը ձեր աշխարհ ավելի կշատանա: Կաճի նաև այն անհատների գիտակցության որակը, ովքեր իրենց վրա կվերցնեն մեծ քաղաքների ներդաշնակ վիճակի պատասխանատվությունը: Նուրբ ոլորտում ձեր գիտակցության գործողությունն իր վրա կբեռնի Մարայի ու նրա պատրանքը պաշտպանող ամբողջ հրոսակախմբերի ընդդիմությունը: Սակայն միշտ հիշեք, որ ձեր ուժը կռվի մեջ չմտնելու մեջ է: Դուք հետ եք մղում ձեր աշխարհի բացասական էներգիաները ձեր սրտերի Սիրո գործությամբ, և այդ նույն գործությամբ վերաձևափոխում եք բացասական էներգիաների վեկտորը՝ նրան տալով ներդաշնակության, անդորրության ու Սիրո ուղղություն:

Դուք մշտապես պետք է զգաք մոլորակի շատ ու շատ լուսավոր հոգիների հետ ունեցած ձեր կապը: Միասին դուք ձևավորում եք Լույսի ցանց, որը փռված է ամբողջ մոլորակի վրա: Ամեն երկրում, ամեն բնակավայրում կան մարդիկ, որոնք կոչված են Լույս կրելու, որպեսզի լուսավորեն նրանց Ուղին, որոնք դեռևս դեգերում են խավարում:

Բուդդայի գիտակցությանը հասնելը ձեր մարմնավորման վերջնական նպատակը չէ: Դուք չպետք է ձգտեք անձնական նվաճումների, այլ պետք է ձգտեք օգնել ձեր օգնության կարիքն ունեցողներին: Եվ եթե ճշմարիտ Բուդդայի առաջ հարց է ծառանում՝ շարունակե՞լ Աստծո մեջ ինքնակատարելագործումը, թե՞ զոհաբերել սեփական նվաճումները հանուն այն բանի, որ մարդկությունը շարունակի իր Էվոյուցիան, ապա ճշմարիտ Բուդդան ընտրում է երկրորդը: Հանուն Ընդհանուր Բարիքի ինքնագոհաբերման ունակությունը անցյալի ու ներկայի բոլոր Բուդդաների ու Բոդիիսատվաների հատկանիշն է:

Մաղթում եմ, որ հաջողությունների հասնեք Բուդդայի գիտակցություն ձեռք բերելու գործում:

ԵՄ ԵՄ Հստկամա Բուդդան՝ ձեր եղբայր

*Տես Բուդդայի 2007 թ.-ի մարտի 7-ի ուղերձը

Վեհապետ Էլ Մորիա
10 հուլիսի, 2007 թ.

Թելադրությունների ամառային շրջանի ավարտական ուղերձը

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ այս օրով կրկին ձեզ այցի եկածը...

Եկել եմ, որ ձեզ տեղեկացնեմ մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների ամառային շրջանի ավարտի մասին: Այսօր ես պատիվ ունեմ ձեզ տալու այդ շրջանի վերջին ուղերձը:

Ինչպես միշտ, մենք տրամույթամբ ենք ընդհատում ձեզ հետ մեր հաղորդակցությունը: Մեր ուղերձների շրջափուլերի ընթացքում հասցնում ենք մտերմանալ իրար հետ: Մենք տեսնում ենք, թե ամեն օր որքան շատ մարդիկ են շունչները պահած միանում համացանցին, որպեսզի կարդան մեր ուղերձները: Այդպիսով մեր հաղորդակցության հրաշքը շարունակվում է ուղերձներ փոխանցելու համար հատկացված բոլոր օրերի ընթացքում:

Այսօրվա իմ ավարտական թելադրության մեջ ես կուզենայի մեկ անգամ ևս ընդգծել այն իրադարձության նշանակալիությունը, որ մեզ հաջողվեց շարունակական ընթացք տալ հատկացված թողության շնորհիմ: Մեծ Կենտրոնական Արևում անհրաժեշտ գտնվեց, որ շարունակենք այս դեսպանորդի միջոցով իրականացվող մեր աշխատանքը: Եվ ես ուրախ եմ, Երկնային Երկրի մարտիկներն ուրախ են, որ այս հնարավորությունը շարունակություն ունեցավ:

Մեր հետագա աշխատանքի ընթացքում մենք կուզենայինք էլ ավելի մերձենալ ձեզ: Երբ մենք ձեզնից հեռու ենք լինում, ձեր գիտակցությունը չի կարողանում ամբողջովին ընկալել մեր գոյությունն ու ներկայությունը: Ուստի մեր խնդիրն է մերձենալ ձեզ, իսկ ձեր խնդիրը՝ մերձենալ մեզ ձեր գիտակցության թույլ տված մակարդակով. և այդ դեպքում մենք կկարողանանք համատեղ գործեր անել ֆիզիկական ոլորտում:

Անիմանալիի նկատմամբ վախ գոյություն ունի: Անհասկանալին վախ ու անհանգստություն է առաջացնում: Ուստի մեր խնդիրն է աշխարհների հաղորդակցությունը դարձնել առօրեական:

Մենք կամենում ենք, որ մեր հաղորդակցությունը չկրի կրոնի ու դոգմաների շղարշ: Ժամանակն է, որ մարդկության Ուսուցիչների հետ հաղորդակցությունը բարձրացվի համագործակցության ու փոխօգնության նոր մակարդակի: Մեր գալու նպատակն այն չէ, որ դուք իզուր ժամանակ ծախսեք մեր ուղերձները կարդալու վրա: Մենք գալիս ենք, որպեսզի ձեզ ոգեկոչենք ֆիզիկական ոլորտում գործեր կատարելու համար:

Ձեր բոլոր գործերը պետք է նոր հիմքերի վրա դրվեն և ի կատար ածվեն աստվածային սկզբունքներին համապատասխան:

Որևէ գերբնական բան անելու կարիք չկա: Հարկ չկա վախենալու, որ մի նոր աղանդի ազդեցության տակ կընկնեք: Այս Ուսմունքից բոլոր աղանդները տարբերվում են նրանով, որ աղանդների հետևորդներին բացառիկություն է վերագրվում: Մենք չենք խոսում որևէ բացառիկության մասին: Ամեն ոք կարող է դառնալ Համբարձյալ Վեհապետների հետևորդ: Անհրաժեշտ է միայն, որ ձեր կյանքերի մեջ ներմուծեք այն աստվածային սկզբունքներն ու վարքի այն բարոյական նորմերը, որոնք մենք ձեզ ուսուցանում ենք:

Անհրաժեշտ է, որ փոխեք ձեր սովորական կյանքի շեշտադրումները և կատարեք ձեր բոլոր գործերը՝ նոր տեսանկյունից ելնելով՝ ձառայել Համընդհանուր Բարիքին, Վեհապետների գործին, Երկիր մոլորակի կենսահոսքերին:

Չկա որևէ բան, որ մենք ուզենայինք ձեզնից թաքցնել: Եվ ձեր ստացած տեղեկատվության սահմանափակությունը պայմանավորված է ձեր գիտակցության սահմանափակությամբ, ինչպես նաև մեր ընտրած հաղորդիչի՝ դեսպանորդի, գիտակցության սահմանափակությամբ: Իսկ այդ սահմանափակումն ինքներդ եք ստեղծում, քանի որ չեք ջանում փոխել ինքներդ ձեզ ու ձեր գիտակցությունը, որից հետո էլ՝ ձեր ողջ կյանքը, այն է՝ կյանքում ճիշտ առաջնահերթություններ ընտրել և կյանքում գործել համաձայն ստացած Ուսմունքի:

Մենք գալիս ենք, որպեսզի ձեր թրթիռներն ու ձեր սրտի կողմնացույցը ճշգրտեք այն կողմնորոշիչներով, որոնք ձեզ համար մենք մատնանշում ենք:

Եթե վերընթերցեք մեր բոլոր թելադրությունները՝ սկսած առաջինից, որն այս դեսպանորդի միջոցով մենք տվել ենք 2005 թ.-ի մարտի 4-ին, վերջացրած այս մեկով, և դրանք վերընթերցեք այն նպատակով, որ ի վերջո հասկանաք կյանքում ձեր անելիքը, ապա կստանաք ձեր բոլոր հարցերի պատասխանները: Անհրաժեշտ ամեն ինչը տրված է ձեզ: Եվ հիմա արդեն ձեր հերթն է: Յույց տվեք, որ յուրացրել եք Ուսմունքը: Յույց տվեք, թե ինչեր կարող եք անել ֆիզիկական ոլորտում՝ առաջնորդվելով մեր Ուսմունքով:

Մեր սկզբունքների վրա հիմնված և ֆիզիկական ոլորտում ի կատար ածված ձեր ամեն մի հաջող գործը մեզ հնարավորություն է ընձեռում, որ ընդարձակենք այս թողության շնորհի ազդեցությունը:

Ուստի մտորեք, թե ինչպիսի փոխհամագործակցությամբ ի կատար ածենք մեր գործերը: Եթե ձեզ մեր օգնությունն է պետք, ապա նամակներ հղեք մեզ: Եթե ուզում եք, որ հուշենք ձեր հերթական անելիքը, ապա դիմեք մեզ, և այդ հուշումը կատանաք ձեր սրտերում:

Մենք երբեք չենք ուշացնում մեր օգնությունը: Ողջ խնդիրն այն է, որ կարողանաք դիմանալ մեր այն էներգիաներին, որոնք մենք հատկացնում ենք ֆիզիկական ոլորտում իրականացվելիք գործերին:

Ամեն անգամ, երբ ձեզնից որևէ մեկը պատրաստ է լինում իր վրա պատասխանատվություն կրելու և ֆիզիկական ոլորտում անելու մեր գործերը, մենք տալիս ենք մեր օրհնանքը, օգնությունն ու մեր էներգիան: Դուք կայտառորեն գործի եք անցնում: Սակայն անցնում է մի քանի ամիս, և ձեր նպատակամղվածությունից ու Աստծուն ծառայելու ցանկությունից հետք անգամ չի մնում: Հազարավոր նախապայմաններ ու պատճառաբանություններ եք գտնում, որ մի կողմ դնեք մեր գործերն ու լծվեք այն գործերին, որոնք ձեզ թվում են ավելի կարևոր ու անձամբ ձեզ համար շահութաբեր:

Ուստի նախագգուշացնում եմ. նախքան Վեհապետների գործերն անելու պարտավորություն վերցնելը, խնդրում եմ, հազար անգամ կշռադատե՞ք, քանի որ մենք դրա համար էներգիա ենք հատկացնում: Եվ եթե սխալմամբ այդ էներգիան տնօրինեք այնպես, որ իրագործվեն ձեր անձնական պլանները, ապա ողջ այդ սխալ օգտագործված էներգիան կդասակարգվի որպես Աստծո և Վեհապետների առջև պարտավորությունը չկատարելու կարմա, այլ կերպ ասած՝ դավաճանության կարմա: Իսկ դուք գիտեք, որ այդ կարման բեռնաթափելն ամենադժվարին է և հանգեցնում է շատ մեծ բարդությունների ոչ միայն այս, այլ նաև հետագա մի շարք կյանքերում:

Սակայն այն դեպքում, երբ մեր գործերն անում եք անշահախնդրորեն ու մաքուր սրտով, ապա հսկայական բարի կարմա եք վաստակում, որի շնորհիվ նաև ապագայում եք կարողանում մեծ հաջողությամբ կատարել մեր հանձնարարությունները:

Աստված չի ուզում, որ դուք աղքատ լինեք և հազիվ ծայրը ծայրին հասցնեք: Ճիշտ նախընտրանքների և ճիշտ գործադրված ջանքերի պարագայում ձեր կյանքը կլցվի առատությամբ: Պետք է սովորեք ճիշտ տնօրինել և ճիշտ ծախսել Աստծո էներգիան, և եթե կարողանաք ճիշտ համակշռություն պահպանել ձեր անձնական գործերի և Վեհապետների գործերի կատարման միջև, ապա ձեր կյանքում երբևէ որևէ էներգիայի պակասություն չեք զգա, այդ թվում նաև դրամական էներգիայի:

Աստված ձեզ ամբողջովին է ուզում: Ձեր ողջ կյանքը պետք է նվիրված լինի Աստծո Սպասավորությանը: Սակայն ձեր մեջ շատ քիչ են այնպիսի անհատները, որոնք իրենց հաշիվներն արդեն փակած լինեն թե՛ անձնական, և թե՛ ազգակցական կարմայի հետ: Ձեզնից շատերը դեռևս կարմայական պարտքեր ունեն մերձավորների, զավակների, ծնողների և մյուս բոլորի նկատմամբ հոգաժողություն ցուցաբերելու առումով, որոնց հետ կապված են կարմայորեն: Հենց այստեղ է, որ դուք պետք է խելամիտ համակշռություն պահպանեք այն էներգիաների միջև, որ կծախսեք Վեհապետների գործերի կատարման և ձեր ընտանիքի և կարմայորեն ձեզ հետ կապված մարդկանց հոգսերը հոգալու համար:

Դա հեշտ խնդիր չէ: Սակայն դրա հաջող լուծումից է կախված ձեր ապագան:

Ես այսօր եկա, որպեսզի տամ ավարտվող ամառային շրջանի վերջին թելադրությունը: Դեռ կուզենայի շատ բաներ ասել, բայց այլևս հնարավորություն չկա:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցում են մեր պլանների իրականացմանը ֆիզիկական ոլորտում և իրենց վրա կրում են մեր գործերը կատարելու բեռը:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան, մինչ նոր հանդիպում

Ուղերձների յոթերորդ շրջան (նոյեմբեր, 2007 թ. – հունվար, 2008 թ.)

Սանատ Կումարա
20 նոյեմբերի, 2007 թ.

Հաջողության ազդարարում

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ երկարատև ընդմիջումից հետո կրկին ձեզ այցի եկածը: Ընդմիջումը կապված էր այն բանի հետ, որ մենք հնարավորություն չունեինք աշխատելու մեր դեսպանորդի հետ: Եվ դուք երևի գլխի եք ընկնում, թե ինչու. դեսպանորդը ստիպված էր ենթարկվել մեր կամքին և կառուցել Աշրամ՝ տուն, ֆիզիկական ոլորտում: Եվ այդ տունը վերջապես անասելի ջանքերի գնով արդեն կառուցված է...

Թվում է, թե տան շինարարության գործը որևէ կապ չունի ոչ Մեծ Սպիտակ Եղբայրության, ոչ էլ դեսպանորդի առաքելության հետ: Սակայն, որպեսզի մենք կարողանայինք իրագործել հետագայի մեր պլանները, պահանջվում էր, որ Լույսի մեկուսի մի կիզակետ ունենանք ֆիզիկական ոլորտում:

Եվ արդեն հայտնի է ձեզ. թեև մեզնից շատերը կասկածում էին, որ այդ գործը գլուխ կգա, այնուհանդերձ առաջադրված խնդիրն արդեն ի կատար է ածված և, ինչպես արդեն ասացի, անասելի ջանքերի գնով: Համաձայն դրված պայմանի՝ մենք չէինք կարող միջամտել: Մենք համբերությամբ սպասում էինք, թե բանն ինչպես կվերջանա:

Ես ուրախ եմ, որ ամեն ինչ ի կատար է ածված, և ֆիզիկական ոլորտում մեր դեսպանորդն արդեն ձմեռային տուն ունի:

Ամեն անգամ հարկ է լինում վիթխարի ջանքեր գործադրել, որպեսզի ոչ ճկուն մատերիան տեղաշարժ ունենա: Եվ եթե մենք կարողանայինք մասնակցել շինարարությանը, ապա գործն անհամեմատ ավելի քիչ ջանքեր կպահանջեր: Ինչպես արդեն ասացի, պայմանն այնպես էր դրված, որ մարմնավորվածները պետք է ցուցադրեին իրենց հավատի չափը: Եվ տարբեր մարդկանց հետ կապված՝ տարբեր իրավիճակներ եղան: Շատերը կորցրին իրենց հավատն ու հույսը, շատերն էլ սկսեցին կասկածանքներ ապրել:

Սակայն, ի պատիվ որոշների, նրանք դիմացան ծանր փորձությանը և մինչև վերջ կարողացան շոշափելի օգնություն ցուցաբերել մեր դեսպանորդին. դա եղավ մեր փողի էներգիայի, մեր Սիրո և Երախտագիտության դրսևորման, մեր աղոթքային օժանդակության տեսքով:

Մենք, մի կողմ քաշված, սպասում էինք դրված փորձի ավարտին:

Դե ի՞նչ, այժմ եկել է գործելու մեր հերթը: Եվ ես վստահ եմ, որ դուք շատ շուտով կուրախանաք այն փոփոխություններով, որոնք տեղի կունենան:

Մի՛ ջանացեք ամեն գնով թողնել ամեն ինչ և տեղափոխվել այն երկիրն ու այն մարզը, որտեղ ապրում է մեր դեսպանորդը: Օրինանքները չեն հապաղի տեղալ գործերի վիճակի վրա՝ ամբողջ երկրագնդի մասշտաբով: Փոփոխությունները դուք կգզաք՝ անկախ այն բանից, թե երկրագնդի որ մասում եք գտնվում:

Ես երջանիկ եմ, որ մեր փոքրիկ պայմանը դուք ընդունեցիք և պատվով ի կատար ածեցիք: Հիմա մեր հերթն է՝ այն գորագնդերի հերթը, որոնք Երկիր մոլորակի նույր ոլորտում են գտնվում:

Դուք չեք էլ պատկերացնում, թե ի՞նչ մակարդակի հնարավորություն է ակնկալվում, և ձեր ամենահամարձակ երազներում անգամ չեք մտորել նման գալիքի մասին:

Ես այսօր ձեզ չեմ ներկայացնի մեր այն մտահղացման մանրամասները, որոնք նախատեսվում են առաջին հերթին Ռուսաստանի համար՝ որպես մի երկրի, որը վերջապես պետք է սկսի բացահայտել իր ներուժը և օրինակ ցույց տա մնացած աշխարհին, թե ինչպես պետք է ընթանալ նոր ուղով, հոգևոր առաջընթացի և հոգևոր զարգացման ուղով:

Մենք երջանիկ ենք ձեզ նոր հնարավորություն ներկայացնելու և դրա սկիզբն ազդարարելու համար...

Եվս մի փոքր ժամանակ կանցնի, որից հետո հույս ունենք նորից հանդիպելու ձեզ հետ և տալու այն, ինչի կարիքը դուք ամենաշատն ունեք. մեր օժանդակությունը, մեր էներգիան, մեր էներգետիկական կարողությունը և մեր Ուսմունքը:

Ես նորից կգամ, երբ կգա դրա ժամանակը: Եվ հուսով եմ, որ մեզնից շատերը՝ Համբարձյալ Դասերը, կօգտվեն նոր բացված հնարավորությունից և մեր դեսպանորդի սրտի միջով ընդառաջ կգան ձեզ:

Ես ուրախ եղա այսօրվա մեր հանդիպմամբ:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ ձեր նկատմամբ Սիրով

Մայր Մարիամ
8 դեկտեմբերի, 2007 թ.

**Ես այսօր եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ,
որ սիրող ու հոգատար մոր նման միշտ ձեր կողքին եմ**

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ Տառնայի միջոցով այս օրով ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ, որ մեկ անգամ ևս հիշեցնեմ այն հնարավորության մասին, որը ձեզ ընձեռվում է ամեն տարի:

Կրկնում եմ, որ ամեն տարվա դեկտեմբերի 8-ին, տեղական ժամանակով ժամը 12-ից մինչև 13-ը դուք կարող եք հատկացնել ինձ հետ հաղորդակցվելուն: Ես կընդունեմ ձեր Սիրո և երախտագիտության ամեն մի դրսևորումը: Այդ Ողորմածության Ժամի ողջ ընթացքում ես ձեզ հետ կլինեմ:

Դուք կարող եք շփվել ինձ հետ, տեսնել ինձ:

Դա կլինի այնպես, կարծես ներկա եմ ձեր կողքին: Ես ձեր առաքած էներգիան օգտագործում եմ, որպեսզի միաժամանակյա իմ ներկայությունն ապահովեմ երկրի վրա ամեն տեղ: Եվ որքան մաքուր լինի ձեր ձգտումը, այնքան շատ կզգաք իմ ներկայությունը ձեր կողքին: Այդ կերպ մենք կկարողանանք տարեցտարի վեր հանել ֆիզիկական ոլորտի թրթռանքները:

Փոխարենն Աստված ձեզ հնարավորություն է տալիս, որ դիմեք ինձ ձեր այն ցանկությունների իրականացման հայցով, որոնք վերաբերում են հենց ձեզ կամ ձեր մերձավորներին:

Դուք կարող եք խնդրել ձեր բոլոր ցանկությունների իրականացումը, նույնիսկ այնպիսի ցանկությունների, որոնց իրականացումը ձեզ անհնարին է թվում: Ես կընդունեմ ձեր բոլոր ցանկություններն իմ սրտի մեջ և կխնդրեմ Աստծուն, որ բավարարի ձեր խնդրանքները:

Ինձ համար կարևոր չէ ձեր հավատամքն ու որևէ որոշակի կրոնի ձեր պատկանելությունը. բոլորիդ իմ զավակներն եմ համարում: Եվ ես ինձ վրա եմ վերցնում ձեր մասին հոգալու գործը՝ ձգտելով, որ բավարարեմ ձեր կարիքներն ու պահանջները:

Ձեզ մնում է միայն տարեկան մեկ ժամ հատկացնել ինձ:

Դուք կարող եք լսել կամ երգել ինձ նվիրված երգեր, կարող եք կարդալ իմ Վարդարաններն ու ինձ ուղղված աղոթքները...

Դեպի ինձ ուղղված ձեր սրտերի մղման շնորհիվ ես կլսեմ ձեզ և կգործադրեմ բոլոր ջանքերս, որպեսզի բավարարություն տամ ձեր խնդրանքներին: Ավաղ, ոչ միշտ է ձեր առաքած աղոթքների ու Սիրո էներգիան բավարարում, որ իրագործվի ձեր խնդրանքը:

Ուստի ես անչափ երախտապարտ կլինեմ ձեզ, եթե կարողանաք ավելի հաճախ հիշել ինձ և առաքել ինձ ձեր Սիրո և աղոթքային էներգիան:

Հենց որ ձեր կյանքում բարդ իրավիճակ ստեղծվի, այն ազդանշան թող լինի ձեզ համար, որ վաղուց ինձ չեք դիմել, այդ պատճառով ես չեմ կարողացել կարգավորել այդ իրավիճակը և դրա ընթացքը տանել ամենահեշտ ուղով:

Մշտապես հիշեք, որ Աստված ձեզ պատժել չի ցանկանում, այլ ցանկանում է, որ ընթանաք Սիրո Ուղով: Եվ եթե դուք փոքր երեխայի պես թույլ եք տալիս վատ արարքներ, ապա մի՛ մոռացեք զոջալ դրանց համար և խնդրել ինձ, որ ձեր թույլ տված սխալները չափազանց խիստ հատուցման չհանգեցնեն: Քանզի Օրենքը պահանջում է, որ ձեր բոլոր արարքները, դրանց էներգիան, վերադառնան ձեզ: Այդ դեպքում դուք կտեսնեք ձեր սեփական սխալները և միջոցներ ձեռք կառնեք դրանք ուղղելու համար:

Կարևոր չէ, թե քանի անգամ եք սխալվել, այլ կարևոր է բարեպաշտ լինելու և թույլ տրված սխալներն ուղղելու ձեր մշտական ձգտման առկայությունը:

Ձեր մարդկային գիտակցությամբ դուք չեք կարող գնահատել, թե որքանով է ձեր արածը լավ կամ վատ երևում Աստծո աչքին, ուստի ավելի հաճախ ձեր հայացքը հառեք Երկնքին՝ օգնություն ստանալու ակնկալիքով: Ձեր մեղքերի քավումը խնդրեք:

Երբեմն մեկը հասարակության կարծիքով շատ վատ արարք է գործում, բայց Աստված դա մեղք չի համարում, քանզի այդ մարդն Աստծո ձեռքում որպես գործիք է ծառայել, որպեսզի ուրիշ մեկը կարողանա բեռնաթափել իր կարման:

Հատկապես հենց դրա համար է ասվում, որ չպետք է դատեք: Մի՛ դատեք, և չեք դատվի:

Սակայն երբեմն ամենաթողություն չպետք է թույլ տալ այն անհատների նկատմամբ, ովքեր չափազանց հեռու են գնում իրենց չարագործություններով՝ հուսալով, որ Աստված այդ ամենը կների:

Աստված շատ ներողամիտ է և համբերատար, սակայն եթե մարդը չի ուզում իր արածներից դաս առնել, ապա հենց ինքն է իրեն կանգնեցնում շատ բարդ իրավիճակի առաջ. և այն բանից, թե

որքանով է մարդը խոնարհաբար ընդունում այն հանգամանքները, որոնցում հայտնվել է, Աստված դատում է նրա սրտի անկեղծության ու զղջման աստիճանի մասին:

Միշտ հիշեք, որ երբ կյանքում կանգնում եք ձեր տեսակետից ծանր ու անարդարացի իրավիճակների առջև, դեպքերի 100 տոկոսում հենց ինքներդ եք պատճառ հանդիսացել այդ իրավիճակի ծագման համար՝ թույլ տալով սխալ նախընտրանքներ և վատ արարքներ:

Ձեր կյանքում ամեն ինչ որոշվում է ձեր նախկին նախընտրանքներով ու արարքներով:

Բայց ձեր ճակատագրում ոչ մի կանխորոշվածություն չկա, քանզի ընդամենը մեկ ճիշտ ընտրությունն ու բարի գործը երբեմն շատ մեղքեր են քավում, այդ թվում նաև անցյալում գործած ձեր ամենասահավոր մեղքը:

Ես այսօր եկա, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ սիրող ու հոգատար մոր նման միշտ ձեր կողքին եմ:

Ես սիրում եմ բոլորիդ՝ իմ գավակներին, և հոգում եմ ձեր մասին:

Ապրեցեք համերաշխությամբ ու Սիրով:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը

Սանատ Կումարա

20 դեկտեմբերի, 2007 թ.

Դուք պետք է Սպասավորությանը նվիրաբերեք ձեր ողջ կյանքը

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ, և ուրախության արցունքներով են լցվել իմ աչքերը...

Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչպե՞ս են ցնծում Երկնոլորտները... Ո՛չ այն բանի համար, որ մենք կրկին հնարավորություն ունենք աշխատելու մեր դեսպանորդի միջոցով. Երկնոլորտները ցնծում են, որովհետև գտնվեցին շատ զգալուն սրտեր՝ պատրաստ ընկալելու մեր թրթռանքներն ու ընթանալու մեր առաջնորդությամբ:

Դուք գիտեք, որ ոչ շատ վաղ անցյալում՝ ընդամենը մի քանի տարի առաջ, մենք իրար էինք անցել, որովհետև հնարավորություն չկար աշխատելու մեր դեսպանորդների միջոցով, հնար չկար մոտենալու մարմնավորված այն անհատներին, որոնք փորձում էին հաղորդակցվել մեզ հետ, բայց ձևը չէին գտնում:

Շատ շատերն են հիմա պատրաստ, և այդ շատերի համար է, որ տալիս եմ իմ այսօրվա ուղերձը:

Նկատե՛լ եք արդյոք, թե որքա՛ն ծանր են դառնում ձեզ համար դեկտեմբերյան այս օրերը: Եվ բանն այն չէ, որ դուք ձեզ վատ եք զգում և ձեր վատ զգալն արդարացնում եք աշխատավայրում ու տանն ունեցած ավելորդ ծանրաբեռնվածությամբ:

Բանն այն է, որ Երկրի համար որոշում է կայացվել թրթռանքների նոր մակարդակի անցման մասին, և ես եկել եմ ձեզ տեղեկացնելու, որ անվերջ քայլերի շարքից ևս մեկ քայլ է կատարվել դեպի մեր աշխարհների մերձեցման կողմը:

Իմ այս ուղերձը կարդալուց հետո մի՛ շտապեք այս լուրը հայտնել ձեր ծանոթներին ու աշխատակիցներին: Ես խոսում եմ անձամբ ձեզնից յուրաքանչյուրի հետ: Եվ ձեզնից ամեն ոք, իմ այս ուղերձը կարդալով, կստանա այն միտքը, այն թրթիռը, որը նախատեսված է հենց իր համար:

Մեր աշխարհները մերձեցել են իրար, և դա հնարավոր դարձավ ձեր ջանքերի, ձեր Հավատի ու ձեր Սիրո շնորհիվ: Ես վստահ եմ, որ ձեր նվաճած ներկայիս մակարդակը կկարողանաք պահպանել:

Կային և ուրիշները, որոնց հետ մենք հույսեր էինք կապել, և որոնք ուրախությամբ ու խանդավառությամբ ձեռնամուխ էին եղել մեր գործերի կատարմանը: Ու՛ր են հիմա նրանք. ամեն մեկը կատարեց իր ընտրությունը և իր ազատ կամքին համապատասխան՝ բազում մարմնավորումների իր զարգացումն անցյալի գիրկը նետեց:

Ուստի ես այսօր ձեզ այցի եմ եկել ձեզ հիշեցնելու, որ պատրանքային աշխարհում ձեռք բերած ձեր յուրաքանչյուր նվաճումն անընդհատ ջանքերի ներդրում է պահանջում, որպեսզի ամրապնդվի:

Դուք ձեզ չեք կարող թույլ տալ, որ ձեր նախկին ընկերների շրջապատում թուլանաք ու հանգստանաք, չեք կարող թույլ տալ ինքներդ ձեզ, որ հանգստանաք ձեր սիրած վայրերում: Դուք պետք է անընդհատ աշխատեք, եթե ուզում եք, որ ձեր զարգացումը վերընթաց ելնի դեպի աստվածային գիտակցության գագաթը:

Հենց որ մի փոքր թուլանաք, անմիջապես կսահեք դեպի սարավանջի ցածրադիր մասը:

Այն, դեպի ուր ձեզ կանչում են, նորություն չէ ձեզ համար: Լարման այդ ազնիվ վիճակը մշտապես ձեզ ուսուցանել են տարբեր ուսուցիչներ: Դուք պետք է կարողանաք համատեղել հանգիստն ու աշխատանքը, բայց և մշտապես ձեր սրտերում պետք է պատրաստ լինեք ի կատար ածելու Հիերարխիայի հանձնարարությունները:

Շատերն են պատրաստ եղել, շատերն են մեծ բարձունքների հասել իրենց հոգևոր առաջընթացում, բայց հետո անհայտ պատճառով շեղվել են և սկսել զբաղվել, ինչպես իրենց է թվում, «կարևոր գործերով»: Ձեզ համար ավելի կարևոր գործեր չկան, քան Հիերարխիային, Երկիր մոլորակի կենսահոսքերին օգնելն է: Ձեր մարմնական խելքը ձեզ համար հազար ու մի պատճառաբանություն է գտնում հենց այն պահին, երբ պետք է կատարեք ձեր մարմնավորման առաքելությունը: Եվ այն պահին, երբ պետք է ուսներդ դեմ տաք ու կրեք ձեր բեռը Ուղու ամենադժվար հատվածում, հանկարծ նախանձելի առույգությամբ շուռ եք գալիս և ընթանում լրիվ հակառակ ուղղությամբ: Եվ բոլոր այն նշաններն ու խոսքերը, որոնք ձեզ ենք առաքում մեր դեսպանորդի միջոցով, արդեն հասու չեն դառնում ձեր գիտակցությանը:

Դուք պետք է ձեր մեջ զարգացնեք Սպասավորության որակ: Դուք պետք է Սպասավորությանը նվիրաբերեք ձեր ողջ կյանքը:

Իմ խոսքերը շատ խիստ ու անհականալի են թվում բոլոր նրանց, ովքեր դեռ պատրաստ չեն դրանք հասկանալու: Այդ պատճառով ես հենց սկզբում ասացի, որ դիմում եմ նրանց, ովքեր պատրաստ են, իմ այն զավակներին, որոնց հետ աշխատել եմ շատ մարմնավորումների ընթացքում:

Դուք հասել եք Ուղու ամենապատասխանատու մասին: Եվ ձեզնից պահանջվում է ձեր այն ուժերի և ունակությունների առավելագույն լարումը, որոնք ձեռք եք բերել նախորդ մարմնավորումների ընթացքում:

Ես նորից ձեզ այցի եմ գալիս, ո՛վ իմ սիրելիներ, իմ արծվաբնից ելած ձագեր: Ես ձեզ սնուցել եմ դարերի իմաստությամբ, տվել ձեզ, որ ըմպեք Աստծո Լույսի էներգիան: Ես իրավասու եմ ձեզնից օգնություն ակնկալելու և իրավասու եմ հույս կապելու ձեզ հետ դժվար պահին:

Ես լիահույս եմ, որ դուք կարձագանքեք իմ կոչին: Եվ եթե թույլ եք տվել մեծ ու փոքր սխալներ, ապա մի՛ համառեք. վերադարձեք և ապաստանեք հայրական թևի տակ:

Չկան այնպիսի վրիպումներ, որ հնարավոր չլինի ուղղել անշահախնդիր Սպասավորությամբ և Վեհապետների նկատմամբ նվիրվածությամբ:

Ես հուսով եմ, որ այսօրվա իմ ուղերձը ձեզ առույգության լիցք կհաղորդի և չի ստիպի, որ զբաղվեք անվերջանալի ինքնափորձումով և ընկնեք աններդաշնակ վիճակի մեջ:

Այն, ինչ անցյալ է, անցյալում էլ կմնա: Պետք է մտածել ներկայի մասին՝ այն մասին, թե ինչ անեք հենց հիմա և ինչպես առաջ տանեք ձեր Սպասավորության գործը:

Այժմ բավարար չեն խմբեր կազմվել ու աղոթքային գործառնությունները: Դուք շոշափելի օգնություն պետք է ցուցաբերեք այն հոգիներին, ովքեր դեռևս չեն կարող ըմբռնել համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքը: Մենք մտահոգ ենք շատերի համար, ովքեր դեռևս տրվում են պատրանքին և չեն կարողանում դուրս պրծնել այն սարդոստայնից, որի մեջ հայտնվել են ձեր հասարակությունում տիրապետող զանգվածային մշակույթի, ավելի ճիշտ՝ անկույտության կանոնների պատճառով:

Ձեզնից յուրաքանչյուրը պետք է հոգ տանի շատ մոլորյալ հոգիների համար: Նրանցից շատերը նույնիսկ Լույսի մի կայծ չեն տեսնում իրենց պարուրած կյանքում, քանի որ շատ ծանր է իրենց ստեղծած կարման: Եվ ձեզնից յուրաքանչյուրն, ով իմն է, կարող է նրանց տալ իր Լույսի մի մասնիկը, որպեսզի այդ մոլորյալ հոգիները կարողանան տեսնել, որ կա նաև ուրիշ աշխարհ, կան ուրիշ կենսակերպեր: Կա այն Իրականը, հանուն որի արժե ապրել:

Հենց ձեզ էլ երբեմն չի բավականացնում Մերն ու վստահությունը ընտրած Ուղու ճշմարտացիության նկատմամբ:

Ուստի ամեն անգամ, երբ կասկածները կտիրեն ձեզ, և պատրանքի մշուշը կթանձրանա, պահեք ձեր հայացքի դեմ իմ պատկերը: Ես իմ այդ պատկերի մեջ եմ դնում իմ ներկայությունը, որպեսզի ամեն մի դժվար պահի, հենց որ նայեք դրան, կարողանամ իրապես օգնել ձեզ: Ձեր աշխարհում դա պարզապես նկար է, իսկ իմ աշխարհում՝ նկարի հակառակ կողմում, դեպի ձեզ մեկնած իմ ձեռքն է, որը բռնելով՝ կկարողանաք դուրս գալ կյանքի դժվարին իրադրությունից կամ գիտակցության վատ վիճակից:

Ես այս օրով եկել էի և հիմա լքում եմ ձեզ: Մինչ նոր հանդիպումներ...

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ՕՍ

Մայր Մարիամ
21 դեկտեմբերի, 2007 թ.

Իմ ամեն մի նոր գալստյան հետ ես ինձ ավելի ու ավելի վստահ եմ զգում Երկրի վրա

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ կրկին ձեզ այցի եկածը: Վարդերի բույրն է ուղեկցում իմ այս այցին:

Հնարավոր է, որ դուք չեք նկատում ո՛չ մեր ներկայությունը ձեր կողքին, ո՛չ էլ այն նշանները, որոնք մենք անխոնջ կերպով առաքում ենք ձեզ: Սակայն կա մի բան, որն ակնհայտ է դառնում և հնարավոր չէ թաքուն պահել նույնիսկ այն անհատների գիտակցությունից, որոնք հեռու են որևէ դավանանքով, Համբարձյալ Վեհապետների Ուսմունքով և այլևայլ նորահայտ ուսմունքներով ու շարժումներով հրապուրվելուց: Եվ այդ ինչ-որ բանը դրսևորվում է սովորական կյանքում: Դուք ձեր առօրեական ունայնության մեջ հանկարծ բարձրացնում եք ձեր գլուխը և նկատում մեր աշխարհի որևէ նշան: Կամ, չգիտես ինչու, հանկարծ հայտնվում եք օտար մի վայրում և փորձում հիշել, թե ե՞րբ եք այստեղ էլի եղել: Կարծես թե այդտեղ երբեք չէիք եղել, բայց վայրը ձեզ անհավոր ծանոթ է թվում: Հանկարծ մտաբերում եք անցած կյանքերի մասին ձեր կարդացած հոդվածը, և մեղմ մի սարսուռ է բարձրանում ձեր ողնաշարն ի վեր. քանզի հիշում եք այդ վայրը, և նույնիսկ ձեր հայացքի դեմ հառնում են անցած կյանքի պատկերները:

Եվ եթե նույնիսկ հավատ չեք ընծայում որևէ գաղտնագիտության, երբեմն վախենում եք ինքներդ ձեզ խոստովանել, որ հաղորդակցվել եք նուրբ աշխարհի հետ:

Տեսնո՞ւմ եք, ո՛վ իմ սիրելիներ, թե որքա՛ն մոտ են իրար մեր աշխարհները: Տեսնո՞ւմ եք, ո՛վ իմ սիրելիներ, թե որքա՛ն են դրանք իրար մերձեցել վերջին մի քանի տարիների ընթացքում:

Գիտե՞ք նաև, որ ես շատ ու շատ մարդկանց եմ երևում. և դա տեղի է ունենում Տիրոջ մեծ ողորմածության շնորհիվ: Նա տալիս է ինձ այդ հնարավորությունը, որովհետև Երկրի մարդիկ մշտապես նշանների կարիք են զգում. նաև այն բանի կարիքն են զգում, որ իրենց մշտապես հիշեցվի այլ, ավելի բարձր աշխարհի մասին, ուր ձգտում են հասնել մարդկության լավագույն ներկայացուցիչների հոգիները:

Հենց որ սկսեք մտորել մեր աշխարհի մասին, դուք անպայման կնկատեք մեր ուղերձները, որոնք մենք թողնում ենք այս ու այնտեղ, նույնիսկ ձեր իրերի արանքում:

Երբևէ չե՞ք փորձել գրուցել հրեշտակների հետ: Երբևէ չե՞ք խնդրել հրեշտակներին, որ օգնեն գտնելու ձեր կորցրած իրերը: Փորձե՛ք հաղորդակցվել նրանց հետ: Հիմա ծննդյան տոներին նախորդող ժամանակն է, և առավել, քան երբևէ, հրաշքներն ավելի իրական են դառնում:

Ես այս օրով եկել եմ և ձեզ եմ փոխանցում իմ տրամադրությունը, թեթևասահությունն ու քնքուշ Սերը, որով լի է իմ սիրտը:

Ձեք պատկերացնի, թե որքա՛ն ուրախ եմ, որ կարող եմ վերջապես մեր դեսպանորդի միջոցով այցի գալ Ռուսաստան և տալ իմ ուղերձը:

Ձեք պատկերացնի, թե որքա՛ն նշանակալի հաղթանակ էր Երկրի համար, երբ մենք զգացինք, որ դուք ընդունում եք մեր դեսպանորդին: Ֆիզիկական ոլորտում դա արտահայտվեց աշխատանքի ու ներխուժումների համար նախատեսված շենքով, իսկ նուրբ ոլորտում՝ աստվածային հնարավորության տեսքով, որը մենք ստացանք Ռուսաստանի հողում մեր աշխատանքի համար:

Ձեր գործադրած ջանքերն իզուր չեն անցնում: Պատկերացրեք այն հրեշտակներին, որոնք հատիկ առ հատիկ հավաքում են ձեր առաքած Սիրո էներգիան և Երկինք առաքած Երախտագիտությունը: Տարեվերջին հավաքվում են ձեր էներգիայի հսկա պահուստներ, և Կարմայական Վարչությունն ամեն տարեվերջի իր նիստում (այն արդեն սկսվել է) հնարավորություն է ստանում տնօրինելու ձեր էներգիան և նոր ողորմածություններ ու հնարավորություններ առաքելու Երկրի մարդկանց:

Ես այս օրով եկել եմ, որպեսզի շնորհակալություն հայտնեմ ձեր այն աշխատանքի համար, որ կատարել եք այս ընթացիկ տարում: Ես առանձնահատուկ երախտագիտություն եմ զգում այն հոգիների հանդեպ, ովքեր ընթացիկ տարում անդադար Վարդարաններ են ընթերցել. շնորհակալ եմ նաև ձեզ բոլորիդ, քանզի Սիրո այն էներգիան, որը ստացել եմ, հնարավորություն ունեմ ներդնելու Երկրի մարդկությանն օգնելու գործում:

Ձեր աղոթքներում օգնության համար դիմե՛ք ինձ: Ես կարող եմ ձեզ օգնել: Եվ ես դա մեծ հաճույքով եմ անում, երբ ձեր կարման օգնություն ցուցաբերելու հնարավորություն ընձեռում է: Սակայն որոշ հատուկ դեպքերում լրացուցիչ էներգիայի կարիք է զգացվում: Եվ ես անչափ ուրախ եմ, որ դեկտեմբերի 8-ի Ողորմածության Ժամի ընթացքում ձեր առաքած Սիրո էներգիան ինձ հնարավորություն տվեց օգնելու Երկրի շատ ու շատ հոգիների:

Երախտապարտ եմ ձեզ...

Այժմ՝ այս տարեվերջին, ձեր աղոթքների ու ձեր Սիրո ողջ էներգիան, որը դուք առաքել եք Մայր Երկրին և մեզ՝ Համբարձյալ Դասերիս, Կարմայական Վարչության որոշմամբ կօգտագործվի նոր ողորմածություններ ձեռք բերելու համար, որպեսզի մեր ներկայացուցչությունը Երկրում նոր զարգացում ստանա: Եվ մենք լիահույս ենք, որ ձեր ու մեր դեսպանորդի օգնությամբ կհաջողվի ստեղծել Լույսի նոր կիզակետ և տարածել այդ կիզակետի ազդեցությունը ողջ Երկիր մոլորակի վրա:

Ես այս խավար ժամանակում այցի եմ եկել արևմտյան կիսագնդին: Բայց հույս ունեմ, որ ճիշտ այնպես, ինչպես խավար ժամանակին անխուսափելիորեն զարուն է հաջորդում, նույնպես էլ կբացվի մարդկային գիտակցության զարունը, և այս բարդ ժամանակներում Երկրի վրա մարմին առած յուրաքանչյուր մարդու սրտում դուռ կբացվի, որով Երկնքի Լույսը կհորդի դեպի ձեզնից յուրաքանչյուրի ներաշխարհը:

Ես լի եմ այդ հույսով, և իմ ամեն նոր զայստյան հետ ինձ ավելի ու ավելի վստահ եմ զգում Երկրի վրա, քանզի ձեր նվիրվածությունն ու Սերն ինձ թույլ են տալիս գտնվելու ձեր կողքին և ցուցաբերելու շոշափելի օգնություն: Օ՛, ինձ համար չկա ավելի մեծ երանություն, քան կարիքավորներին օգնություն ցուցաբերելն է այնժամ, երբ դա հնարավոր է դառնում ինձ համար:

Մի՛ ափսոսացեք ձեր այն աղոթքների էներգիան ու Սերը, որոնք դուք առաքում եք ձեզ շրջապատող ամենայն գոյին: Ձեր առաքած էներգիայի ամեն մի հատիկը խնամքով պահպանվում և օգտագործվում է ի շահ Երկիր մոլորակի կենսահոսքերի:

Իսկ հիմա եկավ մեր հրաժեշտի պահը: Սակայն ես հուսով եմ, որ ինձ կրկին կթույլատրվի այցի գալ և էլի Տասյանայի միջոցով: Քանզի շա՛տ են այն Վեհապետները, որոնք նույնպես կամենում են մեր դեսպանորդի սրտի միջով հաղորդակցվել ձեզ հետ և տալ ձեզ իրենց խրատը, իրենց էներգիան ու Սերը...

Շատ ու շատ Համբարձյալ Վեհապետների է անհրաժեշտ Երկրի մարդկության հետ հաղորդակցության մեջ մտնելը: Այդ հաղորդակցության շնորհիվ Համբարձյալ Դասերն ի գործ են դառնում ավելի մեծ հաջողությամբ լուծելու այն խնդիրները, որոնք մոտակա ժամանակներում պետք է իրենց լուծումը ստանան Երկրում:

Ես լքում եմ ձեզ և, որպես հրաժեշտի նշան, ձեզ եմ առաքում իմ սրտի ողջ Սերը:

Ձեր նկատմամբ սիրով՝ Մայր Մարիամ

Տեր Սուրիա
22 դեկտեմբերի, 2007 թ.

Ուսմունք Երկիր մոլորակի կենսահոսքերի նկատմամբ պատասխանատվության մասին

ԵՍ ԵՄ Սուրիան՝ Մեծ Կենտրոնական Արևից այս օրով կրկին ձեզ այցի եկածը: Ամեն իմ զայստյանը ես ջանում եմ ձեր մոլորակին բերել արևային էներգիայի մի մասնիկ: Եվ հատկապես հիմա, երբ և՛ դուք, և՛ ձեր մոլորակը, ինչպես երբեք, արևային էներգիայի կարիքն ունեք:

Այսօր եկել եմ, որպեսզի հերթական ուղերձս փոխանցեմ Երկրի մարդկանց: Ես օգտվում եմ մեր դեսպանորդի բարեհաճությունից. նա ինձ հրավիրել է օգտվելու իր բոլոր ունակություններից, որպեսզի կարողանամ տալ իմ ուղերձը:

Եվ այսպես, երբ դուք հասուն մարդիկ եք դառնում, մոռանում եք ձեր բոլոր մանկական խաղերը. և այն կարոտը, որը երբեմն ձեր մանկության անհոգ խաղերով հագեցած օրերի հուշերով պատում է ձեզ, ավա՛ղ, մթագնվում է օրվա ձեր կարիքներով ու հոգսերով: Եվ առօրեական այդ ունայնության մեջ դուք մոռանում եք ամենագլխավորի մասին՝ այն մասին, թե ինչու՞ եք մարմնավորվել այս ոչ այնքան հրապուրիչ մոլորակի վրա: Արևի անբավարարությամբ պայմանավորված ձեր թախիծը գուցակցվում է մեր աշխարհի նկատմամբ տաժած ձեր կարոտի հետ, որի մասին ձեր հոգին հիշողություններ է պահպանում:

Իհարկե, Երկիր մոլորակի վրա ձեր լինելը ժամանակավոր է և կարճատև: Եվ Աստծո տեսակետից բանական բան չէր լինի, եթե ձեր գոյությունը սահմանափակվեր միայն մի կյանքով և մի մոլորակով:

Ժամանակի ընթացքում դուք կհիշեք այն իրական աշխարհը, որտեղից դուրս են եկել ձեր հոգիները: Եվ իմ այսօրվա այցի խնդիրներից մեկն էլ հենց այն է, որ ձեզ հիշեցնեմ այդ մասին:

Ես եկել եմ մի ժամանակ, երբ տարվա ամենախավար շրջանն է հյուսիսային կիսագնդի համար, որտեղ բնակվում է Երկրի բնակչության զգալի մասը: Իմ գալուստը համընկել է

Կարմայական Վարչության նիստի անցկացման հետ. նաև ամսի 23-ի նախօրյակն է՝ մի օր, երբ ձեզ աստվածային հնարավորություն է տրվում, որպեսզի փոխակերպեք հաջորդ ամսվա կարման:

Ինչպես տեսնում եք, իմ գալուստը պատահական չէ, և ես դրան պատրաստվել եմ մանրակրկիտ կերպով: Քանզի այժմ ես ձեզ պետք է հայտնեմ Աստծո նոր հնարավորության մասին և լուսավոր վաղվա հույս ներարկեմ ձեզ:

Մենք լիովին գիտակցում ենք, որ մարդկության կուտակած կարմայի բեռը ձեզ թույլ չի տալիս զգալ Կյանքի լինելիության երանությունը: Դուք մոռացել եք երանության մասին և չափազանց խորն եք սուզվել մատերիական աշխարհում: Ես եկել եմ, որ ճոպան մեկնեմ ձեզ, որպեսզի հնարավորություն ձեռք բերեք արագացնելու ձեր անցյալի կարմայի փոխակերպման գործը:

Ձեզնից նրանք, ովքեր ցանկանում են, կարող են անձամբ ինձ դիմել հետևյալ կանչով. «Ո՛վ պաշտելի Տեր Սուրիա, ես հոգնել եմ առանց Արև սպրեղուց: Ես հոգնել եմ աշխարհի պատճառած թախծից: Ուզում եմ ավելի արագ վերադառնալ դեպի լուսավոր և ուրախ աշխարհները: Ես վառվում եմ Երկիր մոլորակը վերափոխելու ցանկությամբ, որպեսզի այն դառնա տիեզերքի ամենահրաշալի մոլորակը: Աղաչում եմ, որ օգնես ինձ և մեր մոլորակին...»:

Եթե ձեռքի տակ ունենամ 10 000 այդպիսի անկեղծ կանչեր, ապա խոստանում եմ, որ Մեծ Կենտրոնական Արև վերադառնալով՝ անմիջապես նոր շնորհներ կպահանջեմ Երկիր մոլորակի համար:

Կանչով ինձ դիմելու ընթացքում դուք այնպիսի անկեղծությամբ պետք է բարիք կամենաք հարազատ մոլորակին, որ այդ պահին ձեզ համար առավել կարևոր բան չլինի, քան Երկիր մոլորակի անցնելն է գիտակցության նոր մակարդակի վրա: Բավարար է, որ ունենամ ձեր սրտերի 10 000 անկեղծ կանչերը, և ես անհապաղ կփոխեմ Երկիր մոլորակի իրավիճակը:

Մտածե՛ք իմ առաջարկի մասին: Մի՞թե ձեր մեջ չեն գտնվի ընդամենը 10 000 նվիրյալ ու անկեղծ սրտեր:

Ես եկել եմ, որ ազդարարեմ այդ հնարավորությունը: Օգտվե՛ք դրանից, և կտեսնենք, թե հետո ինչ կլինի:

Ես նաև ձեզ խորհուրդ կտայի, որ միանայիք վաղվա համար նախատեսված «Ես սիրում եմ քեզ, Երկիր» ընդհանուր մեղիտացիային: Ձեր մասնակցությամբ կգորեղանա ճիշտ ձեզ նման հրեղեն սրտերի միասնական պոռթկումը, և մենք հույս ունենք, որ ձերբազատված էներգիան բավարար կլինի, որպեսզի Երկիր մոլորակը նվազագույն կորուստների գնով կարողանա անցում կատարել որակապես նոր մակարդակի:

Դուք նկատում եք, որ Երկրի իրավիճակը փոխվում է: Դա տեսնում եք ձեր ֆիզիկական աչքերով, տեղեկանում եք այդ մասին ռադիոյով ու հեռուստատեսային լրատվությամբ:

Հեշտ գործ չէ մոլորակի փոփոխությունների ուղղությունը պահելը՝ միաժամանակ համակշռության վիճակի բերելով բոլոր այն բազմապլան էներգիաները, որոնք ծնունդ են առել ընդհանրական մարդկային գիտակցությամբ: Իրավիճակն այնպիսին է, որ տառացիորեն ձեզնից յուրաքանչյուրիցդ է կախված, թե ինչպես կընթանա բարեփոխումների գործընթացը: Երկիրը, ինչպես և ձեզնից յուրաքանչյուրը, շատ ծանր վիճակի մեջ է: Երկիրն ահավոր գերբեռնվածության տակ է, ինչը պայմանավորված է ձեր, այսպես կոչված, քաղաքակրթության ազդեցությամբ: Փորձեք պատկերացնել, թե որքան ծանր վիճակում են թե՛ Երկիրը և թե՛ այն տարրոգիները, որոնք կոչված են կարգ ու կանոն պահպանելու և խնամելու մոլորակը այն պայմաններում, երբ ձեր աշխարհում այդպիսի բռնություն է ցուցաբերվում բնության հանդեպ:

Հենց միայն ընդհատ-ընդհատ ռիթմով ռոք երաժշտությամբ բարձրաձայն միացված բարձրախոսի ազդեցությունը հերիք է, որ հազարավոր տարրոգիներ ցնցում ապրեն և, փոխանակ զբաղվելու կարգ ու կանոն պահպանելու իրենց պարտականությամբ, հիվանդանան ու նույնիսկ զոհվեն:

Դուք միայն ձեր մասին չպետք է մտածեք: Ձեր պարտքն է հոգ տանել նաև Երկիր մոլորակի այն բնակիչների—համար, որոնց էվոյուցիան ընթանում է նուրբ ոլորտում: Մտորե՛ք, թե ի՞նչ օրինակ եք ծառայում ձեր կրտսեր եղբայրների համար: Էլ չասած, որ պարտավոր եք լրջորեն խորհել այն մասին, թե ի՞նչ օրինակ եք ծառայում ձեր սեփական երեխաների համար: Չէ՛ որ ձեր ոչ մի գործողությունը և ոչ մի խոսքն անհետևանք չեն անցնում:

Ձեր գործողությունները, խոսքերը, մտքերն ու զգացմունքները շարունակում են գոյատևել նուրբ ոլորտում, ինչպես աստեղային դրոշմահետքեր: Եվ, որպեսզի մոլորակը մաքրվի այդ ամբողջ մարդկային արտադրության աղբից, որը կուտակված է մոլորակի նուրբ ոլորտում, մի ամբողջ բանակ է պետք՝ կազմված հրեշտակներից, տարրոգիներից, այլ աշխարհներից եկած կամավորներից և մարդկության այն լավագույն ներկայացուցիչներից, որոնք այս երկար զիշերների իրենց քունն օգտագործում են, որպեսզի մասնակցեն հարազատ մոլորակի հիմնարար մաքրման գործին: Առավոտյան կողմ նրանք արթնանում են այնպես հոգնած ու ջարդված, կարծես

քնի այդ ժամերը չեն էլ եղել: Իրականում այդ կամավորներն իրենց նուրբ մարմնով ծանր աշխատանք են կատարում՝ կապված Երկիր մոլորակի նուրբ ոլորտները մարդկային մնացուկներից մաքրելու հետ, ինչպես նաև օգնություն են ցուցաբերում տկարացած տարրոգիներին:

Ես այսօր նկարագրեցի այն աշխատանքը, որը կատարում են Լույսի Էակները, որպեսզի մարդկային մտքերի ու զգացմունքների աղբից մաքրեն ձեր մոլորակը: Եթե թեկուզ մեկ օր այդ աշխատանքը դադարեցվեր, ապա Երկիր մոլորակից ոչինչ չէր մնա: Այն կդադարեր գոյություն ունենալուց, ինչպես շատ այլ մոլորակներ են կործանվել անաստված քաղաքակրթությունների ազդեցությամբ:

Ուստի մերթ ընդ մերթ ես այցի եմ գալիս ձեզ և կոչ եմ անում խելքի գալ ու չնամանվել այն անհատականություններին, որոնք Աստծո մասին ոչինչ չեն ուզում լսել, ոչ էլ ուզում են լսել համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքի մասին:

Ամեն ոք իր ժամանակին կատանա այն, ինչին արժանի է: Եվ, հիրավի, Երկնքի բարեհաճությունն անսահման է:

Ես այս օրով այցի եկա ձեզ, որպեսզի հիշեցնեմ Երկիր մոլորակի կենսահոսքերի, ինչպես նաև հենց Կյանքի նկատմամբ ունեցած ձեր պարտականությունների մասին:

ԵՍ ԵՄ Մորիան, այսօր եղա ձեզ հետ

Վեհապետ Էլ Մորիա
23 դեկտեմբերի, 2007 թ.

Ուղերձ իմ աշակերտներին

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ հերթական ուղերձ հղելու նպատակով կրկին ձեզ այցի եկածը:

Այս կամ այն ուղերձի կարևորությունը ձեզ՝ Երկրի վրա մարմնավորվածներիդ համար սուրբեկտիվ բնույթ ունի: Դուք չեք կարող մարդկային գիտակցության մակարդակով գնահատել ո՛չ տեղի ունեցող երևույթի նշանակալիությունը, ո՛չ էլ դրա կարևորությունը մարդկության հետագա զարգացման համար:

Այդ պատճառով, որպես կանոն, մենք ձեզնից չենք պահանջում ո՛չ անհապաղ ու հրատապ որոշումների ընդունում, ո՛չ էլ անհապաղ գործողություն:

Թեև, եթե լրիվ բաց խոսենք, ապա այն աշխատանքը, որը Երկրի մարդկության հետ մենք անդադար տանում ենք, կարող էր և անհամեմատ ավել մեծ արդյունքների հանգեցնել: Քանզի մեր գործադրած ջանքերը երբեմն գերազանցում են տիեզերական բոլոր հատկացված պահուստների սահմանները: Մենք հստակ գիտակցում ենք, որ ձեզ համար դժվար է մի փոքր ավելի վեր նայել այն լճացումից և ունայնությունից, որում հայտնվում եք ամեն օր: Ուստի մենք անխոնջ գալիս և ուղերձներ ենք հղում, որոնք թեև իրենց թարմությամբ այնքան էլ աչքի չեն ընկնում, բայց ձեզ սթափվելու հնարավորություն են տալիս. և երբեմն մեր ուղերձի մի կարճ խոսքը կամ արտահայտությունը ձեզ այնպես է տեղից շարժում, որ ունակ եք դառնում ֆիզիկական ոլորտում ի կատար ածելու այն գործերը, որոնք անհրաժեշտ են, և որոնց իրագործման համար մենք մշտապես խնդրանքով դիմում ենք ձեզ:

Եվ այսպես, ամեն անգամ մեծ համբերատարությամբ ու հաստատակամորեն ես ձեզ խնդրում եմ սկսել գործելը: Ոչ միայն կարդալ թելադրություններ, աղոթքներ, Վարդարաններ, պատգամներ, այլև իրական գործողություններ ձեռնարկել ֆիզիկական ոլորտում: Հնարավոր է, այնքան էլ հստակ չեք հասկանում, թե ի՞նչ տեսակ գործողությունների մասին եմ խոսում: Ես ձեզ չեմ խնդրում, որ տապալեք այն պետության կարգը, որում ապրում եք, չեմ խնդրում, որ հանրահավաք կամ հեղափոխություն անեք: Ես ձեզ խնդրում եմ, որ անեք ձեր սովորական մարդկային գործերը, որոնք մեծավ մասամբ հենց անում էլ եք: Բայց ես խնդրում եմ, որ այդ գործերն անեք գիտակից ձևով՝ ձեր արած յուրաքանչյուր գործը դիտարկելով բարոյական Օրենքի, համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքի պրիզմայի միջով: Ես խնդրում եմ, որ ամեն օր մտորեք ձեր գործողությունների հետևանքների մասին և կշռադասեք ձեր ամեն մի քայլը:

Մտորեք, թե որքան կարող էիք դյուրին դարձնել ձեր գոյատևումը մատերիայի մեջ, եթե ձեր ամեն մի քայլը լիովին համապատասխանացնեիք համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքի հետ:

Դուք նոր կարմա չէիք ստեղծի և արագացված տեմպերով կկարողանայիք բեռնաթափել ձեր անցյալի կարման՝ կատարելով ճիշտ նախընտրանքներ:

Որքա՛ն պարզ է սա, հանճարեղ պարզ... Մենք գալիս և մշտապես նույն բանն ենք ասում: Բայց ինչու՞, ինչու՞ չեք լսում մեզ...

Ինչու՞ մեր ուղերձները կարդալուց հինգ րոպե անց մոռանում եք ձեր կարդացածը. ինչու՞ գոնե մեկ օր չեք մնում այն ճշմարիտ մտապատկերների ազդեցության տակ, որոնք մենք առաքում ենք ձեզ:

Աստված իմ, երբեմն որքա՛ն անասելիորեն դժվար է լինում մարմնավորված մարդկության հետ աշխատելը... Սակայն ես բնություն լավատես եմ և վստահ եմ, որ իմ հարյուրերորդ, չէ՛, հազարերորդ թելադրությունից հետո վերջապես ձեռքի տակ կունենամ մի քանի հարյուր նվիրյալ աշակերտների, որոնք զգայուն կերպով ունակ կլինեն ենթարկվելու իմ ղեկավարությանը և կատարելու իմ հրահանգները: Հավատացե՛ք ինձ, իմ գիտակցության համբարձյալ վիճակից անհամեմատ ավելի լավ է երևում, թե ինչ անեք և ինչպես պահեք ձեզ:

Երկրի իրավիճակը գնում է դեպի լավանալու կողմը: Այն արդեն այնքան ողբալի տեսք չունի, որքան մի քանի տարի առաջ էր, սակայն մենք կուզենայինք, որ ձեր գիտակցության զարգացումն ավելի բարձր տեմպերով առաջ գնար: Խելամիտ լուծում է գտնվել, որի շնորհիվ ձեր զարգացման տեմպերը կարագանան: Մենք կհոգանք, որպեսզի էներգիայի բաշխման գործընթացն ավելի հավասարաչափ ընթանա Երկրի մակերևույթով, որ Երկիրը դիմանա և չենթարկվի ավերիչ համադետի: Մենք նաև սովորեցինք տեղայնացնել բացասական էներգիայի այն խտացումները, որոնք առաջանում են մարդկանց գերհսկա քաղաքներում: Եվ եթե առաջ այդ խտացումները թափառում էին Երկրի մակերևույթով և որոշակի վայրերում առաջացնում անկանխատեսելի փոփոխություններ, ապա այժմ ողջ բացասական էներգիան կենտրոնացվում է իրեն ծնող աղբյուրի մոտ, և մարդիկ արդեն իրենց փորձով կկարողանան գնահատել, թե իրենց արածից ինչ «վատ հոտ է փչում»:

Այդ կերպ ինքներդ ձեր վիճակներով արագորեն կվերամշակեք այն, ինչին ծնունդ եք տվել:

Եվ դա դեռ բոլորը չէ... Մենք մտածում ենք, որ երկրագնդի վրա ստեղծենք բնակավայրեր, որոնք ազատ կլինեն զանգվածային գիտակցության ազդեցությունից: Նման բնակավայրերում կարող են պայմաններ ստեղծվել մարդկային քաղաքակրթության հետագա զարգացման համար: Զարգանալ չկամեցող ամեն ինչը վերջին հաշվով պետք է առանձնացվի և ժամանակի ընթացքում հատվի, ինչպես չորացած ճյուղերն են հատվում այգեգործական աշխատանքի ընթացքում:

Այն ամենը, ինչը կարող է աճել և բերք տալ, պետք է հայտնվի թարմ ու կենարար հողում և ծաղկի՝ ի բարօրություն Երկրի մոլորակի կենսահոսքերի:

Այդպիսին են մեր պլանները, և ես ձեզ տեղյակ եմ պահում դրանց այն հույսով, որ կգտնվեն այն մարդիկ, որոնք նամակով կդիմեն ինձ ու կխնդրեն, որ ղեկավարեմ իրենց գործողությունները՝ կապված Երկրի մոլորակի ֆիզիկական ոլորտի փոխակերպության հետ:

Սակայն միանգամից պետք է ձեզ մի փոքր սառեցնեմ. ես շատ խիստ ու պահանջկոտ Վեհապետ եմ: Իմ աշակերտները կարողանում են ֆիզիկական ոլորտում շատ հրաշքներ գործել, բայց փոխարենը ես նրանցից պահանջում եմ աներկբա նվիրվածություն, հնազանդություն և կարգապահություն: Նրանց, ում չեն վրդովում իմ խստացված պահանջները, սիրով հրավիրում եմ նուրբ ոլորտի իմ դասարանները՝ իմ մենաստանը, որ կարողանամ ծանաթանալ նրանց հետ և ղեկավարել նրանց զարգացումը:

Հենց որ տեսնեմ, որ դուք լիովին պատրաստ եք մեր աշխատակիցը դառնալու, ձեզ ֆիզիկական ոլորտի մի գործ կհանձնարարեմ, որը պարտավոր կլինեք անել: Որպես կանոն, իմ աշակերտներից շատերն անմիջապես ցրվում են, հենց որ ինձնից ստանում են կոնկրետ հանձնարարություն:

Որովհետև նրանց շատ է մտահոգում այն հարցը, թե փոխարենն ի՞նչ կստանան: Եվ երբ ես նրանց բացատրում եմ, որ արդեն իսկ ստացել են այն ամենը, ինչ պետք է ստանալին, այն է՝ Սպասավորություն Մեծ Սպիտակ Եղբայրությանը, ապա իմ պատասխանը նրանց տարակուսանքի մեջ է գցում, և նրանք հեռանում են, որպեսզի դեգերեն պատրանքի մեջ, շարունակեն փնտրել պարզև, փառք, փող և էլի ուրիշ բաներ, որոնք արժեքավոր են երևում իրենց:

Ես գիտեմ, որ իմ այս ուղերձը շատերի համար անհասկանալի կլինի: Սակայն ես չեմ ձգտում հասկանալի լինել միլիոններին: Բավարար է, որ ունենամ մի քանի հարյուր նվիրյալ աշակերտներ, և հաշվված տասնամյակների ընթացքում մենք կփոխենք այս աշխարհը:

Եվ այսպես, նրանց, ում չեն վրդովում իմ պահանջները, ես հրավիրում եմ ինձ աշակերտելու:

Ինձ լսելի է ձեր յուրաքանչյուր անկեղծ դիմումը, որը հնչում է ձեր սրտերում: Եվ եթե պատասխանը չեք լսում, ապա պատճառն այն է, որ շատ անուշադիր եք և ձեր պատրանքի մեջ չափազանց խորասուզված:

Ես այս օրով եկա, որպեսզի ձեզ հուսալի կողմնորոշիչներ տամ ձեր զարգացման համար:

Վեհապետ Սեն Ժերմեն
24 դեկտեմբերի, 2007 թ.

Ուսմունք արժիմիայի և գիտակցության փոխակերպման մասին

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը՝ այս օրով կրկին ձեզ այցի եկածը...

Ես հենց այն Սեն Ժերմենն եմ, ում մասին հավանաբար շատ եք լսել, քանզի իմ վերջին մարմնավորմանը վերաբերող ասեկոսեններն ինձնից անհամեմատ ավելի երկար ապրեցին: Եվ այժմ էլ, երբ այցի եմ գալիս, դժվարությամբ է ինձ հաջողվում ձեր գլուխներից հանել բոլոր այն ստահող հյուսվածքներն ու հերյուրանքները, որոնք պատմվում են երկրային իմ վերջին մարմնավորման շուրջ:

Ցավոք, ճշմարտությունն այն է, որ մարդկանց բնորոշ է եղելությունները ծաղկազարդելն ու գունազարդելը, երբ դրանք անց են կացնում իրենց սեփական ընկալման պրիզմայով:

Ուստի պետք է ձեզ ասեմ, որ իմ մասին ձեր իմացած ոչ ամեն ինչն է, որ ճշմարտություն է, իսկ իրական ճշմարտությունն այն է, որ իմ վերջին մարմնավորման ողջ ընթացքում հավատով ու ճշտով ծառայել եմ Համբարձյալ Վեհապետներին՝ Եղբայրությանը, որին ծառայելու պատիվն ունեմ մինչև այժմ: Եվ իմ տարբերիչ առանձնահատկությունը հենց այն է, որ ամեն ինչից առաջ ծառայում եմ Հիերարխիային և ենթարկվում նրա Օրենքներին: Դրանից հետո նոր գալիս է այն բոլոր հրաշքների հերթը, որոնց մասին պատմում են անտեղյակները՝ իրենց պատմածը մեկից մյուսին փոխանցելով և նորանոր չեղած բաներ վրան ավելացնելով:

Հավատացե՛ք ինձ, ոչ մի նվաճման դուք չեք կարող հասնել, եթե չկանգնեք Հիերարխիայի աստիճանին և չնվիրաբերեք ձեր կյանքը համայն տիեզերքում գործող Մեծ Օրենքին: Հրաշագործ ուժերին տիրելու շատերի խղճուկ փորձերը՝ առանց էսակենտրոնությունից և բազմաթիվ վատ սովորություններից հրաժարվելու, ոչ մի լավ բանի չեն հանգեցնի, բացի կարմա ստեղծելուց, որն, ինչպես հավանաբար գիտեք, ենթակա է հետագա բեռնաթափման:

Տիեզերքում ոչինչ տեղի չի ունենում կամայականորեն: Ամեն ինչը ենթակա է խիստ Օրենքի: Եվ միայն այնժամ, երբ լրիվ հրաժարվում եք ձեր էգոյից և անձամբ ձեզ համար ինչ-որ բան ձեռք բերելու ցանկությունից, ձեր տրամադրության տակ են հայտնվում այնպիսի ուժեր, որոնց օգնությամբ իրապես կարող եք հրաշքներ գործել ոչ միայն նուրբ ոլորտում, այլ նաև դրանք տեսանելի դարձնել ֆիզիկական ոլորտում:

Հենց այդ արարչական արժիմիան եմ ես ուսուցանել իմ աշակերտներին: Եվ շարունակում եմ իմ այդ գործը մինչև այժմ:

Իմ սիրելի երկիրը, որին նվիրել եմ իմ մարմնավորման շատ ու շատ տարիներ և ամբողջովին նրան տրվել Յոթերորդ Ծառագայթի Տիրակալի պաշտոնով իմ սպասավորման ողջ ժամանակահատվածում, Ամերիկան է:

Տիկնայք և պարոնայք, ձեզ մոտ կարող է հարց ծագել, թե ինչի՞ հիման վրա եմ ես այժմ ձեզ այցի եկել մի դեսպանորդի միջոցով, որն ապրում է Ռուսաստանում և Երկրի վրա լինելու ներկա ընթացքում նույնիսկ մեկ անգամ չի եղել Ամերիկայում: Դե ինչ, լիովին օրինաչափ հարցադրում է, և ես առանց շտապելու կտամ դրա պատասխանը:

Ես այցի եկա մի դեսպանորդի միջոցով, որն ամենաշատն է պատրաստ ընդունելու իմ ուղերձը: Եվ նա է այն դեսպանորդը, որը ներկա պահին ակտիվորեն ծառայում է Մեծ Սպիտակ Եղբայրությանը: Ինչ արած, իմ սիրելի Ամերիկան առայժմ մնում է ստվերում: Նաև գիտեք, որ ներկա պահին Լույսի կիզակետը Ամերիկայից տեղափոխվել է Ռուսաստան: Սակայն դրանից բոլորովին չի հետևում, թե մենք չենք ուզում աշխատել Ամերիկայում մարմին առած մարդկանց հետ: Մենք պարզապես հարմար պահի ենք սպասում, որպեսզի վերսկսենք մեր փորձերը և կրկին աշխատենք Ամերիկայի հողում:

Ամեն ինչ որոշվում է ազգի հավաքական գիտակցությամբ: Ներկայումս այդ ազգը տառապում է մանկական հիվանդությամբ, այն է՝ ինքնահավան է և չի ուզում լսել մեծերի խորհուրդները: Դե ինչ, այդ տարիքն էլ կանցնի. մենք հույս ունենք, որ այդ անցումային տարիքն այնքան երկար չի տևի, որքան ռուսական կոմունիզմի 70-ամյա շրջանը տևեց:

Ես հավատով եմ համակված Ամերիկայի ժողովրդի նկատմամբ: Եվ անկեղծ հույս եմ փայփայում, որ այդ ազգի գիտակցությունն ունակ կլինի դարձի գալու և ընդունելու մեր այն ուղերձները, որոնք տալիս ենք Ռուսաստանի հողում, և իր կյանքում կօգտվի մեր տված գիտելիքներից ու ուսմունքներից:

Նուրբ աշխարհում սահմաններ գոյություն չունեն: Եվ եթե Երկրին նայելու լինեիք տիեզերքից, ապա մայրցամաքների եզրագծերից բացի այլ սահմաններ չէիք տեսնի: Բոլոր սահմանները գծված են ձեր գիտակցության մեջ, և ձեր գիտակցության բոլոր այդ սահմանափակումները պետք

Է ջարդուփշուր լինեն: Հավատացեք, որ այլ ուղի չկա, բացի ձեր գիտակցության բազում ու բազմապիսի սահամանափակումները ջարդելուց:

Ես այս օրով եկել եմ, որպեսզի ձեզ պատմեմ գիտակցության փոխակերպման այն ալքիմիայի մասին, որը տեղի ունեցավ երեկվա ընթացքում: Եվ այդ ալքիմիան տեղի ունեցավ ձեր շնորհիվ՝ այն անձանց շնորհիվ, ովքեր միացան ամսի 23-ի մտասևեռմանը և իրենց Մերն առաքեցին Երկիր մոլորակին: Մենք ստացանք 10 000 Սիրո մոլում՝ ուղղված Երկիր մոլորակի սրտին: Չեք կարող պատկերացնել, թե դա ինչպիսի մեծ գործություն և ուժ է...

Ներկայումս Կարմայական Վարչությունը որոշում է կայացնում, թե ինչպես տնօրինի ձեր սրտերից առաքված այդ էներգիան, իսկ ես իմ հերթին եկել եմ, որպեսզի ձեզ հայտնեմ իմ շնորհակալությունն ու երախտագիտությունը:

Անչափ շնորհակալ եմ ձեր Ծառայության, ձեր Հավատի ու Սիրո համար...

Որևէ նշանակություն չունի, թե ո՞ր երկրի մարդիկ են մասնակցել մտասևեռման գործընթացին: Մերը սահմաններ չի ճանաչում, և Սիրո ալիքները միավորվելով զարմանահրաշ մի համանվազ են ստեղծում, որին ունկնդիր են լինում Համբարձյալ Դասերը:

Ես ողջունում եմ ձեզնից յուրաքանչյուրին, տիկնայք և պարոնայք, որ մասնակցեցիք այդ մտասևեռմանը:

Որպես վարպետ-ալքիմիկոս՝ ես լիովին բավարարված եմ կատարված աշխատանքով:

Այժմ կուզենայի ձեր ուշադրությունը սևեռել մի կարևոր պահի վրա: Այն կապված է ձեր գիտակցության փոխակերպման ալքիմիայի հետ: Ձեզ հայտնի է, որ ձեր աշխարհն արտացոլանքի աշխարհ է: Այն հնազանդորեն անդրադարձնում է բոլոր մտածներն ու կերպերը, որոնք ծագում են մարդկային գիտակցության մեջ: Այդ պատճառով, եթե դուք մշտապես համալարված մնաք Աստծո Աշխարհի հետ, ապա դա իր անխուսափելի արտացոլանքը կստանա ձեր աշխարհում:

Կան մարդիկ, ովքեր մշտապես գտնվում են զանգվածային մշակույթի կերպապատկերների ազդեցության տակ: Երկրաբնականների մեջ նրանք մեծամասնություն են կազմում: Միայն եզակիներն են ունակ գրգռելու բարձր կերպապատկերներ ու կրելու բարձր թրթիռներ: Բայց կա օրենք, և այդ օրենքի համաձայն՝ ցածր կերպապատկերներն ունեն ցածր էներգետիկական մակարդակ, քանի որ դրանք հագեցած չեն Աստծո էներգիայով: Դրան հակառակ՝ այն կերպապատկերները, որոնք իրենց մեջ կրում են աստվածային դրսևորումներ, այնքան են հագեցած Աստծո էներգիայով, որ կարող են վերափոխել ողջ շրջապատը:

Ուստի թող ձեզ բոլորովին չհուզի այն, թե ո՞ր ուժերն են ներկայումս գերակշռում Երկրի վրա: Ձեզնից միայն պահանջվում է, որ չտրվեք ցածր, ոչ աստվածային կերպերի ու դրսևորումների ազդեցությանը, այլ ձեր կյանքը հագեցնեք աստվածային կերպերով ու դրսևորումներով: Եվ այդ դեպքում Աստծո Ալքիմիան երկար չի սպասեցնի: Հավատ ընծայեք ինձ և Երկիր մոլորակի վերափոխմանը նվիրված աշխատանքի իմ փորձին:

Այսօր ես եկել եմ ևս մեկ կարևոր առաքելությամբ: Եկել եմ, որպեսզի ամբթիստի հսկա մի բյուրեղ նվիրեմ մեր դեսպանորդ Տատյանային: Ես այն թողնում եմ Աշրամի նուրբ ոլորտում և վստահ եմ, որ շատ մոտ ապագայում այն կերևա նաև ֆիզիկական ոլորտում՝ ծառայելով որպես լույսի լրացուցիչ աղբյուր և ուղեցույց աշխարհի շատ լուսակիրների համար:

ԵՍ ԵՄ Սեն-Ժեյմենը, ում սիրում եք, և ով սիրով է լցված ձեր նկատմամբ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

25 դեկտեմբերի, 2007 թ.

Ուսմունք Միասնության մասին

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ:

ԵՍ ԵՄ...

Ես գալիս եմ, որպեսզի համալարեմ մեր թրթռանքները: Մենք պետք է Միասնական լինենք...

Մենք պետք է Միասնական լինենք...

Մենք պետք է Միասնական լինենք...

Ու՛մ հետ...

Ինչի՞ հետ...

Ինչու՞...

Մենք վերհիշում ենք Աստծո Աշխարհը, և մենք մղվում ենք դեպի Աստծո Աշխարհը: Եվ Միասնականի հետ ներդաշնակ լինելու ձգտմամբ մենք զգում ենք Միասնություն, Անդորր, Ներդաշնակություն... Մենք զգում ենք լիարժեք բավարարվածություն, մեր հույզերի ու ցանկությունների լիարժեք հագեցվածություն:

Միասնության ցանկացած այլ ձգտում, որը ենթադրում է Աստվածայինից ավելի ցածր ոլորտում գտնվող որևէ մեկի կամ ինչ-որ մեկի հետ միասնություն, պատրանքային է և ժամանակավոր. մի միասնություն է, որը մարդիկ իրենք են հորինում իրենց մտքում:

Ամեն անգամ, երբ ինքներդ որևէ մեկին միասնության եք կոչում, կամ լսում եք որևէ մեկի կողմից ձեզ ուղղված կոչը միավորվելու մասին, նախ մտորեք, թե տիեզերակառույցի ո՞ր մակարդակին է համապատասխանում այդ կոչը: Վերջին հաշվով, մոլորակի բոլոր կենդանի էակները կմիավորվեն այն կետում, որից սկիզբ է առել Արարչագործությունը: Այնինչ երբ մարդիկ միասնության մասին են խոսում, նրանք ավելի շուտ դրա տակ նկատի են ունենում միասնության իրենց չափանմուշը, այնպիսի չափանմուշ, որն անհամեմատ ավելի ցածր է Աստվածայինից:

Ասվածից չի հետևում, որ չի կարելի ձգտել միասնության, այլ սոսկ այն է ասվում, որ միևնույն բառը տարբեր արտապատկերում է ստանում տարբեր գիտակցություններում, իսկ այն Միասնությանը, որի մասին խոսում են Ես, ձեր աշխարհում ոչինչ չի համապատասխանում:

Այդ պատճառով դուք ստիպված եք լինում կիրառելու այն չափանմուշներն ու պատկերացումները, որոնք գոյություն ունեն մարդկային սահմանափակ գիտակցության մեջ:

Ուստի Ես չեմ ասում, թե չպետք է ձգտել միասնության, այլ ասում եմ, որ այդ հասկացության տարբեր ըմբռնումներ գոյություն ունեն գիտակցության տարբեր մակարդակներում:

Հարկ է, որ աստճանաբար անցնեք ավելի ու ավելի մեծ Միասնության ու Միավորման: Բայց, ցավոք, այդ գործընթացը հնարավոր չէ ավարտին հասցնել ո՛չ մեկ, ո՛չ էլ մի շարք մարմնավորումների ընթացքում: Սակայն եթե գիտակցության մեջ չափապանվեն ուղենիշներն ու ճշմարիտ կերպերը, վարքի ու նպատակամղման չափորոշիչները, ապա հասարակությունը կհիվանդանա և աստիճանական մահվան կդատապարտվի:

Ուստի շատ կարևոր նշանակություն ունի հասարակության բարոյական և առաքինի կողմնորոշիչների մշտական թարմացումը: Իդեալներից գուրկ հասարակությունը մահվան է դատապարտված:

Հասարակության առողջությունը մշտապես պահանջում է բարոյականության և առաքինության կողմնորոշիչների առկայություն:

Ուստի հասել է պահը, երբ պետք է նորացվի ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ-ի կողմից Մովսեսին և մարգարեներին տրված Կտակը: Հասել է այն պահը, երբ ամեն մի ճշմարիտ և հավատարիմ անհատ պետք է հարց տա ինքն իրեն՝ ու՞մ կողմից եմ:

Ունա՞կ է արդյոք աշխարհ բերելու Աստծո Օրենքը, թե՞ ձգտում է դրսևորել հակաօրենք՝ օրենք, որը սահմանափակված է մարդկային մեկ գոյությամբ:

Ցանկացած համակարգ, որը կենտրոնացված է միայն անձնական պահանջմունքների բավարարման վրա և չի կարող դուրս գալ շրջապատող պատրանքի սահմաններից, կորստյան է դատապարտված:

Միայն ինքներդ կարող եք ի կատար ածել այն նախընտրանքը, որը պահանջվում է ի վերջո ի կատար ածել:

Քիչ ժամանակ է մնացել: Եվ, որքան էլ ջանաք հետաձգել որոշում ընդունելու պահը, միևնույնն է, ձեզնից ամեն ոք ի կատար կածի իր նախընտրանքը:

Ամեն ոք կընտրի այն աշխարհը, որին ձգտում է հասնել: Եվ եթե մղվում եք անցողիկ աշխարհի ու դրա չիսկչիսկանների կողմը, ապա ինքներդ ձեզ այդ աշխարհի հետ կործանման եք դատապարտում: Որպեսզի ձեր գոյատևելը շարունակեք, պետք է անցնեք գիտակցության նոր մակարդակի, այն մակարդակին, որը թույլ կտա ձեզ զգալ Կյանքի յուրաքանչյուր մասնիկի հետ ձեր Միասնությունը:

Եվ եթե ձեր գիտակցությամբ գոնե մեկ անգամ զգաք այդ Միասնությունը, ապա անմահություն ձեռք կբերեք: Դուք չեք մեռնի, այլ հավերժ կապրեք, քանի որ կհառնեք մեռյալներից և անցում կկատարեք Հավերժական Կյանքին:

Այս Ուսմունքը շատ անգամ է տրվել: Ե՛վ Տեր Հիսուս, և՛ պաշտելի Հալութամա Բուդդան և շատ ու շատ մարգարեներ, պատգամախոսներ ու դեսպանորդներ ուսուցանել են այդ մեծ Ճշմարտությունը:

Սակայն առ այսօր միայն եզակիներն են ունակ ընկալելու այդ Ճշմարտությունը: Ընկալելու ոչ թե խելքով, այլ ողջ էությամբ, այնպես, որ այդ Ճշմարտությունը մուտք գործի ձեր մարմնի ամեն մի բջջի մեջ, որպեսզի ձեր մարմնի ամեն մի բջիջը ԴՆԹ-ի մակարդակով ձևափոխության ենթարկվի: Եվ այդ ձևափոխությունը հենց ձեր Փրկության նշանը կլինի:

Շա՛տ կան մարդիկ, որոնք ասում են իմ ասածներին նման բաներ: Սակայն կա շատ կարևոր մի յուրահատկություն, որով իմ Ուսմունքը տարբերվում է շատ ու շատ ուրիշներից:

Այդ յուրահատկությունը վերաբերում է այն պահին, երբ դուք պատրաստ եք ինքնագոհողության գնալու հանուն աշխարհի փրկության: Այնժամ, երբ հասնում եք Կյանքի

յուրաքանչյուր մասնկի հետ ձեր Միասնականության գիտակցման բարձրակետին, հասկանում եք, որ դուք ողջ Արարվածից առանձնացված ինչ որ մաս չեք, այլ հենց այդ ողջ Արարվածն եք. և երբ ձեր ինչ-որ մի մասը մահանում է, դուք այնուամենայնիվ շարունակում եք Ապրել:

Հենց որ ձեր գիտակցությամբ հասնում եք այդ բարձրակետին, դուք իրապես անմահ եք դառնում: Դուք միասնական եք դառնում Միասնականի հետ:

Հետո ինչպես էլ ընթանա ձեր հետագա կյանքը, դուք մշտապես կհիշեք Ճշմարտությանը հասու դառնալու այդ պահը՝ այն պայծառացումը, որը ստացել եք Ինձնից:

Ես ձեզ բոլորիդ մաղթում եմ, որ Նոր տարուն ստանաք այդ պայծառացումը:

Թող Երկիրը ապրի՝

Թող լա՛վ լինի աշխարհի համար:

Թող երջանի՛կ լինի համայն գոյը:

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ: ՕՄ: ՕՄ: ՕՄ

Վեհապետ Մերապիս Բեյ

26 դեկտեմբերի, 2007 թ.

Խրատ աշակերտներին

ԵՄ ԵՄ Մերապիս Բեյը՝ մեր դեսպանորդի միջոցով ձեզ այցի եկածը: Մեր վերջին հանդիպումից հետո ես կշռադատում էի, թե այս պահի համար ի՞նչ տեղեկատվություն եմ հանձնելու ձեր խորհրդածությանը: Շատ կուզենայի, որ իմ այս թելադրությունն ընթերցելուց անմիջապես հետո չդադարեիք մտորել նրանում արժարժված թեմայի շուրջ: Կուզենայի նաև, որ ձեր գիտակցությամբ մշտապես անդրադառնայիք իմ այս ուղերձին: Ոչ այն պատճառով, որ այն, ինչ կամենում եմ ձեզ հաղորդել, շատ թարմ է ու նշանակալից: Այսօրվա գրույցի նյութը վաղուց է հայտնի: Պարզապես կուզենայի, որ ձեր ուշադրությունը սովորականից մի փոքր ավելի երկար կենտրոնացած պահեիք իմ այսօրվա ուղերձի վրա: Այդ դեպքում ձեր այդ ուշադրության շնորհիվ ինձ կհաջողվի կապ հաստատել իմ շատ աշակերտների հետ, որոնք մարմնավորման մեջ են, բայց դեռևս այնքան են տարված պատրանքով, որ չեն բարեհաճում նույնիսկ իրենց հայացքն ուղղել իմ կողմը: Ես 4-րդ ճառագայթի սպասավոր եմ՝ այդ ճառագայթի Հիերարխը: Եվ հավանաբար գիտեք, որ իմ աշակերտների հետ ամենօրյա պարապմունքներ եմ վարում Լուքսորի վերևում գտնվող իմ մենաստանում:

Պարտադիր չէ, որ ինձ հետ կապ հաստատելու համար մեկնեք Եգիպտոս: Բավարար է, որ իմ պատկերը մշտապես պահեք ձեր ներքին հայացքի առաջ և մտածեք իմ մասին հատկապես քնելուց առաջ: Եվ այդքանը բավարար կլինի, որ հրավիրվեք իմ Մենաստանը և նախնական գրույց ունենաք ինձ հետ:

Որպես կանոն, այդ նախնական գրույցից հետո աշակերտները խորհրդածելու ժամանակ են խնդրում: Եվ կրկին, որպես կանոն, շատ քչերն են դրանից հետո վերադառնում իմ դասարանները:

Ինքներդ ձեր օրինակով երբևէ չե՞ք նկատել, որ հենց որ սկսում եք չափազանց երկար խորհրդածել որևէ հարցի շուրջ, ապա ձեր խելքն այնքան վարպետորեն է ձեզ տանում մենտալային ոլորտի թավուտներում դեգերելու, որ նույնիսկ մոռանում եք ձեր խորհրդածության նախնական նյութի մասին:

Բոլոր հարցերի լուծումները ձեր սրտում են: Եվ այն դեպքերում, երբ չեք ենթարկվում ձեր սրտի հորդորին, այլ սկսում եք լուծում փնտրել ձեր մարմնական խելքի մակարդակով, ապա դա ձեզ շեղում է ձեր ուղիղ՝ նաև դեպի իմ մենաստանը բերող, ճանապարհից: Շա՛տ ափսոս, քանի որ ինձ հետ կապվելու և իմ Մենաստանում դասեր առնելու նման հնարավորություն երևի այլևս չունենաք մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտը:

Ես այն Վեհապետն եմ, որը նախապատրաստում է Ձեռնադրումների Ուղով ձեր ընթացքը: Դուք նախնական գիտելիքներ եք ստանում և ձեր արտաքին գիտակցությամբ սկսում եք անհրաժեշտ գրականություն փնտրել, այնուհետև աստիճանաբար մերձենում եք ձեռնադրումներին, որոնք անհրաժեշտաբար պետք է անցնեք՝ հանուն ձեր հետագա առաջընթացի:

Որքան էլ ջանաք խուսափել Ուղուց, ինչպիսի ամուր փաստարկներ էլ առաջ քաշի ձեր մարմնական խելքը, վաղ թե ուշ բոլորդ կգաք ինձ հետ գրույցի: Որովհետև ես եմ որոշում, թե ինչ անեք հետո: Ես տեսնում եմ ձեզնից յուրաքանչյուրի պատրաստվածության աստիճանը և առկա կենսական հանգամանքների հիման վրա որոշում եմ, թե ինչպե՛ս ավելի լավ կլինի ձեզ համար, որ հանձնեք այս կամ այն թեստը:

Ձեզ երբեմն թվում է, թե բախվում եք սովորական կենսական դժվարությունների ու ձախորդությունների: Սակայն ես ակնդետ հետևում եմ, թե ինչպես եք դուրս գալիս ստեղծված դժվարին իրավիճակից: Եվ եթե թեկուզ մի փոքր դժգոհում եք որևէ մեկից՝ նրա վրա բարդելով ձեր հաղթահարելիք դժվարության պատասխանատվությունը, ապա չեք հանձնում իմ թեստը: Քանի որ թեստի հանձնման գլխավոր պայմանը հենց այն է, որ հնազանդորեն կրեք այն ամենը, ինչ ձեզ հետ տեղի կունենա արտաքին աշխարհում:

Լսու՛մ եք ինձ: Դա վերաբերում է բացարձակապես ամեն ինչին: Ձեզ հետ չի կարող տեղի ունենալ որևէ բան, որի սկզբնապատճառն ինքներդ չի՞նք: Ձեր կյանքի բոլոր հանգամանքները դուք ինքներդ եք կազմավորում ձեր նախընտրանքներով և ձեր վերաբերմունքով այն ամենի նկատմամբ, ինչ կյանքում առկա է ձեր շուրջը:

Ահա հենց այս պարզ ճշմարտության յուրացման համար շատերն ունենում են հարյուրավոր ու հազարավոր մարմնավորումներ:

Անըմբռնելի ինչ-որ պատճառով, հենց որ ձեր կյանքում որևէ դժվարության եք հանդիպում, ապա առաջին բանը, որ անում եք, այդ իրավիճակի մեղավորներին սկսում եք փնտրել ձեզնից դուրս:

Հավատացե՛ք ինձ, դեպքերի 99 տոկոսում ձեր կյանքում բախվում եք հենց այն հանգամանքներին, որոնց սկզբնապատճառն ինքներդ եք արարել անցյալում: Իսկ կենսական դժվարությունների 1 տոկոսն այն թեստերն են, որոնք ես կամ մեկ ուրիշ Վեհապետ կարող ենք ձեզ հրամցնել, որպեսզի դեկավարեն ձեր հոգևոր առաջխաղացումը:

Դուք շարունակում եք ուսանել մեր դպրոցներում և հանձնել քննություններ, քանի դեռ չեք յուրացրել առաջին և ամենադժվար յուրացնելի ճշմարտությունը:

Հենց որ սկսում եք ճիշտ վերաբերմունք ցուցաբերել արտաքին աշխարհում ձեզ հետ տեղի ունեցող ամեն ինչի նկատմամբ, ուրեմն պատրաստ եք մեզ աշակերտելու և ձեր արտաքին գիտակցությամբ արդեն սկսում եք գիտակցել նուրբ ոլորտում մեզ հետ ունեցած ներքին կապի առկայությունը: Իմ առավել առաջադեմ աշակերտներն ունակ են մտքով ակնթարթորեն ինձ հետ կապվելու և իրենց սրտում ստանալու ինձ ուղղված համարյա բոլոր հարցերի պատասխանները:

Որպես կանոն, ես աշխատում եմ պատասխանել բոլոր հարցերին, բացի այն դեպքերից, երբ գտնում եմ, որ տվյալ անհատի հոգևոր առաջընթացի համար առավել օգտակար կլինի, եթե հենց ինքը լուծում գտնի՝ օգտվելով արդեն ստացած գիտելիքներից և գործնականում կիրառելով դրանք:

Ահա այսպես է ընթանում մեր աշխատանքը, Եղբայրության աշխատանքը Երկրի մարդկության հետ:

Կան նաև այլ քաղաքակրթություններ և էակներ, որոնք նույնպես ջանում են նուրբ ոլորտում կապի մեջ մտնել ձեզ հետ և դեկավարել ձեր գործողությունները:

Սակայն ես պետք է ձեզ հետ պահեմ նմանատիպ կապերի մեծամասնությունից: Որովհետև երբ կապի մեջ եք մտնում այնպիսի էակների հետ, որոնց թրթռներն աստվածային չեն և ձեր կենսահոսքն օգտագործում են, որպեսզի ֆիզիկական ոլորտում իրականացնեն իրենց սեփական պլանները, ապա դրանով դուք կարմա եք ստեղծում:

Դուք պետք է կարողանաք ավելի ու ավելի ճշգրիտ գանազանել, երբ աշխարհների միջև սահմանը սկսում է լողավել: Ծատ կան այնպիսի մարդիկ, որոնք շատ են ուզում կապվել Համբարձյալ Վեհապետների հետ և ուղերձներ ստանալ նրանցից՝ հիմնվելով նախորդ մարմնավորումների ընթացքում իրենց կուտակած որոշակի փորձի վրա: Սակայն դրա փոխարեն հեշտորեն կապի մեջ են մտնում աստեղային ոլորտի կենվորների հետ և նույնիսկ ուղերձներ ստանում նրանցից:

Նախքան ինքներդ ձեզ աստեղային ոլորտի կենվորներին հանձնելը հարցրե՛ք ինքներդ ձեզ՝ ինչի՞ համար է ձեզ պետք այդ կապը: Եթե ձեր ցանկությունը միայն նուրբ ոլորտից ուղերձ ընդունելն է, ապա դա այնքան էլ բարձր շարժառիթ չէ, որպեսզի փոխհարաբերության մեջ մտնեք Եղբայրության հետ: Որպես կանոն, այն մարդիկ, որոնց մենք վստահում ենք մեզնից ուղերձ ընդունելու գործը, ավելի ընդարձակ առաքելություն են ունենում, քան միայն եղբայրին օկտավաներից ուղերձ ընդունելն է: Իսկ մենք ձգտում ենք մեր դեսպանորդների միջոցով ամրակայել հուսալի կողմնորոշիչներ՝ ֆիզիկական ոլորտում ստեղծելով մեր դպրոցները, աշխատանքն ու բնակավայրերը:

Իսկ եթե ձեր շարժառիթը մաքուր է, և ուզում եք ծառայել Եղբայրությանը, ապա խորհրդածեք հետևյալ պարզ մտքի շուրջ՝ ո՞րն է ավելի կարևոր. Վեհապետների աշխարհից ձեր աշխարհ ուղերձ փոխանցելը, թե՞ ձեր աշխարհում տիրող քաոսում հուսալի կողմնորոշիչ դնելը:

Հուսով եմ, որ ազատ ժամանակ ունենալու դեպքում կմտորեք իմ այս ուղերձի շուրջ և ճշմարիտ կողմնորոշիչներ կդնեք ձեր սրտերի մեջ:

Իսկ հիմա ես հրաժեշտ եմ տալիս ձեզ, և մինչ նոր հանդիպումներ:

Մայր Մարիամ
27 դեկտեմբերի, 2007 թ.

Տարեվերջյան հանձնարարականներ

ԵՄ ԵՄ ձեր Մայր Մարիամը՝ ուղերձ հղելու նպատակով ձեզ այցի եկածը:

Ես եկել եմ տարեմուտի օրերից մեկում, որպեսզի ամփոփեմ որոշ արդյունքներ և ձեր գիտակցության մեջ ամրագրեմ ապագայի կողմնորոշիչները:

Եկել եմ, որպեսզի գրուցեմ ձեզ հետ: Առանց շտապելու... Անկեղծորեն... Հոգածությամբ ու նրբորեն:

Ես եկել եմ որպես սիրող և հոգատար մայր: Եվ իրոք, ես ձեր մայրն եմ, որովհետև հոգ եմ տանում ձեզ համար, բուժում եմ ձեր հոգիները: Եվ երբ ձեզ համար հատկապես ծանր է լինում, բոլորդ գալիս եք ինձ մոտ:

Ես գիտեմ, որ ծանր է ձեր վիճակը: Գիտեմ, որ գտնվում եք ճամփաբաժանում՝ ձեր աշխարհ ներթափանցող նոր էներգիաների և այն հին էներգիաների հատման կետում, որոնք դեռևս գերակշռում են ձեր աշխարհում: Եվ դա միշտ էլ ծանր վիճակ է ստեղծում. անցման շրջանում ապրելը միշտ ծանր է լինում: Ձեր ֆիզիկական մարմինն ու ավելի նուրբ մարմինները երբեմն ունակ չեն լինում դիմանալու աճող ծանրաբեռնվածությանը: Սակայն պետք է դիմանաք: Այլապես ոչինչ չի ստացվի: Բազմաթիվ հրեշտակ-բուժարարներ և շատ Վեհապետներ, ինչպես նաև ես, պատրաստ ենք ձեզ ցուցաբերելու մեր ուժերի ներսից և հնարավոր ողջ օգնությունը: Ուստի մի՛ անտեսեք այն օգնությունը, որ ձեզ է հասնում Երկնքից: Օգնության համար դիմեք Վեհապետներին, հրեշտակներին, տարրոգիներին և անձամբ ինձ:

Ես ինձ վրա եմ վերցրել Աստծո բազմաթիվ մարմին առած ուսուցիչների ու դուստրների բեռը: Ես ջանում եմ թեթևացնել ձեր ճակատագիրը: Բայց դուք էլ պետք է ի՛նձ օգնեք: Ես զգում եմ ձեր էներգիաների, աղոթքների և ձեր Սիրո կարիքը:

Մենք կարող ենք և պետք է փոխադարձաբար օգնենք իրար: Ես ձեր բեռը թեթևացնում եմ անցումային այս ժամանակահատվածում, իսկ դուք, խնդրո՛ւմ եմ, հատկացրեք ինձ էներգիաների լրացուցիչ պահուստ:

Ես ականջալուր եմ լինում ձեր աղերսներին, և երբեմն ձեր սրտում արտահայտված մեկ անկեղծ աղոթքը բավարար է լինում, որ օգնությունը ցուցաբերվի: Սակայն դուք չեք բարեհաճում ինձ առաքել ձեր աղոթքի էներգիան: Ես չեմ կարող օգնություն ցուցաբերել, եթե դուք դրա համար ինձ չեք աղերսում: Ես կարող եմ օգնել միայն փրկված սրտերին, այն սրտերին, որոնք մեղա են եկել և պատրաստ են բավարարելու մեր բոլոր պահանջները:

Ինչպես միշտ, մենք պահանջում ենք, որ ճիշտ վիճակի բերեք ձեր գիտակցությունը: Դրան հասնելու համար մեկին անհրաժեշտ է լինում պաս պահել, մեկին՝ աղոթք անել, մեկին՝ ապաշխարել, մեկին՝ խոստովանանքի գնալ, իսկ մյուսին՝ հաղորդություն ստանալ:

Շատերին էլ բավարար է լինում, որ անկեղծ արտասվելով զղջան: Եվ առավոտյան, անքուն գիշերվանից հետո երեսներն արցունքներով ողողված, իմ անգին զավակներն ունակ են դառնում անկեղծորեն աղոթելու, և զղջման այն աստիճանը, որին հասած է լինում նրանց սիրտը, ինձ հնարավորություն է տալիս, որ իրենց օգնություն ցուցաբերեմ:

Ես տեսնում եմ ձեր տառապանքները: Հաղորդակից եմ դառնում ձեր տառապելուն: Սակայն դուք էլ ի՛նձ հասկացեք: Գոյություն ունեն ձեր անցյալի արարմունքների հետ կապված կարմայի որոշ տեսակներ, որոնք կարող են մարվել միայն տառապանքների գնով:

Ծա՛տ են ձեր աշխարհում դառնությունները, շա՛տ են տառապանքները:

Ես դրանք տեսնում եմ: Բայց տեսնում եմ և ուրիշ բան: Տեսնում եմ, թե երիտասարդությունն ինչպիսի անպատասխանատու վերաբերմունք է ցուցաբերում Սիրո անգին էներգիայի նկատմամբ: Տեսնում եմ... և իմ սիրտը սարսռում է դրանից, քանի որ գիտեմ, թե ապագայում ինչպիսի՛ տառապանքներով են անցնելու այդ հոգիները: Ինքնե՛րդ եք ձեզ դատապարտում անթիվ-անհամար տառապանքների:

Ես եկել եմ, որ հիշեցնեմ ձեր արարքների նկատմամբ ձեր իսկ պատասխանատվության մասին, որպեսզի դուք ինձնից տառապանքներից ազատում և ամոքում չհայցեք այն ժամանակ, երբ ձեր ողջ կյանքն արդեն հետևում է մնացել, իսկ դուք բեռնված եք ախտերի ու հոգեբանական խնդիրների հսկայական բեռով: Ես կուզենայի, որ երիտասարդությունն ինձնից օգնություն,

խորհուրդ կամ աջակցություն հայցեր հենց հիմա, որպեսզի հասունանալով կարողանա ծառայել ի փառս Աստծո և ֆիզիկական ուրրտուն ի կատար ածի Աստծո գործերը:

Բոլորդ այժմ պարտավոր եք ձեր հայացքները հառել երիտասարդությանը: Եվ ձեզնից նրանք, որոնք կյանքի վերջնամասում վերջապես այս կամ այն չափով ըմբռնել են Աստծո ճշմարտությունը, կարող են իրենց փորձը փոխանցել նոր սերնդին: Թե ինչ ձևով դա կանեք, ինքներդ մտածեք, բայց ես ասում եմ, որ դա անելն անհրաժեշտ է:

Ես մտահոգվում եմ ապագա սերնդի համար, քանի որ կանխատեսում եմ, որ շուտով վրա կհասնեն մեծ բարեփոխումներ, հատկապես իմ սիրելի Ռուսաստանում: Եվ այն ջահելությանը, որն այժմ թրև է գալիս փողոցներում՝ չիմանալով, թե ինչով զբաղվի, վիթխարի աշխատանք և վիթխարի պատասխանատվություն բաժին կհասնի: Ուստի, խնդրում եմ ձեզ, մի՛ անտեսեք ձեր պարտքը: Թող երիտասարդությունը գիտելիք ստանա համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքի մասին: Թող այդ գիտելիքը հասնի ջահել սրտերին: Պարտադիր չէ, որ օգտագործվեն եկեղեցական կառույցները, որպեսզի երիտասարդությանը ստիպեն կատարելու այս կամ այն կրոնի հանձնարարականները: Բոլորովին պարտադիր չէ: Կարևոր է այն, որ Աստված տեղ գտնի աշխարհում ապրող յուրաքանչյուր մարդու սրտում: Կարևոր է այն, որ յուրաքանչյուր մարդ ապրի Օրենքին համապատասխան:

Եվ եթե գտնում եք, որ եկեղեցական ծիսակատարությունները հնացած են և վանում են երիտասարդությանը, ապա բարոյական նորմերն ու կանոնները նրան մատուցեք դասախոսությունների, ֆիլմերի, սեմինարների միջոցով:

Երիտասարդությանը տվեք կյանքի ճշմարիտ կողմնորոշիչներ: Դա ձե՛ր պարտականությունն է, յուրաքանչյուրի պարտականությունը, ով հիմա կարդում է իմ այս ուղերձը:

Տարեվերջյան այս օրերից մեկում ես եկա, քանի որ տարին ավարտվելու վրա է, և Նոր տարվա շունչը տրամադրում է խորհրդածությունների: Ջանացեք ենթարկվել սրտի ներսում խորհրդածելու ներքին պահանջին: Ջանացեք մեկուսանալ: Ձեր ընկերներն ու ծանոթները, ինչպես նաև զոյություն ունեցող ավանդույթը ձեզ հակառակը կասեն և կիրավիրեն ավանդական ամանորյա ու Ծննդյան տոների ճոխ ու աղմկոտ սեղաններին մասնակցելու:

Հեռու՝ մնացեք աղմկոտ հավաքույթներից: Մի՛ ստեղծեք նոր կարմա, որ հետո ստիպված չլինեք այն մարել հաջորդ ողջ տարվա ընթացքում: Հետո էլ գալիս ու տարվա վերջում ինձ ձեր տրտունջն եք հայտնում, թե ծանր է ձեր վիճակը, թե առողջությունն ու էներգիան չեն բավականացնում:

Տարեցտարի հետևե՛ք այն խորհուրդներին, որոնք ես տալիս եմ, և ամեն հաջորդ տարին ավելի ու ավելի երջանիկ կլինի նախորդից:

Աստված ձեզ օգնական Նոր Տարում...

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը, ձեզ հետ եղա այս օրով

Միասնականի Ներկայություն
28 դեկտեմբերի, 2007 թ.

Կարևոր ուղերձ

ԵՍ ԵՄ Միասնականի Ներկայությունը: ԵՍ ԵՄ՝ չափազանց հազվադեպ եմ այցելում չհամբարձված մարդկությանը:

Իմ հոգսերի ու շփումների շրջանակները հեռու են գտնվում ձեր այն հետաքրքրությունների ու թրթռանքների սահմաններից, որոնք բնորոշ են ձեր աշխարհին:

Սակայն ահա ես այստեղ եմ: Եվ իմ գալուստը պայմանավորված է իրադարձությունների կարևորությամբ...

Ես գալիս եմ, որպեսզի ձեզ հավաստիացնեմ, որ Երկիրը, որպես ամբողջական մոլորակ, և նրա մերձակա ոլորտները կտեղափոխվեն նոր էներգետիկական մակարդակի վրա: Մենք գալիս ենք, որպեսզի ձեր գիտակցությունը նախապատրաստենք այդ Մեծ Անցմանը:

Իմացե՛ք. բավարար է, որ Երկիր մոլորակի բնակչության ընդամենը մի քանի տոկոսը ձեռք բերի նոր պատկերացումներ և ընդլայնի իր գիտակցությունը մինչև անհրաժեշտ մակարդակ, և ամբողջ մոլորակն ամբողջությամբ կպարուրվի նոր մտածողությամբ ու նոր թրթռանքներով: Եվ եթե նախկինում էվոլյուցիայի գործընթացն աստիճանաբար էր ընթանում, և այդ զգուշավոր ու խնայողական գործընթացը պահպանվում էր ձեր երկրային Վեհապետների շնորհիվ, ապա այժմ

մենք որոշեցինք ռիսկի գնալ և թռիչք կատարել նոր էներգետիկական մակարդակի վրա անցնելու առումով:

Մի՛ ահաբեկվեք, այդ թռիչքն այնպիսի համամոլորակային բնույթ չի ունենա, որ հանգեցնի մոլորակի վրա եղած ողջ կյանքի կործանմանը:

Ավելի շուտ դա նման կլինի թեթևակի շտապեցման, ինչպես մանկանն են հոգածությամբ առաջ մղում դեպի նոր կյանք:

Ձեզնից շատերը դեռ էլի ունակ չեն ինքնուրույն զարգանալու: Ձեզնից շատերը նախկինի պես հույս են կապում այն բանի հետ, որ փոփոխությունները կշրջանցեն իրենց, և իրենք կկարողանան պահպանել նախկին սովորություններն ու գիտակցության նախկին վիճակը:

Սակայն ես եկել եմ, որպեսզի ավերեմ ձեր գիտակցության այդ կարծրատիպը: Հավատացե՛ք ինձ, որքան էլ ջանաք պահպանել ձեր նախկին հարմարավետ ու անհոգ դիրքերը, այնուհանդերձ հասել է ժամանակը, երբ պարտավոր կլինեք դուրս ելնել սովորական շրջանակներից ու սահմաններից:

Իսկ հենց որ փոփոխությունների այդ գործընթացը տեղի ունենա, ձեր զարմանքը կարտահայտեք մեկդ մյուսին, թե ինչպես եք նախկինում ապրել հին գիտակցության մակարդակով: Եվ նույնիսկ այնժամ, երբ ֆիզիկական կրիչներով ֆիլմեր կդիտեք ու երաժշտական գործեր կյսեք, որոնք բնորոշ են ձեր ներկայիս քաղաքակրթությանը, չեք հավատա ձեր աչքերին ու ականջներին: Քանի որ այն, ինչն այժմ բնորոշ է Երկրի քաղաքակրթությանը, չափազանց տարբեր կլինի այն ամենից, ինչ կատանաք մոտ ապագայում:

Եվ դա բնական գործընթաց է: Դեռահաս տարիքում շատ բաներ եք ունենում, որ ձեզ թվում են նշանակալից ու հետաքրքիր: Երբ հասունանում եք, ձեր նախկին հրապուրանքներն արդեն ձեր զարմանքն են հարուցում:

Համայն այս տիեզերքում ամեն ինչն ընտրվում է համաձայն թրթռանքների համապատասխանության օրենքի: Երբ ձեր թրթռոները բարձրանան, ձեր բոլոր նախկին հրապուրանքները ձեզ կթվան տարօրինակ ու անհետք:

Հավատացե՛ք ինձ, հավատացե՛ք մյուս քաղաքակրթությունների նոր գիտակցության մակարդակին անցնելու հետ կապված իմ փորձին:

Ես զարմանքով եմ դիտում ձեր քաղաքակրթության շատ ու շատ երևույթներ: Դուք շատ մեծ հակադրություններ եք դնում իրար կողքի: Առկա են բարձր թրթռանքներ՝ երաժշտության, կերպարվեստի բարձր նմուշներ, բայց դրանց կողքին կան և չափազանց ցածրարժեք նմուշներ: Ձեր գիտակցությունն իր մեջ կարողանում է տեղավորել շատ բազմապլան բաներ: Դուք ունակ եք թրթռալու տարբեր էներգետիկական տիրույթներում:

Դե ինչ, դա միայն նշանակում է, որ ձեզ համար ավելի հեշտ կլինի էներգետիկական նոր վիճակին հարմարվելը: Եվ ձեզ համար ավելի հեշտ կընթանա ձեր գիտակցության զարգացման նոր փուլին անցնելը:

Ես եկել եմ՝ իմ սրտում կրելով հաղթանակի զարմանալի զգացողություն: Ես կանխագգում եմ այն ուրախությունը, որ դուք կվայելեք՝ ազատվելով անպետք իրերի հսկա զանգվածից և անցյալի թափոններից:

Ես ուրախ եմ, որ դուք վերջապես կազատվեք շատ հին սովորություններից և հաղորդակից կդառնաք տիեզերական ներդաշնակության գիտակցմանն ու համատիեզերական Միասնությանը և հավասար կդառնաք այն քաղաքակրթություններին, որոնք կայուն կերպով զարգանում են՝ ըստ Աստծո Պլանի:

Ինչպես հասկանում եք, մենք ստիպված ենք միջամտելու ազատ կամքի օրենքի գործողությանը և մի փոքր կրճատելու ձեր ազատ կամքը: Սակայն այդ միջոցը ժամանակավոր է և ստիպողական, և ես հույս ունեմ, որ Երկիր մոլորակի քաղաքակրթությունն իր ամբողջությամբ չի տուժի և կկարողանա հուսալիորեն ու կայունությամբ զարգանալ:

Հասկանում եմ, որ իմ այսօրվա ուղերձը ձեզ որոշակի անհանգստություն կհաղորդի և նույնիսկ կցնցի:

Այնքան էլ չի ուզեմ, որ ահաբեկվեիք և սկսեիք նախապես պաշար կուտակել:

Ոչինչ այն ամենից, ինչ կարող եք կանխատեսել ձեր գիտակցությամբ, տեղի չի ունենա, քանի որ փոփոխությունները կընթանան շատ փափկորեն և Լինելիության այն ոլորտներում, որոնք ձեզ հիմա մատչելի չեն:

Դուք վախենալու ոչինչ չունեք: Մենք հոգում ենք ձեր մասին: Բանական տիեզերական էակների մի ողջ Հիերարխիա նվիրվածությամբ ծառայում է այս տիեզերքում գոյություն ունեցող շատ ու շատ քաղաքակրթությունների, դրանց թվում նաև ձեր երկրային քաղաքակրթությանը:

Մեր որոշումը Կարմայական Վարչությունում հավանության է արժանացել: Բոլոր այն նախընտրանքները, որոք դուք պետք է կատարեիք, և որոնց մասին մենք նախագգույացնում էինք,

արդեն կատարված են: Այժմ մնում է միայն սպասել տիեզերական ժամկետներին և տիեզերական հնարավորություններին:

ԵՄ ԵՄ Միասնականի Ներկայությունը: ՕՍ

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
29 դեկտեմբերի, 2007 թ.

Իմ հանձնարարականներն ու մաղթանքներն ուղղված ձեզ

ԵՄ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Ես ձեզ այցելել եմ տարեվերջին՝ մի ժամանակ, երբ իր նիստն է գումարում Կարմայական Վարչությունը: Ես օգտվել եմ այս հնարավորությունից, որպեսզի դիմեմ ձեզ: Երջանիկ եմ, որ երկարատև քննարկումներից հետո մեզ վերջապես հաջողվեց պարզ պատկերացնել, թե ինչ ենք ուզում ստանալ հաջորդ տարվա ընթացքում: Եվ եթե դուք համբերատար լինեք, ապա մենք ժամանակի ընթացքում ձեզ կծանոթացնենք մեր բոլոր պլաններին ու խնդիրներին:

Սակայն արդեն ավարտված է այն ժամանակը, երբ դուք միայն կարդում ու լսում էիք մեր ուղերձները: Այժմ եկել է ակտիվ գործողությունների ժամանակը: Իսկ ձեզնից նրանց, ովքեր նախկինի պես իրենց հետաքրքրասիրությունն ուզում են բավարարել՝ մեր ուղերձները կարդալով, ահա ասում եմ, որ մեր ճանապարհները տարբեր են:

Ես այժմ եկել եմ, որպեսզի արթնացնեմ ձեր սրտերը և ձեզ ուղղորդեմ ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործեր կատարելու:

Ես եկել եմ, որպեսզի ձեզ ասեմ այն մասին, որ ողջ կամ համարյա ողջ այն էներգիան, որը դուք հղել էիք ամսի 23-ի համամոլորակային ներխուժման ընթացքում, Կարմայական Վարչությունը նպատակաուղղել է աստվածային այն հնարավորության զարգացմանը, որը կապված է մեր դեսպանորդի հետ: Մենք մտադիր ենք ֆիզիկական ոլորտում ձեռնամուխ լինել կոնկրետ գործողությունների: Մեզ անհրաժեշտ են մարդիկ, որոնք կպաշտպանեն մեր նախաձեռնությունը և մեզ հետ կհամագործակցեն:

Խոսքն այն մասին չէ, որ կազմեք ալարկոտների մի ամբոխ, որը միայն մեր գործին խանգարելուն է ունակ: Ձեզնից ամեն նոր պետք է պատրաստ լինի ի կատար ածելու այն գործը, հանուն որի ինքը մարմնավորվել է:

Ի՞նչ կոնկրետ գործ կարող եք անել արդեն հիմա: Խնդրում եմ ձեզ, որ չշեղվեք դեպի այն հարցի քննարկման կողմը, թե կյանքում ինչն է ձեզ խանգարում, որ իրագործեք այս կամ այն պլանը:

Դուք ձեր ուշադրությունը պետք է կենտրոնացնեք ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործողություններ կատարելու վրա և ձեռնամուխ լինեք դրանց իրագործմանը. ոչ թե համամոլորակային գործողություններ նկատի ունեմ, այլ ճիշտ ուղղությամբ կատարված ոչ մեծ քայլեր: Այդ դեպքում, աստիճանաբար ավելի ու ավելի մոտենալով ձեր մարմնավորման աստվածային նպատակի իրականացմանը, դուք կստանաք մեր օգնությունն ու օժանդակությունը:

Միայն թե նկատի ունեցեք, որ եթե մտադիր եք կրկին ձեզ հետ դեպի ապագա քարշ տալ ձեր հին սովորություններն ու կապվածությունները, ապա ոչինչ չի ստացվի: Դուք չեք կարողանա սար բարձրանալ մի ուղեբեռով, որը բերնեբերան լիքն է անպետքություններով: Մի կո՛ղմ թողեք բոլոր անպետք իրերը, սովորությունները և թույլ տվեք Աստծուն, որ հոգա ձեր մասին:

Սակայն ձեզ այստեղ մի ուրիշ վտանգ էլ է սպառնում: Երբեմն այնպես եք ամեն ինչ թողնում Աստծո և Վեհապետների հույսին, որ մոռանում եք ձեր ընտանիքների հոգսերի, ձեր տների կարգ ու կանոնի և ձեր ֆիզիկական մարմնի կարիքների մասին:

Միայն լրիվ ներդաշնակությունը և հոգևորի ու ֆիզիկականի համակշռությունը՝ հոգևորի փոքր-ինչ գերակշռումով, կարող են ֆիզիկական աշխարհում բերել անհրաժեշտ արդյունքի:

Հիշեցեք, որ հենց հասնեք ներքին անհրաժեշտ համակշռությանը, էներգիան կհոսի ձեր էության միջով, և դուք ի վիճակի կլինեք կատարելու օրվա բոլոր այն գործերը, որոնք անհրաժեշտ է հասցնել ու անել:

Ձեր աշխարհում տարածված մի մոլորություն կա: Դուք կարծում եք, որ եթե ձեր կյանքը նվիրել եք Վեհապետների գործերի կատարմանը, ապա Վեհապետները պետք է հոգ տանեն ձեր առողջության պահպանման և ֆիզիկական կարիքների համար:

Պետք չէ սեփական բեռը դնել Համբարձյալ Դասերի ուսերին: Դուք ունեք ձեր դժվարությունները, իսկ մենք՝ մերը: Մենք ձեզ չենք ստիպում տանել մեր ուսաբեռը, քանզի եթե, օրինակ, ես ձեր ուսերին դնեմ իմ բեռի թեկուզ մի չնչին մասը, ապա դուք մի րոպե անգամ չեք

դիմանա այն բեռի ծանրությանը, որը ես կրում եմ՝ ի բարօրություն Երկիր մոլորակի կենսահոսքերի:

Մի՛ փորձեք ամեն ինչով ապավինել ո՛չ Համբարձյալ Դասերին, ո՛չ էլ մեր դեսպանորդին: Ամեն ոք պետք է կրի իր բեռը: Միայն անկարողները՝ հիվանդներն ու երեխաներն են, որ անխոնջ հոգածության կարիք ունեն: Մնացածներն իրենք պետք է հոգան իրենց ու իրենց մերձավորների մասին:

Ամեն մի առողջ տղամարդ պարտավոր է պահել իր ընտանիքը և օգնություն ցուցաբերել նրան, ով դրա կարիքն ունի:

Մի՛ շփոթեք հոգևոր ուղին ու հոգևոր նվաճումները անբանության հետ:

Ձեր աշխարհը չի կարող հանդուրժել մշտական անբան վիճակը: Դուք չեք կարող անվերջ ներխուժումներով զբաղվել: Պետք է նաև ինքներդ ձեզ ու ձեզնից կախում ունեցող մարդկանց ապահովեք սննդով, հագուստով, տանիքով ու հոգածությամբ:

Միայն դրանից հետո դուք կարող եք զբաղվել հոգևոր գործառնություններով ու հմտություններով:

Այնուհանդերձ պետք է ձեզ նախազգուշացնեմ ևս մեկ վտանգի մասին, երբ, պատճառ բռնելով ձեր մշտական զբաղվածությունն ու ծանրաբեռնվածությունը, մոռանում եք օրվա մեջ գոնե հինգ րոպե հատկացնել Աստծուն: Դուք չեք կարողանա ճիշտ գործողություններ իրականացնել ֆիզիկական ոլորտում, եթե ձեր գիտակցությունը համահունչ չպահեք Աստծո հետ: Պետք է ջանաք մշտապես լինել ոգու լավ ու բարի տրամադրվածության մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ զբաղվեք այն հոգևոր գործառնություններով, որոնք համահունչ են ձեր հոգու հետ:

Ես չեմ կարող ձեզ ներխուժում (մեղիտացիա –թ.) պարտադրել, եթե աղոթելուն եք սովոր: Եվ հակառակը, չեմ կարող ասել, թե աղոթեք, եթե ձեզ ավելի հոգեհարազատ են յոզան ու ներխուժումը: Նման խիստ հանձնարարականներ չկան:

Բոլորիդ համար կան կենսական տարածություն և հնարավորություններ, որ զբաղվեք հոգևոր աշխատանքով:

Սակայն կան և այնպիսի գործառնություններ, որոնք չեն նպաստում ձեր հոգևոր զարգացմանը, այլ հակառակը, հոգուն դնում են դոգմաներից ու կանոններից շինված վանդակի մեջ: Հասել է ժամանակը, որ վանդակներից ազատ արձակվեն այն մոլորյալների հոգիները, որոնք կարծում են, թե Աստծուն են ծառայում, բայց զբաղվում են ինքնախոշտանգմամբ ու ինքնախարազանմամբ:

Նման գործառնություններն Աստծո Սպասավորության հետ ոչ մի ընդհանուր բան չունեն: Դուք ազատ մարդիկ եք, և հոգևոր գործառնություններով զբաղվելը ձեզ պետք է ուրախություն և բավականություն պատճառի:

Ես չեմ արդարացնում վառարանին թիկն տալն ու անբանությունը. երբեմն հարկավոր է ինքզինք ստիպել տեղից վեր կենալ և աղոթել կամ օգնել մերձավորներին՝ ներառյալ տնեցիներին:

Բայց նաև չեմ հանձնարարում, որ չափազանց ջանադիր լինեք և ամեն օր զբաղվեք միայն հոգևոր գործառնություններով: Տեղին է միայն խելամիտ համակշռությունը՝ խելամիտ սահմանափակումն ու խելամիտ գործողությունը:

Այժմ կուզենայի հրաժեշտից առաջ ձեզ առաջարկել ևս մեկ մեթոդաբանություն, որի մասին երևի գիտեիք, բայց մոռացել եք: Ուզում եմ ձեզ հիշեցնել այն Լույսի մասին, որ ձեր ներսում է: Ուզում եմ ձեզ հիշեցնել, որ Աստված ապրում է ձեր սրտում:

Ձեզ մնում է միայն ինքնադրսևորման հնարավորություն տալ Աստծուն:

Թո՛ղ որ Նոր տարում ֆիզիկական ոլորտի ձեր բոլոր գործողությունները ղեկավարվեն ձեր Բարձրագույն Ես-ի՝ ձեր ներսի Աստծու կողմից:

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը՝ ձեզ հետ եղա այսօր

Տեր Մայրեյա

30 դեկտեմբերի, 2007 թ.

Դուք բոլորդ կհազենաք Լույսով և կողողվեք մեր աշխարհի էներգիաներով

ԵՍ ԵՄ Մայրեյան՝ իմ դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Ես այսօր եկել եմ և, ըստ հաստատված որոշակի սովորության, նախ և առաջ կուզենայի մաղթել ձեզ ուրախ և արգասաբեր Նոր տարի: Թեև երկրային տոներն նշելու սովորությո՜ւն մենք չունենք, բայց ձեզ համար դեռևս որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և նշանակալից են պայմանական որոշ տոներ, որոնք ինքներդ եք ձեզ համար հորինել:

Ես ուրախ եմ, որ այժմ կարողացա մոտ գալ ձեզ. և մեծ հույսեր եմ փայփայում, որ չեմ խանգարի ձեր տոնական հոգսերին:

Սակայն ձեզնից նրանք, ովքեր վճռական են տրամադրված և պատրաստ են Սպասավորության գործին, տեղեկատվությունս կընկալեն նաև տոնական աղմուկի ու այս օրերի ունայնության պարագայում:

Ձեզ համար է, որ եկել եմ, և ձեզ է, որ դիմում եմ:

Իսկ հիմա կուզենայի անդրադառնալ այն կարևորին, որի համար եկել եմ: Ինչպես միշտ, դա առնչվում է որոշակի գիտելիքների և էներգիաների փոխանցման հետ: Ամեն անգամ մենք գալիս ենք և մի փոքր այլ կերպ ենք մասնագումարդեն հայտնի գիտելիքները: Բայց և ամեն անգամ ձեր մեջ լինում են այնպիսիները, որոնց համար մեր կողմից տրված տեղեկատվությունը հենց հիմա է բացում աստվածային հնարավորության պատուհանը: Դուք հանկարծ նորովի եք ընկալում արդեն ծանոթ բաները և ձեր առջև բացում եք մի ողջ աշխարհ, որում ապրում են Լուսի Համբարձյալ Տիրակալները:

Ես գալիս եմ, որպեսզի ամրապնդեմ իմ կապը ձեզնից նրանց հետ, ովքեր Ուղու վրա իրենց բավականաչափ վստահ են զգում: Ծանր է ձեզ համար, որովհետև դուք կրում եք ո՛չ միայն ձեր սեփական բեռը: Կարմայական Վարչության հանդեպ ձեր հոգիները պարտավորվել են կրելու այն մարդկանց կարմայի մի մասը, ովքեր դեռևս ունակ չեն մեզ հասկանալ և իմ գալստյանը վերաբերվում են այնպես, կարծես Ձմեռ Պապն է եկել ու տվել իր ուղերձը:

Մի՛ կարծեք, թե նրանք, ովքեր թաղված են աշխարհիկ հոգսերի ունայնության մեջ և գլխովին տարված են ամանորյա տոնի պատրաստությամբ, ավելի երջանիկ են նրանցից, ովքեր հասկանում են իմ խոսքերը. խոսքեր, որոնք հնչում են իրենց սրտերում երաժշտության պես: Կան առավել նուրբ հաճույքներ ու երանություններ, բայց, ցավոք, երկրագնդի վրա շատ քիչ մարդիկ են ունակ ընկալելու մեր թրթռանքները և հասկանալու այն, ինչի մասին խոսում եմ:

Ձեզնից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում կհասնի իր գիտակցության այն վիճակին, երբ նրա առջև կբացվեն Երկնոյորտները. ամեն ներշնչում ու արտաշնչում կլինի շատ նշանակալից, քանի որ դրանց ու սրտի զարկերին համընթաց դուք ավելի ու ավելի լիով կըմբռնեք Աստծո ճշմարտությունը, և աշխարհակառույցի հիմքերի ընկալումը կանցնի ձեր ողջ էության ատմների ու բջջիչների միջով: Դուք բոլորդ կհագնեաք Լույսով և կողողվեք մեր աշխարհի էներգիաներով:

Շատերի համար իմ խոսքն անհասկանալի է, բայց ես խոսում եմ ձե՛զ համար. ձեզ, որ հետևում և ու ծառայում եք ինձ:

Ես եկել եմ ձեզ հետ վերամիավորվելու համար: Իմ ու ձեր թրթռանքներն ավելի ու ավելի են մերձենում իրար: Ես գալիս եմ, որպեսզի հիշեցնեմ ձեր պարտքի մասին:

Աշխարհները մերձեցել են...

Տեր Սուրիա

30 դեկտեմբերի, 2007 թ.

Նոր աստվածային շնորհատվություն

ԵՍ ԵՄ Սուրիան: Ես հենց նոր եկա Մեծ Կենտրոնական Արևից և ներողություն եմ խնդրում Տեր Մայրերայից, որ ստիպված եղա ընդհատել ձեզ ուղղված նրա խոսքը:

Ես ներկայացա, որպեսզի ուրախալի լուր հաղորդեմ ձեզ...

Համաձայն Տիեզերական Օրենքների՝ պետք է հայտնի դառնա ձեզ, որ այլևս չեք կարողանա ընթանալ խավարի մեջ դեգերելու ձեր ուղիներով: Ես եկել եմ ձեր Ուղին լուսավորելու: Այսօրվանից սկսած և ողջ հաջորդ տարվա ընթացքում նոր տիեզերական հնարավորություն է բացվում նրանց համար, ովքեր նպատակամղվածություն ունեն: Ես եկել եմ, որպեսզի համալարեմ ձեր գիտակցությունը Մեծ Կենտրոնական Արևի հետ: Ձեր ամեն մի հոգևոր գործառնության ժամանակ, երբ կանչ եք հղում Վեհապետներին, Աստծուն կամ ձեր ԵՄ ԵՄ Ներկայությանը, հիշե՛ք նոր թողության շնորհի մասին, որն այս պահին շնորհվում է ձեզ և կգործի ողջ եկող տարվա ընթացքում:

Այս թողության շնորհը վերաբերում է Մեծ Կենտրոնական Արևի հետ ձեր համալարվածությանը: Իմ այս ուղերձն ընթերցողներից յուրաքանչյուրի սրտում ես տեղադրում և ամրակայում եմ Մեծ Կենտրոնական Արևի հետ համահունչ հնչող լար: Ամրակայում եմ լար, որը տեսանելի չէ ձեր ֆիզիկական աչքերի համար, իսկ նուրբ աշխարհում երևում է որպես սարդոստայնի թել հիշեցնող բյուրեղյա լար: Այսուհետև, երբ կտրվեք աղոթքի կամ մտասկզման գործառնության, այդ լարը կհնչի ձեր սրտերում և ձեզ հնարավորություն կտա համալարվելու Բարձրագույն աշխարհների հետ:

Դա ձեր հոգու առաջնության համար անհրաժեշտ մեծ շնորհ է: Իհարկե, ձեր արտաքին գիտակցությունը կարող է պատնեշներ դնել և խոչընդոտել այս թողության շնորհի դրսևորումը: Ուստի ինքներդ պետք է վերահսկեք ձեր արտաքին գիտակցությունն ու մարմնական խելքը: Միայն այնժամ, երբ կնամանվեք փոքրիկ երեխաների և կհավատաք այն հրաշքներին, որոնք ձեզ են հասնում մեր աշխարհից, այդ հրաշքները կսկսեն դրսևորվել ֆիզիկական ոլորտում և ձեր կյանքում:

Մշտապես լինում են առաջամարտիկներ, որոնք սկսում են դժվարին ու բարդ գործը: Մեծամասնությունն էլ կողքից զգուշավոր դիտում է, թե բանն ինչով կվերջանա:

Նախապես ասեմ, որ ամեն ինչ բարեհաջող կավարտվի ձեր մոլորակի համար... Երկիրը կապրի ու կբարգավաճի...

Հարկավոր է միայն, որ հավատաք մեզ՝ Համբարձյալ Դասերիս, և, փոխանակ կենտրոնանալու ձեր երկրային կյանքի մռայլ կողմերի ու կործանարար սովորությունների վրա, ձգվեք դեպի վեր, դեպի հեռավոր աշխարհները, դեպի Մեծ Կենտրոնական Արևը:

Դուք դառնում եք այն, ինչին ձգտում եք: Մի՛ մոռացեք այդ պարզ ճշմարտությունը: Ձեր աշխարհը արտացոլանքի աշխարհ է և հնազանդորեն արտացոլում է ձեր գիտակցությունն այնպես, ինչպես այն կա:

Ուստի այն ամենը, ինչ հարկ է, որ անեք, հետևյալն է՝ դեն նետել, թափ տալ վրայից բացասական մտքերն ու հույզերը, բոլոր ընկճված վիճակները և տեղ ազատել այն ցնծության համար, որը կներթափանցի ձեր աշխարհի ձեր սրտերի միջով, եթե պահպանվի դրանց համալարվածությունը Բարձրագույն աշխարհների հետ:

Ես այսօր ուրախ եղա այս ուրախալի լուրը ձեզ հասցնելու համար... Ուրախ եղա՝ տեղեկացնելով ձեզ բյուրեղյա լարի նոր թողության շնորհի մասին, որի միջոցով ձեր սրտերը կկապվեն Մեծ Կենտրոնական Արևի հետ:

ԵՍ ԵՄ Սուրիան, եղա ձեզ հետ

Տեր Հիսուս

31 դեկտեմբերի, 2007 թ.

Հանապազօրյա խրատներ

ԵՍ ԵՄ Հիսուս՝ ձեր պաշտելին: Ես եմ եկել, որպեսզի թարմացնեմ փոխադարձ Սիրո վրա խարսխված մեր փոխհարաբերությունները: Ճիշտ է, չէ՞, որ Սիրում եք ինձ...

Ես եկա Երկիր 2000 տարի առաջ: Եվ իմ նպատակներից ու խնդիրներից մեկն էլ այն էր, որ Երկրի մարդկությանը տամ Սիրո չափանմուշ, այն Սիրո, որը հիմնված է ոչ թե մարմնական ցանկության, այլ ավելի բարձրաթիվի, աստվածային զգացմունքի վրա:

Ես խոսում և ուսուցանում էի իմ աշակերտներին Սիրո զգացմունքի վրա հիմնված հարաբերությունների մասին: Երբ հավաքվում է համայնք՝ մի քանի հարյուր մարդկանց համակեցություն, ապա հարաբերությունների միակ և անհրաժեշտ պայմանն այն պետք է լինի, որ նրանց հարաբերությունները խարսխված լինեն փոխադարձ Սիրո զգացմունքի վրա:

Ձեզ համար դժվար է պատկերացնել մի զգացմունք, որը տածվում է, առանց բացառության, բոլոր մարդկանց նկատմամբ: Սակայն ես օժտված էի այդ շնորհով: Աստված տվել էր ինձ այդ ունակությունը՝ Սիրել բոլոր մարդկանց: Եվ հենց այդ ունակության շնորհիվ է, որ ես կարողացա դիմանալ Աստծո կողմից ինձ հատկացված փորձություններին:

Միայն անանձնական, անսահման Սիրո զգացմունքով դուք կկարողանաք ճշմարիտ հարաբերություններ հաստատել ձեր աշխարհում:

Դուք սովոր եք սեր տածել ձեր ծնողների, տղամարդկանց, կանանց, երեխաների նկատմամբ: Այդ ամենը միևնույն աստվածային Սիրո տարբեր դրսևորումներն են: Սակայն փոքր, նեղ դրսևորումները: Ես մեծ Սիրո մասին եմ խոսում: Մեր, որը տարբերություն չի դնում տղամարդու, կնոջ, կենդանու և նույնիսկ անկենդան բնության միջև:

Ես խոսում եմ այն Սիրո մասին, որը տարածված է անսահմանորեն և ներառում է իր մեջ ողջ Արարչությունը՝ այն ամենը, ինչ ձեր շուրջը տեսնում եք:

Ձեր աշխարհում շատ դժվար է նման Մեր ունենալը: Սակայն եթե չսովորեք այդպես Սիրել, ապա չեք կարողանա առաջ շարժվել Էվոլյուցիոն զարգացման այն Ուղով, որը մենք ուսուցանում ենք:

Համբարձյալ Վեհապետները, որոնք ղեկավարում են Երկրի մոլորակի կենսահոսքերը, բոլորն էլ այս կամ այն չափով օժտված են Սիրո այդ հատկությամբ: Հավատացե՛ք ինձ, մենք չե՛ինք

կարողանա միլիոնավոր տարիներով գործ ունենանալ Երկիր մոլորակի մարդկության հետ, եթե մեր մեջ չունենայինք այդ անսահման, համընդգրկուն Մերը: Մերը ձեր նկատմամբ տածվում է ոչ թե այն պատճառով, որ դուք այդքան լավն եք, այլ որ Աստծո մի մասն եք: Յուրաքանչյուրիդ մեջ Աստծո չորսնորված մի մասնիկ կա, և բոլորիդ խնդիրն է, որ Աստծուն դրսևորեք, հնարավորություն տաք Աստծուն ձեր միջոցով գործելու:

Դուք այժմ չափազանց զբաղված ու մտահոգված եք աշխարհիկ գործերով: Դուք մշտապես գտնվում եք առօրեական ունայնության մեջ և ջանում եք լուծել մեծ ու փոքր կենսական խնդիրներ: Կգա ժամանակ, երբ կսովորեք օրվա ունայնությունից անդին տեսնելու մարդկային քաղաքակրթության զարգացման ավելի ընդհանրական պատկերը: Կսովորեք դիտել ու տեսնել, թե ինչպես են ձեր հայացքի դեմ ծառացած ամեն մի կենսական իրադրության մեջ վերախաղարկվում անցյալում ձեր իսկ կողմից սկզբնավորված պատճառները: Դուք կսովորեք տարբերել պատճառը հետևանքից: Եվ աստիճանաբար կսկսեք գլուխ հանել Կյանքի հյուսվածքից և տեսնել այն իրականը, որը ծածկված է այդ հյուսվածքով: Դուք կկարողանաք տեսնել Աստծո իրական աշխարհը:

Իսկ առայժմ դուք դեռ սովորելու, հասկանալու շատ բան ունեք:

Միակ բանը, որը կանդեի, որ անեք, այն է, որ չդադարեք ձեր զարգացմամբ նպատակամղվել դեպի վեր՝ դեպի Աստծո իրականությունը: Չպետք է մոռանալ, որ բոլոր կենսական մանրուքներից անդին կան ավելի մեծ խնդիրներ: Եվ որքան ավելի հաջող լուծեք ձեր հանապազօրյա խնդիրները, այնքան ավելի արագ կսովորեք կյանքի թվացյալ բարդության հետևում տեսնել ու ճանաչել ծանոթ իրավիճակներ: Դուք կկարողանաք տեսնել դժբախտությունների ու ճախորդությունների պատճառները. կտեսնեք ինքներդ և կպատմեք այդ մասին ուրիշներին:

Ձեզ համար ամեն ինչ դեռ առջևում է: Եվ այնժամ, երբ ձեր ֆիզիկական օկտավայում լիարժեքորեն կտիրապետեք կյանքին, կկարողանաք նաև ձեզ վրա վերցնել ավելի պատասխանատու ծարայություն: Մենք չենք կարող ձեզ վստահորեն տալ շատ գործառնություններ ու մեթոդաբանություններ. չենք կարող ձեզ վստահել մատերիայում էներգիայի ղեկավարման գործը, քանի դեռ համոզված չենք, որ հասունացել եք այնքան, որ պատասխանատվությամբ վերաբերվեք ձեզ տրված հանձնարարություններին և ճիշտ տնօրինեք գիտելիքները:

Իսկ մինչ այդ դեռևս կմնաք պատրանքների գրկում: Ողջ զարգացումն ու դրա տեմպերը դուք ինքներդ եք որոշում: Եվ մեկի զարգացումն ընթանում է շատ արագ ու հաջող՝ բառացիորեն մեկ կյանքի ընթացքում, որոշներն էլ ամբողջ կյանքի ընթացքում չեն կարողանում ձերբազատվել ընդամենը մեկ հատկանիշից՝ ընդամենը մեկ թերությունից: Եվ երբեմն այնպիսի տպավորություն է ստացվում, թե շատ կենդանիներ անհամեմատ ավելի հասկացող են, քան, այսպես կոչված, բանական մարդկության որոշ ներկայացուցիչներ: Իսկ ձեր մկանի ուժին ինքնավստահ ապավինելը, փոթորիկներ ու երկրաշարժեր վերահսկելու ձեր ցանկությունը, հիրավի, ժպիտ է հարուցում մեր դեմքերին: Ձեզնից դուրս մոլեգնող տարերքը դուք չեք կարող խաղաղեցնել, քանի դեռ չեք սովորել խաղաղեցնել ձեր ներսի զգացմունքային փոթորիկը:

Այն դեպքերում, երբ «ափերից դուրս եք գալիս» և հայտնվում ծայրահեղ անհավասարակշիռ վիճակում, հիշեցե՛ք, թե ինչպես էիք բոլորովին վերջերս՝ անցած շաբաթվա ընթացքում, փորձում համակշռության բերել Երկրի այս կամ այն իրավիճակը: Աստված ինքն է ձեզ ցույց տալիս ձեր նվաճումների աստիճանը:

Միայն այն մարդն է գրավում մեր ուշադրությունը, և մենք պատրաստ ենք լինում նրա հետ համագործակցել, ով հասել է լիակատար խաղաղվածության և ունակ է ամենաանցանկալի ու ամենաանբարենպաստ իրավիճակներում հիշել Աստծո մասին:

Պահպանե՛ք ձեր գիտակցության ճիշտ վիճակն օրվա ընթացքում, օր օրի, տարեցտարի, և դուք հոգևոր նվաճումների չտեսնված բերք կստանաք:

Ես եկա, որպեսզի ձեզ մի քիչ խրատեմ: Հուսով եմ, որ իմ խրատները ձեզ անելանի վիճակի մեջ չեն գցի: Չարժե, որ անցյալի սխալների համար տանջեք ու կշտամբեք ինքներդ ձեզ: Ծառ կարևոր է, որ ձեր գիտակցության մեջ գնահատական տաք ձեր ցանկացած, թեկուզ շատ անհավոր արարմունքին և դրանից հետո մտքով այլևս չանդրադառնաք դրան:

Քանզի այն դեպքերում, երբ նորից ու նորից մտքով կառչում եք ձեր այս կամ այն անվայել արարքից, դուք անընդհատ ձեր էներգիայով սնուցում եք այն, որի հետևանքով անեցնում եք մի այնպիսի անհավոր հրեշ, որի հախից ինքներդ առանց մեր օգնության արդեն չեք կարող գալ:

Ես եկել էի և հիմա հեռանում եմ: Ծառ եմ ամիստոսում, որ բաժանվում եմ ձեզնից, բայց մեր զրույցի ժամանակն արդեն սպառված է:

ԵՍ ԵՄ Հիսուս՝ Ուղու ձեր ընկերը, եղբայրը և օգնականը

Ուսմունք գիտակցության փոփոխության մասին

ԵՍ ԵՄ Հառութամա Բուդդան. այս օրով կրկին ձեզ այցի եմ եկել, որպեսզի տամ իմ ուղերձն աշխարհին:

«Թող լավ լինի աշխարհի համար», - ասում եք դուք, և այդ խոսքի տակ յուրաքանչյուրն իրենն է հասկանում: Սակայն, կախված այն բանից, թե ինչպես կկարողանանք համախմբել աշխարհի ապագայի մասին մեր ըմբռնումները, այդպես էլ կգոյանա ապագան:

Եվ այն դեպքում, երբ ժամանակ եք գտնում, որ առանձնանաք և աղոթեք ձեր սրտերում, կուզենայի, որ դուք ճիշտ ձևով մտածեիք ձեր աշխարհի ապագայի մասին:

Երկիր մոլորակի ապագան անխզելիորեն կապված է հոգևոր առաջընթացի հետ: Ուստի այն ամենը, ինչ ձեզ կապում է ոչ ճիշտ, անաստված դրսևորումների հետ, պետք է անխնա կերպով դեն նետվի հենց ձեր կողմից: Դուք ձեր գիտակցության մեջ պետք է գնահատական տաք ամեն մի ոչ ճիշտ, անաստված արարքի, և միայն դրանից հետո է, որ ունակ կդառնաք մղվելու դեպի աստվածային կերպերն ու դրսևորումները: Աշխարհների սահմանագիծն անցնում է ձեր միջով: Եվ դուք ինքներդ եք ձեր գիտակցությամբ տեղաշարժում այդ սահմանագիծը: Դա շատ նուրբ ու նրբագացություն պահանջող գործընթաց է և, իհարկե, երկրաբնականների մեծամասնությունը չի մտածում այն մասին, թե ինչպես է տեղի ունենում այդ աշխարհի ձևափոխությունը, և թե ինչպես է Երկիրն անցում կատարում ավելի բարձր էներգետիկական մակարդակի: Սակայն ձեզնից նրանք, ովքեր մշտապես կարդում են մեր ուղերձները, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով, հավանաբար սկսել են գլխի ընկնել, թե ինչպես է տեղի ունենում աշխարհի ձևափոխությունը, և թե դուք՝ ձեզնից յուրաքանչյուրը, ինչպես կարող է այդ գործընթացի վրա ազդել:

Մի՛ կարծեք, որ երբ եռանդուն կերպով մտածում եք այս կամ այն տարերային աղետը խաղաղեցնելու մասին, ապա ինչ-որ նշանակալի արդյունքի եք հասնում: Դուք անհամեմատ ավելի մեծ արդյունքների եք հասնում այն ժամանակ, երբ հաղթանակ եք տանում ինքներդ ձեր նկատմամբ՝ ձեր անիրական մասի ու ձեր էգոյի նկատմամբ: Ձեր տարած յուրաքանչյուր այդպիսի հաղթանակն անհամեմատ ավելի թանկ արժե, քան ամենակատաղի փոթորկի խաղաղեցումը: Քանզի դրանով դուք փոխում եք ձեր գիտակցությունը և, հետևաբար, անցում եք կատարում թրթռանքների մի այլ տիրույթի և ունակ դառնում ազդեցություն գործելու բոլոր այն մարդկանց վրա, որոնք կարմայորեն կապված են ձեզ հետ՝ ձեր ընտանիքի անդամների, ծանոթների, գործընկերների վրա: Նուրբ ոլորտում դուք բոլորդ կապված եք իրար հետ, և ձեր ամեն մի հաղթանակը հաղթանակ է դառնում բոլորի համար՝ տարածվելով մինչև երկրագնդի ամենահեռավոր անկյունները:

Գոյություն ունի տեղեկատվական դաշտ՝ մարդկության ընդհանրական ենթագիտակցությունը: Եվ երբ դուք որոշակի հաջողությունների եք հասնում ձեր հոգևոր առաջընթացում, դրանք հաշվի են առնվում այն մարդկանց կողմից, որոնց թրթիռների հաճախականությունը մոտ է ձերինին: Ահա այդ եղանակով ձեր նվաճումը փոխանցվում է նրանց:

Ահա այդ պատճառով մենք ձեզ ուսուցանում ենք, որ հոգ տանեք միայն ձեր սեփական գիտակցության զարգացման մասին: Այդ նույն պատճառով մենք ասում ենք, որ ձեզնից յուրաքանչյուրը պետք է դաստիարակի միայն մի հոգու՝ հենց ինքն իրեն:

Իհարկե, ես դիտմամբ մի փոքր չափազանցում եմ: Ձեր պարտականության մեջ է մտնում նաև, որ մատչելի ձևով ձեր գիտելիքները փոխանցեք ձեր երեխաներին, ծանոթներին: Սակայն ոչինչ իր ազդեցության ուժով չի կարող համեմատվել այն նվաճումների հետ, որոնք դուք դրսևորում եք նուրբ ոլորտում: Որովհետև նուրբ ոլորտն ավելի ենթարկվող է ու դյուրափոխ, քան ֆիզիկական աշխարհը: Եվ նուրբ ոլորտում տեղի ունեցած այդ փոփոխությունները, որոնք դեռևս տեսանելի չեն ֆիզիկական աշխարհում, մեզ ավելի շատ են հուզում և գրավում մեր ուշադրությունը:

Մենք ակնդետ հետևում ենք ձեր հոգևոր առաջխաղացմանը: Եվ ձեր ամեն մի նվաճումը մեզ ուրախացնում ու հիացնում է՝ նման այն բանին, ինչպես դուք նայում եք առաջին քայլերն անող ձեր երեխային:

Մենք դիտում ենք ճիշտ ուղղությամբ արված ձեր առաջին քայլերը: Եվ ուրախանում ենք ձեր առաջին հաջողություններով ու նվաճումներով: Կան շատ հոգիներ, որոնք, շնորհիվ միայն այն բանի, որ կանոնավորապես կարդում ու վերընթերցում են մեր ուղերձները սկզբից մինչև վերջ, այնպիսի վիթխարի թռիչք են ապրել իրենց զարգացմամբ, որ մենք չենք դադարում զարմանալ նրանց նվաճումներով:

Դուք ունակ եք ուսումնառության, և վերջին մի քանի տարվա ձեր նվաճումները չեն դադարում մեզ ուրախացնել:

Ուստի ես նոր տարվա այս առաջին օրով եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ այն աշխատանքի մասին, որը ձեզնից բացի ոչ ոք չի անի: Միայն ինքներդ կարող եք ելնել ձեր զարգացման այնպիսի մակարդակի վրա, երբ այլևս ձեզ պետք չի լինի ոչ մի խորհրդատու և ուսուցիչ, քանզի գտած կլինեք ձեր ուսուցչին ձեր սրտում:

Եվ որքան ավելի երկար ժամանակով առանձնապես ձեր ներսում գտնվող ուսուցչի հետ, այնքան ավելի ու ավելի ունակ կդառնաք ազդելու ձեր շրջապատի մարդկանց վրա:

Քանզի մարդկանց օրինակ է պետք՝ նմուշօրինակ ֆիզիկական ոլորտում, որին հետևելով կկարողանան փոխել իրենց գիտակցությունն ու վարվելակերպը:

Ժամանակի ընթացքում ձեզնից ամեն ոք կկարողանա ուսուցչի դեր խաղալ շատ ու շատ մոլորյալ հոգիների համար: Մի՛ ամաչեք պատանիներին ու երիտասարդներին այն մասին ասելուց, որ ակոհոլը, նիկոտինը, ռոք երաժշտությունն ու ձեր աշխարհի շատ այլ դրսևորումներ հաշմում են իրենց հոգիները: Երիտասարդությունը պարզապես իր առջև ճիշտ նմուշօրինակներ չի տեսնում: Պետք չէ թերագնահատել ձեր շրջապատի մարդկանց վրա ձեր թողած ազդեցությունը: Եվ միայն ահա այսպիսի մի արտահայտությունը՝ «Ես ակոհոլ չեմ օգտագործում և այլևս չեմ ծխում», բավարար կլինի, որպեսզի նրանք, ում համար դուք հեղինակություն եք, սկսեն կասկածել իրենց այն արարքների ճշտությանը, որոնց հետևել են ողջ կյանքի ընթացքում:

Ինքներդ եք ձևավորում ձեր հասարակության մեջ առկա կարծրատիպերը: Փոխե՛ք վարքի կարծրատիպերը, աստվածային ձևաչափեր մտցրեք ձեր կյանքում և մի քանի տարի հետո արդեն կտեսնեք արդյունքը:

Ձեզնից յուրաքանչյուրը պետք է ձգտի այն բանին, որ ճիշտ ազդեցություն գործի բոլոր այն մարդկանց վրա, ում հանդիպում է օրվա ընթացքում: Սակայն մի՛ մոռացեք, որ հիմնական ազդեցությունը թողնում են ձեր թրթռումները, հետո նոր միայն ձեր խոսքերն ու ֆիզիկական ոլորտի ձեր գործողությունները:

Մի՛ ձգտեք սովորեցնելու, այլ ուսուցանեք միայն այնժամ, երբ կտեսնեք ձեր առջև մեկին, ով ծարավի է ոգեղինության: Տվե՛ք նրան մի բաժակ սառը ջուր, հագեցրե՛ք ծարավը:

Բայց երբեք ոչ ոքի գոռով մի՛ խմեցրեք: Նույնիսկ կատարելապես մաքուր, սուրբ ջուրն օգտավետ չի լինի, եթե մարդը ծարավ չէ և չի ուզում խմել:

Ես ձեզ այցի եկա այս օրով: Ծա՛տ ափսոս, որ մեր գրույցի ժամանակը սպառվեց:

Մինչև նոր հանդիպումներ, ԵՍ ԵՄ Հատկապես

Վեհապետ Հիլարիոն
2 հունվարի, 2008 թ.

Ուսմունք Վեհապետների ուսուցման նկատմամբ ճիշտ վերաբերմունք դրսևորելու մասին

ԵՍ ԵՄ Հիլարիոնը՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Ինչպես միշտ, կուզենայի ձեզ տալ ոչ մեծ մի խրատ և անկեղծորեն հույս եմ կապում, որ իմ այս ուսուցումը ձեզ համար օգտավետ կլինի:

Դուք չեք կարող երկար ժամանակով կենտրոնանալ այն նյութերի վրա, որոնք մենք ուսուցանում ենք: Ձեր կյանքում չափազանց շատ են շեղող գործոնները: Սակայն ամենաառաջին և ամենակարևոր ձեր հատկանիշն այն ունակությունը կլինի, որ հավաքեք ձեզ և կենտրոնանաք ձեր կողմից ուսումնասիրվող նյութի վրա: Այնժամ, երբ ունակ եք դառնում կենտրոնանալու, նաև սկսում եք յուրացնել այն նյութերը, որոնք մենք ձեզ ուսուցանում ենք:

Քանի դեռ դուք շարունակում եք գործի արանքում կարդալ մեր թելադրությունները՝ բառացիորեն սնունդ ընդունելու և հեռուստացույց դիտելու արանքում, ապա մեր ուսուցումն անհրաժեշտ հետք չի թողնի ձեզ վրա, ոչ էլ երբևէ որևէ օգուտ կստանաք ձեր հոգու համար:

Մտաբերե՛ք խնդրեմ. երբ զբաղված եք լինում որևէ լարված աշխատանքով, արդյո՞ք այն հաջող էլք է ունենում, եթե անընդհատ շեղվում եք և փորձում տասը գործ միանգամից անել: Ինչու՞ եք կարծում, թե կարող եք հոգևոր գործով զբաղվել հենց այնպես, գործերի արանքում:

Քանի դեռ ձեր գիտակցության մեջ ճիշտ մոտեցում չեք մշակել հոգևոր աշխատանքի նկատմամբ, որևէ նշանակալի արդյունքի չեք կարողանա հասնել:

Ես ցավով պետք է նշեմ, որ ուշադրության ու կենտրոնացման բացակայությունը ձեր ժամանակների աքիլլեսյան գարշապարն է: Դուք միաժամանակ ջանում եք յուրացնել

ամենաբազմաբնույթ բաներ: Ունկնդրում եք ռադիո կամ դիտում հեռուստացույց, գրուցում եք հեռախոսով և փորձում միաժամանակ կարդալ մեր ուղերձները:

Քանի դեռ ձեր մեջ ուժ չեք գտնի, որ դեն նետեք կողմնակի բաները և զբաղվեք միայն հոգևոր սնունդ ընդունելով, մեր ուղերձների ընթերցումը ձեզ ոչ միայն հարկ եղած օգուտը չի տա, այլ նաև վնասակար կլինի ձեր զարգացման համար:

Ասեմ, թե ինչու: Եթե զբաղված եք ինչ որ աշխարհիկ գործով, օրինակ, ասենք, ռադիոյով ունկնդրում եք ժամանակակից երաժշտություն կամ գովազդ եք դիտում հեռուստացույցով՝ միաժամանակ ջանալով կարդալ մեր ուղերձը, ապա ողջ այն էներգիան, որը մենք ներդնում ենք մեր ուղերձներում, ձեր կողմից սխալ դասակարգման է արժանանում: Արդյունքում ձեր զարգացումն առաջ ընթանալու փոխարեն սահում է դեպի հետ:

Գիտակցե՛ք վերջապես, որ Աստծո հետ եք գրուցում, շփվում եք այն Վեհապետների հետ, որոնք ձեզնից շատ ու շատ առաջ են անցել և գտնվում են Էվոլյուցիոն զարգացման շատ բարձր աստիճանների վրա: Որտեղի՞ց է ծագել ձեր մեջ այդ անհարգալից վերաբերմունքը. ինչու՞ տարրական բարեկրթություն չեք դրսևորում մեզ հետ հաղորդակցվելու ընթացքում...

Ես կուզենայի, որ մեր դեսպանորդի միջոցով մեր կողմից տրվող Ուսմունքը դուք չընկալեիք որպես ինքնին հասկանալի ու առօրեական մի բան:

Ամեն մի ուղերձի փոխանցմանը մասնակցում են հազարավոր Լույսի Էակներ: Մենք Աստծո թանկարժեք էներգիա ենք ծախսում, որը կաթիլ առ կաթիլ հավաքում և ներդնում ենք մեր ուղերձներում:

Եթե չփոխեք ձեր սպառողական վերաբերմունքը մեր կողմից մատուցվող աստվածային շնորհատվության նկատմամբ, ապա մենք կփակենք մեր լսարանների դռները, և դուք կհայտնվեք միջանցքում՝ սպասելով նոր աստվածային հնարավորության բացմանը:

Որքա՞ն արագ է մարդկությունն սովորականի վերածում ամեն ինչ: Եվ մեզ համար չափազանց ծանր է դիտելը, թե ինչպես եք մեր ուղերձների ընթերցումը հավասարեցնում զվարճալի միջոցառումների՝ ասենք, օրինակ, տեսաֆիլմերի դիտման հետ:

Ձեզնից ոմանք էլ մեր ուղերձներով դեպի իրենց գրուցարաններն են հրապուրում դատարկաբաններին և մեր ուղերձներն օգտագործում որպես հոգևոր հյուրասիրություն:

Հապա մի ձեզ կողքի՛ց նայեք. տեսեք, թե ինչե՛ր եք անում...

Չէ՛ որ Աստծո հետ եք հաղորդակցվում. գոնե ներքին բարեկրթություն ունեցեք, որ կարգի բերեք ձեզ նախքան Նրա հետ հաղորդակցության մեջ մտնելը:

Իմիջիայլոց, Աստծո հետ հաղորդակցվելիս լկտիություն ցուցաբերելը շատ տարածված է ձեր ժամանակներում:

Ուստի առաջին բանը, որ պետք է անեք, ձեր մեջ Աստվածայինի նկատմամբ ակնածալից վերաբերմունք մշակելն է:

Անհրաժեշտ է, որ անհանգստանաք նաև ձեր ուրիշ շատ սխալ նկրտումների հարցերով: Պետք է մտորեք շա՛տ բաների մասին և ստիպողաբար ինքներդ ձեզ ներարկեք խոնարհություն:

Վերջ տվեք Վեհապետներին կյան կովերի տեղ դնելուն: Այո՛, մենք հոգում ենք ձեր մասին, ուսուցանում ենք, սփռվում, բուժում ձեր ֆիզիկական մարմինն ու հոգին. բայց ինչու՞ եք մեզնից ստացած ամեն ինչը դիտում որպես արժանի հատուցում. ինչու՞ եք մոռանում երախտագիտության մասին:

Ես ստիպվա՞ծ եմ այսօր ձեզ հետ գրուցում այս թեմայի շուրջ, քանի որ, եթե չփոխեք Վեհապետների հետ հաղորդակցության նկատմամբ ձեր վերաբերմունքը և չկարողանաք հաղթահարել բնավորության ձեզնից անբաժան դարձած որոշ բացասական գծեր, ապա հնարավոր է, որ շատ մեծ վնաս հասցնեք ձեր հոգուն: Հիշե՛ք խնդրեմ, որ երբ Աստծո էներգիա եք ստանում, ձեր աշխարհում ինքներդ եք դրան ուղղություն տալիս ձեր մտքերի, զգացմունքների և այլազան վիճակների շնորհիվ: Եվ այն դեպքում, երբ այդ էներգիան ստանում եք անպատշաճ պահվածքով, նույն կերպ էլ այն կարող եք սխալ օգտագործել՝ բազմապատկելով պատրանքներն ու առաջացնելով կարմա:

Էվոլյուցիոն զարգացման ձեր ներկայիս աստիճանին համապատասխան՝ հարկ է, որ դուք ավելի մեծ պատասխանատվություն ցուցաբերեք Աստծո էներգիայի օգտագործման նկատմամբ:

Ես այսօր եկա, որպեսզի դուք առիթ ունենաք մտորելու այն մասին, թե արդյոք ճի՞շտ եք վարվում մեր ուղերձների հետ, դրանց մեջ եղած տեղեկատվության ու էներգիայի հետ:

Ես լիահույս եմ, որ այսօրվա իմ ուսուցումն օգտավետ կլինի ձեզ համար:

ԵՄ ԵՄ Հիլարիոնը

**Ուսմունք վնասակար սովորություններից և
գիտակցության կայուն բացասական
վիճակներից ձերբազատվելու մասին**

ԵՍ ԵՄ Միքայել Հրեշտակապետը՝ այս օրով ձեզ այցի եկածը...

Ես եկել եմ, որպեսզի ձեզ ասեմ շատ կարևոր ու ճակատագրական նշանակություն ունեցող որոշման մասին: Այս ուրախալի լուրը ես բերել եմ Հաղթանակի թևերով...

Ֆիզիկական աշխարհում ձեզ թվում է, թե ոչ մի բան չի փոխվում. ձեր աշխարհում ձեզ համար շատ դժվար է կողմնորոշվել, թե ինչ նորություններով է հագեցնում նուրբ աշխարհը:

Հրեշտակներն արդեն այս ուրախալի լուրը տարածել են ամբողջ տիեզերքում, և ես եկել եմ, որպեսզի ձեզ հնարավորություն տամ ուրախանալու մեզ հետ՝ Կապույտ Բոցի Չորագնդերի հետ...

Մեծ Սպիտակ Գահը մեզ նոր հնարավորություն է ընձեռել: Եվ մենք անչափ ուրախ ենք այդ նոր հնարավորության համար:

Այն Երկիր մոլորակի վրա մարմնավորված ամեն մի Լուսակրի համար, ով պարտավորություն է ստանձնել ծառայելու Մեծ Սպիտակ Եղբայրությանը՝ Լույսի Չորագնդերին, հնարավորություն է ապահովում ստեղծելու անխոցելի ու անպարտելի պաշտպանություն՝ բառացիորեն Լույսի գրառ:

Ձեզնից շատ շատերը, երբ Սպասավորության պարտավորություն են ստանձնում, անհավոր հարձակումների ու փորձությունների են ենթարկվում այն ուժերի կողմից, որոնք դեմ են փոփոխություններին, չեն ուզում, որ ինչ-որ բան փոխվի, և աստեղային ոլորտում իրենց ձեռնածությունների հնարավորությունները պակասեն:

Այժմ նրանց ժամանակն սպառված է: Հիմա դուք հնարավորություն ունեք կանչելու անձամբ իմ պաշտպանությունը, և ես ձեզնից յուրաքանչյուրին 12 պահապան հրեշտակ կհատկացնեմ իմ Կապույտ Բոցի Չորագնդերից:

Պատկերացրեք, որ օրվա մեջ 24 ժամ ձեզ հետ կլինեն 12 պահապան հրեշտակներ: Եվ դուք կարող եք կանչել նրանց և խնդրել, որ օրվա ցանկացած ժամի պաշտպանեն ձեզ...

Կանխագրում եմ, որ ձեզնից շատերը կհարցնեն՝ իրո՞ք մշտապես իրենց տրամադրության տակ են նշված պահապան հրեշտակները:

Այդ հարցի պատասխանը շատ պարզ է, և ձեզնից ամեն ոք էլ գիտի այն:

Բավական է միայն, որ անկեղծ սրտով «այո» պատասխանեք հետևյալ հարցերին.

Արդյո՞ք ձեր ողջ կյանքը նվիրաբերել եք Մեծ Սպիտակ Եղբայրությանը ծառայելուն:

Արդյո՞ք ձեր կյանքում առաջնահերթ տեղ եք հատկացնում Եղբայրության խնդիրներին:

Պատրա՞ստ եք արդյոք զոհաբերելու ձեր ունեցած ամեն ինչը, որպեսզի, անկախ ամեն ինչից, շարունակեք ձեր Սպասավորությունը:

Չունե՞ք այլևս վնասակար սովորություններ ու կապվածություններ ձեր աշխարհում:

Եթե բոլոր այս հարցերին «այո» պատասխանեցիք, ապա իսկապես ձեր տրամադրության տակ ունեք 12 պահապան հրեշտակներ...

Իսկ եթե չունեք այդ հրաշալի հատկանիշները, բայց ունեք ձգտում, որ ձերբազատվեք ձեր վատ սովորություններից և ձեր կյանքը նվիրաբերեք Սպասավորությանը, ապա հարկ կլինի ամեն օր կանչ հղել անձամբ ինձ և խնդրել, որպեսզի ես ինքս սկզբնական շրջանում օգնեմ ձեզ:

Կանչեք. «Միքայել Հրեշտակապետ, արի ինձ օգնության...», և ես, համաձայն ձեր այդ կանչի, կշտապեմ օրվա ցանկացած ժամանակ առաքել ձեզ իմ պաշտպանության կապույտ ճառագայթը:

Ձեզնից ոչ ոք զուրկ չի մնա իմ պաշտպանությունից: Բոլորդ գտնվում եք հուսալի խնամակալության ու պաշտպանության ներքո...

Սակայն ես ձեզ չեմ կարողանա օգնել, եթե ցանկություն չունեք հրաժեշտ տալու ձեր թերություններին, վատ սովորություններին ու կապվածություններին: Քանզի ձեր ամեն մի վատ սովորությունն ու կապվածությունն արատ է ձեր աուրայի վրա, և դուք խոցելի եք այլազան ուժերի ու աստեղային ձեռնածուների համար: Ինքներդ եք ընտրություն կատարում, թե ում հետ լինեք:

Ցավոք սրտի, ազատ կամքի օրենքն ինձ հնարավորություն չի տալիս միջամտելու այն դեպքերում, երբ դուք կամավորապես ձեզ կապում եք աստեղային ոլորտի հետ՝ ավլոհոլի, նիկոտինի, ռոք երաժշտության կամ սեռական էներգիայի տարբեր չարաշահումների հետ ունեցած ձեր կապվածություններով:

Դուք ինքներդ եք որոշում, թե ում հետ գնաք: Երբեմն բավարար է լինում, որ պարզապես ուզենաք ազատվել վնասակար սովորությունից ու անկեղծորեն խնդրեք ինձ, որ ձեզ օգնեմ, և այդ սովորությունից ձեր ձերբազատվելն իրողություն է դառնում:

Սակայն երբեմն դուք չեք ուզում ազատվել ձեր կապվածություններից: Եվ հենց դա է լինում ձեր ընտրությունը: Իսկ մեզ մնում է մի կողմ քաշված նայել, թե ե՞րբ Մեծագույն Ուսուցիչ Կյանքը ձեզ խելքի կբերի: Ե՞րբ կլինի, որ այնքա՛ն կորցնեք ձեր առողջությունն ու հետաքրքրությունը կյանքի նկատմամբ, որ վերջապես կոտոր ընկնեք և օգնության խնդրանքով դիմեք Բարձրագույն Ուժերին:

Միայն թե, խնդրո՞ւմ եմ, այն պահին, երբ անկեղծորեն կառաքեք ձեր օգնության կանչը կամ աղոթքը, այդ պահը սևեռեք ձեր հիշողության մեջ կամ նշեք ձեր օրագրում: Բանն այն է, որ մենք չենք կարող օգնություն ցուցաբերել ակնթարթորեն: Մենք չենք կարող դա անել մատերիայի իներտության և այն պատճառով, որ մեզանից երբեմն պահանջվում է, որ չեզոքացնենք ձեր աուրայի շատ մեծ կարմայական բացասական էներգետիկական շերտադարսվածքներ:

Այն դեպքում, երբ ձեր կյանքի մեծ մասի ընթացքում չարաշահել եք ձեր վնասակար սովորություններն ու կապվածությունները, արդեն առաջացած տարիքում եք՝ կքած հիվանդությունների բեռի տակ, և հղում եք ձեր կանչը, ապա լավագույն դեպքում 7 տարի կպահանջվի, մինչև մեր օգնությունը հասնի ձեզ: Իհարկե, եթե ձեռք եք բերել բարի կարմայի մեծ պաշար*, ապա մենք կարող ենք օգտագործել այդ բարի կարման, որպեսզի ձեզ ազատենք ձեր կապվածությունից կամ վատ սովորությունից: Նման դեպքում, հենց որ հղեք ձեր կանչը, դուք կարող եք ակնթարթորեն ապաքինվել:

Այժմ ես կուզենայի մի երկու խոսք ասել ձեր գիտակցության որոշ կայուն վիճակների մասին, որոնք կապված են ահերի ու երկյուղների հետ:

Շատ դեպքերում ահերի պատճառը կարմայական է, և դրանց արմատները կարող են տանել մի քանի մարմնավորում դեպի հետ: Սակայն ճիշտ այնպես, ինչպես կարող եք ազատվել վնասակար սովորություններից, կարող եք ազատվել նաև ձեր գիտակցության այդ կայուն բացասական վիճակներից:

Աստծո համար անհնարին ոչինչ չկա: Եվ եթե խնդրեք ու խնդրեք անկեղծորեն, ապա վաղ թե ուշ կազատվեք ձեզ խանգարող ամեն ինչից:

Սակայն պետք է հիշեք, որ ձեզ խանգարող ամեն ինչից ազատվելը պետք է արդարացված լինի ձեր այն գործերով, որոնք կատարել եք ի փառս Աստծո:

Ինքնին ձեր ազատվելը վատ սովորություններից, ախտերից ու գիտակցության կայուն բացասական վիճակներից կդառնա անիմաստ, եթե դրանից շահած ժամանակը, էներգիան ու եռանդը չօգտագործեք, որպեսզի ֆիզիկական օկտավայում ի կատար ածեք Աստծո գործերը:

Ես շատ կարևոր հարցեր շոշափեցի, որոնք առնչվում են ձեր Սպասավորության հետ: Եվ շատ մարդկանց համար, եթե ոչ մեր ուղերձները կարդացողների մեծամասնության համար, անհասկանալի է, թե ինչպե՞ս է հնարավոր ծառայել Վեհապետներին, ինչպե՞ս պետք է ի կատար ածել Աստծո գործերը ֆիզիկական օկտավայում: Տվե՛ք ձեր այդ հարցերը, և կստանաք դրանց պատասխանները:

Երկիր մոլորակի վրա Մեծ Սպիտակ Եղբայրության ողջ գործունեությունն ուղղված է հենց այն բանին, որ չհամբարձված մարդկությունը մասնակից դառնա այն աշխատանքին, որը Եղբայրությունն իրականացնում է՝ ի բարօրություն Երկիր մոլորակի կենսահոսքերի:

Եվ եթե ուշադիր ընթերցեք այն բոլոր ուղերձները, որոնք մենք տվել ենք մեր դեսպանորդի միջոցով, ապա Սպասավորության ու Ձեռնադրումների Ուղու հասկացություններն ամբողջությամբ կբացվեն ձեր առջև:

ԵՄ ԵՄ Միքայել Հրեշտակապետը՝ լիովին պատրաստ ձեզ ծառայելու

*Տես Կուրթուսիի 2005 թ-ի հունիսի 6-ի ուղերձը

Վեհապետ Լանելլո

4 հունվարի, 2008 թ.

Ուսմունք կյանքում աստվածային հատկանիշներ դրսևորելու մասին

ԵՄ ԵՄ Լանելլոն՝ մեր դեսպանորդի միջոցով կրկին ձեզ այցի եկածը:

Մեր վերջին հանդիպումից հետո, թվում է, մի ողջ հավերժություն է անցել: Որքա՛ն շատ իրադարձություններ են տեղի ունեցել: Եվ ահա ես կրկին ձեզ այցի եմ եկել: Առաջվա պես շողում է արևը, առաջվա պես փոքրերն ու մեծերը նշում են ամանորյա և Ծննդյան տոները: Սակայն կրկին ինչ որ բան աննկատելիորեն փոխվել է: Կասեմ ձեզ, թե ինչն է փոխվել. փոխվել են ձեզ շրջապատող աշխարհի թրթռանքները: Եվ որպեսզի ձեր գիտակցությունը կարողանա վերակառուցվել ու

հարմարվել թրթռանքների փոփոխությանը, ձեզնից չափազանց շատ ջանքեր կպահանջվեն, որպեսզի աշխատեք ինքներդ ձեր վրա:

Երբ խոսում ենք ձեր գիտակցության փոփոխման մասին, մենք նկատի չենք առնում այն, որ ձեր գլուխը լցնեք անչափ շատ տեղեկություններով կամ որ ավելի շատ գրքեր կարդաք, ֆիլմեր դիտեք ու համերգներ հաճախեք:

Այժմ եկել է այն ժամանակը, երբ, որպեսզի առաջընթաց ցատկ կատարվի ձեր գիտակցության մեջ, դուք պետք է սահմանափակեք ձեր փոխհաղորդակցությունն ու ամենակուլությունը: Դադարացնեք ձեր սովորական գործերը և ձեր կյանքին նայեք կարծես կողքից:

Ձեր կյանքում ի՞նչն է, որ հավերժությանն է պատկանում: Ձեր առօրյա գործերից ո՞րն է, որ ձեզնից ավելի երկար կապրի:

Եվ այսպես, ես ձեզ հարց տվեցի:

Մի՛ շտապեք պատասխանել: Քանզի հազիվ թե ձեր շարքերում գտնվեն մի քանի մարդիկ, որ ճիշտ պատասխանեն իմ առաջադրած հարցին:

Այսպես... Կապրի հավերժաբար՝ ձեր մահից հետո էլ, և ձերը կմնա միայն այն, ինչը պատկանում է հավերժական աշխարհին:

Ի՞նչ եք կարծում, ձեր շուրջը եղածներից ի՞նչն է, որ հավերժ կապրի և պատկանում է հավերժական, անանց աշխարհին:

Ձեզ թվում է, թե ձեզ ձե՞ռ եմ առնում: Այնուամենայնիվ ձեր աշխարհում կան բաներ, որ ձեզնից ավելի երկար կապրեն ու հավերժ կլինեն: Եվ դրանք այն աստվածային հատկանիշներն են, որոնք դուք ունակ եք դրսևորելու ձեր կյանքում:

Կան շատ աստվածային հատկանիշներ, և նաև կան շատ անաստված հատկանիշներ, որոնք դուք ամեն օր դրսևորում եք: Եվ այն դեպքերում, երբ անաստված հատկանիշներ եք դրսևորում, դրանով ծանրացնում եք ձեր վիճակը ֆիզիկական աշխարհում: Դուք կարմա եք ստեղծում և պարտավոր կլինեք այն բեռնաթափել: Հաճախ այդ բեռնաթափումը տեղի է ունենում ձեր գլխին թափվող ձախորդությունների, դժբախտությունների, տառապանքների ու հիվանդությունների տեսքով:

Սակայն Աստված ձեզ ասում է, որ աստվածային հատկանիշներ դրսևորեք: Եվ երբ դրսևորում եք այդ աստվածային հատկանիշները, ապա դրանք մնում են ձեզնից հետո և հավերժ ապրում դարձնում:

Եվ եթե հայացք նետեք ձեր ժամանակակից պատմությանը, ապա կմտաբերեք, թե մարդկանց ո՞ր արարքներն են տալիս պատմության էջերում: Առավել հաճախ դրանք այնպիսի արարքներ են եղել, որոնք կապված են անշահախնդրության, անձնագոհության, խիզախության, պատվի ու արժանապատվության հետ:

Կարող եք առանց դժվարության ինքներդ թվարկել այն հատկանիշները, որոնք դասվում են աստվածայինի շարքը և ուղեկցում ձեզ ձեր բոլոր երկրային մարմնավորումների ընթացքում:

Օրինակ՝ եթե ձեր անցած մարմնավորումներից մեկի ընթացքում ձեռք եք բերել ասպետական վեհամեծության ու ծառայելու հատկանիշ, ապա այն ձեզ հետ կլինի ձեր բոլոր մարմնավորումների ընթացքում:

Խոսքս ու՞ր եմ ծռում. միակ բանը, որի համար արժե ապրել, աստվածային հատկանիշներ ձեռք բերելն է: Այդ հատկանիշների մեջ են մտնում նաև ընտանիքին ծառայելը և այն անշահախնդրությունը, որը դրսևորում եք՝ բախվելով գործարար աշխարհի ձեր մանրախնդիր գործընկերների հետ: Ձեր կյանքում միշտ էլ տեղ կա սխրանքի համար, և տեղ կա, որպեսզի դրսևորեք ասպետական հերոսություն ու նվիրվածություն այն գործին, որին ծառայում եք:

Եթե հայացք նետեք անցյալ դարերին, կտեսնեք, որ հատկապես աստվածային հատկանիշներն են գրավել գրողների, նկարիչների և արվեստի մյուս բնագավառների ներկայացուցիչների ուշադրությունը:

Ուստի այս օրով ես եկել եմ, որպեսզի ասեմ ձեզ, որ եկել է ձեր աստվածային հատկանիշների դրսևորման ժամանակը: Եվ ճիշտ այնպես, ինչպես այսօր ձեր փողոցներում ու ձեր հասարակության մեջ ընդհանուր առմամբ տիրապետող են անկույտության և անվերջ իշխանությունն ու թալանը, այդպես էլ ոչ շատ հեռու ապագայում տիրապետող կդառնան աստվածային կարգ ու կանոնը և ներդաշնակությունը: Եվ հասարակության անդամները մշտապես կորոնեն այն մարդկանց, որոնք օգնության ու խնամքի կարիք են զգում:

Ձեզ ֆանտաստիկական ու անիրականալի է թվում այն, ինչի մասին ես հիմա խոսում եմ: Սակայն այլևս դուք չեք կարողանա այլ ձևով ապրել: Եվ որքան ավելի շատ համառեք ոչ Աստծո Օրենքներով ապրելու ձեր ազատության վրա, այնքան ավելի ու ավելի ծանր կդարձնեք ձեր հետագա բախտը:

Հավատացե՛ք ինձ, որ ձեզ համար իմաստ չունի Աստծո գործերը ձգձգելը: Եվ եթե որոշում է ընդունվել ձեր ոլորտի թրթռանքները բարձրացնելու մասին, ապա այդ փոփոխությունն անպայման տեղի կունենա:

Ներկայումս ձեր շուրջը բառացիորեն ամենաթողություն է տիրում՝ այն չարամիտ էությունների խրախճանքը, որոնք չեն ուզում հաշտվել Աստծո Օրենքի հետ: Եվ նրանք ճամփից շեղում են Աստծո շատ ուսուրերի ու դուստրերի: Շատ երիտասարդներ հնազանդորեն ենթարկվում են ամենաանհաճո բնագոյների, որոնք նրանց մեջ արթնացնում են իրենց աուրաներն ու մարմինները ներթափանցած էակները, երբ նրանք գտնվում են թմրանյութերի և այն երաժշտության ազդեցության տակ, որը հիշեցնում է վայրենիների ու շամանների թմրեցնողություն:

Այդ ամենաթողության վերջն արդեն մոտենում է: Եվ մի քանի տարի հետո, երբ ձեզնից շատերը վերընթերցեն իմ այս թելադրության խոսքերը, իրենց տարօրինակ կրթվա այն, ինչի մասին հիմա խոսում եմ:

Քանզի Երկրի բնակչության այն մասը, որը կենթարկվի Աստծո Օրենքին, ստիպված կլինի իր վարվեցողության մեջ հետևելու ավելի բարձ նմուշների: Իսկ նրանք, ովքեր չեն ցանկանա հետևել Աստծո Օրենքին, իրենց երկրային գոյությունը կավարտեն աֆրիկական ջունգլիներում ինչ-որ տեղ՝ իրենց սիրած թմբուկների ու դափերի զարկերի տակ նստելով խարույկի մոտ և խժռելով իրենց բաժին միսը:

Ամեն ոք ստանում է այն, ինչին ձգտում է: Եվ այն կարման, որը դուք այժմ ստեղծում եք, ձեր կողմից պետք է ամբողջությամբ վերապրվի: Դրա համար էլ բարեգութ Աստված թույլ է տալիս, որ բեռնաթափեք այդ կարման՝ մարմին առնելով աֆրիկական ցեղերից որևէ մեկի գրկում:

Այն դեպքում, երբ մարդիկ իրենց սրտերում չեն ընդունում Աստծո Օրենքը և պատրաստ չեն իրենց կյանքում առաջնորդվելու Աստծո Օրենքով, կիրառելու համար գտնվում են դաստիարակչական նշանակությամբ բազմաթիվ միջոցներ ու եղանակներ:

Ճիշտ է, շատ դժվար է այն մարդուն, որն իր ներսում չի զգում Աստծուն և հենց ինքն է իր ներսում կտրել Բարձրագույն աշխարհների հետ կապող աստվածային թելը, բացատրել, որ իր կյանքում տեղի ունեցող ամեն ինչը հենց ինքն է իր ձեռքերով կերտել՝ իր արարքներով, իր մտքերով ու զգացմունքներով:

Սակայն մենք չափից դուրս շատ ուշադրություն ենք հատկացնում անաստված դրսևորումներին: Մեր խնդիրն է մեր շրջապատի կյանքը լցնել աստվածային կերպերով ու դրսևորումներով:

Ուստի և մենք գալիս ենք, որ ձեզ հիշեցնենք մի այլ աշխարհի գոյության մասին և նուրբ ոլորտի այն բազմաթիվ աստվածային կերպերի գոյության մասին, որոնք փնտրում են այնպիսի մարդկանց, որոնց միջոցով կկարողանային ինքնադրսևորվել ֆիզիկական աշխարհում:

Վստահ եմ, որ անպայման ձեր մեջ ուժ կգտնեք, որպեսզի դուրս պրծնեք ձեզ շրջապատող ճահճից: Ես հավատում եմ ձեզ... Եվ ես պատրաստ եմ օգնելու ձեզնից յուրաքանչյուրին, ով օգնության կամ խորհրդի համար կդիմի ինձ:

ԵՍ ԵՄ Լանդլոն

Տեր Շիվա

5 հունվարի, 2008 թ.

Ես եկել եմ, որպեսզի ավերեմ ձեր գիտակցության բոլոր դոգմաները

ԵՍ ԵՄ Շիվան...

Ես եկա...

Որքա՛ն երկար տևեց այս դեսպանորդի միջոցով ձեզ հետ հաղորդակցվելու մեր հնարավորության բացակայությունը...

Ես միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու, բայց, ցավոք, ձեր աշխարհն այնքան էլ չի պատվում ինձ: Նվիրյալներ կան, բայց նրանք բնակվում են իմ սիրելի Հնդկաստանի տարածքում:

Արևմուտքի մարդկանց մեջ շատ հազվադեպ կարելի է գտնել այնպիսիներին, որոնք նվիրված են ինձ և ընկալում են իմ էներգիաներն ու թրթիռները:

Ձեզ համար շատ դժվար է իմ էներգիաներին ու թրթիռներին դիմանալը: Որովհետև ես ամբողջովին անընդհատ շարժման մեջ եմ: Ես և՛ հուր եմ, և՛ ջուր, և՛ օդ: Անընդհատ շարժման մեջ եմ՝ պարի մեջ:

Երևի թե սկսենք մեր այսօրվա գրույցը: Ես մի փոքր շեղվեցի. նկարագրեցի իմ կեցության վիճակը: Եվ դուք հիմա ավելի լավ կընկալեք այն տեղեկատվությունը, որը պատրաստվում եմ մատուցել ձեզ:

Մենք երջանիկ ենք, որ մեզ հաջողվեց մեր դեսպանորդի միջոցով շարունակել մեր աշխատանքը Ռուսաստանում: Ես միշտ ասել եմ, որ այդ երկիրն ունի հսկայական և դեռևս բոլորովին չբացահայտված հոգևոր կարողություն:

Ռուսաստանը մարդու տալու հարսնացուի է նման: Եվ զանազան հոգևոր հոսանքներ ու ուսմունքներ փորձում են հաստատվել նրա տանը: Սակայն այն Ուսմունքը, որը պետք է մուտք գործի Ռուսաստան և այնտեղ բնակություն հաստատի, դեռ նոր է ձգում իր արմատները: Մերմը դեռ հողի մեջ է, և ծիլերը դեռ չեն երևում:

Սակայն ամենակարևոր գործընթացն արդեն տեղի է ունեցել: Մերմը ցանված է, հողը՝ պարարտացված ու ոռոգված:

Եվ հիմա մեզ բոլորիս մնում է միայն սպասել ծլարձակմանը. մնում է սպասել, թե երբ ռուսաստանաբնակների գիտակցության մեջ ծիլեր կարձակի նոր գիտակցությունը:

Մենք հսկայական նախապատրաստական աշխատանք տարանք: Մենք ավերեցինք հին կրոնների դոգմաները և հետ պահեցինք Ռուսաստանին այլազան կասկածելի հոգևոր փեսացուների հետ բռնի ամուսնացման վտանգից:

Ռուսաստանն, իր ողջ անկանխատեսելիությամբ հանդերձ, օժտված է բնածին ներգգայականությամբ ու մաքրությամբ: Այդ պատճառով մենք սպասում և ուշադրությամբ հետևում ենք այն բոլոր գործընթացներին, որոնք տեղի են ունենում այդ երկրում:

Նոր գիտակցությունը՝ նոր հոգևոր Ուսմունքը, կգա հանդարտ ու աննկատելի, և այն արդեն սկսել է զգացնել տալ:

Այն մի մարդու կամ կազմակերպության միջոցով աղմկոտ ու բարձրագույն մուտք չի գործի: Նոր հոգևոր Ուսմունքը մուտք կգործի այն մարդկանց սրտերի միջով, որոնք բնակվում են այդ մեծ երկրում:

Մի՛ կարծեք, թե դեռ ժամանակը չի հասել, և մի՛ կարծեք, թե ոչինչ տեղի չի ունենում: Բոլոր ամենակարևոր նախապատրաստական գործընթացներն արդեն տեղի են ունեցել և՛ նուրբ ոլորտում, և՛ ֆիզիկական ոլորտում:

Հարյուրավոր ու հազարավոր մարդիկ են մեր կողմից նախապատաստվել, որպեսզի իրենց սրտերի մեջ ընդունեն նոր գիտակցությունը, նոր մտածողությունն ու նոր Ուսմունքը:

Թասերը պատրաստ են: Եվ մենք ձգտում ենք ամեն մի նախապատրաստված թասի մեջ լցնելու այնքան էներգիա, որքան հնարավոր է տեղավորել:

Հենց որ մենք լցնենք այդ ոչ շատ մարդկանց թասերը, շատ ու շատ ուրիշներ կկարողանան շփվել մեր Ուսմունքի հետ և ըմպել մեր Լույսն անմիջականորեն՝ հանդիպելով ու հաղորդակցվելով մեզ հետ՝ Համբարձյալ Վեհապետներիս հետ:

Մենք կկարողանանք շատ մերձենալ Ռուսաստանի այն վայրերում, որոնք դեռևս ազատ են, մաքուր ու չբնակեցված: Ռուսաստանը հարուստ երկիր է: Եվ մենք կկարողանանք այդ երկիրը դարձնել տասը, հարյուր անգամ ավելի հարուստ, հենց որ Մեր Ուսմունքն արձագանք գտնի այդ երկրի բնակչության կրիտիկական տոկոսի գիտակցության մեջ: Ամբողջ երկիրը շուռ կգա ու հրաշքի կսպասի, այն հրաշքին, որի մասին բոլորը գիտեն ու սպասում են:

Եվ հոգևոր նորացման ու հոգևոր աճի այդ հրաշքն ի հայտ կգա այնպես արագորեն, ինչպես եղեգնի ծիլերն են վեր բարձրանում հողի տակից: Ձեզ հայտնի է, որ եղեգնը շատ երկար է քնում հողում՝ տարածելով իր արմատները, բայց երբ գալիս է ժամանակը, հզոր աճի թռիչք է կատարում՝ հաշված օրերի ընթացքում հասնելով մի քանի մետր բարձրության:

Ահա հենց այդպես էլ կկատարվի Ռուսաստանի հետ: Այն դեռևս քնած պահպանում է իր կուսական գիտակցությունը, մինչև որ պահը գա և աճ տան այն սերմերը, որոնք մենք ցանել ենք այս դեսպանորդի և շատ ուրիշների միջոցով:

Միակ Դավանանքն ու միակ Ուսմունքը, որը երբևէ գոյություն է ունեցել Երկիր մոլորակի վրա, այն Ուսմունքն է եղել, որ տվել ենք մենք՝ Համբարձյալ Վեհապետներս: Դավանանքն ու դրա ճյուղավորումները տարբեր անուններ են կրել, աղավաղվել է տրվածի իմաստը, բայց մենք մշտապես տվել ենք միևնույն Ուսմունքը:

Եկել է պահը, երբ բոլորդ պետք է վեր կանգնեք այն բոլոր կրոնական դոգմաներից ու շրջանակներից, որոնց հավատացել եք հարյուրավոր տարիներով: Դուք այնքան պետք է վեր հանեք ձեր գիտակցությունը, որ բոլոր շրջանակներն ու արգելապատնեշները դադարեն գոյություն ունենալուց ձեր գիտակցության մեջ: Պետք է բարձրանաք այն աստիճանի վրա, որի վրայից երևում է ոչ միայն աշխարհի բոլոր կրոնների միասնությունը, այլ նաև երկրագնդի վրա բնակվող բոլոր մարդկանց միասնությունը:

Միայն ձեր գիտակցության սահմանափակությունն է, որ խանգարում է ձեզ:

Ես եկա, որպեսզի ավերեմ ձեր գիտակցության մեջ եղած բոլոր դոգմաները և այն ամենը, ինչ հարյուրամյակների ընթացքում խանգարել է, որ տեսնեք Աստծո պատկերը, որը նկարված է ոչ թե եկեղեցիների պատերի վրա, այլ աստղային երկնքում, ամպերում:

Ես եկա և ավերեցի այն ամենը, ինչ հնարավոր էր միանգամից ավերել՝ չխախտելով ձեր կենսական ռիթմը:

Չափազանց շատ էներգիաների դուք դեռևս չեք կարող դիմանալ:

ԵՄ ԵՄ Շիվան... Ես այս օրով եղա ձեզ հետ...

Սպիտամա Չրադաշտ
6 հունվարի, 2008 թ.

Ուսմունք թրթռանքների բարձրացման մասին

ԵՄ ԵՄ Չրադաշտը՝ կրկին ձեզ այցի եկածը:

Այս օրով ես եկել եմ, որպեսզի խրատներ և նորացված մեկնություն տամ մեր Ուսմունքի այն դրույթների վերաբերյալ, որոնց մասին հավանաբար արդեն մոռացել եք:

Այսպիսով, ես եկել եմ, որ աշխարհի չափ հին մի Ուսմունք տամ ձեզ: Այն ես տվել եմ Երկրի վրա ունեցած իմ մարմնավորման ընթացքում*: Եվ այժմ էլ օգտվում եմ այս հնարավորությունից, որպեսզի գիտեիք տամ ձեր ուսյալ լսարանին: Ես հաշվի եմ առնում, որ այժմ իմ խոսքը կարող են կարդալ շատ ու շատ հոգիներ: Եվ դրանց մեջ կան այնպիսիները, որոնք ունակ են ընկալելու իմ ամեն մի խոսքը, բայց և կան այնպիսիները, որոնց իմ ուղերձն իրենց կյանքի հերթական զվարճանքը կլվան: Վերջիններս կանցնեն իմ խոսքերի կողքով այնպես, ինչպես անցել են երեկվա տոնական ազդագրի կողքով, որն իրենց կանչում էր հերթական զվարճալի միջոցառմանը մասնակցելու: Եվ հենց դրանով էլ հինավուրց Ուսմունքի իրենց ճանաչման գործը կավարտվի:

Ի՛նչ արած, մենք համբերությամբ կսպասենք, մինչև ձեր ճանաչողական ունակությունները բացվեն, որպեսզի կարողանաք ճշմարտությունը ստից և իրականությունը պատրանքից տարբերել:

Դուք այժմ գտնվում եք նյութականության ցածրագույն կետում: Ուստի շատ ու շատ ճշմարտություններ չեք կարողանում ընկալել զուտ այն պատճառով, որ ձեզ շրջապատող աշխարհի խտությունը չափազանց մեծ է: Ձեր աշխարհը թրթռում է այս տիեզերքի համար հնարավոր ամենացածր հաճախականությամբ: Եվ որպեսզի դուք հաղորդակցվեք այն գործընթացներին, որոնք տեղի են ունենում տիեզերքում, հարկ է, որ մի փոքր բարձրացնեք ձեր թրթռանքների հաճախականությունը: Պետք է ձեզ ասեմ, որ եթե շրջապատող աշխարհի թրթռանքները թեկուզ շատ աննշան բարձրանան, ապա ձեր ֆիզիկական մարմինները նման ծանրաբեռնվածությանը կարող են և չդիմանալ:

Ահա թե ինչու շատ դավանանքներում, եթե ոչ բոլորում, խոսվում է ֆիզիկական և ավելի նուրբ մարմինների մաքրման մասին, որոնց շարքին են պատկանում ձեր ինչպես ֆիզիկական, այնպես էլ եթերային, աստեղային և մենտալ մարմինները:

Ահա թե ինչու է ձեզ մշտապես հիշեցվում, որ պաս պահեք, մաքուր վիճակում պահեք ձեր մտքերն ու զգացմունքները:

Հենց որ Երկիրը ևս մի փոքր բարձրացնի իր թրթռանքները, ապա հազիվ թե իմ այս ուղերձն ընթերցողների մեջ գտնվեն մի քանի հարյուր մարդիկ, որ դիմանան մոլորակի այդ նոր թրթռանքներին:

Ուստի ես գալիս և տալիս եմ այս Ուսմունքն այն մասին, թե ինչպես պահպանեք ձեր մարմինները Երկրի մոլորակի թրթռանքների փոփոխման ընթացքում:

Նախ և առաջ հարկ է, որ անհանգստանաք ձեր ֆիզիկական մարմնի համար: Այն ամենաշատը կվնասվի, քանի որ նրա թրթռանքների հաճախականությունն ամենացածրն է: Ուստի անհրաժեշտ է, որ արդեն իսկ անցնեք թեթևացած սննդի:

Հարկավոր է սննդի մեջ բացառել մսամթերքի ցանկացած կիրառություն՝ ներառյալ նաև թռչնի միսն ու ձկնեղենը: Արդեն չեմ խոսում ալկոհոլից, նիկոտինից, թմրանյութերից և այլ վնասակար նյութերից հրաժարվելու մասին, որոնք նախաձեռնի համառությամբ շարունակում եք օգտագործել՝ ուշք չդարձնելով մեր իրազեկումներին ու նախազգուշացումներին:

Հարկ է, որ դուք ուշադրություն դարձնեք ձեզ շրջապատող ամեն ինչի՝ օդի, ջրի, սննդի, որակի վրա: Այն սնունդը, որը ձեզնից շատերն օգտագործում են, չի կարող սնունդ ծառայել ապագայի համար: Ձեր սնունդը պետք է բաղկացած լինի բուսական հիմքով ապուրներից, հյութերից,

հանքային ջրից և որոշ այլ բնական մթերքներից, ինչպիսիք են մեղրը, մրգերը, բանջարեղենը: Ամեն կերպ խուսափե՛ք քիմիական մշակում անցած սննդամթերքից, ներառյալ պահածոյացվածներից:

Սննդի մեջ մի՛ օգտագործեք այն մթերքները, որոնք գործարանային մշակում են անցել: Վնասակար ու չարորակ ուռուցքներ առաջացնող նյութերով հարստացվելուց բացի, դրանք հարստացվում են նաև բացասական էներգիայով, երբ պահվում են պահեստներում, արտադրամասերում և հատկապես խանութների դարակների վրա:

Եթե դուք հետևեք մեր խորհուրդներին, ապա շատ շուտով ձեր օգտագործած սննդի քանակությունը կհասնի իր նվազագույնին, և ինքներդ արդեն մեծ քաղաքներից հեռու գտնվող ձեր հողամասերում կաճեցնեք ձեզ և ձեր ընտանիքի համար անհրաժեշտ ամբողջ սննդամթերքը:

Ձեր ավելորդ սնունդ ընդունելը կապված է այն բանի հետ, որ ձեր էներգետիկական կենտրոնները՝ ձեր չակրաները, աղտոտված են: Այդ պատճառով չեք կարողանում ձեր չակրաններով ստանալ լիարժեք էներգետիկական սնունդ:

Իրականում ձեր սննդի հիմնական էներգետիկական բաղադրիչն Աստծո Աշխարհից ձեզ է հասնում ձեր չակրաների համակարգի միջոցով:

Ձեր ֆիզիկական մարմնի կենսապահովմանն ընդամենն անհրաժեշտ է հանքային նյութերի, սպիտակուցների, վիտամինների, ճարպերի, ածխաջրատների մի համախումբ, որը բավարար չափով պարունակվում է բուսական ծագմամբ սննդի մեջ. այն անցված պետք է լինի էկոլոգիապես մաքուր շրջաններում՝ առանց թունաքիմիկատների կիրառության:

Դուք սննդի այն քանակի կարիքը չունեք, որքան որ սովոր եք ընդունել: Ձեր մարմինները պետք է առավելագույնս թեթևացվեն, որպեսզի թրթռան ավելի բարձր հաճախականությամբ:

Այլապես կհիվանդանաք և վատ կզգաք ձեզ, հետո նոր վերջին հաշվով կհետևեք իմ խորհուրդներին. բայց այդ դեպքում շատ ժամանակ կկորցնեք, իսկ ես հենց հիմա՝ եմ առաջարկում արդեն նախապատրաստվել:

Ձեր նուրբ մարմինների մաքրմանը վերաբերող Ուսմունք մեր ուղերձներով ձեզ նախկինում արդեն տրվել է, և ես չեմ ուզում ժամանակ վատնել արդեն անցածը կրկնելու վրա:

Հատկապես խորհուրդ եմ տալիս վերադառնալ Վեհապետ Կույթումիի թելադրություններին, որոնցում նա ակնառու կերպով բացատրում է, թե ինչպես հրաժարվեք ձեր ցածրակարգ մտքերից ու զգացմունքներից:

Այն բանից հետո, երբ կսովորեք նոր էներգետիկական տիրույթում կառավարել ձեր մարմինների փոխանակային գործընթացները, ձեր մարմինները ձեռք կբերեն հատուկ նրբազգացություն: Եվ անմիջապես դրան կհետևի մի փուլ, երբ ձեր հետագա էվոլյուցիայի համար ձեր ֆիզիկական մարմիններն այլևս պետք չեն գա. ճիշտ այնպես, ինչպես մենք ենք շարունակում մեր էվոլյուցիան՝ չունենալով ֆիզիկական մարմին:

Պետք է ձեզ ասեմ, որ ճիշտ սննդակարգն ու ճիշտ կենսակերպը, իհարկե, նշանակալից դեր են խաղում ձեր զարգացման գործում, սակայն առաջնայինը ձեր գիտակցության ընդլայնումն է՝ ավելի տարողունակ բաների ընկալումն ու սովորական շրջանակներից և դոգմաներից վեր կանգնելը:

Մենք՝ Համբարձյալ Վեհապետներս, մշտապես անհրաժեշտ պայման ենք համարել այն, որ վեր մղվողն իր Ուղու որոշակի փուլում անպայման պետք է իր ողջ կյանքը նվիրաբերի Երկրի կենսահոսքերին ծառայելուն՝ դրանով իսկ կանգնելով մեր երկրային Հիերարխիայի աստիճանի վրա: Ձեռնադրումների Ուղու այդ Ուսմունքն իր լիակատար ծավալով նույնպես տրվել է ձեզ, և ես այժմ դրա վրա մանրամասն կանգ չեմ առնի:

Ինչպես տեսնում եք, ձեր առջև աշխատանքների բավական լայն ճակատ կա, որպեսզի աշխատեք ինչպես ինքներդ ձեզ ու ձեր սեփական գիտակցության վրա, այնպես էլ ձեր մերձավորներին օգնություն ցուցաբերելու բնագավառում:

Ուստի մի՛ տրտնջացեք, թե զբաղմունք չունեք և որ չգիտեք, թե ինչ անեք:

Պարզապես վերընթերցեք իմ և մյուս Վեհապետների թելադրությունները, որոնք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով. վերընթերցեք այն դիտանկյունից, թե Վեհապետներն ի՞նչն են խորհուրդ տալիս, որ կիրառեք ձեր կյանքում: Թուղթ ու մատիտ վերցրեք և գրանցեք բոլոր խորհուրդներն ու հանձնարարականները:

Հետո գումարման նշան դրեք բոլոր այն կետերի առջև, որոնք արդեն կատարել եք կամ արդեն կատարում եք:

Ես վստահ եմ, որ այդ պարզ գործողությունից հետո դուք ձեզ համար ճիշտ եզրահանգումներ կանեք:

Ես այս օրով եկա խրատներ տալու համար:

ԵՍ ԵՄ Չրադաշտոր

Ուսմունք կարմայից ազատվելու մասին

ԵՍ ԵՄ Կուրթումին՝ ձեր հոգիներին խրատելու համար ձեզ այցի եկածը:

Ես այս օրով եկել եմ, որպեսզի ոչ մեծ մի Ուսմունք տամ, որը, հուսով եմ, ձեզ համար օգտակար կլինի, և դուք շատ բաներ ավելի լավ կհասկանաք:

Ես անարատ պատկերացում եմ պահպանում ձեզնից յուրաքանչյուրի մասին: Այդպես ինձ համար ավելի հեշտ է ձեզ հետ զրուցելն ու դիտելը, թե ձեր նկատմամբ իմ վերաբերմունքն ինչպես է ազդում ձեր կյանքերի վրա:

Դուք երբևէ չե՞ք նկատել, թե ինչ ազդեցություն եք թողնում ուրիշների՝ ծանոթների ու անծանոթների, ձեր ընկերների, մերձավորների ու երեխաների վրա: Երբևէ չի՞ վիճակվել կողքից նայել ինքներդ ձեզ:

Ահա, ներկայացել եք ոգու ոչ այնքան լավ վիճակով: Լի եք կասկածամտությամբ ու հակակրանքով: Ձեզ թվում է, թե բոլորը ձեզ խաբում են և վատ վերաբերվում ձեզ: Ծիշտ է, չէ՞, որ նման վիճակներ շատ եք ունեցել ձեր կյանքում: Իսկ հիմա եկեք ուշադրությամբ վերլուծենք, թե ձեր այդ վիճակն ինչպե՞ս է անդրադառնում ձեր ամբողջ շրջապատի վրա:

Այսպիսով, դուք գալիս եք աշխատանքի և սկսում ձեր վիճակը փոխանցել շրջապատի մարդկանց: Դուք նրանց նկատմամբ այնքան էլ լավ չեք տրամադրված: Աստիճանաբար մարդիկ ակամա կարդում են ձեր թրթռումները և դեպի ձեզ են շուռ գալիս հենց այն կողմով, որով իրենց դուք տեսնում եք: Հասկանում եք, թե ինչի մասին եմ խոսում: Նախապես ձեր մեջ առկա է անորակ էներգիա, որը ձեր ներքին վիճակը դարձնում է անորակ: Ձեր մենտալ և զգացական մարմինները սկսում են թրթռալ հենց այն հաճախականությամբ, որը համապատասխանում է տվյալ պահին ձեր մեջ ակտիվացած էներգիային:

Արդեն գիտեք, որ ձեր էներգետիկական մարմինները պարունակում են երբևէ ձեր կատարած բոլոր արարքների գրառումները: Եվ երբ պահը հասունանում է, սկսում է ակտիվանալ այս կամ այն կարմայական գրառումը: Այդ եղանակով դուք հայտնվում եք գիտակցության այն վիճակում, որը դուք ինքներդ եք կերտել անցյալի ձեր այս կամ այն սխալ նախընտրանքով:

Այժմ գալիս է այն պահը, երբ դուք կրկին բախվում եք այն ցածրորակ էներգիային, որը դուք ինքներդ եք ստեղծել, և որն ապրում է ձեր էներգետիկական մարմիններում: Եվ այժմ ձեզնից է կախված՝ կկարողանա՞ք արդյոք մշակել այդ էներգիան, հավասարակշռել ու չեզոքացնել այն, թե՞ էլ ավելի կբարդացնեք ձեր կարմայական վիճակը:

Այն դեպքում, երբ զինված եք կարմայի Օրենքի գործողության մասին գիտելիքով, կկարողանաք սովորել որսալ բոլոր այն ցածրորակ վիճակները, որոնք սկսում են ի հայտ գալ ձեր ներսում: Դուք աստիճանաբար կտիրապետեք դիտելու արվեստին, որպեսզի տեսնեք, թե ինչպես է այս կամ այն անորակ վիճակը ծագում, ակտիվանում և ներթափանցում ձեր մենտալ կամ զգացական մարմնի մեջ: Եթե գիտեք ձեր թշնամուն, ապա կարող եք և նրան հաղթել:

Եթե գիտեք ձեր հիվանդությունը, ապա բավական է, որ ժամանակին դեղ ընդունեք, և ցավի նոպան կկասեցվի:

Ձեր նուրբ մարմիններն էլ են հիվանդ. նրանք վերքեր են ձեռք բերել անցյալի ձեր սխալ գործողությունների հետևանքով: Եվ ձեզ պարզապես պետք է հակաթույն կամ դեղ գտնել ձեր գիտակցության անորակ վիճակների առաջն առնելու համար:

Դուք պետք է սովորեք որսալ այն պահը, երբ ձեր գիտակցության անորակ վիճակը դեռ նոր է սկսում տիրել ձեզ: Դուք պետք է զգոն լինեք: Հատկապես հենց այդ պահին է հնարավոր ձեզնից դեն նետել անցյալի բացասական էներգիաների ցանկացած դրսևորումը:

Եթե փորձեք կամքի ուժով կամ հոգեբանական ինչ-որ հնարքների օգնությամբ ազատվել ձեր ցածրորակ վիճակից, ապա հազիվ թե որևէ օգուտ ստանաք: Ձեզ անհրաժեշտ է հասկանալ, որ այդ վիճակին ինքներդ եք ծնունդ տվել ինչ-որ ժամանակ: Եվ այժմ ուզում եք ձերբազատվել այդ անկատարությունից: Ուղղակի բա՛ց թողեք այն:

Եթե հաջողվի հայտնվել գիտակցության ճիշտ վիճակում և ճիշտ ուղղություն տալ ձեր ներսի Աստծո էներգիայի հոսքին, ապա ունակ կդառնաք չեզոքացնելու անցյալի բոլոր բացասական կարմայական շերտանստվածքները:

Ձեր բոլոր ներքին անկատարություններն ուղղելու մեխանիզմները գտնվում են հենց ձեր ներսում: Ձեզ անհրաժեշտ է միայն ընդունել այդ անկատարությունների առկայությունը ձեր ներսում և կամենալ, որ ձերբազատվեք դրանցից:

Ամեն ինչ կախված է ձեր կարմայի ծանրությունից՝ այն բանից, թե որքա՞ն է ուժեղ ձեր ներսում նստած բացասական էներգիան: Եվ եթե գործ ունեք ընդամենը կարմայական ոչ մեծ խնդրի հետ, ապա բավական է, որ մի անգամ կենտրոնացնեք ձեր ուշադրությունն այդ խնդրի վրա, և այն կքանա:

Իսկ եթե կարմայական խնդիրը շատ մեծ է՝ այն աստիճանի, որ հենց դրա բեռնաթափման համար եք մարմնավորվել, ապա ձեր փորձը հարկ կլինի, որ կրկնեք բազմակի անգամ, երբեմն՝ մի քանի տարի:

Չկա այնպիսի բացասական հատկանիշ կամ թերություն, որից Աստծո օգնությամբ հնարավոր չլինի ազատվել:

Աստված միշտ ձեզ հնարավորություն է տալիս, որ ինքներդ ազատվեք ձեր ամեն մի թերությունից:

Եվ այնժամ, երբ պարզորոշ կզգաք, որ իմ տված հանձնարարականներն անխափան գործում են, կկարողանաք աստիճանաբար ազատվել ձեր բոլոր անկատարություններից:

Կգա օրը, և դուք այլևս չեք նեղանա, եթե նախկինում ձեզ բնորոշ էր նեղացկոտությունը:

Կգա օրը, և դուք այլևս չեք նախանձի, եթե նախկինում ձեզ բնորոշ էր նախանձությունը:

Կգա օրը, և դուք այլևս չեք խանդի, եթե նախկինում ձեզ բնորոշ էր խանդոտությունը:

Նույն կերպ կարելի է ձերբազատվել և ընկճվածությունից, դյուրագրգիռությունից, բռնկունությունից, զայրացկոտությունից և շատ այլ անաստված հատկանիշներից:

Եվ այն դեպքում, երբ միայն Աստծո հատկանիշներ կդրսևորեք, ողջ աշխարհը դեպի ձեզ շուռ կգա իր աստվածային կողմով:

Ամեն ոք պետք է զբաղվի միայն ինքն իրենով՝ միայն իր ներքին վիճակով, և ձեր շուրջն աշխարհն ինքնին կբարեփոխվի:

Ես մի փոքր չափն անցա իմ այս Ուսմունքը տալու ընթացքում: Իրականում ձեր աշխարհում բոլորդ իրար հետ սերտ կապի մեջ եք: Եվ կան կարմայական շատ ուժեղ կապեր, որոնք ձեզ կապում են ձեր ընտանիքի, ձեր երկրի և ամբողջ մոլորակի հետ: Այդ պատճառով ձեր կարմայական կուտակումներից ու շերտանստվածներից ազատվելու գործին զուգընթաց պետք է մտահոգվեք նաև, որպեսզի մյուս մարդկանց ևս հայտնի դառնա և՛ կարմայի Օրենքը, և՛ այն, թե ինչպես բեռնաթափեն իրենց կարման:

Այն բանից հետո, երբ կարմայի Օրենքի մասին գիտելիքն ու կարմայի բեռնաթափման մեթոդների մասին գիտելիքը կներթափանցեն Երկրի բնակչության որոշակի կրիտիկական տոկոսի գիտակցության մեջ, մոլորակի իրավիճակը կսկսի դեպի լավը փոխվել հենց ձեր աչքի առաջ:

Ձեր տգիտությունն ու ծուլությունն են հաճախ ձեզ խանգարում: Բոլոր մեխանիզմներն ու գիտելիքները վաղուց տրված են ձեզ և՛ այս դեսպանորդի միջոցով տրված թելադրություններով, և՛ ուրիշ մարդկանց միջոցով, որոնք տարբեր ժամանակներում որպես դեսպանորդ են ծառայել մեզ համար:

Այժմ եկավ մեր բաժանման պահը: Ծա՛տ ափսոս...

Հույս ունեմ, որ ապագայում նոր հանդիպումներ կունենանք:

ԵՄ ԵՄ Կույթումին՝ ձեր հոգիների խրատատուն

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ

8 հունվարի, 2008 թ.

Պատվիրաններ

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ, ԵՄ ԵՄ, որ այրվող ու չապավող մորենու միջից խոսեցի Մովսեսի հետ:

ԵՄ ԵՄ, որ խոսում եմ այժմ ձեզ համար, որ մարմնավորված եք Երկրի վրա:

ԵՄ ԵՄ եկել, որպեսզի Կտակ տամ և նորոգեմ այն Կտակը, որը տրվել է Մովսեսի ժամանակներում:

Դուք գիտեք, որ մշտապես եղել են մարդիկ, ովքեր հետևել են ճշմարիտ Հավատին, և նրանց միջոցով խոսել է Ինքը՝ Աստված: Աստված խոսում է այնժամ, երբ Էվոյուցիան ճշգրտելու անհրաժեշտություն կա. այնժամ, երբ ոչ խելամիտ զավակներն անհաղորդ են մնում վերին ցուցումներին:

Ահա և այժմ Ես եկել եմ, որպեսզի ձեզ հասկացնեմ, որ այլևս չեք կարողանա չարաշահել ձեր աստվածային հուրը, բոցը, էներգիան, որը ձեր սրտերի մեջ է գտնվում:

Որքա՞ն կարելի է սպասել...

Ո՛չ, այլևս սպասելու ժամանակը սպառվել է, և այժմ բոլորդ պետք է վերանայեք ձեր կյանքի նկատմամբ ձեր հայացքները և ձեր կյանքում գտնեք այն կարևորը, հանուն որի դուք գոյություն ունեք:

Դադարե՛ք օրվա ունայն փայլերով գերվելուց: Ես եկել եմ, որպեսզի ձեզ հետ լրջորեն խոսեմ:

ԵՄ ԵՄ հուրն ամենակործան, և ահա Ես ասում եմ ձեզ, որ այսուհետև ձեր յուրաքանչյուր գործողությունը, որը կկատարեք ո՛չ ըստ Աստծո Օրենքի, տասնապատիկ ուժեղացված կվերադառնա ձեզ:

Այսպիսով, ձեր անաստվածահաճո արարքներով պայմանավորված կարման այսօրվանից կմեծացվի տասնապատիկ անգամ:

Ես հիմա ձեզ կհիշեցնեմ, թե ինչպես պետք է ձեզ պահեք:

Ձեր կյանքում առաջնահերթ նշանակություն պետք է տաք Աստծուն և նրա Օրենքը պահելուն:

Ձեր կյանքում չպետք է ունենաք կուռքեր, որոնց խոնարհվում եք ավելի շատ, քան Աստծուն:

Ուրիշների հետ չպետք է վարվեք այնպես, ինչպես չէիք ուզենա, որ վարվեին ձեզ հետ:

Դուք չպետք է կատարեք այնպիսի արարքներ, որոնք հակառակ են ուղղված համայն տիեզերքում գործող Աստծո Օրենքին:

Եվ առաջին, ամենակարևոր պատվիրանը Մերն է մերձավորների նկատմամբ, ոչ միայն ձեզ մոտիկ մարդկանց, այլև համայն Արարվածի նկատմամբ. Մեր այն ամենի նկատմամբ, ինչը ստեղծված է Աստծո կողմից՝ քարի, բույսի, ամեն գազանի ու կենդանու նկատմամբ: Դուք չպետք է վնաս պատճառեք բնությանը: Դուք չպետք է վնաս պատճառեք Երկիր մոլորակին:

Դուք պետք է Մեր տածեք ամբողջ Արարչության նկատմամբ:

Եվ առավել ևս ձեր սրտերում պետք է պահպանեք բարոյական Օրենքը՝ թույլ չտալ ցանկասիրություն, չարը չկամենալ ձեր մերձավորին, սուտ չխոսել, չնախանձել, լինել ազնիվ ու արդարամիտ:

Իսկ այնպիսի մեղքն, ինչպիսին մարդու կամ կենդանու սպանությունն է, ես արգելում եմ խստագույնս: Որևէ կենդանու չպետք է սպանել ոչ մի պատրվակով:

Հիշե՛ք կարմայի մասին, որն այսօրվա իմ նախագգուշացումից հետո մեծանալու է տասնապատիկ անգամ:

Բայց և ձեր բարի գործերով պայմանավորված կարման է մեծանալու տասնապատիկ անգամ:

Ես եկա, որպեսզի ձեզ հիշեցնեմ այն Կտակի մասին, որն Իմ կողմից տրվել է Մովսեսին և անցյալի բոլոր մարգարեներին:

Ես այսօր ասում եմ ձեզ Իմ Խոսքը, որպեսզի դուք կարողանաք ավելի լավ հասկանալ այն, ինչը գրվել և արտագրվել է գրքում և աղավաղվել արտագրողների կողմից:

Այժմ նոր ժամանակներ են, և Աստծո ու ողջ Արարչության առջև ունեցած ձեր պարտավորություններն աճում են բազմակիորեն:

Մի՛ մոռացեք Իմ ասածները: Պահե՛ք այս ուղերձը երևացող տեղում և վերընթերցե՛ք այն:

Դուք պետք է անգիր հիշեք Իմ Պատվիրանները:

Այլևս չի՛ կարելի զբաղվել անաստվածահաճո գործերով: Իմ համբերությունը հասել է իր սահմանին:

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ: ՕՄ

Հաութամա Բուդդա

9 հունվարի, 2008 թ.

Ուսմունք զանազանելու կարողության մասին

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Այսօրվա իմ այցի նպատակը ոչ մեծ մի Ուսմունք տալն է: Եվ, ինչպես միշտ, ինքներդ պետք է որոշեք, թե ինչպես տնօրինեք այն, ինչը ստացել եք ոգեղեն աշխարհից:

Ընտրություն կատարելը միշտ ձեզ է մնում, սակայն դա անելու ժամանակը սահմանափակ է:

Այլ կերպ ասած՝ դուք կարող եք մատերիայում փորձարարություն անել և ցանկացած ուղղությամբ ձեռնարկել ցանկացած քայլ, բայց միայն այնքան ժամանակ, քանի դեռ կարմայական հնարավորությունը չի սպառել իրեն:

Իսկ այժմ անցնեմ այն նյութին, որի համար եկել եմ: Այսպե՛ս: Ամեն դեպքում, վաղ թե ուշ դուք սկսում եք առաջ քաշել ձեր գոյության իմաստի հարցը: Եվ այնժամ, երբ մատերիական աշխարհի ձեր փորձերը ձեր գիտակցության համար այլևս հետաքրքրություն չեն ներկայացնում, դուք մղվում եք դեպի արդեն հայտնի դարձածի սահմաններից այն կողմ և սկսում ձեր փորձերն անհայտի տիրույթում:

Ձեր ֆիզիկական աշխարհում շատ հնարավորություններ կան փորձարարության համար, այնուհանդերձ շատ շատերը սկսում են իրենց փորձերը նուրբ աշխարհի հետ: Իսկ երբ դուք հետաքրքրություն եք ցուցաբերում նուրբ աշխարհի նկատմամբ, այդ աշխարհն այս կամ այն չափով բացվում է ձեր առաջ:

Սակայն հենց այստեղ է, որ ձեր ուղու վրա զանազան վտանգներ են ծագում: Բանն այն է, որ ինչպես ֆիզիկական աշխարհում, այնպես էլ նուրբ աշխարհում ամեն ինչ ենթարկվում է համապատասխանության օրենքին: Եվ երբ դուք ձգտում եք կապ ստեղծել նուրբ աշխարհի հետ, բայց ձեր շարժառիթը մաքուր չէ, ապա ամենից առաջ կապի մեջ եք մտնում նուրբ աշխարհի, ավելի ճիշտ, աստեղային ոլորտի այն ներկայացուցիչների հետ, որոնք այնտեղ են հայտնվել զուտ այն պատճառով, որ չեն կամենում ենթարկվել այս տիեզերքում գործող որոշակի Օրենքի:

Աստեղային ոլորտն իր թրթռանքներով այնքան էլ չի տարբերվում ձեր ֆիզիկական ոլորտից, և աստեղային ոլորտի թանձր շերտերը բնակեցված են այն էակներով, որոնք չեն ուզում ենթարկվել Աստծո Օրենքին և չեն ուզում ընթանալ էվոլյուցիոն զարգացման ուղով:

Ուստի, կապի մեջ մտնելով նման էակների հետ, դուք առանձնապես հոգևոր զարգացում չեք ունենում, այլ ավելի շուտ հակառակը, կարող եք ենթարկվել այն էակների ազդեցությանը, որոնք ձեր կենսահոսքը կօգտագործեն իրենց նպատակների համար:

Հոգեկան խանգարում ունեցող մարդկանց մեծ մասը դիվահար են եղել նման էակների կողմից: Նրանցից որոշներին թվում է, թե իրենք կապի մեջ են Համբարձյալ Վեհապետների հետ. նրանք կարող են նույնիսկ ուղերձներ ընդունել և համբարձյալ վեհապետներ տեսնել իրենց տեսիլքներում: Սակայն իրականում դա միայն հաղորդակցություն է աստեղային ոլորտի և այդ ոլորտում բնակվող էակների հետ:

Որպեսզի գերծ մնաք նման անհաջողություններից, պետք է լրջորեն մտորեք այն մասին, թե ինչի՞ համար է ձեզ պետք կապի մեջ մտնել նուրբ աշխարհի հետ: Եվ եթե ձեր ցանկությունն այն է միայն, որ նուրբ ոլորտում գտնվող որևէ մեկի հետ շփան մեջ մտնեք և նրանից ուղերձ ստանաք, ապա դատապարտված եք այն բանին, որ կապի մեջ մտնեք այնպիսի էակների հետ, որոնք վառվում են Երկրի վրա մարմնավորված որևէ մեկի հետ կապի մեջ մտնելու ցանկությամբ:

Այդ պատճառով է, որ մենք բազում անգամ ձեզ ուսուցանել ենք, որ զգույշ լինեք նուրբ աշխարհի հետ կապի մեջ մտնելիս: Ձեր մտադրությունները պետք է բացարձակ մաքուր լինեն, ձեր ստորին չորս մարմինները պետք է օժտված լինեն որոշակի մաքրությամբ, և դուք միայն մե՛կ բան պետք է ցանկանաք՝ Սպասավորություն մարդկությանը, համայն գոյին:

Այն դեպքում երբ ձեր շարժառիթը մաքուր է և ձեր ցանկությունները՝ մաքրագործված, ապա վաղ թե ուշ կապի մեջ կմտնեք Համբարձյալ Վեհապետների հետ: Սակայն թող որ դա, որքան հնարավոր է, ուշ տեղի ունենա, քանզի նախքան ձեզնից դուրս գտնվող որևէ մեկի հետ կապի մեջ մտնելը ձեզ անհրաժեշտ է կապի մեջ մտնել ձեր ներքին Ուսուցչի՝ ձեր Բարձր Ես-ի հետ:

Օրինակ՝ նախկինում՝ Երկրի վրա իմ մարմնավորման ժամանակներում, ոչ ոք չէր համարձակվում կապի մեջ մտնել նուրբ աշխարհի հետ, եթե իր կողքին չգար մարմնավորված Ուսուցչի ներկայությունը: Ձգտում ունեցողներից շատերն, աշխարհեաշխարհ թափառելով, փնտրում էին այն Ուսուցչին, ով հանձն կառնեք իրենց ուսուցանելու գործը: Եվ այդ ձգտողները պատրաստ էին լինում կատարելու ամենածանր աշխատանքներն ու տարիներով ծառայելու իրենց Ուսուցչին այն հույսով, որ կգա այն պահը, երբ Ուսուցիչն ուշադրություն կդարձնի իրենց վրա և կտա թանկագին ուսմունքը:

Ձեր ժամանակներում անհամեմատ ավելի դժվար է, քանի որ ողջ տեղեկատվական դաշտը զբաղեցնում են զանազան ուսմունքներ, աղանդներ և խմբակցություններ, որոնք ինչ-ինչ բաներ են սովորեցնում և իրենց հետևից ինչ-որ տեղ տանում հետևորդներին:

Ուստի ներկայումս ձեզնից պահանջվում է կրկնակի, եռակի զգուշավորություն: Եվ նախքան ձեր անոթն ու գիտակցությունը գիտելիքների ստացմանն ու էներգիաներին հատկացնելը, որոնք ձեր աշխարհում ձեզ են հրամցնում ոչ այնքան ազնվագարմ մարդիկ, դուք պետք է մանրագին կերպով ամեն ինչ կշռադատեք և նոր միայն զգուշորեն որոշում ընդունեք հասկանալու այն ուսմունքի իմաստը, որը մատուցվում է ձեզ:

Ճշմարտանման արդարացմամբ, որ ժամանակը փոխվել է, ամեն անկյունում ձեզ համոզում են, որ Համբարձյալ Վեհապետների կողմից տրված Ուսմունքն արդեն հնացել է, որ իբր գուրու-սան հարաբերություններն ու Ձեռնադրման Ուղին այժմ բավարար արդյունավետ չեն: Եվ այն Ուսմունքի փոխարեն, որը տասնյակ ու հարյուր հազարավոր տարիների ընթացքում մենք տվել ենք մարդկությանը, նրանք ձեզ են հրամցնում գեղեցիկ ու ժամանակակից փաթեթավորմամբ կասկածելի ուսմունքներ:

Դե ի՞նչ, դուք հնարավորություն ունեք ընտրելու: Եվ վերջին հաշվով ձեզնից յուրաքանչյուրը ստանում է այն, ինչին ձգտում է:

Մեր գործն է շարունակել Ուսմունք տալ նրանց համար, ովքեր ցանկանում են ընթանալ Էվոյուցիոն զարգացման այն ուղով, որը նախասկզբնապես պլանավորվել է Երկիր մոլորակի մարդկության համար: Մեր ուղղությունը մենք ճշգրտում ենք Մեծ Կենտրոնական Արևից: Եվ ոչ մի լուրջ որոշում մենք չենք կարող ընդունել՝ առանց այն համաձայնեցնելու Մեծ Կենտրոնական Արևում, որին ենթարկվում է մեր Հիերարխիան:

Իսկ ու՞մ է ենթարկվում այն էակը, որն ուսմունք է տալիս ձեր ու ձեր ծանոթների միջոցով: Մտորե՛ք այս մասին, նախքան կշտապեք ձեր գիտակցությունը ծանրաբեռնել անպետք ուղերձների և նուրբ աշխարհից ստացված հաղորդումների ստվար զանգվածով:

Հիմնվեք զանազանել կարողանալու այն Ուսմունքի վրա, որը մենք տալիս ենք մեր ուղերձներում: Եվ յոթ անգամ չափե՛ք, մինչև կկտրեք ձեր կապը Մեծ Մպիտակ եղբայրության հետ ու կմղվեք դեպի այն էակների ուղերձները, որոնք իրենց կոչում են կամ մեր, կամ բոլորովին անծանոթ անուններով:

Ես այսօր եկա, որպեսզի ձեզ Ուսմունք տամ զանազանել կարողանալու մասին: Հույս ունեմ, որ մեր ուղերձները կարդացող շատերի համար իմ այս խրատը կլինի ճիշտ ժամանակին տրված ու օգտակար:

Ինչպես միշտ, ես ավստասանքով եմ բաժանվում ձեզնից:

ԵՍ ԵՄ Հատրթամա Բուդդան

Վեհապետ Էլ Մորիա
10 հունվարի, 2008 թ.

Ես եկել եմ տեղեկացնելու ձեզ մեր աշխատանքի հերթական փուլի ավարտի և հաջորդ փուլի սկզբի մասին

ԵՍ ԵՄ Էլ Մորիան՝ այս օրով ձեզ այցի եկածը: Եկել եմ, որ ազդարարեմ Լույսի ուժերի ևս մի հաղթանակի մասին... Ես եկել եմ ձեզ տեղեկացնելու, որ մեր դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների ձմեռային շրջանը մոտեցավ իր ավարտին:

Մեզ հաջողվեց անհավատալի մեծ քանակությամբ Լույս արտազատել թելադրությունների այս շրջանի ընթացքում:

Մեր դեսպանորդի Աշրամի տարածքը բառացիորեն պարուրված է Լույսով:

Այդ վայրը, որում մենք տեղադրեցինք մեր Լույսի կիզակետը, իր ազդեցությունն է թողնում շրջակա հարյուրավոր կիլոմետրերի վրա՝ հասնելով նույնիսկ հարևան մարզերի սահմաններին և Ղազախստանին:

Իրականացավ... Ուրախ եմ ես...

Եվ որպեսզի ինքներդ ձեզ չհանգստացնեք ու չբավարարվեք ձեռք բերվածով, ես եկել եմ, որպեսզի ձեզ ուղղորդեմ դեպի Եղբայրության ընթացիկ գործերի կատարումը:

Մենք շատ բանի հասանք, բայց դա ընդամենը մեր ուղու սկիզբն է: Մենք մտադիր ենք ամրագրել մեր ներկայությունը Ռուսաստանի հողում, և նաև մտադիր ենք ֆիզիկական ոլորտում շարունակել մեր աշխատանքը, որն իարականացնում ենք մեր դեսպանորդի միջոցով: Թեև առայժմ ամեն ինչ չէ, որ ստացվում է, սակայն մենք մտադրություն չունենք կանգնել ու շունչ առնել մեր ուղու վրա:

Ձեզնից ամեն մեկին, ով ուզում է մեզ օգնել ու աջակցել, մենք ասում ենք՝ բարի գալուստ: Անձամբ ես պատրաստ եմ քննարկելու ձեր բոլոր գործնական առաջարկները և ձեզ հետ միասին մշակելու գործողությունների պլան:

Մոտակա ժամանակներում մենք ձեզ կտեղեկացնենք, թե ինչ է պլանավորվում:

Իսկ այժմ ես մտադիր եմ ձեզ տրամադրել այն բանին, որ մոտակա ժամանակներում ձեզ կվիճակվի լրջորեն աշխատել Եղբայրության համար: Իհարկե, ես հաշվի եմ առնում, որ ձեզնից բոլորը չէ, որ պատրաստ են: Սակայն ես գիտեմ ձեր զարգացման մակարդակը և գիտեմ նաև, որ ձեր մեջ կան այնպիսիները, որոնք պատրաստ են լրացուցիչ պարտավորություններ վերցնելու իրենց վրա:

Ես ձեզնից չեմ պահանջում, որ դուք ամեն ինչ թողնեք և գլխապատառ նետվեք ինձ ծառայելու:

Պահանջվում է հավասարակշիռ, պլանավորված մոտեցում: Պետք չէ անհարկի հերոսություն ցուցաբերել այնտեղ, որտեղ հնարավոր է համաչափ աշխատանքով հասնել անհամեմատ ավելի մեծ արդյունքների:

Իսկ երբ ժամկետները կսեղմեն, ձեզնից կպահանջվի ձեր բոլոր ուժերի լարումն ու բոլոր հնարավորությունների ներդրումը:

Ուստի մենք մշտապես պետք է գտնվենք պատրաստ վիճակում, որպեսզի ի կատար ածվեն մեր առաջադրած խնդիրները:

Ձեզնից շատերը պետք է հաղթահարեն իրենց բնորոշ ծուլությունը: Ես գիտեմ, որ ռուսների հատկանիշներից մեկը հենց ծուլությունն է: Այդ պատճառով հատուկ շեշտադրում եմ, որ ինձ հետ եղողը պետք է ձերբազատվի այդ հատկանիշից և վերջնական հաղթանակ տանի դրա նկատմամբ:

Արմատախիլ պետք է արվեն նաև ձեր այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են անվճռականությունը, կասկածամտությունն ու անկայունությունը: Այդ ամենը պետք է մի կողմ դրվի:

Մե՛ծ գործեր են մեզ սպասվում: Տեսեք, որ չմնաք վառարանի վրա քնած, որ մարմնավորման ավարտին ամոթ չգգաք ձեր անգործության, ծուլության և մեր կանչին չարձագանքելու համար:

Մենք ձեզ կանչում ենք մեծ Սպասավորության: Եվ ամենադժվար բանը, որին բախվում ենք, մարդկանց պակասն է, այն մարդկանց, որոնք կպարտավորվեն ֆիզիկական օկտավայում իրականացնելու մեր պլանները:

Շա՛տ արդարացումներ ու պատճառներ են ի հայտ գալիս, որպեսզի ոչինչ չանեք և ոչինչ չփոխեք ձեր կյանքերում:

Ձեզ այլևս չի հաջողվի շարունակել ձեր նախկին կենսակերպը: Փոփոխությունների քամին կարբի-կտանի ձեր մարմնական խելքի բոլոր խորամանկություններն ու ձեր վարքին բնորոշ բոլոր կարծրատիպերը:

Այն դեպքում, երբ առջևում լեռնագագաթներն են, հանգիստ առնելու և կողքից կողք շուռումուռ գալու ժամանակը չէ:

Ոտքի կանգնելու և Ուղով ընթանալու ժամանակն է:

Ես ձեզ կանչում եմ, որ ձեր աշխարհի համար իրագործեք Եղբայրության մեծ պլանները:

Եվ ձեզնից նրանց համար, ովքեր ոգի առան իմ այս խոսքերը կարդալուց, ես հույս եմ տածում, որ ձեր հոգու այդ պոռթկումը կմնա ձեզ հետ մինչև ձեր ընթացիկ մարմնավորման ավարտը: Եվ դուք չեք մարի, ինչպես մոմը քամուց, այլ կշարունակեք ջահի պես վառվել՝ լուսավորելով շատ ու շատ լուսակիրների ուղին, որոնք, պատրանքում մոլորվելով, փնտրում են յուրայիններին ու պատրանքի լաբիրինթոսից դուրս գալու ելքը:

Ես եկա՝ ձեզ տեղեկացնելու մեր աշխատանքի հերթական փուլի ավարտի և հաջորդ փուլի, ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործողությունների փուլի սկզբի մասին, որը մենք չենք կարող իրականություն դարձնել առանց ձեր անմիջական մասնակցության և շոշափելի օժանդակության:

Ես հույսեր եմ կապում ձեզ հետ և մշտապես ձեզ հետ եմ ձեր Ճանապարհին:

ԵՍ ԵՄ Էլ Մորիան